

ԱՆԴՐԱՆԻԿ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

Խ Ո Հ Ե Ր

ԳՐԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ
ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ

Գ. ՀԱՏՈՐ



ՑԳԱՐԱՆ «ՆՈՐ ՕՐ»
ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ, ԳԱԼԻԿ., 1980

8/47.925
ՍԽ-58

ԱՆԴՐԱՆԻԿ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

Խ Ո Ն Ե Ր

ԳՐԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ
ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ

2543

Գ. ՀԱՏՈՐ



346

ՏՊԱՐԱՆ «ՆՈՐ ՕՐ»
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ, ԳԱԼԻՖ., 1980



ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԱԽԿԻՆ ԵՒ ՆԵՐԿԱՅ ԵՐԵՒԱՆԸ

Մօտ հինգ ամիսներ տեւող շրջապտոյտ մը զիս դարձեալ տարաւ տասնեակ մը երկիրներ եւ աւելի բազմաթիւ քաղաքներ, որոնց այցելած էի 7-8 անգամներ, անցեալ քառասուն տարիներու շրջանին: Անոնց մէջ բնակող հայերու գաղութներ ենթարկուած էին ազգային ոգիի, մշակութային զարգացման եւ ընկերային բարքերու նկատելի փոփոխութեան, դրական կամ թիտական բնոյթով: Կարգ մը նոր համայնքներ աճեր ու զօրացեր էին՝ ուրիշ հին գաղութներէ ժամանած կենսունակ տարրերով, իբրեւ հետեւանք անոնց բնակավայրերը հարւածած ներքին ճգնաժամերուն եւ քաղաքացիական կռիւներուն:

Մեծ ոստաններ, մարդկային ընկերութեան նման, յարատեւ կը վերափոխուին, - ո՛չ թէ կը ծերանան իրենց տարիներուն կուտակումով՝ այլ մշտապէս կ'երիտասարդանան նորակերտ կառույցներու ընծայած արդիական ճաշակներու, ուրեմն ոճերու ընդելուզումով: Այդ իրողութեան շնորհիւ է, որ Եւրոպայի կարգ մը մայրաքաղաքները, - ինչպէս Աթէնք, Բարիզ, Լոնտոն, Հոտմ, Մատրիտ, Պերլին, Մոսկուա կզած են ոչ միայն պետական իշխանութեան կեդրոններ, այլ նաեւ գրականութեան, արուեստներու, գիտութեան, մշակոյթի եւ յեղաշրջումի գաղափարներ ներշնչող ազբիւրներ ու երկունքի խորհրդանիշեր:

Հայ ժողովուրդին համար՝ Երեւանը այդ կրկնակ զերերը նոյնացուց ու մարմնացուց անցեալ 58 տարիներու ընթացքին: Բայց գնահատումի այս մարդին մէջ հիմնական տարբերութիւն մը կայ հայկական եւ օտար մտայնութեանց միջեւ: Այսպէս, երբ արտասահման ապրող ամերիկացի մը կամ Ֆրանսացի մը իր մայր հայրենիքը կ'այցելէ, կը շրջի գլխաւոր քաղաքներուն ամենէն հրապուրիչ ու պատմական վայրերը, յետոյ կը յաճախէ թատրոն ու թան-

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՍՓԻՒՌ

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ 1978

գարան, չքեղ զաճառատունետ ճաշարաններ ու գիշերային ակումբներ: Ան ո՛չ կ'երթայ այդ սեօ ստաններուն չքաւոր ու թշուառ թագերը, ոչ ալ կը հետաքրքրուի անոնց քայքայուած տուներով ու խեղճուկ հիւղերով, որոնց գիրտին ու ապականութեան մէջ կը բնակին մարդկային տարաբախտ բազմութիւններ:

Իսկ շատ են Հայաստան այցելող հայ զբօսաշրջիկներ, որոնք կարծես բացառիկ ճիգերով կը փորձեն զսպել իրենց հիացումը երկրին նորակառոյց քաղաքներուն սքանչելի գրաւչութեան, - անոնց լայն ու ծառազարդ պողոտաներուն, եւ պետական ու արուեստի հոյակապ հիմնարկներուն, եւ բազմալարկ ու արդիական շէնքերուն ու գեղակերտ հրապարակներուն հանդէպ: Բայց նոյն ատեն, աշխոյժ եռանդով եւ իստասիրտ դատախաչներու նման, անոնք սխալներ ու թերիներ կը փնտռեն շուրջերնին: Եւ հարկաւ անխուսափելի կերպով կը գտնեն զանոնք եւ յոխորտ յաւակնութեան մը խոշորացոյցով այնքան կը մեծցնեն այդ մանրուք վրէպները, որ անոնք իրենց դատողութենէն կը ծածկեն հայրենիքին մէջ արդէն իրագործուած հրաշալի վերածնունդին հրապուրն ու փառքը: Նման փայտահայտի մը, որ իր օճախին համար ցարխեր ու չորցած ճիւղեր հաւաքելու ճամբուն վրայ՝ չ'ուզեր նայիլ գինք շրջապատող անտառին բարձրաբերձ մշտադալար ծառերու կախարդանքին:

Անցեալ վաթսուն տարիներու շրջանին, չորս տարբեր անգամս էր եւ ժամանակի երկար ընդմիջումներով ես պատեհութիւն ունեցեր եմ տեսնելու եւ ճանչնալու Հայաստանն ու անոր մայրաքաղաքը: Եւ այդ առիթներուն շնորհիւ թերեւս կրնամ ուրիշ, պատահական զբօսաշրջիկ այցելուներէ աւելի ամբողջական ու արդար գնահատումով մը պատկերացնել անոնց նուաճած ազգային, ճարտարարուեստական, մշակութային եւ կառուցողական զարգացման հսկայաքայլ վերելքը:

Դեռ մանուկ, 1917-1918-ին երկու տարի ապրեցայ Ալեքսանդրաբոլի (ներկայ Լենինական) որբանոցներուն մէջ: Ատիկա այն շրջանն էր մինչեւ 1920-ի վերջերը, երբ Հայաստանը դարձեր էր քայքայուած ժողովուրդի մը, քաղցած ու հիւանդ զաղթականներու եւ «որբի ու ողբի հայրեցիքը»: Եւ երբ, վարչապետ Ալեքսանդր Պատիսեանի վկայութեամբ՝ Երեւանի փողոցներէն ամէն օր շուրջ 360 դիակներ կը հաւաքուէին, սովէն ու համաճարակներէն մեռած թշուառ մարդոց, կիներու եւ մանուկներու: Առաւել՝ ներքին ահաբեկչական դաւերէն ու քաղաքացիական բախումներէն ինկած զոհերը: Ողբերգական քանի մը տարիներ, որոնք բացուեցան Սարտարապատի յաղթական հերոսամարտով եւ փակուեցան Ալեքսանդրաբոլի ստրկական դաշնագիրով եւ Փետրուար 18-ի եղբայրասպան աղէտով, որոնք հո-

ղային ու մարդկային ահարկու կորուստներ արժեցին հայութեան:

Այն ատեն տակաւին փոքր աւան մըն էր մայրաքաղաք Երեւանը, շուրջ 27,000 բնակչութեամբ, սակաւթիւ քարտէն կամ երկաթեղանի տուներով, տախտակէ եւ ցեխի չորցած աղբաներէ հիւղերով նեղ փողոցներու վրայ, որոնք անձրեւներուն՝ տիգմով կը լեցուէին, իսկ ամառը հովէն փոշիի ամպեր կը հանէին: Մինչ այսօր, նոյն Երեւանը վերածուեր է միջազգային մակարդակով գեղակերտ, փարթամ ոստանի մը, 1,000,000 հոգիներու հասած բնակիչներով: Այս երկու թիւերուն առարկայական, աննախապաշար բաղդատական միայն՝ մարմնացած հրաշքի մը վկայութիւնը կ'ընծայէ: Բայց հարկաւ արտասովոր վերելքի այդ մաղցումը եղած էր որբան գմայլելի՝ այնքան նաեւ տաժանելի:



Երկրորդ անգամ հայրենիք գտնուեցայ 1935-36ին, իբրեւ անգամ պատուիրակութեան մը, որ Միացեալ Նահանգներէն մեկներ էր Երեւան, ներկայ ըլլալու համար Խորհրդային Հայաստանի ծնունդին 15-րդ տարեդարձի հանդիսաւոր տօներուն: Այն ատեն առիթ ունեցանք քանի մը զլխաւոր քաղաքներ շրջելու Հոկտեմբերէն մինչեւ Յունուարի սկիզբը, 1936-ին: Բազմաթիւ գործարաններ կառուցուեր էին արդէն, դպրոցներու ցանցը տարածուեր էր, կանգներ էին նաեւ Լենինի Հրապարակին շուրջի կառավարական սինդակարդ ու կամաւրակապ հոյակերտ շէնքերը: Բայց երկիրն ու ժողովուրդը յայտնորէն չքաւոր էին տակաւին: Խանութները սակաւ էին եւ անոնց վաճառած կենսապիտոյքներն ու տնական ապրանքները քիչ էին տեսակներով ու քանակով, որոնց համար պէտք էր ետագի սպասէին գնորդները:

Սակայն նիւթական աղքատութեան այդ վիճակին մէջ անգամ՝ ապրելու խանդով համալուեր էր ժողովուրդը, իսկ մտաւորական դասերը ամէն առիթով խնջոյք ու հանդէս կը սարքէին իրենց խոնարհ յարկերուն տակ կամ բեմերու վրայ, ուր կ'երգէին, կը նուագէին ու կը պարէին, խանդավառ գուարճութեան մէջ: Այրեր ընդհանրապէս կը հագնէին պլուզ ու տարատ, իսկ կիները՝ պարզ, միօրինակ շրջագոյններ: Ամէն նիւթի եւ առարկայի պակասին հետ, կը թուէր թէ անսպասօրէն առատ էին հայկական կոնեակն ու գինին:

Աղասի Խանջեանի անձին արտակարգ հմայքը եւ անոր պետական ղեկավարութեան ստեղծած տարերային ուժերն էին զլխաւոր անհրաժեշտ այդ լաւատես ոգեւորութեան: Եղիշէ Չարենց, հակառակ իր երիտասարդ տարիքին՝ անվիճելի, տիրական քրմապետն էր խորհրդահայ երէց ու կրտսեր գրողներուն, որոնք երկու հակամարտ

խումբերու բաժնուած էին եւ յարատեւ կը վիճէին ու բուռն, յաճախ քինանդիր պայքար կը մղէին իրարու դէմ, - իշխող ճակատը արուեստի գերակայութեան, իսկ ընդդիմադիր խումբը՝ Բարոզական կարգա-խօսերու գրօշնարուն տակ:

Երեւանի բնակչութիւնը արդէն աճեր ու բազմապատկուեր էր տա՛սն անգամ: Բայց անթիւ էին հին ու խարխլած բնակարաններ, նոյնիսկ Արտփեան մայր պողոտային վրայ, որոնց ծած պատերուն դէմ փայտէ յենակներ դրուած էին, որ չփլչէին անձրեւէն կամ ձիւնէն: Քաղաքին տուներուն մեծագոյն մասերուն արտաքնոցները իրենց բակերուն մէջ էին, տախտակէ ու թիթեղէ քառակուսի տուփերու նման, առանց լոյսի ու ջուրի, գետնափոր փոսերու վրայ կարկրու-նուած, ուր գէր անձեր դժուար կրնային շարժիլ: Թշուառ, եղերա-կան հինին մռայլ տարածութեան մէջ կ'երեւէին պալատաման բազ-մայարկ շէնքեր, Նեքիաթային զղեակներու գեղեցկութեամբ, եւ կա-ռուցուած անջատ մարդերու վրայ, իրենց առաջնահերթ կարեւո-րութեամբ, Համաձայն ճարտարապետ Աղեքսանդր Թամանեանի յօրինած Երեւանի բնդհանուր յատակագծին:

Նոր աւարտած էր Քանաքեռգէսի էլեկտրակայանը, որ Սեւանէն ջրվիժող Հրազդան գետի Երկայնքին ծրագրուած տասնեակ մը կայաններուն առաջին իրագործումն էր: Ան կը հայթայթէր այնքան էլեկտրական ուժ, որ կը լուսաւորէր մայրաքաղաքին փուններուն, փողոցներուն ու հիմնարկներուն լամպերը, եւ կը դարձնէր գործա-րաններուն մեքենաները, եւ անոնց հնոցները կը վառէր: Երբ իջանք անոր մօտ՝ անհաւատալի անակնկալ մը դիմաւորեց մեզ: Հսկայ շէնքը դուրսէն կարծես հիւսուած էր բլրակողի բնանկարին հետ, համա-խառնուած անոր արտաքին երեւոյթին, քարերուն, գոյներուն, եր-կինքէն չնշմարտելու չափ: Զարմանքս չկրցայ գուպել, եւ ճարտա-րագէտ վարիչը ժպտելով պատասխանեց.

- Սա կամուֆլիւծ է, էլի՛, օղային ուժրածիգների դէմ դա կարող է հիգրոկայանը պաշտպանել:

Իսկ անոր ներքը, լուսավառ, անսովոր մաքրութեամբ կը փայ-լէր: Բլրակողի խողովակներէն վար խուժող ջուրին շառաչին եւ ներքեւը դարձող շարժիչներու զղրդիւնին խուլ աղմուկը կը լսէինք: Բայց բոլոր բաժանմունքները դասարկ էին մարդկային որեւէ չունչէ: Սոււզեցինք որ ամբողջ էլեկտրակայանը ինքնագործ (օթոմատիկ) սարքուածքով օժտուած էր եւ կը կառավարուէր կեղրոնական գրա-սենեակէ մը, էլեկտրական գունաւոր լոյսերու եւ կոճակներու միջոցով:

- Բայց ասիկա հրաշալի է, բացազանչեցի ապշած:
- Դէ՛, ի հարկէ սա լաւ վաստակ է, յարեց վարիչը՝ ձայնին մէջ

Համեստ շեշտ մը: Բայց սա չի իսկական հրաշքը, եւ հպարտութեան ու խանդի երանդ մը առին իր բառերը: Իսկական հրաշքը այն էր, որ մեր ժողովուրդը Զանգուի ջուրը կը բարձունքին հասցնելու հա-մար, տասը քիլոմեթր խրամ եւ թունել փորեց ժայռերի կարծր ծոցի միջից, եւ փորեց բահով ու քրիչով, փորեց իր մատներով ու եղունգ-ներով... ա՛յ, էդ էր իսկական հրաշքը, էլի՛...:

Այդպէս էր 1935-ի Երեւանը, ուրեմն Հայաստանը, - կառուցում՝ բահով ու քրիչով, մատներով եւ եղունգներով, տակաւին սնունդի ու հագուստի զրկանքներու լուծին տակ, եւ եղկելի տնակներու թշուառութեան մէջ:

Յաճախ կ'այցելէի այն ստեն ճարտարապետ Թամանեանի մօտ, որ Երեւան քաղաքին բնդհանուր յատակագիծը կազմեր էր: Յետագայ տարիներուն ծրագիրը քանի մը անգամ բնդայնուեցաւ, բնակչու-թեան ու նոր թաղերու արտասովոր աճումին հետեւանքով: Այն օրե-րուն, ան կը կառուցանէր պետական օրերայի ու պալէսի ներկայ փառաւոր թատրոնը: Սպիտակ մազերով ու մօրուքով գեղազէմ մարդ էր Աղեքսանդր Թամանեանը, ներշնչուած ճշմարիտ մարզարէի մը վերմեհանդ նուիրումով ու խորունկ հաւատքով իր առաքելութեան մէջ: Ան արդէն բարձր համբաւ ու վարկ փաստկած ճարտարապետ էր Ռուսիոյ ճարական իշխանութեան շրջանին: Բայց երբ Հայաստանի մէջ հիմնուեցաւ խորհրդահայ պետութիւն՝ ան ձեռք հեռաւոր հիւ-սիսի իր հոչակն ու փառքը եւ Մոսկուայէն եկաւ Երեւան, իր տա-ղանդին հարուստ բերքերը հարազատ ժողովուրդին ու հայրենիքին վերականգնման բնձայելու համար: Եւ ան համբերատար եռանդով կը բացատրէր կառուցող թատրոնին գերազանց առաքելութիւնները:

Խումբին մեկնումէն առաջ հրաժեշտ առնելու զայցինք ճարտա-րապետ Թամանեանէն: Մեր գնահատանքն ու հիացումը արտայայ-տող խօսքերէ ետք փորձուեցայ հարցնել.

- Պարոն Թամանեան, ձեր այս գժուար գործը կ'ուզենք որեւէ չափով դիրացնել... կը փափաքինք Ամերիկայէն ձեզի մեքենայ մը նուէր գրկել... Ի՞նչ է ամենէն կարեւոր գործիքը, որ նաեւ հնարա-ւոր ըլլայ մեզի:

Ան նախ շնորհակալութիւն յայտնեց եւ սելցուց թէ կարիք չկար որ նեղութիւն կրէինք: Յետոյ մտախոհ՝ նայեցաւ շուրջի բանուոր-ներուն, որոնք կ'աշխատէին քար ու կիր խառնելով, հող փորելով, սուֆ կտարելով ու տաշելով: Եւ սեւ ու վճիտ աչքերը դարձուց մեզի, երկու ձեռքերը պարզեց առաջ, կարծես նորածին երեխայ մը գրկելու պէս, եւ յարեց.

- Եթէ կարելի լինէր մի փո՛քր ելեկտրական սղոց ունենալ, սուֆ քարերը սղոցելու համար... հիմի քարտաշները ձեռքով են սղոցու՞մ

ու յղկում տուֆր... էնքան թանկագին ժամանակ կարող էինք խնայել... մի փո՛քր ելեկտրական սղոց:

× × ×

Երկար տարիներ թաւալեցան եւ Սովետ միութիւնը փոթորկող ներքին ուրականին, եւ նացի Գերմանիոյ ներխուժման սարսափներն ու մղձաւանջները անցան նաեւ Հայաստանի եւ Հայ ժողովուրդին վրայէն, ցաւագինօրէն կոտորացող վերքեր ձգելով: Եւ երրորդ անգամ, 1961-62ի ձմեռը հայրենիք այցելեցի դարձեալ, ու մնացի արդէն կառուցուած Արմենիա պանդոկին մէջ, իրբեւ հիւրը Միխայիլի Հեռ Մշակութային Կապի Կոմիտէին: Առաջին առտուն, բարձրագոյն յարկի պատշգամէս դիտեցի Երեւանի վերափոխուած, զմայլելի համայնապատկերը: Եւ հորիզոնին վրայ, նոր ստեղծուող թաղերու բազմաթիւ շէնքերու արանքը համրեցի շուրջ երկու տասնեակ պողպատէ կոունկներ, 15-20 յարկերու հասակով: Այդ պահուն տխրօրէն վերջիչեցի մեծ ճարտարապետին, Աղեքսանդր Թամանեանի սրտառու թախանձանքը.

- Մի փո՛քր ելեկտրական սղոց... .

Որուս կարօտն ունէին 1935-ին Պետական Օրերայի նման չքեղ թատրոնի մը շինութեան մէջ: Իսկ հիմա՝ ան շատոնց աւարտած, ամբողջ սերունդի մը իմացական ու գեղապաշտ վայելքին պարգեւած էր հայկական ու միջազգային օրերաներու եւ պարանուագներու ճոխ խաղացանկ մը: Իսկ հիմա՝ «մի փո՛քր ելեկտրական սղոց»-ին դիմաց՝ Երեւանի մէկ հորիզոնին վրայ կառուցման փնդով կը շաչէին ու կը շառաչէին քանի մը տասնեակ հորատող ու բեռնարար մեքենաներ ու կոունկներ, պողպատէ անտառ մը կազմելով:

Հայաստան հսկայաբայ գարգացում իրագործած էր ճարտարութեան, գիտութեան, մշակոյթի, կրթութեան ու կառուցման մարզերուն մէջ: Երկրին պետական գերագոյն դիրքերուն կը տիրէին է. Զարոբեան՝ որպէս կենսոկոմի առաջին քարտուղար, եւ Անտոն Քոչինեան՝ իրբեւ կառավարութեան վարչապետ, որոնց հանդէպ ջերմ համակրանք ու լայն վստահութիւն կը յայտնէին հասարակութեան բոլոր խաւերը, բամբասելու եւ խճրճելու իրենց կարծես առհաւական ախորժակները կշտացնելէ ետք: Երեւանի բնակչութիւնը հասեր էր 610,000-ի: Հողօւփայտով շինուած տուներու եւ հիւղերու թաղեր ամբողջապէս քանդուած՝ անոնց գետինները հարթուած էին եւ նոյն վայրերուն վրայ բազմաթիւ տուֆակերտ բնակարաններ շինուած էին, լայն, լուսաւոր ու սարկուած պողոտաներով, յաճախ ծառազարդ:

Այրերու եւ կիներու հագուստները աւելի ճաշակաւոր էին դարձեր: Խանութներու թիւը աճեր էր բաւական, բայց ծախուող ուտելիքները եւ առարկաները տակաւին սակաւ էին եւ գնորդներ կարգի պէտք էր սպասէին: Մինչ բազմաթիւ վաճառորդներ, պետական հրահանգները ոտնահարելով, իրենց անտարբեր, կոպիտ կամ շահախնդիր վարմունքով աւելի կը խորացուէին ապրանքներու պակասին պատճառած գրկանքներն ու զանգատները հանրութեան մէջ եւ աւելի կը դառնացնէին անոր դժգոհութիւնը: Իսկ պատերազմին եւ ներքին աքսորներուն Փիղիքական ու հոգեբանական վէրքերը արդէն սկսեր էին սպիանալ:

Երեւանը տարածուելու ու գեղեցկացելու էր հարիւրաւոր հոյակապ հիմնարկներով, բազմաթիւ պատշգամաւոր բնակարաններով, լայնարձակ ծառուղիներով ու քառուղիներով: Լենինի Հրապարակին շրջագիծը ամբողջացեր էր, անոր բոլորտիքը կառուցուել էին նոր ու փառաւոր շէնքեր, սիւներու եւ կամարներու, բոյակներու եւ քանդակներու փարթիւմ ընդելուզումով, որոնք հայկական ճարտարապետութեան գրաւիչ համապատկեր մը կը կազմէին: Երկաթուղիի կայարանին մուտքի հրապարակին վրայ կը կանգնէր Սասունցի Գուրիթի ձիաւոր զմայլելի արձանը:

Քաղաքի գլխակողմի բարձունքին, չքեղ պալատի մը վեհօթեան մը ու բերդաման ամրութեամբ շինուել էր Մեսրոպ Մաշտոցի անուան ձեռագիրներու հինգ-վեց յարկանի ընդարձակ Մատենադարանը: Իսկ աւելի հեռուն, բլրակողմի մը վրայ հսկայաձեւ կը կոթողանար Մայր Հայաստանի յաղթական արձանը, ահագին մերկ սուրբ երկարած երկու ձեռքերուն մէջ: Բայց դարձեալ, կարծես իրբեւ պապենական, ժառանգութիւն՝ բուն քննադատութիւնները, աղմկալի վէճերը եւ կարծիքներու անհաշտ բախումները կը շարունակուէին ամէն կենսական հարցի կամ մանրուք միջադէպի շուրջ, անոնց դրական ու ժխտական կողմերը պաշտպանող հակամարտ ախոյեաններու, այսինքն բոլոր ներկաներուն մասնակցութեամբ:

× × ×

Չորրորդ անգամ Հայաստան գտնուեցայ 1977-ի Սեպտեմբերէն Հոկտեմբերի աշնան օրերուն ամիս մը, Սփիւռքի Հեռ Մշակութային Կապի Կոմիտէին բարեացակամ հրաւերով: Ժիշդ 15 տարիներ անցեր էին նախորդ այցելութենէս ի վեր: Եւ դարձեալ, Արմենիա պանդոկին մէջ եւ 7-րդ յարկին վրայ, հիւրասենեակի, ննջարանի եւ բաղնիքի հանգստաւէտ բաժին մը տրուեցաւ ինծի: Անոր պատշգամէն, ամէն առաւօտ եւ երեկոյ, անհուն հրճուանքով ու տրտում կարօտով

կը դիտէի վարը, Լենինի Հրապարակին բոլորաբէքէն սուրացող ինձնաշարժ կառքերու անվերջ յորձանքը անցորդներու բազմութեան երթեւեկը, պատանիներու տողանցքներ նուազարուսմբով եւ մանաւանդ՝ չըջապատի չքեղ համայնապատկերը:

Երեւան մայրաքաղաքին բնակչութիւնը հիմա արդէն հասեր է 1,000,000 (մէկ միլիոն) հոգիներու անհաւատալի թիւին: Այս մարդկային վիթխարի քանակին, — անկէ բխող միտքի, ոգիի ու բազուկի ստեղծարար զօրութեան խորքն ու ծաւալը լիապէս գնահատելու համար՝ բաւական էր միայն յիշել պերճախօս իրողութիւն մը: — Որ հայ ժողովուրդի աւելի քան երեք հազար տարուան պատմութեան մէջ երբեք չէ պատահեր, որ հայկական որեւէ պետութեան որեւէ մայրաքաղաք, Մեծն Տիգրանի կառուցած Տիգրանակերտէն մինչեւ Բագրատունեաց փարթիւս Անին՝ ունեցած ըլլայ 1,000,000 բնակիչներ: Եւ չեն թոյլատրած մահացու թշնամիներ, որ անոնք դառնան ա՛յնքան փառաւոր ու հարուստ՝ որքան հայոց ներկայ քաղաքամայր Երեւանն է: Եւ չէ եղեր վաղեմի դարերու որեւէ շրջանի Հայաստան, որ իր պետական սահմաններէն ներս համրած ըլլայ 3,000,000-ի բնակչութիւն, ինչպէս ունի ներկայ Սովետական Հայաստանը:

Այդ արագ ու յարատեւ աճումին բնական արդիւնքն է հարգաւ նաեւ ոստանին ծաւալումը: Երեւանի մէջ ամբողջ թաղերու կիսափուլ, ցեխապատ տնակներն ու նեղլիկ, խորտուբորտ փողոցները սրբուեր են, եւ անոնց տեղը հինգ-վեց յարկանի շէնքեր կանգնած են, լայն ու ծառազարդ պողոտաներով, որոնք գիշերները շառլորէն կը լուսաւորուին: Աջափնեայ թաղը, բոլորովին նոր, գլխաւոր փողոցներուն մայթերը ծառապատ, արդիական գեղեցիկ աւան մը դարձեր է: Նորքի բարձունքները, որոնք նախապէս ամառի ու խոպան վայրեր էին, հիմա ծածկուած են 10-12 յարկանի իրարմէ անջատ ու ծառապատ գեղակերտ բնակարաններով, որոնց վրայ ամէն յարկաբաժին ունի զրաւիչ պատշգամներ: Երեւանցիք հպարտ ժպտով զայն կ'անուանէին «Նիւ Եորք», հորիզոնին դէմ անոր բարձրաբերձ շէնքերուն պարզած հսկայատիպ համապատկերին համար: Զայն պաշտօնապէս կը կոչեն «Նորքի Զանգուած», — անճաշակ անուն մը, որովհետեւ «զանգուած» բառը կը թելադրէ նիւթեղէն անձեւ, կամ տձեւ կուտակում մը: Մինչդեռ Երեւանի այս նորագոյն արուարձանը, շուրջ 200,000 հոգիի համար, գերազանցօրէն արդիական ու հրապուրիչ գեղեցիկութեամբ մարդ մըն է, որ արժանի է լաւագոյն կոչումի մը, գոնէ «Նորքի թաղ» կամ... «Նորքաւան»:

Գեղարուեստօրէն ու պատմականօրէն բարձրորակ յուշարձաններով առաւել ճոխացեր է մայրաքաղաքը: Արմենիա հիւրանոցի աջ կողմի պողոտայէն դարձար, մինչեւ Ստեփան Շահումեանի արձանը,

շարուած են 2750 ցայտաղբիւրներ, համաշափ մոմերու նման, որոնք Երեւանի ծնունդէն ի վեր անոր ապրած տարիներուն յիշատակութեան նուիրուած են, եւ որոնց ներքեւի մասէն ջրվէժներ կը հոսին, թե՛րեւ խորհրդանշելու համար վաղեմի էրերունիի ժամանակէն անցած մոռյլ կամ ողբերգական օրերէն ետք՝ ներկայ Երեւանի յորդ փարթիւսութիւնը:

Իսկ հեռուոր բլուրին վրայ կը տարածուին հնամեայ էրերունիին պեղուած աւերակները, անոնցմէ հանուած գանձերն ու արձանագրուած վկայութիւնները պարունակող թանգարանը եւ վաղեմի բերդին սիւնաւոր պահականոցը, վերակառուցուած սկզբնական յատակագծին համաձայն:

Նոր յաւելում մըն է նաեւ 1915-ի Ապրիլեան Եղեռնի գոհերուն նուիրուած խորապէս տպաւորիչ յուշարձանը, կառուցուած Միծեռնակաբերդի բարձունքը: Հոն գանգուածեղ քարերէ կերտուած տասներկու հսկայ շերտեր դէպի ներս խոնարհած բոլորակ մը կը կազմեն, որուն կեղրոնին, լայն ու կլոր ատուշանէ մը կարծես՝ վեր կը ծածանի յաւերժական խարոյկին բոցը: Իսկ անոր կողքին կը կանգնի, դէպի երկինք խոյացող սլացիկ կոթողը, որ անցեալի փլուզումներէն ու սպանդներէն հրաշալի յարութեամբ մը կեանքին ելած հայ ժողովուրդին ու հայրենիքին ներկայ վերածնունդը կը խորհրդանշէ: Այս յուշարձանը եւ զայն պարփակող ծառախիտ պուրակը արդէն նուիրական ուխտավայր դարձեր են Հայաստանի եւ սփիւռքի ամբողջ հայութեան համար:

Աւելի հեռուն, հարթ տարածութեան մը վրայ կառուցուած է Սարտարապատի ազատարար հերոսամարտը ոգեկոչող յուշակոթողային համալիրը, բազմբանգ տուֆաքարերու գեղահիւս ընդելուզումով: Հոն, ընդարձակ ու սալարկուած գետինին վրայ, իրարմէ անջատ կը կանգնին սիւներ, կամարներ ու կոթող, զանգակներով, արժիւներու եւ ցուլերու արձաններով, որմին վրայ քանդակուած թեւաւոր նժոյգներով, որոնք իրենց սմբակներուն տակ մահաչար իժեր կը սպաննեն: Գեղարուեստական գմայլելի յօրինուածքներ, որոնց բոլոր տարրերը, աւանդական եւ արդիական ոճերու համադրումին մէջ՝ վերածուեր են պերճախօս խորհրդանիշներու: Եւ անոնք հայոց ազգային ահաւոր ողբերգութեան, եւ վերապրելու անընկճելի կամքին, եւ ազատութեան մշտավառ տենչին, եւ ոսոխին դէմ մաքառելու անվեհեր քաջութեան, եւ յաղթանակի ու վերականգնումի դրուագներուն եղբրական ու հերոսական վկաները կը հանդիսանան:

Երեւանի մէջ հարիւրաւոր բազմաշարկ բնակարաններ, պետական հիմնարկներ, թանգարաններ ու վարժարաններ աւելցեր են:

Անոնց շարքին աչքառու են համալսարանին ու անոր գիշերօթիկ ուսանողներուն հանրակացարաններուն շէնքերը, բժշկական մասնագիտական ուսումնասիրութեանց կեդրոնը, քառալսոկ ու ծաւալուն հանրախանութիւնը, Հրազդան նորաւարտ պանդոկը, պետական այցելուներու համար, եւ 14 յարկանի Անի ընդարձակ հիւրանոցը, կառուցուող Գուին մեծ պանդոկը, Սունդուկեանի անուան պետական նոր թատրոնը, իրագործուած ճարտարապետական արուեստի արտակարգ գեղեցկութեամբ: Անոր արտաքին մուտքին առջեւ, ծառերու եւ թուփերու պուրակին մէջ կը բացուի լայն աւազան մը, ցայտաղբիւրներու կեդրոնական փունջով: Քանդակազարդ դուռերէն ներս՝ դախիթն ու ճեմավայրն են, մշտադալար ծառութուփի, գունազեղ ծաղիկներու եւ հասող ջուրերու հեթիաթային սքանչելի համադրումով մը, ուրկէ ոլորուն աստիճաններ կը բարձրանան հոյակապ դահլիճին վերի յարկերը:

Նշանակելի բարելաւում մըն է կենսապիտոյքներու եւ սպառման ապրանքներու առատութիւնը: Ոչ միայն աւելի բազմաթիւ ու բարեզարդ են խանութներն ու վաճառատուները, այլ անոնք լեցուն են ուտելիքներու տարբեր տեսակներով եւ տնային պիտանի առարկաներով: Հարկաւ դեռ իրեր կան, որոնք բաւարար քանակով չեն արտագրուիր կամ ներածուիր, եւ գետրոնք պէտք է փնտռեն եւ բարեկամական կապերու կամ յաւելեալ վճարումի միջոցներուն դիմեն, զանոնք ստանալու համար: Բայց ապրուստի մակարդակին ընդհանուր բարւոքումը բացայայտ է: Ամիս մը, ամէն օր քանի մը ժամ շրջեցայ փողոցները, զիտեցի անցորդներու դէմքերն ու հագուստները, մտայ խանութներ ու վաճառատուներ, նայեցայ ապրանքներու տեսակներուն եւ անոնց գիններուն: Այդ բոլորը ժողովրդային բարեկեցիկ վիճակի մը վկայութիւնը կուտային: Եւ մինչ հետզհետէ կը ճոխանայ նաեւ բազմազան առարկաներու արտադրութիւնը եւ կը ծաւալի անոնց մատուցումը՝ բնականօրէն կը նուազին զանոնք խնամիական ճնշումով կամ կաշառքով ծախելու մեղանշումները:

Կը յիշեմ, 1962-ին, կարգ սը տեղեր մարդիկ ու կիներ կարգի կը սպասէին եւ երբեմն զիրար հրելով ձեռքերնին առաջ կ'երկարէին, մէկ-երկու շիշ կոնեակ գնելու համար: 1977-ին տեսայ առանձին խանութներ, որոնց ներսի երկար դարակներուն վրայ շարուած էին կոնեակի, շամբանեայի եւ գինիներու անհամար շիշեր: Եւ յաճախորդներ կը մտնէին անարգել եւ կը գնէին իրենց նախընտրած ըմպելիները ուզուած քանակով ու կ'ելլէին դուրս: Այն ատեն՝ կօշիկի ու հանգերձանքի խանութները չքաւոր կրպակներու կը նմանէին, որոնք սակաւ ու միօրինակ ապրանքներ ունէին ծախելու համար:

Այս անգամ, առանձին խանութներէն եւ մեծ վաճառատուներէն ներս այրերու, կիներու եւ մանուկներու յատուկ կօշիկներ, հագուստներ ու շրջագգեստներ, ամէն ճաշակ հաճեցնող նորոյթներով ու գոյներով, դիզուեր էին իրենց յատուկ բաժանմունքներուն մէջ, անսովոր առատութեամբ: Եւ ճոխացեր են պահածոներու, մսեղէններու, ելեկարական կազմածներու, առտնին առարկաներու բաժինները: Հաճելի զարմանքով նկատեցի, որ այն խանութները, ուր երիտասարդ սղոց եւ աղջիկներու խճողում կար, ոսկերչատուներ էին, որոնք զարդեղէն, թեւի գրաւիչ ժամացոյցներ կամ գեղարուեստական առարկաներ կը վաճառէին:

Այսպէս, 57 տարիներու կարճ շրջանին, որ ընդմիջուեցաւ ներքին ողբերգական փոթորիկի մը եւ արտաքին ահռելի պատերազմի մը աղէտներով ու կորուստներով՝ Երեւանը 27,000 բնակիչով յետամընաց, թշուառ աւանէ մը բարձրացաւ 1,000 000 բնակչութեամբ փառաշուք ու փարթամ մայրաքաղաքի մը մակարդակին, միջազգային գերազանց չափանիշերով: Եւ այն զրօսաշրջիկ այցելուները, որոնք 1920-ի փլաւ յներէն եւ գաղթակայաններէն ու որբանոցներէն վերականգնումի այս գմայլելի իրողութեան հանդէպ տակաւին կ'ուզեն շիւղեր փնտռուլ Երեւանի աչքերուն մէջ՝ երանի թէ բարեհաճին նաեւ տեսնել թերիններու, գրկանքներու եւ մեղանշումներու այն գերանները, որոնք կը վիտան իրենց բնակած որեւէ մեծ ոստանին աչքերուն մէջ, - Լոս Անճելըսէն մինչեւ Նիւ Եորք, եւ Բարիզէն մինչեւ Պէյրութ: Այն ատեն աւելի արդար ու հպարտ գնահատանով պիտի կարենան հաստատել այն իրապէս արտակարգ հրաշքը՝ որ ներկայ Հայաստանի մայրաքաղաք Երեւանի ազգային, ճարտարապետական, մշակութային ու գիտական սպէկտրոցիչ զարգացման իրագործումն է:

553

346



ԷԶՄԻԱԾԻՆԷՆ ԱՐՓԱ-ՍԵՒԱՆ

Սփիւռքի հայութեան համար մանաւանդ՝ Հայաստանի պետական մայրաքաղաք Երեւանին շափ սիրելի եւ մտերիմ վայր մը, ուրեմն անուն մըն է էջմիածինը, իբրեւ հայ ժողովուրդի կրօնական հաւատքին եւ ոգեկան միութեան գերագոյն կեդրոն ու խորհրդանիշ: Հնագոյն մայր տաճարը իր յարակից շէնքերուն հետ պարփակող վանքն է էջմիածինը, որուն անունով կը կոչուի նաեւ անոր շուրջ արագ թափով աճող նորակերտ քաղաքը: Հայրենի միւս ուսանանքուն նման, ան ալ ունի լայն պոզոտաներ, ծառուղիներ ու հրապարակներ, գրաւիչ վարժարաններ ու մշակոյթի պալատ եւ բազմալարկ բնակարաններու շարքեր, բոլորն ալ տուֆ քարերու գեղահիւս երանգներով: Եւ տակաւին՝ ամէն կողմ կը կատարուի յարատեւ կառուցում, կարծես յայտնի աճապարանքի մը մէջ, հասնելու համար քառամբակ վազքով ծաւալող Երեւանի արուարձաններուն:

Բայց անկասկած, ինչ որ բացառիկ նշանակութիւն ու նուիրական արժէք կուտայ էջմիածինին՝ այն իրողութիւնն է, որ 17 դարեր առաջ այնտեղ հաստատուած է եւ ահա 1441 թուականէն ի վեր հոն վերագործած՝ անսասան կը մնայ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան գահը, Լուսաւորիչի հիմնած Մայր Տաճարի հովանիին տակ: Նախորդ այցելութեանս Հայաստան (1961-62), քանի մը անգամ գտնուեք էի էջմիածին, հրաւերով Վեհափառ Վազգէն Հայրապետին, երբ մտերմական զրոյցներ ունեցեր էինք սփիւռքահայ եկեղեցական եւ ազգային խնդիրներու եւ տագնապներու մասին: Այն ատեն արդէն՝ իր տեսիլքին, կամքին ու նուիրումին հոյակապ արդիւնքներով վերափոխուած էր վանքին պատկերը:—

Կառուցուած էր շրջապատի բարձր պարիսպը աշտարակով: Վերանորոգուած էր տաճարին խորանը, եւ պատերն ու որմնանկարները: Հիմնուեք էր նոր եւ արդիական սարքաւորումով տպարանը, աւելի զարգացեր էր ճեմարանին կրթական մակարդակը, ուր քանի մը տասնեակ երիտասարդներ կ'ուսանէին, հոգեւորական սուպարէզ մտնելու համար: Մայր Աթոռին գահակալը, իր իմաստուն, ժողովրդաանուէր ու բազմափաստակ գործունէութեան շնորհիւ՝ բարձրագոյն վարկ, փաստաւորութիւն ու համակրանք շահեր էր Հայաստանի

եւ Մոսկուայի պետական վարիչներուն մօտ եւ հայրենի հասարակութեան ու մտաւորական դասին մէջ:

Այս անգամ ալ, Վեհափառ Վազգէն Կաթողիկոսին հետ հանդիպումս եղաւ վաղեմի բարեկամութեան մը ջերմութեամբ: Անոր անձին եւ հոյակապ իրագործումներուն հանդէպ սէրս եւ հիացումս աճեր էին անցնող տարիներու ընթացքին: Եւ մենք դարձեալ խօսեցանք արտասահմանի հայութեան կեանքին շուրջ, պաղտիւններու սպառնալից գոյատեւման պայքարներուն, անոնց կրթական ու մշակութային ձեռնարկներուն, հայ եկեղեցիին միութիւնը վերականգնելու յոյսերուն ու ճիգերուն մասին: Վեհափառին մագերն ու ձօրաբք անարատ սպիտակ էին, եւ վեհաշուք քաղցրութիւն մը պարուրեր էր անոր ամբողջ երեւոյթը: Եւ իր խօսքերուն, իր խորհուրդներուն ու յոյգերուն մէջէն, դարձեալ անոր սրտառուչ բարութիւնը, համբերելու եւ ներելու անոր վսեմ ոգին, հայ ժողովուրդին ներկայ վերածնունդին հրճուանքը եւ աւելի փառաւոր սպազային ջերմանոց հաւաարք կը շողային:

Բայց տակաւին, նոյնիսկ երբ կը ժպտէր, Վեհափառ Վազգէն Հայրապետին աչքերուն մէջ ու դէմքին վրայ կը թեւածէր խորունկ թախիժ մը: Այդ տխրութիւնը աւելի կը թանձրանար, երբ անոր կը հարցնէի Անթիլիասի զոյգ գահակալներուն որդեգրած զիրքերուն մասին էջմիածնի Մայր Աթոռին եւ իրեն՝ Վեհափառ Վազգէն Կաթողիկոսին հանդէպ, հայ եկեղեցիի միութեան կենսական հարցին կապակցութեամբ: Ան անձկօրէն ու յուսալից կը սպասէր, որ Մայր Աթոռին գոյգ կաթողիկոսները եւ պատուիրակները գործադրեն արուած խոստումները եւ իրենց սահմանադրութեան մէջէն ջնջեն թիւ 32 եւ 33 շարաշուք յօդուածները, ու յետոյ սկսին բանակցել էջմիածնին պատակաւոր թեմեաւ միացման ու վերադարձի միջոցներուն մասին:

Թէեւ, այդ սրկու յօդուածները բացառիկ սրտուժով մը կրնային սրբուիլ, նոյնիսկ Գարեգին Արք. Սարգիսեանը աթոռակից կաթողիկոս ընարող ընդհանուր ժողովին մէջ, իբրեւ էջմիածնի Վեհափառ Հայրապետին գերագահութիւնը ճանչնալու հաշտարար արարք մը: Եւ կամ՝ մինչեւ անոնց վերացումը Մայր Աթոռի համապատասխան կողմէ՝ թեմերու միացման բանակցութիւններ կրնային կատարուիլ, եւ իբրեւ դրական ու դիւրին նախաքայլ, Յունաստանի փոքր թեմը կարելի էր միացեալ փոխանցել Մայր Աթոռի հովանիին: Չէ՞ որ էջմիածնի թեմերէն հատուածներ իլուած եւ Անթիլիասի կապուած էին՝ երբ տակաւին գոյութիւն չուէին թիւ 32 եւ 33 յօդուածները, որոնք յետոյ դարձուցան, պարզապէս կատարուած այդ սպօրինի հերձուածումներուն «օրինակորի» պիտակը տալու համար:

Մայրավանքը կը շարունակէ ներքնապէս մեծնալ ու գեղեցկանալ: Մեր գրոյցը տեղի ունեցաւ նոր վեհարանին մէջ, որ իր արտաքին շքեղ երեւոյթով եւ ներսի բաժանումներուն ճոխութեամբ՝ արքայական փառակերտ պալատի մը կը նմանի: Ան կը պարունակէ բնակութեան սենեակներ ամէն յարմարութեամբ օժտուած եւ բազմաթիւ փոքր ու մեծ սրահներ, որոնց մէկ մասը վերածուեր է թանգարանի, ուր ցուցադրութեան դրուեր են եկեղեցական թանկարժէք սպասներ, առարկաներ ու հանդերձներ, նաեւ պատմական իւզանկարներ պատերու վրայ, որոնք հեռաւոր կամ մօտաւոր անցեալին, տարբեր գաղութներու կողմէ նուիրուեր են Մայր Աթոռին:

Բայց այնտեղ, ամենէն անսովոր եւ զմայլելի գանձերը՝ հայերէն լեզուի ոսկեծոյլ առուերն են, կրկնակ կղզւանքներով փակուած ամուր պահարանի մը մէջ եւ ծածկուած վարագոյրի մը ետեւ: Երբ կը բացուին անոր երկփեղկ դռնակները, դիտող աչքերը կը շլահան պարզուող լուսավառ հրաշալիքի մը գեղեցկութեան առջեւ: Դիմացը՝ հայերէն այբուբենն է, ամէն գիր ձեռքի մը ծաւալով, զուտ ոսկեծոյլ, որոնց բոլորին համար գործածուած է շուրջ 18 քիլօ ծանրութեամբ ոսկի: Ամէն տառ քանդակուեր է իրարմէ տարբեր ինքնուրոյն ոճերով եւ անոնց երեսները զարդարուած են ազամանդի եւ ուրիշ գունազեղ թանկագին քարերու շողջողուն ճոխութեամբ: Յզացումի, ճաշակի եւ արուեստի սքանչելի ընդելուզում մը, որ դիտողը երկիւղած հիացումով կը հրապուրէ ու կը համակէ ազգային հպարտութեամբ: Որովհետեւ, շատ աւելի հզօր ու հարուստ երկիրներ որակով ու քանակով անհամեմատ առաւել փարթամ թանկարաններ ունին հարկաւ. բայց անոնցմէ ո՛չ մէկը իր լեզուին տառերը այսպէ՛ս, ոսկիով, անհամար թանկարժէք քարերով, եւ սէրով ու գեղեցկութեամբ յօրիներ ու նուիրագործեր է, ինչպէս ըրած է հայ մողովուրդի ոսկեկան կեղրոն էջմիածնի մայրավանքը, - այսինքն, անոր իմացական լոյսին, հողեւոր հաւատքին եւ ազգային մշակոյթին արտյեան Փահակայր:

Մինչ լուռ գմայլանքով կը դիտէի այդ տառերը, միտքս խռովեց անորդ զէպքի մը վերջիչումը: - Հայաստանէն հեռացած տիտղոսաւոր ստահակ մըն էր, որ քանի մը տարի առաջ, վատօրէն զրպարտեր էր Վեհափառ Վազգէն Կաթողիկոսը, որ... ոսկիի եւ հաշիշի մաքսանենդութիւն կը կատարէր, էջմիածնի վանքին մէջ իրեն համար հարստութիւն դիզելով: Եւ որոշ թերթեր շեփոթեցին այդ ստալօղ, անուպայ յերիւրանքները Ամենայն Հայոց Հայրապետին դէմ, որուն ստաքինի եւ շնորհագարդ յատկանիշները օտար կրօնապետներ անգամ կը ներբողէին անվերապահ ակնածանքով:

Իսկ վեհարանի պալատին աջ կողմի ընդարձակ գետինին վրայ

արդէն հիմերը փորուեր էին եւ սկսեր էին կառուցանել երկյարկանի գեղակերտ շէնք մը, որ պիտի դառնայ էջմիածնի թանգարանը. եւ ուր պիտի պահուին Մայր Աթոռին անցեալի, ներկայի ու գալիքի բոլոր արուեստի, կրօնական ու մշակոյթի արժէքաւոր գանձերն ու նիւթերը: Վեհափառը ջերմ գնահատանքով յայտնեց, թէ այդ թանգարանին շինութեան ու կահաւորման ամբողջ ծախքը նուիրած է մեծագոյն բարերար Պրն. Ալեք Մանուկեանը:

Վերադարձանք վեհարան եւ փորձեցի իմ հպարտ ուրախութիւնս ու հիացումս արտայայտել էջմիածնի վանքէն ներս իրագործուած այս նոր ու սքանչելի յաւելումներուն համար: Յետոյ անոնց շուրջ գրոյց է մը ետք աթոռէս ելայ իրմէ հրաժեշտ առնելու: Ինք բնկերացաւ ինձի եւ խօսակցելէն քայլեցինք մինչեւ դուռը: Խնդրեցի որ այ չյօգնի սաքի մնայով եւ ձեռքերս խոնարհարար երկարելով իր աջը համբուրեցի ու բամբուկեցայ: Մինչեւ դուրս ելլելս՝ զարձայ ետեւ եւ յուզումով նայեցայ իրեն: Ան կանգնած էր չոն, սպիտակ մագերով ու մօրուքով շրջանակուած բարեմոյն գէմքին պայծառ վեհութեամբ: Բայց իր մպիտին վրայ եւ աչքերուն մէջ կը յաճէր խոր ու վեհ մտմտութիւն մը, որ երկար առեն հայածեց զիս ցաւագին յաճախանքի մը նման:

Կաթողիկոսարանին ինքնաշարժով Երեւան վերադարձիս ճամբուն վրայ, կառքին ետեւ առանձին նստած, ես ինձի կը հարցնէի, - Սակայն ինչ ո՛ւ: Ահաւասիկ Հայ Եկեղեցիի 17 զարերու պատմութեան մէջ՝ տասնեակ մը ամենէն մեծագործ ու շնորհագարդ հայրապետներէն մէկը, Վեհափառ Վազգէն Ա. Կաթողիկոսը: Քսան տարիներու գահակալութեան մը կարճ շրջանին՝ ան Հայ Եկեղեցիին խոնարհ անունն ու վարկը բարձրացուց միջազգային ճանաչման ու գնահատանքի գերագոյն մակարդակի մը: Ան անսպառ խանդով վերափոխեց, ճորտացուց ու գեղեցկացուց էջմիածնի վանքը, Մայր Տաճարը եւ յարակից շէնքերը: Ան իրենց պատմական հարազատութեան մէջ վերականգնեց հազարաւոր տարիներէ ի վեր կիտաւեր կամ քանդուած բազմաթիւ վանքեր ու եկեղեցիներ: Ան իր անձին օրինակով ու ներշնչումով՝ հոգեւոր զարթօնք արժարծեց թէ՛ Հայաստանի եւ թէ՛ սփիւռքի հայ համայնքներուն մէջ: Աքանչելի պողաւորում մը առաքելական հաւատքի, նուիրումի ու կամքի:

Եւ կը մտածէի տակաւին: - Հռովմէական Կաթողիկ եկեղեցին եւ անոր Պապը՝ Հայ Եկեղեցիին գերագոյն գլուխ կը ճանչնան ու կը յայտարարեն՝ Վեհափառ Վազգէն Կաթողիկոսը: Յոյն Օրթոտոքս Եկեղեցին եւ անոր տիեզերական պատրիարքը՝ նաեւ ուրս, ուրմէն, պուլկար օրթոտոքս եւ ուրիշ ուղղափառ եկեղեցիներու կաթողիկոսներն ու պատրիարքները՝ Հայ Եկեղեցիին բարձրագոյն պետ կը ճանչ-

նան էջմիածնի Մայր Աթոռին գահակալ Վեհափառ Վազգէն Հայ-
 րապետը: Անկլիքան Եկեղեցին եւ Քենթրբրայրիի Արք.ը՝ Հայ Եկե-
 ղեցիին անվիճելի գլուխ կը ճանչնան ու կը մեծարեն Վեհափառ
 Վազգէն Կաթողիկոսը: Նոյնիսկ օտար ազգերու պետական վարիչ-
 ներ, նոյնիսկ իսլամ երկիրներու առաջնորդներ՝ Հայ Եկեղեցիին
 գերագոյն իշխանութիւն կը ճանչնան էջմիածնի կրօնական գահը եւ
 Վեհափառ Վազգէն Հայրապետը: Եւ ողբերգական հեղանակ է, որ
 համաշխարհային այս բնոյճանուր ճանաչման հանդէպ՝ Հայ Եկե-
 ղեցիի ծոցէն հերձուած հատուած մըն է միայն, որ տակաւին կը
 վիճի, կը մերժէ, կը սակարկէ՝... Վեհափառ Վազգէն Կաթողիկոսը
 ճանչնալու եւ բնորոշելու իրրեւ Հայ Եկեղեցիին նուիրապետական
 հաստատութեան հոգեւոր գերագոյն պետն ու հեղինակութիւնը:
 Եւ կ'ախոսուայի ու կ'ամչնայի, - ինչո՞ւ գտնուէին արիչ հայե՛ր, որ
 այս եղբրական հակասութեան վիշտն ու թախիծը պատճառէին Վե-
 հափառ Հայրապետին:

Երբ արտասահման վերադարձայ Հայաստանէն, հրապարակային
 հաւարոյթի մը բնթացքին եղած հարցումի մը պատասխանելով՝ ար-
 տայայտուեցայ այդ փոստը երեսոյթին շուրջ: Զեռնարկին ներկայ
 փորձապետ մը, յետոյ առանձին ինձի թելադրեց գտնել ու կարգայ
 «Հայրենիք» օրաթերթին մէկ խմբագրականը, ուր իրրեւ պատգամներ
 արձանագրուած էին Հայ Եկեղեցիի միութեան միջոցներն ու պայ-
 մանները: Եւ յիշեց այդ թերթին թուականը: Փնտռեցի գայն եւ հիմա
 գրասեղանիս վրայ ունիմ «Հայրենիք»ի այդ խմբագրականը, «Նոր
 Անկլիկոսադարձի մը Առջեւ» խորագիրով, հրատարակուած Յունիս 30,
 1977-ին, Անթիլիասի մէջ Գարեգին Աթոռակից կաթողիկոսի բնարու-
 թեան տնիթով եւ անոր օժուովն ամիս մը ետք:

Չայն կը կարգամ ազդութեամբ ու գառն բնոյճուով: Հոն կա-
 տարուած են բմահաճ մեկնութիւններ, յաճախ կրկնուած անցեալի
 խեղաթիւրումներ: Բայց ինչ որ ախոսուայի է՝ այդ վաղեմի գեղձա-
 նումներու շարունակուելն է ներկային մէջ, երբ եկեղեցական միու-
 թեան հեա՝ սփիւռքահայ ազգային միասնականութիւն իրագործելու
 յուսալից ջանքեր կը թափուին եւ լուստես ակնկալութեամբ կը հա-
 մակեն գազութահայ բոլոր համայնքները:

Հազորդուած ու հաստատուած կը սկիզբէն, թէ Վեհափառ Վազ-
 գէն Հայրապետը յօժարած էր, որ էջմիածին երկու պատուիրակ-
 ներով մասնակցէր Անթիլիասի մէջ կատարուելիք աթոռակից կաթո-
 ղիկոսի բնարութեան եւ օժուին՝ որովհետեւ Կիլիկիոյ Աթոռին պե-
 տերը յանձնառու եղած էին գործադրել ճանօթ հինգ նախապայման-
 ներ: Անոնց երկու գլխաւոր առաջադրանքներն էին, - իրենց սահ-
 մանադրութեան աւելցուած թիւ 32 եւ 33 յղուածները ջնջել, որով-

հետեւ անոնք էջմիածնական թեմերու մէջ պառակտուած հերձուա-
 ծումները կը հաստատէին. եւ յետոյ՝ իրագործել բաժնուած թեմե-
 րուն վերադարձը Ամենայն Հայոց հայրապետութեան հովանիին:

Բայց «Հայրենիք»ի այդ խմբագրականը դժբախտաբար հիմնովին
 յեղաշրջեր է իրողութիւնը: Ան կը յայտարարէ ամօթալի յաւակնու-
 թեամբ մը.

«Գարեգին Կաթողիկոսի հիմնական ձգտումներէն մէկը պիտի
 ըլլայ, մեր կարծիքով, Անթիլիասը իր աշխարհագրական պատկա-
 ցելիութենէն դուրս բերել եւ վերածել համասփիւռքեան ազգային-
 հոգեւոր կեդրոնի մը՝ որուն համագալից դերակատարութիւն է
 վերապահուած: Լիբանանեան արուարձան մը ըլլալով հանդերձ, ան
 կոչուած է կիլիկեան բոլոր թեմերուն եւ սփիւռքեան բովանդակ հա-
 յուրեան ազգային, մշակութային, հոգեկան ապրումներուն, նա՛ն
 Հայ Դատի բարձր գիտակցութեան մէկ խորհրդանիշը դառնալու:»

Սակայն այս անհեթեթ մտայնութիւնն էր, որ աւելի քան քսան
 տարիներ բուռն վէճերով, պայքարներով, նոյնիսկ արիւնայի բա-
 խումներով (Պէլլուրթ, 1958) պառակտեց սփիւռքահայ համայնքները:
 Եւ արտասահմանի հայութեան ջերմեռանդ մաղթանքն է, անոր ար-
 գար ակնկալութիւնն է, որ հեազհեա յստակացող կացութեան իրա-
 պաշտ ըմբռնումով՝ Անթիլիասի զոյգ կաթողիկոսները պիտի ճանչ-
 նան եւ բնորոշեն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին Գերագա-
 հութեան իրաւունքն ու հեղինակութիւնը, պիտի բաւարարուին Կի-
 լիկեան Աթոռին իրաւասութեան ենթակայ չորս թեմերով (Պէլլուրթ,
 Կիպրոս, Հալէպ ու Դամասկոս) եւ Մայր Աթոռէն խղուած թեմերը
 միացեալ համերաշխ՝ պիտի վերադարձուին էջմիածնի հովանիին:

Եւ ահա՛, անհաւատալի՛, արտառոց կամակորութեամբ մը, «Հայ-
 րենիք»ի խմբագրականը կը պատգամէ իրրեւ եկեղեցական միութեան
 ճամբայ ու պայման, որ Անթիլիասը «լիբանանեան արուարձանէ մը»
 բարձրացուի ու վերածուի «համասփիւռքեան... բովանդակ հայու-
 թեան ազգային, մշակութային, հոգեկան ապրումներու, նա՛ն Հայ
 Դատի» կեանքը, շարժումներն ու ձեռնարկները վարող հոգեւոր-
 ազգային-քաղաքական գերագոյն իշխանութեան մը, որուն խոնար-
 հարար ենթարկուին ո՛չ միայն էջմիածնի Մայր Աթոռը, այլ նաեւ
 սփիւռքահայ կուսակցութիւնները եւ բոլոր միւս կազմակերպու-
 թիւններն ու միութիւնները: Եւ այս ցնորական ծրագիրը կը ջատա-
 գովուի Լիբանանի մօտ երկու տարուան քաղաքացիական մահացու,
 կործանարար պատերազմէն ետք, տակաւին անոր սարսափներուն
 մղձաւանջը չփարատած, - երբ շարադէտ պատահար մը կրնար քանդել
 ու փոշիացնել Անթիլիասի վանքն ու գահը, իր նոյնիսկ սահմանա-
 փակ վարկով եւ իրաւունքներով:

Հիմա, միտքիս մէջ կը պատկերանայ Վեհափառ Վաղգէն կաթողիկոսը մեր հրաժեշտի պահուն կանգնած իր վեհաշուք հասակով, պայծառ զէմքին վրայ ու վճիտ աչքերուն մէջ ծփացող ցաւագին թախիծով մը: Եւ տիրօրէն կը հարցնեմ ես ինձի, — այդքան բազմա-վաստակ իրագործումներէ եւ շքեղ կառուցումներէ, այդքան անձնուրաց նուիրումի լիակատար պտղաւորումէն եւ ժողովրդային սիրոյ ու հաւատարմութեան անթառամ պսակներէն ետք՝ ինչո՞ւ Վեհափառ Հայրապետը երջանկօրէն պիտի չժպտէր անոնց ընծայած հրճուանքով ու հպարտութեամբ: Եւ ինչո՞ւ տրամուլեան այդ ցուրտ ամպը պիտի խափանէր անոր փարթեամբ վաստակին, անոր զմայլելի յաղթանակներուն արդար ուրախութիւնը: Ինչո՞ւ...:

× × ×

Հայաստան գանուելու մէկ ամսուան բնթացքին՝ քանի մը տարրեր պտոյաներով կրցայ չըջիլ աւելի քան 12 քաղաքներ եւ անցայ բազմաթիւ գիւղերէ: Անոնք բոլորը կ'ընդգրկէին մեր հայրենի երկրին մէկ երրորդ ծաւալը, — Սեւանի ամբողջ արեւմտեան երկայնքէն զէպի հիւսիս, — Դիլիջան, Կիրովական, Լենինական, Սպիտակ, մինչեւ հարաւ՝ Արտաշատ ու Արարատ, սահմանամերձ Նախիջևեանի: Ամէն ուղևորութեան՝ ինքնաշարժ կառքերնիս կը ճամբորդէր հարիւրաւոր մզոն, երբեմն աւաններէ անցնելով, յաճախ ամալի տարածութեան մը վրայէն, բայց շուրջերնիս յարատեւ վերափոխուող տեսարաններ, ուր վիթխարի լեռներ ու ողորկ բլրապարեր, եւ հարթ կամ գոգաւոր հովիտներ ու անդնդային կիրճեր կը ձուլուէին իրարու, վայրի, հեքիաթային համայնապատկերներ յօրինելով:

Գիւղերը նշանակելի յառաջդիմութիւն կատարեր են կենցաղային բոլոր մարզերուն մէջ: Նախկին հողէ ու փայտէ կէս գետնափոր տուներուն տեղ՝ հիմա քարակերտ մէկ ընտանիքնոց շէնքեր կանգնած են եւ անոնց հետ՝ նորաշէն դպրոցներ ու մշակոյթի կեդրոններ, նաեւ 3-4 յարկանի տուֆաշէն բնակարաններ: Առաջ, հողագործները երկրին ամենէն չքաւոր ու յետամնաց տարրը կը կազմէին: Հիմա՝ «Հայաստանի հարուստները մեր գիւղացիներն են», յաճախ կը կրկնեն Երեւանի բնակիչները ուրախ ծիծաղով: Անոնք իրենց անամերձ սեփական այգիներուն վրայ ազատօրէն կ'արտադրեն ինչ բերք ու սննդեղէն որ կը նախընտրեն, — թարմ պտուղներ, բանջարեղէն, պանիր, մեղր, հաւ ու հակիթթ, նոյնիսկ գառներ: Եւ զանոնք կը վաճառեն բաց կամ ծածկուած շուկաներու մէջ, նաեւ մօտաւոր խճուղիի մը եզերքին, որեւէ կառավարական հակալիշիո՞ղ գերծ եւ պետական խանութներէ աւելի սուղ գիներով, որոնք իրենց ընթացիկ եկամուտներէն վեր, կ'ապահովեն յաւելեալ շահեր:

Քաղաքները բնականօրէն վերափոխուած են շատ աւելի ծաւալուն տարողութեամբ: Դիլիջանը իր ընդհանուր տեսարանով, բնութեան հրաշագործ բմայրով յօրինուած հեքիաթային վայր մըն է, ուր բարձր լեռներ, խորունկ ձոր ու գետով եւ հեղօրէն մագլցող բլուրներ, ծառերու եւ թուփերու կանանչով պատած՝ կախարդական համապատկեր մը կը կազմեն: Նեղ հովիտին երկու եզերքներէն վեր, քարակերտ բազմայարկ ու գեղեցիկ շէնքերը՝ անոր նախկին գիւղական խոնարհ գոյութեան վրայ արդիական ուստանի մը կենսայի ծաղկումը եւ աճելուն թափը պատուաստեր են: Եւ Սեւանէն իջնող օձապտոյտ, յաճախ վտանգաւոր անկիւնաղարձներ ձեւող ճամբան աւելի ապահով դարձնելու եւ կարճեցնելու համար՝ լեռներու ծոցին մէջէն նոր փապուղի մը (թունել) կը բացուէր:

Իսկ քաղաքէն շուրջ 15 մզոն արեւելք, լեռնակողի բարձունքին կը կանգնի 800 տարիներէ ի վեր՝ համբաւաւոր Փոշավանքը, հայ միջնադարեան օրէնսդիւ Մխիթար Փոշի անունով, տուֆակերտ, անոր եկեղեցիին ու յարակից շէնքերուն համալիրով, որոնց պատերուն քանդուած կամ վիրաւոր մասերը վերականգնել են նոր քարերու քանդուածով: Կը թուէր թէ հեռուէն, վերէն, ան իր հաւաաքին ու ճշմարտութեան լոյսը եւ օրհնութեան շնորհը կը սփռէր չըջապատին ու մինչեւ ստորոտ, Դիլիջանի վրայ, ուր զեռ երկկ զգեանուած, թշուառ, արիւնջուայ հայութիւն մը այսօր կը վերածնէր կենսախայտ թափով, եւ վաղուան լուսեղէն տեսիլքով: Հետաքրքրական էր քաղաքին բացօթեայ շուկան, ուր լայն սեղաններու վրայ, գիւղացի մտանիքներ իրենց անամերձ այգիներուն ու պարտէզներուն բերքերը դիզեր էին, եւ անոնց կողքին՝ պետական խանութները, որոնք առանց իրարու առեւտուրին խառնուելու, գնորդներու բազմութեան կարիքներուն կը սպասարկէին:

Լենինականը (նախկին Ալեքսանդրաբոլ) երկրորդ մեծագոյն ուստանն է Հայաստանի, մայրաքաղաք Երեւանէն ետք: Ան երկաթուղային կարեւոր հանդուց մըն է, որ 1925-ի աղէտայի երկրաշարժին ցնցումներէն հիմնայատակ կործանած էր եւ յետոյ վերաշինուած: 1935-ին արդէն այցելած էի անոր արդիական սարքաւորումով մեծ սպանդանոցը, հիւսուածեղէնի ընդարձակ գործարանը եւ ուրիշ հիմնարկներ, որոնց վրայ ճարտարարուեստի ուրիշ ճիւղեր աւելցեր են: Հիմա, արձաններով, ծաղիկներով ու ցայտաղբիւրներով գեղեցկացած Լենինականի լայնարձակ հրապարակէն բացուող պողոտակացած երկայնքին՝ բազմայարկ ու քարակերտ բնակարաններ կը տարածուին մինչեւ արուարձանները: Իսկ հրապարակին շուրջ են քաղաքային ու վարչական պաշտօնաստաններ:

Հոն Գրոզնիերու Միութեան գրասենեակին մէջ հանդիպումներ

ունեցանք անոր քարտուղար՝ խանդավառ բանաստեղծ Շմաւոն Թորոսեանի եւ Լենինականի «Բանուոր» օրաթերթի (սպաքանակ 30,000 օրինակ) խմբագրութեան հետ, հետաքրքրական գրոյցներով Հայաստանի եւ սփիւռքի մէջ զարգացող գրական նոր ձգտումներու եւ արուեստի տարագներու մասին: Յետոյ ուղերձներ ըրինք Ա. Մուսեան երկրորդական վարժարանի սրահին մէջ, ուր համախմբուած էին աշակերտներ, ուսուցիչներ ու պաշտօնեաներ: Այս հրապարակային հանդիպումը յուզիչ եղաւ բոլորիս համար:

Քաղաքին նորագոյն եւ ամենէն արտակարգ կառոյցն է, բլուրի մը հարթ կատարին շինուած գոհերու վիթխարի ու գեղակերտ յուշարձանը, ուր այցելուներ կը բարձրանան երկկողմանի հարիւրաւոր աստիճաններէ, որոնց մէջտեղէն փոքր ջրվէժներով վար կը հոսի ջուրը: Փագաթէն, եղբրական անցեալի վերջիչումին արտմութեամբ եւ ներկայ հոյակապ շրջապատին ներշնչած հրճուանքով դիտեցի Լենինականը, — անոր պետական ու կրթական հիմնարկները, գրաւիչ չէնքերը, գործարաններն ու կանանչ ծառերու ընդարձակ զօտիները, պողոտաներէն մինչեւ հեռաւոր բացաստաններ: Յետոյ, արդիական ճաշարանի մը երկրորդ յարկին վրայ եւ առանձին բաժնի մը մէջ, հիւրընկալութեամբ Լենինականի Հայ Գրողներու Միութեան քարտուղար, բանաստեղծ Շմաւոն Թորոսեանի, ընթերցեցին խմբովին: Եւ խորովածի համեղ ճաշերուն հետ, յորդ զգացումներով ու հեռահաս մաղթանքներով ջերմացած բաժակաճառեր խօսեցան հիւրընկալը, «Սովետական Գրականութիւն» ամսագիրին խմբագիր եւ վաստակաւոր արձակագիր Ստեփան Կուրտիկեանը, որ նաեւ գլխաւորողն էր մեր այս շրջապատային, բանաստեղծ ու նկարիչ Մկրտիչ Հաճեանն ու տիկինը (Մեքսիկոյէն) եւ ուրիշ հիւրեր: Հայրենի հողին վրայ միացած ըլլալու մեր բնական ուրախութեան կը խառնուէր բաժանումի եւ կրկին զէպի հեռաւոր անջրպետներ նետուելու թախիժը:

Տարբեր է Կիրովական (նախկին Ղարաբախի) քաղաքը, դահաւիճ լեռներու ստորոտին, որ անտառի փէշերէն կ'իջնէ մինչեւ ձոր ու գետ ու կը տարածուի հովիտի երկայնքին: Կը յիշեմ կեդրոնի լայնածիր ու ծաղկազարդ հրապարակը գրաւիչ ցայտաղբիւրներով ու աւազանով, եւ շուրջը՝ կառավարական հինգ-վեց յարկանի հսկայ հիմնարկներ ու հիւրանոց: Հիմա ապշեցուցիչ թափով աներ ու զարգացեր է Կիրովականը, թէ՛ իր ծաւալով եւ թէ՛ բարձրութեամբ: Ընդարձակ հրապարակին շրջագիծէն ճառագայթներու նման բացուող պողոտաներու վրայ, հողէ, փայտէ ու քարէ շաղախուած հին տնակներուն տեղ կառուցուած են բազմաշարկ գեղակերտ բնակարաններ, որոնցմէ շատերուն առաջին յարկերը խանութներ ու վաճառատաններ են, անդեղէնի ու անային առարկաներու ճոխ, այլազան պա-

շարներով: Աւելի վար, իր հին ու նոր բաժիններով փոուեր է Կիրովականի քիմիական մեծ գործարանը, ճարտարարուեստական ուրիշ ձեռնարկներու հետ:

× × ×

Տարբեր օր մըն է եւ ուրիշ ընկերակիցներ: Մեր ինքնաշարժը Երեւանէն կ'իջնէ գէպի հարաւ, հարիւրաւոր քիլոմետրի ուղեծիրով մը: Նախ կ'անցնինք նախկին Ղամարու աւանէն, որ հիմա կը կոչուի Արաւաշտ հայկական քաղցրայուր անուամբ: Աւելի վար՝ բազմաթիւ նորակառոյց չէնքերով ամառ Արարատ քաղաքն է, իր սիմենթի հսկայ գործարանով, եւ Հայաստանի մէջ ամենէն մերձաւոր վայրն է Մասիս սարերուն: Եւ երկու Արարատները, — լեռն ու ոստանը կը կանգնին իրարու հանդէպ Արաքս գետի հակոտնեայ ափերուն, պայպենական սրտառու ժառանգութեան մը մէջ:

Բայց քաղաքը առաւել սուիրականութիւն մը ունի որպէս զբացի թոր Վիրապ պատմական վանքին, որ վերապրած է միջին դարերէն ի վեր: Ան իրապէս պարսպապատ ամրոց մըն է, կառուցուած բարձր բլուրի մը կատարին, ուր հասնելու համար ինքնաշարժէն իջնելէ ետք հարկ է մագլցիլ քայլով: Ժամանակէն ու ոտիներէն զարնուած՝ կիսափուլ են պարիսպ ու պատ, որոնց շրջափակէն ներս կան բազմաթիւ ժայռափոր խուցեր, պահեստի սենեակներ, փոսեր, աստիճաններ եւ եկեղեցին: Մանաւանդ սրբազան թոր Վիրապը, նեղ ջրհորի մը նման, որուն խորութեան մէջ, աւանդութեան հաւաստումով՝ նետեր էին Գրիգոր Լուսաւորիչը, որ անոր խաւար յատակին տարիներով տանջուեր էր, բայց վերապրեր էր հրաշքով, վերէն զազանի իրեն ձգուած հաց ու ջուրով:

Երիտասարդ աղջիկներ ու տղաք անոր շուրջ կարգի կը սպասէին վար իջնելու եւ թերեւս վիհին խորը թանձրացած հազարամեայ խորհուրդին հաղորդուելու համար: Անոնք նաեւ շրջապատեր էին սպիտակ մագերով երէց կին մը, որ իր յուզիչ ձայնով անվերջ աւանդավէպ մը կ'երգէր: Բլուրի ստորոտին ու կողերուն եւ վանքէն ներս ուխտաւորներու ահագին բազմութիւն տարածուեր էր, եւ գառներ ու աքլորներ կը մորթուէին, եւ հողէ ու քարէ ձեւուած օճախներու կրակէն մատաղի խորովածին բոյրը կը բարձրանար ծուխին հետ: Եւ ընտանիքներ եկած էին ոչ թէ հետիոտն, կամ ջորի եւ աւանակ հեծած, այլ սեփական ինքնաշարժ կառքերով: Անոնք արդի հայերն էին, որ ազգային անցեալի փառքերուն ու վէրքերուն հպարտութիւնն ու վիշտերը, խնջոյքի սեզաններու շուրջ կը խառնէին իրենց ներկայի տենչերուն ու հրճուանքին:

Բայց Սոր Վիրապի Հնադարեան վանքը ուրիշ հրապոյր մըն ալ ունի հայրենի երկրէն կամ պանդխտութեան ափերէն հոն ուխտի եկած հայերուն համար: Ահա կը կանգնիմ բերդի արեւմտեան պարիսպին ու նայուածքս յամբողջ կը շրջեմ ամբողջ հորիզոնին վրայ: Մեր բլուրի ստորոտէն մինչեւ դիմացի Արարատ լեռան միզապատ քրդանցքները, կանանչ դաշտադետին մը կը տարածուի, պարտէզներով ու ծառերով ծածկուած: Անջրպետը սեղմուած կը թուի եւ եթէ ձեռքիս քարը նետեմ դէպի Արարատ, այն պատրանքը կ'ունենամ թէ զայն պիտի կարենամ հասցնել անոր հեզասահ ջուրերուն փայլուն մակերեսին:

Արարատը իր վիթխարի գանգուածով, կախարդական վեհութեամբ եւ մինչեւ կողերը ձիւնածածկ, լեցուցեր է դիմացի համայնապատկերը, իր կողերով կարծես գրկած Փոքր Մասիսը, որ թշնամի դաւադիր ձեռքեր զայն շխնի իրմէն: Ընկեր մը ցուցամատը կ'ուղղէ դէպի վար:

- Տեսնո՞ւմ ես, Արարատից էս կողմ է՞ գիշաթելերը, դրանցից դէնը կարելի չէ անցնիլ, կ'ըսէ ան:

- Ուրեմն այսքան մօ՞տ ենք Հայաստանի եւ թուրքիոյ սահմանադրութիւն: Քաշելով 10-15 վայրկեանէն կրնանք հասնիլ հոն, չէ՞:

- Դէ՛, ի հարկէ մօտ ենք, դրացի, էլի՛...: Իսկ Արարատից էն կողմը անսն՞ում ես է՞ գիշտարակները:

- Հա՛, այդ քառակուսի տուփերը, ի՛նչ է, թուրքերը հոն քարի՞ւղ կը հանեն, - կը պատասխանեմ խնդալով:

- Չէ՛, դրանք թուրք սահմանապահ զօրքի դիտարաններն են, որտեղից նրանք հսկում են մեր շարժումներին, գուցէ նախանձով մեր խորովածի հաճելի հոտն են քաշում, - կ'աւելցնէ ան քմծիծաղով:

- Իսկ ինչո՞ւ հայկական կողմը անոնց նման սահմանապահ զինւորներու աշտարակներ չկան, - կը հարցնեմ զարմանքով:

- Երեւի կարիք չի զգացում, - կը յարէ միւսը... , որքան ժամանակ Մոսկուան կանգնած է մեր թիկունքին՝ թուրքիան չի յանդրգնի Հայաստանի վրայ յարձակուել: Եթէ մի այդպիսի յիմար փորձ անի՛... - եւ ան կը ժպտի, ձայնին մէջ բաղձանքի մը շեշտը:

Կարօտով ու յուզումով թաթաւուն վերջին ակնարկ մը կը պտըտցրնեմ արեւմուտքի հմայիչ համայնապատկերին եւ Սոր Վիրապի վանքին կիսափուլ պարիսպին, խուցերուն, եկեղեցիին եւ ուխտաւորներու զուարթ քաղմութեան վրայ, ու կ'ուղղուիմ դէպի վայրէջք: Արարատ քաղաքին մէջ ճաշի հիւր պիտի ըլլանք մտերիմ յարկի մը տակ: Բայց ճամբուն վրայ ծանօթ ընտանիքի մը տան առջեւէն պիտի անցնինք եւ պաշտօն կը նկատուի, որ հեռաւոր Ամերրպայէն եկած այցելուն ներկայացուի անոնց «մի քանի բոպէ»: Եւ վերէն փութացած երիտասարդ անդամներ մեզ կ'առաջնորդեն երկրորդ

յարկը եւ բնակարանի դուռերէն ներս: Մօտ երեսուն հոգիներու քաղմութիւն մը խոնուած է հոն, - գերդաստանի մը զաւակները, չորս սերունդներէ բաղկացած, որոնք համախմբուած են աւանդական ճաշին: Այրերը, տարեց կամ պատանի, նստած են բնոյրածակ հիւրանոցին կեդրոնը յարգարուած երկար սեղանին շուրջ: Իսկ կիներ ու աղջիկներ յարակից սենեակին ու խոհանոցին մէջ են: Աղմկալի, ջերմ ողջոյններու փոխանակումէն վերջ՝ ի գուր կը փորձենք մեկնիլ:

Սնդրելով, պնդելով, պարտադրելով մեզ ալ սեղանակից կը դարձնեն իրենց, մեր պնակներուն մէջ կը լեցնեն խորոված գոռնուկի ուղեղ, համեղ միս եւ այլազան աղանդերներ, յաւաշ հացով: Եւ բաժակները, կոնեակով կամ գինիով լեցուն, կը յաջորդեն իրարու, միօրինակ բայց սրտայոյզ ճառերով:

- Մեր Հայաստանին պայծառ կենա՛ցր:

- Հայ ժողովուրդի փառաւոր ներկայի՛ն համար:

- Թող անասան մնայ Հայոց եւ ոուսաց բարեկամութիւնը:

- Մեր արտասահմանի պանդուխտ եղբայրների կենա՛ցր, որ իրենց ազգութիւնը, լեզուն ու հաւատք անվթար պահեն:

Հայկական այս առհասարակ, անբացատրելի հիւրասիրութիւնը՝ սեղաններով բայց մանաւանդ սիրտերով: Ի՛նչ արտակարգ երեւոյթ է իրապէս: Բոլորովին անձանօթ մարդիկ ու կիներ կը կալանաւորեն, գրեթէ կը շղթայեն քեզ իրենց ընկերակցութեան ու խնջոյքին եւ ցաւցնելու աստիճան կը ստիպեն, որ մասնակից դառնաս իրենց ազ ու հացին, իրենց զգացումներուն ու մաղթանքներուն զեզումին: Եւ նոյն ատեն՝ անոնց այդ հարազատ ու ջերմ հիւրընկալութեան հանդէպ աշքերդ կը լեցուին սպշութեան ու յուզումի արցունքներով:

Այդ զուարթ որամաղորութեամբ կանգ առինք բազմայարկ գեղեցիկ շէնքի մտ դր. ն առճեւ:

Վերը, սոց Նորնկալոյ ազգական ընտանիքը ճոխ բնիկի մը կը պատրաստէր:



Սեպտեմբերի վերջերուն էր, երբ հայաստանի ցրտաշունչ ձմեռը քմահաճ անակնկալով մը արշաւեց աշունին սահմաններէն ներս: Եւ քանի մը օրուան զրոհով՝ ձիւնի թանձր խաւերով ծածկեց Արարածի գագաթները մինչեւ ստորոտ, Արարատը պարուրեց անարատ սպիտակ խաւով եւ երկրին ամբողջ լեռնաշխարհը պատեց ձերմակ գեղեցկութեան մը հմայքով: Եւ ան ստիպեց Երեւանի բնակիչները, որ հեռաւոր բարձունքներէն սփռուող սառն հովերուն զէմ պաշտպանուելու համար սկսին հագնիլ իրենց վերարկուներն ու մուշտակները:

Մեծագոյն փափաքներէս մէկը եղած էր այցելել Արփա-Սեւան ընդյատակեայ ջրանցքը, որ իր աւարտին կը մօտենար: Եւ առաւօտ մը, Արմենիա հիւրանոցին առջեւէն մեր ինքնաշարժը մեկնեցաւ դէպի Սեւան, երկար ուղեւորութեան, որմէն վերադարձայ իրիկունը ուշ ատեն, իբրեւ հաճոյալի զրուցակից ունենալով Սփիւռքի Կոմիտէի Ամերիկայի բաժնի վարիչ Պարգեւ Մարտիրոսեանը, իր զերին նուիրւած համակրելի առաջնորդ մը: Յարատեւ մազլցումով մեր կառքը բարձրացաւ մինչեւ մեծ լիճին վերին ափերը, յետոյ քանի մը ժամ առաջացանք անոր արեւմտեան ամբողջ երկայնքին, դէպի հարաւ, անցնելով Կամօ, Մարտունի, Ծովինար քաղաքներէն, մինչեւ հասնիք հարաւային ծայրը, - Վարդենիկ եւ Վարդենիս:

Սեւանի ցամաքուն մասին կարդացեր ու լսեր էի յուսահատ, սրտառուչ դամբանականներ, որոնք քիչ մը զգայացունց զեզումներով անոր մահը կ'եղերերգէին: Եւ ահա ապշութեամբ ու հրճուանքով կը դիտեմ անոր անծայրածիր տարածութիւնը, չըջապատի լեռնապարեւուն կախարդական գեղեցկութեան մէջ: Հրազդան գետին հոսանքը շարք մը ելեկտրակայաններու եւ մշակուող այգիներու ոռոգման ցանցերուն անհրաժեշտ ջուրերը հայթայթելով՝ լիճին մակերեսը իջեցուցեր է 6-7 կանգուն, բնականօրէն պակսեցնելով նաեւ շոգիացումին կորուստը: Հարկաւ անոր չըջագիծը նուազեր է իբրեւ հետեւանք, ուրեմն փոքրացեր է ան: Բայց տակաւին, այդ «պզտիկ-ցած» Սեւանին երկարութիւնը աւելի քան 70 քիլոմետր կը մնայ, իսկ յայնքը յաճախ այնքան ընդարձակ, որ մէկ եզերքէն միւս ափը կարելի չէ տեսնել: Ծովանման լիճ մըն է ան, եւ Արփա-Սեւան ընդյատակեայ ջրանցքին վիթխարի ձեռնարկը կ'առաջադէ կայունացնել անոր ծաւալը:

Բայց Սեւանի մակերեսին ցածնալը ունեցեր է նաեւ շահաւէտ արդիւնք մը: Անոր ծանծաղ մարզերուն ջուրերուն իջնելով՝ հարթ ու արգասանդ հողամասեր բացուած են: Եւ հաճելի զարմանքով կը տեսնեմ ընդարձակ այգիներ ու մրգաստաններ, որոնք կը պտղաւորուին հարուստ բերքերով: Ու կը մտածեմ, - Հայաստան ջուրի չափ, կամ գեղապաշտ ճաշակներու յագեցման կարիքին չափ կարօտն ունի նաեւ մշակելի հողերու: Ուրեմն երբ մէկ կողմէն մարդիկ կ'ողբան Սեւանի ջուրերուն քիչ մը նուազելուն համար՝ ինչո՞ւ նոյն ատեն գոնէ չեն սփոփուիր, որ այդ կորուստը հայ ժողովուրդին կը պարգեւէ հազարաւոր արտավար բերրի հողաչերտեր, որոնք իրենց յաւելեալ հունձ-բերով կրնան աւելի բարելաւել բնակչութեան կենցաղային մակարդակը:

Արփա-Սեւան գետնափոր ջրատարը միջազգային շափանիչով յանդուգն ու վիթխարի ձեռնարկ մըն է, աւելի քան 48,500 մետր

երկար, եւ փորատուած քանի մը հարիւր մետր խորութեամբ, լեռներու ապառաժէ ընդերքին մէջէն: Անոր հարաւի մուտքին, Արաքսի ծոցը իջնող Արփա գետին ջուրերը ամբարտակուելով՝ պիտի շրջուին դէպի հիւսիս եւ նորակառոյց ջրանցքէն հոսելով պիտի թափին Սեւանի մէջ: Այս արտակարգ ծրագիրը իրագործելու համար հազարաւոր բանուորներ համախմբուելու էին հոն՝ Հայաստանի եւ Սովետ-Միութեան տարբեր երկիրներէն, եւ անոնք աշխատեցին հայ եւ ուրիշ ճարտարագէտներու ղեկավարութեան տակ:

Ջրատարի յատակագծի երկայնքին, իրարմէ հեռու չորս տեղերէ լեռներու մակերեսէն վար լայն ու խորունկ հորեր փորեր էին մինչեւ յատակը: Եւ ամէն հորանի մէջէն սկսեր էին պեղել հողը, քարերն ու ժայռերը դէպի հիւսիս եւ հարաւ եւ ճարտարագիտական վարպետութեամբ, որոշուած կէտերու վրայ խրամները հանդիպեր ու միացուել էին, ամբողջացնելու համար ընդերքային գետուղին:

Թիւ երեք հորանին մօտ իջանք կառքէն ստունաշունչ ցուրտին դէմ եւ ձիւնին վրայէն քալելով մտանք ընդարձակ խանութը, ուր կենսապիտոյքի եւ ուրիշ ընթացիկ կարիքներու համար առեւտուրի եկած էին այրեր ու կիներ, - կեանքի պողպատակերտ ովասիս մը շուրջի լեռնակատարներու սպիտակ ամայութեան մէջ: Հոն փնտնեցինք վարիչ պաշտօնեաներ: Կ'ուզէի անոնց հետ հանդիպում ու զրոյց ունենալ եւ յետոյ իջնել մինչեւ յատակը, փորող ու պատերը կրահողով ամրացնող բանուորներուն մօտ: Բայց զլիսաւոր աշխատանքները հոն աւարտեցին արդէն: Եւ ստիպուեցանք երթալ թիւ 4, վերջին հորանին մարզը: Գարձեալ երկար ճամբու մը ելեւէջներով օրօրուեցանք եւ մեր ինքնաշարժը կանգ առաւ անոր զրասենեակին առջեւ, ուր մենք ելանք դուրս եւ սաստիկ ցուրտէն պիտի փութայինք ներսի հաճելի ջերմութեան մէջ:

Բայց ապահար ու անշարժ կեցայ գառիվայրին վրայ: Եւ նայլածքս յամբօրէն սահեղաւ չըջապատի համայնապատկերին երկայնքով եւ կարթուեցաւ անոր գմայլելի գեղեցկութեան: Մենք արդէն քանի մը հազար ոտք բարձրութեան վրայ ենք: Սակայն մեր շուրջ հսկայ լեռներու եւ անոնց կողերուն ծուարած բլուրներու միաձոյլ զանգուածները կը կանգնին վիթխարի պարիսպներու նման, ծածկուած ձիւնի թանձր խաւերով, որոնք սպիտակ, անարատ հրապոյրով մը պատեր են զանոնք: Հայրենի լեռնե՛ր, իրենց քաղցր ու ճերմակ կախարդանքով հմայիչ: Ու ձեռքերս բնագործին կ'երկարին առաջ, անոնց փարելու կարօտով, այնքան մօտ կը թուին անոնք:

- Էստեղ ցուրտ է, դուք կը մըսէք, գնանք ներս, - կը լսեմ մտերիմ ձայն մը քովէս:
Ես մատնացոյց ըրի ներքեւի շարք մը գործարանները:

- Իսկ ատոնց մէջ կ'երեւի ջրանցքին անհրաժեշտ մեքենաներն ու կազմածնէ՞րը կը շինեն կամ կը նորոգեն:

Երբ դարձանք դէպի վեր, տեսանք բազմաթիւ տուներ ու շէնքեր, որոնց մէջ կ'ապրին եւ որոնցմէ իրենց պիտոյքները կը հոգան թիւ 4-ի մարզրս համար աշխատող բանուորներ, պաշտօնականներ ու ճարտարագէտներ, իրենց ընտանիքներով: Երթեւեկող գործաւորներ կը բոլորուին մեր շուրջ ու կը բռնուինք ջերմ գրոյցի: Մանօթացումէ ետք ոմանք կը յիշեն որ «Հայրենիքի Զայն»-ին կան «Կրակակն թերթ»-ին մէջ կարդացեր են յօդուածներ իմ մասիս: Եւ կ'ամչնամ այն խորունկ ակնածանքին ու հարազատի համակրանքին համար, որ անոնք կը ցուցաբերեն հայ գրողին ու մտաւորականին հանդէպ, նոյնիսկ երբ իրենց անձանթօք է ան եւ կուզայ հեռաւոր աշխարհներէ:

Ներսէ, գրասենեակի ձակատի պատին վրայ գրուած է Արփա-Սեւան ընդդատակեայ ջրանցքի ամբողջական յատակագիծը, գունաւոր բաժանումներով: Կը թուէր թէ ամէն բացատրութիւն այս հրաշայի, անհաւատալի իրագործումին մէկ խորհրդաւոր գաղտնիքը կը պարզէր: Բայց ձայնը արտասանքի շեշտ մը առաւ յանկարծ.

- Մրագրուել էր ջրատարը աւարտել 1978-ի վերջերին, բայց...

48,500 մեթրի երկարութեան վրայ՝ միայն 800 մեթրի միջոց էր մնացեր փորելիք: Բայց այդ մարզին մէջ ժայռերը նախատեսուածէն շատ աւելի կարծր եղեր էին եւ գանոնք պայթեցնելու աւելի ժամանակ կը խլէր: Յետոյ, պատերէն յորդող շուրթը կը հոսէին փապուղիով մէջ, որոնք հարկ էր ջրհան մեքենաներով պարպել, որ գործաւորներ կարենային փորատելու իրենց աշխատանքը շարունակել:

- Իսկ ձմեռը վաղածամ հասաւ, - կ'աւելցնէ ան, - հիմի էնքան ցուրտ է լինում, որ ցիմենտը շաղուելիս սառչում է...:

Երբ լուսարանութիւններ աւարտեցան, համարձակեցայ խնդրել.

- Շատ կը փափաքիմ մինչեւ վարը իջնել:

Անոնք վարանումով իրարու նայեցան, յետոյ.

- Բայց դուք սրտի ծանր վիրահատում էք ունեցել: Մօտ 700 մեթր ներքեւ է գտնուում թուլնայր: Էնտեղ օդը շատ ճնշիչ է լինելու եւ կարող է փասնաւոր գառնայ ձեզ համար:

- Վնաս չունի, - յամառեցայ ես, - կ'ուզեմ անպատճառ իջնել վար:

Այն ատեն գացինք պահեստի հանդերձներուն մասնաւոր սենեակը, որուն կզպուած դուռը բացուեցաւ: Հոն, հանքափորներու յատուկ երկաթէ գլխարկ մը դրին գլուխս: Յետոյ կօշիկներս հանեցի եւ սրունքներս ծածկող երկար մոյկեր հագայ ու փաթթուեցայ վերձակի նման հաստ վերարկուի մը մէջ: Եւ մտանք պողպատէ ձողերով ու շերտերով շինուած մեծ վերելակը, - հայ եւ ռուս երկու ճարտարագէտներ, քարտուղարուհին եւ մենք երկուքս: Շուրջ 700 մեթր

խորունկ այդ ահագին հորանէն մեր վայրէջքը պիտի տեւէր մօտ հինգ վայրկեան: Շուարած կը նայէի շուրջի բազմատեսակ մետաղէ խողովակներուն, որոնք կատարի մուտքէն ամրացուած են մինչեւ յատակ: Անոնցմէ ոմանք էլեկտրական ուժի թելեր կը պարունակեն, ամենէն լայնները՝ դուրսէն մաքուր օդ կը փոխադրեն երկրի ընդերքին մէջէն ջրուղի փորող եւ անոր պատերը կրածեփող բանուորներուն համար: Իսկ մեքենաներու ժխորին հետ, ջրհան կազմածներ շուրջի որմերէն կարծես անթիւ ծորակներէ հոսող ջուրը ուրիշ խողովակներէ կը մղեն վեր ու կը թափեն լեռնակողէն վար:

Գետինը երկայնքին ձգուած երկաթուղիին վրայէն բեռնատար կառքեր կը կրեն լեռներու ձոցէն փորուած, պայթեցուած քարերն ու ժայռերը, կը մտնեն վերելակ, կը հանուին մինչեւ լոյս աշխարհ, հոն կը պարպուին մասնաւոր վայրերու վրայ ու կը բերուին ետ, նոր բեռներ շալկելու, ջրանցքը մատ մը աւելի մօտեցնելու համար իր բարերար փախճանին:

Կեդրոնի ընդարձակ մարզէն կը քալեմ դէպի աւարտած խորքը: Հոն կը տեսնեմ բուն ջրանցքը, սենեակի մը շափ լայնածիր սրամագիծով, արդէն վերջացած, սիմենտապատուած: Հոն հինգ-վեց երկտասարդ գործաւորներ կը բոլորուին շուրջս եւ կը բռնուինք ջերմ, մտերմական գրոյցի: Անոնց դէմքերուն հոգին եւ իւզին սակէն՝ կարծես իրենց կատարած արտասովոր կառուցումին հպարտութիւնը կը ժպտի: Երբ կը տեղեկանան, թէ Ամերիկայէն եկած գրող հիւր մըն եմ, աւելի սիրալիր կը շրջապատեն զիս եւ անոնցմէ ամէն մէկը կը հարցնէ ինձի խոնարհ շեշտով մը.

- Ամերիկայի հայերը մեր հաւատից ե՞ն:

- Այո, հա՛րկաւ, - կը պատասխանեմ ժպտելով, - անոնք ազգով, կրօնով, լեզուով ձեզի պէս հայեր են... եւ ձեզմով ուրախ են, ձեզմով հպարտ են:

- Ապա ինչի՞ են մնում օտարութեան մէջ, ինչի՞ չեն գալիս հայրենիք... Երանք չեն սիրո՞ւմ մեր Սովետական Հայաստանը:

Անոր բառերուն միամիտ պարզութիւնը եւ ձայնին թախանձող երանգը ամօթի զգացումով համակեցին զիս: Եւ փորձեցի մեղմացնել իր անձկութիւնը:

- Անչո՛ւշտ անոնք բոլորն ալ կը սիրեն Սովետ. Հայաստանը, իրրեւ իրենց մայր հայրենիքը: Մեզի համար մեծագոյն հրճուանք է եւ փառք է Հայաստանի հրաշայի թափով զարգանալը, բարգաւաճիլը, գորանալը... եւ ձեր կառուցած այս Արփա-Սեւան ջրանցքը սքանչելի յաղթութեան մը պսակն է...: Բայց Ամերիկայի հայերը հոն գաղթեր են փախչելով թուրքերու ետթաղանէն ու սարսափներէն, 1896-ի կոտորածէն եւ 1915-ի սոսկայի եղեռնէն... Հոն նոր օճախներ

վառեր են, զաւակներ, թոռներ, թոռան որդիներ ունեցեր են: Անոնց ընտանեկան կապերը այնքան ճիւղաւորուեր են, որ ո՛չ կարելի է գանոնք կտրտել, ո՛չ ալ հաւաքել հայրենադարձ կարաւանի մը մէջ:

Մեր մտերմական, զուարթ զրոյցը շարունակուեցաւ սփիւռքահայ տարրեր հոգերու եւ ցաւերու շուրջ: Երբ հրաժեշտի պահը հասաւ, անոնց կրտսերը աւելի մօտեցաւ ինծի, ղէմքին վրայ ամօթխած ժպիտ մը:

- Դուք գրող էք, շնորհաւորում եմ ձեզ: Դուք գրել էք զրքեր, որոնք ձեզ համար կը լինեն անմահութեան յուշարձաններ, զուք...

Իր երկու ձեռքերը բռնած՝ ընդմիջեցի զինք:

- Բայց ո՛չ, սիրելի բանուոր եղբայր, ո՛չ...: Ես քանի մը տարիէն կը մեռնիմ կ'երթամ, եւ շուտով կը մոռցուիմ ես ալ, իմ գրած գիրքերս ալ: Բայց դո՛ւք... նայէ՛ այս ջրանցքին, Արփա-Սեւանը կը տեւէ, ան կ'ապրի հազարաւոր տարիներ, եւ զուք կը գառնաք զայն կերտող իսկական, անմահ հերոսները... որովհետեւ միայն պատերազմի գաշտին վրայ չէ ու հերոսներ կը յայտնուին, այլ նաեւ հարազատ հայրենիքի վերականգնումին համար շինելու, ստեղծելու այս խրամներուն մէջ...:

Պայծառ, երջանիկ ժպիտ մը շողաց անոր մրոտած ղէմքին վրայ:

Մենք ողջագուրուեցանք հարազատներու նման: Եւ երեսներս սեղմեցի անոնց թաց ու ցեխոտ այտերուն ղէմ, թաքուն կարօտով մը, որ Արփա-Սեւանի հողին ու քարին փոշիէն քանի մը փշրանք անցնի նաեւ իմ պանդուխտի մորթէս ներս:

- Այս հսկայ, փառաւոր ձեռնարկը պատիւ պիտի բերէր նոյնիսկ աշխարհի մեծագոյն պետութիւններէն որեւէ մէկին, - ըսի հրաժեշտի պահուն: - Իսկ ահա մեր փոքրիկ Հայաստանը կ'իրագործէ այսպիսի հրաշք մը:

- Մենք էլ մեր թիկունքին ունեցանք մի մեծ պետութիւն, - յարեց խոնարհ ձայն մը: - Առանց Սովետ. Միութեան բերած թանկագին օգնութեան, մենք էլ պիտի չկարողանայինք գլուխ հանել էսքան վիթխարի մի ծրագիր:

Երկար եւ յոգնեցուցիչ եղաւ վերադարձի ճամբան: Բայց ինքզինքս աւելի երջանիկ ու հպարտ կը զգայի, հայ ժողովուրդի տեսիլքին պայծառութեան, վերապրելու սրբազան տենչին եւ ստեղծարար հանճարին այս մարմնացած վկայութեան հանդէպ:

ԲԱՐՔԵՐ ԵՒ ԴՐՈՒԱԳՆԵՐ

Հայաստան միամտեայ այցելութեանս ընթացքին, բազմաթիւ մտերմական հանդիպումներ ու՝ զրոյցներ կրցայ ունենայ ժողովրդային խաւերու, գրողներու եւ հանրային պաշտօնեաներու հետ: Յանձնադէպ եղան խորովածի ճաշով եւ կոնեակի ու գինիներու տարրեր տեսակներով ճոխ սեղանները ընտանեկան յարկերու տակ եւ ժամագրուած պաշտօնական կամ անձնական տեսակցութիւններ գրասենեակներու եւ պանդոխի հիւրասենեակիս մէջ, նաեւ երկար պրտոյաներ Երեւանի ծառագարդ պողոտաներուն երկայնքին: Թերեւս բնական էր, որ ամէն տեղ, իբրեւ սփիւռքահայ այցելու, ինձմէ ակընկալուէր, նոյնիսկ պահանջուէր, որ առաւելագոյն չուտուով մասնակցէի ընթացիկ խօսակցութեան, երբ մանաւանդ անխուսափելի կերպով ան կ'ընդգրկէր գաղութահայ գոյատեւման, թուրքերու կողմէ բռնազրաւուած արեւմտահայ հողերու, Հայաստանի ներկայ վիճակին, մայր հայրենիքէն ղէպի օտարութեան կորուստը մեկնողներու, հայերէն լեզուի անազարտ պահպանութիւնը եւ յարակից նիւթերը:

Եւ զարմանքով նկատեցի, որ կենցաղային ասպարէզին վրայ, չին ու նորահաս սերունդներու միջեւ տարբերութեան անջրպետը աւելի լայն է Հայաստանի, քան թէ Ամերիկայի եւ Եւրոպայի երկիրներուն մէջ, - մէկ հիմնական տարբերութեամբ: Որ հայրենի ժողովուրդին երիտասարդ տարրը կը մնայ ազնուօրէն աւանդապահ, ընդհանրապէս երէցներու, - գրող-մտաւորականներու, եւ իրենց ուսուցիչներուն ու ծնողներուն հանդէպ տածուած ակնածանքով ու սէրով, որ յաճախ կը հասնի մինչեւ յարգալից հնազանդութիւն: Սփիւռքի մէջ՝ հայրեր, զաւակներ ու թոռներ իրարմէ անջատ կեանքեր կ'ապրին ոչ միայն բնակարանով, այլ նաեւ կենցաղով: Անոնք կ'երթան իրարմէ տարբեր հաւաքոյթներու եւ զբօսանքներու, կը քայլեն ըմբռնումներու եւ ապրելակերպի տարբեր ճամբաներէ, որոնք տարին քանի մը անգամ կը միախառնուին հանդիսաւոր տօներու առիթներով:

Իսկ Հայաստանի մէջ՝ գերդաստանի մը երեք-չորս սերունդի անգամները, երբ նոյնիսկ իրարմէ հեռու տուններ բնակին, բայց անոնց

կեանքերը սերտօրէն շաղախուած են իրարու եւ թէկուզ իրրեւ անջատ միաւորներ՝ ներկայ կ'ըլլան ու կը մասնակցին գերդաստանական հանդիպումներու եւ արտաքին ժամանցներու: Եւ պատճառները շատ պարզ են հարկաւ, — անոնք ո՛չ միայն կը ծնին, կը մեծնան ու կը դաստիարակուին բնկերային նոյն շրջապատին մէջ, այլ բոլորն ալ տոգորուած են նոյն ձգտուածներով եւ երազներով: Անոնք յաճախ կ'արտայայտէին իրարմէ տարբեր կարծիքներ ու դադափարներ, բայց բոլորն ալ նոյն հասարակաց նպատակները կը հետապնդեն եւ մանաւանդ՝ նոյն մայրենի, հայերէն լեզուով կը խօսին, նոյն պապեցեան հայրենի հողին վրայ:

Սակայն տակաւին, կենցաղային խոր տարբերութիւններ կը յայտնուէին հայրերուն, զաւակներուն ու թոռներուն միջեւ: Աւանդապաշտ աւստիանութեամբ մը, կիներ ու աղջիկներ բնդհանրապէս կը խուսափէին զրոյցներուն ու վէճերուն սասնակցութէ: Ճարեցնէր զխօսէին բուռն խանդով, յաճախ կը բռնուէին կրքոտ բանավէճերու, որոնք երբեմն կը փոխուէին բառային կռիւի, — հոգ չէ թէ զրոյցին նիւթը ազգային տարողութեամբ կենսական խնդիր մը ըլլար, կամ առօրեայի մանրուք հարց մը: Երիտասարդներ աւելի սակաւախօս, կ'արտայայտուէին զուսպ ու հանդարտ շեշտերով, աւելի առարկայական, եւ երբեմն հատուէ հեզանքով մը կը բարեխառնէին մթնոլորտին բորբոքած լրջութիւնը: Իսկ կրտսերներ լարուած ուշադրութեամբ կ'ուսնորէին մեծերու խօսակցութիւնը, երբեմն իրենց տեսակէտները յայտնելով վարանող, իմաստալի հարցումի մը մէջ:

Բայց այլապէս, սերունդներու միջեւ մտայնութեան անջրպետը բացայայտ էր: Իրրեւ մեկնակէտ, Հայաստանի մէջ կենսական պիտոյքներու առատութեան շրջան մը բացուած էր: Եւ երիտասարդներ զրօսանքի ու զուարճութեան իրենց բնական հակումները լիապէս կը բաւարարէին, — աւելի արդիական հագուստներ կը կրէին, շոյթօրէն կ'ուտէին ու կը խմէին եւ կոնեակի շիշերով խանդավառ բաժակաճառեր կը խօսէին, կը ծխէին ու կը հաճոյանային, պարելով շքեղ ճաշարաններու մէջ նուազող խումբերու նազային եղանակներուն վրայ: Իսկ ծնողներ, քիչ մը դառնօրէն, թերեւս նաեւ թագուն նախանձով կը մեղադրէին իրենց զաւակները, որ անհաշիւ դրամ ու ժամանակ կը վատնէին, որովհետեւ չէին ճանչցած նախորդ սերունդներուն ապրած զրկանքներն ու տառապանքները: Անոնց համար սիտփանք չունէր այն իրողութիւնը, որ այդ անարդար հակադրութիւնը տիրեր է բնկերային ամէն յեղաշրջումի մէջ, — պապերն ու հայրերը շարժարագին մաքառումով ու արիւնով կը կառուցանեն, կը ստեղծեն ու կը ծաղկեցնեն, իսկ անոնց պտուղներն ու բարիքները կը վայելեն զաւակները, թոռներն ու յաջորդ սերունդները

Տակաւին՝ լայն խրամասներ կը բաժնեն հին ու նոր բարքեր, հոգեբանական վիճակներ: Երեւան նախորդ այցելութենէս ի վեր, մանուկներ հիմա մեծցեր, ամուսնացեր եւ իրենք փոքրիկներու ծնողներ զարձեր էին: Եւ երեկոյ մը հաւաքուեր էինք հիւրասենեակի մը մէջ, ուր ներկայ էին չորս սերունդներու անդամներ: Զրոյցը սկսաւ հասած տղոց եւ աղջիկներու ամուսնութեան լուսագոյն կերպերուն վրայ: Այն ատեն մեծ հայր մը վճռական շեշտով բսաւ, թէ իր մանչ թոռան համար յարմար հարսնացու մը կը փնտռէ եւ անմիջապէս որ գտնէ, գանոնք պիտի պսակէ, պայմանով որ խոստանան շատ զաւակներ ունենալ: Ուրիշ մեծ հայր մը, նոյնքան հեղինակաւոր, յայտնեց թէ իր չափահաս աղջիկը սիրած էր երիտասարդ մը, որուն հետ կ'ուզէր ամուսնանալ, բայց ինք ստուգեր էր, որ ան անարժան էր Աշխէնին եւ զայն ճամբեր էր իրենց տունէն:

Շփոթած ժպիտով նայեցայ երէցներու որոշումներուն ենթակայ տղուն եւ աղջկան, որոնք հոն լուռ նստած, իրենց ապագաները ծրագրող վճիռները կը լսէին:

— Իսկ դո՞ւք ինչ կը խորհիք այս խնդրին շուրջ, որ ձեզի համար կարծեմ բաւական կարեւոր է, — հարցուցի աղջկան, կատակելու ձևով մը:

— Ի՛նչ ասեմ, — պատասխանեց ան մեղմօրէն, — երեւում է, որ մեր հայրերը մեզ համարսարան ուղարկելուց յետոյ էլ, դեռ մեզ չեն վրստահում, թէ կարող կը լինենք կեանքի լուսագոյն բնկերներ բնտրել, սիրել նրանց եւ...

Հայրը սրտնեղած բնդմիջեց.

— Դա բոլորովին էլ ճիշդ չի. ի հարկէ դուք էլ սիրելու էք նրան, որին մենք բնտրում ենք: Բայց դուք անփորձ էք եւ կը խարուէք երեւոյթից, շոյթ լեզուից: Իսկ ես փնտռում եմ նրա ողջ գերդաստանի լաւն ու վատը, որ տղան խելացի, ազնիւ, պարկեշտ մարդ լինի, էլի': Յետոյ աղջիկը զարձաւ ինծի եւ ժպտելով հարցուց.

— Իսկ դուք, ուզո՞ւմ էք որեւէ կարծիք յայտնել այս մասին:

Նախ վարանեցայ, յետոյ բո՛ի.

— Կը խորհիմ թէ պատշաճ չէ, որ ես մասնակցիմ զրոյցի մը, որ զուտ բնտանեկան բնոյթ ունի: Կը փորձեմ զարմանքս յայտնել ուրիշ երեւոյթի մը շուրջ:

Եւ նայեցայ մեծ հայրերուն ու աւելցուցի.

— Քիչ առաջ ուրիշ խնդիրներու մասին մեր խօսակցութեան ատեն՝ դուք հպարտօրէն յիշեցիք, թէ յիսուն տարուան կումուցիստներ էք... աղէկ: Հիմա ես կ'սպառնամ, ի՛նչպէս... ձեր այդ յեղափոխութիւնը աշխարհը վերափոխեց կ'ըսէք, կայսրութիւններ կործանեց, եւ մարդկութեան համար բոլորովին նոր կենցաղակերպ մը ստեղծեց, բայց...

ան չկրցաւ ձեր վաղեմի բմբուռումներէն ու վարմունքէն փշրանք մը փոխել: Զարմանալի հրաշք մը չէ՞ ասիկա:

Եւ բոլորս միասին խնդացինք:

Երեւանի մերձաւոր գիւղ մըն ենք, հարազատ տան մը մէջ, որուն հիւրանոցի լայն սեղանին շուրջ սեղմուած են տարեցներ, երէցներ, երիտասարդներ ու մանուկներ, չորս սերունդներէ: Նստած ենք Կիրակի օրուան ճաշի մը, որ իրական խրախճանքի վերածուեցաւ համեղ խորովածով, կոնետակի յաջորդական գաւաթներով եւ սրտայոյզ բաժակաճառերով: Երբ խոհանոցէն խառն պտուղներով ահագին ափսէն բերուեցաւ ներս, քանի մը սպիտակահեր գլուխներ մօտեցան անկիւնի հեռատեսիլին ու բացին կ'երեւի իրենց ծանօթ կայան մը: Ուրախացայ որ հաճոյալի հաւաքոյթը պիտի քաղցրանար նաեւ Երեւանէն սփռուած հայերէն խօսքի, երգի ու նուագի յայտագիրով: Բայց յանկարծ անսովոր բառեր ու եղանակներ անախորժ աղմուկով խուժեցին հեռատեսիլէն դուրս եւ ողողեցին մեզ: Թուրքերէն էին եւ զարմացած նայեցայ շուրջիս դէմքերուն:

- Չէի գիտեր, թէ Երեւանի հեռուստատեսիլի կայանը ասանկ... դասական վայելքներ ալ կը շնորհէ ձեզի,- ըսի քմծիծաղով:

- Սրանք Երեւանից չեն,- զուսպ բողոքի շեշտով մը կանչեց համալսարանը նոր աւարտած տղան: Էդ էլոյթները գալիս են Թուրքիայից, նրանց սարքած էրզրումի կայանից, եւ մերոնք հսպէս լսում են, կարծես հաւատարիմ բաժանորդներ լինեն:

- Երգը, արուեստը ազգ ու լեզու չունեն, ասում էք դուք, չէ՞,- կը բացատրէ ալեհեր հայրենադարձ մը:

- Բայց դա թուրքերի համար չի ասուած,- յարեց պատանի մը: Դուք մեզ միշտ պատմում էք, որ թուրքերը միլիոնաւոր հայեր են ջարդել, թէ նրանք մեր ամենավատ թշնամիներն են եղել: Ուրեմն դրանք ճիշդ չեն:

- Ի հարկէ ճշմարիտ են,- խօսեցաւ ուրիշ տարեց մը: - Մենք որ էդ թուրքերէն երգերը լսում ենք, եւ Ֆիլմերը դիտում ենք, չի նշանակում թէ սիրում ենք թուրքերին... մենք մանկութիւնից ենք վարժուել, էլի'... եւ դրանց միջից մեր ծննդավայրի անցեալն ենք վեր-յիշում:

- Իսկ ինչպէ՞ս չէք յիշում,- յարեց թարմատի երիտասարդի մը զառնացած ձայնը... - ձեր էդ մանկութեան օրերին չէ՞ր, որ էդ նոյն թուրքերը գազանների նման բզբաեցին ձեր ծնողներին ու հարազատներին, եւ բռնագրաւեցին մեր մայր երկիրը, իսկ դուք...:

- Դէ՛, ի՞նչ էք մեր գլխին գալլի աւետարան կարդում, մենք չգիտենք թուրքերի հրէշային ոճիրները հայ ժողովրդի դէմ... մենք նրանց սարքած աքսորի եւ սպանդի դժոխքից ենք պրծել, էլի'...-

բարկացած շեշտով պատասխանեց հեռատեսիլին վրայ ծուած ալեւոր գլուխը:

- Պապա', հստեղ մի հակասութիւն կայ, որ ես չեմ հասկանում,- ըսաւ աղջկայ մը հեզ ձայնը: Դուք մեզ մեղադրում էք, եթէ մենք երբեմն խօսենք մեր ազգութիւնը եւ հայրենիքը կորստից փրկող սուսերի լեզուով: Իսկ դուք ի՞նչ էք անում... Ապրիլ 24-ին, վշտից խոնարհած գլուխներով եւ արտասուող աչքերով քայլում էք մինչեւ Միծեռնակաբերդ, Եղեռնի Յուշարձանի մօտ, թուրքերի դէմ ատելութեան ու վրէժի զգացմունքներով: Յետոյ գալիս էք տուն եւ բացում Թուրքիայի էդ հեռուստատեսային կայանը եւ լսում միլիոնաւոր հայեր ոչնչացուցած, ձեր ծննդավայր հայրենիքը յափշտակած նոյն թուրքերի լեզուով երգեր ու խօսքեր: Ի՞նչպէս կարելի է դա...:


Պահ մը լռութիւն տիրեց: Եւ միայն հեռատեսիլէն թուրքերէն յայտագիրը կը լսուէր: Այն ատեն տարեց հայրենադարձը կարծեց թէ լաւագոյն միջոց մը գտաւ վէճը իրեն ի նպաստ լուծելու համար եւ հանդարտօրէն ըսաւ.

- Մենք հստեղ հեռուոր Ամերիկայից եկած յարգելի հիւր ունենք: Թող նա՛ որոշի, էրզրումի հեռուստատեսի կայանից սփռուած էս յայտագիրը լսենք թէ՛ փակենք:

Անակնկալի եկած, նայեցայ երիտասարդ տղոց եւ աղջիկներու դէմքերուն, որոնց վրայ տխուր քմծիծաղ նկատեցի: Վստահաբար կը մտածէին,- ահա՛ Մեծ Եղեռնէն «պրծած» ուրիշ արեւմտահայ մը, որ հարկաւ իր մանկութեան օրերուն վերյիշումով պիտի ուզէ լսել թուրքերէն երգերն ու խօսքերը:

- Երանի թէ ինձի չձգէիք այդ որոշումը,- ըսի մեղմօրէն,- բայց քանի որ այդպէս փափաքեցաք՝ ուրեմն... փակեցէք այդ թրքական կայանը, եւ ընդմիջտ,- գրեթէ պոռացի կարծրացած ձայնով:

Եւ հեռատեսիլը զոցուեցաւ, երիտասարդ տղոց եւ աղջիկներու ծափերուն ու զուարթ կանչերուն մէջ:



Հայաստանի մայրաքաղաքը արտակարգ շքեղութեամբ հարուստ է մշակոյթի հիմնարկներով, գիրքերու պալատներով, պատմական ու գիտական թանգարաններով: Անոնց մէջ մեծագոյնն է Աղբքսանդր Միասնիկեանի անունին նուիրուած պետական գրադարանը, որ նորագոյն շէնքերու յաւելումով՝ հիմա կը պարունակէ աւելի քան 7,000,000 տպագիր հատորներ, հայերէն եւ օտար լեզուներով, Կիւթեմպերի գիւտի ժամանակէն մինչեւ ներկան: Այդ անհամար գիրքերը դասակարգուած են տարբեր բաժանմունքներու մէջ,- գրական,

պատմագիտական, գեղարուեստական, ամէն տեսակի մասնագիտական, նաեւ պարբերական մամուլի, թերթերու եւ ամսագիրներու: Եւ բոլոր բաժինները օժտուած են ընթերցման մեծ ու փոքր սրահներով, ուր կուգան ուսանողներ ու բանասէրներ, կարգալու եւ ուսումնասիրելու համար: Իրենց փնտռած նիւթերը արագօրէն գտնելուն մէջ անոնց սիրալոյսը կ'օժանդակեն փորձառու պաշտօնեաներ:

Երեւանի Միասնիկեան գրադարանին երկարամեայ տնօրէնն է Արագի Թուրքեան, իր պաշտօնին եւ անոր վսեմ կոչումին գիտակցութեամբ օժտուած անձնուէր ղեկավար մը: Անոր հետ վաղեմի բարեկամներ էինք եւ մտերմական զրոյց ունեցանք իր նորակառոյց, ընդարձակ գաշխիճին մէջ, ուր ան շատ հետաքրքրական տեղեկութիւններ տուաւ գրադարանին կատարած կենսական դերին ու գործունէութեան մասին:

Յետոյ այցելեցի առանձին բաժիններ տարբեր յարկերու վրայ: Հազարաւոր դարակներ եւ անոնց երկայնքին շարուած երկինքի աստղերուն չափ գիրքեր, պիտի ըսէր հեքիաթի լեզուն: Յարկաբաժին մը տիկին վարիչը, հին ծանօթ մը, մեզ հրաւիրեց իր փոքրիկ գրասենեակը գրոյցի: Եւ խօսեցանք սփիւռքահայ վիճակներու, Հայաստանի, եւ բնականօրէն՝ գիրքերու մասին: Բայց իբրեւ խոսովիչ եղելութիւն իրեն համար՝ ան պատմեց Հնդկաստանի իր գրօսապատոյտին տպաւորութիւնը: Սովետական Միութեան տարբեր երկիրներէն խումբով մը իրենք այցելած էին Կալկաթա, Պոմպէյ եւ ուրիշ վայրեր, շրջեր էին երկու շարաթ եւ ինք նոր վերադարձեր էր Երեւան:

Ան նկարագրեց իր տեսած ահաւոր թշուառութիւնը ամէն կողմ: Խարխլած հիւղեր, ազրով ու ախտերով ողողուած փողոց-գոբհներ, կիսաքաղց ու կիսամերկ մարդիկ, կիներ ու մանուկներ նստած կամ պառկած գետնի հողին ու ցեխին մէջ, եւ միլիոնաւոր զոհեր, որոնք ամէն տարի կը մեռնին սովէ եւ համաճարակներէ, անտէր ու լքուած: Եւ մինչ կը պատմէր հեռաւոր Հնդկաստանի կամ ուրիշ երկիրներու մասին, կարծես պիտի փղձկէր եւ աչքերը լեցուեր էին կարեկցութեան ու վիշտի արցունքներով:

Պահ մը լռեց, յետոյ մէկէն գէմքը վերցուց եւ սկսաւ ցուցամատը շարժել տեղացի ներկաներուն վրայ, մինչ կ'ըսէր.


- Էս օրից, էլ ո՛չ մի վատ բան չասէք մեր հայրենիքի, առաջնորդների մասին: Հաւատացէք իմ խօսքին, արեւս վկայ, որ էզ երկրների մօտ մեր Հայաստանը դրախտ է, իսկական դրախտ...

Յետոյ զարձաւ ինձի.

- Իսկ դուք որ շատ էք ման եկել աշխարհում, ի՞նչ էք կարծում, ասածս ճիշդ չի՞...:

- Այո, եւ աւելին, - պատասխանեցի ես: - Որովհետեւ դեռ կան

շատ ուրիշ երկիրներ, որոնց քով Հայաստանը իրապէս դրախտ է, միայն պէտք է տեսնել ու բաղդատել գիտնալ:



Ինքնաշարժ կառքերը այնքան բազմացեր են Երեւանի մէջ, որ յաճախ կը խճողեն անոր նոյնիսկ լայն պողոտաները եւ վարորդներ անհամբեր կը գանգատին անոնց աճումին դէմ: Քարիւղը անհամեմատ աժան է եւ մարդիկ կը նախընտրեն ճամբորդել սեփական ինքնաշարժներով կամ քալելով, անգամ մինչեւ հեռաւոր վայրեր: Քարիւղի վաճառման կայաններուն մէջ միշտ կան հինգ կամ տասը կառքեր, որոնք իրենց կարգին կը սպասեն, միայն երբեմն վէճի բռնուելով իրարու հետ: Անգամ մը, մինչ երիտասարդ վարորդը գիս կը տանէր ժամադրութեան մը, եւ կ'աճապարէր ճամբայ գտնել շուրջի ինքնաշարժներու յորձանքին մէջէն, դառնացած գանգատեցաւ.

- Տեսնում է՞ք ինչքան են շատացել օթոնները Երեւանում: Որ էսպէս գնա՛ շուտով մեր փողոցներում ասեղ գցելու տեղ չի լինելու: Չեմ իմանում, ինչի՞ մեր իշխանութիւնը չի արգելում, որ ում խելքը փշի՛ չէլնի մի օթօ գնի:

- Լաւ չէ, որ կառավարութիւնը նման արգելքներ զնէ ժողովուրդին վրայ, - ըսի իրեն: - Այսպէս աւելի աղէկ է, թող մարդիկ ազատ ըլլան, որ իրենց ուզած ապրանքնին գնեն եւ իրենց նախաիրած կերպով ապրին:

Յետոյ հարցումներ ըրաւ սփիւռքի եւ Ամերիկայի հայերուն վիճակին, անոնց տեղային պայմաններուն, մանաւանդ իրենց ազգութիւնն ու լեզուն պահպանելու ձեռնարկներուն մասին: Յանկարծ ժպտեցաւ եւ զուարթ շեշտով մը յարեց.

- Գիտէ՞ք, ես էլ հօրաքոյր ունեմ Լոս Անճելոսում, նա ուզում է ինձ եւ իմ ընտանիքն էլ տանի իրա մօտ, բայց ես չեմ ուզում գնալ: Հիմի մենք ամէնքս շատ լաւ ենք ապրում Հայաստանում, իսկ ի՞նչ ենք անելու օտար երկրի մէջ, թէկուզ նա շատ հարուստ լինի, մե՞ր ինչին է պէտք: Իսկ ես էլ արդէն ապապրանք եմ դրել՝ եւ մի քանի ամսից կը ստանամ իմ անձնական օթօն:

- Բայց դուք արդէն պաշտօնով վարորդ էք եւ ամէն տեղ ինքնաշարժով կը ճամբորդէք: Ուրեմն ի՞նչ հարկ կայ որ ատոր աւելորդ ծախքը կ'ընէք:

- Դա տարբեր է, էլի՛, դա իմ սեփական կառքն է լինելու:

- Հասաք քիչ առաջ չըսի՞ք թէ իշխանութիւնը պէտք չէ թոյլ տայ, որ մարդիկ անհատական ինքնաշարժ գնեն, որպէսզի այլեւս չաճի երթեւեկի այս խճողումը, - հարցուցի զարմացած:

Ան ինձի նայեցաւ նոյնպէս զարմանքով, որ նման անհեթեթ յիշեցում մը կ'ընեմ իրեն, ժպտեցաւ եւ պարզօրէն աւելցուց․

– Դէ՛, ես ասել ուզեցի որ էդ արգելքը դրուելու է ուրիշների համար, ոչ թէ ի՛մ․․․

Եւ երկուքս ալ ուրախ խնդացինք, թերեւս իրարու միամտութեան վրայ։

× × ×

Արմենիա եւ Անի բազմաթիւ ու գեղակերտ պանդոկներուն ճաշարանները առաւելագէս կը սպասարկեն հայկական սփռւթքէն եւ Սոփեա․ Միութեան տարրեր չըջաններէն Հայաստան այցելող հիւրերուն եւ գրօսաչըփիկներուն։ Այս «Ռեստորանտ»ները հարիւրաւոր անձեր տեղաւորող ընդարձակ ու շքեղօրէն կահաւորուած սրահներ են, որոնց մէջ առաւօտ, կէսօրին եւ իրիկունը առանձին խումբեր կը ճաշեն իրենց համար յարգարուած մասնաւոր սեղաններու շուրջ, որոնց վրայ կը դրուին զրօշակները այն երկիրներուն, որոնցմէ եկած կ'ըլլան անոնք։ Եւ կը պատահի որ նոյն օրերուն կը տեսնուին Ամերիկայի, Լիբանանի, Սուրիոյ եւ Ֆրանսայի զրօշակները, իրարու դրացի։

Նոյն ճաշարաններուն մէջ, խորովածի, կոնեակի, գինիի ու վոտկայի, եւ այլազան աղանդերներու ճոխութեամբ սարքուած սեղաններու շուրջ գրոյցի եւ ճաշ-խնջոյքի կուզան նաեւ խորհրդահայ գրողներ, արուեստագէտներ եւ երիտասարդ պաշտօնեաներ։ Իսկ իրիկուան ընթրիքէն ետք, երբ արտասահմանի «տուրիստ»ները կ'երթան օրերա կամ թատրոն, կամ կը հիւրընկալուին բարեկամներու մօտ եւ կամ յոգնած կը քաշուին իրենց սենեակները՝ այն ստեն Երեւանի բնիկները կը լեցուին այդ ճաշարաններուն մէջ ճշմարիտ խորախճանքի, առատ կերուիւսումով, երբ կեդրոնի բեմէն Բազային նուազախումբը ծանօթ եղանակներու միտրով կ'ողողէ սրահը, աղայ եւ աղջիկ երգիչներ կը հեծեծեն սիրային մեղեդիներ, եւ խանդավառ գոյգեր կը պարեն զիրար զրկած։

Քանի մը առիթներով տարեց ընկերակիցներ, այդ զուարթ պատկերներուն հանդէպ մրմնջեցին ծանօթ գանդատներ․

– Տեսնո՞ւմ էք, ինչպէ՛ս են մեր երիտասարդները անհոգ զուարճանում եւ շուրջօրէն ծախսում։

– Վնաս չունի՞, – պատասխանեցի տարտամ զոհունակութեամբ, – մեր սերունդը շատ գրկանք ու վիշտ ապրեցաւ, առատ ցաւ ու արցունք ճանչցաւ։ Հիմա մեր գաւակներն ու թոռները թող մեր տեղն ալ ծիծաղին, երգեն ու զուարճանան, վնա՛ս չունի․․․

Բայց զարմանքով նկատեցի, որ մեծ պանդոկներուն եւ ուրիշ գեղակերտ ճաշարանները կը կրէին լուսատառ «Ռեստորանտ» ցուցանակներ։ Իսկ կային նաեւ ուտելու տարրեր վայրեր, գրաւիչ արտաքինով ու ներքին կահաւորումով, որոնք «ճաշարան» կամ «սրճարան» կը կոչուէին։ Եւ անգամ մը դիտել քուր ուղեկիցիս․

– Լա՛ւ, քանի որ արդէն կան հայերէն բառով այս Բաշարանները, ալ ինչո՞ւ նաեւ կը գործածուի օտար «Ռեստորանտ» կոչումը։

Ան ժպտելով նայեցաւ ինձի, թերեւս տարօրինակ գտնելով հարցումս, եւ բացատրեց․

– Դրա մէջ ոչինչ կայ զարմանալի։ Ինչ որ Բաշարան ենք կոչում, ժողովրդային վայրեր են, ուր կերակրուելու գնում են բոլոր նրանք, ովքեր ուզում են ճաշել արագ սպասարկումով, մի քիչ էլ աժան, եւ անցնել իրանց աշխատանքին։ Իսկ Ռեստորանտը առաւել շքեղ է կառուցուել, ուր հիւրընկալուած են արտասահմանից եկած հայ եւ օտար գրօսաչըփիկներ, որոնց աւելի ընտանի կը հնչի Ռեստորանտ անունը։ Նրանց մէջ սեղանները ճոխ են սարքուած, սպասարկողները աւելի դանդաղ են շարժուած, եւ երեկոները՝ լինում են նուազ, երգ ու պար։

– Ա՛հ, ուրեմն ձեր անդասակարգ ընկերութեան մէջ տակաւին խտրական վերաբերմունքի մնացորդնե՞ր կան տարրեր խաւերու միջեւ։

– Ի՞նչ կարող ենք անել, – ըսաւ խնդալով, – մինչեւ արտասահմանից եկող այցելուներ վարժուեն զալ որպէս հայրենակարօտ ուխտաւորներ եւ ոչ որպէս ասուերներ խուզարկողներ։

Արմենիա հիւրանոցի ճաշարանին կերակուրները առատ ու համեղ էին։ Իսկ հացը՝ շուրջ, – ամէն անձի 5–6 շերտ։ Ո՛չ որ կրնար բոլորը ուտել եւ աւելցածը առհասարակ կը թափուէր։ Անգամ մը ինձի աթոռ տուին սեղանի մը առջեւ, ուրկէ նոր կը մեկնէր նախորդ յաճախորդը։ Հացի պնակին մէջ մնացեր էին չորս լման եւ մէկ կէս շերտ։ Երբ սպասեակը սկսաւ սեղանը մաքրելու, տեսայ որ միւս աւելցուքներուն հետ պիտի նետէր նաեւ հացերը։ Անմիջապէս բռնեցի չորս լման շերտերը եւ ըսի թէ անոնց ձեռք չէ դպած եւ անոնք ինձի կը բաւին, ուրեմն կրնար գանոնք ձգել ինձի համար։ Երիտասարդ սպասեակը պահ մը վարանելով նայեցաւ դէմքիս, թերեւս միտքին մէջ որոշում մը փնտռելով։ Բայց մէկէն հացերը քաշեց ձեռքէս եւ խառնեց միւս աւելցուքներուն, պարզապէս՝ չի՛ կարելի, յարելով։

Պաշտօնական գրասենեակի մը մէջ գրոյցի պահուն յիշեցի թէ հացերը հարկ եղածէն աւելի առատ կը տրուէին եւ ի զուր կը վատնուէին։

– Ափսոս չէ՞ որ հացը թափուի եւ կորսուի, – հարցուցի տխուր շէշտով մը, – աշխարհի ամենէն թանկագին գանձն է։

– Դա ի հարկէ շատ ցանկալի կը լինէր, – եղաւ պատասխանը։ –

Ինչ խօսք որ հայերս ճաշերի հետ սիրում ենք առատ հաց ուտել... : Բայց իսկապէս ոչի՛նչ չի թափուում, ոչի՛նչ չի կորուում մեզ մօտ : Ծաշարաններից եւ ուտեստեղէն վաճառող բոլոր խանութներից աւելցուքները հաւաքուում եւ նրանցից մեր ոչխարների եւ կովերի համար կեր է պատրաստուում : Եթէ նրանց լաւ չկերակրենք, ո՞րտեղից կը գան մեր խորովածները, մեր կաթն ու պանիրը...

- Այո՛, անշո՛ւշտ,- ըսի խնդալով,- պէտք է լա՛ւ անուցանենք մեր գառնուկները, եւ եզներն ու կովերը, վերջապէս անոնք ալ... մա՛րդ են, չէ՞ :

Երեկոյ մը առանձին ընթրելու գացի Արարատ ճաշարանը, որ Արմենիա պանդոկէն մէկ-երկու փողոց վեր է դէպի ձախ : Լայն անցքէ մը մտայ ներս եւ աջ կողմին բացուող գուռէ մը իջայ վար, ներքնայարկը : Լուսավառ ու գեղազարդ վայր մըն էր, ճակատին՝ նուագախումբին յատուկ ամպիոնը : Ընդարձակ սրահը խճողուած էր երկսեռ հիւրերով, որոնց կը սպասարկէին համազգեստաւոր աղջիկներ ու կիներ, նաեւ ալրեր : Պօսքի ու ծիծաղի ուրախ միտք մը կը ծաւալէր ամէն կողմէ : Պահ մը սպասելէ ետք հազիւ փոքր սեղան մը գտնուեցաւ ինձի համար երկու աթոռով եւ նստայ հոն ու ապսպրեցի խորովածի ճաշ, գարեջուր, համեղ հացով : Քիչ յետոյ երիտասարդ մը եկաւ ու կանգնեցաւ սեղանիս քով :

- Կարելի՞ է,- հարցուց դիմացիս պարապ աթոռը ցոյց տալով :
- Անշո՛ւշտ, ըսի,- հրամանեցէք :

Ան նստաւ եւ սկսաւ ճաշացուցակը կարդալ : Մինչ ես իրրեւ թէ հարեւանցի կը դիտէի զինք : Կ'երեւի շարաթ մը ածիրուած չէր եւ դէմքը աղտոտ կ'երեւէր աճած մազերուն տակ : Հագուստները մաշած ու թափթփած էին եւ զարմացայ, որ համարձակեր էր այսպիսի առաջնակարգ ճաշարան մը մտնել : Ամբողջ ընթրիքի ընթացքին որեւէ խօսք չփոխանակեցինք : Ոչ իսկ իրարու անուկները հարցուցինք : Երբ ես աւարտեցի, աղջկան խնդրեցի որ հաշուեցոյցս տայ եւ ան թուղթը դրաւ սեղանիս վրայ : Տեսայ գումարը,- 1 ուրբի 70 կոպէկ, մօտ 2 տոլար 25 սենթ : Եւ ուղեցի ազնիւ արարք մը կատարել : Մինչեւ այն ատեն ես ինձի խորհեր էի, զր եթէ Հայաստանի մէջ չքաւոր մարդ մը կար, անիկա դիմացս նստած երիտասարդը ըլլալու էր : Եւ սպասարկող աղջկան ըսի վարանելով, թէ կարելի՞ էր, որ անոր ճաշին համար ալ վճարէի եւ զինք նկատէին իրրեւ իմ հիւրս : Ան զարմանքով նայեցաւ ինձի, յետոյ դարձաւ անոր եւ հարցուց իրեն, թէ համաձա՞յն էր : Ան ուսերը թօթուեց եւ պարզապէս ըսաւ .

- Եթէ նա ուզում է վճարել, ես չեմ առարկի :

Բայց ապշեցայ, երբ աղջիկը բերաւ անոր ճաշին հաշուեցոյցը, որ կոնեակն ալ կը պարունակէր եւ 7 ուրբի եղած էր, մօտ 10 տոլար :

Անշուշտ տուի դրամը, սակայն լուռ ընդվզումով :- Ի՞նչպէս, ուրեմն, եղկելի թշուառի նմանող դիմացիս մարդը կրնար այդքան գումար մը վճարել իր մէկ ճաշին համար եւ դեռ խորշելի երեւելու չափ աղտոտ ու թափթփած կը պահէր ինքզինք : Եւ մինչ դուրս կը քալէի մինակ դէպի պանդոկ, ինքզինքս կը մեղադրէի, որ այդքան սուղ գին մը վճարած էի մոլորած բարեմտութեանս իրրեւ պատիժ :

- Այո՛ւշ,- գրեթէ պոռացի ես ինձի,- քու ի՞նչ գործդ էր բարիք ընել մարդու մը, որ իր կերած մէկ ընթրիքին փոխարժէքով կրնար քու առած ճաշդ չորս անգամը գնել քեզի համար :

Յաջորդ օրերուն այս միջադէպը իրրեւ գաւեշտ պատմեցի քանի մը առիթներով : Բոլորը խնդացին իմ միամտութեանս վրայ, իսկ անոնցմէ մէկը դիտել տուաւ .

- Դէ՛հ, էս օրուանից իմացիր, որ Հայաստանում համարեա թէ էլ աղքատներ չեն մնացել : Յուսով եմ, որ միւս անգամ չես խարուի երեւոյթից :



Երեկոյ մը Սուեդուկեանի անուան պետական թատրոնը եղանք, արդիական ոճով ու փարթամութեամբ հոյակապ կառոյց մը, ուր կը բեմադրուէր Դերենիկ Դեմիրջեանի համբաւաւոր «Քաջ Նազար» կատակերգութիւնը : Պաղին նիւթն ու պատգամը հարազատ պահուելու էին հեղինակին մտադրութեան : Բայց գանոնք ներկայացնելու եղանակը վերափոխուած էր գերարդիական բեմայարդարումով ու խաղարկութեամբ, որոնց մէջ բանաւորներու իշխանութեան մազլցելու դաւերուն սարսափները եւ անոնց անկումին գաւեշտը հիւսուած էին իրարու, այլարանական տեսարաններով :

Միջնարարի դադարին ելանք գաւիթ ու ճեմավայր,- կանանչ թուփերու, ցայտադրիւրի, հոսող ջուրերու եւ ոլորուելով բարձրացող աստիճաններու համադրուած գեղեցկութեամբ միջավայր մը, ուր հանդիսականներ կը շրջին ծիւելու եւ պատահած ծանօթներու հետ իրենց դատաստանները փոխանակելու համար : Հոն հանդիպեցայ Ամերիկայէն բարեկամի մը, որ գրօսաշրջիկներու խումբեր կը կազմէր եւ գանոնք պոստյաներու կ'առաջնորդէր Հայաստան եւ Թուրքիա : Ան իր նորագոյն խումբը բերած էր Երեւան, բայց նախ զայն Թուրքիոյ մէջէն մինչեւ արեւելեան մարզը,- հայկական գաւառները տանելէ ետք : Ան ծնած ու մեծցած էր Միացեալ Նահանգներու մէջ եւ կրնար խօսիլ լաւ հայերէն եւ քիչ մըն ալ թուրքերէն :

Եւ ան պատմեց ուրախ զարմանքով, անձկալի յուզումով :- Իրենք մօտաւոր անցեալի եղբրական դէպքերուն՝ վերախուումով կը շրջէին

այդ վայրերը, ուր ինք տեսեր էր անձիր տարածութիւններ, ամայի ու խոպան եւ հանդիպեր էր թուրք ու քիւրտ գիւղացիներու եւ հոփիւններու: Իր հայրենի տունէն վտարուած ու անոր ակերներուն այցի վերադարձած պանդուխտ հայու հետաքրքրութեամբ հարցուցեր էր անոնց.

- Ինչո՞ւ այսքան արգաւանդ հոգեր անմշակ կը մնան: Չորս կողմը կը նայիմ եւ ոչ այգի կայ, ոչ պարտէզ, ոչ մարդ: Ինչո՞ւ գիւղ ու քաղաք չէք շիներ այս վայրերուն վրայ, որ ընտանիքներ դան եւ բնակին:

Եւ թուրք ու քիւրտ հոփիւններ տուած են նոյն պատասխանը.

- Ի՞նչպէս այս տեղերը տուն շինենք եւ ծառ տնկենք... այս հոգերը հայերուն կը պատկանին... անոնք օր մը պիտի գան եւ առնեն... «Էլ լմէնիլիբ կէլէնէք սըր», - հայերը պիտի գան, կրկներ են անոնք:

Չարմանալի չէ հարկաւ այդ երեւոյթը: Ապրիլեան ահաւոր եղեւնէն արդէն աւելի քան 60 տարիներ անցեր են: Թուրքիոյ կառավարութիւնը քանի մը ծրագրուած փորձեր կատարեց հայկական գաւառները թուրքերով բնակեցնելու համար, բայց միշտ սպարդիւն: Որովհետեւ այդ վայրերը տարուած թուրք ընտանիքներ, իրենց յատկացւած սերմնացուի, ոչխարի, արջատի եւ յարակից նպաստներ ուտելի եւ սպառելի ետք, վերագաղթեցին զէպի արեւմուտք, Անատոլու: Եւ հայկական հոգերը կը շարունակեն մնալ անմարդաբնակ, լքուած ու խոպան, - կարծես իրենց հարագատ տէրերուն վերադարձին, անոնց բազուկներուն քրտինքին, ստեղծարար հանճարին եւ սպազայի տեսիլքին սպասելով, վերստին ծաղկելու եւ պտղաւորուելու համար:



Հաստատութեան մը նախագահի տեղակալին գրասենեակն ենք եւ մեր գրոյցը կ'ընդգրկէ սփւռքահայ եւ հայրենի հոգեր, ձգտումներ եւ իրազօրձումներ: Եւ կը մատնանշուին, կ'երեւի պապենական մոայլ վարժութեան մը ներշնչումով՝ թերիներ ու սխալներ, իրական կամ ենթադրական, բայց միշտ անողոք խտութեամբ: Կը քննադատուին ու կը պարսաւուին առաջնորդներ ու կազմակերպութիւններ իբրեւ ծանր յանցապարտներ, որովհետեւ անոնք չեն յաջողած մարմնաւորել հայ ազգային երազներ եւ չեն կրցած լուծել միջազգային բարդութեամբ հայկական հարցեր, առանց անդրադառնալու, որ անոնց հաշուեյարդարը անմատչելի կը մնայ նոյնիսկ մեծ պետութեան մը հասողութեան:

Նախագահին տեղակալը մեզի կը հրամցնէ կոնեակ, Երեւանի շաքարեղէն ու թարմ պտուղներ, մինչ կը խօսի պրկուած աշխոյժով


եւ մտատանջ խանդով: Սորապէս հայրենասէր եւ իր պաշտօնին լրիւ գիտակցութեամբ տոգորուած պաշտօնեայ՝ ան կը բացատրէր թէ Հայաստանի մէջ տեսնուող պակասներն ու գործուող սխալները ուղղակի արդիւնքներն են ժողովուրդին տրուած շատ լայն ազատութիւններուն: Եւ ան բանաձեւեց այդ սայթաքումներուն դէմ իր յղացած ամենարոյժ դարմանը.

- Մեզ մօտ, ասում են, տիրապետում է «պրոլետարական տիկտատուրա»: Բայց դա շատ մեղմ է, շատ թույլ: Իսկ մեզ հարկաւոր է խիստ, անզիջող իշխանութիւն, մի «գիւնուորակա՛ն տիկտատուրա»: Էն ժամանակ, ա՛յ, տարբեր կը լինի...:

Ան իր ձեռքերը բռունցքներու վերածած, բարձրացուցեր էր գլուխէն վեր ու կը ցնցէր զանոնք, յայտնօրէն իր խօսքերուն իմաստը աւելի շեշտելու համար: Ես շփոթեցայ պահ մը եւ նայեցայ անոր պայծառ աչքերուն, որոնց մէջ շողացող բարկութեան ցուրբը կը յայտնէին թէ ան չէր կատակեր: Եւ ես չկրցայ զիմադրել կատակելու փորձութեան:

- Ա՛յս, այո՛, ատիկա կատարեալ կ'ըլլար... այն ատեն ձեր կարծիքներուն ու պահանջներուն դէմ բոլո՞ր գանգատ կամ մրմունջ հանողները, առանց սեռի, տարիքի եւ իրաւունքի խտրութեան՝ կը լեցնէիք բանտերը... եւ Հայաստանի եւ աշխարհի մէջ ամէ՛ն դժուարութիւն կը հարթուէր, ամէ՛ն հարց կը լուծուէր, այնպէս չէ՞...:

Եւ խնդրով ելանք ոտքի ու սկսանք շրջիլ հիմնարկին միւս բաժանմունքները:



Հայաստան տարի եւ Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան եւ Արուեստներու թանգարանին յանձնեցի արխիւային մեծարժէք ձեռագիրներու հարուստ ծրար մը Արփիար Արփիարեանի նամակներէն, գրուած 1896-ի եւ յաջորդ տարիներու շրջանին Լոստոնէն, ուր ան կը խմբագրէր «Նոր Կեանք»ը, գործակցութեամբ Լեւոն Բաշալեանի եւ Միհրան Տամատեանի: Նաեւ թանկագին ուրիշ ձեռագիրներ հին ու նոր յայտնի գրազէտներէ, եւ երեք ինքնագիր նամակներ հայ ազգային մեծագոյն հերոս Զորավար Անդրանիկէն, ուղղուած «Պայքար»ի խմբագիր ընկ. Արմենակ Նազարին:

Անոնց յանձնումին առիթով մտերմական հանդիպում ու գրոյց ունեցանք թանգարանին տնօրէն Ս. Մելիքսեթեանի, անձնուէր ու համադրող Գոհար Ազնաւորեանի եւ ուրիշ պաշտօնեաներու հետ: Գարձեալ, խոր հրճուանքով ու հպարտութեամբ զիտեցի եւ շօշափեցի հայ ականաւոր գրողներու ձեռագիրներ, նամակներ ու լուսանկար-

ներ, խնամքով ու գուրգուրանքով համախմբուած ամէն անունի յատկացուած մասնաւոր դարակներու մէջ, իբրեւ անոնց սեփական «արխիւալիմ ֆոնտեր», որպէս անգին գանձեր: Ենքը ընդարձակ է հարկաւ, բայց հիմա անոր բոլոր յարկերը, սենեակներն ու միջանցքները յորդած են յարատեւ աճող թանկարժէք ձեռագիրներով եւ խճողումը կը գժուարացնէ հոն գործող պաշտօնեաներուն աշխատանքը եւ ուսումնասիրութեան համար եկող գրողներու փնտառութիւնը:

Երեւանի բոլոր միւս թանգարանները, եւ գրադարան, համալսարան, հիւանդանոցներ ու տարրեր հիմնարկներ ահագին ծաւալով ընդարձակուել են նորակերտ հինգ-վեց յարկանի գեղակերտ շէնքերով: Եւ ծրագրուած է արդէն կառուցանել նոր եւ շատ աւելի մեծ շէնք մը, հոն փոխադրելու համար Եղիշէ Չարենցի անունով կոչուող Գրականութեան եւ Արուեստներու թանգարանին բոլոր նիւթերն ու գրասենեակները: Երանի թէ այդ փոխադրութեան առիթով փոխուի նաեւ հաստատութեան անունը: Ծիշդ է անկասկած, որ իր գրական վաստակին գմալելի ճոխութեամբ եւ իր անձին անվիճելի հմայքով՝ Եղիշէ Չարենց գարձաւ ու կը մնայ խորհրդահայ բանաստեղծութեան գերագոյն կատարը: Եւ ան յարատեւ կը մեծարուի իր բազմասեռ արուեստին ու գործերուն վերակոչումով եւ անոր կենդանի յիշատակին նուիրուած բազմատեսակ յուշարձաններով, - քաղաք, պողոտայ, վարժարան, արձան, կամար եւ ուրիշ կառոյցներ:

Իսկ բազմատար անշուք կը մնայ քնարական գեղահիւս ոճի, խորունկ ու վարակիչ յոյգերու, թախծալի սիրոյ ու կարօտի տաղանդաւոր ու տարաբախտ բանաստեղծը, Վահան Տէրեան, նաեւ անձնական բարեկամ ու գործակից Լենինի, որ կանխահաս մարեցաւ, թոքախտէ զարնուած: Եւ անոր սրտայոյզ բանաստեղծութեան ու քաղցր յիշատակին ընծայուած արդար մեծարանք մը պիտի ըլլայ՝ եթէ Գրականութեան եւ Արուեստներու նորաշէն թանգարանը կոչուի Վահան Տէրեանի անունով:

× × ×

Քանի մը հոգիով կ'այցելէինք հանրային հիմնարկներ, կառավարական շէնքեր, պալատանման հաստատութիւններ: Անոնք կառուցուած էին արտաքնապէս իրարմէ տարրեր, ինքնուրոյն ոճերով, տուֆ քարերու գրաւիչ երանգներով: Իսկ ներսը, լայն աստիճաններն ու միջանցքներուն յատակները սայարկուած էին արուեստական կամ բնական մարմարով:

Անգամ մը տեսանք 2-3 կիներ, որոնք լայն ու երկար միջանցքին յատակը կը լուսային, հակառակ որ ան մաքուր կ'երեւէր արդէն:

- Այս յարգելի տիկիններուն մեղքը չէ՞, որ կը յոգնին մաքրելու համար տեղ մը, որ ազտու չէ, - հարցուցի ուղեկիցիս:

- Ոչի՛նչ, դա նրանց գործն է, նրանք թոյլ պիտի չաան, որ շէնքին ներքին մասերը կեղտոտուեն:

- Բայց կ'երեւի թէ մաքրութեան հայ ծառայողները շատ դիւրազգած ու հպարտ են, - յարեցի ժպտելով:

- Այդ ի՞նչպէս, - հարցուց միւսը զարմանքով:

- Որովհետեւ ահա անոնք եռանդով կը սրբեն այս մարմարէ յատակը, որ գրեթէ անարատ կը թուի, իսկ շէն մտներ ու մաքրելը քովի լուացարանները, որոնք իրապէս ազտու են, այնպէս չէ՞... - Ըսի խնդալով:

- Դէ՛, զուգարան ունենալու եւ մաքրելու գաղափարին նոր են վարժուած, էլի՛... բայց ի հարկէ կը սովորեն, թէկուզ զանդաղ:

- Հա՛, այդ բանդ, - «զուգարան», երանի թէ գայն փոխէք. որովհետեւ զոյգէ՛ արմատին հետ շատ մօտ է եւ արեւմտահայերէնի մէջ ան շատ կասկածելի, նոյնիսկ վասնզաւոր իմաստ մը կուտայ...: Կարելի չէ՞ ատոր տեղ որդեգրել լուացարան, կամ որեւէ յարմար բան, որ աւելի անմեղ ու ճաշկաւոր ըլլայ:

- Դա վատ չի լինի... հարցը կը ներկայացնենք Գիտութեանց Ակադեմիայի բառաչինարար կոմիտէին, որ մի քնարական կոչում յօրինի այդ կարեւոր առանձնարանի համար:

Բոլորս ուրախ ծիծաղեցանք եւ շարունակեցինք մեր պտոյտը:

× × ×

Առաւօտ մը, հայրենադարձ գրող ու բարեկամ Գեղամ Սեւանին հետ շրջագայելու գացինք Երեւանի Գերեզմանոցը: Կարելի է, առանց հեղինակի, գայն նկատել մայրաքաղաքին գլխաւոր տեսարժան վայրերէն մէկը, մանաւանդ սփիւռքէն այցելող զրօսաշրջիկներու համար: Իրապէս արտակարգ գեղեցկութեամբ հանրապարտէջ մը, բազմատեսակ ծառերու, թուփերու եւ ծաղիկներու ձեւերուն ու գոյներուն համախառն հրապոյրով, միայն՝ մեռելներու մոռայ զրացնութեան մէջ: Հոն չկան գետնի կանանչին հաւասար տափակ տաղանքաբեր, ինչպէս են Ամերիկայի գերեզմանները, ընդհանուր կանոնով: Բացայայտ է, որ Երեւանի հայերը սողորուած են գերդաստանական պատիւի ու վարկի ապշեցուցիչ փառասիրութեամբ մը: Անոնք կառուցած են ընտանեկան դամբարաններ, ծառապատ ու ծաղկազարդ, յաճախ երկաթէ վանդակորմով շրջանակուած: Եւ շիրիմներուն վրայ քարէ կամ մարմարէ գեղաքանդակ արձաններ ու յուշակոթողներ, ոչ միայն հանրային ծանօթ դէմքերու, այլ նաեւ

ոեւէ՛ անյայտ հանգուցեալի, շինուած՝ անոր մէկ վերապրող հարազատին բմայրով ու դրամով:

Պանթէոնի բաժինին մէջ խորապէս տպաւորիչ են մարմարէ եւ որձաքարէ բարձրադիր տապանաքարեր եւ կիսանդրիններ յայտնի գրողներու, արուեստագէտներու եւ պետական առաջնորդներու: Ուշագրաւ եւ յուզիչ են, իրարու կից դամբարաններն ու դիմաքանդակները Աղասի Խանջեանի եւ Սահակ Տէր Գաբրիէլեանի, որոնք Սովետ. Հայաստանի ամենէն իմաստուն, կորովի եւ անձնուրաց ղեկավարներէն եղած էին, մինչեւ իրենց եղբրական մահը, 1936-37ի ներքին սարսափներու ուրականէն զարնուած:

Բայց քիչ անդին կը տեսնուին աւելի փառաւոր արձաններ ու կոթողներ ոեւէ՛ անձանօթ մարդու կամ կնոջ գերեզմանին վրայ, երբեմն ոտանաւոր տապանապիրներով, որոնք տխրութիւն կամ ծիծաղ կը պատճառեն: Եւ ուրիշ անսովոր երեւոյթ մը, — ամէն դամբանի կից կան փոքր սեղան մը, երկու-երեք աթոռներ եւ կղզուած պահարան մը: Տարին քանի մը անգամ, ընտանիքին հանգուցեալ անդամներուն մահուան տարեգարձներուն, անոնց հարազատները կուգան հոն ու կերուխում կը կատարեն, եւ կոնեակի բաժակներ կը պարպեն անոնց յիշատակին, սրտալուրջ ճառերով: Զարմանալի չէ, որ այդ զգացական մտերմութեան մէջ, տխուր ոգեկոչումի ճաշերը կը փոխուին ուրախ խնջոյքներու, թերեւս հեթանոսական հին ու բարի աւանդութեամբ մը, որ վերապրեր է հեռուոր դարերու փրատակին մէջէն:

Սակայն փարթամօրէն հոյակապ այդ գերեզմանատան երեւոյթը ցաւազին իրողութիւն մը կը հաստատէ: Ընտանիքներ, ունայն ինքնասիրութեամբ կը փորձեն գերազանցել գիրար, աւելի փառաւոր, ուրեմն մեծածախս դամբարաններ ու կոթողներ շինել տալով իրենց մեռած հարազատներուն շիրիմներուն վրայ: Եւ կը վատնեն ահագին գումարներ, եթէ չունին՝ պարտքի տակ մտնելով, — մինչեւ տասնեակ հազար ուրլի, փոխանակ այդ դրամը ծախսելու իրենց բնակարաններուն գեղազարդման, կամ կենցաղային առաւել բարելաման համար: Ուրեմն նրխական աղբիւրներու, եռանդի ու ժամանակի այդ ահագին «գոհողութիւնները» կը կատարուին՝ ոչ թէ իրենց տան կենդանի անդամներուն կեանքերը աւելի ուրախ ու բարգաւաճ դարձնելու՝ այլ իրենց մեռած մէկ հարազատին մարմինը շքեղ բայց աւելորդ ու աննպատակ յուշարձանով մը փառաւորելու համար:

Եւ մենք կը շրջինք, կը դիտենք ու կը խօսակցինք հայ գրողներու եւ գիրքերու, նաեւ մեռելներու եւ ողջերու մասին:

ԱԶԳԱՅԻՆ ՈԳԻԻ ԵՒ ԱՐԱՐՔԻ ՄԱՍԻՆ

Ամիս մը Հայաստան մնալէ ետք արտասահման վերադարձիս աւելի քան երեք ամիսներ շրջեցայ տասնեակ մը օտար երկիրներ եւ բազմաթիւ խմբական հանդիպումներէ բացի, ամէն տեղ հրապարակային գրոյցներ ունեցայ հայկական փոքր կամ հոծ համայնքներու հետ: Այդ հանդիպումներուն մէջ կրկնուած գլխաւոր հարցումներէն մէկն էր, քանի մը տարբերակներով. — Մեր մայր հայրենիքի ժողովուրդին, մա՛նաւանդ անոր նորահաս սերունդին մէջ հայ ազգային ոգին ու ձգտումները ո՞րքան խորունկ կ'ապրուին, եւ ո՞րքան հարազատ կը պահպանուին: Այս մտահոգութեան շարժառիթը բացայայտ է:

Պանդխտութեան չքաւոր կամ փարթամ ափերու վրայ տարազնուած հայեր գիտեն համոզումով կամ կը զգան բնազդօրէն, թէ հակառակ իրենց բոլոր յամառ ճիգերուն, եւ գերազոյն գոհողութեանց, եւ յարատեւ մաքառումներուն՝ տակաւին որեւէ գաղութի ինքնուրոյն կեանքը ժամանակաւոր է: Եւ հայ ժողովուրդին գոյատեւումը իր անցեալ պատմութեամբ ու մշակոյթով, իր ներկայ լեզուով ու վերելքով, եւ իր ապագայի տեսիլքով ու ձգտումներով միայն կրնայ հնարաւոր դառնալ եւ երաշխաւորուիլ մինչեւ գալիք հազարամեակներ, վերականգնած Հայաստանի հողին վրայ, անոր պետութեան հովանիին տակ: Այդ է պատճառը, որ անոնք անձկութեամբ կ'ուզեն ապահովուիլ, թէ ամբանիտա եւ անխոցելի կը դառնայ հոն հայ ազգութեան ոգեկան ու ֆիզիքական խարիսխը եւ անոր վրայ կը կառուցուի հայկական վերածնունդին ամրոցը, իրրեւ ժողովուրդ, հայրենիք ու պետութիւն:

Ոեւէ սփրւեքահայ, որ Երեւան կ'այցելէ եւ կը յաջողի թօթափել հոն սխալ ու յանցանք փնտռելու յաւակնութիւնը եւ կը նախընտրէ դիտել, մա՛նաւանդ տեսնել շրջապատին հարազատ պատկերը՝ աւելի դիւրին պիտի կրնայ հաստատել հիմնական ճշմարտութիւններ: Եւ Հայաստանի ու հայոց ազգին հանդէպ ջերմեռանդ սէրը ամենէն ազնիւ ու համապարփակ տարրը կը կազմէ այդ բնզհանուր իրականութեան, չազախուած մարդոց ու կիներու, եւ տղոց ու աղջիկներու առօրեայ կենցաղին, անոնց աշխատանքին ու մտորումներուն:

Տարեց խաւերուն մէջ, հայրենասիրական խանդը կը յայտնուի

առաւել վիպային անմեղութեամբ: Համամարդկային եղբայրութեան գաղափարին սերտօրէն հիւսուած է հայ ժողովուրդին ինքնուրոյն գոյութեան եւ իր արժէքներով, իր ստեղծարար ճիւղերով զօրանալու իրաւունքը, իրբեւ բազկացուցիչ անգամ մարդկութեան համաշխարհային բնասանիքին:

Միջին սերունդին համար՝ հայրենիքի ու ազգի սէրը աւելի հեռահաս ու իրապաշտ նուիրում մըն է, որ կը հիմնուի Հայաստանի զարգացող իրականութեան, մա՛նաւանդ հայկական պետութեան բախտօրոշ դերին ճանաչման վրայ: Այս տարրին դատումով՝ պետական զիտակցութեան հասնիլը ամենէն կենսական պահանջն է հիմա հայ հասարակութեան համար, թէ՛ Հայաստանի եւ թէ՛ սփիւռքի մէջ:

Իսկ երիտասարդ սերունդին հայրենասիրութիւնը վճիտ ու խանդավառ սպրում մըն է, քիչ մը զգացական, որ կ'ազնուանայ, կը բերեղանայ հայ ժողովուրդի անցեալին հոյակապ ժառանգութեան եւ ներկայ շքեղ իրագործումներուն հանդէպ արդար հպարտութեան մը մակարդով: Այդ հոգեվիճակը, առաւել ժամանակին շունչը՝ աւելի ինքնավստահ ու յանդուզն գործուցեր են հայ նորահաս տղաքն ու աղջիկները, հայոց ազգային գոյատեւման, անոր արժէքներուն ու ձգտումներուն կենդանի մարմին տալու հաւատքին մէջ: Ամէն սփիւռքահայ կրնայ բացարձակօրէն ու խոնարհաբար վստահ ըլլալ, որ Հայաստանի հայր իրմէն շատ աւելի խորապէս կը սիրէ հայրենիքը եւ հայ ազգը եւ... Արարատը, որովհետեւ ան իր բովանդակ էութեամբ, իր աւօրեայ կենցաղով ու հոգերով, իր կարօտներով ու երազներով անքակտելիօրէն շաղկապուած է անոնց քարին ու հողին, անոնց ճակատագրին ու խորհուրդին:

Կասկած չկայ, որ այս երեք սերունդներն ալ կը գնահատեն ու կը ներբողեն Պորհրդային Հայաստանի հսկայաքայլ զարգացումը՝ գրականութեան, ճարտարարուեստի, գիտութեան, հանրային կրթութեան, գեղարուեստի, կառուցումներու եւ ապրելակերպի մակարդակի նշանակելի բարելաման մարգերուն մէջ: Բայց զարմանալի հակասութեամբ մը՝ անոնցմէ շատեր նաեւ խստօրէն կը քննադատեն երկրին պետական ու կուսակցական ղեկավարները, գիտնալով հանդերձ, թէ անոնց յղացած ծրագիրներով եւ անոնց հայթայթած առաջնորդութեամբ է, որ շահուած են այդ արտակարգ նուաճումները: Կատարելութեան պաշտամունքի ազնիւ բայց մարդկայնօրէն անկարելի տենչն է, որ այդ մտայնութիւնը կը սնուցանէ երիտասարդ սերունդին մէջ, որովհետեւ անոր անդամները տխրօրէն անձանօթ են օտար հզօր կամ տկար պետութեանց վարիչներու կարողութեան մտկարդակին: Այլապէս՝ անոնք հրճուանքով ու հպարտութեամբ պիտի տեսնէին, որ Հայաստանի ղեկավար ղէմքերը, երկիր ու ժողովուրդ կառավարելու

տաղանդով ու նուիրումով շատ աւելի բարձր պատուանդանի վրայ կը գտնուին՝ քան բազմաթիւ եւ շատ աւելի մեծ ու փարթամ երկիրներու պետերը:

× × ×

Երեւանի մէջ, արտասահմանի հայերուն իղձերն ու հոգերը հայրենիքի իրականութեան միացնող կենդանի կամուրջը կը հանդիսանայ Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէն: Գաղութներու պանդուխտ հայութեան եւ հայրենի պետութեան միջեւ կամարուած նախարարութիւնն է ան կարծես, Հայաստանի մայրաքաղաքին մէջ, այդ պաշտօնէն պարտադրուած դերին բարդ ու բազմասեռ գործունէութեամբ, ուրեմն նաեւ անկէ բխող տաղտուկներով, ու վէճերով, եւ շահուած դրական արդիւնքներու պարզեւած ոգեկան գոհունակութեամբ: Բազմաթիւ գրասենեակներ ու սրահներ ունի անոր կեդրոնատեղին, հաստատուած ընդարձակ շէնքի մը մէջ, ուր տարբեր բաժանմունքներ կը ծրագրեն ու կը վարեն իրենց աշխատանքը՝ արտասահմանի հայ գաղութներու տարբեր շրջաններուն համար:

Սփիւռքի կոմիտէին նախագահն է, երկար տարիներէ ի վեր, Պրն. Վարդգէս Համազասպեանը, իր բարձր պաշտօնին համահայկական տարողութեան եւ կենսական նշանակութեան խղճմտօրէն գիտակից, փորձառու եւ նուիրուած ղեկավար մը: Իր գործակիցներուն շարքին են Անդրանիկ Մարտիրոսեան (առաջին տեղակալ), Պարգեւ Մարտիրոսեան (Ամերիկայի բաժնի վարիչ), յայտնի բանաստեղծուհի Մարօ Մարգարեան, գրող Շաքէ Վարսեան եւ ուրիշներ, որոնց յաճախ կարելի է հանդիպել հաստատութեան մէջ:

Կոմիտէն կը հրատարակէ «Հայրենիքի Զայն» ծանօթ շաբաթաթերթը (խմբագիր՝ Լեւոն Զարբան)․ եւ «Սովետական Հայաստան» ամսաթերթը (20,000 օրինակ, խմբագիր՝ Շահէն Թաթիկեան), գեղատիպ նկարներով ու ճոխ բովանդակութեամբ հանդէս մը,՝ երկուքն ալ լայնօրէն հետաքրքրական սփիւռքահայ մտաւորական դասին ու հասարակական խաւերուն համար: Այս թերթերուն հրատարակած գրական կտորները եւ հայրենիքի զարգացման ու ժողովուրդի կենցաղին բոլոր մարգերը պատկերացնող յօդուածները ոգեկան ու իմացական կապեր են, որոնք գաղութահայ պանդուխտ բազմութիւնները կը խանդավառեն ու կը շաղկապեն հայրենի երկրին ու բնակչութեան հետ:

Հիմնարկութեան բաժանմունքներէն տարեկան քանի մը տասնեակ հազարաւոր գրական ու պատմական հատորներ, գասապիրքեր, ճայ-

նապնակներ, երաժշտական գործեր, պատկերներ եւ այլազան նիւթեր կը գրկուին սփիւռքահայ բոլոր համայնքներուն, - գրողներու, արուեստագէտներու, հանրային գէմքերու, գպրոցներու եւ մշակութային մարմիններու: Առաւել, բնական է, «Հայրենիքի Ձայն»-ի եւ «Սովետական Հայաստան»-ի բազմահազար օրինակներ:

Եւ տակաւին, Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէն է, որ կը ծրագրէ ու կը գործադրէ խորհրդահայ երգիչներու, գրողներու, նուագողներու եւ պարողներու խումբերուն առաքումները գէպի Մերձատր Արեւելքի, Եւրոպայի եւ Հիւսիսային ու Հարաւային Ամերիկայի հայկական կեդրոնները: Այդ հայրենի արուեստագէտները մայր երկրի կենդանի ոգին եւ ծաղկող իրականութիւնը կը բերեն եւ անոնց ջերմութիւնն ու գեղեցկութիւնը կը բաշխեն հայրենարարձ գաղթական հոգիներուն: Այսքան յարատեւ ու ծաւալուն գործունէութիւն մը, բնականօրէն, հնարաւոր չէ որ կարենայ ընդունալ ու բաւարարել ամէն համայնքի, կամ անոր մէջ ծառայող ամէն մարմինի փափաքներուն ու նախասիրութեան: Եւ նոյնքան բնական է, որ յառաջանան թիւրիմացութիւն, տարակարծութիւն եւ նոյնիսկ-բազմանքներու բախումներ:

Քանի մը առիթներով, Կոմիտէի գրասենեակին մէջ ես ներկայ գտնուեցայ տարբեր գրոյցներու եւ բանակցութեանց, սփիւռքահայ ներկայացուցիչներու եւ Պրն. Վարդգէս Համազասպեանի եւ իր գործակիցներուն միջեւ: Երկու կողմերուն խօսակցութեան եղանակին ու վարմունքին հակադրութիւնը զարմանալի երեւոյթ մը կը հաստատէր: Արտասահմանի այցելուն կամ պատուիրակը կուգար խնդրելու շնորհ մը, կամ դասագիրքեր, կամ արուեստագէտներու առաքում, - իբրեւ հայրենական պարգեւ: Բայց անոնք կը դիմէին իբրեւ խստասիրտ պահանջատէր, յաճախ մեղադրելով Կոմիտէին պաշտօնեաները եւ երբեմն վիրաւորական դառնալու աստիճան բրտութեամբ, պայմաններ դնելով իրենց ստանալիք նուէրներու բնոյթին, անձերուն ու քանակին վրայ: Եւ մինչ կը դիտէի ու կը լսէի զանոնք՝ նաեւ կը խորհէի, թէ մարդիկ իրա՞ւ աւելի խստապահանջ կ'ըլլան իրենց շնորհուած բնձաններուն ընտրութեան մէջ, քան եթէ հարկադրուէին վճարել անոնց համար:

Իսկ Կոմիտէին վարիչները համբերատար ոգիով, փափկանկատ ու բարեացակամ, կը բացատրէին, թէ իրենք պետական հաստատութիւն մըն են եւ պէտք է յարգեն ազգային ու միջազգային որոշ կանոններ: Թէ Հայաստան բաւական լայն վարկեր չահած է արտասահմանի հետ մշակութային փոխանակութեան մարդին մէջ, Խ. Միութեան պիւտձէի ծիրէն ներս: Եւ տարեկան առաւել որակով ու թիւով երգիչներ, գրողներ, նուագողներ ու պարողներ իրենց ծախքով

մինչեւ հեռաւոր հայ գաղութներուն հասցնելու իրաւունքներ ապահոված է: Եւ եթէ ութէն տասը հոգինոց խումբի մը փոխարէն, միայն մէկ-երկու անձեր զրկեն որեւէ համայնքի, որովհետեւ ան կը դժուարանայ անոնց տեղական ծախքերը հոգալ՝ այն ատեն Կոմիտէն, ուրեմն Հայաստանը կը կորսնցնէ իր շահած վարկային իրաւունքները, յաջորդ տարիներուն, ուրիշ գաղութներէ պահանջուած աւելի բազմաթիւ արուեստագէտները անոնց առաքելու համար:

Որպէս լուսագոյն լուծում, Կոմիտէն որդեգրած է գործելակերպի նոր եղանակ մը: Ան արտասահմանի հայ կազմակերպութեանց ու մարմիններուն դիմումներն ու փափաքները պիտի ստանայ ու համարէ ժամանակէն առաջ: Եւ 1978-ին ամբողջապէս պիտի ծրագրէ 1979-ի շրջանին արտասահման առաքուելիք հայրենական արուեստագէտներու խումբերուն անձնակազմերը, անոնց անուններով ու թիւերով, կանխելու համար որեւէ խաչածեւում ու թիւրիմացութիւն: Եւ տակաւին՝ կը բաղդատեմ բազմակողմանի նպաստներ բաշխող Կապի Կոմիտէին վարիչներուն եւ արտասահմանէն եկած նպաստընկալ այցելուներու կամ պատուիրակներու խօսակցութեան ու վարմունքի հակառակ կերպերը: Հայաստանի պետական պաշտօնեաները՝ խոնարհ, սիրալիր, փափկանկատ, նոյնիսկ իրենց բարձրագոյն դիրքերուն վրայ ու հեղինակութեան մէջ: Իսկ սփիւռքահայ ուխտաւորները՝ խստապահանջ, յաւակնոտ, քննադատող: Բայց ինչո՞ւ այդ ափսոսալի հակասութիւնը, կը հարցնեմ ես ինձի, - չէ՞ որ անոնք բոլորն ալ նոյն ժողովուրդին զաւակներն են, համակուած նոյն հոգերով ու կարօտներով, եւ նոյն նպատակներուն ու տեսիլքին հետապնդման նուիրուած: Եւ պատասխանը բացայայտ կ'երեւի. - որովհետեւ հայրենիքի առաջնորդները հասած են պետական ըմբռնումի գիտակցութեան եւ իրենց խիղճներն ու զատողութիւնը գիրենք թօտած են ազգային իտէալներու իրազորման փարելու եւ մարդկային բարօրութեան ձգտելու իրապաշտ իմաստութեան:

Իսկ հիմնականօրէն տարբեր կը շարունակեն մնալ սփիւռքի հայութեան կենցաղային պայմանները, ուրեմն նաեւ անոնցմէ բխած մտայնութիւնը: Նախկին արեւմտահայեր են անոնք, դարերով հալածուած ու ստրկացուած՝ Թուրքիոյ գաժան բռնակալութեան լուծին ներքեւ. եւ հիմա, քանի մը սերունդներով՝ անոնք ցրուած կ'ապրին աւելի քան երեսուն տարբեր երկիրներու մէջ, ենթակայ անոնց յաճախ իրերամերժ մշակոյթներուն, օրէնքներուն ու վարչային դրութեանց ճնշումներուն: Անոնք հոգեբանօրէն վարժուած են հեղութեամբ հպատակելու յեւէ օտար տիրողի, իշխանութեան կամ ոստիկանի մականին, առանց բողոքի կամ տրտունջի:

Բայց նոյն ատեն, ցաւազին հակադրութեամբ մը, Երեւան այցե-

լող սփիւռքի հայեր տակաւին կը դժուարանան հասկնալ վերականգնած հայկական պետութեան փրկարար զերերը, որոնց չնորհիւ ան քաղաքական, ընկերային ու տնտեսական զուգահեռ մարզերուն մէջ, հայ ժողովուրդին Ֆիզիքական ու ազգային գոյատեւումը կ'երաշխաւորէ, եւ Հայաստանի զարգանալուն ու զօրանալուն խաղախը կը կերտէ:

Եւ անոնք յաճախ հայրենի կառավարութիւնը կը շփոթեն սփիւռքահայ որեւէ միութեան կամ յանձնախումբի հետ: Պատճառը այդ է, որ Երեւանի հայ պետական վարիչներուն հանդէպ իրենց վերաբերմունքը կը դառնայ քմահաճօրէն պահանջկոտ, երբեմն ամբարտաւան, յաճախ կոպիտ: Թերեւս հասկնալի է. դարձեալ հոգեբանօրէն, որ արտասահմանի մէջ, օտար իշխողներու քմայքներուն ու կամքին տակ մշտապէս խոնարհած տարագիր հայը, երբ կը հասնի Երեւան, իր ներսը սանձուած մարդկային արժանապատուութիւնը եւ ազգային հպարտութիւնը ազատ միջավայր կը գտնեն ժայթքելու դուրս, թէկուզ բիրտ վերաբերմունքով հայրենի վարիչներու հանդէպ, հաւատարմով թէ իրենց հայու պապենական իրաւունքն է որ կը կիրարկեն, որեւէ օտար կապանքէ ձերբազատ:

Սակայն տարակոյս չկայ, որ հայ ժողովուրդը, սփիւռքի, նաեւ Հայաստանի մէջ, պետական լիակատար գիտակցութեան հասած պիտի ըլլայ այն երանելի օրը, երբ նոյն ակնածանքով (մոռնա՛նք երկիւղած խոնարհամտութիւնը), որ կը մօտենայ սեւ օտար նախարարի կամ զեսպանատան գրագիրի՝ դիմաւորէ նաեւ Հայաստանի նախագահը, վարչապետը, կամ կենտկոմի առաջին քարտուղարը եւ ուրիշ առաջնորդներ: Որովհետեւ անկողմնակալ դատումով ան պիտի տեսնէ, պիտի համոզուի, թէ հայրենի պետական վարիչները յաճախ շատ աւելի իմաստուն, պարկեշտ եւ անձնուէր առաջնորդներ են, քան բազմաթիւ օտար մեծ ու փոքր պետութեանց գլուխները:

× × ×

Երեկոյ մը հաւաքուած էինք ծանօթ ընտանիքի մը յարկին տակ. հայրենազարձ ու Հայաստանի բնիկ այրեր ու կիներ՝ իրենց գաւակներով ու թոռներով: Եւ ճաշէն ետք շարունակուեցաւ ընդհանուր զրոյցը, միշտ ազգային ու գրական, կամ սփիւռքահայ ու հայրենական նիւթերու շուրջ: Եւ խօսակցութիւնը կ'ընթանար զգացական խանդով, երբեմն բորբոքած յուզումով կամ բարկացած բողբոջով զիրար համոզելու համար իրենց կարծիքներուն ճշմարտութեան մասին. հոգ չէ թէ ի՞նչ կարեւոր կամ մանրուք խնդիրներ կը փորձէին լուծել:

Բնականօրէն, մեր զրոյցը հասաւ նաեւ գաղութահայ անցեալ զէպրերու եւ ներկայ հարցերու եւ ընդգրկեց արեւմտահայ ազատագրական պայքարը: Յիշուեցան թուականներ, դիմադրական բախումներ եւ անձնագոհ մարտիկներու անուններ, ափսոսանքի ու տխրութեան շեշտերով: Զարմանալի չէր որ յայտնի նախատրութիւններ ու նախապաշարումներ կը պարզուէին այդ լուսաւոր զէմքերը զասակարգելուն, անոնց գերազանցութեան պատուանդաններ բաշխելուն մէջ: Այն ատեն վաւերական մեկնակէտ մը նշելու դիտումով բաի թէ հայ ժողովուրդի պաշտպանութեան եւ ազատութեան համար կռուած կամ զոհուած ռազմիկներու շարքին մէջ՝ ամենէն հերոսական ու առասպելական ազգային զիւցազնը եղած էր Անդրանիկը: Իրբեւ ֆետայի, խմբապետ ու զօրավար, կենդանի անձնաւորումը Սասունցի Գաւթիին:

Ամէնքը համաձայն էին հիացումի ու սքրի իրենց ներբողներով: Որովհետեւ Հայաստանի մէջ, ժողովրդային բոլոր խաւերուն գաւաստանով, Անդրանիկ իր ազգին ու հայրենիքին ազատութեան մարտնչումներու փառապսակ ախոյեանը դարձեր էր, որուն հանդէպ երկիւղած զարմանքի ու խոնարհ պաշտամունքի խառն զգացում մը կը տածեն: Բայց յանկարծ տարեց հայրենազարձ մը հարցուց.

- Ժիշդ է, հերոս է նա, ով իր կեանքը զոհարեցում է հարազատ ժողովրդի օգտին: Էդ զէպրում չպէ՞տք է Անդրանիկի կողքին իրբեւ հերոս գասել Քրիստափոր Միքայէլեանին, որը նոյնպէս զոհուեց իր ազգի համար:

Քանի մը բարկացած ձայներ պատասխանեցին նոյն ատեն, ձեռքի շարժումներու եւ մեղադրանքի կանչերու ժխտի մը մէջէն: Բայց միւսը հանդարտ ժպտով մը նայեցաւ ինծի, կը թուէր թէ չէր լսած շուրջիներուն խօսքը:

- Դուք ի՞նչ էք կարծում, չպէ՞տք է Անդրանիկի հաւատար ազգային հերոս նկատել Քրիստափոր Միքայէլեանին, որ իր կեանքը զոհ տուեց սուրբ պայթիւնին, մինչ Անդրանիկը վախճանուեց հեռուոր Ամերիկայում, խաղաղ մահով:

Հարցումը շեշտակի էր եւ հնարաւոր չէր պատասխանել խուսափիլ:

- Իմ կարծիքս, յարեցի նոյնպէս ժպտելով, Քրիստափորի անունը դնել Անդրանիկի կողքին՝ անարգել է ո՛չ միայն հայոց ազգային զիւցազնը, այլ նաեւ աղարտել է հերոսութեան շափանիչը:

- Դա ի՞նչպէս, չէ՞ որ Քրիստափորն էլ իրա կեանքը կորցրեց հայ ժողովրդի բարիքին համար:

- Բայց այս վերջին ընդհանուր պատերազմի տարիներուն՝ տասնեակ միլիոնաւոր զինուորներ սպաննուեցան սուրբերէ եւ փամ-

փուշաներէ, իրենց ազգին ու հայրենիքին պաշտպանութեան համար: Ուրեմն անոնք բոլորը պատկուեցան ազգային հերոսի փառքով: Հարկա՛ւ ոչ: Յետոյ, բաւական չէ, որ մէկը իր կեանքը զոհէ ժողովուրդին համար, այլ կականը այն է, թէ զոհողութեան այդ արարքը բարի՞ք թէ չարիք կը բերէ ազգին ու հայրենիքին:

- Ուզում էք ասել, թէ Քրիստափորը մի հասարակ գինուո՞ր էր, եւ նա իր անձի գոհարեւումով չարիք հասցրե՞ց մեր ժողովրդին:

- Ձէ՛, հարկաւ ան սովորական մարդ չէր: Չարացած, գաղափարապաշտ երիտասարդ էր ան, նուիրուած հայոց ազգային ազատութեան իսկային: Բայց երբ ան դուրս եկաւ Թիֆլիսէն եւ ծրագրեց Ապտիւլ Համիտի դէմ մահափորձի ձեռնարկը՝ թէ՛ չարիք պատճառեց մեզի եւ թէ՛ այդ արարքով նախատեց արեւմտահայ ժողովուրդը:

- Դէ՛, ինչե՛ր էք ասում, իսկի չի կարելի նրա մասին ընդունել նման վիրավորական ու խիստ վերացրումներ, բացառանչեց ան:

- Գիտե՛մ թէ դժուար է, յարեցի: Բայց զգացական զեղումները չեն կրնար խեղդել յայտնի իրողութիւններ ու փաստեր: Եթէ սառն գատողութեամբ նայինք այդ դէպքին, ի՞նչ պիտի տեսնենք: Անշուշտ ցաւալի է, որ Ապտիւլ Համիտը սպաննելու համար իր պատրաստած ումըրին փորձարկութեան զոհ գնաց Քրիստափոր: Սակայն, դժբախտաբար, մահափորձը դարձեալ կատարուեցաւ եւ «Երլորդի պումպան» պայթեցաւ, առանց մեռցնել յաջողելու արիւնարբու Սուլթանը: Երեւակայեցէք, այդ ճախողանքին հետեանքով անգամ՝ քանի մրտասնեակ հազար անմեղ հայեր մորթոտուեցան Պոլսոյ փողոցներուն մէջ: Ուրեմն վրիպած ահաբեկչական փորձը բարի՞ք, թէ ողբերգական, ազկտայի չարիք մը եղաւ հայ ժողովուրդին համար: Իսկ եթէ իրապէս սպաննուէր Համիտ, ի՞նչ պիտի ըլլար արդիւնքը, - քանի մը հարիւր հազար հայեր եւս պիտի կոտորուէին հայկական գաւառներուն մէջ, գերագանցելով 1896-ի նախճիրը:

- Ի հարկէ շատ ափսոսալի կը լինէր զա... բայց ի՞նչ արած, ամէն յեղափոխական պոռթկում իրա անմեղ զոհերն է պահանջում: Մենք էլ երեւի մեր տուրքը վճարելու էինք, բաւ ան համակերպող շեշտով մը:

- Նոյնիսկ անհարկի եւ աննպատակ զոհեր, մեր կողմէ իբր մատաղ մատուցուած թրքական եաթաղանի՞ն:

Ան պահ մը լսեց, յետոյ աւելցուց.

- Իսկ Քրիստափորի սարքած մահափորձի արարքը դուք ինչի՞ք էք նախատինք համարում բոլոր արեւմտահայերի դէմ, զա չեմ կարող հասկանալ ես, իբրեւ նախկին արեւմտահայ:

- Բայց առիկա բաւական պարզ է, պատասխանեցի: Այն ստանշուրջ երեք միլիոն հայեր կ'ապրէին օսմանեան արիւնտտ յուճին տակ, Պոլիսէն մինչեւ Կիլիկիա եւ հայկական նահանգները: Քրիստափորին

յանցանքը այն էր, որ յաւակնեցաւ խորհիլ թէ, - իմք առանձին աւելի իմաստուն ու քաջ էր եւ աւելի մարտական յանդգնութիւն ունէր՝ քան ամբողջ արեւմտահայ ժողովուրդը միասնաբար: Ուրեմն ինք մինա՛կը, քանի մը գործակիցներով, կրնար ծրագրել Ապտիւլ Համիտի դէմ մահափորձը եւ սպաննել զայն արեւմտահայոց գլուխին վրայէն, քանի որ իր համոզումով անոնք ընդունակ չէին, այսինքն՝ բաւական խելք ու խիզախութիւն չունէին այդպիսի «յեղափոխական» ձեռնարկ մը կատարելու: Եւ Քրիստափոր իր այդ գաղափարով ու անկէ թելադրուած մահափորձի արարքով՝ աններելի մեծամտութեամբ մը անարգեց արեւմտահայութեան գատողութիւնը, մարտական ոգին ու գիմարելու կամքը: Որովհետեւ հարկաւ Քրիստափոր գիտէր, թէ նո՛յն արեւմտահայերը զեռ 1862-ին Ձէյթունի ինքնապաշտպանութեան զիւցազնային կռիւները մղեր էին թրքական բանակին դէմ եւ պարտութեան մատներ էին անոր եաթաղաններն ու թնդանօթները, - մինչեւ որ օտար պետութիւններ միջամտեցին ու խաղաղ վիճակ մը հաստատուեցաւ: Անշուշտ Քրիստափոր լսած պիտի ըլլար անունները Անդրանիկի եւ Սերոր Աղբուրի, Միհրան Տամատեանի ու Մկրտիչ Աւետիսեանի, Գէորգ Չաւուշի ու Ժիրայր եւ Մուրատ Պոյաճեանի եւ ուրիշ անվեհեր ռազմիկ պետերու, որոնք անձնուրաց քաջութեամբ կը զիմարէին թուրք իշխանութեան հալածանքին ու ոճիրներուն: Քրիստափոր անկասկած գիտէր, որ 1896-ին Վանի մէջ հայ մարտիկներ փրկարար հերոսամարտ մը մղեր էին թուրք ու քրւրտ զինուորներու եւ խուժանին դէմ եւ քաղաքին հայութիւնը պաշտպաններ էին անոնց կոտորածէն: Լա՛ւ, այս արեւմտահայ մարտական պետերը, իրենց մարզուած խումբերով, չէի՞ն կրնար ծրագրել ու գործարկել Սուլթան Համիտի դէմ մահափորձը: Անշուշտ կրնային, եւ առանց ճախողելու:

- Լա՛ւ, եթէ կարող էին, ապա ինչի՞ք չարեցին, կանչեց ան:

- Այո՛, ինչո՞ւ չըրին... որովհետեւ անոնք իրենց քաջութեան հետ՝ առաւել փորձառութիւն եւ խելք ալ ունէին: Անոնք գիտէին, որ Ապտիւլ Համիտը սպաննել՝ պիտի նշանակէր փառաւոր պատրուակ մը շնորհել օսմանեան բռնաւորներուն, որ 300,000 անմեղ ու անպաշտպան հայեր եւս ջարդէին գաւառներուն մէջ, կողոպուտ, աւեր ու թշուառութիւն սփռելով ամէն տեղ: Յետոյ, արեւմտահայ առաջնորդներ գիտէին, թէ Համիտի չքացումով՝ անոր յաջորդող գահակալը շատ աւելի անողոք վայրագութեամբ պիտի պատուհասէր հայ ժողովուրդը: Եւ ինչ ահաւոր հեղանակ, քանի մը տարի ետք Երիտասարդ Թուրքեր իրենք գահընկէց ըրին Սուլթան Համիտը եւ անոր տեղ իշխանութեան մականը գրաւեցին՝ որո՞նք, - Թալէազ, Էնվեր եւ անոնց զինակիցները, - հայոց ցեղասպանութեան եղեռնագործ զա-

հիճները: Ապտիլ Համիա հարկաւ արիւնծարաւ բռնակալ մըն էր, որ 1896-ին 300,000 հայերու կոտորածը սարքեց: Բայց ան գոնէ ձգեց որ հայ ժողովուրդը գոյատեւէր իր պատմական հայրենիքին մէջ: Մինչ անոր յաջորդները, Թալէալ, Էնվեր ու մեղսակիցներ՝ սոսկալի նախճիրով մը արեւմտեան Հայաստանէն կոտորածով ու աքսորով բնաջնջեցին բովանդակ հայութիւնը: Իսկ հայկական գաւառները բռնագրաւեցին, գանոնք աւերելով ու ամառացնելով: Եւ Քրիստափորի սարքած մահափորձը Համիտի գէմ՝ պարզապէս աւելի պիտի փութացնէր այդ զարհուրելի աղէտին պայթիլը հայ ժողովուրդի գլուխին, յաւելեալ չքմեղանք բնծայելով Թուրքիոյ սճրապարս փորիչներուն: Չէ՛, ճշմարտութեան գէմ ծանր մեղանշում է խորհիլն անգամ, թէ Քրիստափորի անունը կտրելի է գասել ազգային հերոս Անդրանիկի կողքին:

- Դէ՛, էս բաժակը խմենք հայոց վեհ գրեցազնի, Անդրանիկի յիշատակին, առաջարկեց հանգստեան կոչուած ուսուցիչ մը զուարթ շեշտով:

Եւ երբ բոլոր գաւաթները պարպուեցան՝ ան սկսաւ երգել իր գոռ ձայնով.

«Իրբև արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ,
«Թնկացնում ես երկինք, գետին տեւչալառ,
«Սուրբ անուց պիտի յիշուի դարէ դար,
«Հըսկայ լերինք քեզ ապաստան, Անդրանիկ:»

Եւ ձօնը վերածուեցաւ խանդավառ, խանդակաթ խմբերգի մը:



Բարերափա իրողութիւն մըն է հայոց համար, որ Հայաստանի երեք միլիոնի հասնող բնակչութեան հարիւրին չուրջ 90-ը կը բաղկանայ հայերէ: Գլխաւոր փոքրամասնութիւններ կը կազմեն քուրաքեր, ռուսեր, թաթարներ եւ աւելի փոքրաթիւ ցեղային տարրեր. Խ. Միութեան գերագոյն օրէնքը, - Սահմանադրութիւնը կ'ապահովէ, որ ամէն անգամ հանրապետութեան պաշտօնական լեզուն՝ անոր ազգայի բարբառն է: Իսկ անոր սահմաններուն մէջ ապրող ամէն փոքրամասնութիւն կ'ունենայ անջատ դպրոցներ, որոնց բոլոր ծախքերը կը հոգացուին նոյն պետութեան կողմէ: Անոնց մէջ ուսանող երկսեռ աշակերտներ կը սորվին թէ՛ իրենց հարազատ եւ թէ՛ այդ հանրապետութեան ժողովուրդին տիրական լեզուն, մշակոյթն ու պատմութիւնը, սեփականին բացառյալ գերազանցութեամբ:

Հայաստան հիմա ունի 1,351 վարժարաններ, - նախակրթարան,

ութամեայ եւ միջնակարգ (որոնց 190-ը մայրաքաղաք Երեւանի մէջ), աւելի քան 800,000 երկսեռ բնդհանուր ուսանողներով: Այդ դպրոցներէն քանի մը հարիւր հասարակական, քրտական ու ատրպէյճանական են, ուր դաստիարակութիւնը կը տրուի իրենց սեփական լեզուներով եւ դասացուցակի լրացուցիչ նիւթերով: Անոնց մէջ կ'աւանդուին նաեւ հայերէն եւ յարակից զասեր: Ասոնց շարքին կան 27 դպրոցներ՝ կոյրերու, համբերու եւ ուրիշ «պակասաւորներու» համար, որոնց մէջ կ'ուսանին 3,981 աղջիկներ ու տղաք: Իսկ վերջին տարիներուն բացուեցին եւ նոր տեսակի վարժարաններ, - «անդերէն թէրուստով» ինը հատ, ֆրանսերէն՝ երեք հատ, եւ գերմաներէն՝ մէկ հատ: Այս կոչումով կրթական յարկերը կը մանեն այն աշակերտները, որոնք կ'ուզեն մասնագիտանալ այդ օտար լեզուներուն մէջ, որոնց տիրապետելը անհրաժեշտ կը նկատեն իրենց նախընտրած սպարէզներուն համար:

Մամուլի ցանցը լայնօրէն տարածուած է ամբողջ Հայաստանի մէջ: «Սովետական Հայաստան» օրաթերթը կը սպասի 268,000 ազգաբանակով: «Աւանգարտ» լոյս կը տեսնէ 260,000 օրինակ: «Երկկոյնեան Երևան» կը սպասորուի 51,000 հատ, նոյնպէս օրաթերթ, եւ բոլորն ալ կը փաճառուին շատ կարճ ժամանակի մէջ: Բացի մայրաքաղաքի թերթերէն, միւս քաղաքներն ու շրջանները կը հրատարակեն իրենց սեփական օրաթերթերն ու հանդէսները: Դեռ կան բազմաթիւ շարաթաթերթեր ու ամսագիրներ, նուիրուած մասնաւոր նիւթերու եւ մարզերու:

«Գարուն» գրական ամսաթերթը կը սպասի 62,000 օրինակ: «Հայաստանի Աշխատաւորուի» ամսագիրը՝ 60,000, «Սովետական Գրականութիւն» ամսաթերթը՝ 9,000 օրինակ, իսկ «Սովետական Արուեստ» կը սպասորուի ամիսը 8,000 հատ: Անշուշտ ռուսերէն եւ ուրիշ լեզուներով ալ կը հրատարակուին թերթեր ու գիրքեր, եւ անոնք աւելի բազմաթիւ կ'երևին լրագրամատու կրպակներու եւ գրամատու խանութիւններու մէջ: Պատճառը այն է, որ հայերէն թերթերն ու գիրքերը արագօրէն կը ծախուին ու կը հասնին, իսկ միւսները կը մնան: Եւ սփիւռքահայ այցելուն այն սխալ տպաւորութիւնը կը կրէ, թէ Հայաստանի մէջ ժողովուրդը կը կարգայ ու կը խօսի հայերէնէ աւելի՛ ռուսերէն լեզուով:

Այս խորապէս հայկական իրականութեան մէջ, տակուին գրոշ խաւեր կը մտահոգուին, որ հայերէն լեզուին տիրապետութիւնը կրնայ ակարանայ ռուսերէնին հանդէպ: Արովհետեւ ինչպէս միւս փոքրամասնութեանց, նոյնպէս ռուսական վարժարաններ բացուեցին Հայաստան ապրող ռուսերու եւ ուրիշ օտարներու դասակներուն համար: Բայց հայ ծնողքներ ալ կան, որոնք իրենց տղաքն ու աղջիկները

կը զրկենն սուսական զպրոցներ, որ աւելի կատարեալ սորվինն ուս- սերէն լեզունն եւ հասնինն Խ. Միութեան շափանիչով բարձրագոյն զիրքերու: Մտողական մոլորած, յանցապարտ ունայնամտութիւն մը հարկաւ, որ նախորդ սերունդներէն ժառանգուած ստորակայու- թեան բարդոյթէ մը կը սնանի, - թէ հայկական նախակրթարանն ու բարձրագոյն վարժարանը ստորագաս են որեւէ օտար կրթարանէ, ուրեմն նուազ պատուաբեր են: Այդ ամօթալի մտայնութեամբ է, որ կարգ մը ծնողներ կը մղուին իրենց զաւակները զրկել օտար զպրոց- ներ, - Երեւանի մէջ՝ սուսական, Պէյրութի մէջ եւ այլուր՝ Քրան- սական եւ ամերիկեան:

Իրողութիւնը այն է անշուշտ, որ սուսական վարժարաններէ չըջանաւարտ հայ աղջիկներ ու աղաք նաեւ հայախօս ու հայրենասէր անձեր կը գտնան, թրծուելով հայրենական միջավայրի ու մշակոյ- թի կլանող հնոցին մէջ: Իսկ հայկական կրթարաններէ անցած ու ջերմեանդորէն ազգասէր հայեր մաղցցած են ամբողջ Խ. Միութեան մէջ՝ հեղինակութեան, հռչակի ու փառքի զերագոյն աստիճաննե- րուն, թէ՛ պետական (Անաստաս Միկոյեան), թէ՛ գինուորական (Մարաջախտ Զովհաննէս Բաղրամեան), թէ՛ գիտական (Վրգատը Համբարձումեան) եւ թէ՛ յարակից ասպարէզներու վրայ:

Հայաստանի մէջ ամբողջ ամասան մը բնութագրին եւ ստիճանը ունեցալ այցելելու աւելի քան տասնեակ մը քաղաքներ: Երեւանի մէջ ամէն օր քանի մը ժամ քալեցի տարբեր պոզոսաններու երկայնքին ու հրապարակներու վրայ եւ խոսնուեցալ տարեց, երիտասարդ ու մանուկ անցորդներու խումբերուն: Կանգնեցալ զպրոցներու դու- սերունն առջեւ, երբ փոքր ու մեծ աշակերտներ կ'արձակուէին ու կը խուժէին փողոց: Յամենայով պատեցալ խանութներէ եւ բնոյարձակ փաճառատուններէ՝ ներս ու նստալ՝ ճաշարաններու, սրճարաններու եւ հանրակառքերու մէջ, եւ այցելեցի բազմաթիւ պետական ու գիտական հանրային ու կրթական հիմնարկներ եւ թանգարաններ: Եւ խորունկ հրճուանքով կը լսէի, որ ամէն տեղ անձնական գրոյցներու տտեն, առեւտուրի մէջ եւ հեռաձայնի վրայ՝ բոլորը կը խօսէին բացարձա- կորէն հայերէն:

Կառավարական պաշտօնատուներու եւ հիմնարկներու արտաքին մուտքերու երկու կողմերուն մարմարի շէրտերու վրայ քանդակուած են անոնց անունները նախ հայերէն, յետոյ ռուսերէն: Ներքը՝ դրա- սենեակներու դուսերուն վրայ կամ կողքերուն, գրուած են հոն պաշ- տօնավարող նախագահին կամ տեղակալին, կամ անոնց զործակից- ներուն անուններն ու ախոյոսները, զարձեւալ հայերէն ու ռուսերէն, եւ երբեմն միայն հայերէն: Բայց այս բնոյճանուր կամոնէն կան նաեւ ցուայի շեղումներ: Քանի մը հաստատութեանց մէջ արստանքով ու

զարմանքով տեսալ, որ զեկավար պաշտօնեաներու անուններ ու տիտ- դոսներ արձանագրուելը էին միայն ռուսերէն, որ աւելի նեղացուցիչ կը դառնար, քանի որ այցելուներ չէին կրնար զանոնք կարդալ:

Յետոյ զհետողութիւն ըրի այդ զարտուղի երեւոյթին զէմ եւ անոր պատճառը փորձեցի ստուգել: Տրուած բացատրութիւնը նոյնն էր, տարբեր աղբիւրներէ: - Հիմնարկին տնօրէնն էր, որ իր անձնական ճաշակով կամ քմայքով կը հաստատէր նման ներքին վարչական սո- ժորութիւններ: Յաճախ նոր վարիչը իր նախորդէն կը ժառանգէր այդ առարկելի փիճակը եւ որեւէ մեղադրանքէ խուսափելու համար՝ չէր փոխեր գայն, գիտակցելով հանդերձ անոր սխալին: Իսկ ստորա- գաս պաշտօնեաներ, թէկուզ զժգոհ ու զառնացած՝ բայց որեւէ զան- գատ չէին ներկայացներ նախագահին՝ անոր հակակրանքը իրենց վրայ չհրաւիրելու համար:

Սակայն իրապէս, կրկնակի մեղանշում է թէկուզ քանի մը հիմ- նարկներու կողմէ, իրենց հաստատութեան եւ անոնց վարիչներուն անունները միայն ռուսերէն գրելու արարքը: Նախ՝ Հայաստանը բովանդակ հայութեան հայրենիքն է եւ անոր սահմաններէն ներս ամէն բան ու նախագասութիւն պէտք է խօսուի ու գրուի լեզուով մը: որ աշխարհի ամբողջ տարածութեան վրայ ալ ապրող բոլոր հայերը կրնան հասկնալ, - ուրեմն հայերէն: Յետոյ՝ Խ. Միութեան բնոյճա- նուր Սահմանադրութեան (նախորդ թէ նորագոյն) հռչակած օրէնքով իսկ՝ անդամ Հանրապետութեան մէջ տիրական-պաշտօնական լեզուն պիտի մնայ անոր ազգային բարբառը, - Հայաստանի մէջ՝ ուրեմն հա- յերէնը: Կը նշանակէ թէ այդ տնօրէնները, իրենց երկշոտ կամ քմա- հաճ արարքով, օրինազանց կը գտնուին Խ. Միութեան բնոյճանրական եւ Հայաստանի հանրապետական սահմանադրութիւններուն զէմ, երբ հիմնարկին ցուցանակները գրել չեն տար նախ հայերէն եւ ապա ռու- սերէն լեզուներով: Երանի՛ թէ վարչապետ Ֆառէյ Սարգիսեան ժա- մանակ գտնէր կտրուկ հրահանգ մը զրկելու անոնց, հրամայելով որ զարմաննն այդ փրաւորական սխալը:



Անցեալ տասնհինգ տարիներու շրջանին, արուած փուերական թիւերու համաձայն՝ շուրջ 12,500 հայեր մեկնած են Հայաստանէն զէպի սփուռքահայ տարբեր գաղութներ, - որոնց մեծագոյն մասը՝ Միացեալ Նահանգներ, եւ հոս՝ գլխաւորաբար կեդրոնացած են Լոս Անձելըսի մէջ: Անոնք նախկին հայրենազարձներ են, որոնք մայր երկրի հարագաս հողին վրայ ծնած, մեծցած ու գաստիարակուած իրենց զաւակներով կը լսեն հայրենիքը եւ կը հեռանան զէպի նոր ու

եղերական պանդխտութեան մը ստոյգ կորուստը: Եւ անոնք կ'արտագաղթեն՝ սեւէ ազգականի հայթայթած դիմումնազարին հարթած ճամբայով:

Հայաստանի երեք միլիոն բնակչութեան ղկմ տարեկան շուրջ հազար անձերու հեռանալը, իրրեւ համբանք, աննշան քանակ մըն է իրապէս: Երբ մանաւանդ նոյն ատեն, ամէն տարի, բացի ծնունդներու ազահոգած մարդկային ահագին աճումէն, ուրիշ հազարաւոր հոգիներ կ'աւելնան հայրենարնակ ժողովուրդին վրայ ներքին հայրենադարձով Խ. Միութեան տարրեր մարդերէն, եւ Իրանի դիմով՝ ուրիշ երկիրներէ:

Բայց տակաւին, պետական ղկմքեր, գրողներ ու մտաւորականներ եւ հասարակութիւն խոր ցաւով ու դառնութեամբ կ'արտայայտուին սեփական հայրենիքը ձգելու եւ օտար երկիրներու պանդխտութեան երթալու արտաքին երեւոյթին շուրջ: Անոնց զգացած վիրաւորանքը ատաւելապէս հոգեբանական է, որովհետեւ խոցուած կը նկատեն իրենց ազգային արժանապատուութիւնը: - Ի՞նչպէս կարելի է, բարկացած կը պատճառարանէ Հայաստանի բնիկ հայր, - մենք 1920-էն սկսած՝ հազար զբաւեռ ու տառապանք ապրեցանք, ներքին փոթորիկի ու հայրենական պատերազմի սարսափներէն ու մղձաւանջէն անցանք ու տոկացիներ, որ նո՛ր Հայաստան կառուցանենք, նո՛ր հայկական պետութիւն գորացնենք, նո՛ր հայ ազգութիւն կերտենք: Իսկ անոնք, 1947-ի եւ յաջորդ քանի մը տարիներուն որոշ նեղութիւն քաշեցին մեզի հետ եւ ի՛նչ, հիմա որ այդ բոլորը, - կարիք ու դժուարութիւն ջնջուեց եւ ու այլեւ չկան, անոնք իրենց ստանդարտներէն քանի քանի ատաճուած բողոքներն ու քննարկներն առած՝ կը փախչին օտար երկիրներ, կարծես արքայութիւն պիտի գտնեն գաղթած տեղերին: Հապա ի՛նչ կը խորհէին, հնարաւոր է հայրենիքի ու ժողովուրդի վերածնունդ ստեղծել առանց երկունքի ցաւերու:

Պետական պատասխանատու ստաճնորդ մը խօսեցաւ վիրաւորւած դառնութեամբ, մեր առանձին գրոյցի բնթացքին.

- Մենք Հայաստանից մեկնողները հարցով չենք էլ ուզում զբաղուիլ: Նրանք մեր հայրենիքն ու պետութիւնը չեն ուզում, հիմի հայրենիքն ու պետութիւնն էլ նրանց չեն ուզում, թող գնա՛ն...: Մեր կորուստը մեծ չի լինի: Նրանք շատ բան ստացան Հայաստանից եւ միայն արտունջ ու գանգատ տուեցին նրան: Ի հարկէ մենք փաստում ենք նրանց գնալը՝ երկու պատճառով: Առաջինը այն, որ մենք ամօթահար ենք մնում Սովետական Միութեան իշխանութեան մօտ: Երկրորդը փափկանկատ եւ Մոսկուայում եւ մեզ ոչինչով չեն մեղադրում, բայց գուցէ նրանք մտածում են, - ի՞նչ տեսակ մարդիկ են էս հայերը, տարիներով մեզ խնդրեցին ու պաղտակեցին, որ օտարութեան տա-

մայր երկիր վերադառնալ, քանի մը տարիէն որեւէ բնթացիկ դժուարութեան հանդէպ կրկին պիտի շղիմե՞ն օտար ափեր մեկնելու համար, նոր բարգոյթիւններ ստեղծելով: Բայց հակառակ այդ վերապահութեան, դարձեալ որոշ թիւով հեռացածներ կ'ընդունուին Հայաստան, նախնական քննութենէ մը ետք, ստուգելու համար թէ այս անգամ անոնք պիտի մնա՞ն Հայրենիքին մէջ, այլեւս բուժուած պանդխտու մանրէներէն:

Ուրիշ դժուարութիւն մըն է նաեւ բնակարանի հարցին լուծումը: Ներգաղթի շրջանին, Հայաստանի կառավարութիւնը նիւթական միջոցներ բնծայել էր հայրենադարձ բնամայրներուն եւ անոնք շինել տուեց չին սեփական տուններ: Իսկ երբ անոնք մեկնելու էին երկրէն, իրենց բնակարանները վաճառելու էին շատ սուղ գիներով եւ այդ գումարով արժէքաւոր ապրանքներ ու առարկաներ բերելու էին արտասահման: Հիմա, ուրեմն, վերադարձողներուն անհրաժեշտ է նոր տուններ յատկացնել, ինչ որ դժուար է, որովհետեւ թէեւ ահագին ծաւալով բազմաթիւ բնակարաններ կը կառուցուին, բայց անոնք հազիւ կը բաւարարեն ծնունդներու ու ներքին ներգաղթով արագորէն աճող բնակչութեան կարիքներուն:

Հայաստանի գրողներն ու մտաւորականները տարրեր առիթներով իրենց ափսոսանքն ու ցաւը արտայայտել են հայրենիքէն հեռացողներու այդ արարքին համար: Անոնք հրատարակել են գրական ակնարկներ ու յօդուածներ խորհրդահայ թերթերու մէջ, դառնորէն մեղադրելով թէ՛ մեկնողները եւ թէ՛ սփութահայ պատասխանատուներ: Ամենայն Հայոց Հայրապետ Վեհափառ Վազգէն Ա. Կաթողիկոսն անգամ իր վիշտը յայտնեց այդ երեւոյթին հանդէպ: Անոնց բոլորին մտահոգութիւնը գերազանցօրէն ազգային էր, - որ Հայաստանէն ղկուի օտար ափեր հեռացող ամէն բնամայր, իր գալիք սերունդներով բնդմիշտ կը կորսուի հայութեան համար, երբ մենք ա՛յնքան կարօտ ենք մարդկային ոյժերու, անոնց շինարար բազուկներուն, անոնց ստեղծարար տաղանդին ու գոյատեւելու կամքին:

Ժողովրդային խաւերու մէջ մեկնողներուն ղկմ մեղադրանքը աւելի բացայայտ է: Անոնք կը զգան այն զինուորներուն նման, որոնք կռիւի պահուն կը տեսնեն, որ իրենց ճակատին վրայ, որեւէ մարտկոցի պաշտպան զինակիցներ զիրբերնին կը լքեն ու կը նահանջեն ղկուի անյայտ գրօսաւաչրեր: Անոնք կ'աշխատին, կը տոկան, կեանքի պայքարը կը մղեն՝ հայրենիք կառուցանելու, պետութիւն գորացնելու եւ ժողովուրդ վերստեղծելու փառաւոր մարտուի մէջ: Եւ կը հաւատան թէ հայրենարնակ ամէն հայ պէտք է մասնակից գտնայ ազգակերտումի այդ արշաւին, եթէ նոյնիսկ ծանր բեռ մը թուի իր բնական պարտքին հասուցումը, փոխանակ հոգեկան քաղցր

ժանդերից փերագանան իրանց Հայրենիքը: Հայրենական պատերազմը նոր էր աւարտել և մեզ ուղղակի թշուառացրել էր: Բայց մենք մեր չունեցած հացից, հանդերձանքից ու բնակարաններից կտրեցինք ու բաշխեցինք ներգաղթողներին, որ նրանք շատ չնեղուեն: Նրանք մեզ մօտ առաջացան, կրթութիւն ու մշակոյթ ստացան իրրև պետական պարգև, մէկ էլ ելնում և Հայաստանում ծնուած ու մեծացած իրանց գաւակներն անում ու գաղթում են զկպի նոր պանդրխտութիւն: Եւ մենք ամաչում ենք զրա համար: Միւս պատճառն էլ այն է, որ մեկնուողների շարքում գանում են սպերախաներ, որոնք չեն խզճահարում և փայրահաչում են Հայաստանի, նրա զեկափարների ու ժողովրդի զէմ: Ի՛նչ խօսք, որ մի քանի հարիւր հազարուոր հայրենազարծներ, իրանց սերունդներով հաւատարմօրէն կաշած են մնում մայրենի հողին, շատերը բարձր գիւրքեր են հասել և բոլորը խոշոր նպաստ են ներմուծում հայրենի երկրի բնօջանուր փերկլի մէջ, գիտական, զեղարուեստական, ճարտարարուեստական, կրթական և այլ ապարէկներում: Մեր կառավարութիւնը ջերմ գնահատանք ունի նրանց կատարած թանկագին իրագործումների համար:

Անոր յայտնեցի թէ հեռացողներու շարքին կարելուր հատուած մը կը կազմեն անանք, որոնք գառն յուսախարութեան մասնուած՝ զգջացեր են Հայաստանէն մեկնած բլլալուսն համար և կը խնդրեն որ արտօնուին կրկին հայրենիք փերագանայ: Անոնք խարուած գոհերը կգած են իրենց հեռուոր ազգականներուն, որոնք երեւան այցելելով՝ օտար երկիրներու կենցաղն ու կեանքի պայմանները շատ հրապարիչ պատկերացուցեր են և ամէն տեսակ օգնութիւն խոստացեր են անոնց, իրենց մօտ տանելու համար: Յետոյ անանք հարկադրուեր են զիմազրուել բազմատեսակ զժուարութիւններ ու տազնապներ և զտեր են, որ իրենց շրջապատի բնկերային ու անտեսական կացութիւնը և ազգականներու կոզմէ շոայթօրէն խոստացուած օժանդակութիւնը բնու չեն համապատասխաներ իրականութեան: Երանի՛ թէ Հայաստանի իշխանութիւնը օրինաուր ճամբայ մը գանէր, գաններ փերատին հայրենիք բնգունելու: Այդ փեհանձն արարքով, աւելցուցի, նախ՝ փերագարձոզ բնամերքներ և անոնց զալիք սերունդները պիտի փրկուէին ու ծայման կորուստէն: Յետոյ՝ անոնց Հայաստան գտնալը ամենէն համազօրէ փկայութիւնը պիտի բլլայ արտատահման մեկնելի փափաքողներուն համար, թէ հայրենի հողին վրայ իրենց ներկայ կենցաղը և ապագայի ապահովութիւնը զերագանց կը մնան հեռուոր, անձանթ հօրիգուններու խարուսիկ պատրանքներէն:

Բանաուր կատկածը կը մտահոզէ կարգ մը պետական զէմքեր, որ եթէ արտագաղթած բնամերքներ, որոնք, արտաքին աշխարհէն հիատթափ, կ'ուզեն փերատին երթալ ու ազրիլ երեւան, և արտօնուին

բաւարարութիւն պարգևելու: Մանաւանց երբ հեռացողներ հետերնին կը տանին Հայաստան ծնած ու մեծցած գաւակներ, գանոնք ալ ազգային անհետացման գատապարտելով:

Ես քանի մը տարրեր առիթներով ականատես դարձայ այս վերարերմունքին խիստ արտայայտութեան: Անոնցմէ մէկը բուռն եղաւ մինչև բրտութիւն: Դարձեալ երեկոյ մը հաւաքուած էինք հիւրընկալ տան մը ճաշասեղանին շուրջ, հայրենաղարձ ու երեւանի բնիկ քանի մը բնամերքներ, իրենց երեք սերունդի անդամներով: Ընթրիքէն ետք, մեր զրոյցը զարգացաւ ազգային ու հայրենական հոգերու և երագներու ուղիներով, զկպի ծանթօ հանգրուաններ, երբեմն կարտներու զեղումով, յաճախ գգուցական պոռթկումներով: Յանկարծ տան սիրուհին յաթիթէն ներս ստնելով լեցուց մեզ և խօսքը ուզղեց ինձի, կարճես յանցաուր ժպիտով մը.

- Երկու աղջիկներ են եկել և խնդրում են ձեզ հեա տեսակցել: Նրանք մօտ օրից մեկնելու են Լոս Անճելլոս և փափաքում են մի քանի հարցերի շուրջ խօսել ձեզ հեա: Հիմի միջանցքումն են. ուզո՞ւմ էք բնգունել նրանց:

Շուարեցայ ու նայեցայ շուրջի յարուած զէմքերուն, որոնց վրայ սեւ ամպի նման՝ մուայ ստնութիւն մը իջեր էր: Բայց տան տիրուհին պատասխանի կը սպասէր, և բութ.

- Տունը ձերն է և ես միայն հիւր մըն եմ... եթէ դուք յարմար կը նկատէք՝ ես անձնապէս որեւէ առարկութիւն չունիմ:

Եւ եկան երկու զեռահաս աղջիկները, զեղազէմ ու փայելչօրէն հագուած, իրենց փճիա, խոշոր աչքերուն մէջ թանձրացած անմեղութիւն: Յայտնեցին թէ մօրաքոյրնին Լոս Անճելլոսէն պաշտօնական թուղթեր զրկած էր և կ'ուզէր զիրենք իր մօր տանիլ և քանի մը ամիսէն պիտի մեկնէին: Իրենց հարցումներուն պատասխանեցի ճշգրտօրէն և սխորէն, փորձելով հասկցնել, թէ բոլորովին օտար երկրի մը մէջ, որուն լեզուն անգամ չէին զիտեր, իրենց նման անփորձ ու զեղեցիկ աղջիկներ կրնային տազնապներու և յուսալքումի մասնուիլ, և յաւագոյն պիտի բլլար, որ հոս կամ հոն՝ իրենց քայլերը անէին շատ զգոյշ, շատ յուրջ գատումով: Այդ օրիորդները փտահարար հիմա հասեր են Լոս Անճելլոս և կրնան փկայել այս զկպրին սուպութեան մասին: Մինչ մեղձօրէն կը խօսէի աղջիկներուն հեա որոշ ծանթութիւններ հաղորդելով անոնց, յանկարծ տարեց հայրենաղարձի մը գոռ ձայնը պոռաց.

- Դէ՛, հերի՛ք է, կլի՛, ի՞նչ էք ձեր թանց ժամանակը փատնում զրանց նման անպէտ արտաձների վրայ: Շունչերնից ախոսս չի՞, որ սպասում էք զրանց համար... չե՛ն արժի, է՛ չե՛ն արժի:

Անհանգիտս զգացի և ամչցայ այս անակնկալ ու կոպիտ մի-

Չամառութեան հանդէպ: Մինչ ազջիկները լուս ժպտի մը տակ իրենց շուարուսը կը փորձէին ծածկել:

- Բայց մեր գրոյցը անմնաս է, յարեցի մեզմօրէն, հարկ չկայ այդքան վրդովելու...: Այս օրիորդները արդէն սրտէր են Ամերիկա երթալ, ի՞նչ կրնանք բնել: Իմ միակ մագթանքս է, որ հան հասնելէ ետք գծրախտ չըլլան եւ զգճայու տառապանքը չտպրեն, իրենց նման շատերուն պէս:

- Իսկ ինչո՞ւ չտանջուեն, ինչո՞ւ չկրեն իրանց դասադրումի պատիժը, - առանց զգճումի բարձրացաւ գայրացած ձայնը: Մրանք հեռանում են իրանց մայր հայրենիքից եւ գնում են օտարի փորափներում բնոյմիշտ կորչելու... մի խօսքով՝ նրանք գաւաճանում են Հայաստանի գէմ, էլի՛, եւ չպէտք է գրանց հետ խօսել, չպէտք է գրանց րարեւէ՛լ անգամ:

Եւ իր բորբոքած ցասումին մէջ յանկարծ իր ամուր շրջեց, զէմքը դարձուց պատին, իսկ կոնակը՝ մեղի, թեւերը խաշածեւած կուրծքին վրայ, եւ այդ գիրքին մէջ սպասեց, մինչեւ երկու ազջիկներուն մեկնիր:

Յետոյ երբ ուզգուեցաւ մեր կողմը, գինք մեղադրեցինք իր շափազանց խիստ վարմունքին համար: Ան պահ մը զլխահակ ու լուս մտիկ բրաւ ինծի, ապա վերցուց զէմքը եւ այլեւս հանդարտ ձայնով բսաւ, - մինչ ես կը փորձէի ստուգել, թէ անոր աչքերուն տակի փայլող կայակները քրտինքի՞ թէ արցունքի կաթիլներ էին:

- Լա՛ւ կը լինի, որ դուք էլ անձերի վրայ խղճալուց ուելի ամուտաք մեր ժողովրդի համար: Դեռ վա՛ղ զարեբից՝ մեր պապերը վաղի են զէպի պանդխտութիւն, կուշտ հաց ու ապահով հանդիստ գանձելու յոյսով: Եւ նրանք լքել են մեր նախնիքների արիւնով ու քրտինքով ոտոգուած հայրենի օջախներն ու հողերը, փախչել են օտար երկիրներ, նրանց խոպան դաշտերն են ծաղկեցրել, նրանց համար պալատներ ու քաղաքներ են կառուցել, իսկ մենք մնացել ենք փոքր, տկար ազգ: Բայց էլի՛՝ անցեալում չի եղել, որ Հայաստանից հայեր գաղթեն զէպի հեռաւոր հորիզոններ պանդխտ, երբ մենք ունեցեր ենք հայկական հարազատ իշխանութիւն, ունեցել ենք հայրենի պետութիւն եւ թշնամիների հուրից ու սուրից ապահով, ազատ հայրենիք, ինչպիսիք մենք ունենք Սովետական Հայաստանում, ահա կէս դարից աւելի է... զէ՛հ, ի՛նչպէս շափոտսալ, ի՛նչպէս չգայրանալ...:

Մենք բոլորս լռեցինք արամօրէն:

× × ×

Ինչպէս Խ. Միութեան կեդրոնական իշխանութիւնը, նոյնպէս զայն բաղկացնող ազգային ամէն հանրապետութիւն կ'առաջնորդուի միակ կուսակցութեան մը (համայնափար) ծրագիրով եւ անոր ղեկավար տարրին կողմէ: Այդ կազմակերպութեան վարչական կառուցուածքէն կը բխի, ուրեմն անոր ենթակայ կը մնայ անգամ երկիրներու պետական անձնակազմը, - կառավարութիւնը, որ գործադիր մարմինը կը զառնայ զայն ծնող հոսանքին քաղաքական, բնկերային ու անտեսական համապարփակ նպատակներուն ու ձեռնարկներուն:

Եւ բնականօրէն, հանրապետութեան մը եւ անոր ժողովուրդին դարգացման ու բարելաւման բոլոր կարիքները կը սահմանեն եւ գանձը հոգայու անհրաժեշտ նիւթեղէն գործօնները, - ճարտարարուեստ, կառուցում, գիտութիւն, գեղարուեստ, կրթութիւն, հոգաբարձութիւն, առևտուր, առողջապահութիւն, բնկերային ծառայութիւն, - կը ծրագրեն ու կը վարեն երկրին վարչապետն ու անոր զլխաւորած նախարարական կազմը, բայց ենթակայ՝ իրենց համայնափար կուսակցութեան կեդրոնական կոմիտէին եւ անոր առաջին քարտուղարին գերագոյն հեղինակութեան:

Համամիութենական նոյն գրութեան կիրարկումով է, որ Հայաստանի համայնափար կուսակցութեան կենտկոմի առաջին քարտուղար Կարէն Տեմիրճեան երկրին ամենէն հեղինակաւոր ղեկավարն է. երիտասարդ առաջնորդ մը, որուն իր բարձրագոյն գիրքին հասնիր հազիւ քանի մը տարի կ'ընէ: Եւ մարդկային բնականօրէն կասկածամիտ գատումով մը, նորեկը միշտ կը բաղդատուի, իր սկզբնական փորձերուն մէջ իսկ, նախորդներուն արդէն վաւերական վաստակներով համբաւուած անուններուն հետ եւ հարկաւ կը կորսնցնէ այդ անարդար ու անհեթեթ հակադրութեան մէջ: Դարձեալ կ'երեւի վաղեմի վարժութեան մը հպատակելով, մարդիկ կը կառչին յանցաւորներ նշաւակելու գիրքին եղանակի մը, եւ իրենց աօրեային կապուած ամէն իրական դժուարութիւն կամ ենթադրական սխալ ու մանրուք տաղտուկ՝ կը վերագրեն կասարի իշխանութեան, մեղադրանքը կը նետեն պետական գերագոյն պատուանդանին, - ուրեմն Կարէն Տեմիրճեանին: Կարծես իրենց ինքնասիրութեան արժանի չեն նկատեր, որ գատապարտեն այդ թերիներուն բուն պատասխանատուները, - ստորադաս պաշտօնեաներ ու գործադիր փոքրաւորներ, թերեւս որովհետեւ հպարտութիւննին աւելի փայփայուած կը զգան, երբ քննադատութեան ու պարսաւի քարերնին անմատչելի թուող թիրախներու կ'արձակեն:

Այդ շրջանին, Հայաստանի Կոմկուսի առաջին քարտուղար Կարէն Տեմիրճեան կը գտնուէր Մոսկուա, ուր կը մասնակցէր Խ. Միութեան նոր Սահմանադրութիւնը վաւերացնելու համար գումարուող համա-

միութենական ժողովին, իբրեւ պետ հայ պատուիրակներու խումբին: Բայց երբ ան վերադարձաւ Երեւան, յաջորդ օրն իսկ մայրաքաղաքի բնակչութեան շրթունքները սկսան ջերմ համակրանքով ու ներբողով արտասանել անոր անունը: Նոյնիսկ անոնք, որ զեռ շարաթ մը առաջ խստասիրտ դատախազներու նման կը մեղադրէին Կարէն Տեմիրճեանը, որ հէքեաթային հրաշագործ գաւազանի մը հպումով... Հայաստանի սահմաններէն ներս չէր փոխադրեր Ղարաբաղն ու Նախիջևանը, կամ զոնչ Արարատն ու Կարսը, հիմա անոր կ'ընծայէին ճակատէն յաղթական դարձող զօրավարի մը ծաղկազարդ պսակը:

Որովհետեւ Մոսկուայի մէջ, Խ. Միութեան կեդրոնական կառավարութեան վարիչներու հետ իր համոզիչ գրոյցներուն շնորհիւ՝ Կարէն Տեմիրճեան յաջողեց կը անոնց մաւերացումը, ուրեմն նիւթական ահագին գումարներուն յատկացումները ապահովել Հայաստանի մէջ երեք գլխաւոր ձեռնարկներու համար, որոնք խորապէս բաղձալի կը նկատուէին ժողովուրդի բոլոր խաւերուն կողմէ:

Առաջինը՝ մայրաքաղաք Երեւանի արագ թափով աճող բնակչութեան համար կառուցուող գեանուղիի (սըպուէյ, մէթրո) ցանցին շինութիւնն էր: Հայաստանի պետական վարիչները, երկրին սեփական ազգային պիւտճէով արդէն սկսեցին կ'ընդունէին աշխատանքին, մայր ուղիին եւ անոր յարակից գիծերուն բնոյհանուր ծրագրին վրայ: Բայց անոնք այս հսկայ ձեռնարկին իրագործումը չէին ենթարկած Մոսկուայի կեդրոնական իշխանութեան վաւերացումին, որ անհրաժեշտ էր, եթէ անոր վիթխարի ծախքերը պիտի հոգացուէին Խ. Միութեան գանձէն: Հոն ճարտարարուեստի, կառուցման եւ նման առաջադրանքները կը բաժնուին երկու դասերու, - համամիութենական, երբ ծրագիր ու գրամ կը հայթայթուին կեդրոնական իշխանութեան կողմէ: Եւ ազգային, երբ Մոսկուայէն անկախ՝ անոնք կը պատրաստուին ու կը գործադրուին անգամ հանրապետութեան մը կողմէ, իր սեփական պիւտճէին սահմաններուն մէջ: Եւ Կենտկոմի առաջին քարտուղար Կարէն Տեմիրճեան կրցած էր համոզել Մոսկուայի պետական ղեկավարները, որ Երեւանի գեանուղիին մեծ նախադիմք, սկսուած իբրեւ ազգային սրտչում, սրղեգրուէր սրպէս համամիութենական ձեռնարկ, - ուրեմն անոր կառուցման միջխոսուող սուրբիի հսկայական ծախքերը պիտի հոգացուին Խ. Միութեան կեդրոնական գանձէն: Փառաւոր յաղթանակ մը Հայաստանի համար, բարձրագոյն չափանիշի վրայ:

Երկրորդ յաջողութիւնը ան շահած էր Երեւանի մէկ արուարձանը դարձած արուեստական ձգարեւոյթի (սիմետիկ րրպր) կամ կաուչուկի բնոյարձակ գործարանախումբի մարդին մէջ: Այնուհետ, չուրջ քառասունըֆինց սարքներ առաջ կառուցուած էր Խ. Միութեան ճարտար-

արուեստի մեծագոյն կեդրոններէն մէկը, ուր տասնըութ տարբեր գործարաններ շինուած էին ներքին երկաթուղիներու ցանցով: Այդ համալիրին համար քանի մը հարիւր միլիոն ռուբլի ահագին գումարը ծախսուեց էր համամիութենական պիւտճէէն: Անոնց մէկ դարպասէն կը մտնէր Հայաստանի կրաքարը իբրեւ նախանիւթ եւ էլեկտրական շնոցներու մէջ հալուելէ, քիմիական ձեւափոխումներու ենթարկուելէ ետք տարբեր բաժանմունքներէ անցնելով՝ կը վերածուէր արուեստական կաուչուկէ պատրաստուած բազմատեսակ առարկաներու եւ կազմածներու, ամենէն խոշորներէն մինչեւ նրբագոյնները:

Այդ շարքին մէջ կայ նաեւ գործարան մը, որուն քանի մը ծխնելոյզներէն արտաքսուող կազերը կը վառին միջոցէն վեր ծխացող խարոյկներու նման, - ինչպէս ունին Ամերիկայի եւ ուրիշ երկիրներու բոլոր քարիւղի գտարանները: Բայց Հայաստանի, մա'նաւանդ Երեւանի բնակչութիւնը զարմանալի աստիճան դիւրագգած դարձեր էր «մթնոլորտի սպականութեան» հանդէպ եւ կ'ուզէր կապոյտ ու վճիտ պահել մայրաքաղաքին երկիրը: Կարէն Տեմիրճեան յաջողած էր կատարել անոնց խորունկ բաղձանքը: Ան կրցած էր համոզել Խ. Միութեան պետերը, եւ սրպէս արդիւնք՝ անոնք պիտի փակեն կազային բոցեր արձակող այդ ահագին կառոյցը Երեւանի մօտ եւ անոր արտադրական բաժինը պիտի փոխադրեն ճարտարարուեստական-քիմիական տարբեր համալիրի մը մէջ, վստահաբար գլխաւոր ուսաններէ հեռու:

Իսկ երրորդը՝ «ցիմենտ» գործարանին տեղափոխութիւնն էր: Անոր մերձակայ գիւղացիներ կը գանգատէին, թէ ծխնելոյզներէն տարածուող մուխն ու փոշին կը վնասէին իրենց բերքերուն որակին ու քանակին: Եւ դարձեալ Կենտկոմի առաջին քարտուղար Կարէն Տեմիրճեան հաւանութիւն ապահովեց Մոսկուայի մէջ, որ այս գործարանը փակուի եւ անոր կրահողի արտադրութիւնը փոխանցուի Արարատ շրջանի «ցիմենտ» գործարանին, զայն բնոյարձակելով: Եւ Խ. Միութեան կեդրոնական իշխանութիւնը բնոյառաջեր էր Հայաստանի այս երկու ծրագիրներուն եւս, անոնց գործադրման համար՝ չուրջ 400,000,000 ռուբլի յատկացնելով համամիութենական գանձէն:

Երեկոյ մը խմբուեց էինք բարեկամ տան մը հիւրանոցին մէջ, - համալսարանի ուսանողներ, դաստիարակներ, մտաւորականներ: Զրոյցը կ'ընթանար տօնախմբական զուարթութեամբ մը եւ բոլոր կարծիքներուն առանցքը կը կազմէր Կարէն Տեմիրճեանի վերադարձը Մոսկուայէն, իր շահած երեք յաղթանակներուն զափնեպսակներով: Եւ ամէնքը ջերմ գնահատանք ու զովասանք կ'արտայայտէին անոր իմաստուն ու կորովի ղեկավարի շնորհներուն համար, իր վաս-

տրված նշանակելի արգիւնքներուն վկայութեամբ:

- Արանչելի՛ է այս միաձայն ներբողի դասաստանը, ըսի խնդալով, մա՛նաւանդ՝ եւ անցեալ շարաթ աւելի շատ գանդատ ու մեղադրանք կը լսէի անոր զէմ:

- Դա բնական է, պատասխանեց պատիտ մը, երբ մեր առաջնորդները մի լաւ գործ են կատարում՝ մենք նրանց գովում ենք, իսկ երբ մի սխալ քայլ են առնում՝ ի հարկէ պարտաւում ենք: Դուք այս մտեցումը օգտակար չէք գանձում:

- Թերեւս, յարեցի, բայց արդար չէ ակնկալել, որ երկրին պետական վարիչները ամէն կիրակի հերոսական արարք մը պարգևեն մեզի, որ մենք ալ բարեհաճինք ճանչնալ անոնց արժանիքները: Եւ բանաւոր չէ միշտ բացառիկ իրագործումներ պահանջել անոնցմէ: Երբ անոնք իրենց վարժուհիով ու գործերով կը հաստատեն, թէ խելացի, ժողովրդանուէր առաջնորդներ են, այլեւս պէտք է վստահինք եւ զօրավիզ կանգնինք անոնց: Որովհետեւ նոյնիսկ անոնց այն քայլերը, որոնք մեզի սխալ կը թուին դուրսէն՝ հաւանաբար ճիշդ են ներքին պատճառներու եւ դրական հետեւանքներու թելադրանքով:

- Ուրեմն ձեր կարծիքով չպէ՞տք է քննադատել մեր կուսակցական կամ կառավարական ղեկավարներին: Իսկ նման զկարծում ուրիշ ի՞նչ կերպով ենք ուզողելու նրանց թերիները:

- Չէ՛, անհրաժեշտ է քննադատել, առաջարկել եւ մշակել մանաւանդ, որ Հայաստանի պետական վարիչները սրբազրեն ամէն թերութիւն եւ բաւարարեն ամէն կարիք, որ ժողովուրդին բոլոր խաւերը աւելի բարեկեցիկ եւ ուրախ կենցաղ մը ունենան: Բայց մարդկային որեւէ շափանիչով կարելի՞ է ակնկալել, որ անոնք բլլան անթերի, կատարեալ, նոյնիսկ բաղդատամբ շատ աւելի փարթամ ու հօգ Երկրներու պետերուն: Ես միայն կ'ափսոսամ, որ մենք հայերս, ամէն տեղ, զարմանալի կերպով հանդուրժող, խոնարհ, երկշոտ, նոյնիսկ սարկամիտ ենք որեւէ օտար իշխանաւորի կամ պարզ ստիկանի առջեւ: Իսկ խտտաիրտ, ամբարտաւան եւ անարգական ենք Հայ պետական եւ Հանրային առաջնորդներու հանդէպ, թէ՛ Հայաստանի եւ թէ սփիւռքի մէջ:

- Դա ճիշդ վերլուծում է Հայոց քաղաքական նկարագրի, ըսաւ Համայնարանի ուսանող մը: Եւ արգիւնք է մեր ժողովրդի դարաւոր գերութեան, օտար բռնաւորների լծի տակ, զրկուած սեփական պետութեան հովանիից, ուրեմն նրա կենսական ղերի բմբռումից: Բայց հիմի մենք սովորում ենք, կլի, թէկուզ մի քիչ զանդազ: Իսկ դուք ի՞նչպէս էք գնահատում այդպիսի վերափոխման օգուտները:

- Ես կը յիշեմ զեւ 1935-ի Հայաստան այցելութենէս, երբ մարդիկ խստօրէն կը քննադատէին Աղասի Խանճեանի, Սահակ Տէր Փար-

բիւլեանի եւ Անաստաս Միկոյեանի նման իմաստուն ու հայրենասէր առաջնորդներ, որովհետեւ անոնք չէին իրականացներ մեր ազգային շին երազներն ու նոր պահանջները, կարծես ասանք հնարաւոր էին որեւէ մտգական գաւազանի հպումով: Նոյն վերաբերմունքը ունեցանք, հոս եւ արտասահման, ուրիշ խորհրդահայ պետական ղեկավարներու հանդէպ, մինչեւ Զարոբեան եւ Քոչինեան: Բայց գանոնք գնահատել սկսանք եւ անոնց իրական արժանիքները ներբողեցինք, երբ անոնք կամ մեռեր էին, կամ պաշտօնէ զազրեր էին: Ուրեմն պէ՞տք է այդ հանգրուանին սպասենք, անոնց անձերն ու վստակները մեծարելու համար: Մինչդեռ, եթէ ամբողջ Հայ ժողովուրդը, Հայաստանի եւ սփիւռքի մէջ, միասնական ոգիով ու կամքով, թիկունք կանգնի հայրենիքի պետական առաջնորդներուն՝ անոնք կրնան Խ. Միութեան վարիչներուն հետ խօսիլ ու բանակցիլ ամբողջ Հայութիւնը ներկայացնելու վարկով ու վստահութեամբ: Այն ասեմ, իրենց այդ ամուր ու լայն հեղինակութեամբ՝ անոնք անկասկած աւելի համակրանքով ու յարգանքով պիտի բնորոնուին, ուրեմն նաեւ լսուին Մոսկուայի մէջ:

Բոլորին արամազրութիւնը բարձր էր, գուարթ: Եւ առիկա նոր առիթներ կ'ընծայէր ներկաներուն, որ աւելի խանդավառ ու պերճաբոս բաժակաճառեր արտասանէին յայտնի զէմքերու եւ մանաւանդ Հայ ժողովուրդին ձօնուած: Եւ ապշեցուցիչ, նաեւ զուարճալի հակասութիւն, - որ մարդիկ կրնային ամենէն խանդակաթ ու ներբողալի ճառերով փառաւորել Հայոց ազգը: Իսկ վայրկեան մը ետք՝ անողոք պատասխաններու շարախինց խտտութեամբ պարտաւել, դատապարտել, անարգել նոյն Հայոց ազգը՝ ընթացիկ թերիներու, կամ յերիւրուած յանցանքներու համար...:



Խորհրդային Հայաստանի մէջ, ընկերային հանդիպումներու կամ բնտանեկան հաւաքոյթներու ընթացքին, ներկաներու զրոյցը կ'ընդգրկէ բազմաեսակ նիւթեր - ազգային ու գրական, մշակութային ու անտեսական, ճարտարարուեստական ու քաղաքական, հողագործական ու... համաշխարհային մարդերէն ներս: Բայց կան քանի մը հարցեր, որոնք տիրական կը դառնան, որովհետեւ ամէն խաւի մարդիկ ու կիներ աւելի յաճախ, եւ աւելի անձկութեամբ ու խանդով կը խօսին ու կը վիճին անոնց մասին, եւ որոնց շուրջ որեւէ տարակարծութիւն չի յայտնուիր:

Մէկը՝ մեր հայրենի պատմական հողերուն ազատագրումն ու վերադարձն է հաւսութեան: Միւրը՝ երկրին, մանաւանդ Երեւանի մըթ-

նորարարն մարտիկները և Մեանի ջուրերուն անապարտ զեղեկու-
թիւնը յաւերժօրէն պահպանելն է: Անոր յարակից՝ Հայերէն լեզուին
յարասան ճարտարութիւնն է նորարարն ու հարապատ բառերով ու սփռով,
որ ան վերածուի առանկ արտասայտիչ ու գաշնասար բարբառի մը
Հայաստանի ամբողջ բնակչութեան, բովանդակ հայութեան համար:
Իսկ առանկ կենսական՝ հայրենիքին մէջ ծնունդներու սակերուն
բարձր պահուիլն է, իրրեւ անսփռելի կարիք:

Բազմաթիւ ստիժներով և սարբեր յարկերու սակ՝ մեր գրոյց-
ները կը չընկնին աշխարհն նիւթերու վրայ և կանց կ'ստնկնին նաև
հայ ժողովուրդի բնականաբար բանակին հանդէպ: Կը հաշուէինք, քիչ
մը ինքնաբար հպարտութեամբ, որ աշխարհի բոլոր հայերուն բնու-
հանուր թիւը հիմա մօտ վեց միլիոն անձերու կը հասնէր: Այդ գու-
մարին կէտը՝ երեք միլիոնը կ'ապրէին Խորհրդային Հայաստանի սահ-
մաններէն ներս: Իսկ մնացեալ երեք միլիոնն ալ տարապնտած էին
մօտաւոր ու հեռաւոր հարկոյններու սակ, - Վրաստան ու Աւստրալի-
ան, Խ. Միութեան ուրիշ մարզեր, Եւրոպա, Մերձասոր Արեւելք,
Ամերիկա ու մինչև Աւստրալիա:

Ամէն միտք կը խոսովէր նոյն ցաւագին միգրանտներով, - որ Թուր-
քիա, իր գործարար ճայտապան եղեանով, 1895-էն մինչև 1922
թուականը, աւելի քան երկու միլիոն հայ մարդիկ ու կիներ, և ծերեր
ու մանուկներ ոչնչացուց հրէշային վայրագութեամբ: Եւ վերապրող
բեկորները հոգեմայրի սփռեց պանդխտութեան խորթ ու մահահաս
սփերուն վրայ: Եւ հայոց ազգը մինչև յաւա կորսնցուց ո՛չ միայն
երկու միլիոն նահատակներ, այլ նաև անոնց բազմամիլիոն գաւակ-
ներն ու թոռները, և գաղթը շատախոյնները, սրտնք պիտի ծնէին հար-
կու, եթէ անոնց հայրերն ու մայրերը գո՛հ չիյնային օտմանեան հու-
րին ու սուրին:

Եւ այդ նախճիրին հայութեան պատճառած մարդկային անճիւ-
ման ազկոր մեղմացնելու համար՝ անճրածեշտ է, որ հայ ժողովուրդը
ածի ու բազմանայ ամէն սեղ, - կենսական է, որ հայոց ազգը շատնայ
ու ծաւալի Խորհրդային Հայաստանի մէջ, և Ղարաբաղի ու Նախի-
ջեանի մէջ, և տակաւին՝ Պէլլուսթի ու Հայկոյի, և Մերձասոր Արե-
ւելքի, Եւրոպայի և Ամերիկայի բոլոր գաղութներուն մէջ:

Զրոյցները կ'ընթանային երբեմն գուարթ ու սրամիտ երգիծան-
քով, երբեմն մորմօքի ու գայրոյթի շեշտերով: Այդ երեկոյ ալ խօ-
սեցանք նաև Կարսի ու Արասանի, և Արարատի ու Վանի մասին,
և մեր ձայներն ու բառերը թափաւուն էին խորունկ վիշտով ու արք-
տում կարօտով:

Յանկարծ չորս աղայ և երեք աղջիկ գաւակներու տարեց հայր
մը իր երկար թեւը բարկութեամբ թափահարեց շուրջի երիտասարդ

փեսաներուն ու հարսերուն վրայ:

- Դէ՛հ, ես ի՛նչ աւեմ սրանց նման ծոյլերին, գրեթէ պոռաց ան:
Քիչեր-ցորեկ անվերջ ճառում են, Հայաստանի գոգքն են երգում,
հայ ժողովրդի արժանիքներն են փառարանում, յետոյ էլ՝ թէկուզ
ամէն բան ունեն՝ դեռ միշտ է՛ս են ուզում, է՛ն են պահանջում, իսկ
ոչինչ չեն աւելացնում հայրենիքի վրայ:

- Ի՞նչպէս թէ ո՛չինչ չենք աւելացնում, բողոքեց անոր ճարտա-
բազէտ որդին, մենք ծանր աշխատանքով ճարտարարուեստ ենք զար-
գացնում, մեր երկիրն ենք կառուցում, մենք...
- Ես էլ մասին չեմ սասում, է՛, աւելի բարկացաւ հայրը... Ի հար-
կէ պայտասնման հիմնարկներ, խոշոր գործարաններ և բազմաթիւ
բնակարաններ էք կառուցում, գրանց համար շնորհակալ ենք... Իսկ
ես խօսում եմ մանուկների՝ մասին... դուք ամէն բան ստեղծում էք
սոսա՛ւ, գեղեցի՛կ, բայց մոռանում էք ամէնից կարեւորը:

- Իսկ ինչո՞րում եմ սոսա՛, ի՞նչ է գրանցից աւելի կարեւորը:
- Մա՛րդը, է՛, մա՛րդն է ամէնից աւելի արժէքաւորը, թանկա-
գինը, և թոյլ սուէք որ կրկնեմ, դուք բաւական չատ երեխաներ չէք
չինում...:

Բոլոր բարձրաձայն և ուրախ քրքջացին:

- Պապա՛, ի՛նչ է, առաջարկում ես որ մի քիմիական գործարան
յօրինենք, որտեղ սկսենք երեխաներ արտադրե՞լ, յարեց որդին
ինչպայով:

- Դուք քահկներդ կարող էք ինձ վրայ ծիծաղել... դէ՛, ի՛նչ
սասած, ես համալսարան չեմ աւարտել ձեզ նման, բայց էլի գիտեմ,
որ չէ՛, գործարանում հնարաւոր չի երեխաներ ստեղծել... իսկ դուք
չէք բնոյունի՞, որ դա աւելի հեշտ կը լինի ձեր ննջարաններո՞ւմ...
- Քո կարծածի շափ էլ հեշտ չի, պապա, դու լաւ ծանօթ ես մեր
պայմաններին, և ու կինս պատասխանատու պաշտօններ ենք վա-
րում, մինչև մի աղայ և մի աղջիկ կը մեծացնենք...
- Ի՛նչ է, դուք դրախտում ծնուցի՞ք... մեծ հայրիկին ձայնը
հասու հեղանչ կ'արտասայտէր: Մեր ժամանակ՝ երկիրը ազգաւ էր,
մենք չքաւոր է՛ք, բայց էլի ես և մայրը եօթը գաւակների ծնողք
գարձանք, բոլորը մեծացաք առողջ և հիմի լաւ դիրքերի հասել էք...
Իսկ ձեր օրում ամէն բան առաւ է, ձեր կեանքը հանգիստ, և դուք
միայն երկու երեխայ ունէք, դա նշանակում է ոչ մի մարդ չէք աւե-
լացնում ձեր հայրենիքի ու ժողովրդի վրայ: Եւ դու ուզում ես, որ
դրա համար Լենինը իրա գերեզմանից քեզ հերոսութեան պատուագիր
ուղարկի՞:

Անեւակը լեցուեցաւ ուրախ ծիծաղով: Այն ստեղծ ուրիշ մեծ
հայր մը, որ հինգ գաւակներ հասցուցեր էր, աջ ձեռքին ցուցամասը

թօթուեց իր թոռան վրայ եւ հանդիսաւոր լըջութեամբ բաւ:

- Լսում ե՞ս դու, ապու՛ւշ տղայ, ես քեզ կը պատկեմ էջ քաղցրիկ նշանածիդ հետ: Հարսանիքիդ երկու գառ կը խորովեմ, քառասուն շիշ կոնեակ կը բերեմ, մինչեւ լոյս նուազ ու պար կը սարքեմ, յետոյ էլ լաւ բնակարան կը ձարեմ, բայց մի պայմանով, հասկանում ե՞ս, մի ան-դառ-նա-լի՛ պայմանով, որ դուք նուագագոյն չորս երեխաներ աւելացնէք մեր գերդաստանի ծառին վրայ... չորս երեխաներ՝ նուագագո՛յն, գրանից պակասը չեմ բնդունի, պակասը մերժելու եմ, եւ...

Ան իր կոնեակի գաւաթը վերցուց ու գոչեց:

- Էս բաժակը բարձրացնում եմ մեր գայիք թոռների եւ նրանց շառաւիղների պայծառ կենացը: Թող նրանք բազմաթիւ լինեն Սեւանի աւազների շափ, եւ նրանց միտքերն ու հոգիները անարատ հայկական լինեն Արարատի գագաթը պատկող սպիտակ ձիւնի նման:

Աւրախովեան կանչեր ու թախծայի հատաչներ խոսնուեցան իրարու: Միջին ասրիքի ուսուցչուհի մը ժպտելով դարձաւ ինձի:

- Գո՛ւց էլ դուք գարմանում էք այսօգրոյցների վրայ: Ի՛նչ խօսք, որ մեր հայրերը իրաւացի են: Հայ ժողովուրդը բազմածին է եղել անցեալում եւ մինչեւ ներկայ ժամանակը: Եւ դա նրան փրկել է կորուստից: Մեր մայրերը, մի սերունդ առաջ, գրազու՛մ էին անական գործերով եւ կարող էին ունենալ չորս, վեց կամ աւելի գաւակներ ու նրանց մեծացնել: Իսկ գիւղերում մի օջախի շուրջ բոլորում էին մինչեւ տասը կամ տասներկու երեխաներ: Հիմի, գիւղական մարդերում էլի առատ են բազմածին հայ բնասնիքները: Բայց գրութիւնը փոխուել է Երեւանում: Այստեղ, աղջիկները ստանում են բարձրագոյն կրթութիւն, վկայում են իրրեւ մասնագէտներ: Եւ երկու կամ երեք փոքրիկներ ունենալուց յետոյ կանց են սանում, նրանց մի քիչ մեծացնում եւ ապա աշխատանքի են մանում իրանց բնարած ապարէզներում: Ի հարկէ նրանք օգտակար գործ են կատարում, եւ հագեկան ու մտաւոր բաւարարութիւն են ստանում, իսկ նրանց մաստակած փոքր աւելանալով ամուսնու թոշակի վրայ, աւելի բարեկեցիկ կենցաղ են ապահովում ամբողջ բնասնիքի համար: Եւ հրաժարում են նոր երեխաներ ունենալուց: Գուք կարո՞ղ էք հաշտեցնել այս երկու եզրերը, հարցուց ան ժպտելով:

Վարանումով նայեցայ շուրջս: Եւ գործեալ զգացի, որ հիր բլլալը որոշ առաւելութեան մը հետ՝ նաեւ յաճախ յայտնի դժուարութեան կը մատնէ ենթական, որովհետեւ ան կը պարտադրուի կարծիք կամ համոզում յայտնել որեւէ խնդրի մասին կամ վէճի մէջ, որոնց արժարժումին չէր մասնակցած:

Ես այդ երկսայրի հարցին լուծման համար պիտի պիտէի Հա-

յաստանի գրողներուն, որ իրենց սաղանդին նպաստով հաշտեցնէին երկու հակասեալ կողմերը:

- Գրողն՞ո՞րը, բայց ի՞նչպէս, հարցուցին քանի մը ձայներ զարմացած... անոնք քանի՞ երեխայ կարող են ունենալ որ...:

- Չէ՛, բնդմիջեցի խնդալով, հարկաւ ո՛չ, գրողներու թիւը յեզնոն չէ, որ կարենան բանակ մը պգախկներու ծնունդ սալ...: Բայց անոնք կրնան պատմուածք ու վէպ գրել բազմազատակ բնասնիքներու մասին: Հարկաւ դժուար է, որ բանաստեղծ մը իր մէկ քերթուածին մէջ քարոզ կամ հրահանգ տայ նորապսակ գոյգի մը, որ չորս կամ ութ մանուկներ պարգեւէ հայ ժողովուրդին, նոյնիսկ ազգասիրութեան անունով: Բայց գրագէտներ կրնան, օրինակ, վէպ կամ պատմուածք յօրինել եւ անոնց մէջ պատկերացնել բազմաթիւ փոքրիկներ ունեցող բնասնիքի մը առօրեայ կենցաղը: Մենք երեք մանչ եւ երեք աղջիկ գաւակներ մեծցուցինք եւ գիտե՛մ թէ որքան դժուարին պայմաններէ անցանք բոլորս: Բայց նաեւ, այս՛, նոյն ստան գիտեմ թէ անոնք բնասնեկան յարկին կ'ընծայեն ա՛յնքան քաղցրութիւն ու հրճուանք, ա՛յնքան սէր ու երանութիւն, որոնք ուրիշ ոչի՛նչով ու ո՛չ մէկ փառքով եւ ո՛չ մէկ գանձով կարելի է ստանալ: Եւ կը մտածեմ, եթէ բազմանդամ օճախի մը շուրջ ապրուող հոգերն ու հաճոյքները, եւ անոնց արցունքն ու ծիծաղը, լիապէս, հարագասօրէն վերարտադրուին մեր գրականութեան մէջ, թերեւս, ո՛վ գիտէ, մենք կը շահինք արուեստի գեղեցիկ երկեր, եւ աւելի՛ն, - նորապսակ գոյգեր կը գրաւուին անկէ եւ յօժարակամ կը բռնուին հինգ-վեց գաւակներ ունենալու հրապուրիչ թակարդին մէջ:

Մեծ հայրերը գարձեալ բարձրացուցին իրենց բաժակները եւ ցնծութեամբ կանչեցին:

- Մեր գայիք թոռների եւ թոռնորդիների արեւոտ կենա՛ցը:

Իսկ երիտասարդ ու պատանի գոյգերը իրենց ժպտաներուն մէջէն կարծես կը մրմնջէին... Դէ՛հ, թանկազին պապիկներ, ոչի՛նչ, դուք ուրախացէք ձեր բարի երազներով, իսկ մենք գիտենք թէ ի՛նչ ենք անելու...:

ԳՐՈՂՆԵՐՈՒ ԵՒ ԳԻՐՔԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի մէջ ամսուան մը շրջանին բազմաթիւ մասնակի կամ խմբական հանդիպումներ ունեցայ խորհրդահայ բանաստեղծներու, արձակագիրներու, արուեստագէտներու, բանասէրներու եւ խմբագիրներու հետ: Մեր բոլոր գրողներուն առաջին պահէն իսկ՝ հարագաա հոգիներու եւ համախոհ միտքերու հաղորդակցութեամբ ջերմացած միջնորդութիւնը մը քաղցրութիւնը կը զգայի արդէն, սրովհետեւ ամէն տեղ կը խօսէինք հայոց մայրենի լեզուով, մինչ նոյն գրական ձգտումներն ու սէրերը կ'ոգեւորէին բոլորս: Եւ ամէն յարկի տակ՝ նոյն սփիւռքահայ հոգերն ու կարօտները, նոյն հայրենի իրազօրծումներն ու ծրագիրները կը կյանէին մեզ: Եւ միշտ նոյն ազգային իղձերն ու երազները կը դառնային առանցքը մեր մտորումներուն, մեր հպարտութեան ու ապագայ ձեռնարկներուն:

Բացայայտ իրողութիւն մըն է, որ խորհրդահայ գրողները, բարոյական ու նիւթական բացառիկ վարկերով օժտուած դաս մը կը կազմեն Հայաստանի մէջ, յիսպէս գնահատուած թէ՛ պետական իշխանութեան եւ թէ՛ ժողովրդային խաւերուն կողմէ: Անոնք երկրին ամենէն յայտնի ու յարգուած զէմքերն են եւ՝ **գեղարուեստական ապարկզին** վրայ կը մնան ամենէն առատօրէն փարձատրուած յօրինողները, որոնք իրենց տաղանդներուն յարաբերական վաստակով՝ կը յաջողին անտեսապէս բարեկեցիկ, նոյնիսկ ճոխ կենցաղ մը ապահովել: Գրողներու եւ ուրիշ մարդերու արուեստագէտներու միջեւ փառքի ու նիւթի թագուն մրցակցութիւն կամ մանրուք նախանձներ՝ համաշխարհային երևույթներ են, ուրեմն անընական պիտի բլլար, եթէ անոնք գոյութիւն չունենային նաեւ Երեւանի մէջ:

Մակայն սեւէ դիտող խորունկ հրճումնքով պիտի վկայէ այն արտակարգ իրականութեան մասին, որ Հայաստանի մեծ սասաններուն եւ աւաններուն ու գիւղերուն հասարակութեան բոլոր խաւերը ճշմարիտ հիացումով եւ սրառուշ ափնամանքով կ'ընդունին իրենց ծանօթ, նոյնիսկ անձանօթ գրողները եւ զեռ կ'ուզեն աւելի հանդրատուէր ու հաճոյալի զարձնել անոնց կեանքերը: Մզուած, թերեւս, անցեալի այն մոռայ յիշատակէն, որ նախորդ սերունդներու հայ յուսակով բանաստեղծներն ու փրպասանները արդէն բաւական տաժանք

ու թշուառութիւն ապրեցան, մինչ իրենց հոյակապ երկերը կը ստեղծէին: Եւ անոնց ճաշակած քաղցին ու մասնուած հալածանքին ամօթէն ու տառապանքէն պէտք է խնայուին մեր մտաւորական դասերը, ներկային ու գալիքին մէջ:

Խորհրդահայ Գրողներու Միութիւնը ունի քանի մը հարիւր արձանագրուած անդամներ, որոնք կուգան գրական բոլոր ասպարէզներէն ու սեռերէն: Անոնց մէջ հարկաւ ամենէն յայտնի ու սիրուած զէմքերը՝ բանաստեղծներն ու արձակագիրներն են, որոնց շարքին կը գտնուին քանի մը տասնեակ գերազանց կամ միջին տաղանդով օժտուած գրագէտներ, եւ աւելի մեծ քանակով՝ միջակ շնորհով շարագրող սկսնակներ, — նորահաս թէ՛ վաստակաւոր: Եւ ի դուր չէ, որ Հայաստանի գրողները արժանացած են հայրենի պետութեան ու ժողովուրդին երախտագէտ գնահատանքին: Որովհետեւ անոնց բնորոշումները իրենց անձերուն եւ երկերուն մէջ ներդաշնակօրէն միաձուլած են թէ՛ ճշմարիտ հայր եւ թէ՛ համամարդկային կազմ, դառնալով ու ծառայելով իրրեւ ամբողջական քաղաքացիներ:

Վաղեմի զարեւելն սկսեալ մէկ-երկու եղբրական հազարամեակ՝ հայ ազգային կեանքին մէջ, անթիւ սերունդներու մատենագիրները անկարելի երազ մը կը փայփայէին, — որ հանապազօրեայ հացին մրդձաւանջէն փրկուած՝ իրենց հաւաքական հանձարը նուիրէին հայոց զիրն ու արուեստը պողաւորելու քաղցր կոչումին: Հիմա, անոնց այս տեսիլքը աննախընթաց, սրտայոյզ իրականութիւն դարձած էր մեր ապշահար աչքերուն զիմաց, որուն կը զժուարանայինք հաւատալ: Բայց ահա առաջին անգամ բլլալով՝ Խ. Հայաստանի մէջ է՝ որ գրողները կ'ապրին իրենց գրական վաստակին շնորհիւ եւ նիւթապէս բարեկեցիկ կենցաղով:

Նախկին րնդհանուր գոյափիճակին չբուր, անստոյգ ստօրեայի մը դաժան պայմաններէն ձերբազատ՝ անոնք կը մշակեն գրական յղացումներու որեւէ ուրուագիծ, — քերթուած ու վիպերգ, կամ պատմաւածք, վկայ ու թատերախաղ: Եւ անտեսապէս ապահով իրենց օրերն ու տարիները կը յատկացնեն այդ ծրագիրներուն գեղարուեստական շունչ, մարմին ու տարազ փոխանցելու համար: Բնականօրէն, գերազոյն ճիւղերով կը ջանան անոնց մէջ այնքան յոյզ ու խորհուրդ թանձրացնել, եւ զանոնք յօրինել այնքան ինքնատիպ ու գեղահիւս սճերով՝ որքան իրենց տաղանդին թափը եւ ներշնչումին հասանքը կարող պիտի բլլան հաղորդել անոնց: Ասիկա պարտազբանքն է գրական երկը յղանալու եւ իրագործելու իրենց կոչումին, որ կը բխի սեւէ ենթակայի ոգեկան թափշքներուն ու իմացական սրանումներուն տարրգութիւնէն:

Բայց նոյն սաւեն, Հայաստանի գրողները ամենէն ծաւալուն ու

խորանկ ազդեցութիւնը կը գործեն հայրենի ժողովուրդի մասշնութեան ու խառնուածքին վրայ: Անոնք կը ստեղծեն ու կը բխրեցնեն հանրային կարծիքը, մանաւանդ երիտասարդ սերունդին մէջ՝ ազգային ու հասարակական խնդիրներու եւ ընկերային ու կրթական ճիշտումներու շուրջ, զպատարի նոր սեփաներ բանալով, կամ գործակերպի նոր բմբունումներ սահմանելով: Անոնք յղուցողի ու ներշնչողի այդ դերերը կը կատարեն իրենց ստեղծած գրականութեան հաղորդական սղիով, - անոր տարրեր առանձինը հոսոց մասածման ու զգացումի, թաղուն թկազարանքի ու յոյզերու բնույնուզում յորձանքներով: Ազգայցի որ երբ անոնց բանաստեղծական ու փիլակական հասարկերը կը սպառնան քանի մը առանձնակ հազար օրինակներով՝ զիրքերը կը սպասին մէկ շարափը շատարած, ուրեմն՝ կը կարգացունին լայն հասարակութեան, մանաւանդ ուսանող սերունդին կողմէ:

Եւ տակաւին, անանք կը շրջին ժողովրդային բոլոր գտակարգերուն մէջ, խմբական հանդիպումներ ու գրոյցներ կ'ունենան անոնց ա, գեկոյցներ կուսան իրենց նորատիպ մէկ երկին շուրջ եւ քրննագատութիւն կ'ընդունին, բայց իրենց անձերուն ջերմութեամբ ու համբաւներուն հմայքով կարծիք կ'արծարծեն ու համոզում կը պարունեն ունկնդիրներուն մէջ: Այդպէս, գրողը գործած է նաեւ հանրային գործիչ մը, որ իր գրական արուեստին բծախնդիր մշակումին հետ՝ ենթակայ կը մնայ ծանր պատասխանատուութեան մը, ժողովուրդին ազգային գիտակցութիւնը պարզուցնելու, անոր քաղաքական գաղափարները խորացնելու եւ բնկերային բարքերը ազնուացնելու զժուարին առաքելութեան մէջ: Գրողէտի, մարդկային ճակատագիր կերտողի եւ հասարակութեան հեռահաս տենչերը արատայայտողի համախառն կոչումն ու դերերը կ'անձնուորէ խորհրդահայ գրողը:

Տարիներ առաջ, հաւանարար Մեծ Եղեռնի յիսնամեակի շրջանին խորհրդային համագումարի մը մէջ, բանաստեղծուհի Միլիա Կապուտրիցաւ՝ ուժեղ ու իմաստալի ճառով մը գատապարակց ուրիշ պատգամաւորի մը հայոց զէմ կատարած անհիմն ու անարդար վերադրումները: Իսկ զեռ անցեայ տարուան (1977) Օգոստոսին կը, որ խորհրդահայ յայտնի փիլակիր Սերո Խանգաղեան անձնական բողոքի նամակ մը գրկեց ու զգակի կրեմին, Խ. Միութեան նախագահ եւ կենտրոնի առաջին քարտուղար Լէոնիտ Ի. Պրեժնեին, գատապարտելով պարձեայ ուրիշ գրողի մը կողմէ եղած խեղաթիւրումներ՝ Ղարարողի զոյափիճակին շուրջ, շեշտելով այդ մարդին պատմականօրէն հայկական նկարագիրը, անոր բնակչութեան մէջ հայերու 85 առ հարիւրի տիրական մեծամասնութեամբ: Ուրեմն երկու համարաւոր հայրենի գրողներ, խորհրդային աշխարհին մէջ իրենց շահած վարկին

ու վայելած հոշակին շնորհիւ՝ կը գտնային հայ ժողովուրդի զգացումներուն, խղճմամանքին եւ իրաւունքներուն պերճախոս, յանդուպն ախոյեանները, նայնիակ քաղաքական ստորաբնիկները:

Յարաւել խմբումի, որոնման եւ նոր իրապարծումներու տենցին մէջ է խորհրդահայ գրականութիւնը: Եւ հակառակ ուրիշ ազգերու գրական շարժումներուն պարզած երեւոյթին, - որ արձակը կը տիրապեակ քերթուցութեան վրայ, գարմանայի հակասութեամբ մը՝ Հայաստանի մէջ բանաստեղծութիւնը, անհամեմատ չափով դերագանց է արձակէն, - պատմուածքէն ու վէպէն, թէ՛ որակով եւ թէ՛ քանակով: Յեղային խառնուածքի, առհասարակ քաղաքեայ ճիրքերու կողմնակալ հակումի արդիւնէք եղած է, որ նախորդ սերունդներն ալ, թէ՛ արեւելահայ եւ թէ՛ արեւմտահայ, աւելի բազմաթիւ ու բարձրակարգ բանաստեղծներ են արտադրեր՝ քան փիլակոսաններ: Նայնն է պատկերը նաեւ Խ. Հայաստանի մէջ:

Բազմերանց ու վաւերական տաղանդներով օժտուած բանաստեղծներ են Քնորք Էմին, Միլիա Կապուտրիցաւ, Վահագն Գալեան, Յովհաննէս Շիրակ, Մարո Մարգարեան եւ շարք մը ուրիշներ, որոնց լաւագոյն քերթուածներէն թարգմանուած են քանի մը տարրեր լեզուներու եւ գնահատուած են ջերմօրէն: Անանք իրենց մշակած նիւթներուն ճոխութեամբ, խորհուրդներու փճիւ խորքով, զգացումներու եւ յոյզերու հաղորդական թխիւրով, եւ իրենց պատկերայի ու քնարական, կամ յորդ ու վարարուն **ոճերուն** կատուցումքին ինքնատրպութեամբ՝ կրնան հաստար պատասխանողները վրայ կանդնիլ ուրիշ երկիրներու մեծարուած համբաւներուն հետ:

Վէպի ու պատմուածքի մարդերուն մէջ ամենէն տիրական տաղանդն է Սերո Խանգաղեանը, որուն ծաւալուն ու զեպակերտ երկերը թարգմանուած են խորհրդային տարրեր լեզուներու եւ ան իրքեւ վարպեա փիլակիր՝ պարզեատարուած է թէ՛ Խ. Միութեան եւ թէ՛ Հայաստանի կառավարութեան կողմէ: Նայն արձակի սեփն մէջ արժեքաւոր հատորներ արտադրած են Վախիճանց Անանեան, Զարգանց Գարեան, Հմայեակ Միրաւ, Անահիտ Սահինեան, Գեղամ Սեւան եւ ուրիշներ: Իսկ պատմուածքի ու գրական ակնարկի մշակման մէջ, քնարական շունչով ջերմացած իրենց արձակով ծանօթ զէմքեր են քնարական շունչով ջերմացած իրենց արձակով ծանօթ զէմքեր են Սեփան Կուրտիկեան, վաստակաւոր խմբագիրը «Սովետական Գրականութիւն» ամսագիրին, եւ Վարդգէս Պարտեան, խանդավառ քարտուղարը Հայաստանի Գրողներու Միութեան:

Յաւագին իրողութիւն է Հարկաւ, որ տիրաքի մէջ մեզի համար տակաւին հնարաւոր չէ ամբողջական ու ճշգրիտ զպատար կողմեջ Հայաստանի ներկայ գրական շարժումներուն եւ գրողներու անձերուն ու գործերուն շուրջ, պարզապէս՝ որովհետեւ՝ անոնց ծանօթա-

նալու բաւարար միջոցներ չենք ունենար: Եւ կը հարկադրուինք մեր կարծիքները կազմել որոշ հեղինակներու մասին, պատահարաբար մեզի հասած անոնց որեւէ մէկ հատորին, կամ թերթերու մէջ արտաստուած հատուածներու ընթերցումէն, յաճախ ընտրուած քմահաճ ճաշակներով, որոնք հազիւ թէ արդարութիւն կ'ընեն անոնց տէրերուն:

Զարմանալի հակասութեամբ մը, արտասահմանի մէջ աւելի զիրին է լիապէս ուսումնասիրել ու գնահատել **խորհրդահայ** շրջանի աւագ, երէց ու միջին տարիքի ականաւոր բանաստեղծներն ու վիպասանները, երբ անոնք արդէն **արուեստի ու համրաւի** իրենց նուաճած կատարներուն հասած կ'ըլլան: Այսպէս, սփիւռքահայ գրական ու գրասէր շրջանակներուն մէջ խորապէս սիրուած, ընտանի դէմքեր են նախորդ սերունդներու մեծերուն, - Թումանեանի եւ Իսահակեանի, Շիրվանզատէի ու Նար-Դոսի, Ստեփան Զօրեանի եւ Դերենիկ Դեմիրճեանի հետ, նաեւ Վահան Տէրեանն ու Եղիշէ Զարենցը, Ակսել Բակունցն ու Գուրգէն Մահարին, մինչեւ ներկայի Գէորգ Էմինն ու Վահագն Դաթեանը, եւ Սիլվա Կապուտիկեանն ու Յովհաննէս Շիրազը, շնորհիւ անոնց գրական վաստակներուն տրամագրելի ծաւալին:

Բայց եղած են անցեալին եւ այսօր ալ կան նաեւ ուրիշ գրողներ, որոնց արտադրած գործերուն, կամ իրենց գոյութեան մասին անգամ՝ յաճախ չառ քիչ բան եւ երբեմն նոյնիսկ ոչինչ կը գիտնանք: Ասիկա ճիշդ է մանաւանդ, երբ գրողներ երիտասարդ են տակաւին եւ հռչակի սանդուխտին առաջին աստիճաններուն վրայ կը դնեն ստեղծումներն: Օրինակ, միայն քանի մը տարի առաջ պատեհութիւն ունեցանք **հաղորդուելու** Գէորգ Էմինի նման բացառիկ տաղանդի մը հոյակապ բանաստեղծութեան, մինչ ան գրել սկսած է տակաւին 1940-ին...: Դարձեալ շատ ուշ ծանօթացանք Լեւոն Միրիջանեանի քերթողական արժէքաւոր գործին, որ քսան տարիներու անցեալէ մը կուգայ:

Իսկ աւելի սահմանափակ է մեր **ծանօթութիւնը** մանաւանդ նորահաս, թէկուզ սկսնակ գրողներու մասին, որոնց պատմութեանը ու քերթուածները միայն պատահարաբար կրնանք կարգալ «Սովետական Գրականութիւն» կամ «Գարուն» ամսաթերթերուն մէջ, - եթէ անոնցմէ տարին մէկ-երկու թիւեր յաջողին հասնիլ մեր հասցէներուն: Ռազմիկ Դաւոյեան նորերու շարքին ամենէն յայտնի եւ ներբողուած բանաստեղծն է, ծնած 1940-ին եւ արդէն հինգ գիրքեր յոյս առած են անոր քերթուածներէն: Բայց որոնցմէ ոչ իսկ չառ մը գտնելու եւ կարդալու առիթը կրցած ենք ունենալ: Թերեւս ուրիշներ աւելի բախտաւոր եղած են:

Երանի՜ թէ նոր գրասենեակ մը բացուի Սփիւռքի հեռ Մշակութային Կապի Կոմիտէի հաստատութեան մէջ, Երևան, որուն պաշտօնը

ըլլայ՝ արտասահմանի հայերէն թերթերուն խմբագրութեանց ու շահագրգռուող գրողներուն ղրկել, խորհրդահայ յայտնի կամ նորա-յայտ բանաստեղծներուն եւ արձակագիրներուն բոլոր տպագրուող հատորները, անոնց կենսագրական գիծերուն ու լուսանկարներուն հետ: Այսպէսով կարելի կը դառնայ գրական փոխանակութեան մը փոխադարձ ուղին հարթել: Եւ հնարաւոր կ'ըլլայ, Խ. Հայաստանէն մինչեւ արտասահմանի հեռաւոր հորիզոնները՝ ստեղծել ոգեկան ու իմացական եղբայրակցութիւն մը բոլոր հայ գրողներուն միջեւ, իրրեւ մեկնակէտ ու խորիսխ ամբողջ հայ ժողովուրդի միասնութեան:

× × ×

Այդ օրը ինծի համար յիշատակելի դարձաւ ուրախ ու տխուր խոհերու եւ յուզումներու ճոխութեամբ: Ամբողջ ցերեկը, մինչեւ ուշ գիշեր, անցուցի գրողներու եւ գիրքերու մասին գրույցներու մտերմութեան մէջ, շնորհիւ շնորհագարդ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեանի պատրաստած ծրագրին: Ան ինքնաշարժով եկաւ **Արմենիա** հիւրաւոցը եւ միասին գացինք իրենց նոր բնակարանը, - ընդարձակ ու գեղակերտ յարկարաժին մը, արդիական գմայլելի կահաւորումով: Իր մայրը դեռ նոր կ'սպաքինէր, անկողնին վրայ ընկողմանած, հոգատար քրոջ մը խնամքին տակ: Ուրիշ սենեակի մը մէջ կ'աշխատէր ոուս գրող կինը, որ կը գործակցէր Սիլվային, անոր «Խճանկարներ» հատորը ուսերէն թարգմանելու համար:

Մեր շրջապատյաին մեկնեցանք երկու ինքնաշարժ կառքերով: Մէկուն մէջ նստան, Մոսկուայէն այցելու ակադեմական պատուիրակութեան մը նախագահը եւ ուրիշ ուսեր: Միւսը գրաւեցինք մենք, ուր կրցանք խօսակցիլ հայերէն եւ մեր նախասիրած նիւթերուն շուրջ, - որոնք գրողներն ու գրականութիւնը կը կազմէին: Բայց հարկաւ նման ուղևորութեան մը ժամերուն հնարաւոր չէ երկարօրէն լրջանայ, եւ սրամիտ կատակն ու ծիծաղը յաճախ ընդմիջելով առաւել հաճոյալի կը դարձնէին մեր ճամբորդութիւնը, որուն երեք հանգրրուանները խորապէս տպաւորուած կը մնան մտքիս վրայ:

Հայաստան նախորդ այցելութեանս, 1961-1962ին, Փառնին կործանած սիւներու, քանդակներու եւ խոյակներու մոռյլ գերեզմանատան մը կը նմանէր: Հայոց հնագոյն ամբողջն ու հեթանոսական տաճարին փլատակները, ցանուցիւր տարտղուած՝ ամբողջ վայրին կուտային պատրանքը խաղաղ ուղեւորաւոր մը, ուր լքուած աւերակները նահատակ զինուորներու քայքայուած կմախքները կը յիշեցնէին: Բայց այս անգամ, հիացումով կը դիտէինք Փառնի վերակառուցուած տաճարը, անոր բարձրածիգ սիւներն ու քանդակազարդ

պատերը եւ ներքնամասը, բնդեղուզուած սքանչելի ճարտարութեամբ մը, հաւատարիմ անոր սկզբնական ոճին: Անոր վերականգնումին մէջ գործածուել են վաղեմի աւերումներէն վերապրած սիւներու, քանդակներու եւ խոյակներու բոլոր հատուածներն ու բեկորները իրենց բուն տեղերուն վրայ: Իսկ պակասը կտորներուն ձգած բացերը լեցուցեր են նոր տաշուած տուֆերով: Եւ կարելի չէ առանց յուզումի ու հրճուանքի խառն զգացումներով համակուելու՝ զիտել այս հոյակապ կառուցուածքը, որուն վերաշինուած ամբողջութեան մէջ միաձուլուած են հայոց հազարամեայ անցեալը եւ հրաշալի յարութեամբ մը վերածնած ներկան:

Եւ օտար հիւրերուն կը բացատրուին, զուսպ հպարտութեան շեշտով մը, Փառնիի ծնունդին, փառքի շրջաններուն, յաջորդական քանդումներուն եւ վերափոխումներուն հերոսական կամ եղբրական հանգրուանները: Աւանդութեան համաձայն՝ անոր հիմքերը դրուած են շուրջ 4250 տարիներ առաջ իբրեւ ամրոց, Հայկ Նահապետի շառւիղներուն կողմէ: Արտաշէսեան եւ Արշակունեաց իշխանութեան տարիներուն՝ ամրացուած Փառնին ծառայել է իբրեւ բերդ ու զօրակայան, եւ կառուցուել է նաեւ հեթանոսական տաճարը: Աշոտ Բագրատունին զայն վերանորոգել է աւելի ընդարձակ եւ 10-րդ դարուն, բնակիչներու աճումով անոր շուրջ, Փառնին զարձեռ է նաեւ գիւղաքաղաք, որ աւելի զարգացել է ներկայ շրջանին: 1386-ին, երբ Լենկթիմուր, աւեր ու մահ սփռող իր վոհմակներով ներխուժել է Հայաստան՝ անցել է նաեւ Փառնիէն...

Խուճրէն կը բաժնուիմ ու յամբօրէն կը քալեմ շրջապատի լայն տարածութեան վրայ: Անկարելի է չհամայուիլ, ներքեւի եւ դիմացի կախարդական համայնապատկերին հրապոյրով: Զորը գահավէժ կ'իջնէ մինչեւ անդնդային խորութիւն, ուրկէ կը հոսի Ազատ գետը, որուն թաւային հեզ մրմունջը լսելու պատրանքը կ'ունենամ կարծես, ահարկու լռութեան մը մէջ: Կիրճին երկու ասիւրէն վեր կը խոյանան վիթխարի լեռները ապառաժի լեռկութեամբ կամ թուփերու եւ ծառերու կանաչով պատուած: Մեր բարձունքին ձախ եզերքէն վար՝ գետինը ընկղմել է հազարաւոր ոտք ցած եւ կազմեր է դաշտավայր մը, ուր հէքեաթային գեղեցկութեան մը մէջ՝ մրգաստաններ ու պարտէզներ կը պողաւորուին քանի մը տուներու շուրջ:

Միլվան կը մօտենայ զիս տանելու խուճրին, որ մեկնիլ կը պատրաստուէր:

- Միշտ կը զանգատինք մեր խեղճ աստուածներուն դէմ, որ հայ ժողովուրդին տուած են լեռ ու ձորէ կոփուած աղքատ երկիր մը, ըսի խնդալով: Բայց իրապէս, բնութեան այսքան զմայլելի տեսարաններ անփոխարինելի պարգեւներ են մեր հայրենիքին համար:

Հացի ու մեքենայի աւելի հարուստ աղբիւրներ հետզհետէ կը ստեղծենք հարկաւ: Իսկ ո՛չ մէկ զանձ եւ ոչ մէկ հրաշք կրնայ յօրինել այսպիսի սքանչելի գեղեցկութիւն:

Եւ զարձեայ սկսանք խօսիլ գրողներու եւ գիրքերու մասին: Յայտնեց թէ ինք երկու օրէն պիտի երթար Մոսկուա, Միացեալ Նահանգներ ու Փանատա կատարած իր շրջապտոյտին տպաւորութեանց «Խճանկարներ...» հատորին ուսերէնի թարգմանութեան աշխատանքը աւարտելու համար: Եւ անկէ պիտի մեկնէր Լոնտոն, իր ստացած հրաւերին ընդառաջելով:

Արդէն կը մտնէինք մեր ինքնաշարժ կառքերը: Բայց ճամբուն եղբրքին, պատին տակ նստած, գիւղացի մարդիկ ու կիներ իրենց կողովներուն մէջէն թարմ խաղող, խնձոր ու տանձ կը ծախէին անցորդներուն: Եւ անոնցմէ գնուեցան, օտար հիւրերուն Հայաստանի քաղցրահամ պտուղներուն ճաշակը տալու համար:

Իրիկուան կիսամութր շրջակայ լեռներէն իջել ու պարուրել կը Գեղարդի վանքը, երբ մեր կառքերը հասան հոն: Ռուս հիւրերը առաջին անգամն էր, որ կը տեսնէին հայկական ճարտարապետութեան ու շինարար վարպետութեան այդ հրաշալի կառուցուածքը: Լեբան ապառաժէ ծոցին մէջ փորուած տաճար ու մատուռ եւ խորաններ, սիւներ ու կամարներ, իրարու բնդեղուզուած զմայլելի ու խորհրդալի գեղեցկութեամբ մը: Ան հիմնուած է հայ ժողովուրդին բրիստոնեայ զոռնալուն նախնական շրջանին, որուն վրայ հետագայ դարերուն աւելցուած են արտաքին եկեղեցիներ, վանականներու վիճափոր խուցեր եւ անջատ շէնքեր: Գեղարդը կամ Այրիվանքը նաեւ հայկական հոգեւոր ու մշակութային կեդրոն մը զարձաւ Միջին Դարերուն:

Երբ մտանք գլխաւոր դուռէն ներս, թանձր խաւար մը դիմաւորեց մեզ, հակառակ քանի մը պլպլացող մոմերու աղօտ լոյսերուն: Սեղանէն գնուած մեր մոմերը վառեցինք ու փորձեցինք յուսաւորել հիւրերուն ճամբան, յատակի քարերուն ու փոսերուն մէջէն: Անոնց հիացումը կ'աւելնար ամէն անգամ որ տարբեր մատուռի մը կամ սենեակի մը մուտքէն ներս կ'անցնէինք: Դարերու ակոսներէն կրճուած ու ծուխէն սեւցած արձանագրութիւններն ու քանդակները կը վկայէին հայ ժողովուրդի ազգային, պետական ու մշակութային շրջ ծաղկումը վաղեմի դարաշրջանի մը, երբ ներկայ մեծագոր ազգերը տակաւին գոյութեան անգամ չէին եկած: Բայց ես այդ պահուն մտաւախ կը խորհէի. - Հապա եթէ մեզ պարուրող մութին մէջ յանկարծ հիւրերէն մէկուն ոտքերը զարնուէին ցից քարի մը կամ փոսի մը եզերքին եւ ան իշնար ու վնասուէր արկածով, ո՛րքան ամօթահար պիտի մնայինք մենք եւ մեր նախահայր սուրբերը: Երանի՛ թէ՛

փսփսացի ես ինծի, վանքին խնամատար մարմինը քիչ մը աւելի լուսաւորէր անոր ներքնամասը, — եթէ շատ արդիական, ուրեմն անյարմար կը նկատուին ելեկտրական լամբերը՝ գոնէ գետեղուին մշտավառ կանթեղներ, որոնք պիտի աւելցնեն վայրին սրբազան խորհրդաւորութիւնը:

Երբ դուրս ելանք ընդարձակ բացատը, արդէն խաւարը պատեր էր շրջակայ լեռներն ու Գեղարդի շրջապատը: Աւելի ցած, ելեկտրական լոյսերուն տակ եւ մեր ճամբուն վրայ բարկ կրակի մը բոցերը կը ճարճատէին եւ ջերմութիւն ու խորովածի բոյրը կը տարածէին միջոցէն վեր: Խումբ մը երիտասարդներ իրենց ընթրիքը խրախճանքի կը վերածէին կոննակով, աղանդերներով, բաժակաճառերով ու մատաղաւած գառնուկով: Եւ սրտառու չհրախորտեցանք մը մեզի, իրենց անձանօթ հիւրերու, հրամցուցին ըմպելի եւ պտուղ եւ խորոված: Ամշնալով ու խղճահար առի ինծի շնորհուած բաժինը:

— Բայց եթէ մեզմէ ամէն մէկուն այսքան առատ միս տաք, ձեզի բաւական պիտի չմնայ, ըսի զիս հիւրասիրող տղուն:

— Ոչինչ, հայրիկ, պատասխանեց ան զուարթ շեշտով: Էստեղ է՛նքան վաղեմի սուրբեր ունենք: Նրանց օրհնութեամբ մեր գոհած գառը ձեզ էլ կը բաւի, մեզ էլ:

Երբ ինքնաշարժ կը նստէինք մեկնելու համար.

— Կ'երեւի բաւական ո՞ւր է պիտի հասնինք Երեւան, հարցուցի Սիլվային:

— Երեւում է՝ այո. մեր ճամբի վրայ, Գառնիում զեռ ընթրելու ենք դպրոցի տնօրէնուհու տանը: Նրանք սպասում են մեզ: Զեզ համար հետաքրքիր կը լինի նրանց հետ ծանօթանալ:

Վարպետ վարորդներ ունէինք մեր ինքնաշարժ կառքերու զեկանիւններուն վրայ եւ գիշերուան խաւարը կամ լեռներու կողերէն դէպի կատար մագլցող ուղիին մթին գաղտնիքները շէին մտահոգեր մեզ: Գառնի հասնելով, կողմնակի փողոցներ մտանք եւ կարճ փնտառուքէ մը ետք գտանք հիւրընկալ ընտանիքին բնակարանը:

Սեղանը բեռնաւոր էր հայկական համեղ կերակուրներու, աղանդերներու եւ ըմպելիներու առատութեամբ: Իսկ խորովածը բացառաբար եփուած էր թոնրի կրակով, որ ենթադրաբար յաւելեալ վարկ մը կ'ընծայէր անոր արժանիքին: Զրոյցները զուարթ էին ընթացիկ նրթներու շուրջ, հայերէն ու ռուսերէն, երբեմն կրկնակ թարգմանութեամբ: Իսկ բաժակաճառերը կը պահէին իրենց հանդիսաւոր, զգացական լրջութիւնը: Առիթով մը, մինչ ռուս ակադեմիական անցեալ դրուագներ կը պատմէր՝ նաեւ յիշեց զէպք մը Սպանիոյ քաղաքացիական պատերազմէն, մղուած 1936-1939ի տարիներուն, ուր ինք գացած ու կոռուած էր Հանրապետութեան գուեղերուն կողքին, մի-

ջազգային ֆաշիզմի լեգէոններուն դէմ: Այն ատեն Սիլվան յայտնեց թէ իմ երէց եղբայրս՝ Աշոտն ալ, Նիւ Եորքէն կամաւոր, մեկներ էր Սպանիա, հոն մասնակցեր էր շարք մը ճակատամարտներու Ֆրանքոյի ոյժերուն դէմ եւ սպաննուեր էր կոիւններուն մէջ: Եւ զարմացայ, երբ ռուս գիտնականը կանգնեցաւ ոտքի, դէմքը տրտմօրէն մոռլլած, իր կոննակի գաւաթը բարձրացուց բաժակաճառի մը եւ յուզիչ ուղերձով մը դրուատեց Սպանիոյ մէջ զոհուած եղբորս արարքն ու յիշատակը:

Ճաշասեղանին շուրջ լիախինդ խրախճանքի մթնոլորտ կը տիրէր, որ կը ջերմանար անդադար կարկաչող ծիծաղով, երգով ու խօսքով: Եւ յաջորդաբար ներկաներէն մէկը բաժակաճառ կ'արտասանէր ուրիշի մը ձօնուած, — կարծես իրբեւ ճաշատոմս, որուն փոխարժէքը ամէն սեղանակից կը վճարէր զգացումի եւ մաղթանքի զեղումով: Երբ բոլորը աւարտեցին իրենց բաժինները, քովէս ձայն մը մրմնջեց մեղմօրէն.

— Ուզում է՞ք մի քանի խօսք ասել:

— Բայց հիւրերը ոչինչ պիտի հասկնան իմ հայերէնէս:

— Ոչինչ, մենք կը թարգմանենք նրանց համար, աւելցուց ան:

Վարանելով էլայ ոտքի: Պահ մը լուռ ու գլխահակ, այս անակնկալ հրուէրին հանդէպ փորձեցի խճողուած գաղափարներ խտացնել ու զտաւորել: Եւ.

— Ես այս բաժակը կ'առաջարկեմ ռուս ժողովուրդին կենացը, բո՛ւ անոր ատենի պայծառ ու փառաւոր ապագայ մաղթելով: Իրբեւ զրոյժ մարդ՝ ես վաղուց խորունկ հիացում ունեցեր եմ Պուշկինի, Լերմոնտովի ու Գոլցի եւ Քոլտայի, Տոսթոյեւսկիի ու Տուրկենեւի, եւ Չիքովի ու Կոլչովի գրական գեայլի վաստակներուն հանդէպ: Եւս կ'առաջարկեմ նաեւ արեւելային, հաւաքական հանճարի մը, որ սուս մարմնաւոր էր արգասանջ ձեռքն կը բխէր: Եւ իրենց վէպերուն ու բանաստեղծութեան մէջ թիւրեղացած գաղափարներուն փեւթեմանը եւ սրտեամբ արտակարգ գեղեցկութեամբ՝ հոյակապ գանձելով Լեփազուցին համալիր-հային գրականութիւնը: Անոնց ասանկներէն ներշնչուած արտազրեցին նաեւ խորհրդային շրջանի քաղաքայն սուս զրոյժները: Իսկ իրբեւ հայ մարդ՝ անհունօրէն երախտազարտ կը գգամ Թուսիոյ հանդէպ, որ հարիւր յիսուն տարի առաջ, երբ հարց տարուան մեր պատմական հայրենիքին այս հատուածը արտազրեց Պարսկաստանի լուծէն, եւ խորհրդային շրջանին հնարաւոր գործուց, որ ունենանք ներկայ ազատ ու ապահով Խ. Հայաստանը, նաեւ հայրենի պետութիւն եւ հնազոյն, հարուստ մշակոյթով ու սեփական լեզուով զարգացող, բարգաւաճող հայ ազգութիւն: Ես գիտեմ, որ սփիւռքի պանդխտութեան մէջ ապրող շուրջ մէկուկէս

միլիոն հայերը կը բաժնեն ուս ժողովուրդին հանդէպ երախտագիտութեան այս ջերմ զգացումը, հաւատարմով, թէ ան պիտի իրագործէ նաեւ արեւմտահայ հողերը գերութենէ ազատագրելու մեր երազը:

Երբ ծափերը դադրեցան, վարանելով աւելցուցի.

- Կուզեմ շնորհակալութիւն յայտնել թանկագին Սիլվա Կապուտիկեանին, այսքան պարզ ու շնորհալի, մանաւանդ այսքան տաղանդաւոր ըլլալուն համար:

Սիլվան բարձր բռնած գլուխը կախեց ցած, - թող մի ուրիշը թարգմանի, չչնջուց, եւ իր թարգմանի պաշտօնը շարունակեց կողքի ուսուցչուհին:

- Սփիւռքի մէջ, հայկական բեմերէն ամենէն յաճախ արտասանուած եւ հասարակութեան կողմէ ամենէն աւելի մեծարուած բանաստեղծուհին է Սիլվա Կապուտիկեանը: Որովհետեւ մտածման եւ զգացումի անաղարտ հարազատութիւն մը մեզ կը կապէ իրարու: Անոր քերթուածները այնքան յորդ ու բազմասեռ են՝ որքան մարդկային անհանգիստ ոգին: Անոնց մէջ բնութեան դէմ բնդվզումի տենդը կ'ազնուանայ՝ խառնուելով արգարութեան տենչին: Անոնք, վերածնած Հայաստանի շքեղ իրականութեան ներշնչած երգերով կը սփոփեն մեզ տանջող կարօտները մեր ծննդավայր գիւղերուն ու քաղաքներուն, որոնք տակաւին բռնագրաւուած կը մնան Թուրքիոյ մականին տակ, իբրեւ աւար իր գործադրած ցեղասպան եղեւնին: Ան կ'երգէ քաղցրութիւնը հայոց մայրենի լեզուին, որ քանի մը հազար տարիներուն ցաւագին երկունքներէ, մաքառումներէ, վերածրնունդներէ եւ երազներէ կուզայ: Ան նաեւ քնարաշունչ գաղափարախօս մըն է ուս եւ հայ ժողովուրդներու անբակտելի կրթարութեան: Սիլվա Կապուտիկեանը, մանաւանդ, ճշմարիտ արտայայտիչն է մարդկային ամենէն ցաւագին ու վսեմ յուզերուն, - հեծեծող սէրերուն, մենութեան վիշտերուն, տուայտող կարօտներուն եւ յոյսի անուրջներուն: Եւ անոնց մէջէն ապրուած յուզումներու նրջանկութիւնը, ափսոսանքն ու տառապանքը կը հոսին այնքան վարակիչ ու ժգնութեամբ, որ ամբողջապէս կը կլանեն ընթերցողը իրենց թախիծին ու տենչերուն մտերմութեան մէջ, - հող չէ թէ ան ի'նչ լեզուով կարդայ զանոնք եւ աշխարհի ո'ր հեռուոր հորիզոնին տակ: Եւ ատիկա ամենէն վաւերական, ամենէն բացարձակ վկայութիւնն է գերագանց տաղանդով օժտուած բանաստեղծի մը՝ որ անկասկած է Սիլվա Կապուտիկեանը: Երկար, ուրախ եւ առաւել ստեղծագործ տարիներ իրեն համար:

Գիշեր էր արդէն եւ կը կարծէի թէ հայրենի հողին վրայ երջանիկ օր մը եւս իր վախճանին կը հասնէր: Բայց դեռ պիտի գար իրիկուան անսովոր անակնկալը: Նախ քանի մը քերթուածներ արտասանեցին,

մեծերու կարգին, նաեւ հիւրընկալ ընտանիքին երկու մանուկները, - վճիռ, քաղցրալուր հայերէնով: Յետոյ փափաք յայտնուեցաւ, որ տան կրտսեր որդին, հինգ-վեց տարեկան մանչուկն այ ոտանաւոր մը բռնէ: Ան գլուխը ժխտական թօթուեց եւ ամօթխած փախուստով գնաց ու երեսը ծածկեց մօրը քղանցքին մէջ: Բայց բաւական փաղաքշարէ ու պնդումներէ ետք, ան վերջապէս յաղթեց իր վախերուն ու հաճեցաւ հաւանիլ: Զինք մղեցին դէպի սեղանը եւ վերցուցին աթոռի մը վրայ, իմ բովս: Ամէն խօսք ու ծիծաղ դադրեցաւ, անստոյգէն բխող ակնկալութեան մը մէջ: Ան պահ մը շուրջը նայեցաւ անշարժ ու լուռ, բերանը կղպած, կարծես իր երկիւղը փարատելու համար: Ես կը դիտէի անոր գրաւիչ դէմքը եւ սեւ ու խոշոր աչքերը, որոնք կը փայլէին քինջ ցոլբերով: Յանկարծ ան բարձրացաւ եւ աջ ձեռքին մանրիկ մատները բռունցք շինած՝ արձանացաւ վեր: Ա՛հ, մտածեցի, այս մանկիկ տարիքին յեղափոխութեան քայլէ՛րդ պիտի տայ մեզի: Բայց ո՛չ, անոր զիլ ձայնը Հնչեց մարտակոչի մը թափով:


«Հա՛յ եմ ես, հա՛յ եմ ես,
«Սարսափեցէ՛ք իմ դեմքէս,
«Հայաստանը ազատող՝
«Բաշ վարդանի բոռն եմ ես:»

Յանդամաւ ծափերուն մէջ ան իջաւ աթոռէն: Յիշեցի, որ սփիւռքի հայ զարդներու աշակերտներուն շրթունքներէն երբեմն լսած էի այդ բռնակը: Եւ հիմա՝ հո՛ս: Ուրեմն ոգիի, միտքի ու տեսիլքի ինչ որտուտէ, ինչ յանձնեալան հարազատութիւն մը կ'եղբայրացնէր «Բաշ վարդանի բոռնը» կրքազունդի բոլոր ափերուն վրայ, բոլոր կողմերէն: Գրկեցի ձեռնակը եւ անոր երկու այտերէն համբուցեց յարմարով: - Մե՛նչ մանչուկ, ըսի մօրը զառնալով, այս սարսափ զնչքն մարդ ինչպէ՞ս աստափի: Բայց թերեւս զինաթափ կոչուց անոր համարով: Երանք ոտքի մեկնելու: Կ'երեւի ուրախութեան տակ ինչ յորդը իրենց սիրտերէն: Եւ զուտը, շուրջերնիս ակնաբանը խօսող, գալի՛թ կ'եկտրական լամբերու լոյսին տակ, սրան իմբռնէ կրակն ու պարէ: Հայկական ծանօթ մեղեդիներով, մինչ ուս իջուող կը ծափէին ինչուսթեամբ:

Ես ոչ աստեղծ եղեալ: Եւ յոգնած բայց զուարթ՝ հրաժեշտ առնելը իրարէ: Պահ մը ետք, գանդուկի սենեակիս մէջ առանձին, ցերեկուան բոլոր ժամերուն խոռվիչ հրճուանքը կը վերապրէի: Յետոյ ակնաբանիս վրայ փորձեցի քնանալ, բայց ի զուր: Երկար, յիշատակեցի սրտան մը բոլոր պահերն ու հանդիպումները, հայրենի միջավայրին հմայքով պարուրուած՝ հէքեաթային երանութեամբ մը կը յուզէին զիս: Մինչ անոնց վրայ, իբրեւ տիրական խորհրդանիշ,

կը տեսնէի հինգ-վեց տարեկան գեղաղէմ մանչուկ մը, կանգնած իր աթոռին, փոքրիկ ձեռքը վերածած կոուփի ու ցցած գլուխէն վեր, որ իր մանկական զիւ ձայնով կը կանչէր որպէս ապագայի մարտահրաւէր. - «Հա՛յ եմ ես, հա՛յ եմ ես...»:

Եւ Վարդանի մերօրեայ թոռներուն մտերմութեան մէջ՝ քունը իջաւ ու փակեց աչքերս եւ երջանիկ երազներով քաղցրացուց գիշերս:



Ինծի համար գերագոյն հաճոյք եղաւ, ամիս մը Երեւան մնալուս շրջանին՝ գտնուիլ Գէորգ Էմինի, Սիւլիա Կապուտիկեանի Ստեփան Կուրտիկեանի, Մարօ մարգարեանի, Ռուբէն Զարեանի եւ ուրիշ գրողներու եւ արուեստագէտներու ջերմօրէն հարազատ սուներուն մէջ: Եւ հիանալ անոնց անձնական գրադարաններուն վրայ, որոնք յաճախ իրենց աշխատանքի սենեակներուն պատերը կը ծածկէին յատակէն մինչեւ ձեղուն, հայ ու միջազգային գրականութեան յայտնի հեղինակներուն բնարուած հատորներով: Մինչ տարրեր առիթներով մեր մասնակի կամ խմբական գրոյցները կ'ընդգրկէին Հայաստանի եւ սփիւռքի մէջ զարգացող գրական երեւոյթներն ու ձգտումները, եւ բնականօրէն՝ գանձաք ստեղծող կամ արտայայտող զէմքերը տարեց, միջին եւ երիտասարդ սերունդներէն:

Ամէն տեղ վկան կը դառնայի նոյն անսովոր իրողութեան: Հայրենի գրողներ ու արուեստագէտներ կը վիճէին խանդավառ տենդով, երբեմն հանդարտ, յաճախ յուզումնայի, իրենց գաւանած մէկ վարկածը պաշտպանելու համար: Կը թուէր թէ սրեւ համոզումի ջատագով կը կուէր ամբացուած խրամներէ, իր գիրքերուն յաղթանակը չահելու՝ ընդգիմայիր գաղափարներու պարտութեան վրայ: Ինչ որ մանաւանդ ինծի խորունկ ուրախութիւն կը պատճառէր՝ այն յորդ կենսունակութիւնն էր, որով բոլորը կը մասնակցէին սրեւէ բանավէճի: Անոնք իրենց ամբողջ կուսութեամբ կ'անուած կ'ըլլային գրականութեան, արուեստներու եւ յարակից նիւթերու կարծես կախարդական հրապոյրէն եւ անոնց մասին կը խօսէին նախանձայնոյց խանդով:

Երեկոյ մը հաւաքուած էինք փաստակաւոր գրապէսի մը հիւրանոցին մէջ, արձակագիրներ ու բանաստեղծներ, երկը եւ երիտասարդ: Եւ մեր գրոյցը սկսաւ բնթանայ ծանօթ հունքէ, նոյն հօգերէն մեկնելով եւ նոյն բաղձանքներուն ուղղուելով: Բայց հեղահեղ, կարծես անխուսափելի վարժութեան մը մղուեմով՝ կարծիքներ տակաւ կարծրացան հին ու նոր սերունդներու բաժանման անջրպետին հակադիր քարափներուն վրայ: Պատմութեամբի ու վկայի մարդերուն մէջ՝ այդ տարրերութիւնը մակերեսային էր, հազիւ նշմարելի: Մշակուած

նիւթերը ընդգրկեր էին հայ ժողովուրդի պատմութեան ամենէն հերոսական զէմքերը կամ ողբերգական դրուագները, - Տիգրան Մեծէն, Արշակունի արքաներէն եւ Վարդանանց պատերազմէն մինչեւ Բագրատունի ու Ռուբինեան թագաւորներ ու զօրավարներ, մինչեւ Դաւիթ Բէկի շրջանը եւ հայոց ազգային ազատագրական պայքարի զէպքերը:

Այս վէպերուն հեղինակները կը պատկանէին քանի մը յաջորդական սերունդներու, բայց անոնց կերտած նկարագիրները կ'ապրէին ու կը գործէին խառնուածքի, կենցաղի, խօսակցութեան, խորհուրդի ու յուզումներու զարմանալի նմանութեամբ: Այդ արձակ երկերը կը յօրինուէին կառուցուածքի ու զարգացման կարծես կաղապարուած տարրերով ու շաղախով, որոնք նուիրագործուէր էին «ազգային աւանդոյթներ» պիտակին տակ եւ որոնց հաւատարիմ մնալը, - այսինքն՝ նախորդ գրողներու մաշեցուցած ուղիներէն քայլեր՝ գրական արժանիքի նախապայման կը նկատուէր կարգ մը յարգելի քննադատներու կողմէն: Անոնց տիրական հոսանքէն բախտաւոր շեղումներ եղած էին «Ոսկի Աբաղալը» (Բաֆֆի), «Մահը» (Նար-Դոս), «Վարժապետի Աղջիկը» (Տիգրան Կամսարական), «Քառսը» (Շիրվանզատէ), «Ամիրայի Աղջիկը» (Երուխան) եւ նման ուրիշ երկեր:

Յորհրդահայ գրականութեան ծաւալումին հետ՝ արձակին համար յաւելեալ նիւթեր հայթայթէր էին յեղափոխութեան կռիւները, գաւաղարգային բախումները, գիւղերու հաւաքատնտեսացման (կոլխոզային) պայքարները եւ հայրենական պատերազմին դրուագներ: Նոր վէպերուն բովանդակութեան ատողծները փոխուէր էին, կերտուած տիպարները տարրեր էին, բայց տակաւին՝ անոնց յօրինուածքին եղանակը կը մնար հաւատարիմ «ազգային աւանդոյթ»ներու թեյազրամ ուղեցուցչին, ուրեմն հպատակ անոնց կաշկանդումներուն: Մեր պատմութեան անցեալ փառքերը ներրոպելու, կամ ժխտական տիպարներ գիւցաղնային շփարներով պճնելու փորձութեան կը հակադրուէին իրապաշտ գնահատանքին արժանիքները, որոնք կրնային աւելի խորունկ ու զեղեցիկ արուեստի գործեր ստեղծել: Որովհետեւ սպորուած կեանքը եւ անոր ճշմարիտ փերաբաղաւորման ամենէն կենսալի տարրերը կ'ընծայէին, գերազանց սրակով վէպեր արտադրելու համար: Եւ մեր գրոյցները, աշխոյժով ու անձկութեամբ համակուած, կ'ընդգրկէին այդ հակառակայ մարդերը, **երբեմն** կրքոտ վէճերու փոխուելով:

Յայտնօրէն, «ազգային աւանդոյթ»ները տարագ ու բովանդակութիւն փոխեցին խորհրդահայ գրականութեան մէջ, բայց նոր կաղապարներ կարծրացնելով: Նախորդ սերունդներու գրողներուն մշակած նիւթերուն տեղերը գրաւեցին զործարանն ու երկկարակայանը, համայնական գաշտերն ու ջրանցքները, եւ սրմնայիրը, բաժանմունքի

անօրէնր, հստագործն ու քաղաքացիական կամ հայրենական պատե-
րագմի հերոսը, - բոլորն ալ կլանուած իրենց պաշտօնական գերերուն
և պետական ծրագիրներուն գերկատարման յորձանքին մէջ, ընթա-
ցիկ կարգախօսներուն ներշնչած ուղեցոյցներով: Եւ առիթով մը երբ
կարծիքս ուղեցին՝ ըսի:

- Իրենց ժամանակի ձգտումներն ու պահանջները ցոյացնող այդ
գործերը կարելոր կին հարկաւ, նոյնիսկ անհրաժեշտ: Վերջապէս՝
գրականութիւնը ժողովուրդին առօրեայ կենցաղը պիտի պատկե-
րացնէ, անոր գարգանայուն և վերափոխուելուն տարրեր հան-
գըրուանները պիտի արձանագրէ: Եւ խորհրդահայ արձակը գեղար-
ւեստօրէն վերարտագրած է հասարակութեան տարրեր խաւերուն ազ-
րելակերպը: Բայց առաւելագէս՝ անոր ստեղծած տիպարները կ'աշ-
խատին, կը շարժին, կը մտածեն իրենց արտաքին շրջապատին փչ մը
ցուրտ ու մեքենական ճնշումներուն տակ, - այդ մարդոց ու կիներուն
ոգեկան ապրումներէն և անձնական խռովքներէն, անոնց տաներէն
ու ննջարաններէն դուրս: Երանի՜ թէ մեր հայրենի փրկագիրները
նաեւ արամադիր ըլլան և իրենց գրական երկերուն մէջ վերատեղծեն
քաղաքի և գիւղի բնատիւրներու և անոնց անպամներուն ներքին
կեանքերը, թէկուզ նոյն արտաքին շրջապիծերէն ներս:

- Բայց մեր խորհրդահայ արձակում կան այդ տեսակի յաջող
էջեր, գուցէ ո՛չ բաւական առատ, և - ձեզ անձանօթ, գիտե՛լ տուա
գրող մը:

- Անշուշտ որ կան և ես հաճոյքով կարդացեր եմ գանձը, յա-
րեցի, - սակայն կարծես անոնք օժանդակ ատագծ են, տեսակ մը գրա-
ւիչ շրջանակ, կեդրոնի նիւթին կամ պատկերին ծանրութիւնը մեղ-
մելու համար: Իմ ըսածս այն է, որ անկասկած խորունկ սէրեր ու
կարօտներ կան, նախանձներ ու քէներ կան, և գրկանքներ, հոգի ու
առաջատանքներ կան ամէն տարիքի այրերու և կիներու ապրում-
ներուն մէջ: Ատոնք զուտ անձնական յոյզեր ու վիշտեր են, երազ ու
մորմօք են, որոնք որեւէ կապ չունին պետական ծրագրի կամ կու-
սակցական ժողովի, և կենցաղային ճոխ կամ խոնարհ պայմաններու
հետ: Կարելի է յորինել փրկային նկարագրիներ, որոնք մարմնա-
ւորեն հակադիր յուզումներու և տենչերու բախումներուն արաման
և ապրին որպէս մարդկային ամբողջական արարածներ: Անոնց մի-
ջավայրը կրնայ դարձեալ նոյն ազգային և ընկերային շրջապատը
դառնալ, բայց միայն իրրեւ օժանդակ նպաստ: Այն ատեն, կը խոր-
հիմ, Երեւանի քաղաքացի և Մեղրաձորի գիւղացի հայերը կը վերա-
փոխուին նաեւ տիեզերական մարդկային էակներու: Պայմանով որ
կենդանի երանգներով և իրենց ցաւագին, զուարթ կամ գաւիշտա-
կան գիծերով և հաւատարմօրէն նկարուին մշակուած տիպարները և

հասարակութեան բոլոր խաւերը վերապրին անոնց մէջ, իրենց հարա-
գատ, տարերային, կենսայի յաւերժութեամբ: Այն ատեն, ապագայ
սերունդներն ալ պիտի կրնան աւելի յիսպէս բմբունել, ուրեմն աւելի
արգարօրէն գնահատել այն հոյակապ զիւցաներգութիւնը, թէ և
չազախուած նաեւ կտկիծներով ու տառապանքներով, որուն շնորհիւ
մեր հայրենի ժողովուրդը վերակերակց ինքզինք: Եւ հայոց վերածը-
նուցին այս հրաշալի իրողութիւնը կարելի է ճշմարտօրէն պատկե-
րացնել, ներկային ու զայիք դարերուն համար՝ միայն հօր ու
բոլորեւորակ գրականութեան մը մէջ:

Մտորդահայ արձակի որակին ու ծաւալին չուրջ տարակարծու-
թիւնները մեզմ են, թերեւս՝ որովհետեւ հակօտնեայ գիրքեր չկան
փրկական գէժերու միջեւ, - ինչպէս կան, օրինակ, նկարչութեան
մարզին մէջ, քարթիւմ տաղանդով օժտուած և ինքնուրոյն սօճերով
պարտադրող նկարիչներու յայտնութեամբ:

Բանաստեղծութեան ասպարէզին վրայ աւելի յստակ կին ներ-
շնչումի ու ճաշակի անջատման գիծերը, որովհետեւ այդ մարդին
մէջ աւելի բազմաթիւ են ինքնատիպ, փայլուն տաղանդով բեղմնաւոր
գրողներ: Եւ դարձեալ, կը խօսէինք ու կը փիճէինք երկչ, միջին տա-
րիքի և երիտասարդ բանաստեղծներու մշակած նիւթերուն և լեզուա-
կան տարազներուն մասին: Ոմանք կը պնդէին, թէ նորահասներ
պէտք է հաւատարիմ մնան արդէն զստականի փառքով պսակուած
գէժերու «ազգային աւանդոյթ»ներուն, և իրենց արուեստները
զարգացնեն անոնց ծիրէն ներս, հայկականութեան դրոշմը անազարտ
պահելու համար:

Իսկ երիտասարդ գրողներ ջատագով կը կանգնէին, որովհետեւ
կը կիրարկէին բովանդակութեան մասնակի և ձեւի ամբողջական
խզում մը այդ ստանդութեան, - ուրեմն՝ Ռաֆայէլ Պատկանեանի,
Յովհաննէս Յովհաննիսեանի, Յովհաննէս Թումանեանի, Աւետիք
Իսահակեանի և անոնց յաջորդներուն բացած քերթոցական ուղի-
ներէն: Իմ պաշտպանած տեսակէտս երեւութական հակասութիւն մը
կը պարզէր, որովհետեւ մինչ տարիքով երկնցներուն գասին կը պատ-
կանէի, բայց համոզումով «նորարար»ներու և անոնց գրական փոր-
ձարկութեանց համակիր կը յայտնուէի: Թերեւս այդ պատճառով՝
ուղեցին որ աւելի պարզարանէի գաղափարներս: Եւ ըսի:

- Գրականութեան մէջ, իմ կարծիքովս, չեն կ'ոտար գոյութիւն
ունենայ «ազգային աւանդոյթ»ներ, ինչպէս օրինակ՝ Գլխան առաս-
պելներու, պարերու, հանդերձներու, բարբառներու մէջ, որոնք ժո-
ղովուրդը կը ստեղծէ ու կը զարգացնէ յաջորդական սերունդներու
հաւարական մասնակցութեամբ: Մինչդեռ գրական երկերը, արձակ
թէ քնարական, զուտ անհատական յորինումներ են, որոնց կա-

ուսցուածքին մէջ միակ ազգային ատաղձը գործածուած մայրենի լեզուն է, իբրև արտայայտութեան միջոց: Իսկ քերթուածներուն նրբերը, յանգային ու վանկային կերտումի եղանակը, կամ ոճային պատկերներու իմաստին ու արուեստին որակը, ամբողջապէս կը բր-խին բանաստեղծներու խառնուածքէն, ճաշակէն եւ մանաւանդ՝ տա-ղանդին ծաւալէն: Այս տարրերը բացարձակօրէն անձնական բնոյթ ունին, այդ պատճառով կը յայտնուին իրարմէ տարբեր գեղեցկու-թեամբ եւ պէտք չէ ենթարկուին «ազգային աւանդոյթ»ներու կա-պանքներուն, այսպէս կը գտնան անոնց սժգոյն ու տխրեց չհակ-ւողները: Իրողութիւնը այն է, որ հայ մեծագոյն բանաստեղծները կողագարներէն յաջողեցան ձերբագատուիլ եւ յայտնուիլ ինքնատիպ արուեստով: Բայց նոյն ատեն իրենք պարձան «ազգային աւանդոյթ»-ներ, որոնց ազդեցութեան կաշկանդումներէն բարեբախտարար խու-սափեցան յաջորդ սերունդներու արուեստագէտ գրողները:

Պահ մը վէճը տաքցաւ երկու հակադիր կողմերուն միջև: Իրենց վաստակաւոր անցեալով հպարտ գրողներ կը քատագովէին նա-խորդ գասական մեծերու կերտած գրական աւանդութեան հմայքն ու բարերար գորութիւնը, իբրև ներշնչումի աղբիւր եւ ստեղծագոր-ծական ուղեցոյց նորերուն համար: Իսկ երիտասարդները կ'առար-կէին, որ իրենք խոր գնահատանքով կը մեծարեն անոնց ոգիի ու միտքի ժառանգութիւնը, բայց կը նախընտրեն ազգային նայիլ եւ ինքնուրոյն ուղիներով բնթանալ, նոր արժէքներու իրենց փնտրու-տութիւն մէջ:

- Ուրեմն դուք չէ՞ք կարծում, որ «ազգային աւանդոյթ»ների հաւատարիմ մնալը կենսական մի պայման է մեր նորահաս գրողների համար, եթէ նրանք բնուցական պիտի լինեն բարձր որակով գրա-կանութիւն ստեղծել, հարցուց տարեց գրողէս մը յուսախար չեղտով:

- Նա աւելի համաձայն է, որ մենք գրենք մեզ հարագատ մտու-րումների մասին, մեր սեփական, թէկուց ո՛չ պարզարուն սճերով, յարեց երիտասարդ բանաստեղծ մը:

- Ես պարզապէս կ'ուզեմ դիտել տայ, բսի, թէ որեւէ ժողովուրդի գրականութեան մէջ չկան «ազգային աւանդոյթ»ներ կոչուող շափա-նիչներ: Ո՛չ Շէլլերի ու Տրոյսի, ո՛չ Թոլստոյ ու Տոստոյեւսկի, ո՛չ Հիւլո ու Պալգաք, ո՛չ Տանթէ ու Կէօթէ, ոչ այ Տրայգրր ու Ֆոլքնրը ճանչցած են եւ ենթարկուած՝ որեւէ ազգային աւանդութեան: Ճիշդ ատոր հակառակ՝ բազմաթիւ գրողներ յաճախ շատ աւելի հարագատ են ուրիշ ազգերու որոշ գրողներուն՝ քան իրենց սեփական ժո-ղովուրդին նոյնիսկ ժամանակակից գրողներուն: Մեր եզրիչ Չա-րենցը, օրինակ, իր բանաստեղծութեան խորքով ու տարագրով աւելի

մտ է Ուիթմընին ու Մայակովսկիին, քան իրեն գաղափարի ընկեր վահան Տէրեանին կամ... Միտաք Մեծարենցին: Մեր գրականութեան մէջ չկան «ազգային աւանդոյթ»ներ, եւ եթէ ըլլային՝ անկասկած որ ժխտական պիտի գտնար անոնց արդիւնքը, որովհետեւ անոնք ներ-չընչումի կապանք եւ կառուցման կողագար պիտի պարտադրէին նորահաս գրողներուն: Ես կը հաւատամ, թէ ամէն իրապէս տաղան-գաւոր արձակագիր ու բանաստեղծ, (եւ նկարիչ, եւ երաժիշտ, եւ գերասան) ինք կը կերտէ իր սեփական «աւանդոյթ»ը, որ միայն իրենք կը մնայ: Ընդունուած «նուիրական» ճամբաներէ գարտուգումներ եղան, իրենց գմայլելի երկերով, - Նարեկացին, Սայեաթ-Նոփան ու Արտեմանը, եւ Թումանեանն ու Իսահակեանը, եւ վահան Տէրեանն ու Չարենցը, - որոնց վաստակները, յաջորդական կարգով, նուիրա-գործուցան որպէս «ազգային աւանդոյթ»ներ: Իսկ անոնցմէ ետք, անոնց աւանդութեան ճնշումներէն ձերբագատ, նոր ու յանդուգն որոնումներով եւ ինքնուրոյն տաղանդներու պողաւորումով մեծար-ժէք բանաստեղծութիւն մը կերտեցին Պարոյր Սեւակ, Գէորգ Էմին ու Միլիա Կապուսիկեան, եւ վահան Գալեան, Յովհաննէս Շիրազ, Մարո Մարգարեան եւ ուրիշներ: Արեւմտահայ բանաստեղծութեան մէջ, նախորդներու պարբնած «ազգային աւանդոյթ»ներուն կապանք-ները խզելով՝ գրական նոր ու բեղմնաւոր ծաղկաստաններ մշակեցին Պետրոս Գուրեան, Միտաք Մեծարենց, Դանիէլ Վարուժան, վահան Թէքէեան եւ ուրիշներ:

- Բայց մեր նոր բանաստեղծներէջ շատերը գրում են անփոյթ եւ անճաշակ, գանգատեցաւ բարկացած ձայն մը: Նրանք ուզում են նորարարի համբաւ շահիլ, եւ վերցնում են մի սովորական նախա-դասութիւն, նրա բառերը քմահաճ կարգով շարում են իրար տակ: Նրանց սուղերի մէջ չկա պարոզ գանել ո՛չ խորհուրդ, ո՛չ յուզում, ոչ էլ լեզուի գեղեցկութեան մի փշրանք: Ի՞նչ անենք. չէնց առաջին ազգայրած պրակից նրանց համար փառքի պատուանդան կառուցե՞նք:

Բոյորս ինչպայիւր եւ արամագրութիւնները ջերմացան: Ես փոր-ձեցի եզրակացնել.

- Լա՛ւ է, որ նորագոյն բանաստեղծներ կը ձգտին «նորարար» գտնալ: Ատիկա կը նշանակէ, որ անոնք ստեղծագործական գեւ-անձակ դաշտեր կը փնտռեն եւ անոնց տանող անկոխ արահետներ կ'ու-ղեն բանալ: Հարկաւ յանդուգնութիւն է որոնելու եւ յայտնագործելու իրենց սենյոր, բայց այդ կիրքը անհրաժեշտ է, որ անոնք կարենան արուեստի նոր բարձունքներ նուաճել: Վերջապէս՝ բնութիւնը մեր շուրջ անհուն ու կախարդական գեղեցկութիւններ կը պարզէ: Իսկ ժարդկային ոգին ու միտքը իրենց սկրբերով ու վիշտերով, եւ իրենց կարօտներով ու սուսայտանքով, նաեւ իրենց սղմտա անկումներով ու

մտեմ խոյանքներով անծիր մրգաստան ու մացառուտ կը հանդիսանան, որոնց խորը ճշմարիտ բանաստեղծ մը պէտք է մխրձուի ու խուզարկէ, անոնց կենդանի ահօսներէն իր նիւթերը քաղելու համար: Բայց մէկ պայմանով, - որ ամէն քերթուած, նոյնիսկ ամէն քառեակ իմաստ մը ունենայ, յոյզ կամ գաղտնար արտայայտէ, ոճային նուազ մը, կամ բառակերտ պատկերի անակնկալ մը քողագերծէ: Կը կարծեմ թէ ամէն նորահաս գրող պէտք է ընդունի պարզ ճշմարտութիւն մը, որ միջին ընթերցողը իրեն չափ գատողութիւն ու ճաշակ ունի: Ուրեմն ինք պարտաւոր է բաւարար խորհուրդ ու շնորհք խաացնել իր առեւտուն մէջ, զանոնք կարգալու ճիգը վարձատրելու չափ: Յաւալի է անշուշտ, որ Հայաստանի եւ սփիւռքի մէջ կան շարք մը գրողներ, տաղանդէ եւ խոնարհութենէ զուրկ երիտասարդ տղաք ու աղջիկներ, որոնք բանաստեղծ կոչուելու տենչէն բռնուած՝ կը յամառին ստանաւոր արտայրել: Անոնք արձակ պարբերութիւն մը կը կարատեն երկար ու կարճ առեւտու եւ ինքնախար պատրանքը կ'ունենան, թէ ինքնաստիպ քերթուած մը յօրինել են: Անոնց ցուցադրած իրական տարբերութիւնը այն է սակայն, որ անիմաստ, ցամաք, յաճախ եղկելի վրիպանքներ են, որոնց խեղճութեան վրայ դժուար է նոյնիսկ ծիծաղիլ: Քիչ մը աւելի խտտադաս՝ գնահատումով գանձեր չապել՝ իրական նպատակ մը պիտի ըլլայ հայ գրականութեան եւ թէ այդ մշտապէս սկսնակ գրողներուն համար:

Մեր գրողներէն ու վէճերէն ետք բոլորս կը համաձայնէինք մեզ խոսովոյ հիմնական հարցերուն շուրջ, որովհետեւ ամէնքս այ կը ցանկայինք որ աւելի կենտոնակ ու բարձրորակ զարգանայ հայ գրականութիւնը ամէն տեղ: Եւ սփիւռքի թէ հայրենիքի մեր երիտասարդ բանաստեղծները ազատօրէն արձարձեն նոր յուզումներ ու պեղեն նոր մտորումներ, բայց զանոնք արտայայտեն իմաստի յստակութեամբ եւ սճի ու պատկերներու ներդաշնակ յօրինուածքով: Որովհետեւ «նորարար»ին բերած խորքի եւ ձեւի որեւէ նորութիւն կ'արդարանայ միայն այն ատեն, երբ ան իր բովանդակութեան ու տարազի արուեստին խորութեամբ կը յաջողի գերազանցել, կամ գոնէ հաւասարիլ նախորդ չափանիշներուն բարձրութեան:

- Յանկարծ միջին տարիքի գրող մը դարձաւ ինծի.
- Խնդրեմ, ինձ թոյլ տուէք ասել, որ ես խորը հիացումով ընթերցեցի ձեր վերջին երկու գրքերը, մին՝ «Երկար Գիշերիկն Մէջէն» վէպը եւ միւր՝ «Խոռեք»ի երկրորդ հատորը: Եւ խոստովանում եմ, որ իսկապէս նախանձում եմ ձեզ:
- Բայց ինչո՞ւ համար, հարցուցի զարմանքով:
- Դէ՛հ, նրանք շատ յաջող գործեր են, էլի՛, եւ բացի զրանից զուր ձեր ուղած ժամանակ կարող էք ձեր մի գիրքը տպագրել տալ:

Իսկ մենք այստեղ կարգի ենք սպասելու:


- Ատիկա պատկերին ձեր կողմէն դիտուած երեսն է միայն, իսկ մեր կողմէն...
- Ի՞նչպէս, նոյնը չի՞:
- Անշուշտ ո՛չ... որովհետեւ իրողութիւնը բոլորովին տարբեր ու մոռալ է սփիւռքահայ գոյավիճակին մէջ: Տեսէ՛ք. հոս ամէն քանի մը տարին անգամ մը ձեր մէկ նոր հատորը կը տպագրուի, կամ նախորդ մէկ գիրքը կրկին կը հրատարակեն, միշտ պետական ծախսով: Եւ այն ալ 20,000, կամ 30,000, մինչեւ 50,000 օրինակի ապշեցուցիչ քանակով: Դուք լիապէս կը վարձատրուիք անոնց փոխարէն, եւ ո՛վ հրաշալի հէքեաթ, բարեկեցիկ կենցաղ մը կ'ապահովէք ձեզի համար ձեր գրիչին վաստակով:
- Իսկ ձեզ մօտ այդպէս չի՞, տարակոյտով հարցուց ան:
- Ա՛հ, մեզ մօտ... յարեցի դառն ժպիտով: Բայց հարկաւ չէ՛...: Սփիւռքահայ իրականութիւնը բոլորովին եւ եղբրականօրէն տարբեր է, սիրելի գրչեղբայր: Դուրսը, գաղութահայ ամէն գրող նախ պարտաւոր է ըլլալ գործաւոր կամ խանութպան, ուսուցիչ կամ խմբագիր, իր եւ ընտանիքին ապրուստը հոգալու, կամ հանրային ծառայութեան պարտքեր հատուցանելու համար: Յետոյ ան իր խոնարհ աշխատավարձէն պէտք է բաւարար գումար խնայէ, հինգ-տասը տարին անգամ մը իր մէկ հատորը հրատարակել տալու համար: Եւ հրաշք պիտի ըլլայ. եթէ գիրքին վաճառքէն ստանայ գոնէ կէսը անոր տպագրութեան ծախքին, որ ինք ստիպուած է հոգալ: Իսկ երկրորդ տպագրութեան որեւէ հատորի... ասիկա երազային զարտուղութեամբ մը միայն կրնայ պատահիլ արտասովոր մէջ:
- Եւ ինչն էլ զան վաս ե՞ն սփիւռքահայ գրողները պայմանները, շատ ան արտասովոր սխալ շնչումով մը:
- Մեր պրոֆիւնն էլ նշան բուր չի. էլի. ընդմիջեց ծանօթ արձակուրդ մը: Ի՞նչ պրոֆիւն տպագրեցին մի երկու-երեք տասնեակ հազար սիրումով: Եւ ի՞նչ պատահեց: Մի շարքում բոլորը սպառուեցին եւ պատանդում ո՛չ մի սրբնակ շմաց: Իսկ գիրքը ինչ: Վաճառորդներ իմ էլ պրոֆիւն ծախքն էին «տեղանի տակից» կամ «սու շուկայում», նրանց գնորդ քաղնապատիկ գանձելով: Մա խուլիգանութիւն չի՞...:
- Ան շուտան նայեցաւ ինծի, մինչ ես գուարթ քրքիջով կը խընդայի եւ աչքերէս իջնող ծիծաղիս արցունքները կը սրբէի:
- Ներքէ՛ք. ինչպէս, ըսի շուրջի զարմացած դէմքերը դիտելով: Եւ զարձայ զանգատող գրազէտին.
- Ա՛խ, այո՛. անշուշտ, ասիկա սոսկալի՛ «խուլիգան»ութիւն է, բայց սքանչելի՛ տեսակէն... երանի՛ թէ ասկէ պատառ մը մենք ունենայինք սփրւաքի մէջ: Դուք կը բողոքէք, որ ձեր գիրքերը բիրտաւոր

օրինակներով կը ծախուին երկու-երեք օրէն եւ բողոքովին կը սպառին, եւ սեւ շուկայի վրայ կամ սեղանի տակէն բարձր գիներով վաճառուելու չափ արժէքաւոր ապրանք կը դառնան... երբ դուք արդէն ամբողջապէս գանձեր էք անոնց փոխարժէքը Պետհրատէն, այնպէս չէ՞: Իսկ արտասահմանի մէջ, երեւակայեցէ՛ք, մենք մեր վիպական եւ բանաստեղծական հատորները մերմա՛կ շուկայի մէջ եւ սեղաններու վրայէ՛ն կ'ուզենք ձրի բաշխել եւ դարձեալ ընթերցող չենք գտներ...: Ողբերգութի՞ւն է թէ գաւե՛շտ: Քիչ առաջ դուք ալ ձեր հիացումը յայտնեցիք սա «Խոհեր» գրքիս համար... է՛ լաւ, պիտի կրնա՞ք հաւատալ, որ այդ հատորէն տպել տուած եմ միայն 1000 օրինակ, 4-5000 տողարի տպագրական ու յարակից ծախքերով: Անոնցմէ 200 հատ նուէր զրկեցի գրողներու, թերթերու եւ հիմնարկներու. 200 օրինակ ծախուեցաւ, իսկ մնացեալ 600-ը ծրարներով դիզուած կը մնան մեր տան անկիւնները, մեռնելէս ետք ոեւէ աղբահաւաքի՞ յանձնուելու համար:

- Իսկապէս էք ասո՞ւմ... , յարեց ան խղճահար, յուզումէն դողացող ձայնով:

- Այո՛, դժբախտարար իսկապէս եմ ասում, խնդալ փորձեցի ես: Բայց դուք մի՛ տրտմիք այդպէս: Սփիւռքահայ գրողներ կը տրտնջան, եւ իրենց գաղթականի ճակատագիրը կ'անիծեն անզաղար այս ողբերգական վիճակին համար: Սակայն համակերպած անոր ամօթին ու զրկանքներուն՝ անոնք կը շարունակեն արտադրել, կարծես կամաւոր թիպարտներու հոգեբանութեամբ:

Եւ եղբայրական սրտառուչ մաղթանքներով՝ բաժակները բարձրացան սփիւռքահայ գրողներու «պայծառ կենացը»:



Փափաք յայտնած էի, որ առիթ ստեղծուէր եւ կարենայի այցելել տարաբախտ Պարոյր Սեւակի շիրիմին, իր տանը պարտէզին մէջ, Երեւանէն բաւական հեռու գտնուող Չանախչի գիւղը, նոր կոչումով Սովետաշէն: Եւ այդ առաւօտ քանի մը գրողներ ինքնաշարժով մեկնեցանք դէպի ուխտավայր դարձած դամբարանը, որ կը հանգչէր անլոռի զանգակատան մը եղերաշունչ զօղանջին տակ: Մեզ կ'առաջնորդէր բանաստեղծ Լեւոն Միրիջանեանը, որուն ջերմ ու հազորգական խառնուածքը կը յայտնուէր նաեւ իր գրական շնորհներուն մէջէն:

Ճամբան երկար էր եւ կը մագլցէր ողորկ բլուրներու կողերէն վեր, կ'անցնէր լեռներու միջեւ սեղմուած հարթ հովիտներու վրայէն, կը դառնար գագաթի մը ետեւ, ուր դիմացը կը բացուէին նոր կատարներու հորիզոններ: Մեր շուրջի համայնապատկերը յարատեւ կը

փոխուէր եւ ամէն տեսարան կը պարզուէր դաշնաւոր կամ ահարկու, բայց միշտ վեհաշուք գեղեցկութեամբ: Իսկ մեր զրոյցը աշխոյժ ու խանդակաթ ջերմութեամբ կը տարածուէր հայ գրականութեան լայն դաշտերուն վրայ, մինչ ես գմայլանքով կը դիտէի սուբացող ինքնաշարժին երկու կողմերէն մինչեւ մուժապատ հեռուն սփռուող գորշ, ոսկեգոյն կամ կանաչ կախարդանքը:

Եւ չեմ գիտեր, ուրկէ՛, հեթանոս մտածում մը գրաւեց զիս: Կ'երեւի արարչագործութեան անստոյգ օրերուն, խորհեցայ, երբ այս երկրագունտին լման քարտէզը տակաւին չէր պատրաստուած երկրախոյզներուն կողմէ, ամենատես Եհովան իրեն ծանօթ պզտիկ աշխարհին ամենէն գեղատեսիլ հատուածը փնտներ ու գտեր էր Հայաստանի մէջ: Եւ հոն հաստատեր էր Եղեմը, ուր կաւէ, շունչէ եւ կողոսկրէ կերտեր էր մեր նախածնող Աղամն ու Եւան: Յետոյ, աստուածային անողորմ քմայքը զանոնք արտաքսեք էր դրախտէն, որովհետեւ բանաւոր դատուումով մը՝ անոնք յանդգներ էին ուտել խորհրդաւոր խընձորը, որ արտօնուած պտուղ էր բոլոր անասուններուն համար, բայց արգիլուած էր իրենց, եւ ի՞նչ իրաւունքով...:

Շատ հաւանաբար ուրեմն, Աղամ, Եւա եւ գոնէ նահատակ Աբէլ թաղուած ըլլալու են դրախտային Դիլիճանի շրջակայքը: Եւ եթէ Հայաստանի ճարտար գիտնականները պեղումներով յայտնաբերեն անոնց աճիւնները՝ կարելի կ'ըլլայ միջագոյնի շուկաներու վրայ զանոնք փշրանքներով վաճառել աղամանդէն շատ աւելի բարձր գիներով, եւ մեր երկրին համար ապահովել եկամտաւոր եղեմային աղբիւր մը: Ո՞վ պիտի համարձակի կասկածիլ Աստուածաշնչական այդ վկայութեան վրայ: Անհամեմատ առաւել համոզիչ չէ՞ հայկական հազարամեայ վանքի մը շրջակայքը փորել եւ լոյսին հանել Աղամի, Եւայի եւ եղերաբախտ Աբէլի ոսկորները, - քան մագլցիլ Արարատի անմատչելի կատարը եւ հոն Նոյի Տապանը փնտռել, ինչպէս կ'ընեն քրիստոնեայ հաւատացեալներ կամ... բախտախնդիրներ, գոնէ հարիւր տարիներէ ի վեր:

- Դուք ծիծաղում էք, երեւի մի գուարթ դէպքի վերյիշումի՞ց, մեզ էլ կը պատմէ՞ք...:

- Չէ՛, անմիտ քան էր... պարզապէս կը հիանայի մեր շրջապատին անսովոր գեղեցկութեան վրայ:

Ճամբուն աջ կողմէն դարձար՝ բլրակներ, սարաւանդներ ու կիրճեր կ'երեւէին: Անոնց վրայ մարդկային եռուզեռ տեսանք, ձիաւորներու արշաւ, վրաններ, կազմածներ, որոնք դժուար էր գտորոշել հեռաւորութեան մէջ: Բայց նոյնիսկ իրենց ազօտ պատկերներով անոնք հպարտութիւն ու հրճուանք կը բերէին մեզի: Հոն վարը, Հայաստանի շարժանկարի հիմնարկը «Միխայիլ Սպարապետ» ժապաւէնը

կը հանէր, Սերո Խանգազեանի համանուն պատմական վէպին վրայ: Ան դիւցազներգային բացառիկ շարժանկար մը պիտի ըլլայ, բաւական երկար, երկու յաջորդական կէտերով ցուցադրուելու համար:

Մեր խօսակցութիւնը ամէն պարբերական շեղումէ ետք կը վերադառնար Պարոյր Սեւակին, անոր կեանքին, բանաստեղծութեան հարուստ վաստակին եւ վաղաժամ, արկածահար վախճանին: Նման տխուր վերջիչումի մը պահուն էր, որ մեր ինքնաշարժը կանգ առաւ ճամբուն աջ եզերքը, բացատի մը առջեւ: Մենք իջանք կառքէն եւ յուղարկաւորի ցաւագին մորմոքով նայեցանք յուշարձանի սալին, ուր քանդակուած էին Պարոյր Սեւակի անունը եւ մահուան թուականը, - 17 Յունիս, 1971: Այս վայրին վրայ էր, որ իր վարած ինքնաշարժով ան փորձեր էր անցնել առջեւէն գացող բեռնատար կառքին քովէն եւ ածապարանքին մէջ ձախող շարժումով մը իր ինքնաշարժը չըջուէր էր ուղիէն դուրս ու ցած: Աղէտալի արկածին գոհուել էին ինքը եւ կինը, իսկ գրեթէ անվնաս ազատուելը էին ետեւը ծուարած իրենց երկու զաւակները:

Տարիներ կը բաժնէին մեզ այդ շարաշուք օրէն: Բայց անոր պատուած վէրքին կոտտանքը դեռ կը գալարուէր մեր սիրտերուն մէջ: Պարոյր Սեւակ ծնած էր Պարոյր Ռաֆայէլ Ղազարեան՝ 1924-ի Յունուար 28-ին, ուրեմն ապրել էր միայն 47 տարի եւ նոր հասեր էր իր բանաստեղծական փարթամ տաղանդի պտղաւորման շքեղ բարձունքին: «Մերաճում ե՞մք, Պարոյր Սեւակ», երգեր էր կանխահաս աստուանքով, կարծես նախագգալով, թէ վերահաս, վայրագ դիպուած մը թոյլ պիտի չտար, որ ինք աւարտէր իր կեանքին նոյնիսկ երիտասարդութեան բաժինը: Մտաբոլորդ դարու ստեղծագործական շրջան մը ապրեցաւ ան: Եւ անոր քերթուածներուն նշանակալի ծաւալը, եւ անոնց նիւթերուն ու կառուցուածքին ներդաշնակ ընդելուզումը կերտեցին իրագործուած արձեւեստի գերագանց ժառանգութիւն մը, որ ամէն նոր երկի հետ աւելի կը խորանար, կը սաւառնէր ու կը գեղեցկանար:

Արեւմտահայ ժողովուրդն ու հայրենիքը պատուհասող ահռելի եղեռնը եւ ազգային փլուզումը Պարոյր Սեւակի էութեան ու բանաստեղծութեան մէջ զարձան մղձաւանջներ, որոնց երկունքէն իր քանի մը ամենէն քնարական ու պայթուցիկ եղբերգութիւնները ծնան: Ատկէ՝ նաեւ մարդկային էակներու տառապանքին ու կարօտներուն հանդէպ անոր կարեկից սրտագեղումը, անարդարութեան ու բռնութեան դէմ՝ անոր ընդվզող ոգիին խոյանքը, սիրոյ երազին ու եղբայրութեան գաղափարին համար՝ անոր աղօթաշունչ անդրանակները:

Պարոյր Սեւակի զաւանած տեսիլքներուն հաւատարիմ արտայայտիչն էր իր ոճը, - երբեմն հեզօրէն թաւալող, կամ անսանձ հեղե-

դատի նման շառաշուն, կամ շանթերու ճայթիւններով ճարճատող, - բոլորին մէջ պարզ, տարերային ու վարակիչ ուժգնութեամբ մը: Անհունօրէն կակճալի եղաւ Պարոյր Սեւակի վաղաժամ մահը, անոր տիրական անհատականութեան, եւ ներշնչող համբաւին ու մշտաթարմ տաղանդին կորուստովը հայ բանաստեղծութեան, մանաւանդ նորահաս սերունդին համար:

Մեր ուղեւորութեան վախճանին ինքնաշարժնիս կանգ առաւ մրգաստանի մը մուտքին առջեւ: Իջանք կառքէն ու քալեցինք դէպի երկյարկանի քարակերտ շէնքը, դարձանք անոր շուրջ եւ յետոյ առաջնորդուեցանք վերի յարկը: Հոն, ամէն սենեակի մէջ կը տիրապետէին Պարոյր Սեւակի անձն ու յուշերը, պատերուն վրայ յարգարուած անոր մեծ կամ փոքր լուսանկարներով կամ գծուած պատկերներով եւ սովորական առարկաներով: Կահաւորումը գեղջկական էր, անշուքօրէն խոնարհ, - պարզ աթոռներ, գրասեղան ու մահճակալ: Հիւրանոցին մէջ, փայտէ բազկաթոռին նստած էր տարաբախտ բանաստեղծին այեհեր մայրը, գլուխին լաշակով մը, որ հանգուցած էր կզակին տակ: Ան մանրակազմ կը թուէր եւ երեսները ակօտուած էին խորշումներով, որոնք խորացած էին իր ձեռութեան բեռէն, թէ զաւակին ողբերգական մահուան անսփոփ տուայտանքէն: Անոր ոտքերուն առջեւ ծունկի իջայ, երկու ձեռքերուն ոսկորները սեղմեցի ավերուս մէջ եւ ակնածանքով համուրեցի անոնց ճոթիկուած մորթը, եւ նայեցանք իրարու վիշտէ պղտորած աչքերով եւ արցունքի կաթիլներ յամբօրէն կը սահէին մեր այտերէն վար:

- Կարճ եղաւ Պարոյրին կեանքը, հազիւ կրցայ մըմնջել... բայց ի՞նչ փառքի անթառամ պսակ հիւսեց իր վաստակով: Այս բլուրներէն մինչեւ Երեւան, եւ մինչեւ Հայաստանի բոլոր քաղաքներուն ու գիւղերուն, եւ մինչեւ աշխարհի հեռաւոր անկիւններուն մէջ, ամբողջ հայութիւնը ձեզի հետ հպարտ եղաւ Սեւակի ծնունդին համար, եւ ձեր սուգին բաժնեկից կը մնայ անոր ծանր կորուստին հանդէպ:

Տրտում ժպիտի մը ստուերը անցաւ անոր դէմքին վրայէն, ան հեզօրէն շարժեց գլուխը եւ կոպերուն վրայի արցունքը թարթեց վար: Ես ելայ ոտքի: Կ'երևի ազգական հիւրեր ժամաներ էին եւ մեզի հրամցուցին պտուղներ ընդարձակ պարտէզէն, որ բանաստեղծը անձնապէս կը մշակէր, հաստատեցին: Յետոյ հրաժեշտ առնելով իջանք ներքեւ ու քալեցինք մինչեւ շիրիմը, ծածկուած տապանաքարին տակ, որուն վրայ ծիրանի ծառ մը իր կանաչ թեւերը կը տարածէր: Եւ պատմեցին, թէ Պարոյր Սեւակի հող թաղման տեսն, այդ ծիրանիէն լայն ճիւղ մը կտորեր ու ինկեր էր դամբանին վրայ, ապշութիւն ու երկիւղ պատճառելով բոլորին:

- Ա՛հ, ահա ի՞նչպէս կը ծնին առասպելները, յարեցի տխրօրէն:

Նորահաս բանաստեղծ մը այդ միջադէպէն թերեւս յուզիչ քերթուած մը պիտի յօրինէ օր մը: Եւ Սեւակի դագաղին վրայ այդ ճիւղին փշիւր պիտի յիշէ իբրեւ վկայութիւն մը, թէ երկնային ուժերը, կամ բնութեան տարերքն ալ մասնակից եղան հայ ժողովուրդի խորունկ վիշտին, որովհետեւ մեկնող ոգին մշտավառ բոց մը ժառանգեր էր հայոց հուրի եւ արեւի աստուածներէն:

Մենք պահ մը քալեցինք մրգաստանին մէջ, որուն բոլոր ծառերը անկած էր եւ զանոնք կը խնամէր Պարոյր Սեւակ իր սեփական ձեռքերով, անոնց աճելուն, ծաղկելուն եւ պտղաւորուելուն հրճուանքը վայելելու համար: Որովհետեւ, թուղթին վրայ ոգեղէն հրայրքով բանաստեղծելու տենդին հետ, հողին մէջէն նրկեղէն բերքեր արտադրելու հաճոյքը կ'ուզէր ապրիլ: Եւ թերեւս, ամէն անգամ որ կանգ էր առեր այս կատարին վրայ, բահի ու բրիչի աշխատանքին քրտինքը սրբելու համար իր ճակատէն՝ ան նայեր էր դէպի ձոր թաւալող գառիվայրին ու շուրջանակի բարձրացող բլուրներու գմայլելի համայնապատկերին, տուներու եւ ծառերու փունջերով գեղազարդ, եւ շշնջեր էր ինքնաբաւ երջանկութեամբ, - լա՛ւ է, բարի՛ է, գեղեցիկ է...:

Վերադարձի ճամբուն, մեր ժամերուն վրայ ծանրացող թախծը թեթեւցեր էր կարծես: Պարոյր Սեւակի շիրիմին ու տունին այցելելու էինք, անոր տիրական ներկայութիւնը զգացելու էինք եւ կը թուէր թէ ան տակաւին կենդանի էր մեզի հետ ու մեր մէջ, եւ այդ պատրանքէն փարատեր էր մեզ համակող ցաւը: Հիմա, ինքնաշարժին ձախ կողմէն դարձար, դեռ կը շարունակուէին մարդոց շարժումներն ու ձիւրորներու արշաւները, «Մխիթար Սպարապետ» ժապաւէնին համար:

Իսկ մեր գրոյցը միշտ կ'աշխուժանար գրական տարրեր հարցերու արծարծումին շուրջ: Դարձեալ խօսեցանք սփիւռքահայ գրողները ճնշող տաժանելի պայմաններուն մասին: Գիրքերու տպագրութեան նիւթական բեռներուն հոգը եւ հրատարակուած հատորներուն անվաճառ մնալու հոգերանական տուայտանքը՝ որ հիասթափման կ'ենթարկեն զանոնք, եւ շատեր կը նախընտրեն արտադրելի գաղբի, կամք ու տաղանդ անդամալուծող յուսալքումով մը, - ինչո՞ւ գրել, որո՞ւն համար, եւ ի՞նչ օգուտ, կրկնելով:

- Երանի՛ թէ, ըսի, Հայաստանի Գրողներու Միութիւնը առանձին յանձնախումբ մը կազմէ, որ սփիւռքահայ գրագէտներու արդէն տպագրուած գիրքերէն 1000 օրինակ առնէ եւ սպառէ հայրենիքի բնութեցասէր խումբերուն մէջ, որ շատ դիւրին պիտի ըլլայ: Ատիկա երկու կարեւոր նպատանք պիտի բերէ գաղութահայ հեղինակներուն: Մէկը այն՝ որ հոս ծախուած հատորներուն փոխարժէքով գոնէ կարելի կը դառնայ փակել անոնց տպագրական ծախքերը եւ միջոց բնծայել յաջորդ հատորի մը համար: Միւսը այն՝ որ կարգացուելու ասու-

գութիւնը կ'ոգեւորէ գրողը եւ կը ներշնչէ, կը մղէ ստեղծագործ նոր ճիգերու: Չէ՞ որ գրելու միակ արդարացումը եւ հեղինակ մը յօրինելու դրող գլխաւոր շարժառիթը ընթերցողի հասնելու յոյսն է: Անշուշտ սփիւռքահայ գիրքեր ընտրելու կերպը որոշ դժուարութիւն պիտի դիմագրաւէ, որ կարելի է լուծել, գոնէ միջին չափանիշներ որդեգրելով անոնց գրական ու գեղարուեստական արժանիքներուն համար:

Այդ եւ հետագայ առիթներով ուրիշ գրոյցներ ունեցանք այսպիսի ձեռնարկի մը բարերար արդիւնքներուն մասին: Նախ՝ գաղութներէն ընդունուած ամէն գիրքէ նոյնիսկ 1000 օրինակները պիտի կրնան անոնց հեղինակները ծանօթացնել հայրենիքի գէթ մտաւորական դասին, եւ սփիւռքահայ գրողներ պիտի գաղբին միայն հեռաւոր ու խորթ եղբայրներ ըլլալէ: Եւ յետոյ, քերթուածի, պատմուածքի ու վէպի այդ հատորները հաւանաբար գրական տարրերով նպաստեն, որ խորհրդահայ գիրը առաւել ճոխանայ ու զարգանայ, իր ոճային կառուցուածքին, բովանդակութեան ընդլայնումին եւ երկու բարրառներու միաձուլման մարզերուն մէջ: Սփիւռքահայ գրականութեան գէթքերուն եւ երկերուն ուսումնասիրութեան նուիրուած առանձին ամպիոնի հիմնումը եւ ընդհանուր համակրանքի վերաբերումը այս ծրագրին համար՝ պիտի կրնան հարթել անոր իրականացման ճամբուն վրայ ինկող ամէն վարչական խոչընդոտ:

Տխուր ապրումներով ու քաղցր յիշատակներով հարուստ օր մը իր մայրամուտին կը մօտենար, երբ մտանք Երեւան եւ խառնուեցանք փողոցներէն ու ծառուղիներէն յորդող երեք սերունդներու կենսայի յորձանքին ու մարդկային եւ մեքենաշարժ հեղեղի ժխորին: Անոնց հայրենի ոգին ու պապենական երազի մարմնացած պատկերը զիս կը պարուրէին կախարդող հմայքով մը, որուն մէջ ձուլուելու եւ անկանալու կարօտէն պղտորեցան աչքերս:

* * *

Մօտ տասնեակ մը գրողներ էինք այդ երեկոյ, խմբուած մտերմական ճաշասեղանի մը շուրջ: Դարձեալ մեր գրոյցները կ'ընդգրկէին գրական խնդիրներ եւ ազգային ընդհանրական հոգեր ու բաղձանքներ: Ամէն ներկայ իր կարծիքը կը յայտնէր համարձակ, յաճախ շեշտուած ուժգնութեամբ, որ երբեմն հակասեալ համոզումներու բուռն բախումին կը յանդէր: Բայց «թամատա»ն, միշտ ոտքի եւ կոնեակի լեցուն զաւաթը ձեռքին, կը խօսէր սրտազեղ բաժակաճառ մը, որուն տարրերակները յաջորդաբար կ'արտասանուէին նաեւ միւս հիւրերուն կողմէ: Մթնոլորտը ջերմ էր, հաղորդական, ուր ինքզինքս

եղբայրորէն հարազատ կը զգայի բոլորին հետ, նպատակի, իղձերու եւ գայիքի տեսիլքներուն մէջ:

Ուշ առեն, խորհրդահայ յայտնի գրագէտի մը մէկ հատորին շուրջ հանդարտ խօսակցութիւնը յանկարծ բռնկեցաւ դառն վէճի մը, «Քամատա»-յին եւ ուրիշ գրողի մը միջեւ: Բանակութիւնը ոչինչ ունէր անձնական, այլ կը մղուէր գրողի դերին եւ ազատօրէն արտայայտուելու իրաւունքներուն մասին, իբրեւ ուղեցոյց ունենալով իր խղճմտանքը, գատողութիւնն ու գեղագիտական ճաշակը: Սակայն սեղանապետը, որ կ'երեւի իր պաշտօնին պարտադրանքով, կոննակի բաժակը աւելի յաճախ վերցուցեր էր շրթներուն՝ բարկացաւ միւսին դիտողութեան դէմ եւ քանի մը վիրաւորական բառեր ըսաւ անոր: Մօտեցայ իրեն, մեղադրեցի ու փորձեցի հանդարտեցնել զինք: Յետոյ, երբ կը մեկնէր, գաւիթին մէջ իմ ցաւս յայտնեցի միջադէպին համար:

- Ծնորհակալ եմ, որ իմ տեսակէտս պաշտպանեցիր, ըսի, սակայն կերպով շատ անվայել եւ անարդար էր:

- Բայց նա չէր ուզում մեզ հասկանալ, էլի՛, յարեց ան բարկացած:

- Որովհետեւ մեզմէ տարբեր կը խորհի, պատասխանեցի: Եւ ան ալ մեզի չափ իրաւունք ունի իր տեսակէտը ջատագովելու, չէ՞: Մանաւանդ գրողներ պարտաւոր են յարգել իրենցմէ տարրեր, նոյնիսկ հակառակ մտածող գրչեղբայրներ եւ անոնց կարծիքները: Դուն մեզ բոլորս վշտացուցիր այդ վարմունքովդ: Եւ կը յուսամ առիթով մը ցաւ կը յայտնես անոր, այս պատահարին համար:

Յետոյ, հիւրանոցին մէջ մենք մեր գրոյցը շարունակեցինք մինչեւ ուշ գիշեր:

Յաջորդ օրը այցելեցինք բանաստեղծ եւ արուեստագէտ Մկրտիչ Հաճեանի եւ իր շնորհալի տիկնոջ նկարներու ցուցահանդէսին: Անոնք իրենց հետ Մեքսիկոյէն շուրջ երեսուն իւզաներկ պատկերներ բերած էին Երեւան, ուր անոնք չըմանակուած ու շարուած էին պատերուն վրայ: Խորհրդահայ գրող եւ արուեստագէտ գէմքերու հետաքրքիր բազմութիւն մը եկած էր դիտելու անոնց նկարները, որոնք ջերմ գնահատանքի արժանացան: Հաճեանները վաղեմի մտերիմ բարեկամներ էին ինձի եւ շատ ուրախ էին, որ այս ճանաչումը կ'ընծայուէր իրենց: Յուցահանդէսը սարքուած էր Հայաստանի Նկարիչներու Միութեան կողմէ, եւ բնականօրէն խօսուեցան փոխադարձ մեծարանքի ուղեբճներ: Մկրտիչ Հաճեան իր ինքնատիպ ոճով նկարած բոլոր պատկերները իբրեւ նուէր բաժնեց Երեւանի թանգարանին, արուեստագէտներու եւ բանաստեղծներու:

Սրահին մէկ անկիւնը, կարծես բնագրական մղումով, քանի մը

գրողներ խմբուեցանք իրարու մօտ եւ խօսակցութիւնը, հարկաւ Հաճեանի քերթուածներուն ու նկարներուն մասին էր: Հոն էին նաեւ նախորդ իրիկուան երկու վիճողները: Թագուն վախ մը համակեց զիս, - անոնք պիտի բարեւէի՞ն զիրար, թէ խոժոռ գէմքերով պիտի հեռանային իրարմէ: Այն առեն պարզուեցաւ սրտայոյզ երեւոյթ մը, որ խորապէս դրոշմուած կը մնայ միտքիս վրայ: Երէկուան «Քամատա»-ն յանկարծ գրկեց իր վիրաւորած գրողը, ջերմօրէն համբուրեց անոր երկու այտերը, եւ

- Երէկ երեկոյ ի գուր տեղ վշտացրի քեզ, մրմնջեց, ներողութիւն եմ խնդրում կոպիտ վարմունքիս համար... դէ՛, գիտես, էլի՛, էդ անիրաւ կոննակը...

- Ոչի՛նչ, հասկանում եմ, դու հոգ մի՛ անի... միայն, գրափոխարէն մի լա՛ւ պատմուածք գրիր, եւ ուրախ քրքջաց ան:

- Ա՛խ, ըսի երկուքն ալ գրկելով, իսկական գրչեղբայրները ասանկ կ'ըլլան: Բայց այս հաշտութեան «կենաց»-ն ալ անհրաժեշտ չէ քանի մը շիշ կոննակ փճացնել, կը յուսամ, աւելցուցի խնդալով:

Խոնարհութեան եւ ներողամիտ ոգիի այդ ազնիւ օրինակը, կը խորհիմ մինչեւ հիմա՝ զմայլելի ուղեցոյց մը կրնայ ըլլալ բոլոր մարդկային էակներուն համար:

ՀԱՒԱՔՈՅԹՆԵՐ ԵՒ ՀՐԱԺԵՇՏ

Ժամացոյցին սլաքները ո՛րքան անգթօրէն կը վազեն, կը մտածեմ ափսոսանքով, եւ կենսալի ցերեկը կը մթազնի ամուլ գիշերուան մը. եւ օրացոյցին թերթերը ի՛նչ անողորմ անփութութեամբ կը թափին վար եւ աշօրուան երջանիկ ներկան կը վերածեն երէկուան ալիւս յուշի ու ստուերի փոխուած անցեալին: Եւ ամէն բաղձացուած հանգիստմէ, ամէն պաշտօնական այցելութենէ ետք՝ տխուր անդրադարձում մը կը խռովէ զիս, թէ այո՛, տակաւին ա՛յնքան չխօսուած բռտեր ու չյայտնուած խորհուրդներ մնացին, ա՛յնքան չարտայայտուած զգացումներ ու չյագեցած կարօտներ մնացին: Թերեւս անոր համար, որ անհուն ծարաւ մը կ'արժարժուի հարազատ ժողովուրդին ու հայրենի երկրին սէրէն, որմէ բմպելը, հրճուանքի քաղցը երանութեան հետ՝ նաեւ երբեք չկշտանալու տուայտանքը կուտայ:

Երեւանի (եւ ամբողջ Հայաստանի) գիտական, մշակութային ու կրթական հիմնարկները հաստատուած են գեղակերտ ու մեծազիր շէնքերու մէջ: Ամէն գրասենեակի դրան վրայ կամ կողքին՝ արձանագրուած՝ ներսը գործող պաշտօնեային, - նախագահին, տեղակալին, տնօրէնին, վարիչին, օգնականին, քարտուղարին անունները: Եւ այդպէս, բոլոր յարկերու տարբեր բաժանմունքներուն համար: Հարեւանցի ակնարկով, աշխատանքի թափը կը թուի հանդարտ, անաղմուկ: Եւ դիտողը կը գարմանայ, թէ առանց տեսական արշաւի, առանց ժխորի անոնց գործելակերպով ի՞նչպէս այդքան ծաւալուն ծրագիրներ կը մշակուին եւ այդքան վիթխարի ձեռնարկներ կ'իրականանան քաղաքային կառուցումներու, ճարտարաբանութի հսկայաքայլ զարգացման եւ գրական գեղարուեստական ու մասնագիտական անհամար հրատարակութեանց մարզերուն մէջ:

Այդպիսի յանդուգն նախաձեռնութիւն մըն է բազմահատոր «Հայկական Սովետական Հանրագիտարան»ի գաղափարին յղանակն ու զայն գործադրելը: Անոր Ա. եւ Բ. հատորները տպագրուած են արդէն եւ Գ. գիրքը մամուլի տակ է, - միջազգային չափանիշով բարձրորակ համայնագիտարանի շարք մը, որուն պատրաստութեան տաժանելի ճիգերուն լծուած են Հայաստանի բոլոր ականաւոր գիտնա-

կանները: Անոր խմբագրութեան քանի մը անդամներուն հետ հանդիպումս խորապէս տպաւորիչ եղաւ: Երիտասարդական խանդով տոգորուած հմուտ մասնագէտներ, որոնք իրենց գերին համար ջերմեռանդ համոզումին կը միացնեն սրտառուչ խոնարհութիւն մը, երբ կը բացատրեն «Հայկական Սովետական Հանրագիտարան»ին բացառիկ արժանիքը, իբրեւ վաւերական գանձարանը հայ ժողովուրդի հարուստ մշակոյթին, վաղեմի դարերէն մինչեւ լուսաւոր ներկան ու մինչեւ յաւերժութիւն:

Երեք սիւնակնոց աւելի քան 700 էջեր կը պարունակէ ամէն հատոր եւ անոնց վրայ հազարաւոր պատկերներ, եւ գունատիպ քարտէզներ ու նկարներ: Անոր Բ. գիրքը տպուած էր 100,000 օրինակ, ահարկու քանակ մը յարաբերաբար հայոց համրանքին: Բայց տակաւին, անոնց այդ ահագին թիւը բաւարար չէր եղած ընթերցողներու յարածուն պահանջին ընդառաջելու համար:

«Հանրագիտարան»ին գլխաւոր խմբագրական խորհուրդին անդամներ են Հայաստանի բոլոր յայտնի գիտնականները ամէն սպարէզի մէջ: Եւ քանի մը տասնեակ այդ ականաւոր մասնագէտներէն բաղկացած երկու մարմիններուն կը նախագահէ Վիգոր Համբարձումեանը, համաշխարհային հոշակով աստղարնագէտը: Անոնցմէ դուրս՝ ուրիշ հարիւրաւոր գիտական աշխատակիցներ, իրենց մասնագիտական մարզերուն մէջ ինկող նութերու շուրջ, եւ գլխաւոր խմբագրութեան կողմէ յանձնարարուած երկար կամ կարճ յօդուածներ կը գրեն ու կը յանձնեն վարիչ մարմինին:

Չեռնարկը, իր հսկայ տարողութեամբ եւ բազմակողմանի արժանիքներով՝ իրապէս փառաւոր նուաճում մըն է Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիային եւ հայրենի պետութեան համար, - պատուարեք իրագործում մը, որ արդար պարձանքի իրաւունք պիտի տար շատ աւելի հզօր ու փարթամ երկիրներու:

Վարանումով հարցուցին, թէ Սփիւռքի հայերն ալ հետաքրքրօր էին «Հայկական Սովետական Հանրագիտարան»ի մասին: - Բայց ստիկ շատ աւելի՛ն, պատասխանեցի, բոլոր հայերը անխտուն հպարտութիւն ու հիացում կը զգային այդ հոյակապ գործին հանդէպ եւ բազմաթիւ դիմումներ կ'ըլլային մեզի, անոր հատորները ունենալու ջերմ փափաքով, յօժար վճարելու անոնց գիններէն բարձր գումարներ:

- Դէ՛, դրան կարիք չկայ, յարեց վարիչը ժպտելով, սփիւռքահայեր կարող են հանրագիտարանի ամբողջ շարքը ստանալ ուղղակի մեզանից, բաժանորդ արձանագրուելով մեր հիմնարկի մօտ:



Իր կառուցուածքին հոյակապ մեծութեամբ եւ անոր մէջ պարփակուած նիւթերուն ապշեցուցիչ ճոխութեամբ՝ իրապէս արտասովոր հաստատութիւն մըն է հայաստանի Կեդրոնական Պատմական Արխիւներու թանգարանը: Ան հիմա օժտուած է եօթնայարկ յաւելեալ շէնքով մը, իր արագօրէն աճող վաւերագրական գանձերը տեղաւորել կարենալու համար: Հոն եւս կ'ընդունինք կոնսակի եւ միրգերու ջերմ, անխուսափելի հիւրասիրութիւն մը:

Նոյն առեւ, Արխիւային վարչութեան պետ Աշոտ Յարութիւնեան, իր պաշտօնին եւ անոր սահմանած կենսական դերին գիտակից նուիրումով՝ կը պատմէ այս ամբանիստ սրմբերուն մէջ հաւաքուած եւ իր խնամքին վստահուած ազգային անփոխարինելի հարստութեան մասին: Ընդարձակ յարկերուն վրայ շինուած են երկաթէ անթիւ դարակներ, որոնց մէջ կը պահուին արդիական դասակարգումով, հարիւր հազարաւոր վաւերագիրներ, փաստաթուղթեր, համաձայնագիրներ, վկայութիւններ ու նամակներ, որոնք օտար պետութեանց եւ անոնց իշխող գրուիւններուն հետ՝ հայ ժողովուրդին ունեցած կապերն ու յարաբերութիւնները կը լուսարանեն:

Անոնք կ'ընդգրկեն ամէն շրջան, - վաղեմի դարերէն մինչեւ Ալեքսանդրաբոլի տիրահամբաւ դաշինքին եւ Սիմոն Վրացեանի կողմէ Քեմալական Թուրքիոյ կառավարութեան զրկուած ամօթալի հեռագիրներուն բնագիրները: Լրացուցիչ տեղեկութիւններ կ'աւելցնէ Պետական Արխիւի անօրէն Գրիգոր Յարութիւնեան, իր խանդավառ ոգիով ու գոռ ձայնով, որոնք անկասկած հետը բերած է Սասունի նուիրական լեռներէն:

Յետոյ միասին գացինք պահեստի բաժինները: Պրն. Աշոտ Յարութիւնեան բանալիներով բացաւ ամբողջ կողպուած պողպատէ դուռեր ու մտանք ներս: Նիւթերու դասաւորումը այնքան անթերի էր, որ երբ ինք որեւէ վաւերագիր կամ փաստաթուղթ կ'ուզէր մեզի բնկերացող կնոջմէ մը, ան կը գտնէր ու կը բերէր զանոնք հազու մէկ վայրկեանէն: Ինձի ցոյց տրուեցաւ արխիւը Զօր. Անդրանիկի, որուն երեք ինքնագիր նամակները բերած էի Նրեւան եւ միայն քանի մը օր առաջ յանձնած էի իրենց, եւ զարմանքով տեսայ, որ անոնք արդէն դրուած էին ազգային հերոսի մասնաւոր պահարանին մէջ: Հետաքրքրական էր հարկաւ Պողոս Նուպարի զլխաւորած Ազգային Պատմահարկութեան հարուստ թղթածրարը, որ Փարիզէն փոխանցուած էր թանգարանին:

Տարբեր բաժանմունքներու մէջ կը կատարուէին անոնց սահմանուած որոշ աշխատանքներ: Մենք յամեցանք այն սենեակին մէջ, ուր երիտասարդ աղջիկներ, ելեկտրական կազմածներու օգնութեամբ՝ մաշած, դժուար ընթեռնելի կամ պատռած վաւերագրութիւններ կը

«վերականգնէին»: Այս դահլիճը կարծես հիւանդանոց մըն էր, ուր սակայն ոչ մէկ վիրաւոր կը մեռնէր, նշտրակի տակ, այլ բոլորը մասնակի կամ լրիւ բուժոււմ կը գտնէին եւ կ'ապահովուէին ժամանակի աւերներուն դէմ:

Արխիւներու վարչութեան պետը եւ անոր գործակից անօրէնը խոր գնահատանքով պիտի ստանան որեւէ պատմական վաւերագիր, փաստաթուղթ, նամակ կամ լուսանկար, որ սփուռքահայեր պիտի բարեհաճին զրկել իրենց, թանգարանին մէջ յաւերժօրէն պահուելու համար: Որովհետեւ, հայ ժողովուրդի պատմութեան որեւէ զրուագր լուսարանող ամէն վաւերագրութիւն, եւ հայոց մշակութային ժառանգութեան պատկանող ամէն արժէքաւոր մնացորդ՝ միայն Հայաստանի հողին վրայ եւ անոր թանգարաններուն մէջ կրնան մշտապէս անկորուստ պահպանուիլ, ներկայ ու գալիք սերունդներու համար:

Նոյն երեկոն գացինք Թուրքիոյ Զարեանի տունը, տեսակցութեան, նաեւ իրեն ու տիկնոջ յայտնելու համար մեր խոր վշտակցութիւնը, իրենց զաւակին վաղաժամ մահուան առիթով: Մեր զրոյցը, բնականօրէն, շուտով անցաւ Շէյքսպիրեան դրողարանին, եւ հայ գրականութեան ու արուեստներու մարգերէն ներս: Իր բարեմոյն խառնուածքին շո՞ւքն էր, թէ տարիներու թաւալումին տակ յղկուած գիծերն էին, որ խաղաղ վեհութիւն մը կուտային անոր դէմքին, նոյնիսկ զինք կլանող դառն վիշտին մէջ:

Երէց մեծերու սերունդէն վերապրող մըն էր, զանոնք ճանչցեր էր անձնապէս, իրենց հոգերով ու զրկանքներով, եւ ազնիւ երազներով ու գերազանց իրագործումներով: Եւ թերեւս, անցեալի այդ նիւթապէս չբաւար բայց ոգեպէս փարթամ ու ստեղծարար միջավայրին հաւատարիմ մնալու մշակուած կամքն էր, որ զինք այդքան խոնարհ կը պահէր իր ծաւալուն զարգացումին ու գիտութեան մէջ: Տիրութեան ստուերին ներքեւ՝ մեր երեկոն անցաւ հետզհետէ աւելի ջերմ ու մտերիմ, կարծես վաղեմի բարեկամութեան մը նորոգումին հաճոյքը տալով ինձի: Եւ ինչ որ խորապէս տպաւորիչ էր, իր լայն հմտութեան ու թափանցող դատումներուն մէջէն՝ անոր համեստութիւնն էր, որ զուսպ կարծիքներ յայտնել կուտար իրեն. փոխանակ անողոք դատավճիռի, ինչպէս կ'ընեն յաճախ աւելի հարեւանցի ու կասկածելի ծանօթութեամբ օժտուածներ:

× × ×

Արուեստներու տարբեր սեռերու բանասիրութեան մէջ՝ վաւերական մասնագէտն է Թուրքիոյ Զարեան, որ իրաւունք չահած է կրելու փաստակաւոր արուեստարանի տիտղոսը: Ան հեղինակ է նաեւ շարք մը


արժէքաւոր գիրքերու, - երկու հատոր, որոնց մէջ կը ներկայացուին ու կը մեկնաբանուին Շէյքսպիրի ողբերգութեանց խաղարկումները հայ ակնաւոր գերասաններու կողմէ, Պետրոս Աղամեանէն մինչեւ Վահրամ Փափազեան: Եւ երեք հատորներ «Յուշապատում»ի, որոնց մէջ ան կը նկարագրէ, ապրուած, հաղորդական յուզումով, բազմաթիւ հայ յայտնի գրողներու, գիտնականներու եւ գերասաններու կեանքերէն գուարթ կամ տխուր դրուագներ ու տարբեր խառնուածքներու ինքնագրոշմ գիծեր, անձնական մտերմութեան ջերմ շունչով պարուրուած:

Բայց իր ընծայած եռանդին ու նուիրումին վկայութեամբ, կը թուի թէ Ռուբէն Զարեանի մեծագոյն իրագործումը՝ Երեւանի մէջ հիմնադրութիւնն է Շէյքսպիրեան գրականութեան առանձին գրադարանին: Ես արդէն ծանօթ էի այդ հիմնարկին, անցեալ տարիներու ընթացքին մասնաւոր թղթակցութեան միջոցով: Եւ ուզեցի այցելել հոն: Կրտսեր զարմուհիս, Բիւրակն Անդրէասեան (Իշխանեան), որ գրական աշխատակից է այնտեղ, հաճեցաւ առաջնորդել զիս: Եւ ինքզինքս գտայ որքան հաճելի՝ նոյնքան ապշեցուցիչ երևոյթի մը հանդէպ:

Մենակներ, որոնց պատերը ծածկող դարակներուն երկայնքին շարուած են հազարաւոր հատորներ, հաւաքածոներ ու հանդէսներ, ամէնքն ալ իրարու հետ հիւսուած հասարակաց կապով մը: Որովհետեւ անոնք բոլորը գրուած են Անգլիոյ հռչակաւոր ողբերգակրանաստեղծին, Ուիլիամ Շէյքսպիրի կողմէ, կամ անոր կեանքին ու թատերախաղերուն շուրջ: Բայց, ամբողջական գրադարան՝ մը մէկ գրազէտի հեղինակած երկերուն, եւ անոր անձին ու գործերուն մեկնաբանութեան, քննութեան կամ ներբողումին նուիրուած գիրքերուն համար եւ կոչուած անոր անունով: Այո, եւ այդ իրողութիւնը կը դարձնէ այս հիմնարկը արտակարգ, - որուն նմանը չունին շատ աւելի մեծ ու հարուստ ժողովուրդներ:

Հոն հաւաքուած են, անգլերէն բնագրերու մէջ, Շէյքսպիրի բոլոր թատերգութեանց միահատոր ժողովածուներ կամ առանձին գիրքեր, այլազան հին կամ նոր տպագրութիւններով: Բայց նաեւ հազուագիւտ կամ ընթացիկ օրինակներ՝ օտար բազմաթիւ լեզուներով կատարուած թարգմանութիւններէն, որոնց շարքին՝ նաեւ հայերէնով: Եւ դարձեալ, անգլերէն եւ ամէն ծանօթ լեզուով յօրինուած հազարաւոր հատորներ, որոնք Շէյքսպիրի տարերային հանճարին վաստակը եւ կենսագրութեան միջին հատուածները կը վերագնահատէին ու կը բացատրէին: Բիւրակնը, ջերմեռանդ հաւատաւորի խանդով կը խօսի Շէյքսպիրի հայ թարգմանիչներուն եւ մեծ ողբերգակրանաստեղծին յիշատակին մատուցուած այս գրադարանին շուրջ, որ արդէն միջագ-

գային ճանաչման ու գնահատանքի արժանացեր է: Այնքան լայն չափանիշով, որ Շէյքսպիրագէտներու յաջորդ համաշխարհային խորհրդածողովը պիտի գումարուի Հայաստանի մայրաքաղաք Երեւանի մէջ, հաւանաբար 1978-ի աշնան:



«Գրողներու Պալատ» կը կոչուի նաեւ գեղակերտ շէնքը, որուն առջեւ կանգնած ենք հիմա եւ հրճուանքի ու թախիծի խառն զգացումներով կը նայիմ անոր բարձրադիր յարկերուն: Անհաւատալի՛, բայց ահա՛ ստուգօրէն իրական՝ դիմացնիս է Հայաստանի Սովետական Գրողների Միութեան տուֆաշէն հսկայ «տունը», - այս կոչումին ամենէն ոգեկան ու համապարփակ իմաստով: Ուրեմն այսպէս, Բաֆֆի սահմանած ժամանակէն աւելի քան դար մը կանուխ իրականացեր է անոր «Սենթ»ին երազը, որ մարմին պիտի առնէր 200 տարիէ՛ն: Եւ խորունկ ուրախութիւն մը կը համակէ զիս այն մտածումէն, որ խորհրդահայ գրագէտներ ունեցեր են իրենց հոյակապ կեդրոնը, ուր հաստատուած են քարտուղարի գրասենեակ, գրական ամսաթերթի խմբագրատունը, մեծ ու փոքր սրահներ:

Մինչ կը շրջինք անոր ներքին բաժանմունքներուն մէջ եւ կ'անցնինք լայն ու լուսաւոր սենեակներէն՝ միտքս տխրօրէն կը վերսիշէ մեր հեռուոր ու մօտաւոր անցեալի գրողներուն դժխեմ, յաճախ ողբերգական վիճակները: Ոսկեդարէն մինչեւ Արծաթի ու Միջին դարեր եւ մինչեւ մեր ժամանակը մէկ-երկու սերունդ առաջ՝ հայ մատենագիրներ ու աշուղներ, բանաստեղծներ ու վիպագիրներ, անձնուրաց նուիրումի ու գերագանց տաղանդի շնորհներով օժտուած հոգիներ՝ ապրեցան ու ստեղծագործեցին վանքերու միջին խուցերուն կամ դաշտերու մոռյլ հիւղերուն մէջ, մոմի կամ լամբի պղտոր լոյսերով, նիթական գրկանքներու եւ իմացական տոււայտանքի յարատեւ մղձաւանջին տակ: Պապերն ու հայրերը կեանքի դառնութեան բաժակէն անձնական ցաւ ու ազգային մորմոք խմեր էին մինչեւ գերեզման: Եւ կարծես հէքեաթային հակադրութեամբ մը՝ անոնց գաւակներն ու թոռները հիմա բարեկեցիկ կենցաղով ապահովուած էին, գեղակերտ տուններու մէջ կը բնակէին եւ «Գրողներու Պալատ» ունէին իբրեւ իրենց կեդրոն, առաւել՝ ազատօրէն զարգացող, արագ թափով բարգաւաճող հարազատ ժողովուրդին սէրն ու մեծարանքը կը վայելէին:

Մենք բարձրացանք վերի յարկը եւ մտանք Գրողներու Միութեան գլխաւոր գրասենեակէն ներս, - ընդարձակ ու պայծառ դահլիճ մը, որուն պատերէն ու լուսամուտներէն կարծես մտերիմ միջնորոտ մը կը մաղուէր ու կը պարուրէր մեզ: Իր գրասեղանին ետեւ նստած էր

առաջին քարտուղար Վարդգէս Պետրոսեանը, որ էլաւ ոտքի, փութկոտ քայլերով գիմաւորեց զիս եւ մենք ջերմօրէն ողջագուրուեցանք, ինչպէս երէց ու կրտսեր եղբայրներ,- չէ՞ որ գրական ձգտումներու, եւ հայրենական ոգիի ու զգացումներու հարազատութիւն մը մեզ բոլորս կը կապէր իրարու:

Յետոյ գրաւեցինք կիսաբոլոր շարուած ախոսներ եւ մեր գրոյցը հեռոցհեռէ ծաւալեցաւ աշխոյժ ու զուարթ, խորհրդահայ եւ սփիւռքահայ գրականութեան հին կամ նոր ուղիներու, փաստակներու եւ յայտնի անուններու շուրջ: Մինչ ես կը նայէի, իր հայրենի օճախէն տարագիր պանդուխտ կարօտով ու թախիծով, հոն ներկայ թանկագին զէմփրուն, համախմբուած աշատեղ քանի՛ տարրեր հորիզոններէ:

Վարդգէս Պետրոսեան զարձեպ նստած էր գրասեղանին ետեւ եւ խօսակցութեան կը մասնակցէր ներշնչուած խանդով, կարծիքները ձերբազատ որեւէ կազապարի կապանքէն, եւ ամէն հարցի մէջ ճշմարտութիւնը որոնելու եւ զայն յայտնելու յանդուգն համոզումով: Ան ծնած է 1932-ի Օգոստոս 9-ին, Աշտարակի մէջ: Աւարտած է Երեւանի պետական համալսարանը: 1966-էն մինչեւ 1975 եղած է «Գարուն» գրական ամսաթերթին խմբագիր եւ այդ թուականէն՝ արդէն կը վարէ «Հայաստանի Սովետական Գրողների Միութեան» առաջին քարտուղարի պատասխանատու պաշտօնը: Բանաստեղծ եւ արձակագիր, հայերէն խօսքի ու գրիչի գրաւիչ, կենսայի ոճով մը:

Իր խոսնուածքին նման հեզօրէն խաղաղ է աջ կողքիս նստած՝ Ստեփան Կուրտիկեանի գիմազիծը: Ան ծնած է 1908-ին, Պուրսա քաղաքը, զինադադարէն ետք անցած է Յունաստան, ուր գրեր ու պայքարեր է նորաստեղծ Սովետական Հայաստանի պաշտպանութեան ճակատին մէջ: Իսկ անկէ ներգաղթած է մայր երկիր 1927-ին, ուրեմն 50 տարիներ առաջ: Խմբագիր եղած է տասնեակ մը տարրեր թերթերու, Սելանիկէն մինչեւ Երեւան: 1946-էն, նախ իրրեւ տեղակայ, իսկ 1962-էն մինչեւ ներկան վարած է գլխաւոր խմբագրի պաշտօնը, «Սովետական Գրականութիւն» կարեւոր ամսագրի ին:

Ստեփան Կուրտիկեան օժտուած արձակագիր ու խղճամիտ գրադատ է, լայն ծանօթութեամբ արեւմտահայ գրականութեան եւ սփիւռքահայ գրողներու, անոնց շարժումներուն ու փաստակներուն մասին: Անոր գրաքննական շափանիչները բարձր են եւ զատումները առարկայական ու արդար, հիմնուած գեղարուեստական որոշ սկզբունքներու վրայ, որոնց հաւատարիմ մնալու կորովը ունի ան: Գրած է բազմաթիւ պրակներ ու հատորներ այլազան նիւթերով, բայց Ստեփան Կուրտիկեանի արժանիքները իրենց լաւազոյն արտայայտութեան կը հասնին անոր պատմուածքներուն, ակնարկներուն ու հէքեաթներուն մէջ, որոնք իր ոճին կենդանի ջերմութեամբ կը զոռնան ապրուած

գրուածներ եւ անոնց նկարագիրներուն յոյզերով, կամ վիշտերով, կամ ազնիւ իղձերով կը համակեն մեզ:

Անոր քօփն է Մարօ Մարգարեանը, մշտաժպիտ, պարզապէս եւ ամբողջապէս բանաստեղծուհի: Ան ծնած է 1915-ի Գեկտեմբեր 22-ին, Շուշի (Վրաստան), ուր ստացեր է իր միջնակարգ կրթութիւնը: Յետոյ, 1938-ին աւարտեր է Երեւանի պետական համալսարանը, երբ արդէն տպուեր էին իր առաջին քերթուածները: Անոր կարելի է հանդիպիլ գրական հաւաքոյթներու կամ Սփիւռքի Կոմիտէին գրասենեակներուն մէջ,- բարեացակամ զգացումներով յորդող սիրտ մը, սիրալոյսով բնծայելու որեւէ օգնութիւն, որ կը խնդրուի իրմէն, նոյնիսկ անձանթով գիմազի մը կողմէ:

Բայց գերազանցօրէն բանաստեղծուհի է Մարօ Մարգարեանը, մշտահոս թարմ տաղանդով մը, որ կը յայտնուի հեզօրէն քնարական ոճի մը մէջ: Արուեստի ճարտար ոսկերիչ մը, որ կ'առնէ գազափարի որեւէ բեկոր, յոյզի պատառ, կամ մորմոքի հեծեծանք եւ կը յաջողի զանոնք խորացնել ու բիրեզացնել բնոյշանրական յուզումներու եւ խորհուրդներու, յաճախ տասնեակ մը տողերով գեղակերտ քերթուածի մը մէջ:

Քիչ անցին է արձակագիր Գեղամ Սեւանը, ծնած Պոլիս, 1926-ի Յունուար 8-ին, իր կրթութիւնը ստացած Միսիթարեան դպրոցէն եւ Թուրքիոյ համալսարանէն, երբ սկսած է նաեւ գրել: 1949-ին փոխադրուեր է Պէյրութ, ուր Միսիթարեան վարժարանին մէջ եղեր է ուսուցիչ հայերէն լեզուի ու գրականութեան: 1962-ին ներգաղթեր է Հայաստան եւ կը պաշտօնավարէ Գիտութիւններու Ակադեմիային Մանուկ Արեղեանի անունով գրականութեան հիմնարկին մէջ իրրեւ աւագ գիտական աշխատող:

Գեղամ Սեւան արդէն կազմուած արձակագիր էր, **Երբ մեկնեցաւ** Երեւան: Ան հեղինակ է շարք մը հատորներու,- վէպեր ու պատմուածքներ - որոնց նիւթերը քաղած է Թուրքիոյ, Լիբանանի եւ Հայաստանի մէջ իր անձնական փորձառութեանց ընդարձակ դաշտերէն: Կեանքին չափ հարազատ ու կենդանի են իր ստեղծած տիպարները, որոնց առօրեան, յաճախ դառն տաժանքով ու տրտում կարօտներով շաղախուած՝ ան կը վերարտադրէ թափանցող կարեկցութեամբ: Եւ անոնց վճիտ սէրերն ու պղտոր քէները, անոնց զրկանքներուն ցաւերն ու երանութեան հրճուանքները նաեւ կը հաղորդուին ընթերցողին, Գեղամ Սեւանի բարախուն ոճին մէջէն:

Իսկ իմ ձախ կողքիս նստած է Գէորգ Էմինը, իր հզօր ու ծաւալուն տաղանդին զէմ՝ կարճ կենսագրականով մը: Ան ծնած է 1919-ի Սեպտեմբեր 30-ին, Աշտարակի մէջ: Բարձրագոյն կրթութիւնը ստացեր է նախ Երեւանի, յետոյ Մոսկուայի ուսումնական յարկերէն,

ուրատեն մը պաշտօն վարեր է իբրև խմբագիր՝ հայ գրականութեան նուիրուած ուսուցիչն ամսաթերթի մը:

Գէորգ էմին, բուն անունով Կարլէն Գրիգորի Մուրատեան, կը յայտնուի ամբողջական ինքնատպուեթեամբ մը: - Տպաւորիչ զիմագիծ, որուն վրայ սեւ պիտերն ու մօրուքը արծաթուած են սպիտակ մագերով: Արուեստագէտի բարեմոյն բայց տիրական խառնուածք մը: Եւ իր բանաստեղծութիւնը հարկաւ, ուր պարզօրէն պատկերայի տարազը ներգաշնակ ընդելուզումով կը միաձուլուի բովանդակութեան, անոր փարթեամբ ընդերքին: Կը թուի թէ ան իր քերթուածները կը յօրինէ զրոյցի ընթացիկ բարբառով, բայց յաջորդական տողերը անոնց կառոյցներուն վրայ կը կուտակեն սէր, յուզում, ախտասնք, մտածում, երազ ու տենչեր, եւ անոնց կուտան տարերային, պայթուցիկ ուժգնութիւն մը: Էմինի բանաստեղծութեան գերազանց մէկ արժանիքն է նաեւ, որ անոր մէջ իր հարազատ ժողովուրդին ու հայրենիքին, - հայոց ազգային իդէալներուն ու կարօտներուն հանդէպ հաւատարիմ խանդին, անոնց համար մաքառումի շունչին հաւատար՝ ան կ'ապրի տուայտանքը, եւ կ'արտայայտէ անձկութիւնը տիեզերական մարդկային էակին, - որ ան, ամէն երկինքի տակ, կարենայ իրագործել ազատ ու խաղաղ կենցաղի մը իր յաւերժական տեսիլքը:

Հայաստանի Գրողներու Միութեան գրասենեակին մէջ կային նաեւ ուրիշ նոր դէմքեր: Եւ գլխաւոր քարտուղար Վարդգէս Պետրոսեան իր սրամիտ, համարձակ ու խելացի մասնակցութեամբ կ'ոգեւորէր մեր ընդհանուր գրոյցը, որ նոյն ատեն կ'ընթանար զուարթ ու յուրջ, վերլուծական կամ երգիծական զուգահեռ ուղիներով: Ինծի համար այդ մթնոլորտն ու խօսակցութիւնը ոգեկան ու մտաւորական քաղցր վայելք մը կը շնորհէին եւ գաղանի փափաք մը ունէի, որ անվերջ երկարէին անոր ժամերը: Ուրախ պահու մը, երբ բոլորը կը խնդային պատմուած գաւեշտական մանրադէպի մը վրայ, յանկարծ ընդմիջեցի:

- Եթէ թոյլ կուտար, թելադրա՛նք մը... - ըսի վարանելով:
- Ոնորեմ, սիրով լսում ենք ձեզ, ժպտեցաւ ձայն մը:
- Կարծեմ մեծ բարիք մը կ'ըլլայ հայ գրականութեան ու ժողովուրդին համար, յարեցի յուրջ շեշտ մը տալով բառերուս, - եթէ մեր թանկագին բանաստեղծը, Գէորգ էմին, երկրորդ անգամ Ամերիկա շայցելէ:

Բոլոր դէմքերը շուարած նայեցան իրարու, յետոյ անոնց աչքերը հարցական ակնարկով ուղղուեցան ինծի:

- Իսկ ի՞նչ պատճառով... եկաւ զարմացած հարցում մը:
- Որովհետեւ, պատասխանեցի հագիւ ծիծաղս զսպելով, էմինը ջերմ սէր ունի բոլոր ազգերու լեզուներուն հանդէպ: Վկայ՝ իր

«Ես սիրում եմ բոլոր լեզուները» խորագիրով քերթուածը: Եւ ան քանի՞ շարաթ շրջեցաւ Միացեալ Նահանգներուն մէջ՝ չեմ գիտեր, բայց կ'երեւերաւական սորվեցաւ ձեռքբերածի եւ Ուիթմընի լեզուն: Ապացոյցը այն է, որ այս օրերուն, երբ իր տան մէջ կը խօսակցէինք, կամ փողոցը քալած ատեննիս, կամ երբ նստած է քովս, իր զրոյցին անգլերէն կը խառնէր, - How are you, կ'ըսէր, կամ՝ Where is your car, կամ՝ How is my good friend Zaven Surmelian... եւ բառերը հընչելով իսկական եանֆիի նմա՛ն...: Հիմա կը վախնամ, որ Գէորգ էմին եթէ զարձեալ գայ Ամերիկա՝ պիտի փորձուի անգլերէն ոտանաւոր գրել նուիրուած թուխտ պարերուն: Եւ այն ատեն մենք պիտի կորսնցնենք «Սասունցիների Պարը» զիւցազնեղող կտորին նման ուրիշ զմայլելի քերթուածներ, կամ անոնց փարթեամբ տաղանդով յօրինուած իր գալիք բանաստեղծութի՛ւնը...:

Բոլորս ուրախ խնդացինք: Եւ խմբագիրը հեղինակաւոր շեշտով հաւասանեց:

- Այդպիսի մի վտանգ, Գէորգ էմինի համար, երբեք չի կարող պատահել: Նա թէկուզ ամբողջ աշխարհը շրջի եւ սովորի շատ օտար լեզուներ՝ էլ իր մտորումները, իր կարօտները, իր զգացումները աւելի հարազատ շնչով, աւելի գեղեցիկ կառոյցով կ'արտայայտի իր մայրենի բարբառի, հայերէնի շնորհի:

Մենք գիտէինք անշուշտ, որ այդ ճշմարտութիւնը բացարձակ էր ամէն խորհրդահայ գրողի համար: Որ անոնք տողորուած էին մարդ էակին անկաշկանդ, սպահով ու բարեկեցիկ առօրեան ստեղծելու քաղձանքով: Բայց նաեւ, անոնք իրենց բովանդակ էութեամբ, - իրենց խոհերով, ձգտումներով ու սէրով՝ ձուլուած էին հայ ժողովուրդին անցեալ ու ներկայ մաքառումներուն, պայծառ տեսիլքներուն ու շքեղ իրագործումներուն բովին մէջ, եւ անոնց ժառանգութեան գեւորէն հոսելով էր, որ կը միանային համամարդկային ովկէանին:

- Ելանք ոտքի, իրարմէ հրաժեշտ առնելու:
- Գնանք մեզ մօտ, էլի կը գրուցենք, - եկան քանի մը հրապուրիչ հրաւերներ: Դժբախտաբար Արմենիա պանդոկի սենեակիս մէջ ուրիշ ժամադրութիւն ունէի եւ արդէն ուշացած՝ պէտք էր աճապարէի: Իջանք վար ու պողոտայ տանող անցքին վրայ կը բաժնուէինք իրարմէ:
- Իսկ դու ինչպէ՞ս ես գնալու հիւրանոց, հարցուց էմին:
- Վարի անկիւնէն բախի մը կ'առնեմ եւ...:
- Տախի՞, դա շատ անյարմար կը լինի, երբ մենք այստեղ կանդնած աստօներ ունենք:
- Եւ գիտարաւ աջ կողմի բացատր, ուր երեք ինքնաշարժ կառքեր կային իրենց վարորդներով:
- Չեմ ուզեր անոնց նկատութիւն տալ, առարկեցի:

- Դէ՛, ոչ ոքի էլ նեղութիւն չի լինի... սրանք գրողների միութեան սեփական ատոմներն են... եւ դու իբրեւ գրող իրաւունք ես վաստակել սրանց վրայ:

Եւ դարձաւ վայելուչ երիտասարդ տղուն.

- Մեր յարգելի հիւրին կը տանես Արմենիա հիւրանոցը:

Ինքնաշարժին մէջ երջանիկ ու հպարտ սպառնալից մը համակեց զիս: Փորձեցի անցեալ ժամերը վերապրիլ եւ երկարածղել անոնց պարզեւած ոգեկան բերկրանքը: Բայց ինչպէ՛ս... արդեօ՞ք անոնք իրական էին թէ պատրանք: Իսկ չէ՞ որ դեռ պահ մը առաջ հոն էի, քարակերտ այդ հոյակապ շէնքին մէջ, որ «Գրողներու Պայտառ»ն էր: Եւ խորուսիկ կրկնէրեւոյթ չէր, այլ հրաշայի եղելութիւն,- որ ծրնունդով արեւելահայ, արեւմտահայ ու սփիւռքահայ բանաստեղծներ ու արձակագիրներ համախմբուած կ'ապրէին հայրենիքի հարազատ, հէքեաթալին երկինքին տակ եւ ազատօրէն, եզրայրօրէն կը խօսէին ու կը վիճէին գրական, ազգային ու հասարակական խնդիրներու շուրջ: Ո՛վ անհաւատալի բայց բացարձակ իրողութիւն, ահա կը ճամբորդէի, նստած գրողներու միութեան պատկանող մէկ ինքնաշարժ կառքին մէջ: Եւ մինչ կ'ընթանայինք Աբովեան պողոտայէն դարձար, ու կը նայէի երկու կողմերուն մայթերը եզերող ծառուղիներուն եւ անոնց ետեւ բարձրացող փառաւոր շէնքերուն՝ միտքիս դէմ պատկերացաւ եղերաբախտ վիպագիրին տրտմօրէն գրաւիչ դէմքը, ձեռքին բռնած «Վերք Հայաստանի» հատորը, եւ շրթներս շարժեցան լուռ մրմունջով.

«Երանի թէ մի օր յանկարծ
«Քանաֆեռից իջնէիր...
«Արեւազարդ, գուարթ Նորֆից
«Գայլի մեր մեծ խնդրոյքին
«Եւ քեզ տանջող քո հին վերքից
«Յաւելո՛ր քու ժուէ՛ր քո հոգից»:

× × ×

Հաւաքոյթ ունէինք Հայաստանի Հեռուստատեսութեան եւ Ռատիոյի բաժանմունքի տնօրէն Շահէ Տատուրեանի գրասենեակին մէջ, շուրջ քսան երիտասարդ այրեր ու կիներ, դմբուած հոն՝ ազատ եւ ընդհանուր գրոյցի մը համար: Մինչ կը սպասէինք ուրիշ հրաւիրուած պաշտօնեաներու ժամանումին՝ ես գաղտնօրէն կը դիտէի գանոնք, սեւ աչքեր, խոհուն, գրաւիչ դէմքերու վրայ, որոնք կարծես առհաւական թախիծի մը ստուերը կը կրէին, նոյնիսկ իրենց ժպիտին ու ծիծաղին տակ: Ոմանք բերած էին տետրակ ու մատիտ, կ'երեւի նոթագրութեան համար:

Այդ հանդիպումը փափաքած էր եւ հիմա մեր խօսակցութիւնը կ'առաջնորդէր հիմնարկին վարիչը՝ Շահէ Տատուրեան, վաղեմի բարեկամ մը, որուն ծանօթացեր էի Բարիպի մէջ տակաւին 1947-ին, երբ ան խմբագիր էր, եւ այն ատեն ներգաղթի էր Հայաստան: Իր կարեւոր դերին գիտակից զեկազար մը, որ գլխաւոր պատասխանատուն էր Երեւանէն սփռուած հեռատեսիլի ու ռատիոյի յայտագիրներու ծրագրութեան ու հեռարձակութեան, մինչեւ արտասահման: Ան ներկայացուց իր աւագ ու կրտսեր գործակիցները, յիշելով անոնց անուններն ու աշխատանքի մասնաւոր բաժինները, որոնք կ'ընդգրկեն հաղորդումներ գեղարուեստի ու լուրերու բոլոր տարբերակներով:

Մեր գրոյցը երկկողմանի ասուլիսի բնոյթ պիտի ունենար: Բայց զեռ անոր չսկսած յայտնի դարձաւ, որ սփիւռքի, եւ մանաւանդ Ամերիկայի հայ գաղութներուն մասին անոնց հետաքրքրութիւնը համապարփակ ու տիրապետող էր: Եւ միաձայն եղան դիմումները, որ նախ ընդհանուր զեկոյցով մը ներկայացնեմ արտասահմանի հայկական համայնքներուն վիճակը, անոր այլազան մարդերուն մէջ: Եւ որովհետեւ 6-7 տարբեր առիթներով շրջած էի սփիւռքահայ կեդրոնները՝ փորձեցի ամփոփ տեղեկութիւններ տալ անոնց մասին: Յետոյ, աւելի մանրամասն կերպով պատկերացուցի ամերիկահայ գաղութին կազմութիւնն ու զարգացումը, անցեալ հարիւր տարիներու ընթացքին: Յաջորդաբար անդրադարձայ անոր ազգային ու քաղաքական, մշակութային, անտեսական ու հայրենաշինական, եկեղեցական, հայրենադարձի, կրթական, բնկերային ու գրական ձգտումներուն, ձեռնարկներուն, տաղանայներուն ու իրագործումներուն: Իսկ ազգային ուժացման մղձաւանջին ու վտանգին դէմ՝ յիշեցի կենսական դերը վերածնած Սովետ Հայաստանի փառաւոր իրականութեան, անոր մեզի ընծայած գոյատեւելու կամքին, մաքառելու խանդավառութեան եւ տոկալու հաւատքին:

Ուրիշ հաւաքոյթներու մէջ պատասխաններ էի բազմատեսակ հարցումներու, որոնք նոյն հոգերը, նոյն երկիւղներն ու բազմանքները կ'արտայայտէին: Եւ ջանացի որ զեկոյցս ընդգրկէր զանոնք, որեւէ կրկնութիւնէ խուսափելու համար: Բայց հաճելի զարմանքով գտայ թէ անոնց հետաքրքրութեան ծարաւը կը մնար չլազեցած, եւ որպէս հեռատեսիլի ու ձայնասփիւռի յայտագիրներու վարիչներ՝ կ'ուզէին աւելի մանրամասնօրէն ծանօթանալ սփիւռքի հայութեան կեանքին, շարժումներուն ու գործունէութեան: Եւ բնական էր անոնց եռանդը, բազմաթիւ մասնակի հարցումներ ընելու եւ անոնց մասին լուսարանութիւն սպասելու:

Յետոյ մեր խօսակցութիւնը դարձաւ իրենց, - Հայաստանի հեռա-

տեսիլի ու ճայնասփիւռի վարիչներուն առարկէզին շուրջ: Անոնք տուին տեղեկութիւններ բաժանմունքին որդեգրած նպատակներուն եւ զանոնք իրագործելու կերպերուն մասին, որոնց շնորհիւ պիտի կրնան հասարակութեան տարրեր խաւերուն բազմաճիւղներն ու կարիքները բաւարարել: Հաղորդումները կը կատարուէին բազմազան յայտագիրներով, - երգի ու նուագի, թատրոնի ու պարերու, եւ քաղաքական ու հայրենի յուրերու, - որոնք կը պատրաստուէին նոյն հաստատութեան մէջ անջատ գրասենեակներու եւ անոնց պաշտօնեաներուն կողմէ, բայց բոլորն ալ ենթակայ անօրէն Շահ Տատուրեանի հսկողութեան:

Նշուեցաւ նաեւ, թէ սակաւին կային որոշ թերիներ, եւ յարատեւ ֆանքեր կը թափուէին զանոնք սրբապրելու համար: Այդ առիթով ուզուեցաւ որ ես ալ թեյապրանքներ բնէի: Արդէն իրենք յիշեր էին քանի մը պակասներ եւ ես ալ պարզապէս գնահատեցի զանոնք վերացնելու իրենց ճիւղերը: Յետոյ աւելցուցի.

- Միայն առաջարկ մը, եթէ ներէք ինձի...: Յայտնի իրողութիւն է, որ Սովետական Հայաստանի մէջ այսօր կ'ապրին ու կը բազմանան քանի մը հարիւր հազար արեւմտահայ հայրենադարձներ, բաւական տարրեր սովորոյթներով ու սպրեկուհեղով: Անոնց մեծագոյն մասը հայերէն լեզուէն յետոյ՝ ծննդավայրի անուղութեամբ ծանօթ է թուրքերէնին: Ես եղայ անոնց տուներուն մէջ եւ տեսայ, որ անոնք կը դիտեն էրզրումի թրքական հեռատեսիլի կայանէն հեռարձակուած ամերիկեան շարժանկարի ժապաւէններ, բայց խօսակցական լեզուն թուրքերէնի վերածուած: Կրնա՞ք երեւակայել, որ նոյնիսկ մեր հարազատ Մայք Փանրոզը (Փրիզոր Օհանեան, ծնած Ֆրեդնոյի մէջ) եւ Շարլ Ազնաւուր (Բարիզ) խօսին թուրքերէն...: Արդեօք չա՞տ դժուար պիտի բլլայ, որ Հայաստանի «Արիօ-ստուարիօ»ն անէ սովետական, եւրոպական եւ ամերիկեան ժապաւէններ, որոնք արդէն Մոսկուա կը ներածուին, եւ անոնց օտար լեզուները փոխէ հայերէնի: Այն ատեն կարելի է զանոնք ցուցադրել էրզրումի թրքական հեռատեսիլի կայանին Ֆիլմերու հեռարձակման ժամերուն: Եւ այդպէսով, մայրենի հարազատ բարբառով յայտագիր մը բնարկու պատահութիւնը կ'ընծայուի Հայաստանի դիտողներուն: Զանոնք կարելի է մշտապէս օգտագործել, ամէն տարի մէկ-երկու անգամ ցոյց տալով, ինչպէս կ'ընեն Միացեալ Նահանգներու հեռատեսիլի կայանները:

Հաւարոյթի աւարտին, մտերիմ, սիրելի դէմքերէ բաժնուելու թափօր զգացի, հրաժեշտի ամէն խօսքի հետ: Երբ քանի մը հոգի մնացինք, Շահ Տատուրեան առաջարկեց որ ստափոյնը համար 15 վայրկեանի հարցազրոյց մը ունենամ, որ երկու վրայ ստնախի եւ գոյն

ձայնասփռու մինչեւ սփիւռք: Առարկեցի թէ շատ հարեւանցի եւ անբովանդակ զրոյց մը պիտի բլլար եւ պիտի չարժէր ժամանակին վատնումը: Բայց ան պնդեց եւ ես չկրցայ մերժել:

Այն ատեն **նկատեցի որ սկսան**՝ դրամ հաշուէլ եւ մօտ 45 սուրյի եւ նոյնիսկ կողկներ երկարեցին ինձի, թուղթի մը հետ, որ ստորագրեմ իբրեւ ստացական:

- Ասիկա՞ ինչ է որ, հարցուցի վիրաւորուած շեշտով մը:
- Սա ձեր տալիք հարցազրոյցի հասուցումն է, բնաւ ան ժպտելով:
- Է՞ր աս բըրածդ ամօթ չէ՞, Բալիւմ, ահա քանի՛ շարտի է հիւր եմ մեր մայր հայրենիքին մէջ... արգէն անքան սպառնալից հարատուութիւն ու հոգեկան հրճուանք քաղեր եմ, որ ոչ մէկ գումարով կրնայ գնուիլ: Եւ հիմա զրոյցի մը համար կ'ուզես որ վճարու՞մ անեմ... տարիկա նախատինք չըլլա՞ր ինձի:

- Բայց ո՞չ, բացազանչեց ան, ի՞նչ էք ասում... սա ո՞չ ամօթ կը լինի, ո՞չ էլ անյարմար, սա երկրի օրէնքն է, էլի՛, մենք պարտաւոր ենք մեր հաշուեհաւարի մէջ ձեր անունին անցրնել էս գումարը իբր կէք, մեղօրէն պնդեց ան:

- Դէ՛հ, սիրելի՛ Շահ, դուն նախկին սփիւռքահայ ես եւ կը հասկրնաս իմ շուտումն: Կը յուսամ տակաւին չես մտցած գաղութահայ մեր պայմանները, որոնց դիմաց՝ ձեր այս անստաձեռն գնահատանքը պա՛րզապէս անհաստալի՛, արտառոց, սքանչելի՛ զարտուգում մըն է, յարեցի տխրօրէն խնդալով: Արտասահմանի հայոց վիճակին բնական պարտադրանքն է, որ ամէն անձ, եթէ կը մտահոգուի գաղութներուն գոյատեւումով, իր ձեռքերուն, գաղափարին ու եռանդին բոլոր ուժերը պէտք է նուիրէ մեր վերապրելու պայքարին...: Այդպէս է մեր կացութիւնը օտար երկիրներու մէջ:

- Ինձ էլ ծանօթ են սփիւռքի դժուար պայմանները, յարեց ան: Իսկ հոս բոլորովին տարրեր գրութիւն է արբում: Էստեղ, Սովետական Հայաստանում էլ մարդիկ ու կանայք անգաղար կատուցում են, եւ բարձր սազանգով ստեղծագործում են, մի տարրերութեամբ: Մեզ մօտ, բազուկի եւ մաքի ամէն աշխատանք լիտպէս վարձատրում է: Եւ վստահ եմ, դուք էլ շատ ուրախ կը լինէք դրա համար:

Անշուշտ որ անհանօրէն ուրախ էի, երբ հայոց հայրենիքը հիմերէն վերակերտող սրմնապիրն ու քարտաշը, ջրանցք փորող ու գետ ամբարտակող բանուորը, գործարաններու մէջ մեծաքա, կօշիկ ու ժամացոյց, եւ ինքնաշարժ ու կոնեակ արտադրող աշխատաւորը, եւ բլրակողերն ու խապան գաշտերը մշակող, - «բարից հա՛ց հանող» հողագործը վերջապէս սպահով կը շահէին իրենց քրտինքին ու ճարտարութեան արդար հասուցումը: Եւ թն՛գ ստանան աստեղ աւելի՛ն: Բայց անհանօրէն ուրախ էի մանաւանդ, այս գմայլելի իրականութեան

Հանդէպ, որ աճա՛, նաեւ Հայաստանի գրողն ու նկարիչը, ուսուցիչն ու դերասանը, երգիչն ու պարողը, եւ մտաւորականն ու հանրային ծառայողը կը վարձատրուին չիմա՛, իրենց վաստակին ու սաղանդին լիակատար չափով: Այլեւս ձերբազատ նախորդ սերունդներու գրիչի ու տեսիլքի իրենց եղբայրները խարանած չքաւորութեան ու նուա- սացման «ճակատագիր»էն: Եւ մենք էլանք սաքի մեկնելու:

× × ×

Այդ կէսօրէն ետքը հաւաքոյթ սարքուած կը Հայաստանի Գիտու- թիւններու Ակադեմիային գրականութեան չիմնարկի բնդարձակ գաշիճին մէջ, ուր հրաւերով ներկայ էին բազմաթիւ գրագէտներ, արուեստագէտներ, համայնարանի գասախօսներ ու մտաւորական աշխատակիցներ: Ի զուր փորձեցի խուսափիլ այս հանդիպումէն, աւ- սակ մը «նախատօնակ» այն յորեյեանական հանդէսին, որ արդէն ծա- նուցուած կը Փրոզներու Միութեան կողմէն եւ պիտի կատարուէր քանի մը օրէն, յիշատակելու համար իմ գրական գործունէութեանս 45-ամեակը:

Հաւաքոյթին կը նախադաճէր Եզուարդ Ջրբաշեան, յայտնի գրա- դատ, խմբագիր, գրականութեան տեսարան եւ ամպիոնի վարիչ հա- մայնարանին մէջ: Ան ծնած է 1913-ի Սեպտեմբեր 24-ին, Երեւան: Պատերազմի տարիներուն իրրեւ ականաձիգ մարտկոցի հրամանա- տար կռուէր է ռազմաճակատներու վրայ եւ եղեր է Փերմանիոյ սաճ- մանէն ներս արչաւոց առաջին սովետական գունդերուն մէջ: Պար- զեւատրուէր է չքանչաններով եւ ծանրօրէն վիրատուրուած՝ արձակուէր է բանակէն: 1950-ին աւարտեր է Երեւանի պետական համալսարանը եւ հեղինակ է շարք մը գրաքննական հատորներու: Անոր բացման ուղերձէն յետոյ՝ իմ գիրքերուս նուիրուած ուսումնասիրութիւն մը կարգաց երիտասարդ մտաւորական Փրիզոր Փուլուսմճեանը, որ իր վերլուծական ներբողներէն աւելի՝ ներկաները եւ զիս սպասուրեց իր ցուցարեքած խանդավառութեամբ ու յուզումով, որոնց զեզումէն ինք անգամ կը շուարէր երբեմն:

Յետոյ խօսեցան արձակագիր Փեղամ Սեւան եւ բանաստեղծ- նկարիչ Մկրտիչ Հաճեան (Մեքսիկոյէն), գրական երկերուս համար շռայլելով գրուատիքներ, որոնք գիտէի թէ կը բխէին իմ վաստակիս արժանիքէն աւելի՝ իրենց եղբայրական համակրանքէն: Բայց այդ փայփայիչ յայտագիրէն վեր, վարկով ու համբաւով ախարասուր զէմբերու չըջապատին մէջ՝ հրճուանքի ու վիշտի խտն գզացում մը կը համակէր զիս: Անշափօրէն ուրախ էի, որ կալիֆն պոնոնի եւ կ'ապ- րէին ու կը ստեղծագործէին ազատ Հայաստանի հողին վրայ, հոն

բարգաւաճոց հայ ժողովուրդի առաւել յուսաւորման, առաւել երջան- կութեան համար: Եւ կատարացոց ցաւ մը կը զգայի նաեւ, որ եղբրա- կան զիպուածներ, փոխանակ զիս այ բերելու այս հարազատ հայրե- նիքին մէջ՝ չպրաւր էին գաղթականի դաժան ճամբաներուն վրայ եւ չիմա, արդէն պիւտր սարագիր, իրրեւ այցելու եկած ու նստած եմ այս պատուոյ աթոռին:

Հաւաքոյթին հանդիսաւոր բաժինը աւարտած՝ էլանք ոտքի եւ խտնուեցանք ներկաներուն: Երէջ, միջին տարիքի եւ երիտասարդ զէմբեր, ոմանք արդէն մտերիմ անցեալ տարիներու հանդիպումներէ, ուրիշներ՝ ծանօթ իրենց վաստակով, եւ զիս շատեր անձանօթ: Բայց բոլոր գրոյցները ջերմօրէն հաղորդական, միշտ՝ - Աւելի յաճախ մեզ այցելեցէք-ի պատուէրով, պահանջով: Անոնց կարգին, միջին տա- րիքի կին մը մտակցաւ, կանց առաւ զէմս եւ ձեռքը երկարեց ինձի, իր անունը սայով: Բարեւեցի զինք, կ'երեւի սովորական ձեւով, եւ ան աւելցուց.

- Ես Եղիշէ Չարենցի աղջիկն եմ:
- Ա՛խ, աչգոյ՞, ս'ըքան ուրախ եմ... զիտէ՞ք, ձեր հայրը անձ- նապէս ճանչնայու բացառիկ բախար ունեցած եմ... Երբ ան իր հեղի- նակութեան ու փառքին կատարէն կը տիրապետէր խորհրդահայ գրա- կան ստղարկչին ու շարժումներուն... արտակարգ տաղանդով բա- նաստեղծ էր, անսովոր խտնուածքով մարդ էր...
- Իսկ զուք ի՞նչ առիթով ճանաչել էք նրան, հարցուց ան:
- Մենք խումբով Հայաստան այցելեցինք 1935-ին: Այն տունն շատ աւելի երկար մնացի հոս եւ հաւաքոյթներու մէջ կամ մասնակի՝ Եղիշէ Չարենցին հետ հանդիպելու յայն պատահութիւններ ունեցայ: Անոր մտայ զէմբին վրայ ամենէն գրաւիչ մասը իր սեւ աչքերն էին, վճիռ ու խորունկ նայուածքով... եւ զիտէ՞ք, զուք ձեր աչքերով բաւական կը նմանիք անոր:

Ան արամօրէն ժպտեցաւ, եւ հազիւ կրցանք քանի մը խօսքեր փոխանակել, երբ ուրիշ ձեռքեր երկարեցան ինձի:

× × ×

Հայաստանի մէջ ինձի համար անձնակա՛ն մեծագոյն անակնկալը եղաւ, անսպասելի եւ անհաստատի՛, երբ հաղորդեցին թէ Փրոզներու Միութիւնը որոշեր էր, գործակցութեամբ Սփիւռքի հետ Մշակութա- յին Կապի Կոմիտէին, սարքել գրական աշխատանքիս 45-ամեակի յո- բելեանը: Բայց ինչո՞ւ, ի՞նչ հարկ կար ժամանակի եւ ճիգերու նման աւելորդ վասնումի մը, ստարկեցի ի զուր: Վերջապէս, կը խորհէի, կատարած գործս ա՛յնքան համեաւ կը իր բնոյթով ու արժէքով:-

Ամբողջ ունեցածս, մարմին ու միտք, ոգի ու սիրտ ստացեր էի, ժառանգեր էի հայ ժողովուրդէն, ուրեմն բովանդակ էութեամբս կր պատկանէի անոր:

Եւ գիտակցութեանս արթննալէն ի վեր, կարծես Ապրիլի Եղեռնէն կտակուած արիւնի մուհակէ մը ճնշուած՝ փորձեր էի անոնց չնչին բերքերը վերադարձնել հայութեան. իբրեւ մարդկային տարրական պարտականութեան մը կատարումը: Այսինքն, ծննդեանս օրէն պարտապան մըն էի, որ պարզապէս կը ջանար իր բաղադրեալ պարտքերը հատուցանել գերագոյն պարտատիրոջ, հայ ժողովուրդին: Ուրեմն ինչո՞ւ պէտք էր զնահատանք ու մեծարանք ընծայել այդքան բնական արարքի մը համար:

Այդ երեկոյ մենք բեմին վրայ շարքով նստած էինք արդէն եւ ես չուարած շրջապատի արտակարգ երեւոյթին հանդէպ՝ կը խորհրդածէի այս հաւաքոյթին փարթամ բովանդակութեան մասին ու կը վիճէի ես ինձի հետ, - Իսկ ինչո՞ւ սա փայլուն ձեռնարկը. ան մինչեւ հիմա սոււածիս վեհանձնօրէն շոյլ ճանաչումն է, թէ յաւելեալ պահանջազիր մը դեռ մնացած պարտքերուս: Եւ կը նայէի ընդարձակ սրահին, լեցուած՝ մասնաւոր հրաւէր-տոմսերով ներկայ գրող, արուեստագէտ, գիտնական, ուսուցիչ, պետական պաշտօնեայ՝ յայտնի դէմքերով, որոնք կը թուէր թէ հիմա կը կշռէին զիս ծառայութեան ու վաստակի նժարին վրայ:

Կանգնած ամպրոնին առջեւ, Վարդգէս Պետրոսեան հանդէսին բացման ուղերձը կ'ընէր, ջերմ գնահատանքի խօսքերով: Անոր երկու կողմերուն նստած էին խորհրդահայ բանաստեղծութեան ու վէպին կենդանի երկու կատարներ, - Գէորգ Էմին եւ Սերո Խանդավեան, խառնուածքի ու կազմի հակապատկերներ: Մէկը՝ ներամփոփ ու կծկուած, կարծես իր մուսային մրմունջը յսելու համար. միւսը՝ ռազմական խրոխտ երեւոյթով մը, իր գունդը յարձակման վարդ զօրականի մը նման:

Սերո Խանդավեան ծնած է 1915-ի Դեկտեմբեր 3-ին, Գորիս եւ Եօթր տարիներ ուսուցիչ եղեր է այդ շրջանի գիւղերուն մէջ: Հայրենական պատերազմին իբրեւ զինուոր ծառայել է չորս տարի, եւ պարզեւտարուեր է շարք մը բարձրագոյն շքանշաններով, իր մարտական ու զրական արժանիքներուն համար: Սերո Խանդավեանի ամենէն հոյակապ վէպը՝ «Միլիթար Ապարապետ», յոյս տեսաւ 1961-ին, 40,000 օրինակ, որ սպառեցաւ շուտով եւ երկու տարի ետք կրկին հրատարակեցաւ 50,000 տպաքանակով, որ նոյնպէս սպառեցաւ, եւ յետոյ, դարձեալ երեւցաւ իր «Յրկերի ժողովածու»ին մէջ երկու հատորով: Այս պատմական վէպը, վերածուած նաեւ ռուսերէնի՝ տպուեցաւ 50,000 օրինակ: Անոր կարգ մը գործերը թարգմանուած են 5-6 լեզուներու:

Հանդիսավարին ուղերձէն ետք, իմ գրական աշխատանքիս ու հանրային գործունէութեանս մասին յաջորդաբար խօսեցան, - Ստեփան Կուրտիկեան, որ զիրքերուս առարկայական վերլուծողի իր գատումները տուաւ: Մարտ Մարգարեան քնարական շունչով անդրադարձաւ մարդուն ու գրողին: Գեղամ Սեւան հաղորդական զգացումով յորեյեարը ներկայացուց իբրեւ իրապաշտ գրագէտ ու զաղափարի մարտիկ: Ռուբէն Զարեան արտայայտեցաւ խոր յուզականութեամբ, - ինք հիւանդի անկողինէն ելած ու եկած էր այս հանդէսին, որովհետեւ պարտք զգացած էր խօսիլ այստեղ, եւ ան ինքնատիպ սահմանումով մը ընդհանուր պատկերը գծեց մեծարուող գրողին: Շահէ Տատուրեան յորեյեարին մէջ ընդգծեց գրագէտին ու հասարակական գործիչին փաստակներուն արժանիքն ու նկարագիրը: Եղան նաեւ ուրիշ ուղերձներ:

Մինչ ես, այդ ամբողջ ժամանակը կ'ապրէի երախտագէտ յուզումի եւ հոգեկան տուայտանքի անգթօրէն երկարող պահեր: Կը զարմանայի, որ հայրենի մտաւորական դէմքերու կողմէ ինձի ընծայուած գնահատանքի ու ներքոյի վկայութիւնները, որքան կ'ուրախացնէին, նոյնքան կը տխրեցնէին զիս: Հայաստանի մէջ անցուցած շարաթներուս ինձի պարզեւած անհուն երանութիւնը հիմա կարծես կը ստուերտէր իմացական շարշարանքով մը: Որովհետեւ այդ մեծանձն հոգիներուն կողմէ իմ անձիս ու գործիս շոյլուած զրուատիքի ամէն բանի դէմ՝ ինքզինքս շատ աւելի խոնարհ, նոյնիսկ խորտակուած կը զգայի, երբ մտածուծս կ'երթար նախորդ սերունդներու զմայլելի ու տարարախտ մեծերուն, որոնք իրենց տաղանդն ու կեանքերը պարզեւեր էին՝ հայ ժողովուրդին ազգային գիտակցութիւնը արթնցնելու, գրականութեան նոր վերածնունդը կերտելու եւ ազատութեան տեսիլքը յուսատրելու առաքելութեան, իրենք յաճախ տանջուելով հայաժամանքի, լքումի ու թշուառութեան մղձաւանջին տակ:

Եւ ես պիտի բանախօսէի՞ Հայաստանի մտաւորականութեան այս բնութեայ բազմութեան առջեւ: Ի՞նչ անհեթեթ յանդգնութիւն: Այդ խորհուրդը անգամ ամօթով ու երկիւղով կը համակէր զիս: Գիտէի թէ կարելի չէր բաղադրութեան որեւէ եզր գանել, նոյնիսկ ամենէն յաւակնոտ երեւակայութեամբ: Անոնք բոլորը համապարանի յայնագոյն զարգացումով ախտոսուած մասնագէտներ էին իրենց սապարկներուն մէջ, վաստակի ու համբուի գերազանց արժանիքներով: Ես՝ ծննդավայր գիւղիս զարոյցը հագիւ երեք օր գացած՝ Մեծ Եղեռնին ետեւանով արմատախիլ մանուկ, աւելի քան վաթսուն տարիներ զարձած էի գաղթականի կտոր մը, որ իր 14 տարեկանին մտած գործարան՝ անդադար աշխատել էր մինչեւ այլուոր տարիք: Բայց աւելի ցաւազին խարանդ մեր տարագիր սերունդի ճակատագրին, - Անոնք

աճա հո՛ս են, հայրենի հողին վրայ, ուր իրենց արիւն-քրտինքով, իրենց տաղանդով ու նուիրումով՝ հայոց նոր ազգութիւնը կը կերտեն, դարերով աւերակուած՝ հիմա ազատ Հայաստանը կը կառուցեն, հայկական վերակազմած պետութեան հիմերը կը պողպատեն, եւ իրենց այդ շքեղ նուաճումներուն պարզեւած անգերագանց երանութիւնը կը վայելեն:

Իսկ ես, - (իսկ մե՛նք սփիւռքահայ գրողներ), գիպուածներու բմայքով շարտուեցայ հայ ժողովուրդի գոյամարտին հեռաւոր, օժանդակ մարտիկներ պաշտպանելու գիրքերուն մէջ: Ի՛նչ կ'ըլլար, կը մտածէի դառն փոստանքով, որ բախտը շնորհք ընէր ինձի, եւ օտար երկիրներու տակ տասը գիրքեր արտադրելու տեղ՝ տասը քարեր դրած ըլլայի հայ ժողովուրդի ազգային վերածնունդին եւ Հայաստանի ու անոր պետութեան վերականգնումի այս փառաւոր կառուցուածքին մէկ փոքր պատին վրայ... Եւ կարենայի այդ մասնակցութեան գերագոյն պարծանքը ապրիլ եւ անփոխարինելի հրճուանքը ճաշակել:

Գլխահակ նստած՝ կ'ունկնդրէի ազնիւ, մեծանձն զրջեղարայններու կողմէ ինձի բաշխուած ներքողներուն, որոնք կը սփռուէին բարձրախօսէն ու կը սուզուէին զիս խոտովոյ յոյզերու յորձանքին մէջ: Կարծես սիրտս կը լսէր անոնց ձայներն ու բառերը եւ կը զգար անոնց ջերմ փայփայանքը: Բայց միտքս կ'իջնէր ու կը փարկէր այս շէնքին ներքեւի հողին ու ժայտերուն, եւ կը թեւածէր զէպի հայրենի լեռներն ու կիրճերը եւ շրթներս կը մրմնջէին երջանիկ թախիծով, - Ի՛նչ հրաշքներ ու փառքեր ձուլուած են այս հողերուն ու քարերուն, որոնք կը բարախեն յաւերժական կենդանութեամբ: Ասոնց վրայէն անցեր են Հայկն ու Տիգրան Մեծը, եւ Արշակունի ու Բագրատունի արքաներն ու անոնց սպարապետները իրենց յաղթական բանակներով, եւ անոնց քայլերուն արձագանգները շե՛ն, որ կը տարածուին նաեւ բեմի բարձրախօսէն: Այս հողերուն վրայէն քայլեր են հայ միտքին ու հաւատքին լուսաւորիչները, եւ աճա՛, հանճարեղ Մաշտոցի յօրինած տառերով հայերէն լեզուն է, որ ամպիոնէն հոսելով կ'ողողէ Գրողներու Պալատին մեծ սրահը: Իսկ սա զուրսի փողոցէն զէպի Զանգուի ասիւրը իջեր է Խաչատուր Արուսեանը, ճամբան իր զիւցազնային «Վերբ Հայաստանի»ն եղերեղեղով:

Եւ այո՛, այս նուիրական հողերուն վրայ արշաւեր են նաեւ արիւնարբու ոստիներ, որոնք վայրագօրէն կոտորեր ու գերեվարեր են մեր պապերը, եւ վանտալօրէն թալաններ, հրկիզեր ու կործաներ են մեր ոստաններն ու շէները: Բայց աճա նորէն, ո՛վ ապշեցուցիչ հրաշք, Թուրքիոյ գործադրած ցեղասպան ոճիրին գերեզմանէն, հրաշալի յարութեամբ մը, հայ ժողովուրդը բարձրացաւ կեանքին եւ դարձեալ

կ'աճի ու կը զօրանայ ազատօրէն: Փլատակներէն կը կառուցանէ փառաւոր շէնքեր, - զպրոց ու պալատ, օբերա ու թատրոն, գործարան ու աթոժական էլեկտրակայան, եւ լեռներու ժայռեղէն ընդերքը ճեղքելով՝ սքանչելի Արփա-Սեւան ջրատարը կը բանայ: Եւ դեռ՝ իր նախկին որբերէն ու զաղթականներէն, բացառիկ տաղանդով ու համաշխարհային հռչակով գիտնականներ ու արուեստագէտներ կ'արտադրէ ու կը պարգեւէ մարդկային քաղաքակրթութեան:

Իսկ հիմա՛, անցեալ դարերու հայոց ազգային աճելի փուլուածները՝ վերադրելու, մշտապէս զօրանալու եւ սեփական հողային իրաւունքներուն տիրանալու միտք ուղի մը կը պարտադրեն մեզի: - Որ բովանդակ հայ ժողովուրդը իր մտածումով ու կամքով, իր անխառն հաւատքով ու սպազայի տեսիլքով, իր բոլոր ջիղերով ու մկաններով ու արեան բջիջներով ու եղունգներով մոլեգնօրէն կառչի, խանդակաթօրէն փարի ներկայ Սովետ Հայաստանին, անոր ապահով սահմաններէն ներս բազմացող ու բարգաւաճող հայութեան եւ անոնց գոյատեւումը երաշխաւորող հայկական պետութեան, որ անոնք ապրի՛ն, եւ աւելի զօրանան, եւ առաւել պայծառանան մինչեւ առաւել շքեղ ապագան: - Որովհետեւ առանց անոնց, եւ անոնցմէ զուրս՝ վերջնական փոշիացումը, ամբողջական ոչնչացումն է հայ ազգութեան ու Հայաստանին եւ հայոց անունին, լեզուին ու յետին փշրանքին, երկրագունդի երեսէն...:

Զիրար հալածող մտորումներ, կուտակուած ու չյազեցած կարտաներ եւ մակընթաց յոյզեր կլաներ էին զիս: Եւ շեմ յիշեր ինչպէ՛ս կրցայ խօսիլ անոնց մասին կամ կրցա՞յ արտայայտել զանոնք մատուցական բարձրորակ դասի մը ընդունելի եղանակով, - երբ անոնք եւ մենք իրարմէ բաժնուած էինք ո՛չ միայն տասնեակ հազար մղոնի անջրպետով, այլ նաեւ միջանկեալ տարրեր աշխարհներ կը փռուէին մեր միջեւ: Բայց երբ աւարտեցի՝ ունկնդիրներուն համակրանքի ծափերուն ու կանչերուն զղրղիւնը աւելի ամբացուց արդէն ունեցած խորունկ համոզումս: - Թէ ամբողջ երկրագունդին վրայ, Հայաստանէն մինչեւ ներքին ու արտաքին սփիւռքներուն ամենէն հեռաւոր անկիւնները, հայութիւնը միաձոյլ եւ անբաժանելի է իր ազգային մշակոյթով ու պատմութեամբ, իր ներկայ հոգերով, նպատակներով ու մարտումներով եւ իր սպազայ ձգտումներով ու երազներով: Մէ՛կ եւ անբաժան:

× × ×

Շատ արագ եւ սպրուած փորձառութեամբ հարուստ անցան մէկ ամսուան օրերս Հայաստանի մէջ: Մտերիմ հանդիպումներ եւ աշխոյժ

ու գուարթ գրոյցներ թանկագին դէմքերու հետ, նաև պատյաններ դէպի հեռուոր գիւղեր ու քաղաքներ՝ մտաւոր ու հոգեկան վայելքի բացառիկ առիթներ շնորհեցին ինձի: Եւ տակաւին, կր զգայի ախտոր ախտասանքը, որ ա՛յնքան զեղեցիկ ու պատմական վայրեր մնացին չտեսնուած, ա՛յնքան այցելութիւններ՝ շարուած, ա՛յնքան կարօտներ՝ չկշտացած, եւ գրական ու ազգային խնդիրներու շուրջ այնքա՛ն կարծիքներ մնացին չխօսուած: Բայց յաջորդ կիրակի օրը Պէյրութի մէջ հրապարակային հանդէս ծանուցուած էր, որ պարտաւոր էի ներկայ գտնուիլ:

Այդպէս եղաւ մեկնումի, ուրեմն բաժանման տրտում առաւօտը: Արմենիա հիւրանոցի ճաշարանէն իջանք հրապարակ եւ քանի մը ինքնաշարժ կառքերով ճամբայ ելանք զէպի օդակայան, — Պարզեւ Մարտիրոսեանի հոգածու առաջնորդութեամբ, գրողներու եւ ազգականներու խումբ մը: Հոն, հրաժեշտ ու սղջագուրում ցաւագին եղան ինձի համար եւ ի գուր կր փորձէի յուզումս քողարկել բոնագրօսիկ ժպիտի մը տակ: Եւ աճապարանք կար շարժումներուս մէջ, ա՛յնքան դառն էր նայիլ ետեւ, իրարու սեղմուած սիրելի, հարազատ զէմբրուն: Արագ անցայ մաքաատունէն, ուր Պէյրութի գացող բազմութիւն մը խճողուած էր, — մարդիկ ու կիներ, որոնց հանած ազմուէն ու ժխորը կր լեցնէին բնդարձակ սրահը: Ամէն կողմ սնտուկներու եւ պայուսակներու զէզեր, որոնք կր կշռուէին սաւառնակ տարուելու համար: Կանց առի վայրկեան մը դիտելու: Քոպա երիտասարդ մը իր կապոցները շարեց մեծ կշիռքին վրայ, — 76 քիլօ ապրանք ունէր, պատին տակ դրած հինգ ծրարներէն բացի: Տումակով արտօնուած իր իրաւունքն էր միայն 20 քիլօ:

— Գուք ի՞նչ էք տանում սրանց մէջ, գարմանքով հարցուց քննիչը:

— Բան չկայ, միակ նուէրներ, յիշատակներ, ուրիշ ոչինչ: Կուն անցուր, եւ կր վճարեմ աւելիին ծախքը:

Եւ ամէն շարաթ բազմապատիկ կր կրկնուէր այդ ամօթայի տեսարանը: Պէյրութէն հայ «գրօսաշրջիկներ» կուգային Երևան, իրենց հետ բերելով ամէն տեսակ պերճանքի առարկաներ, շրջագրեալներ, զարդեղէններ, շրթունքի ներկեր եւ «պլու Գիւնգ»ներ, որոնք աւելի բազմաթիւ հայ աղջիկներ ու տղաք կր հագնին Երևանի, քան թէ նիւ Եորթի կամ Լոս Անձելլոսի մէջ: Եւ նոյն անձերը Հայաստանէն կր տանին տարբեր ապրանքներ, — հայկական գորգեր, արժէքաւոր հնութիւններ, ոսկեղէն զարդեր, եւ տակաւին՝ սուսական ձկնկիթի (խապիար), Գուգայի սիկար, մուշտակներ, Արեւելեան Եւրոպա արտադրուած յուսանկարչական ու շարժապատկերի գործիքներ եւ ուրիշ կազմածներ: Հարկաւ առարկելի պիտի չըլլար, եթէ այս «սուսուտուրը» կատարուէր բնականոն եզանակով ու շուկայի գիներով:

Բայց ան վերածուէր է ապօրինի, յանցապարտ գործողութեան մը: Որովհետեւ մարդիկ Պէյրութէն բերած իրենց ապրանքները Երևանի մէջ կր ծախեն «սեւ շուկայ»ի գիներով, այսինքն վաճառուած առարկային բուն արժէքէն բազմապատիկ աւելի ուրիշներ գանձելով: Ռուրլին «աժան» (առտա) է «սեւ շուկայ»ին վրայ, բայց բարձր է միջազգային սակով (մէկ տոյարր կ'արժէ հագիւ երեք քառորդ ուրլի): Ռուեմն գուրսէն եկող «ճարպիկ փերեզակներ», իրենց հաւաքած «աժան» ուրլիներ կր գործածեն, տեսական խանութներէն գնելով ուզուած բոյր ապրանքները, անոնց փոխարէն վճարելով օրինական սակի վրայ նուազ ուրլիներ: Յետոյ այդ ապրանքները կր ծախեն Պէյրութի մէջ 5-10 անգամ աւելի բարձր գիներով: Եւ ամէն երթեկէ՛լ՝ բնաանիք մը կրնայ 2-3000 տոյարի գուս շահ ապահովել, որովհետեւ անոնց զուգրնիք կր կատարուի նաև ոսկիի ու ազամանդի մաքանենդուած շարաշահութիւնը: Իսկ ինչ որ աւելի անարգ կր դարձնէ այդ շահամոյ արարքները՝ անոնց հեղինակներուն ապերասան վերաբերմունքն է մայր հայրենիքին հանդէպ:

Հայրենասիրական զգացումի ու մարդկային պարկեշտութեան շնորհներէն թափուր՝ այդ մարդիկը առանց խցճահարութեան կր չարախօսեն Հայաստանի զէմ, յանկերգելով թէ հոն ժողովուրդը ազրատ է, չբաւոր է: Եւ յետոյ շեն անդրադառնար անգամ, թէ այդ յերիւրանքը իրենք իսկ կր հերքեն իրենց արարքներով, երբ խարհական միջոցներով հարստութիւն կր քաղեն հայրենի երկրէն ու անոր բնակիչներէն:

Քանի մը ժամ ետք եւ կրկին պիտի տեսնէի նոյն մարդիկն ու կիները Պէյրութի օդակայանի մաքաատան մէջ, պայուսակները ներս փոխադրող շարժական գօտիի երկայնքին: Եւ պիտի դիտէի զանոնք ամօթով, զստնութեամբ: Վայելչօրէն հագուած տղաք ու աղջիկներ՝ իրենց պաստակներուն ու փիզերուն ոսկեղէն ապարանջաններ, օդակներ, շղթաներ ու մուշտակներ ուսերնուն, բայց որոնք իրարանցումով ու խուճապով իրենց սնտուկներն ու ծրարները կր խլէին, կր քաշկրպէին իրարու ձեռքէ, կարծես ստունք հաց ու ջուր ըլլային Տէր-Չօրի մահաշուք ճամբուն վրայ եւ իրենք զանոնք կր փախցնէին թուրք ժակտարմաներու ետթաղանին սարսափէն...:

Հիմա բոյր ճամբորդները սաւառնակին մէջ նստած են իրենց աթոռներուն վրայ ու կապուած են մէջքերու գօտիները: Ինքնաթիւոր կր սկսի յամբօրէն բնթանայ զէպի մեկնուղին: Փոքրիկ յուսամուտէս կր նայիմ օդակայանի շէնքին, որ մեզմէ կր նահանջէ հեռոցհեռէ: Անոր յայնքին, խոշոր կապոյտ գիրերով տող մը կր կարդամ, — «Բարի գալուստ Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևան»: Հոս է որ կ'իջնեն ու հայկական հողին վրայ առաջին անգամ ոտք

կը զենն արտասահմանէն ժամանոց հայ թէ օտար այցելուներ ու զբոսաշրջիկներ եւ կ'ողջունուին այդ բառերով: Տակաւ կ'արագանայ սաւառնակին անիւներուն թաւայր եւ աւելի վար դարձեալ կ'երեւի հայերէն ու կարմիր մեծատառ «Բարի գալուստ» մաղթանքը, եւ կողքին՝ անոր ուսերէնը:

Կը թուի թէ ժամանակը կանգ առած է շուրջս եւ անոր անսահման ծիրէն մենք հիմա կը մագլցինք զէպի անջրպետ, հայրենի շքեղ սասանին վրայ: Բաժանումի խոր թախիժ մը կը համակէ զիս եւ բնագործէն կը փակեմ աչքերս: Եւ քաղցր պատրանքով ու ջինջ պայծառութեամբ կը տեսնեմ այն ահարկու լեռներն ու անդնդային ձորերը, եւ կառուցուող քաղաքներն ու գիւղերը, եւ կանխահաս ձմեռէ մը թանձրորէն ձիւնապատ Արարաան ու Արագածը, որոնց մէջ ու մերձակաները շրջելու երանութիւնը ապրեցայ ամբողջ ամիս մը:

Աչքերս կը ամպկանան երկիւղի ու յուզումի ճնշող զգացումէ մը: Ի՞նչպէս, հայրենի երկրին ու ժողովուրդին կուտակուած կարօտով սուքերս գրեթէ մայր հողին վրայ եւ հիմա անկէ կը մեկնէի շաղկեցած ծարաւով: Կը նայէի վար, հետզհետէ բնագործակուող զմայլելի պատկերներուն: Միջոցին կապոյտ մո՞ւժն էր, թէ ակնարկս քողարկող աչքերուս մէջ լճացած փշտը, որ կը պղտորէր երեւանի ու շրջակայ լեռներուն համայնապատկերին հրապոյրը: Մինչ ցաւազին կաւկած մը, խայթող վախ մը կը ճմլէր կարկանդակ, վիրաւոր սիրտս:

- Կեանքէն պիտի չնորհուի՞ր ինձի երջանիկ հրճուանքը, կրկին ողջունելու հայոց վերականգնած հայրենիքը, պիտի կրնայի՞ նորէն լսել Հայաստանի ոստաններուն փողոցները, հրապարակներն ու հանդիսավայրերը լեցնող կենսախայտ բազմութեանց աղմուկն ու ծիծաղը մայրենի բարբառով, պիտի բախտաւորուէի՞ դարձեալ ողջագուրելու հայրենի թանկագին գրչեղբայրներ ու սիրելի հարազատներ:

Մտայ խորհուրդներ կը հայածեն միտքս եւ ակնարկս կ'ազօտի թախիժի ու կարօտի մշուշէն: Եւ գանոնք վանելու փորձով մը, երեւակայութեանս մէջ կը բերեմ վճիռ կամ տարտամ զէմքեր ու զրոյցներ, հանդիպումներ ու պտոյտներ, որոնց պարզեւած ուրախութիւնը պիտի փարատէր հեռացման ցաւս, կը յուսայի: Բայց ի զուր: Այն ատեն էութեանս խորէն փոստանքի, մորմոքի ու պաղատանքի մրմունջ մը բարձրացաւ շրթներուս եւ կարծես լսեցի անոր բաժները.

- Հայաստանի թանկագին գրողներ ու արուեստագէտներ, պետական վարիչներ ու գիտնականներ, բանուորներ ու հողագործներ, արտակից եղբայրներ ու քոյրեր... ահա Մեծ Եղեռնէն պանդխտացած հարազատ մը, ես, երախտապարտ ու երկիւղած խոնարհութեամբ կը համբուրեմ ձեր ճակատներուն կնճիռները, ձեր զէմքերուն քրտինքը եւ ձեր ձեռքերուն փոշին... որովհետեւ ձեզի կը պարտինք հայուն

անմահութիւնը, ձեր կերտած հայ ժողովուրդի յաւերժութեան մէջ... որովհետեւ սփիւռքէն եղբերագուց բոլոր վերապահ կասկածներէն, բոլոր դասալիք մեղադրանքներէն, եւ բոլոր վայրահաչ պարսաւներէն վեր՝ կը մնայ, կը տիրապետէ բացարձակ, միակ ճշմարտութիւն մը, - որ մենք, նախկին արեւմտահայ հոգմացրիւ բեկորներ, քանի մը սերունդներ զէպի ապագան՝ կը կլանուինք ու կը շքանանք հիւրընկալ երկիրներու երախներուն, անոնց մարդկային ուկէաններու յորձանուտին մէջ: Հայ համայնքներ ու հայ ոգին կը դառնան տարտամ յուշ կամ կարեկցութեան աղերս ապրողներու վերլիչումին մէջ, կամ պարզապէս աճիւն ու ոսկոր օտար երկիրներու ներքեւ մաշող տապանաբարբերու տակ:

Եւ միայն դո՞ւք էք, որ ձեր գոյատեւումով կը զրահուիք ժամանակի աւերիչ ուրականին զէմ, դո՞ւք էք, որ ձեր պողպատէ կամբով ու շինարար բազուկներով նո՞ր Հայաստան, հոյակե՛րտ հայրենիք կը կառուցանէք մինչեւ յաւիտեան գայիք սերունդներուն համար. դո՞ւք էք, որ ձեր լուսաւոր հանձնարով ու յանդուգն խոյանքներով՝ հայոց նոր գրականութեան, եւ արուեստներուն ու գիտութեան կենսալի տարերքը կը ստեղծէք. դո՞ւք էք, որ ձեր անրնկճելի խաչալով ու հզօր հաւատքով ու պայծառ տեսիլքով հայ նոր ազգութիւն մը կը յօրինէք, աւելի՛ միաձոյլ, աւելի՛ հպարտ, առաւել ինքնապստահ, մանաւանդ առաւել իմաստուն, աշխարհի խաբուսիկ պատրանքներուն, հրապուրիչ որոգայթներուն եւ անարգ դաւերուն զէմ: Եւ տակաւին՝ դո՞ւք էք, որ ապրելով, աճելով ու զօրանալով՝ ամբողջական Հայաստանի մեր դարաւոր երազը կենդանի իրականութեան պիտի վերածէք... դո՞ւք, հայրենաբնակ սիրելի եղբայրներ ու քոյրեր... եւ ես երախտագէտ ակնածանքով կը համբուրեմ ձե՛ր, - մեր ազգային ձգտումներուն ներկայ ժառանգորդներուն եւ ապագայ դարբիններուն հպարտ ճակատները եւ աշխատանքի սրբազան փոշիով լուացուած զէմքերն ու ձեռքերը:

Լոս Անճեյլըս, 1978

ՍՓԻՒՌԱՀԱՅ ՏԵՂԱՇԱՐԺՆԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԱԳՆԱՊՆԵՐ
ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Անցեալ երեսուն տարիներու ընթացքին հարկ եղաւ, որ կազմակերպական ծրագիրով 6-7 անգամներ այցելեմ սփուռքահայ բազմաթիւ կեդրոններ, երեք, չորս կամ վեց ամիսներու շրջապտոյաներ կատարելով Մերձաւոր Արեւելքի, Եւրոպայի եւ Հիւսիսային ու Հարաւային Ամերիկայի հայկական հոծ համայնքներուն մէջ: Այդ այցելութիւնները, բացի Հայաստանէն, ընդգրկեցին Պէլյոււթ, Թրիփոլի եւ Ջահլէ, Հալէպ ու Դամասկոս, Գահիրէ եւ Ազեքսանդրիա, Երուսաղէմ եւ Ամման, Կիպրոս ու Աթէնք, Բարիզ, Լիոն, Վիէն, Վալանս ու Մարսիլիա, Լոնտոն, Մոնթրէալ ու Թորոնթօ, Սան Փաւլօ, Րիօ տը Եանէյրօ, Պուէնոս Այրէս եւ Մոնթեւիտէօ եւ անոնց մերձակայ փոքր համայնքներ, նաեւ բնականօրէն ամբողջ Միացեալ Նահանգները: Վերջին այցս. այդ կեդրոններէն շատերուն՝ եղաւ 1977-ի Սեպտեմբերի սկիզբէն մինչեւ 1978-ի Յունուարի վերջերը:

Քանի մը տարիներու ընդմիջումով այս յաճախակի հանդիպումները մտաւոր ու հոգեկան մտերմութիւն մը կը ստեղծեն ոչ միայն ընկեր ու բարեկամ անձերու, այլ նաեւ ամբողջ համայնքի մը անցեալ պատմութեան եւ անոր զարգացող կամ ընկրկող կազմին ու վիճակին հետ: Եւ ամէն յաջորդ այցելութեան, ինքզինքս գտեր եմ այդ գաղութներու վերափոխուած պատկերներուն հանդէպ: Երկջ սերունդէն ծանօթ, գործօն մարդիկ, որոնք կամ խլուեր են մահէն եւ ինկեր են անոր մանգաղին տակ, եւ կամ մեկներ են դէպի հեռաւոր ափեր, հմայքի ու ազդեցութեան ափսոսալի պարսպ մը ձգելով իրենց ետեւ: Եւ ուրիշ մտերիմ դէմքեր, որոնք ամրանիստ ժայռերու նման խրած կը մնան համայնքի գոյապայքարին պատնէշներուն վրայ եւ կը պաշտպանեն անոր գործունէութեան ճամբան եւ կը ծրագրեն ու կը վարեն

անոր ազգային ու հասարակական, մշակութային, եկեղեցական ու կրթական շարժումներն ու ձեռնարկները: Իսկ գաղութները իրենք աճած կամ նուազած են իրրեւ հետեւանք մարդկային տեղաշարժներու, որոնք պարբերաբար կը հարուածեն սփիւռքի հայութիւնը, արձակուելով օտար ազգերու ներքին յեղափոխութեան, կամ պատերազմին, կամ քաղաքացիական կռիւներուն աղէտներէն:

Վերջին երեսուն տարիներու շրջանին այդպիսի դէպքեր պայթեցան շարք մը երկիրներու մէջ, ծանր տագնապներու եւ կորուստներու մասնելով անոնց սահմաններէն ներս հաստատուած հայ բազմութիւններ: 1946-47ին Յունաստանի քաղաքացիական արիւնալի բախումները փոփոխեցին յունահայ համայնքներուն գոյավիճակը: 1948-ին մզուեցան Իսրայէլ-Արաբ կռիւները, որոնց հետեւանքով Երուսաղէմէն եւ շրջակայ աւաններէն հազարաւոր հայեր սարսափի տակ տուն ու ստացուածք լքեցին եւ Ս. Յակոբեանց վանքին պարիսպէն ներս ապաստան գտան, կամ մեկնեցան դէպի ապահով հեռասաններ: Եգիպտոսի քաղաքական յեղաշրջումը 1952-էն ետք՝ դրամագլուխի, գործարաններու եւ առեւտուրի ընկերութեանց պետականացումով իրաւազրկեց նաեւ եգիպտահայ առաջաւոր գաղութէն տասնեակ հազարաւոր հոգիներ, որոնք հարկադրուած զգացին արտագաղթել մինչեւ անձանօթ աշխարհներ: Նոյն տարիներուն, Կիպրոսի նորաստեղծ հանրապետութեան վրայ ծանրացաւ թուրքերու ներքին խռովութեանց կամ արտաքին յարձակման մղձաւանջը եւ հայ գաղութին գրեթէ կէսը զնաց Լոնտոն եւ ուրիշ ապահով սփեր:

1957-ի Սեպտեմբերի 5-6ին, Պոլսոյ եւ Իզմիրի փողոցներուն մէջ յոյներու, նաեւ հայերու դէմ թուրքերու գործադրած բարբարոս արարքները, - թալանի, հրդեհի ու սպանդի - Թուրքիոյ հայութիւնը նահապետիկ ջարդերուն սոսկումով համակեց եւ իրրեւ հետեւանք՝ ծաւալեցաւ Պոլիսէն փախչելու շարժում մը: Նոյն այդ տարիներուն, Սուրիա ունեցաւ պարբերական բռնակալ պետեր, որոնք քաղաքական ու տնտեսական խտրաբարոս ճնշումներու ենթարկեցին ժողովուրդը եւ մանաւանդ ազգային փոքրամասնութիւններ եւ տասնեակ հազարաւոր հայեր գաղթեցին Լիբանան եւ ուրիշ երկիրներ: Եւ այդ բոլոր շարժումներէն ամենէն ահաւոր աղէտը եղաւ Պէլքրութի եւ շրջակայքին մէջ մղուած քաղաքացիական պատերազմը, որ կողոպուտի, կործանումի ու կոտորածի վայրագութեան ծայրագոյն աստիճաններուն հասաւ: Անոր ընթացքին զոհ ինկան հազարաւոր անմեղ հայեր, բիւրաւորներ կորսնցուցին իրենց տուններն ու ստացուածքը, եւ քանի մը տասնեակ հազար հայեր ալ դարձան կրկնակի գաղթական դէպի նոր, անձանօթ հորիզոններ:

Սփիւռքահայ այս յաջորդական մարդկային տեղաշարժները

անխուսափելի կերպով փոփոխման պիտի ենթարկէին հայ համայնքներու գոյավիճակն ու դիմագիծը: Վտանգուած մարգերու գլխաւոր կեղրոններ կը տուժէին, կորսնցնելով մանաւանդ երիտասարդ տարրեր, որոնք իրենց որդեգրած տարրեր միջավայրերուն մէջ կ'աճեցընէին ու կը կենսաւորէին հին համայնքներ, կամ նոր գաղութներ կը հիմնէին: Շրջանի մը տկարանայր կը փոխարինուէր ուրիշ մարզի մը զօրանալով:

Ուրեմն հարեւանցի ակնարկով կը թուի թէ սփիւռքի հայութիւնը իրրեւ ամբողջական քանակ եւ որակ՝ ոչինչ կը կորսնցնէ այս մարդկային ուժերու տեղափոխումով, որովհետեւ անոնք գոյութենէ չեն դադրիր, այլ պարզապէս իրենց հասցէներն ու հանրային գործունէութիւնը տարբեր վայրեր կը տանին: Բայց երեւութապէս միայն: Որովհետեւ այդ իրողութիւնը միայն ներկայ սերունդը կ'ընդգրկէ, որ ինչ անհարազատ երկինքի տակ ալ ծուարի, ոչինչ կը լքէ իր ունեցած հայկական նկարագիրէն, ձգտումներէն ու ոգիէն:

Մինչ պատկերը եղբրականօրէն կը շրջուի անոնց զաւակներուն ու թոռներուն համար: Բաւական ստուգօրէն կարելի է հաւաստել, թէ Մերձաւոր Արեւելքի արաբ կամ իսլամ երկիրներուն մէջ ապրող հայ ընտանիքներու տղաքն ու աղջիկները եւ անոնց գալիք սերունդները մինչեւ անորոշ ապագան, կրնան իրենց ծնողներուն չափ հայ մնալ: Մինչդեռ նոյն ընտանիքին թոռները Եւրոպայի կամ Ամերիկայի մէջ, - մինչեւ Արժանթին ու Աւստրալիա, պիտի սուզուին ու անհետին հիւրընկալ ցեղերու լեզուներուն, մշակոյթներուն եւ ընկերային հրապոյրներուն յորձանուտին մէջ: Եւ ասիկա պիտի ըլլայ ներկայ գաղթերու տեղաշարժներուն անփոխարինելի կորուստը հայ ժողովուրդին համար:

Այս վերջին շրջապտոյտիս ընթացքին գտայ որ նշանակալի փոփոխութիւններ կրած էին գրեթէ բոլոր հայ գաղութները: Մեծ բարեբախտութիւն է, որ ամէն տեղ հայերը անտեսապէս բարեկեցիկ վիճակի տիրացեր են իրրեւ խանութպան, մեքենագէտ, արհեստաւոր կամ մասնագէտ:

Գամակոսի հայութիւնը, որ 5-6000 անձեր կը հաշուէր՝ նկատելի յաւելում կամ նուազում չէ ունեցեր եւ իր ազգային, կրթական ու մշակութային աշխոյժ գործունէութիւնը կը շարունակէ զպրոցի, Առաջնորդարանի (Էջմիածնի հաւատարիմ), Բարեգործականին եւ մեր Ակումբին շուրջ, որուն նոր սրահին մէջ ունեցանք քանի մը հանրային հաւաքոյթներ, ուր հայրենաշունչ բովանդակութեամբ խօսքի, երգի ու նուագի տպաւորիչ յայտագիրներ տրուեցան: Ոգևորիչ էր մանաւանդ մեր կազմակերպութեան մէջ գործօն ներկայութիւնը խանդավառ ու գիտակից երկսեռ երիտասարդներու, որոնք

առաջնորդող դեր կը կատարեն գաղութի ազգային ու հասարակական գործունեությունները և տարբեր ապարհներուն վրայ: Ինձի համար յուզիչ պահ մը եղաւ, տնօրէնին հրահրով խօսիլ լայն խաղաղայրին մէջ համախմբուած ուսանողներու բազմութեան՝ հայերէն լեզուին, Հայաստանի շքեղ իրականութեան եւ հայ ժողովուրդի վերածնունդին մասին: Այս հաւաքոյթներուն միշտ ներկայ կ'ըլլար Դամասկոսի Առաջնորդ երիտասարդ վարդապետը:

Ամմանի հայերը շուրջ 4,000 կը գնահատուին, բայց այս քանակը ելեւէջներ կ'ունենայ Լիբանանի կոիւներուն հետեւանքով հոն ապաստանող եւ յետոյ Պէյրութ վերադարձող բնամիտներու համարանքին համեմատ: Հոն նորակերտ եկեղեցին ու հայ դպրոցը դրացի են իրարու եւ նոյն օրը կրցայ այցելել երկուքին ալ եւ զրոյց ունենալ ուսուցիչներու եւ աշակերտներու հետ, ներկայութեամբ վարդապետին եւ տնօրէնուհին, որ Յակոբ Օշականի աղջիկն է: Անոնց մօտ է նաեւ մեր ակումբին նորակառոյց շէնքը, բնդարձակ սրահով, ուր հրապարակային ելոյթով խօսեցայ հայրենական ու սփիւռքահայ հարցերու շուրջ: Հակառակ իր փոքր թիւին, Ամմանի գաղութը կենսունակ է եւ եռանդով փարած կը մնայ իր գոյատեւման անհրաժեշտ հաստատութեանց եւ զանոնք առաւելագոյն շարժով արդիւնաւորելու ճիգերուն:

Իգմիրի աղէտէն ետք, 1922-ին, հայ գաղթականներու հոծ բազմութիւն մը հիւրընկալուեցաւ Յունաստանի կողմէ, ուր շարք մը որբանոցներ ու գաղթակայաններ բացուեցան Աթէնքէն մինչեւ Գորֆու, որոնց մէջն ու շուրջը ապրող հայերու թիւը հասաւ աւելի քան 40,000-ի: Բայց երկիրը զարնուեցաւ ներքին փոթորիկներէ, եւ նացի Գերմանիոյ գրաւման սարսափները ապրեցաւ: Յետոյ, Դաշնակից պետութեանց յաղթանակին յաջորդեցին քաղաքացիական արիւնոտ կոիւները: Այն ատեն, 1946-47ի հայրենադարձի բնդհանուր շարժումի շրջանին, մօտ 23,000 հայեր ներգաղթեցին Հայաստան, եւ անկէ ի վեր ուրիշ հազարներ արտագաղթեցին դէպի օտար կայքեր: Այսօր, 8,000-է աւելի հայեր կ'ապրին Յունաստանի մէջ, կեդրոնացած Աթէնքի շուրջ, նաեւ Սելանիկ: Հայ Եկեղեցիին օրինական (էջմիածնի հաւատարիմ) թեմը ունի երկու տաճարներ, եւ ուրիշ երկու եկեղեցիներ ալ բաժնուած են եւ յարած Անթիլիաի անջատ հատուածին:

Նախորդ այցելութեանս Յունաստան՝ տակաւին գնդապետներու բռնակալ լուծը կը ճնշէր ամբողջ ժողովուրդին վրայ: Եւ մեր հանդիպումներն ու ժողովները հարկադրուած էինք զուժարեկ զաղանի, կամ Աթէնքէն դուրս մեկուսի վայրերու մէջ: Այս անգամ ուսմկապետական անկաշկանդ դրութիւն մը կը տիրէր, ժողովուրդը ուրախ էր

եւ կենսալի: Եւ բնականօրէն՝ ազատութեան այդ մթնոլորտը իր բարերար ազդեցութիւնը ունեցած էր նաեւ հայ գաղութի կենսքին ու գործունեութեան վրայ: Եւ ես կրցայ հաճելի զրոյցներ ունենալ Ա. Գալբազեան հայկական վարժարանի տնօրէնին եւ ուսուցիչներուն հետ եւ յետոյ խօսիլ համախմբուած երկսեռ աշակերտներուն: Իսկ երեկոյ մը հրապարակային ժողով սարքուեցաւ դպրոցի սրահին մէջ, ուր խօսեցայ Հայաստանի եւ սփիւռքի ազգային հոյակապ իրագործումներուն եւ գաղութահայ տակաւին շարունակուող տագնապներուն մասին: Եւ երեկոյ մը հաւաքոյթ ու զրոյց ունեցանք մեր Արարատ ակումբին մէջ: Հակառակ իր փոքր թիւին, յունահայ գաղութը աշխոյժ, խանդավառ եւ ինքնավստահ էր, աւելի զօրացած՝ նորեկ երիտասարդ եւ Մելգոնեան կրթական Հաստատութենէն շրջանաւարտ տարրերով: Այդ նոր կենսունակութեան ամենէն ցայտուն մէկ ապացոյցն էր Յունաստանի մեր կազմակերպութեան տուած որոշումը, Աթէնքի մէջ վերհրատարակել սկսելու շարժաթերթ մը, արդիւնաւոր դերը շարունակելու համար նախորդ «Սրկիր»ին, որ դադարեցուած էր բռնաւոր գնդապետներու իշխանութեան սկիզբին:

Լոնտոն փոքրաթիւ հայ համայնք մը ունէր, խմբուած Գալուստ Կիւլպէնկեանի կառուցած եկեղեցիին շուրջ: Բայց նախ Կիպրոսի մէջ թուրքերուն յարուցած վախին իրբեւ արդիւնք, եւ յետոյ Մերձաւոր Արեւելքի ներքին խռովութեանց եւ կոիւներուն հետեւանքով հազարաւոր նորեկ հայեր ապաստան գտան հոն եւ աճեցաւ ու զօրացաւ գաղութը, հասնելով մինչեւ 5-6000 հոգիի: Եւ որովհետեւ նորեկներուն մէջ կարեւոր քանակ մը կը կազմեն երիտասարդ ու մտաւորական տարրերը՝ Լոնտոնի համայնքը արդէն որակաւոր ձեռնարկներ կը կատարէ ազգային, մշակութային ու զեղարուեստական մարզերուն մէջ: Եկեղեցիէն բացի, հոն գործօն աշխատանքի լծուած են Հայկական Բարեգործական Ընդհ. Միութիւնը, Հայ Տունը, մեր ակումբը եւ Թէքէեան Մշակութային Միութիւնը: Հոն եւս հետաքրքրական հանդիպումներ ու ժողով ունեցանք ընկերներու եւ առաջաւոր ազգայիններու հետ:

Սփիւռքահայ մարդկային տեղաշարժները իրենց ամենէն աւելի ծաւալուն ու հեռահաս արդիւնքները բերին Արեւմտեան Կիսագունդին բազմաթիւ կեդրոններուն մէջ բնակող հայութեան համար: Հեռաւոր Աւստրալիան բոլորովին նոր ու կենսունակ գաղութ մը ունեցաւ: Միացեալ Նահանգներու շարք մը համայնքները աճեցան ու նորոգուեցան նոր պանդխտութեան ելած տասնեակ հազարաւոր հայ բնտանիքներու յաւելումով, որոնց մէջ տիրական տարրը կը կազմէին երկսեռ երիտասարդներ: Բայց տակաւին, անհամեմատ աշխուժացում ստացան Թորոնթոյի եւ մանաւանդ Մոնթ-

րէպի (Փանատա) հայ համայնքները՝ նորեկ պանդուխտներու կեդ-
րոնացումով:

Թորոնթոյի հայերը բազմամալով, հասեր են մինչեւ մօտ 10,000
հոգիի: Հոն հայ եկեղեցիին եւ անոր յարակից հայ դպրոցին շուրջ,
եւ Ռ.Ա.Կ.ի ակումբին ու Թէքէեան Մշակութային Միութեան ճի-
գերով՝ աշխոյժ թափով կը զարգանայ ու կ'արդիւնաւորուի հան-
րային գործունէութիւնը:

Այս բոլորի շարքին՝ ամենէն արագ ու կենսունակ աճող գաղու-
թը դարձաւ Մոնթրէալը: Մէկ-երկու տասնամեակի կարճ ժամանակ
մը, եւ նորակազմ հասարակութեան մը սկզբնական խարխափում-
ներէն, վէճերէն ու տաղնապններէն ետք՝ Մոնթրէալի հայ համայնքը
հասած է նշանակելի հանդրուանի մը, արագօրէն զօրանալով ազգա-
յին, կրթական ու մշակութային ասպարէզներուն վրայ: Վերջին
քանի մը տարիներուն ան ունեցաւ իր փառաւոր եկեղեցիին յարակից
բաժիններով, նորակառոյց հայկական վարժարանը՝ Պրն. Ալեք
Մանուկեանի հիմնադիր նուիրատուութեամբ եւ Հայկական Բարե-
գործական Ընդհ. Միութեան նոր կեդրոնը: Իսկ Ռամկավար Ազատ-
Կուսակցութիւնը արդէն գնած էր երկյարկանի գեղեցիկ շէնք մը,
որուն վերի սրահը յատկացուած է Թէքէեան Մշակութային Միու-
թեան: Այս հաստատութեանց տուած այցերս եւ քանի մը առիթ-
ներով հրապարակային ելոյթներ, նաեւ հանդիպումներ երիտա-
սարդներու հետ, խոր դոճունակութիւն ու հրճուանք բնծայեցին
ինձի: Եւ տակաւին թուական աճման մէջ է արդէն 15,000 հոգի
համրող թարմ համայնքը:

Բայց սփիւռքահայ շարք մը համայնքներու այս ոգևորիչ պատ-
կերներուն հանդէպ՝ կան նաեւ մտայլ իրողութիւններ, որոնք դժ-
բախտաբար կը յայտնուին ու մտահոգիչ վիճակներ կը ստեղծեն
մեր մեծագոյն գաղութներուն մէջ: Ծիշղ է, թէ այդ տաղնապալի
երեւոյթները յաճախ արդիւնքն են հայկական հասոցութենէն վեր
արտաքին ճնշումներու,՝ հիւրընկալ երկիրներէն ներս իշխանու-
թեան մը պարտադրած կամայական կապանքներուն, կամ ներքին
յեղաշրջումի, կամ քաղաքացիական կռիւններու: Բայց նաեւ կան
ցաւազին կացութիւններ, որոնք կրնան դարմանուիլ մեր սեփա-
կան միջոցներով, կամ գոնէ հնարաւոր է նուազեցնել անոնց վնա-
սարար հետեւանքները: Իսկ ատոր համար անհրաժեշտ պայման է,
որ առարկայական դատումով ճանչցուին անոնց կարիքները եւ
լիապէս գնահատուին անոնց կենսական արժէքն ու դերը սփիւռքահայ
ազգային գոյատեւման պայքարին մէջ:

× × ×

Ֆրանսահայ գաղութը իր քանակին ծաւալով ու որակին բարձր
մակարդակով՝ սփիւռքի մեծագոյն հայկական կեդրոնացումը եղաւ
1920-ի յաջորդ տարիներուն: Քեմալական բանակին յաղթական յա-
ռաջադաշտը Կիլիկիոյ եւ Անատոլուի մէջ եւ անոր կողմէ Իզմիր
քաղաքին գրաւումն ու հրկիզումը, հարիւր հազարաւոր յոյն ու հայ
բնակիչներու կոտորուածն ու սպանդին հետ՝ սարսափի նոր մղձա-
ւանջի մը մատնեցին Ապրիլեան Եղեռնէն վերապրած Թուրքիոյ հա-
յութիւնը: Եւ խուճապային փախուստի արտախուժում մը տեղի ունե-
ցաւ իրրեւ հետեւանք: Բիւրաւորներ գաղթեցին Միացեալ Նահանգ-
ներ, Յունաստան, Մուրիա եւ Լիբանան, իսկ գլխաւոր զանգուած մը
սպաստան գտաւ Ֆրանսայի հողին վրայ, Բարիզի, Մարսիլիոյ ու
Լիոնի շրջաններուն մէջ:

Տարբերութիւնը այն եղաւ, որ բնիկ լեզուին ծանօթութեան,
միջավայրին փոպական հրապոյրին ու երկրին կեդրոնական դիրքին
իրրեւ արդիւնք՝ երէց սերունդի յայտնի գրողներ, հանրային առաջ-
նորդներ ու մտաւորական դէմքեր որոշ տարիներ կամ վերջնապէս
իրենց իրրեւ բնակավայր բնտրեցին Ֆրանսան: Հոն սպրեցան մշտա-
պէս կամ պարբերաբար, Արշակ Զօպանեան ու Շիրվանզադէ, Վահան
Թէքէեան ու Աւետիք Իսահակեան, Լեւոն Բաշայեան, Աւետիս Ահա-
րոնեան ու Տիգրան Կամսարական, Զապէլ Եսայեան ու Կոստան Զար-
եան, Մկրտիչ Փորթուզալեան ու Պօղոս Նուպար, Մինաս Զերազ ու
Վահան Մայկեան, Յակոբ Օշական, Թէոդիկ ու Յովհ. Ասպետ,
Ալեքսանդր Պատրսեան, Սիմոն Վրացեան ու Շուարշ Միսաքեան,
Արտակ Դարբինեան, Աւետիս Թերզիպաշեան ու Միքայէլ Պապաջան-
եան, Շահան Նաթալի, Յովհ. Պօղոսեան եւ բազմաթիւ ուրիշներ:
Անոնց համախառն տաղանդները, համբաւներն ու ազդեցութիւնը կը
թուէր թէ Ֆրանսահայ գաղութը պէտք էր կարենային վերածել ար-
տասահմանի ամենէն կենսունակ եւ ամբօրէն կազմակերպուած հայ-
կական կեդրոնացումին:

Եւ ժամանակ մը կարծես մարմնանայ սկսաւ այդ ակնկալութիւնը,
համազգաղութային առաջնորդող հմայքի ու հեղինակութեան հեռահաս
յոյսեր ներշնչելով: Կուսակցութեանց եւ ազգային հաստատութեանց
վարիչ մարմիններ փոխադրուել էին Բարիզ: Ռամկավար Ազատական
եւ Հնչակեան հոսանքները հրատարակեցին սեփական պաշտօնաթեր-
թեր, առաջինը՝ «Ապագայ» եւ երկրորդը՝ «Երկիր»: Դաշնակցու-
թիւնը հոն բնաւ մամուլ չունեցաւ մինչեւ այսօր (*), սակայն ատոր
պակասը լիապէս լեցուց Շուարշ Միսաքեան, հիմնելով իր անձնական

*) Այս յօդուածաշարի հրատարակում էր արդէն, երբ Դաշնակցականներ սկսան
Բարիզի մէջ հրատարակել շարքաբար մը, «Ազատամարտ» անունով:

օրաթերթը, «Յառաջ», որ այդ կազմակերպութեան անպաշտօն գաղափարախօսը դարձաւ, և կը շարունակուի անոր ազդեան՝ Արփիկ Միսաքեանի կողմէ, որ աւելի անկախ, նոյնիսկ Հայաստանի համակերպողներէ մը սրբեկրած է: Երեւոյն նաեւ ու գաղթեցան «Մարտիրոս», «Ամբոյց», «Արեւմտակ», «Ժողովուրդ» և ուրիշ թերթեր, իսկ Մարտիրոս մէջ՝ «Արմենիա»ն և «Հայ Սիրտ»ը:

Բայց երկնք սերունդի գրողներուն, հասարակական վարիչներուն ու ժողովրդային լայն խաւերու հետ, Պոլիսէն ու Թուրքիոյ տարրեր մարդերէն Փրանսա գաղթեցին ու հոն հաստատուեցան հայկական վարժարաններէ շրջանաւարտ, ուրեմն հայեցի ոգիով, ձգտումներով ու դաստիարակութեամբ թրծուած պատանի և երիտասարդ տարրեր, որոնք բնական կազմով գաղութին գաղթը գեղափայտները պիտի գտնային: Եւ հաղի տառնամակ մը անցած՝ անոնց շարքերէն յայտնուեցան հարուստ տաղանդով կամ միջին շնորհներով օժտուած բազմաթիւ դէմքեր, - Շահան Շահնուր ու Վազգէն Շուշանեան, Կիկոպոս Մարաֆեան ու Զարեհ Արուսի, Բրիգոնդ Թոփալեան, Շաւարշ Նարգոյնի ու Նշան Պէշիկթաշչեան, Հրաչ ու Ռաֆայէլ Զարգարեան եղբայրներ ու Պետրոս Զարոյեան, Գեղամ Աթմաճեան (Ա. Սեմա), Մատի Աթմաճեան ու Հրաչ Բարսեան, և ուրիշ գրողներ, գերասաններ, երաժիշտներ ու նկարիչներ: Անանք, Ա. Զօղանդանի խմբադրած «Անահիտ» ամսագրի կողքին՝ հեղգհեաէ հրատարակեցին «Մեկն», «Զուարթնոց», «Անկասաակ» և ուրիշ գրական ու գեղարուեստական բարձրորակ հանդէսներ ու տարեկրթեր: Եւ մինչև փրջին պատերազմը, անոնք սփիւքբաճայ իրապաշտ ու գեղակերտ գրականութեան ամենէն ծաղուտն ու վարակիչ շարժումը ստեղծեցին ու վարեցին: Ուրեմն, յաջորդական երկու սերունդներու մասնաբաժան տաղանդի, լայն համբաւի ու ծառայութեան վարկի կեդրանացած գեղափարութիւն մը սպրեցաւ ու գործեց Փրանսայի հայութեան մէջ:

Սակայն ափսոսալի հակասութեամբ մը, Փրանսաճայ գաղութը եղաւ ամբողջ սփիւքքի ամենէն կազմալուծուած ու տկար դանդաւածը, հակասակ իր մարդկային քանակի ու սրակի գերազանց ուժերուն: Այս ախտը իրագոյթեան շուրջ է միայն, որ բնոյհանուր համաձայնութիւն կը յայտնուի բոլոր հաստատմաներուն ու խաւերուն միջև: Մտա ամբա մը Բարից կեցութեանն բնթացքին, բազմաթիւ հանդիպումներ ու գրոյցներ ունեցաւ, մասնակի կամ հրապարակային, գրողներու և խմբագիրներու, մասնաբաժան դէմքերու և համայնաբանական ուսանողներու հետ, մինչև Փրանսաճայ Գրողներու Արուսեան սարքած հանդէսը: Եւ կարծես վճատութեան, նոյնիսկ անգոր յուսադրումի հոգեկան հիմախա մը վարակիչ կը գրեթէ ամէնըր: Մինչ նոյն ատեն խորունկ կարօտը և բազմաձայն և կամքը բացայայտ

էին ամբողջական, մակընթաց վերականգնում մը իրագործելու: Բայց պայմանով որ հայթայթուէր հիմնական նպատակներու ամբա-նիստ խարխիւրը, որուն վրայ կառուցուէր ազգային, գրական, մշակութային ու գաղափարական վերանորոգիչ շարժում մը, - Հայաստանի իրականութեան, Հայկական Դատի նշանակէտին և Էջմիածնի հանդէպ հաւատարմութեան առանցքներուն շուրջ:

Երեւակայել, որ Փրանսայի և շրջակայքի հայոց թիւը, նորեկներու յաւելումով, 300,000 հոգի կը նկատուի (ոմանք մինչև 400,000 անձ կը հաշուէին, որ յայտնօրէն չափազանցուած քանակ մըն է): Այդ գումարը սփիւքքի բովանդակ հայութեան աւելի քան հարիւրին քանը, - մէկ հինգերո՞րդը - կը ներկայացնէ, թանկագին, անփոխարինելի զօրութիւն մը համբանքի և ոգիի, տաղանդի և ուժի, - եթէ ան կազմակերպուի ընդհանուր գորաշարժի մը մէջ և ուղղուի որեւէ ազանդի ու հաստուածի, որեւէ քմայքի ու ցնորքի փայփայած պատրանքներէն վեր՝ հայ ժողովուրդի գերազոյն իտէլներուն և յաւերժական իրաւունքներուն հետապնդման ճիգերուն:

Աններելի մեղանշում պիտի ըլլայ ուրեմն մեր ազգային ամենէն նուիրական արժէքներուն ու ձգտումներուն դէմ, թողլ տալ որ Փրանսաճայ հսկայ գաղութը շարունակէ ամլանալ իր ներկայ կազմալուծ վիճակին մէջ: Երբեմն ձեռնարկ մը կրնայ յաջողիլ անակնկալ տարողութեամբ, ինչպէս եղաւ Պէյրութի աղէտահար հայերուն համար հանգանակուած նուէրներուն սքանչելի արդիւնքը: Սակայն բացառութիւն մը, որ ոգեկան, իմացական ու նիւթական թագուն ուժերու գոյութիւնը կը հաստատէ՝ առաւել ափսոսալի ու ցաւագին կը դարձնէ անոնց այլապէս ապարդիւն սպառման մատնուած մնալը: Որովհետեւ վատնումի ընդհանուր պատկերը մոայլօրէն տխուր է:

Հոն տկար է Ռամկ. Ազատ. Կուսակցութիւնը, որուն ակումբները Բարիցէն մինչև Լիոն, Վիէն, Վալանս ու Մարսիլիա, իրենց սահմանուած դերերը չեն կրնար կատարել, զրկուած ըլլալով սեփական մամուլի գաղափարական ու կազմակերպական անհրաժեշտ առանցքէն: Իսկ առանց թերթի՝ հնարաւոր չէ, որ ան յաջողի աւելի զօրանալ ու ծաւալիլ, և ընդհանրական նպատակներ ու գործելակերպ ընդգրկող ուղեգիր մը շուրջ համախմբել և առաջնորդել հասարակութեան լայն խաւերը: Դժբախտաբար՝ մեր «Ապագայ» թերթը փակուեցաւ պատերազմին հետեւանքով. յետոյ «Այսօր» օրաթերթը խափանուեցաւ Փրանսայի կառավարութեան կողմէ՝ անարգ գրպարտութեանց պատճառով: Իսկ նոր մամուլ մը հաստատելը, որ վճռական պահանջ է, ներկայ անտեսական պայմաններուն տակ առնուազն 100,000 տուրքի դրամազուլիս մը կը նախատեսէ, որ սրամաղրելի չկայ տակաւին, բայց որուն ստեղծումը իրապէս կենսական է:

Ֆրանսաճայ գաղութին մէջ, ժողովրդային ծրագիրներով ու գործունէութեամբ տկար են նաեւ Հայ Եկեղեցին ու Հայկական Բարեգործական Ընդհ. Միութիւնը, հակառակ որ անոնք ունին սեփական կեցրոններ, բաւարար պաշտօնեաներ ու նիւթական աղբիւրներ: Նոյնիսկ Նուպարեան Մատենադարանին նման հիմնարկ մը, որ բազմաճաղար մեծարժէք գիրքերու եւ պարբերաթերթերու հարուստ գանձարան մըն է, լրուեր է իր վիճակին եւ չօգտագործուիր որպէս մտաւորական շարժումներու կամ հանդիպումներու մեկնակէտ: Որովհետեւ ընդհանուր բարոյալքումն ու վհատութիւնը վարակեր են թէ՛ զբողներ եւ հանրային առաջնորդներ եւ թէ՛ անոնց հետեւորդ տարրերը: Եւ անոնք կը մնան անտարբեր, ուրեմն ձեռնպահ, այդ գլխաւոր հաստատութեանց կազմերուն ու ձեռնարկներուն հանդէպ:

Դժբախտաբար՝ միայն անուանական դարձեր է Հնչակեան՝ հոսանքին գոյութիւնը: Իսկ «մշակութային» կոչումով ծանօթ միութիւնը, որ «Աշխարհ» շաբաթաթերթը կը հրատարակէ, ձախ գաղափարներու տարբեր երանգներով ինքն իր մէջ անգամ չերտաւորուած է եւ իր կազմութեան բնոյթով իսկ գատապարտուած է սահմանափակ ծիրի մը պատուարներէն ներս մնալու, ժողովրդային գանձուածէն դուրս:

Բազմաաբար քիչ մը աւելի լաւ է Դաշնակցութեան դիրքը, շնորհիւ «Յառաջ» օրաթերթին կողմէ անոր ընծայուած աճաքին նպաստին: Ճիշդ է, թերթը հիմնուեցաւ Շաւարշ Միսաքեանի կողմէ եւ հիմա կը շարունակուի անոր աղջկան՝ Արփիկ Միսաքեանի խումբագրութեամբ, իբրեւ ընտանեկան ձեռնարկ: Բայց նոյն ստեղծ, այդ մամուլը Դաշնակցութեան ուղեգծին որպէս քարոզիչ՝ անոր անդամներուն հայթայթեց գաղափարական կապ ու կազմակերպական խորիստ: Սակայն ան եւս տկարացեր է յաջորդական ներքին պառակտումներէ, որոնք սկսած էին Շահան Նախալիի գլխաւորած ըմբոստացման շարժումներէն, երբ արեւմտաճայ առաջնորդներ ու շարքայիններ բողոքելով խղուեցան Դարբինեան-Վրացեան-Նուասարեան Պիւրոյին որդեգրած հակաճայաստանեան ու թրքամէտ վարքագծէն եւ անկէ բխած եղբայրասպան ոճիրներու արարքներէն, որոնք կը գործուէին Սովետ Հայաստանի փրկարար իրականութեան ջատագով խմբագիրներու եւ հայրենասէր գործիչներու վրայ:

Եւ այդպէս, հակառակ իր քանակային հսկայ գորութեան եւ մտաւորական ու հանրային ղեկավարներու մեծարժէք ուժերուն՝ Ֆրանսայի հայ գաղութը հետզհետէ տկարացաւ ու իջաւ ներկայ կազմաւորած վիճակին, որ անխիստութեան սահմանին կը հասնի: Այս արտոսալի կացութիւնը ստեղծեցին քանի մը հիմնական պատճառներ: Ֆրանսաճայ յայտնի գրողներ եւ արուեստագէտներ, սկիզբէն իսկ,

չխառնուեցան, մասնակից չեղան ժողովրդային խոնարհ խաւերու առօրեայ կարիքներուն ու պայքարներուն, անոնց ձգտումներուն ու երազներուն, ուրեմն անոնց կազմակերպական շարժումներուն: Այլ նախընտրեցին մնալ անոնցմէ վեր ու դուրս, իրենց ասպարէզները վերածած փողոկրէ աշտարակներու եւ նուիրուելով անոնց գեղարուեստական հրապոյրներուն, ուրեմն հասարակութիւնը զրկելով իրենց տաղանդներուն լոյսէն ու համբաւներուն ոգեւորութենէն: Եւ անհատականութեան շեշտուած գիծերով ու յաճախ այլամերժ յաւակնութիւններով՝ անոնք չկրցան համերաշխ միջնորդաւ ստեղծել նոյնիսկ իրենց միջեւ ու գործակցիլ իրարու հետ: Այլ անձնական նախասիրութեանց ու անհանդուրժող դատումներու սեփական աղօսներ բացին ու քաղցին առանձին անոնց մէջէն, իրենց ամուլ ու վնասարար բախումներուն յուսահատ շուարումին մատնելով հասարակութիւնը, որ ի զուր սպասեց ու յուսաց կեցրոնացած, ուժեղ ղեկավարութեան մը:

- Ուրիշ սպառման պատճառ մը եղաւ հատուածներու աճումը նոյն նպատակները հետապնդող ու նման գործելակերպ որդեգրած ձակաորին վրայ: Դաշնակցական անհատ մը «Յառաջ»ը հաստատեց իբրեւ անձնական ձեռնարկ եւ ան տեւեց մինչեւ այսօր, որովհետեւ ուրիշ մրցակից չունեցաւ այդ այգիէն ներս: Նոյնիսկ Դաշնակցութիւնը չհամարձակեցաւ անոր կողքին կուսակցական պաշտօնաթերթ մը հրատարակել: Մինչդեռ, «Հայաստանեան» ընդհանուր օրակուսով բնորոշուող ժողովրդային հսկայ մեծամասնութեան մէջ՝ նոյն շրջաններուն լոյս կ'ընծայուէին բազմաթիւ թերթեր, համանման բովանդակութեամբ: Թամկ. Ազատ. Կուսակցութիւնը, Հնչակեաններ, «Յառաջդիմականներ», Արեւմտաճայ Ազատագրական Ուխտականներ կը հրատարակէին իրենց պաշտօնական, անջատ թերթերը: Եւ տակաւին, անոնց կողքին կ'երեւէին ուղեկից գրողներու անհատական թերթեր, գրական, ազգային ու քաղաքական նոյն ուղեգիծներով, որոնք հատուածային խրամներով կը բաժնէին, կը կոտորակէին ու կը տկարացնէին «Հայաստանեան ձակաու»ի խմբագիրներու եւ գրողներու ծառայելու կամքերը, մաքառելու ոգին ու ստեղծարար ճիգերը: Այդ բազմատեսակ ու մեծածախա ձեռնարկները նաեւ բեկորներու կը վերածէին ընթերցողներու հոմ զանգուածը, անոնցմէ զալիք նիւթական հասոյթը նուազագոյնին իջեցնելով: Եւ շաբաթաթերթ, եռօրեայ կամ օրաթերթ կը ծնէին ու կը մեռնէին, առանց իրենց սահմանուած կենսական դերերը կատարել յաջողելու, առանց ժողովրդային խաւերը յարատեւ խանդավառութեամբ ներշնչելու եւ առաջնորդելու միասնական կազմակերպութեան մը ծրագիրին, Հայոց ազգային գերագոյն նպատակներու հետապնդումին համար:

- Երրորդ պատճառ մը Ֆրանսայի հայ գաղութին տկարութեան՝

ցաւագին վատնումը եղաւ «Ամրոցական»-«Մարտկոցական» շարժումներուն գիտակից, հայրենասէր առաջնորդներուն ու շարքային հետեւորդներուն: Անոնք ըմբոստացած՝ իրենց բողոքն ու ցասումը պոռթկացին Դաշնակցութեան պետերուն վարած հայրենադաւ ձեռնարկներուն դէմ: Անոնք իրենց մամուլին ու գիրքերուն էջերէն վաւերական փաստերով քողադերձեցին դաշնակցական վարիչներու քրէական գործունէութիւնը, - Ալեքսանդրաբոլի անարգ դաշնագիրէն ու Փետրուար 18-ի եղբայրասպան աղէտէն մինչեւ Պրոմեթէի կովկասեան դաւադրախումբին հետ անոնց մեղսակցութիւնը, Թուրքիոյ զինակցութեամբ խորհրդահայ պետութիւնը կործանելու եւ Հայաստանի իշխանութիւնը վերագրաւելու համար, հայ ժողովուրդի հաւաքական դիակիրն վրայէն: Շահան Նաթալի, Հայ Գնդունի եւ գործակիցներ իրենց մղած այդ յանդուգն պայքարով նշանակելի նպաստ մը բերին սփիւռքահայ հանրային կարծիքը լուսաբանելուն մէջ: Բայց դժբախտաբար անոնք նախընտրեցին մնալ անջատ, մեկուսացած՝ ժողովուրդի մայր հատուածներէն: Եւ լճակներու նման, որոնք կտրուած են որեւէ հոսանքէ, շոգիացան ու ցամքեցան: Մինչդեռ, եթէ իրենց առաջին յորդ ու կենսալի թափին մէջ միանային համախոհ ազգային կազմակերպութեան մը, - օրինակ՝ Ռամկավար Ազատական Կուսակցութեան, զօրաւոր ու մնայուն ազդեցութիւն մը կրնային դառնալ, Ֆրանսահայ համայնքները շատ աւելի միաձոյլ ու հզօր հաւաքականութեան մը վերածելու եւ անոր ընծայելու ներկայ Հայաստանի փրկարար իրականութեամբ լուսաւոր, եւ ապագայի պայծառ տեսիլքով իրապաշտ ու կորովի առաջնորդութիւն մը:

Անցեալի այս պատկերացումը թերեւս անհրաժեշտ էր, ներկայ վերականգնումի մը ջանքերուն լաւագոյն ճամբան հարթելու համար: Իսկ ատոր նախապայմանն է, որ լիապէս ըմբռնուին եւ գնահատուին Ֆրանսայի 300,000 հայերուն մարդկային անփոխարինելի քանակին ու անոր ոգեկան, մտաւորական ու նիւթական ուժերուն գերազանց արժէքները համազգայութեան չափանիշով: Անոր վերակազմութեան իբրեւ մեկնակէտ, առարկայական դատումով, կարելի է ընդունիլ բացայայտ ճշմարտութիւն մը: - Ֆրանսահայ գաղութին բացարձակ մեծամասնութիւնը երբեք պիտի չընդունի Դաշնակցական վարքագիծ ու ղեկավարութիւն: Եւ ատիկա՝ ո՛չ միայն անոր անցեալի մեղանշուններուն, ուրացումներուն եւ աղէտալի դաւերուն համար հայ ժողովուրդին ու Սովետ Հայաստանի դէմ, այլ նաեւ անոր ներկայ վարքագծին պատճառով, - հայրենի պետութիւնը անուանարկելու, Հայկական Դատին եղծանումը մինչեւ մեր ներկայ հայրենիքը Խորհրդային Միութենէն խզելու կործանարար ցնորքին խարդաւանելու, եւ էջմիածնի Մայր Աթոռին հեղինակութիւնն ու վարկը ոտնահարելու ձեռնարկներուն մէջ:

Դարձեալ, նման ղեկավարութիւն մը եւ ընդհանուր գործակցութեան մը անհրաժեշտ հասարակաց ծրագիրը չի կրնար հայթայթել Ֆրանսահայ Մշակութային Միութիւնը իր «Աշխարհ» թերթով, - անոնց հատուածական բնոյթին իբրեւ արդիւնք: Կասկած չկայ, որ Սովետ Հայաստանի հանդէպ խանդավառ սէրով ու նուիրումով տոգորուած են անոնց վարիչներն ու հետեւորդները: Բայց նոյն ատեն, անոնք գաղափարով ու արարքով կը կլանուին Ֆրանսայի բնիկ ձախ հոսանքներու ներքին շարժումներուն ու բախումներուն մէջ, որոնք իրենց փոփոխական ու վիճելի նկարագրով՝ աղանդային բաժանումներ կ'առաջացնեն Մշակութային Միութեան ղեկավար ու շարքային դասերէն ներս: Պատճառը այդ է, որ անոնք մինչեւ հիմա չեն յաջողած եւ պիտի չկրնան ասկէ ետքն ալ, Ֆրանսահայ գաղութին ընծայել զայն ոգեւորող ազգային ընդհանրական նպատակներ եւ համախոհ, միաձոյլ ղեկավարութիւն մը, որ յօժարի եւ ընդունակ ըլլայ հետապնդել այդ առաջադրանքներուն իրագործումը:

Նախկին Ֆրանսահայ մը եղած եմ ես ալ, քանի մը տարիներ ապրած եմ այդ երկրին մէջ եւ անցեալ տասնամեակներուն 6-7 անգամ այցելած եմ Բարիզէն մինչեւ Լիոն, Վալանս, Վիէն ու Մարսիլիա սփռուած մեր համայնքներուն եւ երկար ամիսներ չըջելով աշխատած եմ անոնց հետ: Եւ կը հաւատամ, թէ բաւական կը ճանչնամ Ֆրանսայի հայութեան երէց եւ երիտասարդ սերունդներուն հոգերը, մտածումներն ու իղձերը: Անոնք, մանրուք բացառութեամբ, ջերմօրէն հայրենասէր են եւ Սովետ Հայաստանը հայ ժողովուրդին ֆիզիքական վերապրումին եւ ազգային գոյատեւման միակ երաշխիքն ու խարիսխը կը դաւանին: Անոնք կ'ըմբռնեն Հայկական Դատը՝ անոր լուծումին միակ եղանակով, որ Թուրքիոյ լուծէն ազատագրուելիք որեւէ արեւմտահայ հողամաս միացուի Երեւանի հայրենի պետութեան եւ անոր սահմաններէն ներս: Անոնք Հայ Եկեղեցին կը նկատեն մէկ եւ անբաժանելի, էջմիածնի Մայր Աթոռին եւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին գերազոյն հոգեւոր հովանիին ներքեւ: Անոնք սփիւռքահայ հողմացրիւ համայնքներուն գոյատեւման պայքարին մէջ կենսական կը համարեն Հայկական Բարեգործական Ընդհ., Միութեան կրթական, մշակութային ու նպաստաբաշխ ձեռնարկները:

Ուրեմն Ֆրանսայի, ինչպէս ամբողջ արտասահմանի հայոց հսկայ մեծամասնութիւնը իր հայրենական, քաղաքական, կրօնական եւ ազգապահպանման նպատակներուն ու գործունէութեան մարզերուն մէջ, համոզումով կամ յարումով՝ կը հետեւի երեք մեծագոյն կազմակերպութեանց, - Ռամկ. Ազատ. Կուսակցութեան, Հայ Եկեղեցիին եւ Հայկական Բարեգործական Ընդհ. Միութեան որդեգրած ուղեգիծ-

ներուն եւ գործելակերպին: Բայց դժբախտաբար, Ֆրանսայի մէջ անոնք չեն փորձած իրենց զուգահեռ, լրացուցիչ ծրագիրները հետապնդելու համար ստեղծել մարդկային, ոգեկան ու նիւթական ուժերու համադրում, փոխադարձ գործակցութեամբ: Եւ իրենց այդ մասնատուած վիճակներուն մէջ երեքն ալ մնացած են տկար, իբրեւ հետեւանք՝ Ֆրանսահայ գաղութը զրկելով համախառն, ներդաշնակ ու վստահելի առաջնորդութեան մը բարիքներէն:

Ինչ որ կենսական է հիմա անոր վերականգնումին համար՝ տարեց եւ երիտասարդ տարրերը իրենց ներկայ տարտղնուած վիճակէն բարձրացնել եւ համախմբելն է հիմնական նպատակներու շուրջ եւ միասնական շարժումներու մէջ: Իսկ այդպիսի ծաւալուն առաջադրանք մը գործադրելու համար նախապայման է ունենալ գոնէ եռօրեայ թերթ մը, իբրեւ մեկնակէտ դէպի օրաթերթ: Որովհետեւ անվիճելի իրողութիւն է, որ միայն մամուլը կրնայ ազգային իտէպլներու, հայրենասիրական խանդի եւ հաւաքական գոյապայքարի գաղափարներով, տեսիլքով ու կամքով համակել երէց ու կրտսեր գրողներն ու մտաւորականները եւ ժողովրդային ունեւոր ու խոնարհ խաւերը, զանոնք ներշնչելով, զանոնք մղելով միասնական ճիգերու եւ զոհողութեանց:

Ֆրանսայի հայութեան համար այդ բովանդակութեամբ եւ ուղեգիծով թերթ մը հրատարակելը կ'իյնայ Ռամկ-Ազատ-Կուսակցութեան ծրագիրին ու գործունէութեան ծիրէն ներս: Որովհետեւ անոր մամուլը, ամէն երկրի մէջ, համոզումով ու կորովով զօրավիգ հանդիսացեր է վերածնած Հայաստանի եւ հայրենի ժողովուրդին ու պետութեան վերաշինութեան, բարգաւաճելուն ու զօրանալուն: Որովհետեւ մեր թերթերը հաւատարիմ պաշտպան ու անխաղախ ախոյեան եղեր են Հայ Եկեղեցիի անբաժան միութեան ու հոգեւոր պայծառութեան, էջմիածնի Մայր Աթոռի գերագոյն հովանիին տակ: Եւ անոնք անշահախնդիր նուիրումով աջակցեր են Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան համագալիս բոլոր ձեռնարկներուն, անցեալ աւելի քան 70 տարիներու ընթացքին: Եւ բնական է, որ Բարիգի մէջ սկսուած Ռամկավար Ազատական թերթ մը պիտի կրնայ իր ազգային ու գաղափարական առանցքին շուրջ համախմբել բոլոր հայրենասէր տարրերը, գրող ու արուեստագէտ, մտաւորական եւ առեւտրական, բանուոր ու խանութպան, զանոնք կապելով գաղութի վերականգնումի ճիգերուն: Եւ անոնք պիտի գան «Հայաստանեան Ճակատ»ի, Հայ Եկեղեցիի, Հ. Բ. Ը. Միութեան, հայրենակցական ու մշակութային մարմիններու բոլոր խաւերէն: Եւ այդ մամուլին սփռած ոգիին ու ընծայած շաղկապին շնորհիւ պիտի աճին ու զօրանան բոլոր կազմակերպութիւններն ալ:

Նման թերթի մը պատրաստուած ծրագիրը կը նախատեսէ նուազագոյն 100,000 տողարի դրամագլուխ մը, որ կարենայ ապահովել անոր անխափան հրատարակումը երկու տարի, - մինչեւ անոր ինքնաբաւ դառնալը, որ կարելի է ստոյգ նկատել Ֆրանսայի շուրջ 300,000 հայոց մէջ: Միակ խոչընդոտը այդ 100,000 տողարին պակասն է, բաւական ծանր բեռ միայն Ռ.Ա.Կ.ին համար, բայց չնչին գումար մը համագաղութային չափանիշով, թէ մանաւանդ անոր գոյացումին մէջ որոշ զոհողութեան յօժարին հայրենասէր, բարեացակամ մարդիկ: Երեւակայե՛լ, Միացեալ Նահանգներու մէջ հայ դպրոց մը շինելու համար անվարան կը ծախսուի աւելի քան մէկ միլիոն տողար, եւ ամէն տարի անտրտունջ կը վճարուի անոր շուրջ 100,000 տողարի բացը, միջին հաշուով 300 երկսեռ հայ աշակերտներու քիչ մը հայերէն լեզու, հայոց պատմութիւն ու մշակոյթ սորվեցնելու յոյսով: Եւ անկասկած որ կենսական են այդ յատկացումները, որքան ալ ժլատ բերքեր տան անոնք: Բայց Ֆրանսայի մէջ աւելի քան 300,000 հայերուն գոյապայքարին մէջ անառիկ մարտկոց մը, - մարտնչող թերթ մը - հիմնելու համար անհրաժեշտ պահանջը միայն 100,000 տողարի հիմնադրամ մը գոյացնելն է: Եւ եթէ այդ գումարը ստեղծել հնարաւոր չի նկատուիր՝ ատիկա տխուր վկայութիւն մը պիտի ըլլայ համագալիս տարողութեամբ հայկական ուժերն ու արժէքները գնահատելու մեր կարողութեան մասին:



Սփիւռքահայ տեղաշարժը իր ամենէն ցաւագին հետեւանքներով ազդեր է Եգիպտոսի հայ գաղութին տնտեսական վիճակին, ազգային հիմնարկներուն, եւ բնականօրէն՝ հոգեբանական դրութեան վրայ, նաեւ լքուած ըլլալու վնասութեամբ համակելով համայնքներու առաջնորդող դէմքերն ու գործօն խաւերը: Եւ զարմանալի չէ յուսաբեկումի այդ մտայնութիւնը: Կամալ Ապտէլ Նասրըի գլխաւորած յեղաշրջումէն մինչեւ ներկան՝ 25 տարիներու շրջանին վեց անգամ այցելած եմ Գահիրէ, Հելիոպոլիս եւ Աղեքսանդրիա, երբեմն մնալով երկու-երեք շաբաթներ: Հոն ճանչցեր եմ գաղափարի ընկերներ ու համախոհ բարեկամներ, որոնց մտերմութեան մէջ աշխատանքի խոնջէնքը հոգեկան հաճոյքի կը փոխուէր: Անոնց հետ կը շրջէինք հայկական հաստատութիւնները, - Առաջնորդարան, դպրոցներ, ակումբներ, ուր հանդիպումներ ու զրոյցներ կ'ունենայինք հոգեւոր հայրերու, ուսուցիչներու, աշակերտներու եւ վարիչ պաշտօնեաներու հետ: Ազգային ու գաղութային հոգերու, յոյսերու եւ ծրագիրներու շուրջ կարծիքներու ամէն փոխանակում՝ աւելի կը ճոխացնէր մեր օրերը:

Եւ ամէն նոր այցելութիւն՝ ժամանումի ու բաժանման կարօտով ու թախիժով կը համակէր զիս: Որովհետեւ, հրապարակային հանդէսներու կամ կազմակերպական ժողովներու մէջ, մինչ կը խօսէի բեմէն, նաեւ տիրօրէն կը շփէի պարապը թանկագին անձերու, որոնք խլուած էին կեանքէն, կամ մեկներ էին հեռուոր փերու խոստումներուն: Եւ ես հիմա անոնց կը հանդիպէի Բարիզի ու Լոնտոնի, Մոնթրէալի ու Թորոնթոյի, Պոստոնի ու Նիւ Եորքի, Տիթրոյթի եւ Լոս Անճելըսի մէջ, - խանդավառ ու հայրենասէր աղջիկներ ու տղաք, որոնք առաջնորդող դերեր կը կատարեն իրենց համայնքներուն վերապրումի պայքարին բոլոր ասպարէզներուն վրայ:

Այս վերջին անգամ եւս, Գահիրէի, Հելիոպոլսոյ եւ Աղեքսանդրիոյ մէջ ուրախութեամբ ողջունեցի հարազատ ղէմքեր, - մտերիմ ընկերներ ու վաղիմի բարեկամներ ու գրչեղբայրներ, որոնք սրտառուչ նուիրումով փարած կը մնան գաղութը կենսալի պահելու տաժանելի աշխատանքին: Այդ ճիգերը համադրելուն եւ անոնց ներշնչում հայթայթելուն մէջ նշանակելի դեր կը կատարէ մեր «Արեւ» օրաթերթը, իր երիտասարդ ու անխոնջ խմբագիրին ղեկավարութեան տակ: (Միւս օրաթերթն է «Յուսարբ»ը:) Գետնայարկի խմբագրատունը եւ վերնայարկին վրայի Գեղարուեստասիրացի սրահն ու յարակից բաժինները կը շարունակեն ըլլալ մտաւորական զրոյցներու, ժողովներու եւ մշակութային ձեռնարկներու կեդրոնավայրեր: Հոն, ինչպէս նաեւ Աղեքսանդրիոյ նորակառոյց ու գեղակերտ Տիգրան Երկաթ Սրահին մէջ սարքուեցան հրապարակային հանդէսներ, տարբեր առիթներով, երբ տրուեցան նաեւ գեղարուեստական բարձրորակ յայտագիրներ: Կասկած չկայ, որ Եգիպտոսի հայ համայնքը տակաւին ինքնաբաւ, նոյնիսկ բարեկեցիկ է իր գրող, արուեստագէտ ու մտաւորական ուժերով, որոնք կրնան հանրային ձեռնարկները հանել մշակութային տպաւորիչ մակարդակի մը:

Գաղութին համար բարեբար նպաստ մը եղաւ դադարումը Հայ Եկեղեցիին շուրջ ստեղծուած պայքարին ու պառակտումին, որոնք տեւական խոռվութեան մատնած էին Եգիպտոսի հայութիւնը եւ բուռն թափով կ'արծարծուէին ամէն ընտրութեան նախորդ ամիսներուն: Իսկ վերջին առիթով, Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ թեմերուն կրօնական ու քաղաքական ժողովներուն անդամները ընտրուեցան թեկնածուներու համաձայնուած համեմատական ցանկերու վրայէն, որ խաղաղ ու համերաշխ գործակցութեան ճամբան հարթեց: Եւ Եգիպտոսի Հայոց Առաջնորդ ընտրուեցաւ Գերշ. Զաւէն Եպս. Զինչինեանը, որ Նիւ Եորքի Մայր Տաճարին լուսարարպետն էր, բայց այդ պաշտօնէն հրաժարելով վերադարձաւ Գահիրէ:

Կիրակի առաւօտ Մայր Եկեղեցին լեցուած էր հոծ բազմութեամբ մը,

եկած նաեւ Աղեքսանդրիայէն: Սորապէս տպաւորիչ եղաւ Գիւտ Եպս.ին (Բարիզէն ժամանած) մատուցած հանդիսաւոր պատարագը, ներդաշնակ երաժշտութեամբ: Պաշտամունքի ընթացքին կարգացւեցաւ Վեհափառ Վազգէն Կաթողիկոսին կոնդակը, որով Հայրապետը կը վաւերացնէր Գերշ. Զաւէն Եպս.ի ընտրութիւնը իբրեւ Առաջնորդ Եգիպտոսի հայ գաղութին:

Յետոյ մասնաւոր ընդունելութիւն սարքուեցաւ ընդարձակ դահլիճին մէջ, ուր ներկայ գտնուեցայ Առաջնորդ Սրբազանին հրաւերով: Հոն, անցեալի վէճերուն հանդէպ դառն փոստսանքով, եւ ներկայ հաշտարար մթնոլորտին համար ջերմ ուրախութեամբ տեսայ՝ նախկին հակամարտ «ճակատ»ներուն վարիչները նստած իրարու կողքի: Եւ լսեցի երկու կողմերէն ծանօթ ղէմքերու խօսած ուղերձները, խաղաղ գործակցութեան խոստումներով, որ աւելի պայծառանան եւ արդիւնաւորուին Հայ Եկեղեցին ու համայնքները Եգիպտոսի մէջ: Այդ ուղղութեամբ դրական քայլ մըն էր Աղեքսանդրիոյ փոխանորդ նշանակուիլը Հոգ. Իսահակ Մ. Վրդ. Ղազարեանի, որ Լոս Անճելըսէն մեկնած իր պաշտօնատեղին՝ հոն արդիւնաւոր աշխատանք կը կատարէ արդէն:

Բայց տակաւին, հակառակ այս նպաստաւոր երեւոյթներուն, եւ հակառակ նախագահ Սատաթի իշխանութեան հաստատած աւելի ազատ պայմաններուն, գաղութը կը դիմագրաւէ նիւթական զրկանքի տագնապներ: Տնտեսական կարիքի ճնշումը առաւելապէս կը հարուածէ հայ դպրոցները: Ես առիթ ունեցայ այցելելու Գահիրէի, Հելիոպոլիսի եւ Աղեքսանդրիոյ հայ վարժարանները, որոնց տնօրէններուն եւ ուսուցիչներուն հետ մտերմական զրոյցով ծանօթացայ անոնց դժուարին կացութեան: Անոնք ընդհանրապէս խղճամիտ, իրենց կոչումին նուիրուած պաշտօնեաներ են: Սակայն դրամի պակասը կը խափանէ, կամ կը կազմալուծէ անոնց լաւագոյն բաղձանքներուն եւ անհրաժեշտ ծրագիրներուն իրագործումը: Անոնց ընթացիկ ծախքերը կը հայթայթուին Ազգային Իշխանութեան, - Առաջնորդարանին կողմէ, որ գաղութին բազմազան պահանջներուն համեմատաբար կը բաժնէ կալուածներէ, կտակներէ եւ յարակից աղբիւրներէ գոյացած իր եկամտունները, որոնք երբեմն կը կրճատուին պետութեան դրած որեւէ նոր կաշկանդումին կամ կանոնին հետեւանքով:

Իսկ բոլոր նպաստընկալ մարմիններուն ու խաւերուն մէջ, հայ դպրոցները ամենէն աւելի տուժող հիմնարկները եղած են, ապացոյց՝ անոնց ախուր վիճակը: Եգիպտահայ գաղութին երկու երրորդէն աւելին արտագաղթեր է անցեալ քառորդ դարու շրջանին եւ այդ համեմատութեամբ ընկանսօրէն նաեւ նուազեր է երկուսն աշակերտներուն համրանքը, ուրեմն պակսեր են անոնց հասոյթները: Բայց

վարժարաններու չէնքերուն, անոնց հոգատարութեան եւ ուսուց-
չական կազմերուն ծախքերը մնացեր են գրեթէ նոյնը, ապրուստի
սղացման պատճառով, որովհետեւ պետական վարչութիւնը ինքն ալ
կը հրամայէ ամսական թոշակներու պարբերական յաւելումներ:
Բարձրագոյն դասարանի մը մէջ զարմանքով տեսայ միայն երեք հոգի,
նստած իրարու մօտ եւ զբաղուած հայերէն լեզուի դասով:

- Հոս միայն երեք ուսանողնե՞ր կան, հարցուցի շուարուսով:

- Ո՛չ, եկաւ տխուր պատասխանը, ատոնցմէ մէկը ուսուցչուհին
է... միայն երկու աշակերտով:

Անշուշտ ատիկա բացառիկ երեւոյթ մըն էր: Բայց տակաւին՝
այդ հայկական վարժարաններու տնօրէններուն եւ ուսուցիչներուն
մեծագոյն հոգը այն էր, որ չէին յաջողիր անոնց կրթական մակար-
դակը բաղձացուած բարձրութեան հասցնել՝ որովհետեւ չէին կրնար
որակաւոր ուսուցիչներ ունենալ եւ որոշ թիւով հայ սղաք ու աղջիկ-
ներ կը նախընտրէին օտար դպրոցներ յաճախել:

- Բայց ինչո՞ւ, - եւ փորձեցի դիւրին լուծում մը մատնանշել... -
Դժուար է, օրինակ, Պէյրուսէն քանի մը դասատուներ հրաւիրել
հոս, եւ...:

- Դժուար է, երանի թէ միայն դժուար ըլլար... այլ անկա-
րելի է... յարեց տնօրէնը մտայն ժպտով մը: Որովհետեւ գիտենք
թէ Պէյրուսէն մինչեւ Լոս Անճելըս՝ հայ դպրոցներու դասատուներ
5-10 անգամ աւելի բարձր ամսաթոշակ կը ստանան, քան մեր ուսու-
ցիչները հոս... ալ ո՞վ կուզայ Գահիրէ եւ Աղեքսանդրիա: Դեռ աւելի
ցաւալին կայ, արարերէն դասերուն համար դիւրին կը գտնենք արար
վարժապետներ, որոնց աւելի կը վճարուի: Բայց ահա՛ հայ վարժա-
րաններ կը պահենք, ինչո՞ւ, որպէսզի մեր մանուկներուն հայերէն
լեզու, հայոց պատմութիւն եւ հայ մշակոյթ սորվեցնենք, այնպէս
չէ՞... եւ չենք կրնար այդ հայերէն նիւթերուն համար պատրաստուած
հայ ուսուցիչներ ճարել, որովհետեւ բաւական յատկացումներ չու-
նինք... հոգ է ողբերգութիւնը: Կը հաւատա՞ք, երբ ըսեմ թէ մեր հայ
ուսուցիչներուն տրուած ամսականը յաճախ արար դոնապանի մը
չահած ամսաթոշակին չափ հազիւ կ'ըլլայ:

- Սակայն կը կարծեմ թէ միջոցներ ըլլալու են այս դրութիւնը
բարելաւելու համար, - ըսի ցաւի ու ամօթի խառն զգացումով մը:

- Հա՛րկաւ միջոցներ կան, պատասխանեց ան յուզումով, եւ իր
բառերը կարծրացած վիշտի ու դառնութեան շեշտ մը ունէին: Միջոցը՝
մեր հեռաւոր եւ աւելի բախտաւոր ազգակիցներուն կողմէ եղբայրա-
կան աջակցութիւն պիտի ըլլայ...: Վերջապէ՛ս, Եգիպտոսի հայ գա-
ղութը քանի մը սերունդ ահագին չափերով զոհեր է ուրիշ երկիր-
ներու հայոց կարիքներուն համար: Դժբախտաբար հիմա մենք

կարօտեալ դարձած ենք եւ կը յուսանք որ աւելի ապահով ու բարե-
կեցիկ համայնքներ որոշ օգնութիւն ընծայեն մեզի, զոնէ առժամեայ,
որ կարենանք մեր այս վարժարաններուն մակարդակը քիչ մը բարձ-
րացնել, գէթ անոնց գոյութիւնը պահպանել:

- Դուք դուրսէն տրուելիք որեւէ նպաստի պարագային, «զոնէ
առժամեայ» բառերը գործածեցիք, յարեցի ես վարանումով: Ուրեմն
կը յուսաք որ այդ առժամեայի շրջանէն ետք հայ դպրոցները ինք-
նաբա՞ւ պիտի դառնան նոր եկամուտներով:

- Այդ մասին վստահ ենք, ըսաւ խնամակալ մարմինին գանձա-
պահը: Արդէն քանի մը կտակներ ու կալուածային հասոյթներ կան,
որոնց վրայի պետական եւ այլ կանոնները երբ լրացուին՝ Ազգային
իշխանութեան գանձը նկատելի յաւելեալ գումարներ պիտի մտնեն,
որոնցմէ բաւարար նոր յատկացումներ պիտի հասնին նաեւ մեր վար-
ժարաններուն եւ մեզ պիտի ազատեն ներկայ տագնապալի վիճակէն:
Ինչ որ մեզ կը մտատանջէ, սա գալիք քանի մը տարիներու ճգնաժա-
մէն ողջ-առողջ վերապրին է եւ ատոր համար է, որ կարօտ ենք ար-
տաքին օժանդակութեան:

Եգիպտոսի հայոց բոլոր խաւերուն մէջ կը տիրէ վհատութեան,
նոյնիսկ յուսալքումի հոգեվիճակ մը: Այդ մտայնութիւնը կը ծնի ու
կը սնանի նախկին փառքերու, անցեալ համբաւներու եւ հարստու-
թեան վերլիշումին դէմ՝ ներկայ ընկրկումի, խոնարհութեան աստի-
ճանէն: Անոնք կը տառապին մորմոքովը երբեմնի փարթամ իշխա-
նաւորի մը, որ դիպուածին աղէտէն զարնուած՝ իր շքեղ պալատէն
ինկած է չքաւոր խրճիթի մը անշուք կենցաղին: Եւ այդ յուսաբե-
կումը արդիւնքը չէ միայն անոնց կրած քանակային կորուստին, ար-
տագաղթով, - որ Եգիպտոսի հայ համայնքը, մօտ 35,000 հոգիի համ-
րանքէն նուազեր եւ իջեր է շուրջ 12,000 անձերու: Տակաւին յար-
գելի թիւ մը, երբ մանաւանդ նորահաս, երիտասարդ սղաք ու աղ-
ջիկներ, գիտակից կամ բնագրական մղումով փարած են եկեղեցա-
կան, ազգային ու հասարակական մարմիններու եւ ձեռնարկներու,
Եգիպտոսի հայոց կենցաղային ու մշակութային մակարդակը բարձ-
րորակ ու ճոխ պահելու համար:

Բայց վհատութեան ու յուսալքումի այդ մտայնութիւնը կը ծա-
ւալի հոգեբանական վէրքէ մը, որ կը կոտտայ իր փառաւոր անցեալին
ու վիրաւոր ներկային հակադրութեան խայթերէն: Յայտնի իրողու-
թիւն է, որ Եգիպտոսի հայերը վաղուց կը կազմէին սփիւռքի ամենէն
ազնուապետական, հարուստ, եւ վարքային ու մտաւորական զարգա-
ցումով մշակուած գաղութը: Հոն ապրեր ու ծառայեր են նուպար ու
Պօղոս նուպար փաշաները, պէյիք ու մեծ բարերարներ, որոնց հայ
ժողովուրդին նուիրած ու կտակած գումարները տասնեակ միլիո-

նաև որ տղարի կը հասնին: Եգիպտոսի մէջ ապրեի, արտադրեի ու ծառայեի են հայ ակնաւոր գրագէտներ ու հանրային առաջնորդներ, — Վահան Թէքէեան եւ Արփիար Արփիարեան, Երուանդ Օտեան ու Լեւոն Բաշալեան, Տիգրան Կամսարական ու Սուրէն Պարթեւեան, Լեւոն շանթ ու Նիկոլ Աղբալեան, Թորգոմ Արք. Գուշակեան եւ Վահան Մալէգեան, Վահան Քիւրքճեան եւ Արշակ Ալպոյաճեան, Միհրան Տամատեան եւ Արմենակ Եկարեան, Միքայէլ Կիւրճեան, Էօփէն Բարազեան, Ալ. Սարուխան եւ բազմաթիւ արուեստագէտներ, — նկարիչներ, երաժիշտներ ու դերասաններ:

Եգիպտոսի հայոց մէջ արծարծուած ու բիրեղացած հայրենասիրութեան, քաղաքական իրապաշտ դատումներուն եւ իմացական լուսաւորութեան միջավայրին շնորհիւ էր, որ 1906-ին Գահիրէ եղաւ ծննդավայրը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, որուն նախագահ ընտրուեցաւ Պօղոս Նուպար Փաշան եւ այդ պաշտօնը վարեց մօտ երեսուն տարի, մինչեւ իր մահը: Նոյնպէս Գահիրէի մէջ էր, որ 1908-ին կազմուեցաւ Հայ Սահմանադիր Ռամկավար Կուսակցութիւնը, որ 1921-ին միանալով Վերակազմեալ Հնչակեան Հոսանքին, նաեւ ուրիշ տարրերու միաձուլումով՝ կոչուեցաւ Ռամկավար Ազատական Կուսակցութիւն:

Այսպէս, Եգիպտոսի հայերը, թէեւ քանակով սահմանափակ, բայց հայ ժողովուրդին պարգեւեցին երկու համազգային հզօր կազմակերպութիւններ, որոնք իրենց ծնունդէն մինչեւ ներկան՝ բարերար, անփոխարինելի ծառայութիւններ մատուցած են հայոց ազգին ու հայրենիքին, — որքի ու գաղթականի հոգատարութեան, Հայաստանի մէջ վերաշինութեան, զանգուածային հայրենադարձի, հայկական հողային իրաւունքներու հետապնդման եւ սփիւռքահայ գոյատեւման պայքարի, — դպրոցներու եւ մշակոյթի ծաւալման մարգերուն մէջ:

Հիմա, երբ Գահիրէի, Հելիոպոլսոյ եւ Աղեքսանդրիոյ հայկական վարժարանները ստիպողական կարիքն ունին արտասահմանի ուրիշ բարեկեցիկ գաղութներու նիւթական օգնութեան՝ անհրաժեշտ է, որ անոնց ընծայուի ամէն օժանդակութիւն: Այդ աջակցութիւնը կենսական է, ազգային ինքնապահպանման ընդհանրական ծրագիրներուն պահանջով: Բայց աւելին՝ սփիւռքահայեր, եւ մանաւանդ Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութիւնը, որ մինչեւ 1950-ի սկիզբները, նիւթական, ոգեկան ու իմացական ահագին նպաստներ ստացել են Եգիպտոսի հայ գաղութէն՝ ժամանակն է, որ իբրեւ երախտիքի ճանաչում ու մասնակի հատուցում, գէթ քանի մը տարուան համար նիւթական յատկացումներով ապահովեն անոր երեք հայ դպրոցներուն զարգացման ընթացքը:

Տարակոյս չկայ, որ այդպիսի նորայրական մատուցում մը նաեւ նշանակելի անդրադարձում պիտի ունենայ անոնց անտեսուած, լքուած ըլլալու հոգեվիճակին վրայ: Աւելի կորով ու խանդավառութիւն պիտի ներշնչէ անոնց, որովհետեւ իբրեւ համայնքներ, իրենց կարեւորութեան դրական ճանաչումով՝ անոնց հաւաքական արժանապատուութիւնն ու հպարտութիւնը պիտի ամրապնդուին եւ զանոնք մղեն առաւել արդիւնաւոր ձեռնարկներու, աւելի հեռահաս ծրագիրներու: Որովհետեւ իրապէս, Եգիպտոսի հայ գաղութը իր ներկայ նուազած քանակին մէջ անգամ՝ ունի բաւարար մտաւորական ուժեր, անցեալի փառաւոր ժառանգութեան մը բարոյական դրամապոլիսը, ազգային ապագայի հաւատք եւ աշխատելու, զոհաբերելու ոգի, համազգային ծիրի մէջ իր արժանաւոր դերը կատարելու համար: Ինչ որ անհրաժեշտ է, հեռուէն եղբայրական օգնութեան ձեռքի մը մատուցումն է, իր վերականգնումի ճիգերուն մէջ:

× × ×

Հալէպի հայ գաղութը, քանի մը տասնամեակ առաջ՝ Մերձաւոր Արեւելքի ամենէն բարձրորակ ու ազդեցիկ կեդրոնացումն էր հայկական հաստատութեանց, որոնք կը զօրանային հոծ քանակի եւ առատ մտաւորական ուժերու շնորհիւ: Դեռ ծնած չէր Պէյրութի «Ձարթօնք», երբ Հալէպի մէջ արդէն վաղուց կը հրատարակուէր մեր «Նիւրատ» եռօրեայ թերթը, որուն խմբագիրները Հայաստան ներգաղթեցին 1947-ին: Հալէպի հայութիւնը խանդավառ ու կենսալի էր՝ իր ազգային ու հասարակական գործունէութեամբ, իր մշակութային գերազանց մակարդակով ու յարատեւ շարժումներով, իր դպրոցներով եւ լրագրային ու գրական թերթերով: Յետոյ, դժբախտ դէպքեր Սուրիան ենթարկեցին բռնակալ իշխանութեանց լուծին, որ քաղաքական, տնտեսական, ազգային ու կրթական կապանքներով ծանրացաւ թէ՛ բնիկ ժողովուրդին եւ թէ՛ հայ փոքրամասնութեան վրայ: Իբրեւ հետեւանք այդ դաժան ճնշումներուն՝ բիւրաւոր հայեր գաղթեցին Պէյրութ եւ իրենց կորովով, նուիրումով ու տաղանդով նշանակելի դեր կատարեցին Լիբանանի հայութեան զմայելի նուաճումներուն մէջ:

Զարմանալի չէր, որ հրապարակային ճաշկերոյթ-ժողովի մը ընթացքին, վաղեմի բարեկամ յարգելի բժիշկ մը, որ ղեկավար դէմք մըն է Հայկական Բարեգործական Ընդհ. Միութեան մէջ, արդար դառնութեամբ գանգատեցաւ.

— Հալէպի հայութիւնը կարծես մոռցուած ու լքուած է իր բախտին: Ազգային ծանօթ առաջնորդներ յաճախ կ'այցելեն Պէյրութ,

Հոն Հանդիպումներ կ'ունենան եւ անոնց ծրագիրները գործադրելու համար ահագին գումարներ կը յատկացնեն, ուրախ ենք հարկաւ: Բայց Բարեգործականը մեր վարժարաններուն զրկած տարեկան նպաստը վեց առ հարիւր կրճատեց, երբ մենք այնքան մեծ կարիք ունինք, որ գո'նէ այդ գեղչուած դրամը վերահաստատուի: Հալէպի Հայ գաղութը անցեալին ազգային լայն գործունէութեան, զոհողութեան ձեռնարկներու եւ մշակութային ու գրական մարզերու վրայ շատ հարուստ վաստակ ունեցած է: Այսօր, Պէյրութի մէջ արտադրող ու ծառայող յայտնի գործներ եւ ուսուցիչներ՝ Վահէ-Վահեան, Անդրանիկ Մառուկեան եւ ուրիշներ, Հալէպի հայութեան ծոցը ծաղկեցուցեր են իրենց տաղանդները: Հիմա, երբ Ամերիկայէն եւ Եւրոպայէն յարգուած դեկավար դէմքեր կ'այցելեն Պէյրութ, գոնէ քանի մը օրուան համար չեն յօժարիր Հանդիպիլ Հալէպ եւ ծանօթանալ մեր վիճակին, մեր կարիքներուն, նոյնիսկ մեր կարելիութեանց, որոնք հնարաւոր է իրագործել, եթէ դուրսէն քիչ մը հոգածութիւն ու քաջալերանք ցոյց տրուի մեզի: Մենք հոս շուրջ 60,000 Հայեր ենք եւ կարծես ա'լ որեւէ նշանակութիւն եւ արժէք չունինք իրենց համար...:

Այս գանգատը, տարբեր բառերով յաճախ լսեցի Հալէպ գտնուած շրջանիս: Հոն եւս, խորունկ հաճոյք եղաւ ինծի համար, դարձեալ տեսնել հին ու նոր թանկագին ընկերներ ու բարեկամներ, որոնց մտերմութեան մէջ անցուցած շաբաթս մտաւոր ու հոգեկան վայելքի անմոռանալի օրեր ընծայեց ինծի: Եւ նախորդ տարիներուն կատարած շաբթ մը այցերուս նման՝ այս անգամ ալ հիւրը ընդունուեցայ առաջնակարգ Պարոն Պանդուկին, որ ականաւոր հօրմէն փոխանցուած էր որդի Մազլումեանին, որուն ջերմ շնորհակալութիւն կը պարտիմ:

Քանի մը երեկոնք հրապարակային ժողովներ կամ մասնակի Հանդիպումներ ունեցանք Թէքէեան Մշակութային Միութեան սեփական գեղեցիկ շէնքին մէջ, որուն բացումին ներկայ եղած էի նախորդ այցելութեանս: Վաստակաւոր երէց ընկերներու կողքին՝ խոր ուրախութեամբ ողջունեցի ներկայութիւնը բազմաթիւ նորահաս խանդավառ երկսեռ անդամներու, որոնք կը զբօսնէին պարտէզին կամ սրահին մէջ, եւ իրենց երգչախումբին փորձերը լսելու եւ յետոյ զրոյցի հաճելի առիթը ունեցայ: Ջերմ հայրենասիրութեան խանդով, ազգային հեռահաս ձգտումներով եւ գաղութին գոյատեւման հոգերով համակուած երիտասարդներ էին, գիտակից առաջնորդութեան իրենց կողմէն:

Յերեկ մը հանդիպում սարքուած էր Հայ Երիտ: Ընկերակցութեան (Հ. Բ. Ը. Միութեան) տղոց եւ աղջիկներու ստուար խումբի մը հետ, երկար սեղանի մը շուրջ: Գրաւիչ, խելացի անձեր էին, որոնք իրենց զուարթ խօսակցութեան ու ծիծաղին մէջէն անգամ կ'արտա-

յայտէին լարուած հետաքրքրութիւն եւ անհամբեր անձկութիւն, Հայրենական ու սփիւռքահայ հիմնական նպատակներու եւ ընթացիկ հոգերու եւ անոնց ընդառաջող լաւագոյն գործելակերպերու հանդէպ: Հանրային ծառայութեան ընդունակ ու յօժար միտքեր, որոնք համոզումի ու կամքի թանկագին հարստութիւն մը կը կազմէին գաղութին համար:

Ուրիշ երեկոյ մը, Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան կողմէ ճաշկերոյթ-հանդէս մը կազմակերպուած էր իր սեփական սրահին մէջ, որ լեցուած էր հոծ բազմութեամբ եւ հրաւիրուած հիւրերով, - գրող ու մտաւորական յայտնի դէմքեր եւ Թէքէեան Մշակութային Միութեան ներկայացուցիչներ: Գեղարուեստական ընտիր յայտագիրի մը վրայ՝ դրուատական ուղերձներ տրուեցան: Երբ ատենապետը շոյլ ներբողներով սկսաւ ծանօթացնել ատենախօսը, իրեն յոգնութիւն եւ բոլորիս ժամանակ խնայելու համար ելայ ոտքի: Հայաստանի եւ սփիւռքի ընդհանրական խնդիրներու եւ հոյակապ իրագործումներու եւ ծրագրուած նոր շարժումներու մասին արտայայտուելի էտք, անդրադարձայ տեղական հոգերուն, որոնց շուրջ խորունկ տպաւորութիւններ կըրած էի նախորդ օրերուն, Հայ դպրոցներու, հաստատութեանց, առեւտրականներու եւ մտաւորական դէմքերու տուած այցերուս եւ կատարուած գրոյցներու ընթացքին:

«Վերջին 25 տարիներու շրջանին ես վեց անգամ եկած եմ Հալէպ եւ ամէն առիթով ձեզի հետ մնացեր եմ մէկ կամ աւելի շաբաթներ: Ժիշդ է թէ աշխարհ մը հեռու կ'ապրիմ այս հարազատ միջավայրէն: Բայց գիտեմ թէ Հալէպի մեր գաղութը ամբողջ սփիւռքի ամենէն հոծ ու բարձրորակ, ամենէն կենսալի ու հայադրոշմ կեդրոններէն մէկը կը մնայ: Ես հոս եղեր եմ անցեալ տաժանելի օրերուն, երբ պետական բռնակալ վարիչներու կամայական ճնշումները տնտեսական, մշակութային ու կրթական մարզերուն մէջ՝ նաեւ հոգեկան ծանր տագնապի կը մատնէին ձեզ: Հիմա բարեբախտ իրողութիւն է, որ Սուրիոյ իմաստուն նախագահ Հաֆիզ Ասատը շատ աւելի ազատախոհ ու բարեացակամ վերաբերմունք որդեգրած է թէ՛ բնիկ արաբ ժողովուրդին եւ թէ՛ ուրիշ ցեղային հատուածներու կենցաղին ու հիմնարկներուն հանդէպ: Մեր այցելած դպրոցներուն մէջ, մանկապարտէզի կարգերէն մինչեւ բարձրագոյն դասարանները՝ աշակերտ տղաք ու աղջիկներ, արաբական զարգացման գերազանց մակարդակին հետ, հայերէն լեզուի, պատմութեան ու մշակոյթին ծանօթութեամբ, շաղախուած էին նաեւ ազգային ոգիով, որոնք խոր հրճուանք չնորհեցին ինծի: Անսովոր ու հպարտ փորձառութիւն մը եղաւ պտոյտս Հայ մեքենագէտներու թաղին մէջ: Փոքր արհեստանոցներ ու մեծ գործատուներ, որոնք յաճախ սարքաւորուած են ամենէն արդիական եւ

ինքնագործ մեքենաներով: Անոնց հայ վարպետները կը նորոգեն ամէն տեսակ ինքնաշարժներ, կ'արտադրեն մեքենական կազմածներ եւ կը շինեն բեռնատար կառքերու վերնամասերը եւ ամբողջը այնքան խոշոր ու գեղեցիկ, որ կրնան մրցանակ շահիլ որեւէ միջազգային ցուցահանդէսի մէջ: Եւ չկայ սփիւռքահայ որեւէ գաղութ, որ մեքենաշինական ասպարէզի վրայ այսքան զարգացած ու տիրական ճարտարարուեստ ունենայ, այնքան կարեւոր իր արժէքով ու նշանակութեամբ, նոյնիսկ Սուրիոյ երկրին համար՝ որ իշխանութեան մասնաւոր վերաբերմունքին արժանացած ըլլայ: Թանկագին աղբիւրներ մարդկային ու նիւթական յարաճուն հարստութեան:

«Իսկ դուք... քիչ առաջ լսեցի դառն գանգատներ, թէ Հալէպի հայութիւնը մոռցուած ու լքուած է հայ ականաւոր դէմքերու կողմէ, որոնք չեն յօժարիր Պէյրութէն մէկ ժամուան օդային թռիչքով ձեր համայնքին տեսութեան գալ եւ դուք գրկուած կը մնաք ղեկավարներէ: Եթէ ինծի ներէք՝ դիտել պիտի տամ, թէ հոս ընդհանրացած այդ մտայնութիւնը չի բխիր այս գաղութին արժէքներուն իրական զնահատումէն, այլ ան կը թելադրուի ստորակայութեան զգացումէ մը, որ բարեբախտաբար կը ժխտուի իրողութենէն: Անշուշտ որ հեռաւոր երկիրներէ ծանօթ առաջնորդներ պէտք է հանդիպին նաեւ ձեր քաղաքը, որովհետեւ ամէն այցելու համայնքին մէջ յաւելեալ շարժում ու խանդավառութիւն ծաւալելու առիթ մը կը ստեղծէ: Բայց տակաւին, երբեք ընդունելի չէ, որովհետեւ ճշմարիտ չէ՝ այն մտածումը, թէ Հալէպի ահագին ու բարձրորակ գաղութը գրկուած է ղեկավարներէ: Ի՞նչպէս կարելի է հաւատալ այդպիսի վիրաւորական վերագրումի մը: Այս սրահին մէջ ձեր հսկայ համայնքին մէկ մանրանկար հատուածը ներկայացուած է: Եւ կը նայիմ շուրջս ու հպարտ հաճոյքով կը տեսնեմ վաղեմի բարեկամ դէմքեր, - գրողներ ու բժիշկներ, ուսուցիչներ, փաստաբաններ ու հանրային ծառայողներ, որոնք մտաւորական մեծարժէք դաս մը կը կազմեն: Անոնք իրենց հայրենասիրական խանդով, իրենց արտադրելու եւ վարելու շնորհներով եւ իրենց յօժարակամ նուիրումով՝ իբրեւ անձեր երբեք ստորադաս չեն, այլ հաւասար են ուրիշ որեւէ գաղութի նոյն ասպարէզներուն մէջ առաջնորդ ճանչցուած մարդոց: Բայց միւս համայնքները տարբեր առաւելութիւն մը ստեղծած են: Անոնք յաջողած են զուգահեռ նպատակներ հետապնդող մարմիններու եւ միութեանց վարիչներուն ու շարքային անդամներուն միջեւ ամրապնդել համերաշխ, սերտ գործակցութիւն մը, որ բազմապատիկ կ'աճեցնէ անոնց զօրութիւնը եւ կ'արդիւնաւորէ անոնց ձեռնարկները:

«Հիմա հոս, գաղափարի ու ծառայութեան համանման հակումներով ու ոգիով ջերմացած սեղաններու շուրջ բոլորուած են Հայկ-

Բարեգ. Ընդհ. Միութեան, եւ Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան, եւ Թէքէեան Մշակութային Միութեան առաջնորդող դէմքեր ու յարգելի հիւրեր: Դժուար պէտք չէ ըլլայ, որ անոնք բոլորը, եւ հանդէսէն բացակայ ուրիշներ, յաջողին վեր բարձրանալ ամէն անձնական նախապաշարումէ եւ ամէն հատուածական նախասիրութենէ: Եւ Հայաստանի առաւել զօրանալուն ստատրելու, արեւմտահայ հողամասերու ազատագրումը հետապնդելու, սփիւռքահայ ազգային գոյապայքարը մղելու, եւ Հալէպի հայ գաղութը իր նախկին առաջաւոր դիրքերուն ու փառքին հասցնելու գերագոյն նպատակներուն շուրջ համախմբուած՝ ստեղծեն ներդաշնակ, ամուր, հաւաքական ղեկավարութիւն մը, որ անկասկած պիտի հասնի համագաղութային վարկի: Այդպիսի միասնական առաջնորդութիւն մը թէ՛ աւելի պիտի աճեցնէ ամէն մասնակից կազմակերպութիւն, եւ թէ՛ մասնաւոր պիտի ոգեւորէ, ինքնավստահ նոր շունչով եւ ուրախութեամբ պիտի համակէ Հալէպի հայութեան բոլոր խաւերը եւ զանոնք պիտի ներշնչէ աւելի աշխոյժ գործունէութեան, աւելի լայն նիւթական գոհողութեան, իր համայնքային գոյատեւման անհրաժեշտ մարդու, ոգիի ու դրամի ուժերը հայթայթելու համար:»

Կը թուէր թէ բուռն ծափերը ընդհանուր համաձայնութիւն մը կ'արտայայտէին: Եւ հանդէսէն ետք մասնակի գրոյցները շարունակուեցան: Երիտասարդ տղոց եւ աղջիկներու պայծառ, անհանգիստ դէմքեր էին շուրջս, որոնք հպարտ ու ինքնավստահ ժպիտներով գործակցի կը խոստանային: Իսկ երէց բարեկամ մը միջամտեց.

- Գաղափարը սքանչելի է, երանի թէ կարենանք գործադրել:
- Բայց եթէ փորձէք, ո՛չ ոք կրնայ արգիլել, յարեցի:
- Այո՛, սակայն աւելի ապահով կ'ըլլայինք, եթէ դուրսէն յայտնի մտաւորական մը գար եւ...
- Իսկ ինչո՞ւ կը խորհիք թէ հեռուէն եկող նոյնիսկ համբաւաւոր առաջնորդ մը ձեզմէ աւելի խելացի է կամ ձեր պայմանները ձեզմէ աւելի լաւ պիտի հասկնայ:
- Ծիչդ է, միայն անոր համբաւին հմայքը դիւրին պիտի կրնայ մեզ իրարու քով բերել եւ գործակցութեան կամուրջ ձգել...
- Սակայն լաւագոյն արդիւնք մը չ'ապահովուի՞ր, եթէ մէկ ներածուած մեծ հռչակի քանի մը շարժեալ նոյնիսկ թանկարժէք նպատակն փոխարէն՝ տասը-քսան տեղական քիչ մը խոնարհ համբաւներու միացեալ ու տեւական ղեկավարութեան մը անփոխարինելի բարիքը ընծայէք ձեր գաղութին: Ձե՞ք կարծեր որ տասը խելացի գլուխներ, երբ հաւաքաբար կը մտածեն, կրնան աւելի անսխալ իմաստութիւն հայթայթել, քան միակ գլուխ մը, որքան ալ իմաստուն ըլլայ ան: Կը յուսամ դուք մէկ անձի... տիկտատորական լուծը չէք նա-

խընտրելու ուսմկավարական ազատ դրութենէն, աւելցուցի ժըպտելով:

Եւ բոլորս ուրախ խնդացինք:

Թէքէեան ակումբին դիմացը հայ ոսկերիչներու փոքր խանութներ կային: Այցելեցինք նաեւ անոնց եւ գրոյցներ ունեցանք տեղական խնդիրներու շուրջ: Ամէն կրպակ մէկ կամ երկու երիտասարդ տէրեր կը պահէին եւ կը թուէր թէ իրենց առեւտուրէն աւելի՝ ազգային ու համայնքային հարցեր ու կարիքներ կը շահագրգռէին գիրենք, եւ անոնց մասին կը խօսէին եռանդով, անձկութեամբ: Հրաժեշտի պահուն կը նայէի խանութի դրան կից ցուցափեղկին, որուն լայնքին գամուած էին երկաթէ ձողեր, եւ անոնցմէ կախուած էին, խիտ շարքով, շղթաներ, ապարանջաններ, բազմատեսակ զարդեղէններ, բոլորն ալ դուտ ոսկիէ: Եւ մտահոգ զարմանքով կը հարցնէի.

- Բայց չե՞ս վախնար ասոնց համար:

- Ինչո՞ւ, ի՞նչ կայ որ, կ'ըլլար միամիտ պատասխանը:

- Եղբա՛յր, ցուցափեղկիդ մէջ ահագին ոսկեղէն հարստութիւն դիզած ես եւ ահա մթներ է արդէն եւ դուն այսպէս առանձին, անպաշտպան...

- Է՛լ լաւ, ի՞նչ պիտի պատահի որ:

- Ուրեմն վտանգ չկա՞յ... Իրապէս երանելի մարդիկ էք... բայց կը թելադրեմ, որ Ամերիկա չգաք եւ ասանկ խանութի մէջ այսքան առատ ոսկեծոյլ զարդերու հրապոյր չցուցադրէք, այսպէս բա՛ց... տեսակ մը փորձութեան մարտահրաւէր: Որովհետեւ մեր ամենէն մանրուք, սկսնակ գողը անգամ պիտի մտնէր սա դուռէն ներս, իր դանակը կամ ատրճանակը աջ ձեռքով պիտի սեղմէր կողիդ, իսկ ձախ ձեռքով պիտի ճանկէր այս ձողէն կախուած ոսկեղէնները, պիտի վազէր դուրսը սպասող ինքնաշարժին մէջ եւ ակնթարթի մը մէջ պիտի անհետանային, դուն տակաւին «Առաւօտ Լուսոյ»ին առաջին տունը չարտասանած...:

- Այո, կը կարդանք թերթերու մէջ, Ամերիկայի աւագակները շատ ճարպիկ են... հոս հագուադէպ կ'ըլլայ որ գողեր խանութ կ'ողոպտեն, կը բռնուին եւ խիստ կերպով կը պատժուին:

Արաբական երկիրներու զարմանալի հակասութիւններ: Ժողովուրդին մեծագոյն մասը չքաւոր է եւ կ'ապրի տեւական զրկանքներու մէջ: Բայց ոսկերչատուները առատ են, ու լեցուն՝ ոսկեղէն ու աղամանդէ պերճանքի զարդերով, որոնք դիզուած են ցուցափեղկերու լայնքին, յաճախ առանց ներքին դուռերու պաշտպանութեան: Եւ անոնց ընծայած տեւական փորձութեան դէմ՝ յարաբերաբար շատ նուազ են զանոնք կողոպտելու արարքները:

Ժամադրուած հանդիպում մը ունեցայ Հալէպի կառավարական

ու մամուլի երեք-չորս պաշտօնեաներու հետ: Մեր գրոյցը կը կատարուէր թարգման ընկերներու միջոցով: Անոնք երիտասարդ ու գիտակից արարներ էին, Սուրիոյ քաղաքական ու տնտեսական զօրացումով հպարտ ու խանդավառ: Եւ ջերմ ներբողով գնահատեցին հայ համայնքներուն հաւատարմութիւնը իրենց հասարակաց հայրենիքին, Սուրիոյ եւ անոր բնիկ ժողովուրդին հանդէպ: Անոնք դրուատեցին Հալէպի հայերուն արհեստագիտական ու մասնագիտական բարձր ձիրքերը, որոնք սիրայօժար կը նուիրեն երկրին տնտեսութեան, ճարտարարուեստին ու գիտութեան զարգացումին համար:

- Ես անցեալ 25 տարիներուն վեց անգամ եկած եմ Հալէպ, ըսի, եւ բաւական ծանօթ էի քաղաքին տարբեր շրջաններուն: Բայց այս անգամ հոյակապ ու բազմայարկ նոր շէնքեր ու պանդոկներ տեսայ, մանաւանդ համալսարանական ընդարձակ թաղամասը քարակերտ ու գեղեցիկ կառոյցներով... անոնք հրապուրիչ պիտի ըլլային նոյնիսկ Արեւմուտքի որեւէ մեծ քաղաքին համար:

Արդար հպարտութեան մը ժպիտը փայլեցաւ դիմացիս թուխ ու գրաւիչ դէմքին վրայ:

- Ուրեմն բաւական շրջեցաք ու սիրեցի՞ք ինչ որ տեսաք: Եւ տակաւին այդ ամբողջ շինարարութիւնը կը կատարուի մեր ազգային եկամուտներուն մէկ փոքր բաժինով: Ափսոս որ մենք ստիպուած ենք Սուրիոյ պետական պիւտճէին 75 առ հարիւրը ծախսել մեր բանակին եւ ռազմամթերքի վրայ, որ կարենանք երկիրը պաշտպանել Իսրայէլի ստեղծած սպառնալիքին դէմ: Երբ գայ խաղաղութիւնը եւ կարենանք շրջել յատկացումներուն քանակը...:

Զրոյցը ընդգրկեց այլազան նիւթեր: Յետոյ հարցուեցաւ, թէ Միացեալ Նահանգներու հայկական մեծ գաղութին դիրքը ի՞նչ է Արաբ-Իսրայէլ կռիւներուն ու հակամարտութեան հանդէպ: Եւ փորձեցի պարզել մեր զգացումներն ու դատումները հնարաւոր խտացումով:

- Ես կրնամ վստահօրէն յայտնել, թէ ոչ միայն Ամերիկայի հոծ հայութիւնը, այլ նաեւ ամբողջ հայ ժողովուրդը ջերմ համակրանք ու երախտագիտութիւն ունի արաբ ազգին ու պետութեանց հանդէպ: Այդ բարեկամութիւնը հետզհետէ ամրացած է անցեալ դարերու ընթացքին, երբ Օսմանեան Թուրքիոյ բռնակալ իշխանութիւնը հաւասար վայրագութեամբ ճնշած, կողոպտած ու ջարդած է թէ՛ Արաբը եւ թէ՛ Հայը: Թուրքեր երբ 1915-ին եւ յաջորդ տարիներուն շուրջ 2,000,000 անմեղ հայեր կոտորեցին անոնց պատմական հայրենիքին, Արեւմտեան Հայաստանի մէջ, եւ աղէտէն վերապրող միլիոնաւոր զոհերը աքսորեցին դէպի Տէր Զորի անապատները, այն ատեն իսկ Հալէպի եւ շրջակայքի արարները բիւրաւոր հայերու կեանքերը

փրկեցին թուրքիոյ սպանդէն: Իսկ զինադադարէն ետք, դարձեալ Սուրիան եւ միւս արաբական երկիրները քանի մը հարիւր հազար թշուառ ու լքուած հայ գաղթականներ ազնուօրէն հիւրընկալեցին, անոնց ապահով ապաստան եւ աշխատանքի ու զարգացման ազատ պատենութիւններ ընծայեցին: Հայերը ամէն տեղ ուրախութեամբ ողջունեցին արաբական ազգային ոգիին զարթնումը եւ անոնց երկիրներուն ազատագրումը թուրքիոյ եւ Արեւմտեան պետութեանց լուծերէն: Որովհետեւ արաբները, երբ ազատ կ'ապրէին, կրցան հազարամեակի մը շրջանին ստեղծել զմայլելի քաղաքակրթութիւն մը, որ գրական, գիտական, արուեստներու եւ ճարտարապետութեան մարգերուն մէջ հոյակապ գործեր արտադրեց: Եւ կասկած չկայ, որ նման ազատ ու ապահով պայմաններու տակ, անոնք դարձեալ թանկահազին նպաստներ պիտի բերեն մարդկային յառաջդիմութեան: Մենք ջերմօրէն կը ցանկանք, որ Արաբ-Իսրայէլ հակամարտութիւնը վերջ գտնէ եւ հաստատուի տեւական խաղաղութիւն, Իսրայէլի կողմէ գրաւուած բոլոր հողերուն վերադարձովը Սուրիոյ, Եգիպտոսի ու Յորդանանի: Նաեւ իրենց սեփական հողամասին վրայ հաւաքուելով Պաղեստինի տարաբախտ գաղթականները, որով Լիբանան ալ կը փրկուի իր ներկայ ողբերգական վիճակէն, ուր բնիկ արաբ ժողովուրդին հետ՝ շուրջ 250,000 հայեր ալ ապրեցան քաղաքացիական պատերազմին սարսափները: Մենք մեր ամերիկացի բարեկամներուն հետ կը խօսինք այս խնդիրներուն մասին եւ մեր գնահատանքը կը յայտնենք Սուրիոյ մեծայարգ նախագահ Հաֆիզ Ասատին, իբրեւ լայնախոհ, խաղաղասէր եւ իմաստուն պետական ղեկավար մը, որուն իշխանութեան հետատես արտօնութեամբ՝ Սուրիոյ մէջ բնակող հարիւր հազարաւոր հայերը կը պահեն սեփական եկեղեցիներ, դպրոցներ եւ ակումբներ, որոնց յարկերուն տակ Սուրիոյ հաւատարիմ քաղաքացիներ կը զատարակուին, հայերէն լեզուին, հայոց անցեալ պատմութեան եւ ներկայ արժէքներուն բաւարար ծանօթութեամբ, որուն նպաստով, անոնք կրնան աւելի գիտակից ու արդիւնաւոր մասնակցութիւն ընծայել Սուրիոյ ընդհանուր զարգացումին՝ իրենց արհեստներով, մասնագիտութեամբ ու մշակոյթով:

Անոնց գնահատանքի խօսքերէն ետք, մեր գրոյցը շարունակուեցաւ հիւրասիրութեամբ եւ յետոյ քանի մը լուսանկարներ առնուեցան իրենց եւ մեր անդամներուն հետ միասին: Յաջորդ օրը, արաբերէն թերթին մէջ թղթակցութիւն տպուած էր այդ տեսակցութեան մասին, խմբական լուսանկարով մը:

Քանի մը օր ետք տեսնելու գացինք Եփրատ գետի լայնքին կանգնեցուած հսկայ ամբարտակը: Իրապէս վիթխարի ձեռնարկ մը, որ իրագործուած է Սովետ. Միութեան կողմէ եւ որուն մէջ կարեւոր

բաժին կատարեր են նաեւ խորհրդահայ ճարտարագէտներ: Մեզի առաջնորդ տրուեցաւ երիտասարդ արաբ մը, որ անգլերէն ալ կը խօսէր եւ քովէս քալելով կը բացատրէր ահարկու կառուցուածքին շինութեան տարբեր հանգրուանները, անոր հիմերուն փորուելէն մինչեւ աւարտին մօտեցած ներկայ վիճակը: Ես հիացումով կը դիտէի ամբարտակին հոյակերտ զանգուածը, - անոր աջ կողմին պատուարները կ'իջնէին անդնդային խորութեամբ մինչեւ ստորոտ, ուր տարածուելով յամրընթաց կը հոսէին գետին արձակուած ջուրերը: Իսկ ձախ ճակատին դէմ արդէն զսպուած, ծովացած էր Եփրատը, ողողելով, ծածկելով երկու ափերուն մինչեւ ըլրակողերը:

Թերեւս բնագործն՝ գլուխս կախեցի վար, աչքերս փակեցի եւ զգացի որ մարմինս կը դողար կարծես ցուրտ հովէ մը:

- Ի՞նչ ունիք, անհանգի՞ստ էք, հարցուց արաբ երիտասարդը, մեղմօրէն թեւս սեղմելով:

- Ո՛չ, յարեցի իրեն նայելով, ես լաւ եմ, բայց այս գե՛տն է...:

- Ինչո՞ւ, այսքան բարձրէն դիտելով գլուխնի՞՞ղ դարձաւ, - եւ ան խնդաց կատակելու համար:

- Ո՛չ, միայն կը մտածէի... Եփրատին կազմած ընդարձակ աւազանին ջուրերը որքան վճիտ են ու հանդարտ: Անոնք ելեկտրական ուժ կ'արտադրեն ձեր գործարաններուն ու տուներուն համար, եւ խոպան, անապատ հողեր պիտի ոռոգեն, անոնց վրայ այգիներ ու պարտէզներ, արտեր ու մրգաստաններ պիտի ծաղկին: Բայց 1915-ին եւ յետոյ, այս նոյն Եփրատ գետը հայ ժողովուրդին համար ողբերգական ու նուիրական ուխտատեղի մը դարձաւ...:

- Ի՞նչպէս, յարեց ան զարմանքով:

- Որովհետեւ զայն կազմող առուններն ու վտակները Արեւմտեան Հայաստանի լեռներէն ու ձորերէն կուգան: Եւ 1915-ին թուրքիոյ իշխանութիւնը սկսաւ հայոց մօտ 3,000,000 զաւակները ոչնչացնել իրենց երեք հազար տարուան հայրենիքին մէջ, ջարդելով եւ աքսորելով: Դէպի Սուրիոյ անապատները տարագրուած կարաւաններէն բերաւոր հայեր անոնք թափեցին ու խեղամած ըրին Եփրատի ալիքներուն մէջ: Եւ հիմա կը խորհէի, եթէ Եփրատ գետին բերած հայ զոհերուն մարմինները կարելի ըլլար այստեղ դիզել իրարու վրայ, անոնք սա վիթխարի ամբարտակէն աւելի հսկայ ու զարհուրելի պարթապ մը պիտի կուտակէին:

- Լսեր եմ հայոց կոտորածներուն մասին թուրքերու կողմէ, բայց այդքան սոսկալի՞...:

Յետոյ խնդրեցի իրմէ, արդեօք կրնայի՞նք շրջիլ գետնայարկի ներքնամասերը, ուր ելեկտրակայանի ու ժանակները (թուրպին) եւ ամբողջ ամբարտակին այլազան գործողութիւնները վարող արդիական

փրկեցին թուրքիոյ սպանդէն: Իսկ զինադադարէն ետք, դարձեալ Սուրիան եւ միւս արաբական երկիրները քանի մը հարիւր հազար թշուառ ու լքուած հայ գաղթականներ ազնուօրէն հիւրընկալեցին, անոնց ապահով ապաստան եւ աշխատանքի ու զարգացման ազատ պատենութիւններ ընծայեցին: Հայերը ամէն տեղ ուրախութեամբ ողջունեցին արաբական ազգային ոգիին զարթնումը եւ անոնց երկիրներուն ազատագրումը թուրքիոյ եւ Արեւմտեան պետութեանց լուծերէն: Որովհետեւ արաբները, երբ ազատ կ'ապրէին, կրցան հազարամեակի մը շրջանին ստեղծել զմայլելի քաղաքակրթութիւն մը, որ գրական, գիտական, արուեստներու եւ ճարտարապետութեան մարզերուն մէջ հոյակապ գործեր արտադրեց: Եւ կասկած չկայ, որ նման ազատ ու ապահով պայմաններու տակ, անոնք դարձեալ թանկարժէք ջերմօրէն կը ցանկանք, որ Արաբ-Իսրայէլ հակամարտութիւնը վերջ գտնէ եւ հաստատուի տեւական խաղաղութիւն, Իսրայէլի կողմէ գրաւուած բոլոր հողերուն վերադարձովը Սուրիոյ, Եգիպտոսի ու Յորդանանի: Նաեւ իրենց սեփական հողամասին վրայ հաւաքուելով Պաղեստինի տարաբախտ գաղթականները, որով Լիբանան ալ կը փրկուի իր ներկայ ողբերգական վիճակէն, ուր բնիկ արաբ ժողովուրդին հետ՝ շուրջ 250,000 հայեր ալ ապրեցան քաղաքացիական պատերազմին սարսափները: Մենք մեր ամերիկացի բարեկամներուն հետ կը խօսինք այս խնդիրներուն մասին եւ մեր գնահատանքը կը յայտնենք Սուրիոյ մեծայարգ նախագահ Հաֆիզ Ասատին, իբրեւ լայնախոհ, խաղաղասէր եւ իմաստուն պետական ղեկավար մը, որուն իշխանութեան հեռատես արտօնութեամբ՝ Սուրիոյ մէջ բնակող հարիւր հազարաւոր հայերը կը պահեն սեփական եկեղեցիներ, դպրոցներ եւ ակումբներ, որոնց յարկերուն տակ Սուրիոյ հաւատարիմ քաղաքացիներ կը դաստիարակուին, հայերէն լեզուին, հայոց անցեալ պատմութեան եւ ներկայ արժէքներուն բաւարար ծանօթութեամբ, որուն նպաստով, անոնք կրնան աւելի գիտակից ու արդիւնաւոր մասնակցութիւն ընծայել Սուրիոյ ընդհանուր զարգացումին՝ իրենց արհեստներով, մասնագիտութեամբ ու մշակոյթով:

Անոնց գնահատանքի խօսքերէն ետք, մեր գրոյցը շարունակուեցաւ հիւրասիրութեամբ եւ յետոյ քանի մը լուսանկարներ առնուեցան իրենց եւ մեր անդամներուն հետ միասին: Յաջորդ օրը, արաբերէն թերթին մէջ թղթակցութիւն տպուած էր այդ տեսակցութեան մասին, խմբական լուսանկարով մը:

Քանի մը օր ետք տեսնելու գացինք Եփրատ գետի լայնքին կանգնեցուած հսկայ ամբարտակը: Իրապէս վիթխարի ձեռնարկ մը, որ իրագործուած է Սովետ. Միութեան կողմէ եւ որուն մէջ կարեւոր

բաժին կատարեր են նաեւ խորհրդահայ ճարտարագէտներ: Մեզի առաջնորդ տրուեցաւ երիտասարդ արաբ մը, որ անգլերէն ալ կը խօսէր եւ քովէս քայլելով կը բացատրէր ահարկու կառուցուածքին շինութեան տարրեր հանգրուանները, անոր հիմերուն փորուելէն մինչեւ աւարտին մօտեցած ներկայ վիճակը: Ես հիացումով կը դիտէի ամբարտակին հոյակերտ զանգուածը, - անոր աջ կողմին պատուարները կ'իջնէին անդնդային խորութեամբ մինչեւ ստորոտ, ուր տարածուելով յամրընթաց կը հոսէին գետին արձակուած ջուրերը: Իսկ ձախ ճակատին դէմ արդէն զսպուած, ծովացած էր Եփրատը, ողողելով, ծածկելով երկու ափերուն մինչեւ բլրակողերը:

Թերեւս բնագործէն՝ գլուխս կախեցի վար, աչքերս փակեցի եւ զգացի որ մարմինս կը դողար կարծես ցուրտ հովէ մը:

- Ի՞նչ ունիք, անհանգի՞ստ էք, հարցուց արաբ երիտասարդը, մեղմօրէն թեւս սեղմելով:

- Ո՛չ, յարեցի իրեն նայելով, ես լաւ եմ, բայց այս գե՛տն է...:

- Ինչո՞ւ, այսքան բարձրէն դիտելով գլուխնի՞դ դարձաւ, - եւ ան խնդաց կատակելու համար:

- Ո՛չ, միայն կը մտածէի... Եփրատին կազմած ընդարձակ աւազանին ջուրերը որքան վճիտ են ու հանդարտ: Անոնք ելեկտրական ուժ կ'արտադրեն ձեր գործարաններուն ու տուններուն համար, եւ խոպան, անապատ հողեր պիտի ոռոգեն, անոնց վրայ այգիներ ու պարտէզներ, արտեր ու մրգաստաններ պիտի ծաղկին: Բայց 1915-ին եւ յետոյ, այս նոյն Եփրատ գետը հայ ժողովուրդին համար ողբերգական ու նուիրական ուխտատեղի մը դարձաւ...:

- Ի՞նչպէս, յարեց ան զարմանքով:

- Որովհետեւ զայն կազմող առուններն ու վտակները Արեւմտեան Հայաստանի լեռներէն ու ձորերէն կուգան: Եւ 1915-ին թուրքիոյ իշխանութիւնը սկսաւ հայոց մօտ 3,000,000 զաւակները ոչնչացնել իրենց երեք հազար տարուան հայրենիքին մէջ, ջարդելով եւ աքսորելով: Դէպի Սուրիոյ անապատները տարագրուած կարաւաններէն բիւրաւոր հայեր անոնք թափեցին ու խեղղամահ ըրին Եփրատի ալիքներուն մէջ: Եւ հիմա կը խորհէի, եթէ Եփրատ գետին բերած հայ զոհերուն մարմինները կարելի ըլլար այստեղ դիզել իրարու վրայ, անոնք սա վիթխարի ամբարտակէն աւելի հսկայ ու զարհուրելի պարիսպ մը պիտի կուտակէին:

- Լսեր եմ հայոց կոտորածներուն մասին թուրքերու կողմէ, բայց այդքան սոսկալի՞...

Յետոյ խնդրեցի իրմէ, արդեօք կրնայի՞նք շրջիլ գեանայարկի ներքնամասերը, ուր ելեկտրակայանի ուժանակները (թուրպիմ) եւ ամբողջ ամբարտակին այլազան գործողութիւնները վարող արդիական

կազմածները զետեղուած էին: Ան յանցաւորի ժպիտով դիտել տուաւ, թէ այդ բաժիններուն մուտքը արգիլուած է բոլորին համար եւ անոնց այցելել կարելի է միայն կառավարական մասնաւոր արտօնագիրով: Այն ատեն մեր մէկ ընկերը անոր ցոյց տուաւ արարերէն թերթը, ուր տպուած էր մեր տեսակցութիւնը նկարագրող յօդուածը եւ խմբական լուսանկարը արար պաշտօնեաներու հետ: Մեր առաջնորդը կարգաց զայն, յետոյ դարձաւ ինձի.

- Շատ լաւ, իջնենք վար, դուք հոն կը տեսնէք ինչ որ կը փափաքիք:

Դարձգարծիկ ճամբաներէ մեր ինքնաշարժ կառքերով հասանք ստորոտ ու մտանք լայն դարպասէ մը ներս: Հոն, ամենէն տպաւորիչը, ամբարտակի նոյնիսկ այդ հատուածին ահագնութիւնն էր, աւարտած մասերով, եւ դեռ կառուցուող բաժիններով: Մէկը կրնար խոր հիացումով դիտել հսկայ մեքենաները, էլեկտրական հոսանքը արտադրող ուժանակները, բացուած խորունկ ու բոլորածեւ փոսերը, շարժական կամրջակները եւ գունաւոր էլեկտրական կոճակները, որոնք իրենց վառող ու մարող լոյսերով կը խօսէին անոնց գիտական լեզուն սորված վարիչներուն:

Երբ կրկին վեր բարձրացանք, փորձուեցայ հարցնել մեր արաբ ուղեկիցին.

- Ամէն մեծ գետի նման, հարկաւ եփրատն ալ իր հոսանքին հետ հող կը կրէ դէպի ծով: Ի՞նչ պիտի պատահի, երբ անոր բերած տիղմը յատակին հաւաքուի եւ կուտակուելով հասնի մինչեւ, ըսենք...

- Օ՛, այո, հաշուուած է, որ այս ամբարտակը 60 տարուան գործօն կեանք պիտի ունենայ: Մինչեւ այն ատեն յատակի աւազն ու ցեխը այնքան պիտի բարձրանան, որ ան այլեւս պիտի չկրնայ բաւարար ջուր հայթայթել էլեկտրական ուժանակները դարձնելու համար: Երբ հասնինք այդ կէտին՝ երկու ընտրութիւն պիտի ունենանք, - կամ լքել ամբողջ ամբարտակը, եւ կամ անոր վրայ աւելցնել նոր պատուար մը եւս, որ 15-20 տարի պիտի երկարաձգէ անոր ծառայութեան շրջանը: Անկէ ետք, ա՛լ բոլորովին անօգուտ պիտի դառնայ ան:

- Ուրեմն, ըսի տխրօրէն, այս հսկայական ու հիանալի կառուցւածքը որ միլիտաւոր ոսկի արժած է, միայն 75-80 տարուան կեանք ունի եւ անկէ ետք պիտի մեռնի՞ վերջնապէս:

- Այո, բայց ամէն շինութիւն արդէն իրեն սահմանուած ժամանակ մը կ'ապրի եւ յետոյ կը փլչի, կը կորսուի: Կարելորդ այն է, թէ այդ շրջանին ո՛րքան բարիք կը բաշխէ ժողովուրդին: Օրինակ, այս ամբարտակը իր արտադրած էլեկտրական ուժով եւ տալիք ոռոգման ջուրերով, 75-80 տարուան ընթացքին կրնայ Սուրիոյ ճարտա-

րարուեստը եւ հողագործութիւնը վերափոխել եւ մեր չքաւոր խաւերուն կենցաղն ու կրթական մակարդակը անհամեմատ կերպով բարելաւել, ճոխացնել:

Երիտասարդ վարիչի հայրենասիրական խանդը եւ ապագայի հաւատքը կը խօսէր անոր ինքնավստահ ոգիին մէջէն:

Հալէպի հայոց հին ու նոր սերունդներուն համար իր բացառիկ անձով կարծես բազմաճիւղ հաստատութիւն մը կը մարմնաւորէ բժիշկ Ռոպէր ձեպէճեան: Վերածնած Հայաստանի հանդէպ խանդավառ սէրը անոր մէջ «անկիզբէի մորենիի մը նման կը վառի բայց չի հատնիր»: Այլ յարատեւ կը բռնկի, կենդանի ջերմութիւն ու լոյս սփռելով իր շուրջ: Ազգային ծառայութեան ասպարէզին վրայ իր քրտինքին ու եռանդին շուրջ մատուցանող մը, որ միշտ նոր դաշտ մը կը փնտռէ ու կը գտնէ մշակելու, պտղաւորելու համար: Ինք հիմնած է ու կը վարէ Հալէպի Սարեան նկարչական հիմնարկը: Եւ իր հիւանդանոցին շարք մը սենեակները լեցուցեր է սփիւռքահայ հին ու նոր գիրքերու, թերթերու, գրական, բանասիրական ու գիտական (նաեւ օտար լեզուներով) հանդէսներու դէզեր, որոնք կը կարգաւորէ ու կը դրկէ Հայաստանի թանգարաններուն կամ Ակադեմիայի տարբեր բաժիններուն:

Բժիշկ Ռոպէր ձեպէճեան այդ հիւանդանոցը հաստատել է իր սեփական միջոցներով եւ երկար տարիներէ ի վեր կը վարէ զայն, Սուրիոյ յաջորդական իշխանութեանց խոր գնահատանքին եւ ներբողալի վկայագրիներուն արժանանալով: Ան հաճեցաւ զիս առաջնորդել իր հաստատութեան միջանցքներէն ու սենեակներէն ներս: Եւ ապշութեամբ ու հիացումով դիտեցի պատերուն վրայ շարուած նոյն դէմքերուն զոյգ լուսանկարները, մակագրուած «առաջ» եւ «յետոյ», որոնք իր բժշկական տաղանդին վկայութիւնը կուտային: Ատոնք պատկերներն էին մարդոց, որոնց աչքերը, բերանները, ականջներն ու քիթերը ծնունդէն կամ արկածներու իբրեւ արդիւնք, ճմռթկուած, ճեղքուած, այլափոխուած էին: Եւ բժիշկին կատարած դիմագծային վիրարուժութեան վերակերտած դէմքերուն վրայ հազիւ կարելի էր նշմարել նախկին երբեմն սոսկալի աղճատումները:

- Բայց ասոնք սքանչելի են, տոբթոր, ըսի: Գիտէ՞ք, ես ժամանակին դերձակ եղեր եմ եւ մարդոց ու կիներու հագուստները կը կտրատէի ու կը կարկտնէի, բայց անոնք բուրդէ, բամպակէ կամ մետաքսէ կերպասներ էին միայն: Իսկ դուք, ահա դուք մարդկային միսեր, ջիղեր, ոսկորներ կտրեր էք, սղոցեր էք եւ իրարու կտրեր էք ա՛յնքան ճարտարութեամբ, որ աւելի գրաւիչ արդիւնքներ հիւսեր էք կենդանի դէմքերու վրայ, քան ես կրնայի ընել պարզ կտորներ մկրատելով ու կտրելով, աւելցուցի խընդալով:

Ան հիմա ալեհեր տարիքի հասած, նոր հայ բժիշկներ կը պատ-
րաստէ իր դժուարին մասնագիտութեան մէջ:

Դարձեալ մեծագոյն ուրախութիւն էր ինծի համար այցելել հայ
դպրոցները, ուր հանդիպումներ ու գրոյցներ կ'ունենայինք տնօրէնի,
ուսուցիչներու, արար վերահսկիչի եւ մանաւանդ՝ համախմբուած
աշակերտներու հետ: Անոնց շարքին, երեք տարրեր օրեր, մասնաւոր
հրաւէրով երկար ժամեր անցուցի Նաճարեան-Կիւլպէնկեան վարժա-
րանին մէջ, որ Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան սփիւռքի մեծագոյն
հայկական կրթարանն է, մինչեւ 1200 աշակերտներով, որոնք կը
լեցնեն մանկապարտէզի, նախակրթարանի եւ բարձրագոյն դպրոցի
կարգերը: Հոս եւս, երիտասարդ տնօրէնին եւ դասատուներուն հետ
խօսեցանք ազգային ու կրթական խնդիրներու շուրջ, եւ շրջեցանք
դասարաններ, ուր թոյլ տուին որ հարցումներ ընեմ ուսանողներուն՝
հայերէն լեզուին, հայոց պատմութեան, եւ գրական դէմքերուն մա-
սին, որոնց ճշգրիտ պատասխաններ կուտային:

Իսկ առիթով մը հրաւիրեցին զիս, որ ատենախօսեմ աշակերտու-
թեան: Վարժարանին ընդարձակ սրահը լեցուած էր երկսեռ ուսա-
նողներու հոծ բազմութեամբ: Եւ ես խօսեցայ Հայաստանի, սփիւռքի,
ազգային հիմնական նպատակներու, եւ այդ բոլորին մէջ՝ նորահաս
հայ աղջիկներու եւ տղոց վիճակուած կենսական դերին ու նուիրա-
կան պարտաւորութեանց մասին, արտասահմանի հայոց գոյատեւման
պայքարին մէջ: Թաքուն հպարտութիւն մը, անխառն հրճուանք մը կը
համակէր զիս նոյնիսկ խօսած միջոցիս, երբ կը մտածէի, թէ ահա
այս դերահաս աղջիկներն ու տղաքը, անձկութեամբ լարուած իրենց
գրաւիչ դէմքերով, ուրեմն ա'յնքան լաւ հայերէն կը հասկնային եւ
ա'յնքան յստակ կ'ըմբռնէին արտայայտած գաղափարներս, որ կրնա-
յին այդքան խանդավառ ու աղմկալի ծափահարել: Հայկական ոգիով
ու գիտակցութեամբ տողորուած երկսեռ մանուկներ ու պատանիներ
արտադրող հոյակապ կրթարան մը, որ արժանի է բոլորին ջերմ
հոգածութեան ու նիւթական առաւել գոհոգութեան:

Եւ ուրիշ, բոլորովին տարբեր երեւոյթ մը, անհաւատալի ըլլալու
չափ ողբերգական: Հանրակառքերու (պլս) կարաւան մը, որ Թուր-
քիայէն եկած էր եւ հարիւրաւոր ճամբորդներ կը տանէր Մէքքէ,
խլամական կրօնին ամենէն նուիրական ուխտավայրը, իրենց Պայրամի
տօնին առթիւ: Բնական եղելութիւն մը, որ սովորական, նոյնիսկ յար-
գելի պիտի ըլլար տարբեր պայմաններու տակ: Որովհետեւ մահմետա-
կան թուրք ուխտաւորներ կ'անցնէին մահմետական Սուրիոյ մէջէն, եր-
կուքին ալ հասարակաց սրբավայրը աղօթքի երթալու համար: Բայց սպ-
շեցուցիչ հակասութիւնը այն էր, որ Դամասկոսի իշխանութիւնը զա-
նոնք վտարած էր քաղաքէն դուրս գետին մը, իբրեւ անոնց իջեւան:

Որովհետեւ թուրք ուղեւորները, բարեպաշտ ուխտաւորներ, շու-
կայէն ամէն տեսակ ապրանքներ կը գողնային եւ այնքան ընդհա-
նուր չափերով, որ շուարումի կը մատնէին ոստիկանները: Թուրքեր
նաեւ փողոցներն ու մայթերը անփութօրէն կը գործածէին որպէս...
արտաքնոց: Երբ այցելեցի անոնց կայանը, խորշելի եւ ամօթալի
տեսարանի մը հանդէպ գտայ ինքզինքս: Այդքան թանձրացած աղ-
տոտութիւն, այդքան համապարփակ աղքատութիւն եւ եղկելի տգի-
տութիւն դժուար էր պատկերացնել: Հանրակառքերը ծածկուած
էին փոշիով ու չորցած ցեխով, պատուհաններուն ապակիները կո-
տրտած, կողերուն ներկերը թափած եւ արկածներէ ծեծուած էին:

Իսկ ուխտաւորներու բազմութիւնը, այրեր, կիներ ու մանուկ-
ներ, ցնցոտապատ էին, իրենց հագուստներն ու մարմինները աղտի
խաւերու մէջ թաղուած: Մարդոց մօրուքները եւ փոքրիկ տղոց ու
աղջիկներու մազերը զգզուած, կարծես երբեք սանտր չէին տեսած,
եւ անոնց աչքերն ու դէմքերը հիւանդոտ, աղտի խաւերու տակ տըժ-
գունած: Այրերու վերարկուներն ու կիներու զգեստները այլանդակ
էին, բազմագոյն կարկտնուած: Կարելի չէր երեւակայել անգամ այդ-
քան ամբողջական թշուառութիւն եւ այդքան կուտակուած կեղտ,
գրաստային վիճակի ինկած մարդկային էակներու վրայ: Եւ տակա-
ւին՝ ասոնք Թուրքիոյ ամենէն չքաւոր դասին չէին պատկանիր, քանի
որ մինչեւ Մէքքէ երթ ու դարձի ծախքերը կրցած էին վճարել:

Եւ այս անասնական կենցաղը՝ Ապրիլեան ցեղասպան Եղեռնէն
մօտ վաթսուն տարիներ ետք, Արեւմտահայ ժողովուրդին, - անոր
այգիներուն, գիւղերուն ու քաղաքներուն, եւ կալուածներուն, վա-
ճառատուններուն եւ ոսկիին ու արծաթին անսահման հարստութիւնը
յափշտակելէ ու վատնելէ յետոյ...:



Ամբողջ սփիւռքի մէջ՝ ամենէն փոքր հայ համայնքը մնացեր է
Կիպրոսի գաղութը: Նախապէս, կղզիին թուրք բնակչութեան յարու-
ցած յաջորդական տագնապներէն ու բախումներէն առաջ, աւելի քան
4,000 հայեր կը բնակէին Կիպրոս, անոնց մեծագոյն մասը կիզրո-
նացած մայրաքաղաք Նիկոսիոյ մէջ: Բայց կղզիին յոյն բնակչու-
թեան ու թուրք փոքրամասնութեան միջեւ թշնամանքը հետզհետէ
խորացաւ եւ կոխներ արծարծուեցան Թուրքիոյ գործօն մասնակ-
ցութեամբ, մինչեւ անոր բանակին ներխուժումը Կիպրոս եւ գրա-
ւումը կղզիին մէկ երրորդ հատուածին: Եւ ամէն միջադէպի վտանգ-
ներուն կամ սպազայ սպառնալիքի երկիւղէն մղուած՝ բազմաթիւ
հայ ընտանիքներ գաղթեցին Լոնտոն կամ ուրիշ վայրեր, որոնց

մեկնումին իբրև հետեւանք՝ հայոց քանակը հոն իջած է նուազ քան 2,000 հոգի: Բայց հակառակ իր փոքրագոյն համրանքին, Կիպրոսի համայնքը կը մնայ սփիւռքի բովանդակ հայութեան ամենէն գերազանց նշանակութեամբ ու կենսական արժէքով կեդրոններէն մէկը: Անոր վիճակուած է անփոխարինելի՝ դեր մը կատարել սփիւռքահայ ազգային գոյատեւման պայքարին մէջ՝ որովհետեւ հոն հիմնուած է ու կը տեւէ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, - ամենէն բեղմնաւոր ու բարձրագոյն մակարդակով վարժարանը Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան, ամբողջ արտասահմանի մէջ:

Կիպրոս գտնուած շրջանին, վաղեմի ընկերներու եւ բարեկամներու մտերմութեան մէջ, անցեալ երանելի օրերու վերադարձին հաճոյքը ապրեցայ, նոյնիսկ ներկայի մոայլ գոյովիճակին հանդէպ: Նիկոսիոյ թրքական թաղամասը անջատուած էր պատուարներով, որոնք կը փակէին փողոցները բաժանման գիծին վրայ: Կը քալէինք մինչեւ այդ կարկտնուած պատնէշներուն մօտ, ուր ո՛չ շարժում ո՛չ կեանքի գոյութեան նշան կ'երեւէր: Կարծես երկու տարբեր աշխարհներ էին, իրարմէ խզուած հոգեբանական, մշակութային ու կենցաղային անկամրջելի անջրպետով:

Մայրաքաղաքին գլխաւոր մարզերը կը մնային յունական գօտիին մէջ, ուր հաստատուած էր նաեւ Կիպրոսի կառավարութիւնը, իր պետական պաշտօնատուներով: Այս թաղերուն մէջ կառուցուած են բազմաշարկ ու շքեղ պանդոկներ ու շէնքեր, գրաւիչ բնակարաններ, փարթամ բովանդակութեամբ խանութներ: Փողոցները լեցուած էին զուարթ անցորդներով եւ առեւտուրը աշխոյժ էր ամէն կողմ: Մայթերու եւ հրապարակներու վրայ, կամ ճաշարաններու մէջ՝ ժողովրդային խճողուած խաւերը կ'ապրէին բնականոն կենցաղով, իրենց խառնուածքէն բխող ծիծաղով ու զուարճութեամբ:

Հայկական շրջանակներէն ներս, հրապարակային ու մասնակի հաւաքոյթներ կ'անցնէին ներկաներու ուրախ տրամադրութեան տակ, որ անոնց վստահութեան եւ աներկիւղ կորովին վկայութիւնը կուտար, նոյնիսկ Կիպրոսի գոյովիճակին շուրջ միջազգային վէճերուն հանդէպ: Հայրենական կարօտներ, ազգային հիմնական խնդիրներ, եւ սփիւռքահայ գոյատեւման հոգեր տիրական նիւթերը կը կազմէին մեր գրոյցներուն: Յայտնօրէն, մտաւորական բարձր մակարդակ մը եւ կենսայի ոգեւորութիւն մը կը յայտնուէին Նիկոսիոյ փոքրաթիւ գաղութին մէջ, շնորհիւ Մելգոնեան վարժարանի անցեալ ու ներկայ ուսուցիչներու, խնամակալ մարմնի անդամներու եւ հարկաւ նաեւ ուսանողներու բարերար ներկայութեան: Հայկական ուսիւթ-ժամը իր ճոխ յայտագիրներով, որոնք կը ձայնասփռուին մինչեւ Մերձաւոր Արեւելքի տարբեր երկիրներ՝ նշանակելի դեր մը կը կատարէր կղզիին

հայոց մէջ հայրենասիրական ու ազգային շարժումներու շուրջ խանդավառութիւն արժարժելով:

Նոյն շաբթուան զուգարիպեցաւ քաղաքական պայքարի ողբերգական դէպք մը, որ բարեբախտաբար խաղաղ լուծումով փակուեցաւ: Կղզեբնակ յոյներու «մարտական» կազմակերպութեան գաղտնի ուժերը, որոնք Կիպրոսը իրենց մայր երկրին՝ Յունաստանի կցելու նպատակը կը հետապնդեն՝ առեւանգեր էին հանրապետութեան նոր նախագահին՝ Սփիրոս Կիպրիանուի որդին եւ զայն կը պահէին իբրեւ պատանդ: Անոնք կը պահանջէին, որ կառավարութիւնը ազատ արձակէր իրենց շարք մը զինակիցները, որոնք բանտարկուած կը մնային պետութեան դէմ գործուած դաւադրական եւ անարեւելիկ յանցանքներով: Այլապէս անոնք կը սպառնային յայտարարուած մերձաւոր թուականին սպաննել նախագահ Կիպրիանուի երիտասարդ որդի, որ զինուոր էր Կիպրոսի բանակին մէջ: Ամբողջ ժողովուրդը խռովքի մատնուած էր հետզհետէ ծանրացող սարսափի մթնոլորտին տակ եւ խոր համակրանքի ու կարեկցութեան հոսանք ու՛ր լը ստեղծուէր մահուան մղձաւանջին տակ տուայտող գաւակին եւ անոր եղբրական վիճակին տանջանքը ապրող հօրը հանդէպ:

Ծանր տագնապ մը կը դիմագրաւէր նաեւ նախագահ Կիպրիանուի գլխաւորած կառավարութիւնը: Ան որոշած էր այս դէպքէն առաջ, չենթարկուիլ անարեւելիկներու որեւէ պահանջին: Բայց հիմա նժարի վրայ դրուած էր հանրապետութեան ղեկավարին գաւակը եւ անոր կեանքին ու մահուան վճիռն էր որ պիտի տային: Եւ անհրաժեշտ կը նկատուէր անարիւն համաձայնութիւն մը: Որովհետեւ եթէ իշխանութիւնը ստիկաններ զրկէր առեւանգողներուն թագստոցը, որուն վայրին ծանօթ կը կարծուէր, եւ բախում տեղի ունենար անոնց միջեւ, վստահաբար պիտի սպաննուէր նախագահ Կիպրիանուի պատանդ որդին, որուն հետեւանքով քաղաքացիական կռիւներ կրնային բռնկիլ Կիպրոսի յոյն բնակչութեան մէջ, Թուրքիոյ բանակին ու թնդանօթներուն աղէտալի զրացնութեան հանդէպ, անոր շնորհելով նոր պատեհութիւն մը, յաւելեալ հողամասեր գրաւելու կղզիին վրայ, խաղաղութիւն հաստատելու պատրուակով:

Բանակցութեան ձեռնարկներ, երկրին ներսէն թէ դուրսէն անարեւելիկներուն ուղղուած բազմաթիւ կոչեր, որ հրաժարին իրենց քրէական ծրագիրէն՝ յանգեցան իրաւախոհութեան մը: Անոնց արտօնուեցաւ, որ քանի մը զինակից բանտարկեալներու հետ հեռանան Կիպրոսէն: Պատանդը ազատ արձակուեցաւ: Եւ այդ առիթով յաղթութեան տօնահանդէսի նման հսկայ հաւաքոյթ մը սարքուեցաւ կեդրոնական մեծ հրապարակին վրայ, ուր ներկայ էր բազմահազար ժողովուրդ: Ամպիոնին վրայ կանգնած էին Կիպրիանու եւ իր որդին՝ զինուո-

րական համազգեստով: Նախագահը խօսեցաւ կորովի եւ յուզիչ ճառ մը, որ ազգակից խոսվարար տարրին եւ արտաքին (թուրք) թշնամիներու սպառնալիքներուն դէմ Կիպրոսի ազատութիւնը ամէն զնով պաշտպանելու խոստումը կը յայտարարէր: Մինչ կողքին կանգնած բանաստեղծ բարեկամս կը թարգմանէր նախագահին որքան խելացի՝ այնքան յանդգնութեամբ բանաձեւուած դատումները, իմ ուրախութիւնս կ'աճէր, որ հայոց համար պատմական մտերմութեամբ թանկագին այս կղզիին խաղաղասէր ու բարեկամ ժողովուրդը կ'ունենար քաղաքական հասունութեամբ իմաստուն ու աներկիւղ պետական ղեկավար մը, որ արժանաւոր յաջորդ մը կը դառնար իր նախորդին՝ բացառիկ շնորհներով օժտուած Մակարիոս Արքեպիսկոպոսին:

Կիպրոս մնացած շրջանիս, չորս տարբեր օրեր այցելեցի Մելգոնեան կրթական Հաստատութիւնը: Ան մնացած էր անփոփոխ, հնամեայ վանքի մը խորհրդաւոր մտեմութեամբ պարուրուած: Մուտքի դարպասէն ներս՝ լայն ճամբան, երկու կողմերու բարձրաբերձ ծառերուն մէջէն կ'երկարէր մինչեւ վերի բացատը, ուր կը կանգնէր գրաւիչ Յուլիոթոզը, բարերար Մելգոնեան եղբայրներուն արձաններով: Եւ անոր աջին ու ձախին կային ընդարձակ շէնքերը, տպաւորիչ բայց հնամեայ, կառուցուած աւելի քան յիսուն տարիներ առաջ, մէկը յատկացուած աղջիկ եւ միւսը՝ մանչ աշակերտներուն, գետնաշարկերուն վրայ անոնց անջատ ճաշարաններով: Ետեւի հողամասը կը պարունակէ զբօսավայր, մարզադաշտ, ուսուցիչներու յարկաբաժին, լուսցատուն եւ պուրակ մը: Իր լայնարձակ շրջապատին մէջ՝ իրապէս գեղեցիկ կրթարան-բնակավայր մը, որ հէքեաթային հրապոյր մը ունի եւ առօրեայ կենցաղի հոգերէն, ցաւերէն ու վէրքերէն վեր՝ անմեղ ու վճիտ քաղցրութեամբ կը ջերմացնէ ամբողջ միջավայրը: Անոնց կորուստին ափսոսանքն ու կարօտը անկասկած կը զգան Հոն ուսանած աղջիկներն ու տղաքը, երբ իբրեւ շրջանաւարտ կը հեռանան անկէ եւ կը կլանուին կեանքի յաճախ ցուրտ ու պղտոր յորձանուտին մէջ:

Շարք մը հանդիպումներ եղան Հոն, տնօրէնուհիին եւ ուսուցչական կազմին հետ, մտերմական հաճելի զրոյցով, ազգային, սփիւռքահայ ու կրթական խնդիրներու շուրջ, Հայաստանի ոգեւորիչ համայնապատկերին հանդէպ: Ունեցանք նաեւ անջատ հաւաքոյթներ երկսեռ աշակերտներու հետ, ազատ խօսակցութեամբ, հայկական իրաւունքներու, ձգտումներու եւ գործելապարպի մասին, եւ գրական նիւթերու շուրջ: Երկու յաջորդական կէսօրներ բացառիկ հաճոյքը վայելեցի ճաշելու մանչ եւ աղջիկ աշակերտներուն հետ, իրենց սեփական շէնքերու ճաշարաններուն մէջ, ուր ներկայ էին միշտ տնօրէնուհին եւ ուսուցիչները: Կերակուրները առատ ու համեղ գտայ,

ուսանողներու երգերն ու արտասանութիւնները բարձրորակ: Իմ զրոյցս ընդգրկեց նաեւ մեր տարաբախտ եւ իրենց բախտաւոր սերունդներուն պատանեկան տարիներուն բաղդատութիւնը: Մեր ժամանակ՝ մենք ամէն բանի կարօտ ու քաղցած էինք, - հացի ու կարեկցութեան, գիրի ու գիրքերու, եւ անոնց տեղը՝ դաժան վերաբերմունք, լուտանք ու խարազան կը ստանայինք: Իսկ այսօր իրենք կը նստին առատ սեղաններու շուրջ, հազարաւոր գիրքերու հարստութեան մէջ, խնամակալներու եւ ուսուցչական կազմի հոգածութեամբ ու սէրով պարուրուած, ուր իրենց տրուած խստագոյն պատիժը թերեւս ցած նիշ մը միայն կ'ըլլայ:

Երեկոյ մը հաստատութեան ընդարձակ սրահին մէջ սարքուած էր դասախօսութիւն մը, ուր վերլուծական զեկոյց մը տուի ամերիկեան արդի գրականութեան շաւիղներուն, որոնումներուն եւ իրագործումներուն շուրջ: Եւ անդրադարձայ սփիւռքահայ գրական դէմքերու եւ անոնց վաստակներուն մասին: Ինծի ուղղուած հարցումները կ'ապացուցանէին, թէ աշակերտներ ոչ միայն աշխոյժ հետաքրքրութիւն, այլ մանաւանդ լայն ու ճշգրիտ ծանօթութիւն ունէին հայ թէ օտար գրական շարժումներու եւ գրողներու շուրջ:

Ուրիշ երեկոյ մը, նոյն մեծ սրահին մէջ կազմակերպուած էր յորելեանական հանդէս մը, որուն ներկայ էին Մելգոնեանի բոլոր ուսանողները, ուսուցչական մարմինը եւ հրաւիրուած հիւրեր Նիկոսիայէն: Յայտագիրը ծրագրուած էր գրականութեան դասատուին կողմէ, որ նաեւ վարեց ձեռնարկը: Ոսօքի, երգի եւ ընթերցումի բաժինները, մատուցուած աշակերտներու եւ ուսուցիչներու կողմէ, իրենց ջերմութեամբ խորապէս յուզեցին գիտ: Եւ թերեւս զգացական շեշտով համակուեցան բառերս, երբ ուղերձիս մէջ փորձեցի հայ ժողովուրդի հեռաւոր անցեալէն, անոր ողբերգական փլուզումներէն ու շքեղ յաղթանակներէն մինչեւ ներկայի փառաւոր վերածնունդը՝ պատկերացնել մեր ազգային խառնուածքին ու ոգեկան զօրութեան զմայլելի ընդելուզումը: - Անոր ազատութեան տենչը, խաղաղութեան երազը, ամէն աղէտէ վերապրելու սրբազան կիրքը եւ իր ազնիւ իտէալներուն համար գերակշիռ ուժերու դէմ մաքառելու պողպատէ կամքը: Այդ դարաւոր պայքարին մերօրեայ մարտերը կը մղուին երկու ճակատներու վրայ, - հայրենական, ուր հրաշալի վերականգնում մը կը կերտեն Պորհ. Հայաստանն ու հայրենի ժողովուրդը: Եւ սփիւռքահայ, - ուր ազգային գոյատեւման կոիւր կը շարունակուի ապաստան գերագոր հոսանքներուն դէմ: Եւ այս ճակատումին խրամները պաշտպանելու համար՝ Մելգոնեանի նախորդ ու ներկայ շրջանաւարտ տղոց եւ աղջիկներուն վիճակուած է նշանակելի, իրապէս կենսական դեր մը կատարել:

Ինձի համար յիշատակելի եղան Կիպրոս անցուցած օրերս, մտերիմ ընկերներու, յարգելի բարեկամներու հետ ջերմ հանդիպումներով ու հաճելի զրոյցներով: Եւ բաժանումս անոնցմէ, ու Մելգոնեանի պաշտօնեաներէն եւ աշակերտներէն՝ երկար ատեն տխուր ու կարօտաբաղձ զգացումներով համակեցին զիս: Կարծես կը հեռանայի հարազատ հոգիներէ եւ հայրենի շրջապատէ մը, որուն վանքանման միջավայրէն ներս՝ հայկական ոգիի, լեզուի ու մշակոյթի տարրերով թրծուած, հայրենասիրական խանդով ու ներշնչումով սոգորուած, հայ ազգային ազնուազոյն աւանդութիւններուն ու նպատակներուն հրայրքով զօրացած սերունդներ կը պատրաստուին: Եւ սուտանակին մէջ, մտային այդ պատկերներուն զէմ կը շարուակէի խորհրդածել:

- Անհուն երախտագիտութիւն կը պարտինք Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան, հայ ժողովուրդին ընծայած ըլլալուն համար Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, բացառիկ ու անփոխարինելի հիմնարկ մը, իր արտագրած մարդկային հարուստ բերքերով: Որովհետեւ, Մելգոնեան վարժարանը առաձգիմ, անցեալ տասնամեակներուն սփիւռքի հայութեան պարգեւեր է շատ աւելի յայտնի բազմաշնորհ ու նուիրուած զրոյցներ, խմբագիրներ, ուսուցիչներ ու համայնքային պաշտօնեաներ՝ քան բազմաթիւ ուրիշ բարձրագոյն դպրոցներ միասին: Այսօր գրեթէ ամէն գաղութի մէջ ներկայ են անոնք, իրենց շնորհքներով ու ծառայելու յօժարութեամբ, իբրեւ հայ կրթարաններու տնօրէն ու դասատու, խմբագիր եւ հանրային վճարուած կամ անվարձ աշխատաւոր: Անշուշտ ուրիշ երկիրներու հայ երկրորդական վարժարաններ ալ, տեղական դասացուցակի լրիւ գործադրութեան հետ՝ հայերէնի հիմնական նիւթեր եւս կ'աւանդեն ուսանողներուն, որոնցմէ սակաւ հոգիներ կ'ընտրեն հայկական մարզերու մէջ ծառայութեան ուղին: Իսկ մեծագոյն մասը կը կապուի մասնագիտական ասպարէզներու եւ անձնական յառաջդիմութեան խոստումներուն, որուն զէմ ոչ մէկ առարկութիւն կրնայ յարուցուիլ հարկաւ:

Բայց բացառօրէն, գմայլելիօրէն տարբեր եղած է ու կը մնայ Մելգոնեան վարժարանին իրազործած դերը: Որովհետեւ, բովանդակ արտասահմանի մէջ չկա՛յ ուրիշ որեւէ հայկական ուսումնարան, որ իր յարկերուն տակ, ամբողջապէս ու հարազատօրէն հայեցի դաստիարակութեամբ օժտուած ա՛յնքան բնորոշ, ու գերազանց որակով մարդկային հունձիք հասցուցած ըլլայ՝ որքան Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը: Իրենց ջամբուած ընդհանուր ու բարձրագոյն դաստիարակութենէն բացի՝ Մելգոնեանի աղջիկ ու տղայ ուսանողները երբ շրջանաւարտ կ'ելլեն անոր լայն դարպասէն դուրս՝ անոնք, շատ քիչեր բացառելով, լման հայեր են կրթութեամբ, հայեր են

ոգիով ու վերականգնած Հայաստանի հանդէպ խորունկ սէրով, հայեր են ազգային գերագոյն ձգտումներով եւ անոնց հետապնդման համար մաքառելու յօժար կամքով:

Անհրաժեշտ է առարկայական դատումով ընդունիլ բացայայտ ճշմարտութիւն մը: - Ամբողջ սփիւռքի մէջ, նոյնիսկ նիւթական աղբիւրներու տասնապատիկ յատկացումով, հնարաւոր չէ ուրիշ որեւէ ցամաքի վրայ եւ որեւէ պայմանի տակ զարգացնել ուրիշ հայ վարժարան մը, որ կարենայ ունենալ նիւթսիւրջ մեկուսացած շրջապատը, ստեղծել Մելգոնեանի կերտած ժառանգութեան հմայքը եւ անոր մթնոլորտին անխառն հայկականութիւնը: Այս բնական, ոգեկան ու իմացական տարրերէն է, որ հիմնարկին տնօրէններուն եւ ուսուցիչներուն գիտակից, անձնուէր ծառայութեան արդիւնքով կը հասունանան յաջողական շրջանաւարտներու կարգերը, որոնք անգերազանց քանակով ու որակով՝ կը յօժարին ընդառաջել սփիւռքահայ մտաւորական պահանջներուն: Որովհետեւ տակաւին գաղութահայ զրոյցներ ու խմբագիրներ, եւ բազմաթիւ հայ դպրոցներու տնօրէններ ու դասատուներ, եւ պաշտօնեաներ ու մտաւորական մշակներ, լաւագոյն արժանիքներով, պիտի պատրաստուին, պիտի թրծուին եւ սփիւռքահայ գոյապայքարին համար իբրեւ գաղափարի մարտիկներ պիտի հայթայթուին Մելգոնեան Կրթական Հաստատութեան դասարաններէն: Եւ ան իրաւունքը չհաւած է ու կարիքն ունի աւելի լայն նիւթական օժանդակութեան, ուսանողներուն ներկայ 285-ի համարանքը գոնէ մինչեւ 300-ի հասցնելու համար: Որպէսզի կարենայ ոգիի ու միտքի աւելի բազմաթիւ պահակներ ընծայել արտասահմանի հայ գաղութներու ազգային ինքնապահպանման պայքարի ճակատներուն վրայ:

Գրել կամ խօսիլ Կիպրոսի հայ համայնքին եւ Մելգոնեան Կրթական Հաստատութեան մասին, առանց յիշելու անսովոր մարդու մը անունը, արգարութեան ոտնահարում պիտի ըլլար: Մօտ երեսուն տարիներու զրչեղօրօր ու ճշմարիտ բարեկամի մտերմութիւն մը մեզ կը կապէ իրարու: Բայց սիրտի ու միտքի հարազատութեան այդ զգացումը բնաւ չէ միջամտած իր արժանիքներուն ու վաստակին իմ զնահատումիս մէջ, որ աճած է անցնող տարիներուն հետ, իրենց համայնքին տուած պարբերական այցերուս ընթացքին:

Մերատ Տէվլիթեան (Տէրունեան) իր հանրային ծառայութեան բազմակողմանի մարզերով կարծես կ'անձնաւորէ Կիպրոսի հայ գաղութը: Նախկին երէց առաջնորդ ղէմբերէն ոմանք խլուեցան կեանքէն, ուրիշներ գաղթեցին ղէպի ապահով ապաստաններ, բայց ան կառչած կը մնայ հայոց համայնքային գոյութեան ճիգերուն ու մաքառման, իբրեւ անխորտակ ծառ մը, իր ոգեկան ու իմացական արմատները խրած անոր պատնէշուած հողին մէջ: Յաջողած իրաւաբան

մըն է՝ բայց դժուար է ստուգել, թէ իր գրասենեակի սեղաններուն վրայ ու գգրոցներուն մէջ դիզուած թղթածրարներուն մեծ մասը իր փաստաբանի դատերո՞ւն կը վերաբերի, թէ հայկական ձեռնարկներու անվարձ աշխատանքին:

Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, անցեալ տասնամեակներուն փոխած է շարք մը տնօրէններ, ուսուցիչներ ու խնամակալներ: Բայց Սմբատ Տէրունեան մնացեր է այդ կենսական դիրքին վրայ իրրեւ անխարդախ առաջնորդ մը, որ բարդ գործողութիւնները կը վարէ առարկայական գատողութեամբ եւ ամբողջական նուիրումով: Ինքն ալ չըջանաւարտ մը Մելգոնեան բարձրագոյն կրթարանէն՝ այդ հաստատութեան արդիւնաւոր գոյատեւման ու զարգացման համար, որդիական սրտառուչ սէրով ու հաւատարմութեամբ ընծայեր է իր վարչական տաղանդը, եւ անտրտունջ աշխատանքը եւ խորունկ հաւատքը, երկար ու վաստակաւոր տարիներ:

Վերածնած հայաստանի հանդէպ բացարձակ է Սմբատ Տէրունեանի սէրը, որ չ'արտայայտուիր գագացական պոռթկումներով, այլ՝ իրաւարանի հետախոյզ ու սառնարին զատողութեամբ, ուրեմն աւելի ամուր ու տեւական: Աւելի քան երեսուն տարիներէ ի վեր՝ ան իր համոզումներուն բանավարութեամբ՝ անվարան եւ աներկիւղ, առաջնորդող դեր կատարեր է Կիպրոսի հայ գաղութին հայրենասիրական շարժումներուն մէջ, գիտնալով որ իրեն դէմ անարգ զրպարտագիրներ կը յանձնուէին պետական գրասենեակներուն:

Եւ տակաւին, այս բազմակողմանի եւ յարատեւ գործունէութեան մէջ, Սմբատ Տէրունեան եղաւ նաեւ տաղանդաւոր բանաստեղծ, արդէն հեղինակ չորս-հինգ գիրքերու, որոնք իր քերթուածները կը պարունակեն: Անոր զուարթ, հաղորդական խառնուածքը միակ առեղծուած մը կը պարունակէ թերեւս: Ինչպէ՞ս յաջողեր է ան, փաստաբանի իր սառնարին, դրապաշտ տրամաբանութեան հետ ներդաշնակել օժտուած բանաստեղծի զգացական տարրերը, իր յոյզերն ու մտորումները, եւ սէրերն ու կարօտները՝ անձնական, հայրենասիրական ու համայնական, եւ զանոնք ընդելուզել գեղակերտ քնարերգութեան մը մէջ: Հանրային նուիրուած առաջնորդի, հայրենասէր կրթական մշակի եւ ազնիւ մարդու համախառն անձնաւորումը եղած է Սմբատ Տէրունեանը, որուն գեղապաշտի պսակումը կը հանդիսանայ իր բանաստեղծի արժէքաւոր վաստակը:

× × ×

Անցեալ քանի մը տարիներուն ամէն հայ, ամէն երկրի մէջ, մտաւորանջ մորմոքով համակուեցաւ Լիբանանի հայութիւնը հարուածող

աղէտներուն հանդէպ: Քաղաքացիական կռիւներն ու ահաբեկչական դէպքերը ամբողջ թաղեր կործաներ էին Պէյրութի մէջ եւ անթիւ մարդիկ, կիներ ու մանուկներ սպանուեցին էին անպատակ, հրէշային վայրագութեամբ: Եւ անխուսափելի էր, որ այդ ընդհանուր սարսափները անմեղ զոհեր խլէին նաեւ հայ համայնքէն,՝ առաւել՝ ուռմբերէ քանդուած տուններ եւ թալանուած ու հրկիզուած խանութներ: Պատերազմի դադարումէն ետք, նոյնիսկ հաստատուած խաղաղութիւնը պարբերաբար կը խզուէր մասնակի բախումներէ եւ ոճրային արարքներէ: Անոնցմէ ամենէն ահաւորը եղան վերջերս, Սուրիոյ խաղաղարար գորքին կողմէ ուժակոծումները աջակողմեան քրիստոնեաներու դիրքերուն, որոնց ուժերը Իսրայէլի ռազմական գործողութեանց կ'օժանդակէին հարաւային Լիբանանի սահմաններէն ներս եւ անոնցմէ ռազմամթերքի օգնութիւն կը ստանային: Եւ մանաւանդ քրիստոնեայ ալի խմբակին խուժուժ արարքները հայոց անձերուն ու թաղերուն դէմ:

Շուրջ ամիս մը մնացի Պէյրութ, երեք տարբեր ելք եւ մուտքերով, միջանկեալ խաղաղութեան շրջան մը, թէեւ գիշերները, պանդոկի սենեակէս երբեմն կը լսէի գնդացիի ճարճատ կամ ուռմբերու պայթիւն: Նոյնիսկ այդ պայմաններուն տակ՝ կեանքը սկսեր էր բնականոն դառնալ, մինչ գլխաւոր փողոցներու որոշ կէտերուն վրայ, սուրիացի պահակներ գնդացի կամ հրացան գրկած, կը կեցնէին անցուղարձող ինքնաշարժներ ու կը նայէին ներս, զէնքեր կամ ուռմբեր փնտռելու համար եւ երբեմն ալ անձնաթուղթեր կը քննէին:

Կարգ մը հանդիպումներ ունեցանք ղեկավար կամ շարքային ընկերներու, ծանօթ գրողներու եւ վաղեմի բարեկամներու հետ, զորոյցները անցեալ պայծառ օրերու կարօտով ու ներկայ վիճակին անձկութեամբ թաթաւուն: Մեր կազմակերպութեան առաջնորդները եւ մարտական խումբերը, իմաստուն ծրագրումով եւ անձնուրաց քաջութեամբ կատարեր էին իրենց բարբար դերը, հայկական թաղերու եւ տուններու պաշտպանութեան մէջ, թալանի ու սպանդի համար յարձակող ահաբեկիչներու դէմ: Դեռ վերջերս, ցաւազին, անփոխարինելի կորուստ մը կրեցինք, մեր զինուած պահակախումբերու պետին՝ ընկեր Զօհրապ Քէշիշեանի նահատակ իյնալով դաւադիր գնդակէ մը, իրապէ՞ս պայքարի պատնէշին վրայ: Գաղափարի խորունկ համոզումներով, հայրենասիրական խանդով ու կուսակցական անխախտ հաւատարմութեամբ անվեհեր հոգի մըն էր ան, խոնարհութեան շնորհով աւելի պայծառադէմ: Յաճախ ընկերներով շրջեցանք քաղաքին տարբեր թաղերը:

Նախապէս բարգաւաճ առեւտուրով փողոցներ ու խճողուած հրապարակներ, հիմա շէնքերը հիմերէն աւերուած, կողոպտուած ու հր-

զեհուած, յաճախ ծուխէն սեւցած ու ճմռթկուած երկաթի փլատակներով: Նաեւ պողոտաներ ուրիշ մարզերու մէջ, որոնց պատերազմին մահացու շունչը չէր դպած կարծես, - գրաւիչ խանութներ ու գեղակերտ վաճառատուներ, փարթամօրէն լեցուած հագուստի, կօշիկի, ելեկտրական կազմածներու եւ ոսկեղէնի հրապուրիչ, անսպառ մթերքներով, ներածուած բազմաթիւ երկիրներէ: Մինչ կը կառուցուէին բազմաշարի ու հոյակապ շէնքեր ու պանդոկներ, ճաշարանները խրճողուած էին ամէն տարիքի յաճախորդներով, որոնք առատօրէն կը ծախսէին գուարճանալով, երգով, նուագով: Եւ այդ փոփոխութեան մէջ, դուրսը մայիթերու վրայ նստած մուրացիկներ, այրեր, կիներ ու մանուկներ, երբեմն մայրեր ծծկեր երեխաներ գրկած:

Հրաշալի երեւոյթ էր, նոյնիսկ մօտաւոր անցեալի մղձաւանջին ու ներկայի անստուգութեան տակ, Պէյրութի հայոց ընկերային կենցաղին ու հանրային շարժումներուն ա՛յդքան արագ ու կենսալի վերականգնումը: Մենք այցելեցինք Ալեք Մանուկեան երիտասարդական կեդրոնը եւ «Զարթօն» օրաթերթի եւ «Միրակ» ամսագիրի բազմաշարի շէնքը, երկուքն ալ ընդարձակ ու հոյակապ հիմնարկներ, որոնց մէջ արդէն վերսկսած էր աշխոյժ գործունէութիւն, ուսմբերու պատճառած վնասներուն նորոգումը գրեթէ աւարտած: Անցեալի քաղցր ու տրտում վերյիշումներով այցելեցի նաեւ Վահան Թէքէեան վարժարանը, Հայկական Բարեգործական Ընդհ. Միութեան քանի մը զըպրոցները, նաեւ Հայկազեան Գոլէճը, որոնց տնօրէններուն եւ ուսուցչական կազմերուն հետ ունեցայ հաճոյալի հանդիպումներ ու մտերմական զրոյցներ ընդհանրական խնդիրներու շուրջ: Ինձի համար խորապէս յուզիչ էր խօսիլ սրահներու մէջ համախմբուած ուսանողներուն, որոնք տպաւորիչ յայտագիրներ կը կատարէին, բովանդակութեամբ ու ձեւով ամբողջապէս հայերէն եւ ազգային: Թէքէեան վարժարանի խաղափայլին վրայ մօտ 900 երկսեռ աշակերտներ խըմբուած էին, մանկապարտէզի առաջին կարգերէն մինչեւ նախակրթարանի վերին դասարանները, - ծփացող գլուխներու կենդանի ծով մը, որմէ բարձրացող հայերէն երգի ու լեզուի քաղցրութիւնը խոր հըրճուանքով կը լեցնէր զիս: Դժբախտաբար, վերջին ուժակոծութեանց առիթով՝ Սուրիոյ զինուորները թնդանօթային մարտկոցի վերածեր են Թէքէեան վարժարանը, եւ անոնց կրակին փոխադարձող ուսմբեր ծանր վնասներ տուեր են շէնքին:

Պէյրութի մէջ կեցութեանս վերջին շաբթուան ընթացքին, քանի մը կարեւոր ձեռնարկներ սարքուեցան Կիւլպէնկեան շքեղ սրահին, Թէքէեան Մշակութային Միութեան կեդրոնին եւ պանդոկի մէջ: Յոբելեանական հանդէսներ ու խրախճանքներ էին, որոնց հոծ բազմութեամբ մասնակցեցան երէց, միջին տարիքի, մանաւանդ երի-

տասարդ սերունդներ, եկած նոյնիսկ հեռաւոր թաղերէ եւ վտանգաւոր նկատուած գօտիներէ անցնելով: Ամէն տազնապ յանդգնօրէն դիմագրաւելու, ամէն ճգնաժամէ վերականգնելու կամքը եւ ոգեկան ուժը կը խնդար բոլոր դէմքերուն վրայ: Եւ տակաւին, մէկ յորելանը հագիւ աւարտած, տեղատարափ անձրեւին տակ, խումբ մը երիտասարդ ընկերներ, երեք ինքնաշարժներով զիս տարին Զահլէ, ուր ակումբը հաւաքոյթ մը կազմակերպած էր: Այդ ճամբորդութիւնը յիշատակելի դարձաւ նաեւ այն դիպուածով, որ լեռներու վրայէն ամբողջ ճամբու երկայնքին՝ թանձր մշուշը, փոթորկալի անձրեւն ու կարկուտը դիմաւորեցին մեզ: Մեր գաւանած գաղափարին հմայքն ու ջերմութիւնն էին կարծես, որ վտանգին երկիւղը եւ զիշերուան ցուրտը կը վանէին մեզմէ հեռու, եւ անոնց տեղ կը լսուէին խանդավառ հողիներու գուարթ զրոյցը եւ հայրենական աշխոյժ երգերը:

Լիբանանի հայոց հաւաքական արժէքին ու կենսական նշանակութեան մասին յաճախ զրուած ու խօսուած են բացայայտ իրողութիւններ եւ ներելի է գանոնք կրկնել անվերջօրէն, ա՛յնքան վճռական է անոր մարդկային քանակի ու մտաւորական որակի դերը՝ սփիւռքի բովանդակ հայութեան ազգային գոյատեւման պայքարին մէջ: Այդ նիւթին մասին արդէն ես ալ շարք մը յօդուածներ գրած էի հոս ու Պէյրութ գտնուած միջոցիս եւ անհրաժեշտ չէ գանոնք կրկնել դարձեալ: Բայց իբրեւ եզրակացութիւն՝ թերեւս կրնայ օգտակար ըլլալ քանի մը հաստատումներու վերյիշումը:

Հայաստանի մայրաքաղաք Երեւանէն ետք, Պէյրութ կը պարունակէ ամենէն հոծ հայութիւնը, որ համրանքի անգերազանց հարըստութիւն մը կը կազմէ: Բայց շա՛տ աւելին: Նոյնիսկ քաղաքին դիւրախոց խաղաղութեան ամիսներուն, անոր 66 հայկական դպրոցներէն շուրջ 60 հատը բացուեր էին, թէեւ նուազած աշակերտներով, եւ դասերը կանոնաւոր կ'աւանդուէին տասնեակ հազարաւոր երկսեռ ուսանողներու: Եւ տակաւին՝ անոնց յարկերուն տակ դաստիարակուող հայ տղաքն ու աղջիկները իրենց դասարաններուն մէջ ստացած հայեցի կրթութեան հետ, կ'ապրին ու կը մեծնան ամբողջապէս ու յարատեւ՝ հայկական միջավայրի մէջ, հայ ազգային շունչով տոգորուած մթնոլորտի տակ, հայկականութեամբ ողողուած փողոցներէ ու խանութներէ մինչեւ իրենց տունները: Մայր հայրեցիքէն դուրս՝ ուրիշ ո՛չ մէկ երկրի ու ո՛չ մէկ քաղաքի մէջ կարելի է ստեղծել այդպիսի բարերար գոյակիցակ, որ կրնայ շարունակուիլ յաջորդական սերունդներու համար միևնչեւ անորոշ գալիքը:

Ճիշդ է, որ վիրախոց են Լիբանանն ու Պէյրութը, ուրեմն նաեւ հոն ապրող գաղութը: Եւ այն վարկածը, թէ անոր ապագան անստոյգ է, ուրեմն աւելորդ է այլեւս նիւթական լայն նպաստներ ընծայել

անոր պահպանումին համար՝ թէ՛ անողորմ է եւ թէ՛ աղէտալի: Նախ՝ իր մայր հայրենիքէն դուրս ապրող որեւէ հայ համայնքի գոյատեւումը երբեք չի կրնար տեւականապէս ստոյգ ըլլալ: Յետոյ, ե՞րբ է պատահեր, որ ընտանիքի մը վիրաւոր մէկ անդամին հացն ու ջուրը կտրուի՝ պարզապէս անոր հիւանդ ըլլալուն պատճառով: Չէ՞ որ ան աւելի խնամքի, օգնութեան ու սիրոյ կը կարօտի իր առողջութիւնը վերագտնելու համար: Եւ յետոյ, տակաւին Պէյրութի անապահով վիճակին մէջ հայ դպրոցներն ու միջավայրը շատ աւելի ընդունակ են հայեցի կրթութեամբ եւ ազգային ոգիով ու ձգտումներով նորահաս սերունդներ պատրաստելու՝ քան զերազանցօրէն ապահով Միացեալ Նահանգներու հայ վարժարաններն ու շրջապատը:

Գլխաւոր զաղութներ ունինք, - Միացեալ Նահանգներ, Ֆրանսա, նաեւ Հարաւային Ամերիկա, որոնք հակառակ թափուած սքանչելի ճիգերուն եւ կատարուող գերագոյն գոհողութեանց՝ անկարող են ցեղային գիտակցութեամբ, մշակոյթով ու իտէլաներով հայեր արտադրել: Անոնք՝ ընդհակառակը՝ հայեր սպառող համայնքներ են, ուր Մերձաւոր Արեւելքէն եկած հայ տղոց ու աղջիկներու զաւակներն ու թոռները պիտի դիմագրաւեն միջավայրի յորձանքին մէջ կլանուելու, լուծուելու եւ չքանալու դանդաղ բայց ստոյգ վտանգը: Առաւելագոյն բարիքը, որ հնարաւոր է շահիլ՝ մեր հաւաքական էութեամբ ապրելու այս անհասար կոիւն մէջ, հեռացնելն է կորուստի այդ սպառնալիքը, երկարաձգելն է մեր ազգային գոյատեւումը՝ հայեր սպառող այդ զաղութներուն մէջ: Իսկ նման արդիւնքներ կարելի է ապահովել բացարձակօրէն միակ միջոցով մը, - առաւելագոյն ծաւալով եւ ամէն մարդի վրայ օգնել, նպաստել հայեր արտադրող միւս համայնքներուն, որ անոնք զօրանան, աճին ու գոյատեւեն բովանդակ հայկական սփիւռքին պահպանման համար:

Կը նշանակէ, թէ՛ շատ աւելի առատաձեռն օժանդակութիւն անհրաժեշտ է ընծայել Հալէպի Նաճարեան-Կիւլպէնկեան մեծագոյն վարժարանին, Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան եւ Պէյրութի ու միւս Արաբ երկիրներու հայ դպրոցներուն, որ անոնք աւելի լայն տարողութեամբ կատարեն իրենց դերերը, - պատրաստել, արտադրել ու բովանդակ սփիւռքին պարգեւել կրթութեամբ, ձգտումներով ու նկարագրով նորահաս հայ աղջիկներ ու տղաք: Որովհետեւ միայն անոնք պիտի կրնան հայրենասիրական ոգիով ու գիտակից նուիրումով ներշնչել, տոգորել եւ առաջնորդել ազգային դիմագիծի, նպատակներու եւ տեսիլքի գոյութեան պայքարը օտարութեան մէջ, - մինչեւ որ աւելի զօրացած, բարգաւաճ եւ զմայլելի նուաճումներով համբաւուած Հայաստանը, իր հմայքին մագնիսական ուժով՝ կարենայ նոր հայրենադարձներ ներ-

շնչել հեռաւոր ծովերու մէջ ընկղմող տարագիր հայ բազմութեանց:

Ամերիկահայ վարժարաններու խնամակալներն ու տնօրէնները պէտք է կարենան բաւական իրատես, անկեղծ ու քաջ ըլլալ, ընդունելու համար բացայայտ իրողութիւն մը: - Որ իրենց դպրոցներուն հայերէնի ուսուցիչները, տնօրէնները եւ աշակերտներու աւելի քան 90 առ հարիւրը՝ Մերձաւոր Արեւելքէն գաղթած հայ ընտանիքներէ կուգան: Եւ այդ վիճակը տեւական պիտի մնայ, հակառակ ոգւերիչ գուշակութեանց եւ խարուսիկ պատրանքներու: Յայտնօրէն, բիւրաւոր նորեկներ հետզհետէ Ամերիկա պիտի փոխադրեն իրենց հազարաւոր հարազատները եւ անոնց զաւակները: Եւ անոնք աւելի պիտի շեշտեն հայ վարժարաններու ծաւալման անհրաժեշտ պահանջը:

Բայց այդ կարիքին ընդառաջել կարենալու համար՝ հիմնական պայման է, որ Մերձաւոր Արեւելքի հայկական վարժարանները հնարաւորութիւն ունենան արտադրելու ամբողջական հայեր, - իրրեւ գրող ու մտաւորական, իրրեւ տնօրէն, ուսուցիչ եւ աշակերտ: Այլապէս ոչինչ պիտի արժեն այս երկրին մէջ կառուցուող եւ միլիոնաւոր տղար արժող փառաւոր հայ դպրոցները, եթէ այլեւս չկարենան գտնել եւ ունենալ հայ տնօրէն, հայերէնի ուսուցիչ եւ նոյնիսկ՝ հայ աշակերտ:

Լոս Անճելես, 1978

Faint, illegible text in Armenian script, likely bleed-through from the reverse side of the page.

ՀԻՒԱՆԴԱՆՈՑՆԵՐՈՒ ՄԷՋ

Faint, illegible text in Armenian script, likely bleed-through from the reverse side of the page.

ՀԻՒԱՆԳԱՆՈՑՆԵՐՈՒ ՄԷՋ

Սովորական առաւօտ մըն էր եւ գրասենեակ կ'երթայի, քալելով ծանօթ փողոցներէ: Վերը՝ ամպերու ճերմակ առագաստներ կը ծփային երկինքի մոխրագոյն ծովին վրայ: Վարը՝ տուներու առջեւ նոյն մարգերը կը փռուէին, երիզուած ծաղիկներով, որոնց գունագեղ երանգները կը ժպտէին ամէն անցորդի: Եւ նոյն դալար ծառերը կը սօսափէին մեղմ հովէն, ու տերեւներուն զուսպ քրքի՞ջն էր, որ գաղտնորէն կը մաղուէր ցած: Կամ թերեւս անոնք պարզ ցոլացումն^օր էին կուրծքիս տակ խայտացող ապրելու տենդին:

Գլխաւոր պողոտայի անկիւնին՝ կարմիր լոյսը բռնեց զիս ու հոն սպասեցի, որ ան փոխուէր կանանչի եւ մեզ արտօնէր անցնելու դիմացի մայթին: Բայց որքա՛ն կ'երկարի այս վատնուող վայրկեանը, քրթմնջեցի անհամբեր: Եւ տաղտուկով նայեցայ շուրջի մարդոց ու կիներու դէմքերուն: Եւ ո՛վ անհաւատալի առեղծուած, իրենց գոյներով ու ձեւերով անոնք իրարմէ աշխարհնե՛ր տարբեր էին, իսկ ի՞նչպէս անոնց երեւոյթներուն տակ թագնուած կը պահուէին զուարթ, մոայլ կամ թախծալի ապրումներ ու խորհուրդներ, որոնց գաղտնի ծալքերը կարդալ փորձեցի ժամանցի համար:

Բնազգօրէն, ակնարկս գնաց աջ կողմս կեցած միջին տարիքի վայելուչ անձին: Ա՛հ, ըսի ես ինձի, ահա բարբախտ եւ ուրախ հոգի մը: Բայց զարմացայ, որ անոր դէմքը, անձկութեամբ պրկուած ու մտատանջ, ներքին խռովք մը կը մատնէր: Թերեւս կը վախնար, թէ այդ օրուան իր վաճառքին արդիւնքով գործատէրէն ներքողի տեղ պարսա՞ւ պիտի լսէր: Կամ իրենց խանութին առեւտուրը բաւական չա՛հ պիտի բերէ՞ր, որ կարենար գնել կնոջ պահանջած նոր շրջագգետը, նոր կօշիկները եւ մուշտակէ վերարկուն, քանի որ ան կը պնդէր թէ ձմեռուան ցուրտը կանուխ պիտի գար: Ափսո՛ս իր հոգերուն բանտարկեալ մարդուն, մրմնջեցի, եւ գլուխս դարձուցի ձախ կողքիս կանգնած գեղանի աղջկան: Ան կը ժպտէր, դէմքը կլանուած տարփանքի գիշերուան մը յամեցող երանութեան մէջ, վճիտ նայլածքը յառած միայն իրեն տեսանելի երազի մը, ոչինչ նկատելով իր բոլորտիքը եւ չնչմարելով անգամ մեզ, իրեն համար անգոյ խեղճ մահկանացուներ: Անոր մօտ կեցեր էր մոայլ երեւոյթով երիտասարդ

մը, աչքերուն մէջ անհուն տրտմութեամբ: Այո՛, միայն մերժուած սիրոյ մորմոքն ու կարօտը կրնան այդպէս փղծկիլ անոնցմէ զարնուած դէմքին վրայ, շշնջացի ես ինձի:

Եւ ես որ անհաշիւ տարիներու վէրքեր ու վիշտեր ճանչցեր էի՝ փորձուեցայ տիոփել զինք:— Սակայն ինչո՞ւ այդքան տխուր ես, բախտակից եղբայր: Նայէ՛ սա բնութեան զմայլելի հրապոյրին, ի՞նչ փոյթ թէ ան պղտորած է ծինելոյզներու սփռած կծու մուխէն, եւ ինքնաշարժ կառքերու արձակած հոտէն ու թոյնէն: Տե՛ս, ինչպէ՛ս կեանքը ցնծութեամբ կը յորդի ամէն հրապարակէ ու գոհհէ, վնաս չունի՛, որ շաղախուած կ'ըլլայ արցունքով ու արիւնով: Եւ նայէ՛, ահա նոր օրուան մը արշալոյսն ալ շնորհուած է մեզի, թէեւ ի՞նչ բնենք, ան շուտով պիտի մթագնի մութով ու մշուշով, եւ պիտի դառնանայ ցաւի ճիչերով ու տառապանքի հծծիւններով: Իսկ սէրը, պիտի սորվիս օր մը, եթէ ճշմարիտ չէ՝ յուսալքումիդ մէկ կաթիլ արցունքը չ'արժեր. իսկ եթէ իրական է՝ ան կը սկրթի, կ'արիւնի յաճախ լեզի խօսքերու, վաղանցիկ քէներու նշորակներէն: Բայց առաջին ժպիտին ջերմութենէն անոր հրաշայի թուփը կը ծաղկի դարձեալ: Մի՛ վհատիր, ո՞վ գիտէ, այս իրիկունը թերեւս հրճուանքի ծիծաղ բերէ հեար եւ...

Սակայն երթեալքը վարող լոյսերը արդէն փոխուեր էին կանանչի, եւ ան փութաց դէմի կողմը ու հեռացաւ արագ քայլերով: Այդ պահուն էր, ինչո՞ւ, յանկարծ ամբողջ մարմինս կծկուեցաւ ինքն իր վրայ. եւ ի՞նչպէս, ուրկէ՞, խուրձ մը սուր մագիլներ մխրճուեցան լանջքիս տակ, կամ թերեւս հրաշէկ շեղբեր էին, որ կը խրէին սիրտէս վեր: Մունկերս դողալով կքեցան, կէս շրջան մը դարձայ եւ սկսայ փլչիլ վար: Ակնթարթի միջոց մըն էր, որ դաժանօրէն երկարեցաւ եւ պաշտեմամբ ու երկիւղով համակեց զիս: Ի՞նչ կը պատահէր ինձի: Երկու ձեռքերով կառչեցայ բովի ծառին, անշարժ կեցայ ու խորունկ շունչ առի: Մթին կասկած մը ճնշեց զիս: Չայն փարատելու յոյսով՝ նախ թեւերս ու սրունքներս շարժեցի, յետոյ շրթներս բացի ու քանի մը անկապ բառեր թոթովեցի, եւ ժպտեցա՛յ: Դէ՛հ, ուրեմն ոչի՛նչ, գլուխի պտոյտ մըն էր, որ քմահաճ բրտութեամբ զարկաւ ու անցաւ: Այն ատեն քաջութիւնս վերագտայ ու քաղաքավար հայհոյանք մը նետեցի ապուշ դիպուածին ետեւէն: Նոր գգացի, որ պաղ քրտինք մը ողողեր էր գլուխս եւ կարծես անոր շոգիին զաղջ հոտը կ'առնէի: Թաշկինակով սրբեցի ճակատիս ու քունքերուս թացութիւնը, իրանս ուղղեցի եւ յամբ քայլերով սկսայ առաջանալ դէպի գրասենեակ:

Քանի մը խաղաղ շարժմանք անցան եւ առօրեայ հոգեր ինձի մոռցնել տուին անսովոր պատահարը: Երբեմն միայն անոր յիշատակը վատ յաճախանքի մը պէս կը խուժէր միտքիս վրայ, եւ պահ մը

ի դուր կը փորձէի բացատրել անոր ծնունդը: Յետոյ զայն կը վանէի հեռու իրրեւ դիպուածի շար կատակ մը, եւ կը թաղուէի ձեռագիր արձակ՝ կամ ոտանաւոր կտոր մը վիրարութելու գործողութեան մէջ: Բայց առտու մը, մինչ նորէն կը քալէի դէպի գրասենեակ, յանկարծ կուրծքիս տակ ճարակիլ սկսաւ սուր ցաւ մը, որ հետզհետէ կը սաստկանար: Երբ յաջորդ անկիւնը հասայ՝ հեւասպառ էի եւ շիյնալու համար կռթնեցայ ելեկտրաձողին: Դէ՛հ, այս ի՞նչ յիմար խաղ է կը բերես իմ անտէր գլուխիս, շաշեցի կճրատող ակոսներուս արանքէն, անյայտ թշնամիի մը դէմ: Կարծես ահագին աքցան մը իր երախին մէջ խածեր էր ամբողջ կուրծքս եւ կը կրճոտէր ու կը ծամէր բնոյրերս:

Ոտքերս չէին կրնար քայլ փոխել եւ հոն անշարժ կեցայ, չեմ գիտեր քանի՛ վայրկեան, եւ անձկութեամբ կը դիտէի պողոտային երթեւեկը, յուսալով որ ծանօթ ձեռք մը կ'անցնի ու կ'երկարի ինձի օգնութեան: Նոյն ատեն մաղթելով որ ո՛չ մէկ բարեկամ աչք տեսնէ զիս իմ այդ կիսափուլ վիճակիս մէջ: Տաժանելի պահ մը ետք՝ սիրտս եւ անոր արբանեակները ճմլող ցաւերը մեղմացան եւ դանդաղօրէն շարունակեցի ճամբաս: Բայց ամէն մէկ-երկու փողոց՝ նոյն կոտտանքին մագիլները կը ճճթկէին լանջքիս տակի միսերն ու ջիղերը եւ կը հաշմէին ոտքերս: Եւ կրկին դադար, ու դարձեալ մեկնում, մինչեւ գրասեղանիս առջեւ: Հոն նստայ աթոռին վրայ, գլուխս սեղմած ափերուս մէջ: Միտքս խառնարան մըն էր բռնկած խորհուրդներու, որոնք կ'այրէին ճակատս: Եւ սկսայ ձեռագիր մը մշակել, ներսս փոթորկող խռովքը ճանձրոյթէ քնացնելու համար: Եւ հետըհետէ օրը վերագարծաւ իր բնականոն հունին:

Անկէ յետոյ երկար ամիսներ, ամէն առաւօտ, ժամադրուած այցելուի մը նման նոյն հատու ցաւը իր ճիրաններով կը թաղուէր կուրծքիս մէջ եւ կը ճանկոտէր անոր ամենէն դիւրախոց մասերը: Եւ ես, հաւատարիմ բաժանորդի կարգապահ մատուցումով՝ ծանօթ դէմք մը դարձեր էի բժիշկի կամ հիւանդանոցի ընդունարանին մէջ: Ամէն մասնազէտի մօտ անտրտունջ կ'ենթարկուէի որեւէ գննարկումի ու փորձարկութեան եւ խայթող ասեղներու ներարկումի, մինչ փայլուն գոյներով գեղահատներու շիշեր կը բազմանային սնարիս վրայ: Նոյնիսկ երկիւղած խոնարհութեամբ կը լռէի, երբ զիս մերկանալ կուտային եւ միայն ճերմակ սաւանի մը մէջ կը կեցնէին, կը պառկեցնէին, կը շրջէին կողքի, Ք. ճառագայթներու ահարկու մեքենային առջեւ, եւ մարմինիս բոլոր ներքին խորշերը, մկանները, ոսկորները, գործարաններն ու գաղտնի կազմածները առանց ամօթի, կը բանային լուսանկարող ելեկտրական աչքերուն դիմաց:

Յոյսի ու յուսալքման տարի մը ապրեցայ այդպէս, երբ բժըշկական այցերու խոնջէնքն ու ձանձրոյթը կը մոռցուէին միայն հետըզհետէ աճող ցաւերուն տանջանքով: Կարելի չէր թմբեցուցիչ դեղահատով մեղմել անոնց կոտտանքը, քանի որ լծուած կը մնայի մտաւորական ու մարմնական աշխատանքի մը, որ մշտական աշխուժութիւն կը պահանջէր: Եւ ցաւերը յաճախ ա՛յնքան կը սաստկանային կուրծքիս տակ, որ ատամներս կը կճրտէի զայրոյթէս ամբողջ իրանս հերձատող ներքին ոտոխին դէմ եւ յետոյ, անգոր մարտահրաւէր մը կը շարժէի անոր, - Հայտէ՛, ալ բաւական է, արիւնարրո՛ւ դազան, հերի՛ք է, եկո՛ւր, թուրքի կլափ քեզի, եկո՛ւր, բզբտէ՛, յօշոտէ՛ սիրտս... եւ թող ազատի՛մ ատ զիշատիչ ժանիքներուդ լուծէն...:

Եւ գիշեր մը բուռն ցաւը զարկաւ ու արթնցուց զիս: Անկողինիս մէջ նստայ ու նայեցայ պատուհանէն դուրս, ուր պղտոր խաւար մը կը տիրէր: Լոյսը վառեցի, ա՛հ, ժամը դեռ ատուտան երեք ու կէ՞սն էր: Հապա ինչո՞ւ, այսքան կանուխ, հրաշէկ կեռեր կը մխրճուէին լանջքիս տակ եւ կը վառէին ու կը պատուէին սիրտս, թոքերս, ու մինչեւ աղիքներս: Ամբողջ մարմինս կը գալարուէր եւ անոր զոզը մեղմելու համար երկու ձեռքերով սեղմեցի եւ սկսայ ուժգնօրէն ճմլել կուրծքս ու կողերս, ներքին կոտտանքը վանելու ճիգով: Բայց ի գուր: Այն ատեն ելայ մահիճէն, հագուեցայ ու քայեցի տան մէջ: Քանի մը տեսակ դեղահատ, տաք թէյ, բախտին դէմ նետուած անէճքներ, - ոչի՛նչ, բոլորը վատնուած յոյսեր եղան: Քիչ մը նստայ եւ փորձեցի գաւեշտ կարդալ, յետոյ երկնցայ բազմոցին վրայ, յետոյ շրջեցայ սենեակները: Բայց ապարդին, անողորմ ու կամակոր, ցաւերը շարունակեցին կրճոտել ընդերքս:

Խղճահար, շուգեցի հեռաձայնել բժիշկին: Ի՞նչ իրաւունքով խանգարէի անոր գիշերուան հանգիստը: Իսկ ժամերը կը սողային մահաշուք դանդաղութեամբ: Կարծես ամէն անցնող վայրկեան իր սլաքը առաջ վարելու տեղ՝ կը փորձէր գայն խրել իմ գիտակցութեանս մէջ, չարախինգ յամեցումով:

Աչնան գաղջ արեւը ծագեր էր արդէն, երբ բարեկամ ինքնաշարժ մը մեզ տարաւ հիւանդանոց: Հոն, քառանկիւն նեղ խցիկի մը մէջ նստայ օրինորջ քարտուղարին դիմաց եւ սկսայ հեզօհէն պատասխանել անոր անթիւ հարցումներուն: Աղջկան ճարտար մատներուն տակ, գրամեքենան անզգայ անփութութեամբ կ'արձանագրէր ամէն մտերմական ծանօթութիւն, մինչ ես կրած շարշարանքիս քրտինքը կը սրբէի ճակատէս:

- Ի՞նչ է, կ'երեւի արդէն մահամերձ եմ, եւ դամբանականիս համար կենսագրական կը պատրաստէք, հարցուցի աղջկան դառն հեզնանքով:

Ան ակնարկը դարձուց ինծի եւ ըսաւ անտարբեր.
- Մենք ստիպուած ենք 104 տղարի կանխավճարը գանձել ձեզմէ եւ հիմա լեցնելու ենք այս հարցարանը, որ կարենաք հիւանդանոց ընդունուիլ:

- Աղէ՛կ, այդ գումարը տուի՛նք... Հագիւ մրմնջեցի աղերսական ժպիտով մը: Բայց ձեր հարցումները անվերջ են, եւ եթէ շարունակէք՝ կրնան զիս սպաննել դեռ ներս չառնուա՛ծ...: Կը խնդրեմ, նախ կաթիլ մը դեղ տուէք ինծի, սա սոսկալի ցաւը թեթեւնայ, յետոյ...:

- Դուք սիրտի ծանր հարուած ունեցեր էք, յարեց ան կարեկից շեշտով մը, ձեր բժիշկը հեռաձայնեց եւ շուտով հոս կը հասնի... մինչեւ անոր ժամանակը մենք ոչինչ կրնանք ընել ձեզի համար...:

Թուղթերը լեցնելու պատիժը վերջացաւ եւ ելայ խցիկէն դուրս: Հարազատ դէմքեր, մոռայլօրէն մտահոգ, մօտեցան եւ ուզեցին զիս նստեցնել բազկաթոռի մը մէջ: Իսկ ես այնքան ուժասպառ էի խօսելու համար, որ միայն գլուխս շարժեցի ժտատական: Եւ սկսայ գանգաւոյ քայլերով շրջիլ ընդունման սրահին մէջ: Նայուածքս կը յառէի ծաղիկներու թուփերուն, պատերը զարդարող պատկերներուն եւ կեդրոնի բոլորածեւ սեղանին եւ անոր շուրջի թիկնաթոռներուն, անոնցմէ քանի մը պատառ ժամանակի մոռացում պաղատելով: Բայց բնդունա՛յն, ոչի՛նչ կ'ողոթէր իրանիս ընդերքը փեռեկտող մագիլներուն վայրագութիւնը:

Եւ կը գայրանայի ես ինծի դէմ: Ինչո՞ւ այսպէս պիտի նուաճուէի մարմնական անարիւն խոցերու կոտտանքէն: Չէ՞ որ ամբողջ կեանքիս բնթացքին, եաթաղանի սարսափէն ճողոպրած մանկութենէս մինչեւ ներկան, տարեր էի բոլոր զրկանքներն ու վէրքերը, ապրեր էի բոլոր տանջանքներն ու վիշտերը եւ վարժուել էի ամենէն տաժանելի Ֆիզիքական ցաւերուն, եւ զանոնք կրեր էի առանց արտունջի, երբեմն նոյնիսկ ակոսներս կճրտելով անոնց դէմ, իրրեւ հպարտ քամահրանքի լուռ ազադակ:

Իսկ հիմա՞, ինչո՞ւ այս ցաւը կը զգեսնէր զիս: Ինչպէ՞ս անոր թաթերը կը գալարուէին շուրջս, կը կլանէին ու կը բզբտէին զիս եւ ես այլեւս միայն մէկ տենչ կը զգայի, - փախչիլ անոնց դաժան զրկախառնումէն: Եւ ես որ ապրիլը սիրած էի անխառն տարփանքով՝ առաջին անգամ հոն խորունկ, ամօթալի կարօտ մը ունեցայ: Փոռի՛լ յատակի սպիտակ մարմարին վրայ, ձեռքերս ծալել գլուխիս տակ իրրեւ բարձ, խաղաղօրէն փակել աչքերս մարդոց ծիծաղին ու արցունքին դէմ, ու ննջել, եւ ալ երբե՞ք շարթննալ, եւ անէանալ, եւ չքանալ վերջնապէս: Ա՛հ, այդ յաղթանակով գոնէ փչրած կ'ըլլայի ցաւերու ճիրաններն ու ժանիքները, որոնք սիրտս, թոքերս ու աղիքներս կը գիշատէին անյագ ախորժակով:

Այն ատեն, աղօթած նալուածքիս մէջէն տեսայ բժիշկս, որ կր ժօտենար արագ քայլերով: Անոր կ'ընկերանար անձանօթ զէմք մը, որ մեզի ներկայացուց իրբև սիրտի սագնապներու յայտնի մասնագէտ մը: Անոնց ձայներն ու շարժումները անձկութիւն կր մատնէին, որ զիս աննոյ ցաւերը մեղձացնէին, հոգ չէ թէ յետոյ մեռելաթղթի յանձնուէի: Տարբեր գործիքներով անոնք քննեցին մերկ յանջքս, բժշկական անպծուածային տակերով խտեցան պահ մը, եւ մեկնեցան, զիստօր հիւանդագասէ կնօջ հրահանգներ սայսով եւ մեզմէ հրաժեշտ տանելէ ետք: Եւ սպիտակ հագուած աղջիկներ եկան, ինծի զեղաճատ ու ասեղով ներարկում տուին, եւ զգացի թէ ներսս կրծոյ ցաւերը կր թմբէին: Յետոյ զիս սարին Ք. ճառագայթներու կազմածներուն բաժինը, ուր մերկացայ եւ ձերմակ զիշերանոց մը հագայ, ու պտակեցայ մեքենային պոզպատէ աշքին ասկ, նախ կոնակի վրայ, եւ յաջորդարար օջ ու ձախ կողերուս: Յետոյ կանդեկեցայ ոտքի, կուրծքս ու թիկունքս սեղմուած երկաթէ ցուրտ շերտերու զէմ, մսելով, զոզայով: Եւ անթի պտակերներ հանեցին, մարմնիս բոլոր սկորները, մկանները, գործարանները քակելու եւ վերաշինելու համար, ս'զ զիտէ:

- Եւ վերջացուցի, հիմա կրնաք ձեր հազուատները հազնիլ, բսա շիկահէր ապան:

- Ենորհակալ եմ... բայց քանի որ ներքին անպէտք շուքերս այսքան սոսա յասնկարեցիք, չէ՞ք կրնար մարմնիս արտաքին երեւոյթէն ալ գոնէ մէկ պատկեր քաշել ինծի համար իրբև յիշատակ, փորձեցի կատակել:

- Բայց իմ կարծիքովս ատիկա ակնի հետարբրտական կ'ըլլայ, եթէ յասնկարնիլ հանուի այն ատեն, երբ բժիշկներ իրենց նշգրտակներով ձեր իրանը կտոր-կտոր կ'ընեն, չէ՞ք խորհր, պատասխանեց ան խնդայով:

Յետոյ զիս սարին ուրիշ բաժանմունք մը: Հոն հսկոյ կինը պատերեց որ նոտիմ ախտին վրայ եւ ձախ թևս բանամ, արիւն տանելու համար: Աւժասպտ կեր կի, բայց ինքզինքս յուսադրեցի, - Համբերէ՛ք քիչ մը, ատիկա շուտով կ'աւարտի եւ կ'երթա սենեակի ու կր հանցշիս փափակ անկողինիլ մէջ: Ընդարձակ տարրալու ծարան մըն էր երկար դարակներով, որոնց վրայ բողմաթիս սրտակներ ու շիշեր շարուած էին: Իսկ կեցրոնը կային ելեկարտական սարքեր: Անհամբեր կր գիտէի ցանանք եւ երբեմն ոտքս յատակին կր գարնէի, ներսը անհոգորէն երթևեկոյ հիւանդագասէ աղջիկներուն յիշեցնելու համար, թէ հաս բազմաշարժար հայ ժողովուրդին մէկ պանդուխտ ցուակը իրենց կարեկից ակնարկին կր սպասէր:

Աեկի քան կէս ժամ հոն յբուսած մնացի, կարգայով, քրթմնջելով:

Վերջապէս եկաւ մէկը, ձեռքին փայտէ սուփ մը բռնած, վրայի վեց փոսերուն մէջ վեց զատարկ սրուակներ, ցուցամատի շափ: Աղջիկը մէկ ձեռքի ասեղը իրենց արմուկիս լայն երակէն ներս, միւս ձեռքով սրուակին բերանը սեղմեց ասեղի գլուխին զէմ եւ ակնթարթէ մը լեցուեցաւ շիշը: Եւ արագորէն կրկնեց նայն գործողութիւնը ու սրուակները յորդեցան իմ կարմիր, անարատ արիւնովս: Յետոյ, մինչ անոնց վրայ ինքնութեանս պիտակները կր փակցնէր՝ քիչ մը համարձակութիւն հաւաքեցի եւ հարցուցի.

- Պէտք կա՞ որ այդքան սոստ արիւն տանէք ինձմէ, երբ այս վիճակիս մէջ ես շատ ակնի կարիք ունիմ անոր:

- Այո, տարբեր բժիշկներ պիտի քննեն, տարբեր արդիւնքներու համար:


- Բայց կարելի չէ՞ որ մէկ սրուակին մէջէն բաժնուի անոնց, կամ նոյն արիւնը գործածեն բոլոր տարբեր քննութեանց համար:

- Ատիկա ակնի արագ ու զիւրին կ'ըլլայ: Հոգ մի՛ ընէք, զուր արքան արիւնի այ պէտք ունենաք՝ կր արուի ձեզի, ակնցուց ան անտարբեր շեշտով:

- Այո՞, բայց այս արիւնս 4-5000 տարուան անցեալի մը փառքը ունի իր մէջ, բսի խորհրդաւոր շեշտով մը:

- Ի՞նչ, կանչեց ան աղչաճար զէմբով, թերևս կատկածելով որ սիրտս չէր որ գարնուած էր, այլ միտքս էր որ խենթութեան կախուածի գո՛շ ինկեր էր:

Ի՞նչպէս կրնայի համոզել խեղճ հիւանդագասուհին, թէ ինձմէ խլած այդ բոտոր արիւնը՝ Հայկ նահապետի երակներէն հստած էր իմ կոթեանս մէջ:



Մշտական հսկումի ու խնամքի (Intensive care) բաժինին մէջ զիս պահեցին ութ օր: Չորս այր եւ երեք կին հիւանդներ էինք, զրեթէ իրարու տարեկից: Այդ միջոցին, կարծես իրբև պետական անխուսափելի հարկեր, երկու սեռերէն մէկական հոգի վճարուեցան որպէս մահուան տուրք: Բայց մնացողներ, իրենց անստոյգ վաղուան երկիւղին մէջ, հազիւ ափսոսանքի խօսքեր կը մրմնջէին մեկնողներուն համար, թերևս՝ որովհետեւ իրենք ալ կ'ապրէին զերեզմանի նոյն ստուերին տակ: Ընդարձակ սենեակը լուսաւոր էր, նոյնիսկ զուարթ, ուր ամէն մահճակալի քով ելեկարտական կազմածներ հոն պտակողին մարմնական զազտնիքները կ'արձանագրէին: Բժիշկներ ու հիւանդագասուհիներ կ'այցելէին մեզի, ժպտելով ու յուսադրիչ բառեր բաշխելով կարեկից ջերմութեամբ, քիչ մը ուրախութիւն խառնել

փորձելով իրենց հիւանդներուն մոայլ տրամադրութեան: Սակայն միջնորդաբէն, պատերէն ու ձեղունէն կարծես թանձրացած տրտմութիւն մը կը մաղուէր վար: Նոյն անողոք մտածումը կը կրծէր ամէն վիրաւոր սիրտ, — թէ երբ այդ գիշեր խաղաղօրէն քնանար, յաջորդ առաւօտ աչքերը պիտի կրնա՞ր բանալ արեւին ու կեանքին:

Անեակին մէջ ցերեկ թէ գիշեր հիւանդապահ աղջիկներ կը հսկէին եւ կը փութային որեւէ անարի մօտ, ուրկէ հեւք մը կամ հառաչ մը կը բարձրանար: Ամէն առտու կանուխ կուգային անոնք իրարու ետեւէ, բերելով գոյնզգոյն գեղահասաններ, ներարկումի ստեղներ, ջերմաչափ, արեան գերձնչումը ստուգելու գործիք, նախաճաշ, եւ մահիճի յարգարում: Կարծես այս բոլորը ծրագրուած էին շարախինդ քմայքով, պարզապէս մեզ տանջելու եւ մեր երեսին պոռալու թէ, — Հէ՛յ, ինչո՞ւ հիւանդացեալ էք, եւ ինչո՞ւ հոս եկեր էք, միայն մեզի նեղութի՞ւն տալու համար:

Ամէն առաւօտ ինծի կը մօտենար նաեւ նոյն հիւանդապահ աղջիկը, իմ մեծագոյն պատիժս, ձեռքին բռնած ափսէ մը, վրան ասեղն ու սրուակը: Եւ երկչու ժպիտով կ'ըսէի.

— Ա՛հ, նորէն եկաւ գեղեցիկ վամբիռը որ թանկագին արիւնս խմէ... Ինչո՞ւ ամէն օր զիս այսքան կը շարշարէք, ինծի չէ՞ք մեղքընար...

— Հայտէ՛, մի՛ փորձէք իմ գութն շարժել: Դուք շատ խելօք հիւանդ էք, ատոր համար հոս բոլորը կը սիրեն ձեզի եւ ես ձեր արիւնը կը գողնամ, որ ծախեմ... կը պատասխանէր քրքջալով:

— Բայց ասանկով ինծի պիտի մեռցնէ՞ք, կը զանգատէի: Ի՞նչ պէտք կայ ամէն օր արիւնս առնելու, նոյն ապրանքը չէ՞... Մինչ ան, ասեղը խրած ձախ բազուկիս երակէն ներս՝ սրուակը կը լեցնէր:

— Այո՛, եւ կ'ուզենք որ նոյնը մնայ: Եւ մի՛ վախնաք, կը տեսնէ՞ք ձեր գլուխին վերէն կախուած երկու պարկերը, անոնցմէ բաւարար սնունդ կ'իջնէ ձեր մարմինին մէջ:

Իր մեկնելէն յետոյ յիշեցի՛: Ժամանած օրս էր: Հիւանդապահ աղջիկ մը եկաւ, հեղուկով լեցուն տոպրակ մը կախեց մահճակալիս գլխուն կողմը դրուած ձողին վերի թեւէն, անկէ իջնող թափանցիկ խողովակին ծայրի երկար ու կոր ասեղը մխրճեց ձախ թեւիս ներսի երակին մէջ ու ամբացուց: Հազիւ թեթեւ խայթոց մը զգացի, ան վայրկեանէ մը աւարտեց ու գնաց: Յետոյ եկաւ ուրիշ հիւանդապահ աղջիկ մը, նոր տոպրակ մը կախեց վերէն եւ փորձեց իր ասեղը խրել աջ ձեռքիս դուրսի երակներէն մէկուն մէջ: Բայց կ'երեւի շար աչք զպած էր խեղճ աղջկան: Վեց անգամ ասեղը թաղեց ձեռքիս միսերէն ներս, սուր ցաւեր պատճառելով ինծի, եւ չկրցաւ իր փնտոած տեղը գտնել: Համբերութիւնս հատաւ.

— Այստեղ՝ հինգ-վեց լայն երակներ կը տեսնեմ ես, ըսի հատու շեշտով մը, եթէ ինծի յայտնէք թէ ո՛ր մէկին մէջ կը նախընտրէք խրել ձեր այդ չամփուրը՝ թերեւս կրնամ ձեզի օգնե՛լ...

— Օ՛, շատ կը ցաւիմ, կը կրկնէր ամէն անգամ, մինչ իր ճակատը կ'ողողուէր քրտինքով:

— Չէ՛, դուք բնաւ մի՛ ցաւիք, սիրելի օրիորդ, փորձեցի կատակել: Արդէն իմ զգացած ցաւս երկուքիս համար ալ կը բաւէ:

Յերեկին, ամէն երկու-երեք ժամն անգամ մը հիւանդապահ աղջիկը կուգար արիւնիս ճնշումը եւ ջերմութեանս աստիճանը ստուգելու, նաեւ սովորական գեղերը բերելու համար: Վնաս չունի մեր հանգիստին այս յաճախակի խանգարումը, կը խորհէի: Եթէ անոնք որեւէ բարիք ալ չեն բերեր, գոնէ հիւանդներուն ձանձրոյթը կը փարատեն: Բայց անգութ հաւատարմութեամբ մը, անոնք նոյն արարքները կը շարունակէին նաեւ գիշերները: Իրիկունը գեղահաստ կուտային որ հանգարտ քնանամ գիշերը, որ սքանչելի էր: Իսկ յետոյ, մինչեւ լոյս, ամէն երկու ժամն անգամ մը կ'արթնցնէին զիս, ջերմաչափ ու գեղ բերելով, որ տաժանք էր: Եւ զանգատեցայ.

— Չեմ հասկնար ձեր այս բրածը, ըսի նեղսրտած: Ի՞նչ խելք կայ ասոր մէջ, երկնքի՛ սիրոյն: Իրիկունը գեղ կուտաք որ գիշերը առանց շարշարուելու քնանամ, աղէ՛կ, շնորհակալ եմ: Յետոյ կուգաք եւ քաղցր քունէս կ'արթնցնէք, գեղի եւ ասեղի նոր տանջանքներ տալու համար: Ասա՞նկ կը բուժէք ծանր հիւանդները:

Անոնցմէ մէկը սրամիտ երիտասարդ մըն էր եւ ժպտելով յարեց.

— Գիտէ՞ք ինչ, մենք ձեզի յաճախ կ'արթնցնենք, որ քնացած չմնաք... յաւիտեան:

— Հապա սա զիմացիս երկու կազմածնե՞րը ի՛նչ են, հարցուցի, զարդի համար ինծի կապեր էք ատոնց:

— Ո՛չ բոլորովին: Անոնք ձեր սիրտին եւ անոր արուարձաններուն վիճակը ցոյց կուտան, որ բժիշկները գիտնան թէ ի՛նչ պիտի կտրեն ու կարեն ձեր ներսը: Յետոյ... հիմա փոխանակ ոչխարներ համբելու որ քուններնիդ գայ՝ ատոնց շարժումներուն նայեցէք եւ շուտով ձանձրոյթէ կը թմրիք...:

Ան մեկնեցաւ եւ ես մնացի արթուն ու առանձին: Պատահաններէն դուրս գիշերուան մութիւր թանձրացեր էր խաւարի: Աչքերս կիսափակ ձեղունէն սփռուող աղօտ լոյսին դէմ՝ միտքս կը թեւածէր գէպի անցեալ եւ կը վերջիչէի շար ու բարի օրեր, կը վերապրէի ուրախ ու տխուր դրուագներ: Մինչ ներկան, աճա՛, մահուան շուրջով կը ծանրանար բոլոր մահիճներուն վրայ: Եւ ափսոսանքի զգացում մը կը համակէր զիս: Դեռ ո՛րքան անկատար ծրագիրներ, եւ ո՛րքան շրջակեցած կարօտներ ու նոր ծագկած փափաքներ կը մնային, որոնք

կուրծքիս տակ կը հեւային ու կը գալարուէին դէպի կեանք: Եւ զրս-
պուած գայրոյթով աղերսեցիք,- ա՛խ, ապու՛ւշ սիրտ, ի՞նչ շահեցար
այս քմահաճ կատակովդ...: Կը տեսնե՞ս, դուն փորձեցիր փլչիլ, եւ
նայէ՛, աշխարհ մը նեղութիւն կը պատճառես խեղճ բժիշկներուն ու
հիւանդապահներուն: Եւ ի՞նչ իրաւունքով, խնդրեմ: Միայն զիս
պատժելու համար կ'արժէ՞ որ դուն քեզ սպաննես, հա՞...:

Բայց մտածումներս յամբողջն աղտորեցան ու չբացան անկու-
թեան մուտին մէջ:

Յաջորդ առաւօտ անկողինիս գլխակողմը բարձրացուցին վեր եւ
բարձերու կոթնած՝ կրնայի կարգալ: Ներքին ցաւերս գաղթած էին:
Բայց տակաւին, բոլորովին արդիւած էին, որ մահճակալէս իջնեմ
որեւէ կարիքի համար: Ինծի թոյլ տրուած էր միայն ազատօրէն նայիլ
ձեղունին, պատերուն, ամէն հիւանդ առանձնացնող վարագոյրնե-
րուն: Եւ մանաւանդ՝ կարծես յաւերժօրէն երկարող ժամեր անձնա-
տուր ըլլալ տրտում խոհերու եւ ճնշող տաղտուկի, որոնցմէ կրնայի
փախչիլ անդորր նինջով միայն: Իսկ այդ շնորհն ալ հիւանդապահներ
կը խլէին մեզմէ, երբ ցերեկ թէ գիշեր գայն կ'ընդմիջէին ու կը խա-
փանէին իրենց գեղերուն արշաւով եւ բոլորիս ապրած շարժարանքը
աւելի տաժանելի կը դարձնէին:

Նախաճաշէն ետք երբ հիւանդապահ աղջիկը եկաւ որեւէ ծրա-
գրուած ցաւ պատճառելու համար՝ խնդրեցի որ ինծի մօտեցնէ մա-
հիճիս երկու կողմերէն անխնդրու վրայ շարժական սեղանը:

- Ի՞նչ պիտի ընէք, հարցուց կասկածոտ ակնարկով:
- Ոչի՛նչ, պատասխանեցի քմծիծաղով, գլուխս վրան պիտի դնեմ
ու քնանամ:

Պահ մը վարանումով նայեցաւ ինծի: Աչքերուն մէջ շուա-
րում կը տեսնէի, թերեւս կը փորձէր որոշում մը տալ Յեւոյ սեղանը
հրեց կուրծքիս մօտ:

- Հիմա կը հաճի՞ք քիչ մը թուղթ բերել:
- Ինչո՞ւ համար, հարցուց զարմանքով:
- Մի վախճաք, անձնասպան ըլլալու գիր չպիտի ձգեմ: Կ'ուզեմ
անմեղ բաներ մը գրել, յարեցի:
- Օ՛, առիկա չեմ գիտեր... բժիշկը չեմ կարծեր որ ատոր համար
հրաման տայ, ըսաւ կարծր շեշտով:
- Դուք հոգ մի՛ ընէք, պնդեցի, բժիշկս թոյլ տուած է... այսպէս
հանգիստ նստած կրնամ գրել:

Ան մեկնեցաւ եւ շուտով վերադարձաւ, եւ թերթ մը թուղթ եր-
կարեց ինծի լուռ ժպիտով:

- Ի՛նչ է ասիկա, միայն մէկ կտոր թուղթ, բայց կտակս գրելու
համար շուգեցի ասիկա, սիրելի՛ ժլատ, ըսի սրտնեղած... կը հաճիք՝

աւելի թուղթ բերէք ինծի, թէ ոչ՝ սրտի նոր կաթուած մը կ'ունենամ
եւ ձեզ կախաղան կը հանեն:

Դարձեալ գնաց եւ պահ մը ետք եկաւ ուրիշ թերթ մը մատներուն
մէջ բռնած: Միծաղս չկրցայ զսպել:

- Երկնքի՛ սիրոյն, Օրիորդ Ամերիկա, ի՞նչ է աս: Ձեր հսկայ
հիւանդանոցին մէջ թուղթի սո՞վ կայ, ի՛նչ է... Հապա ինչո՞ւ ա՛յնքան
թանկագին թերթեր փճացուցիք իմ մուտքիս հարցարանները լեցնե-
լու համար: Ափսոս չէի՞ն: Հիմա կը խնդրեմ, ինծի տասը թերթ թուղթ
բերէք եւ ես ձեզի յետոյ ատոր տասն անգամը կը նուիրեմ... վկայ
Սուրբ Կոյս Մարիամը:

Վերջապէս թուղթերը բերուեցան: Եւ էջի մը վրայ խորագիրը
գրած՝ առաջին տողերը կը կարկտնէի մտքիս մէջ, երբ երկու բժիշկ-
ներս մօտեցան ժպտաղէմ: Յուսադրիչ խօսքեր ըրին եւ զուարթ կա-
տակներ փոխանակեցինք կարճ պահ մը:

- Դիմացի մարդը ճերմակ սաւանով փաթթեցին եւ տարին այս
առտու, ըսի... վիրաբոյժի՞ն թէ... մեռելաթաղին:
- Դիագնոստի, եկաւ չոր պատասխանը:
- Ա՛հ, այդպէս... գիտէ՞ք ինչ, չեմ կարծեր որ իմ մարմինիս
մէջ որեւէ առողջ բեկոր մնացեր է...: Բայց եթէ կայ՝ կ'ուզեմ որ
գայն ձրի նուիրէք անոր կարիքը ունեցող ոեւէ անձի, բայց առանց
ցեղի, գոյնի, սեռի եւ դաւանանքի խտրութեա՛ն:

Երէքս ալ խնդացիւք: Եւ սրտի մասնագէտը յարեց.
- Ձէ՛, ատոր համար կանխահաս է դեռ: Դուք ձեր մարմինին
բոլոր մասերուն պէտք պիտի ունենաք, կը յուսանք տակաւին երկար
ժամանակ:

Յանկարծ անոր դէմքը մոռայօրէն լրջացաւ եւ աչքերուն կապոյտ
նայուածքը անթարթ յռուեց ինծի, մթին ազդարարութեան մը նման.

- You had a massive coronary thrombosis, մրմնջեց իբրեւ ահար-
կու վճիռ մը. - սրտի մայր երակային յաճախ մահացու խցկում մը,
որ հոժանիչ զարմեր էր կառափնատի շեղբին, այնքան անողոք բը՛-
տութեամբ կը զարնէր ու կը տանէր իր գոհը:
- Կը նշանակէ թէ, աւելցուց ան սառն լրջութեամբ, ասկէ ետք
ձեր կենցաղի, աշխատանքի ու սնունդի նախկին կերպերը հիմնապէս
պիտի փոխէք եւ խիստ հակաչիռի պիտի ենթարկէք դուք ձեզ: Եւ
սկսաւ համրել իմ տպրելակերպիս վրայ դրուած արգելքներուն երկար
ցուցակը: Յանկարծ լուեց եւ հարցուց.

- Բայց դուք կը ժպտիք, ինչո՞ւ:
- Որովհետեւ զը խորհէի, ես բնաւ պիտի չկրնամ ապրիլ այդ
կանոններուն շղթային տակ... ինչո՞ւս պէտք է ատանկ կեանքը,
եթէ նոյնիսկ հարիւր տարի տեւէ... ձեզի եւ ինծի համար աւելի դիւ-

բին եւ արագ լուծում մը պիտի ըլլայ, եթէ ատ դիմացի զրացիս պէս, վաղը առտու զիս ալ զրկէք զիազննող մասպօրծին...:

Այն ատեն, հայ բժիշկս, որ նաեւ անձնական բարեկամ մըն էր, ընդմիջեց.

- Լա՛ւ, որեւէ մասնաւոր փափաք ունի՞ք որ կրնանք կատարել:

- Ա՛խ, այո՛, եւ մէկին համար ձեզի կը դիմեմ:

- Ի՞նչ է, տեսնենք:

- Հրահանգ տուէք ներսի աղջիկներուն, եւ թող ձգեն որ լուսացարան երթամ քալելէն: Ի զուր տեղ հետս կը վիճին, կը պնդեն: Ես իրենց ըսեր եմ, որ ատ անկողինի ամանը պիտի չգործածեմ, եւ եթէ պայթիմ, մեղքը իրենց վիզը պիտի ըլլայ:

Բժիշկները իրարու նայեցան եւ սկսան խնդալ:

- Ահաւասիկ նորօրինակ տագնապ մը, բայց կարծեմ ատիկա կարելի է դուրին հարթել: Հիմա իրենց կը պատուիրենք, որ այդ բացատիկ արտօնութիւնը տան ձեզի: Իսկ ի՞նչ է միւս բաղձանքնիդ:

- Մի՞ւսը, յարեցի տխրօրէն, անիկա անկարելի է:

- Վնաս չունի, կ'ուզենք յսել:

- Օ՛, այդ մի՞ւսը... անիկա անհուն կարօտ մըն է: Ասկէ երկար տարիներ առաջ էր, էրբ զաւակներս դեռ փոքր մանուկներ էին: Յաճախ, փողոցը խաղալու ատեն, անոնցմէ մէկը կ'իյնար եւ իր ծունկը կամ արմուկը կը սկրթուէր: Ան ճշալով ու լալով կը վազէր ներս, կը փաթթուէր սրունքներուս եւ, - Հայրի՛կ, արի՛ւն, արի՛ւն, կը կանչէր հեծկտալով: Զայն կը վերցնէի թեւերուս մէջ պզտիկ ծրարի մը պէս ու կը նստեցնէի գիրկս: Լեզուով կը թրջէի թաշկինակիս մէկ ծայրը, կը սրբէի եւ քնքշօրէն կը համբուրէի անոր վէրքը: Յետոյ քառորդ մը կը դնէի անոր մանրիկ ափին մէջ ու կը փակէի: Եւ զաւեշտ մը կը պատմէի իրեն: Ամբողջը մէկ-երկու վայրկեան կը տեսէր: Բայց ի՞նչ հէքեաթային հրաշք էր: Ան իր փափուկ թեւերով կը գրկէր վիզս եւ կը սկսէր երջանկօրէն քրքջա՛լ, վէրք ու արիւն մոռցած: Այն ատեն, կրնա՞ք երեւակայել, անոր զէմքին ու թարթիչներուն վրայի արցունքի կաթիլները ձը շողային ազամանդի հայած շիթերու նման, ծիածանի գոյներով, վճիտ ու անարատ: Ինչպէ՛ս, անոր անմեղութեան մէջ, ցաւին արտասուքը եւ ուրախութեան ծիծաղը կը խառնուէին իրարու: Կարծես կուրծքիս վրայէն առուի մը քաղցր կարկաջը կամ թռչուններու երամի մը դայլայլը կը հոսէր վար...: Եւ հիմա, անոնց մանկութեան այդ երանելի պահը կը ցանկայի զգալ ու վայելել, գոնէ մէ՛կ վայրկեանի համար եւ անոր հասնելու երազով պիտի բաղձայի ապրի՛լ, ապրի՛լ...:

Զայնս արդէն կը զոզար յուզումէս եւ լռեցի: Ամչցայ որ բժիշկներուն ձանձրոյթ պատճառեր էի եւ զլուխս կախեցի վար:

- Ուրեմն պէտք է ապրի՛ք, յարեց սրտի մասնագէտը զուարթ շեշտով: Որովհետեւ ճիշդ է, թէ մենք չենք կրնար ձեր գաւակները մանկացնել: Բայց ատոր կարիք չկա՛յ: Ձեր մանուկ թոռներն ալ սկրթութեամբ ու արցունքով գիրկերնիդ պիտի վազեն եւ նոյն հրճուանքը պիտի պարգեւեն ձեզի, այնպէս չէ՞:

Եւ հրաժեշտ առնելով անոնք մեկնեցան:

Կէսօրուան ճաշէն ետք, այցելութեան ժամերուն, հարագատ ու մտերիմ զէմքեր, յամբ քայլերով մօտեցան ու շարուեցան անկողինիս շուրջ: Անոնք կը փորձէին անհոգ երեւալ եւ սփսփիչ խօսքերով ողորդել զիս: Բայց մտայլ ժպտանք չէին կրնար քոզարկել անոնց աչքերուն մէջ մթազնամ թախիծը: Կարծես յուզարկատրներ էին, որոնք մահամերձ հոգիի մը սնարին քով եկեր էին, իրենց վերջին ողջոյնը տալու անոր դատապարտուած մարմինին: Ես խղճահար կը զգայի անոնց տխրութեան համար եւ կ'ուզէի գանոնք համակամ թէկուզ վաղանցիկ ցար փարսաւել, եւ զուարթ գրուագներ կը պատմէի: Ինչո՞ւ ինծի համար նոյնիսկ կարծատեւ վիշտ մը պիտի կրեն անոնք, կը խորհէի:

Այդպիսի պահու մը, չեմ գիտեր ուրկէ՛ եւ ինչպէ՛ս, շրթներուս վրայ եկան Փրանսացի բանաստեղծ Սիւլլի Բրիւստոմի մէկ փերթուածին ստաջին երկու տուրքը.

«Հոգեվարժիս դու՛ք որ ինձ յոյս պիտի տամ՝
Բնաւ պէտք չէ որ տխրիք...»:

Զէ՞ որ մնացողներուն համար կեանքը միշտ վերապահած կ'ըլլայ ոգին ու իմաստայի բարձունքներ եւ քաղցր ու գեղեցիկ ապրումներ:



Առտուան մը իր սոփորական այցելութեան պահուն սիրտի մասնագէտը ժպտելով մտեցաւ, կարծես թէ իմ վերածնունդիս աւետարար կը բերէր: Աջ ձեռքով պարանոցիս երկու կողմերուն բարախումբ համբեց եւ հարցուց.

- Ի՞նչպէս կը զգաք այսօր:

- Բուական լաւ, ցտակեր ալ չեն գար... գիտէ՞ք ինչ կը խորհէի, երանի թէ մարդ կարենար հիւանդանոց մտնել, այսպէս հանդիստ պտտիկ ու նստիկ, եւ ուղածին չափ կարողար ու գրէր, բայց... տասնոց հիւանդ ըլլալու:

- Ա՛, ատիկա կարելի չէ դժբախտարար, խնդաց ան, այն ատեն զուրար ո՛չ որ պիտի մտար, եւ ո՞վ ձեր մարմինը պիտի ծակծկէր տակոյներով...: Ուրեմն քիչ յետոյ ձեզ պիտի զրկենք տուն: Միայն թէ ճամբուն վրայ պէտք է հանդիպիք Կաթողիկ Քոյրերու հիւանդանոցը,

մենք արդէն անոնց հաղորդած ենք: Հոն սիրտին ու երակներուն տարբեր տեսակ պատկերներ հանելու մեքենայ մը ունին, որ հոս չկայ: Ձեր նկարները քաշելով պիտի զրկեն մեզի: Յետոյ դարձեալ պիտի քննենք ձեզ: Մինչ այդ խստօրէն կը պատուիրենք ձեզի, որ բացարձակ հանգիստ ընէք եւ մեր դրած բոլոր կանոնները լրիւ յարգէք:

- Այո, հարկաւ, ըսի հեզօրէն:

Ուրախ էի, որ վերջապէս կը մեկնէի տուն, ուրկէ կրնայի ազատօրէն գրասենեակ երթալ եւ աշխատիլ: Շտապով հագուեցայ: Տուփերով անուշեղէն եւ ծաղիկներու փունջեր, որոնք ինծի բերուած էին իրբեւ ապաքինման մաղթանքներ, բաժնեցի հիւանդապահ աղջիկներուն: Եւ զարմացայ, որ նման մանրուք պարզեւներ այդքան մեծ հրճուանք կը պատճառէին անոնց: Գոյքերս հաւաքելէ ետք, հոգատար մը զիս նստեցուց անուշաւոր աթոռի մը վրայ, եւ հարազատ ու բարեկամ դէմքերու հետ վերելակով իջանք գետնայարկ: Հոն քարտուղարուհին վաւերացուց թէ ողջ կ'իլլէի իրենց յարկէն եւ զիս արձակեց ընդունարանէն դուրս: Բայց զեռ թոյլ չտուին որ նոյնիսկ անկէ քալեմ մինչեւ ինքնաշարժ: Որովհետեւ, լուսարանեց պաշտօնեան, եթէ չար զիպուածով մը իյնայի եւ մէկ ոսկորս կտորէր հիւանդանոցի հողին վրայ՝ հիմնարկը պատասխանատու կը մնար: Իսկ եթէ երկու քայլ հեռու հոգիս աւանդէի՝ հաստատութիւնը դժուար թէ նոյնիսկ ձրի հոգեհանգիստ մը կարգալ տար վրաս:

Միւս հիւանդանոցն ալ 5-6 յարկանի ահագին շէնք մըն էր: Ներսը, ընդարձակ հիւրանոցին մէջ նստանք կարգիս սպասելու, եւ երբ անունս կանչուեցաւ՝ գացի եւ գրաւեցի նեղ խցիկի մը պարապ աթոռը, շիկահեր, գեղանի աղջկայ մը զիմաց: Եւ ան սկսաւ հարցարան լեցնելու տաղտկալի գործին, - ծնունդէս մինչեւ ներկան զիս հարցաքննելով դէպքերու մասին, որոնք ինծի անգամ անյայտ էին, քանի որ իմ կեանքիս մէջ չէին պատահած: Երբ աւարտեց՝ թուղթի մը վրայ նշանակեց թէ ո՛ր մասնագէտը ի՛նչ մեքենայի գուծին պիտի յանձնէր զիս: Ձայն երկարեց ինծի եւ ըսաւ չոր շեշտով:

- Հիմա հաճեցէք 85 տոյար տալ այս պատկերներուն համար:
- Լա՛ւ, ես կապոյտ Պաշի ապահովագրութիւն ունիմ: Ձեր հաշուեցոյցը անոր զրկեցէք եւ ան պիտի վճարէ:
- Կը ցաւիմ, բայց անոնք այս գումարը չեն հոգար:
- Իսկ ինչո՞ւ ոչ, հարցուցի զարմանքով:
- Որովհետեւ դուք միայն այցելու՛ եւ հիւանդ էք հոս:
- Ձեմ հասկնար, ի՞նչ տարբերութիւն կ'ընէ, խնդրեմ, հիւանդին այցելուն եւ բնի՞կը կ'ըլլայ:
- Ատիկա իրենց կանոնն է, յարեց աղջիկը անտարբեր: Որպէսզի

ասոր ծախքը տան, պայման է որ նախ մեր հիւանդը դաճաք, այսինքն երկու-երեք գիշեր հոս պատկիր, ձեզ քննեն ու խնամեն:

- Երկնքի՛ սիրոյն, օրիորդ, ինչ ծիծաղելի հաշիւ է ատիկա: Ես արդէն Հայիվուտի հիւանդանոցը ութ օր պատկեցայ եւ հիմա ուղղակի անկէ կուգամ, ուրեմն ներսի հիւանդ եմ, չէ՞:

- Բայց ո՛չ այս հաստատութեան, պնդեց ան:

- Իսկ եթէ քանի մը գիշեր ալ հոս պահեն զիս՝ ատոնց ծախքը 5-6 հարիւր տոյարի պիտի հասնի: Այն ատեն ոչ միայն այդքան ժամանակ պիտի կորսնցնեմ գործէս՝ այլ նաեւ առաջին 100 տոյարը ես պարտաւոր պիտի ըլլամ վճարել իրենց պայմանով: Իսկ մնացեալ 4-500 տոյարը կապոյտ Պաշը պիտի հոգայ: Այնպէ՞ս է: Ուրեմն աւելի զիւրին եւ աժան չէ՞ իրենց եւ ինծի համար ալ, եթէ միայն ձեր այս 85 տոյարը հոգան, եւ ընկերութիւնն ալ, ես ալ ազատիմք այս հաշիւէն:

- Ձեմ գիտեր, իրենց օրէնքը այդպէս է:

- Բայց օրիորդ, եւ ձայնս հետզհետէ կարծրացաւ, մանկապարտէզի մանուկ մը անգամ պիտի խնդայ այս տեսակ հաշուեկշիռի վրայ: Ատիկա թուարանութիւն չէ, գաւեշտ մըն է:

- Իսկ հիմա մինչեւ որ զուր այս 85 տոյարը չվճարէք՝ չենք կրնար ձեզ ներս ընդունիլ:

Բարեբախտ էի, որ զիս հոն տանող բարեկամս իր մօտ ունէր այդքան դրամ, որ արամադրեց ինծի եւ յանձնեցինք աղջկան եւ ան յօժարեցաւ ինծի զիջիլ արքայութեան թուղթէ բանալին: Յետոյ վերելակով բարձրացայ 4-րդ յարկը, ուր գտայ ինծի յատկացուած սենեակը ու մտայ ներս: Ան քառակուսի խուց մըն էր պարզապէս, պատին քով միակ աթոռ մը, կեղրոնը՝ երկաթէ հարթ սեղան եւ անոր վերի կողմը փոքր ու բարդ կազմած մը:

Երկար պահ մը սպասեցի հօն, մինչեւ երիտասարդ տղու մը ժամանէր: Ան պատուիրեց որ մերկանամ ու կոնակի վրայ պառկիմ բարձր հարթակին: Գլուխ՝ լուսանկարող ինքնագործ մեքենային կողմն էր, իսկ երկու քովերէն կախուած էին բազմաթիւ ելեկտրական թելեր, որոնց ծայրերը մանր ու կաշուն մատներ ունէին: Մասնագէտը սկսաւ զանոնք փակցնել մարմինիս բոլոր մասերուն վրայ, պարանոցէս մինչեւ ոտքերս: Ան նոյն ատեն կը բացատրէր այս նորագիւտ սարքուածքին գերազանց արժանիքները, սիրտի մասնագէտ բժիշկներուն եւ անոնց տազնապահար հիւանդներուն համար:

Մինչ ես տակաւին ապշահար կը խորհէի կապոյտ Պաշի հաշուապահութեան այդ տարօրինակ եղանակին շուրջ: Ինչո՞ւ անպայման կ'ուղէին, որ քանի մը գիշեր հիւանդանոց պառկիմ, անոր միայն մէկ ժամուան գործին ծախքն ալ օրինաւոր ճանչնալու համար: Ի՞նչ

գարմանալի առեղծուած էր ատիկա: Բայց յանկարծ անդրադարձայ: Ա՛հ, այո՛...: Ան որ հիւանդանոց կ'երթայ իր մարմինին որեւէ մէկ մասը Ք. ճառագայթներով լուսանկարել տալու համար՝ անշուշտ չուզեր մէկ-երկու գիշեր հոն անցընել, քանի որ թէ՛ աշխատանքի օրեր կը կորսնցնէ եւ թէ՛ սոսկ նկարներու փոխարժէքին տեղ՝ աւելի քան 100 տոլար պիտի վճարէ հիւանդանոցին, իրրեւ ընդհանուր հաշուեցոյցին իր նուազագոյն պարտքը: Եւ ընկերութեան վարիչները, որ ճարպիկ մարդիկ են, վստահ են թէ՛ ոեւէ անձ այնքան ապուշ պիտի չըլլայ, որ ինքզինք դրամի ու ժամանակի աւելորդ կորուստի ենթարկէ, միայն Կիւանդանոցին մէջ քանի մը գիշեր պտակելու եւ ատոր վնասը կապոյտ կաշի մճարել տալու համար:

Ամբողջ ժամ մը պառկած մնացի երկաթէ հարթակին վրայ, կապանքուած բազմաթիւ ելեկտրական լարերով, մինչ մեքենան անդադար երակներու քարտէջը կը նկարէր: Յիշեցի Կիւլիվէրի ճամբորդութեան պատկերագրող հատորը, որուն մէկ նկարին մէջ ան կը քնանար գետինը երկարած: Իսկ թզաչափ Լիլիփուլթներ անոր շուրջն ու վրան կը վազվզէին խուճապի մատնուած եւ մարմինը, մագերէն մինչեւ ոտքերը, անթիւ թելերով կը գամէին յատակին, զայն կալանելու համար: Ես ալ ինքզինքս կ'երեւակայէի նման վիճակի մը մէջ, միայն թէ ան իր մէկ փոքր շարժումով զինք կաշկանդող բոլոր շուանները կը փրցնէր, իսկ ես չէի կրնար նոյնիսկ ճակատս ճանկոտող ճանճը կտրելու, առանց մասնագէտին արտօնութեան: Ան ինծի ցոյց տուաւ իր սարքուածքին հանած պատկերներէն մէկը: Չարմանքով դիտեցի զայն: Սեւ խորքի վրայ կ'երեւէին տարբեր ձևերով երկար սպիտակ գիծեր, որոնք մարմինիս երակներն էին: Ուրիշ ոչինչ կը տեսնուէր: Կարծես բարձրէն թռչող սաւառնակ մը լուսանկարեր էր տափարակ ածխադաշտ մը, որուն երկայնքին ու լայնքին առուներու ցանցեր կը հոսէին, արեւին տակ արծաթի նման փայլելով:

- Բայց այս ճերմակ գիծերէն ի՞նչ պիտի հասկնայ բժիշկը, հարցուցի շուարած:

- Օ՛, ասոնք ձեր բոլոր երակներուն առողջ կամ տկար վիճակը կը պարզեն: Ձեր սիրտին մասնագէտը կրնայ կարգալ անոնց լեզուն:

- Այդպէ՞ս, իսկ ձեր հրաշալի մեքենան չի՞ կրնար այս ճերմակ գիծերը հայերէն ալ գրել, որ ես ալ կարդամ, ըսի ժպտելով:

- Ի՞նչ տեղաւին, պատասխանեց տղան լրջօրէն:

Չգիտեցայ թէ այդ տրցակ մը լուսանկարները ի՞նչ արդիւնք ունենան: Յաջորդ շարժուման քննութեանս, խիստ հրահանգներու հետ, բժիշկը քանի մը տեսակ զեղահատներ տուաւ, որ առնեմ օրուան տարբեր պահերուն: Ինծի համար երբեք կարելի չեղաւ ստուգել անոնց բերած օգուտը, հակառակ որ գրաւիչ գոյներ ունէին: Միայն,

ամէն առաւօտ, երբ քալելէն դարձեալ աշխատանքի կ'երթայի, հագիւ փողոցին անկիւնը հասած՝ կուրծքիս տակի հատու ցաւերը կը սկսէին բորբոքիլ: Հոն կանգ կ'առնէի քանի մը վայրկեան, մինչեւ որ ներքին կոտտանքը մեղմանար եւ յետոյ կը շարունակէի ճամբաս, ամէն անկիւն կրկնելով նոյն միջնարարը: Հետզհետէ հաշտուեցայ այս կենցաղին հետ եւ ամիսներ անցան զեղահատներով, բժիշկին մօտ երթեւեկելու յոգնութեամբ եւ դանդաղ տաժանքով:

Բայց օր մը յանկարծ արիւնոտ խոտովութիւն մը պայթեցաւ իրանիս ստորին մասին մէջ: Հրաշէկ ցաւեր, որոնք կարծես մոլեգին զայրոյթով կը կրճտէին իրենց շուրջի միսերը՝ ինծի համար իրական չարարանքի կը վերածէին քալելը, նստիլը, շարժումները: Եւ կը զարմանայի, բայց ի՞նչպէս կարելի էր, չէ՞ որ մարդկային մարմինը մէկ ամբողջութիւն կը կազմէր: Ուրեմն ինչո՞ւ անոր տարբեր գործարաններուն ու մասնիկներուն ցաւերը տարբեր որակով ու սաստկութեամբ կ'ուզէին յայտնուիլ եւ ինչո՞ւ այս նորը զաժանօրէն ինքնատիպ էր: Երբ բժիշկը աւարտեց իր քննութիւնը,

- Ի՞նչ տեսակ նեղութիւն կը զգաս, հարցուց:

- Երբեմն անտանելի կը դառնայ, ըսի վարանելով... կարծես մէկը դաշոյնով կը կտրտէ այս ներքեւի մասերուն միսերը եւ վրան կրակէ աղ կը ցանէ, որ կ'այրէ, կը վառէ:

- Կարծեմ քար ունիս, մրմնջեց ան, պէտք է X Rayի նոր պատկերներ հանենք... եւ երկու զեղագիրներ տալով աւելցուց,- այս զեղերը քանի մը շարաթ փորձէ, տեսնենք ի՞նչ արդիւնք կուտան:

Անոնք որեւէ դարձան չբերին: Քարերը մերժեցին աքսորուիլ մարմինիս մէջ իրենց փորած որջերէն, միայն առած զեղահատներու տեսակներն ու գոյները աճեցան: Իսկ այլազան ցաւեր, սուր, բուլթ եւ անողոք, գրաւեր էին ամբողջ իրանս, անոր կատարէն մինչեւ ստորոտ եւ քմահաճ անգթութեամբ կը կոխկոտէին զայն: Փորձարկութեան ու չարարանքի ամիսներ անցան: Եւ բժիշկը գտաւ, թէ զեղեր պիտի չկրնային կոտրտել քարերուն յամառութիւնը, որով անոնք կառչած կը մնային իմ ընդերքիս, իրրեւ իրենց հայրենի օճախին:

Երբ ամէն յոյս կտրուեցաւ, ան զիս զրկեց ուրիշ երկու բժիշկներու, որոնք մասնագէտներ էին երիկամային եւ յարակից մարդերու հիւանդութեանց: Տարբեր եւ տաժանելի այցերու նոր շարք մը սկսաւ ինծի համար: Դարձեալ մանրակրկիտ գննութիւններ, պատկերներ ու հիւանդանոց: Այլեւս հաւատարիմ, անտրտուն ըմբանորդ մը դարձեր էի բժշկական գրասենեակներուն եւ հաշտուեր էի անոնց տուած պատիժներուն,- ժամանակի կորուստ, խոնջէնք, եւ ասեղներու խայթոցներ, որոնցմէ կարելի չէր խուսափիլ:

Եւ օր մը այս բոլորէն ձանձրացած ու կրած տեւական ցաւերուս դարմանումէն յուսահատ՝ հարցուցի մասնագէտին.

- Տոբտոր, ամիսներ անցան եւ դեղերը բնաւ չմեղմացուցին տանջանքս: Հարկաւ ուրիշ կերպ մը կայ այդ քարերը հանելու... շատեր կը ճանչնամ, որ գործողութեամբ ազատեր են անոնցմէ:

- Այո, ճիշդ է, միայն ձեր պարագային արդելք կայ...: Ձեր սիրտը վտանգաւոր տաղնապ ունեցեր է, եւ բարեկամ բժիշկնիդ կը վախնայ որ չդիմանայ ծանր վիրաբուժական գործողութեան: Այդ պատճառով համաձայն չէ որ մարմիննիդ կտրելու վիրահատում կատարենք: Բայց ան հաւանեցաւ որ ուրիշ միջոց մը փորձենք:

- Ի՞նչ, հարցուցի անձկութեամբ:

- Ձեզ պէտք է նորէն հիւանդանոց դրկենք, շարունակեց ան: Հանուած պատկերներէն, ձեր ներսը երկու խոշոր քարերու տեղերը ճշդած ենք: Բայց նշդրակ պիտի չգործածենք վրանիդ: Միայն վարի բնական ճամբայէն երկար աքցան մը պիտի մղենք վեր եւ անով այդ քարերը պիտի փշրենք ու քաշենք դուրս:

- Ատիկա միջնադարեան սոսկալի պատիժ պիտի ըլլայ, ի՞նչպէս կարելի է, բողոքեցի... Ուրեմն նախ պէտք է ամուր չզթալով զիս կապէք գործողութեան սեղանին, թէ ոչ մերկ մարմինով կը փախչիմ փողոց... , աւելցուցի իրրեւ թէ կատակելով:

- Չէ՛, ատոր կարիք չ'ըլլար, յարեց ան ժպտելով. դուք բնաւ ցաւ պիտի չզգաք, ձեզ ամբողջապէս պիտի թմբեցնենք:

Այն ատեն ես ալ համարձակեցայ ժպտիլ, թէ եւ տակաւին երկշոտ վարանումով: Եւ տուն վերադարձի երկար ճամբուս վրայ, հանրակառքին մէջ, ներքին կոտտանքին ակոսները կարծես աւելի կարեկից դարձեր էին:

Քանի մը օր ետք, երբ հիւանդանոցի անկողինէս երկաթէ մահիճի մը վրայ դրած զիս կը տանէին վիրահատման դահլիճ՝ զգայարանքներս արդէն սկսեր էին ընդարմանալ: Երբ իջանք գետնայարկ եւ մտանք սենեակ, - ա՛հ, լուռ մրմնջեցի, մորթոտումի ի՞նչ հրապուրիչ միջավայր: Ամբողջ չըջապատը անարատ լուսավառ էր, մեքենաներ ու կազմածներ փայլուն ապակիէ եւ արծաթանման պսպղուն մետաղէ, բժիշկներ ու հիւանդապահ աղջիկներ անբիժ սպիտակ գզեւտաւոր, - բոլորը օծուած յորդ պայծառութեամբ մը: Այն ատեն, չեմ յիշեր, իրապէս շշմուցի՞, թէ միայն արդէն թեւածել սկսող գիտակցութենէս անցաւ, - ա՛հ, ի՞նչ լաւ է այսպէս քնանալ խաղաղ, աշխարհքի հոգերէն ու վիրտերէն խղուած, մարդոց շարիքներէն ու ոճիրներէն դուրս, եւ ոչ ի՞նչ զգալ, ոչ ի՞նչ տեսնել, ո՛չ արցունք ու արիւն, ո՛չ տառապանք ու թշուառութիւն:

Երբ աչքերս բացի սենեակիս մէջ, առանձին էի: Բնագործէն

շարժեցի ձեռքերս ու ոտքերս, ստուգելու համար թէ սթափե՞ր էի լիապէս: Մարմինս արթնցեր էր, բայց միտքս դեռ կը ծփար պղտոր մուփի մը մէջ: Մնարիս վրայէն ժամացոյցս առի ու նայեցայ: Մինչ ես ինծի կը հարցնէի, - Լա՛ւ, դո՞ւն ինչ գործ ունիս ժամանակին հետ, ենթադրենք թէ ժամեր անցեր են գործողութեանդ վրայէն, քեզի՞ ի՞նչ...:

Պահ մը ետք սկսաւ սովորական տողանցքը հիւանդապահ կիներուն, որոնք կուգային նոր տաղտուկներով, - ջերմաչափ, դեղահատ, ասեղով ներարկում, արեան գերճնշման գործիք, արիւն առնելու սրուակ, անոնց խստութիւնը մեղմացած իրենց գրաւիչ ժպիտներով: Կային նաեւ խոժոռ դէմքեր, որոնք կարծես կը պոռային երեսիս, - Աղէ՛կ, դո՞ւն ինչու եկած ես հոս, մեզի նեղութի՞ւն տալու համար:

Յաջորդ առաւօտ, երբ բժիշկը անկողինիս մօտեցաւ, նախորդ օրերու դէմքին ջերմ ժպիտը սրբուած էր: Ան բազկերակս սեղմեց, հիւանդապահհի՛նք քանի մը հարցումներ ըրաւ, յետոյ պարզապէս ըսաւ ինծի.

- Կը ցաւիմ որ գործողութիւնը արդիւնք չտուաւ: Մենք կրցանք գործիքը երկարել ձեր ներսը եւ գտանք որ երկու խոշոր քարերէն մէկը երիկամին մէջ է, եւ միւսը աւելի վար: Մասնաւոր աքցանով մը հասանք անոնց եւ փորձեցինք զանոնք կտրտել եւ դուրս բերել: Բայց կարելի չեղաւ: Անիծեալ քարերը արտակարգ կերպով մեծ եւ կարծր էին, այնքան որ, մեր աքցանին կոթերը ծոցեցան, իսկ անոնք չփշրուեցան: Հիմա ըսէք, խնդրեմ, աւելցուց ան ժպտելով, այդ պողպատաժայռի գունտերը ինչպէ՞ս կրցեր էք ձուլել ձեր ներսը:

- Գիտէ՞ք, տոբտոր, ըսի խնդալով, - Վայերը մօտ 4,000 տարուան ժողովուրդ են: Անոնք հազար փորձանքէ եւ տազնապէ վերապրեր են: Եւ շատերէն աւելի կոփուեր, կարծրացեր են ոգիով, մարմինով եւ այո՛, նաեւ ներքին քարերո՞վ... բայց հիմա՛, ի՞նչ պիտի ըլլայ իմ վիճակս, հարցուցի մտատանջ:

- Այդ քարերը հոն վտանգաւոր են եւ պէտք է անպայման հանուին, անոնք կրնան նորէն արիւն բերել... բնական ճամբով ատիկա հնարաւոր չեղաւ, ուրեմն ստիպուած ենք ձեր մարմինը բանալ պորտէն մինչեւ վար, որ ծանր վիրահատում պիտի ըլլայ ձեր սրտին տկար վիճակին մէջ: Վաղը պիտի խորհրդակցիք ձեր անձնական բժիշկին հետ եւ միջոց մը պիտի փնտռենք:

- Լա՛ւ, միայն թէ ի՞նչ ալ որոշէք, կ'ուզեմ որ այս անտանելի ցաւերէն ազատէք զիս:

Ան գլուխը շարժեց լուռ խոստումով մը եւ մեկնեցաւ: Իսկ ես, աչքերս կիսափակ, յոյսով ու կասկածով սկսայ խորհիլ նշդրակներու գալիք ասպատակութեան վրայ, իմ ընդերքէս ներս: Բաւական տեղեր

մորթ ու միսեր պիտի կտրտէին ու կարէին երկու քարերը հանելու համար: ... գոնէ այդ տիտղոսաւոր դերձակները չնորհքով ասեղ ու մատնոց բռնե՛լ գիտնային... եւ արդի՞ւնքը ինչ պիտի ըլլար, եթէ յանկարծ քմահաճ սիրտս որոշէր իր բողոքը աղաղակել եւ դադրէր բարբախելէ: Թերեւս գաղտնի երկիւղ մը վանելու համար՝ քմծիժագով քրթմնջեցի, - է՛ր լա՛ւ, յետո՞յ ի՛նչ... շատ-շատ՝ ազատութիւն կամ... դժո՛խք: Եւ յիշեցի Ամերիկեան ծանօթ ու սրամիտ ասացուածքը. - «Գործողութիւնը յաջող անցաւ, բայց հիւանդը մեռաւ...»:

Երեք օրէն զիս տարին տուն եւ անկէ քալեցի գրասենեակ աշխատանքի, տակաւին հալածուած նոյն ցաւերէն: Յաջորդ շարթուան ընթացքին գացի բարեկամ բժիշկիս, նոր գննութեան մը համար: Երբ մտաւ առանձնասենեակ, ձեռքերուն մէջ բռնած էր տրցակ մը թուղթեր, տարբեր գոյներով: Անոնք հիւանդանոցներէն ու մասնագէտ բժիշկներէն իրեն զրկուած տեղեկագիրներ ու պատկերներ էին, որոնք իմ ներքին վիճակս կը պարզէին իրեն: Ան յամբ շարժումներով քննեց զիս, նորէն նայեցաւ ձեռքի թերթերուն, հարցումներ ըրաւ ինծի, յետոյ ակնարկը յառեց աչքերուս եւ ըսաւ դանդաղօրէն.

- Այդ երկու մասնագէտները կը խորհին թէ ներսի քարերդ հանելու մէկ միջոց կայ, պէտք է փորդ բանան: Իսկ ատիկա քեզի համար վտանգաւոր է, քանի որ սիրտդ բաւական զօրաւոր չէ...

Պահ մը լուռ, դարձեալ սկսաւ թերթատել բռնած տեղեկագիրները, թերեւս իր վարանումը քօղարկելու համար:

- Բայց արդէն տարի մը եղաւ այս չարչարանքս եւ այլեւս չեմ ուզեր զայն աւելի երկար տանիլ, ըսի դառն գանգատով:

- Այո, գիտեմ, այո՛... պատասխանեց իր բառերը շեշտելով... Նայէ՛, քեզ պիտի զրկեմ ուրիշ հիւանդանոց մը, ուր սիրտի բոլոր հարուածներուն եւ ախտերուն համար մասնագիտական մեծագոյն բաժանմունքը ունին: Հոն ամենէն արդիական կազմաձևերով քու սիրտիդ եւ երակներուդ իրական վիճակը պիտի ստուգեն... Թէ անոնք կրնա՞ն դիմանալ այդ ծանր վերահաստման... յետոյ կը տեսնենք:

Ան արդէն հեռաձայնով ժամադրութիւն առած էր եւ ես երկու օր ետք գացի միւս հիւանդանոցը: Հոս դարձեալ անցայ հարցարաններ լեցնելու տաղտուկէն եւ իջանք նկուղային գետնայարկը: Քալեցինք քանի մը միջանցքներ, որոնց պատերը անարատ սպիտակ էին, իսկ գետինը սալարկուած արուեստական մարմարով: Անոնց երկու կողմերուն գրասենեակներ էին, տարբեր մասնագիտութեամբ վկայուած բժիշկներու համար: Ինծի պատուիրուած անունը կրող դուռէն մտանք ներս եւ հիւանդապահ աղջիկը զիս տարաւ կից սենեակը, ուր առանձին մնացի բժիշկին հետ: Փոքրակազմ երիտասարդ մըն էր ան, գանկին կատարը ճաղատ, որ շրջանակուած էր սեւ ու խիտ մագերու

փունջերով: Թանձր պեխերն ու մօրուքը կը ծածկէին անոր շրթունքն ու կզակը: Եւ դէմքին վրայ միայն խոշոր աչքերն էին, որ կը շողային կենդանի փայլով: Ան կատարեց հարեւանցի քննութիւն մը, ծանօթ հարցումներ կրկնեց եւ նայեցաւ իմ «պատուոյ թղթածրարիս» թերթերուն, որոնք սեղանին վրայ իր առջեւն էին:

- Սիրտի վերահաստում մը կրնայ ձեր կացութիւնը բաւական բարելաւել, ըսաւ ան մեղմ ժպիտով, անվրդով ձայնին մէջ ինքնավստահ շեշտ մը:

Ապահար ակնարկս յառեցի իրեն... Լո՞ւրջ էր, թէ կը կատակէր: - Սիրտիս վրայ գործողութիւն... աւելի դիւրին չ'ըլլա՞ր, եթէ ասեղն ու նշգրալը զարնէք սա ճկոյթ մատիս... խնդալ փորձեցի ես:

- Օ՛, այո՛, հարկաւ, շարունակեց ան ժպտելով... շատ աւելի հաճելի՛, բայց նաեւ բոլորովին աւելորդ եւ անօգուտ: Յետոյ, ձեր բժիշկները անհրաժեշտ կը գտնեն երկկամի ու յարակից մասերու վերարուժութեան ենթարկել ձեզ... միայն ձեր սիրտը պէտք է բաւարար զօրացնենք, որ ան կարենայ դիմանալ այդ ծանր գործողութեան:

- Լա՛ւ, ի՞նչ է ձեր վճիռը... պիտի վերապրի՞մ անոնց դանակներուն տակէն:

- Դժուար է ստուգօրէն ըսել ձեր ներկայ վիճակին մէջ, պատասխանեց ան: Յետոյ՝ ապահովաբար այո... Միայն պէտք է ձեր երակներուն ներքին ճամբաները խուզարկենք, տեսնենք արիւնը ո՛րքան ազատօրէն կը շրջի անոնց մէջ:

- Չէ՞ք կրնար հիմա աւարտել, դուրսը կը սպասեն ինծի: - Չէ՛, խնդաց ան, պէտք է որ քանի մը գիշեր հոս պառկիք: Այս երեկոյ ձեզ կը պատրաստենք, եւ վաղը այդ մասնաւոր քննութիւնը կը կատարենք: Այն ատեն կը յուսանք որ վերջնական արդիւնք մը կը ստանանք թէ՛ ձեզի եւ թէ՛ ձեր բժիշկներուն համար:

Անոր ձայնը այնքան հանդարտ եւ շեշտը այնքան ինքնավստահ էին, որ կարծես սրունքի պարզ սկրթութիւն մը մասին կը խօսէր: Այս մարդը կամ գերբնական շնորհքով մը օժտուած էր, եւ կամ ըսածէն ու ըրածէն լուր չունէր, խորհեցայ:

Զիս տարին 4-րդ յարկի սենեակ մը, ուր երեք մահճակալներ կային, մէկը դատարկ: Հագուստներս հանեցի, կռնակէն հանգուցուող ճերմակ պարկանման սաւան մը անցուցի վրաս ու պառկեցայ քիչ մը հանգստանալու յոյսով, բայց ի զուր: Հիւանդապահ աղջիկներ աշխուժօրէն կ'երթեւեկէին, իրենց գործիքներուն բերած խայթոցներուն ու խոնջէնքին հետ՝ զուարթ խօսքերու սփոփանքը բաշխելով: Գիշերը դեղահատի շնորհիւ անխոռով քնացայ եւ առաւօտ արթնցայ կազդուրուած: Յետոյ զիս իջեցուցին լուսավառ սրահ մը,

մեքենական արտակարգ կազմածներով: Առաջին ակնարկով անոնք ահարկու տպաւորութիւն կը գործէին դիտողին վրայ, որ կը զարմանար ու կը հիանար անոնց անթափանց խորհրդաւորութեան հանդէպ: Լայն սարքուածքներ էին հարթ ճակատներով, ուր շարուած էին անթիւ կոճակներ ու գունազեղ թարթող լոյսեր, որոնք զաղտնի բառերով կը խօսէին մասնագէտներուն հետ: Կարծես անոնք արբան-եակներ եւ ուղեւորներ կը դրկէին դէպի անջրպետ:

Մէկ պատին տակ երկու ոտք լայն եւ վեց ոտք երկար գօտի մը կար, գետնէն վեր շեղակի, ծայրերը գլաններու լծուած, իսկ աւելի բարձրէն, եզերքներուն բազրիքներ՝ բռնելու համար: Բժիշկը գիտ կեցուց անոր քով, կոճակ մը սեղմեց եւ կտորը սկսաւ դառնալ:

- Հիմա, ըսաւ ինծի, դուք պիտի կանգնիք ասոր վրայ, ձեր ոտքերը պիտի շարժէք քալելու պէս, բայց ձեր ամբողջ ջանքը պիտի ըլլայ շտապանալ գօտիին հետ, այլ մնալ նոյն տեղը... Ես հետզհետէ պիտի արագացնեմ ասոր շարժումը, իսկ դուք ձեր քայլերը անոր ընթացքին համաչափ պիտի դարձնէք, որ դուրս չիյնաք...

- Բայց ասիկա երեսայի պարզ խաղալիք մըն է, ըսի խնդալով: Եթէ կ'ուզէք, դուրսի միջանցքին մէջ վազեմ, եւ...

- Ո՛հ, դուք ասիկա փորձեցէք:

Եւ իրապէս, կատարածս հազիւ փորձ մը եղաւ: Ամէն անգամ որ ոտքերս կը դնէի կտորին վրայ եւ ան կը սկսէր շարժիլ, իսկ ես քանի մը տեղքայլ կ'առնէի նոյն տեղը մնալու համար՝ չափը կը կորսնցնէի եւ կ'իյնայի ծունկի վրայ: Արդէն շնչասպառ եղած էի եւ բժիշկը դադարեցուց այս մարզանքը, որ մանկական խաղալիք մը երեւցած էր ինծի:

- Կը բաւէ, ըսաւ ան, հիմա հանուեցէք:

Քիչ յետոյ, ձերմակ սաւանի մը ներքեւ մերկ, պառկեցայ երկաթէ սեղանի մը վրայ, այս անգամ բարձեր գլուխիս տակ: Շուրջս, հիւանդապահ աղջիկներ ելեկտրական ինքնագործ կազմածներ կը հանգուցէին մարմինիս հետ: Իսկ բժիշկը վրաս հակած, սեւ մագերով շրջանակուած շրթներով գուարթօրէն կը զրուցէր մանրուք նիւթերու շուրջ, մինչ օգնական մը կ'աջակցէր իրեն: Ես չգիտցայ, թէ ե՛րբ եւ ուրկէ՛ տեղական թմրեցուցիչ ներարկեր էր ինծի: Միայն յանկարծ սառն ճնշում մը զգացի աջ ազդրիս արմատին եւ ակնարկս յառեցի վար: Հոն զարմանքով տեսայ որ բժիշկը փայլուն պողպատէ երկու բարակ ձողեր խրած էր մարմինէս ներս եւ աջ ձեռքով զանոնք պարբերաբար կը սեղմէր ցած, մինչ կը խօսէր վարակիչ ջերմութեամբ:

- Հոն ոչինչ կայ ձեզի համար, դուք ցած մի՛ նայիք: Շատ աւելի հետաքրքրական են այս վերի պատկերները: Կը տեսնէ՞ք այդ գեղանի աղջկան գլուխին վերելի մեքենան, լա՛ւ, ան հեռատեսիլ մըն է: Իսկ

գիտէ՞ք ի՛նչ կենդանի է ճիշդ հիմա անոր ցոյց տուածը: Դէ՛հ, նայեցէք անոր, ասիկա բացառիկ պատեհութիւն մըն է, որովհետեւ անիկա ձեր հարապատ սի՛րտն է... լա՛ւ դիտեցէք այդ մսեղէն գունտը, ձեր ավրն-կալածին չափ գեղեցիկ չէ՞... բայց ան գմայլելի տոպրակ մըն է, դե-րապանց հրաշք մը, որ ձեզ ապրեցուցեր է մինչեւ այս պահը...:

Ջարմանալի, անձեւ զանգուած մըն էր, որ կը բարախէր, ինքն իր մէջ կը ծփար անհանգիստ պրկումներով:

- Չեմ ուզեր ասոր երեսը տեսնել, ըսի դառն շեշտով մը, եւ դէմքս շրջեցի անդին:

- Իսկ ինչո՞ւ քէն կ'ընէք անոր դէմ, չէ՞ որ ձեր կեանքին աղբիւրն է ան:

- Որովհետեւ դասալիք կ'ըլլայ ինձմէ, եւ չի ձգեր որ վերջին գործս աւարտեմ:


- Օ՛, այո՛, գիտեմ... ձեր բժիշկը ինծի յայտնեց թէ գրող էք եւ հիմա վէպի մը վրայ կ'աշխատիք... ատիկա սքանչելի է... եւ ան ինծի սպառնա՛ց, որ ձեզի պէտք է այնքան ապրեցնենք, մինչեւ այդ գիրքերնիդ վերջացնէք: Բայց ասոր համար ձեր սիրտէն մի՛ հրա-ժարիք... աւելի՛ ողորփեցէք, շոյեցէք, փայփայեցէք զայն, հապա՛...:

Պահ մը լռեցինք, եւ ապշութեամբ նայեցայ մեր շուրջի բարդ, առեղծուածային կազմածներուն: Ի՞նչ անըմբռնելի դերեր կը կատարէին անոնք, իրենց լարերուն, թելերուն, խողովակներուն հանգոյցներով: Ինծի կը թուէր թէ գերբնական, հրաշագործ զօրութիւն մը ջիղ, երակ ու շունչ առեր էր անոնց փայլուն պողպատէ եւ ապակիէ անդամներուն մէջ:

- Իսկ ազդրէս ներս խրած ձեր այդ երկու գերաններո՞վ ինչ կը ներարկէք խեղճ մարմինիս մէջ, հարցուցի անոր:

- Նարնջագոյն հեղուկ մը, յարեց ան: Հիմա արդէն ան կ'անցնի ձեր բոլոր երակներէն եւ իր գոյնով կ'ողողէ զանոնք: Այս մեքենա-ները կը լուսանկարեն նարնջագոյն հեղուկին հոսանքը, ձեր ոտքե-րէն մինչեւ սիրտը: Եւ մենք կը ստուգենք թէ ան ո՛ւր որեւէ արգելքի կը հանդիպի: Մարքուածք մը անոնց բոլորին յստակ քարտէջը կը գծէ: Եւ բժիշկները կը գիտնան թէ ձեր երակներուն մէջ ո՛ւր խափա-նումներ կան, ուրեմն վիրաբոյժին նշորակը ո՛ւր պէտք է միջամտէ...

Մինչ ես կը խորհէի: Մարդկային մարմինը դեռ բազմատեսակ սովորական ցաւեր կը կրէ, եւ կը զարնուի տարբեր մահացու ախ-տերէ, որոնց դարման չեն գտած բժիշկներ, ու կը մեղադրուին ասոր համար: Բայց ահա՛, ապշութեամբ ու հիացումով կը տեսնէի որ անոնք արդէն յղացեր են սքանչելի ինքնագործ կազմածներ ու կը կատարեն այնպիսի բարդ բուժումներ, որոնք համազօր են ճշմարիտ հրաշքներու:



Օրուան մնացեալ պահերը անցան յամբօրէն դանդաղ, կարծես ժամացոյցին սլաքները կը քալէին ծերունիի մը դանդաղող ոտքերով: Մինչ ես անկողինիս մէջ պառկած՝ կը ջննայի կարգալ, գիշերուան իջնելը փութացնելու տարտամ յոյսով: Բայց յաճախ մոռալ միտքեր կը խզէին ընթերցումս եւ աչքերս կիսափակ, կը խորհէի անցեալ երկու տարիները լեցնող դէպքերուն մասին, տարբեր հիւանդանոցներու մէջ, որքան տաղտկալի քննութիւններ, քանի՛ մասնագէտ բրֆիչկներ, եւ անթիւ լուսապատկերներ, եւ բազմազոյն դեղահատներ ու հատու ասեղներու ներարկումներ, որոնք անօգուտ՝ դիս գլորած էին այստեղ: Եւ այդ տաժանելի փորձարկութիւնները դեռ չէին յաջողած ստուգել, թէ ի՛նչ քանդուած էր սիրտիս մէջ, կամ կարելի պիտի ըլլա՞ր վերաշինել կատարուած ասերը: Կ'երեւի վերջին յուսահատ փորձն էր ասիկա, եւ վաղը թերեւս պիտի լուծուէր կեանքի ու մահուան առեղծուածը ինծի համար:

Յաջորդ առաւօտ, իրենց գործիքներով սպառազէն հիւանդապահ աղջիկներու արշաւէն ու նախաճաշէն ետք, բժիշկը ժպտողէմ մտաւ սենեակս եւ աթոռ մը բերելով նստաւ սնարիս մօտ: Երկու-երեք վայրկեան թեթեւ զրոյց մը ունեցանք, յետոյ ան յանկարծ լրջացաւ ու պարզօրէն ըսաւ.

- Երէկուան մեր քննութեան արդիւնքը ստացանք: Ձեր սիրտին եւ անոր երակներուն ներկայ վիճակը պարզող քարտէզը կը պատրաստուի հիմա եւ երբ աւարտի՝ կը բերեմ եւ դուք ալ կը տեսնէք զայն: Այս հիւանդանոցին մէջ ծառայող սրտային ախտերու եւ տազնապներու յայտնի մասնագէտներ խորհրդակցեցան եւ համաձայն եղան, որ ձեր սիրտին վրայ վիրաբուժական գործողութիւն պէտք է կատարուի եւ... անմիջապէս:

Լռեց, ակնարկը սեւեռած աչքերուս, թերեւս անոնց մէջ իր յայտնութեան ձգած ազդեցութիւնը կարգալու համար: Անոր լուրը անակնկալ էր իր ուժգնութեան մէջ եւ զգացի թէ մարմինս կը սկսէր մսիլ ցուրտ դողէ մը: Բայց ներքին խռովքս զսպեցի եւ փորձեցի շուարումս քողարկել անտարբեր երեւոյթի մը տակ:

- Իբրեւ թէ ուրիշ միջոց չէ՞ մնացեր, հարցուցի տարակոյսով:
 - Ձեր պարագային, բոլոր միւս կերպերը անօգուտ են այլեւս: Մեր կարծիքով վիրահատումը ո՛չ միայն անհրաժեշտ է, այլ նաեւ ստիպողական...: Ան պիտի կրնայ ձեր կեանքը երկարաձգել: Բայց անշուշտ պայման է, որ դուք հաւանութիւն տաք, աւելցուց ան ժպտելով:

Պահ մը մտախոհ նայեցայ իրեն: Միտքիս մէջ մթին խորհուրդներ կը բախէին իրարու, կը ժխտէին, կը նշդրակէին զիրար: Յետոյ յարեցի.

- Լա՛ւ, ենթադրենք թէ յօժարիմ այդ գործողութեան, որ հարկաւ ծանր վտանգ մը կը պարունակէ: Բայց ժամանակը շատ անյարմար է, գրտէ՛ք: Շուտով Մոսկուն ու Նոր Տարին կուգան... զաւակներս հեռաւոր վայրերէ պիտի հեռաձայնեն... եւ չեմ ուզեր որ իրենց սօնական օրերու ուրախութիւնը տխրութեան փոխեմ, երբ լսեն թէ այս վիրաբուժութեան համար հիւանդանոց կը գտնուիմ...:

- Այո՛, բայց շատ աւելի խորունկ վիշտ պիտի պատճառէք անոնց, այնպէս չէ՞, եթէ ձեր մահուան լուրը հաղորդուի իրենց, յարեց մոռալ շեշտով մը:

- Կարելի չէ՞ գոնէ մինչեւ Յունուար յետաձգել այս վիրաբուժական գործողութիւնը, հարցուցի հեզ թախանձանք մը ձայնիս մէջ:

- Անշուշտ եթէ փափաքիք՝ կրնաք այսօր իսկ ձեր տունը մեկնել, պատասխանեց ան: Միայն պէտք է գիտնաք թէ մեծք վստահ չենք ձեր մինչեւ այն ատեն ապրելուն: Ձեր սիրտին ներկայ վիճակին մէջ, որեւէ ատեն, նոյնիսկ այսօր տուն երթալու ճամբուն վրայ, կամ գիշերը երբ խաղաղօրէն կը քնանաք, դուք կրնաք յանկարծամահ ըլլալ, ինչպէս շատերուն կը պատահի:

Անոր դէմքը վստահութիւն կ'արտայայտէր եւ ձայնը կը հնչէր անհոգ, նոյնիսկ զուարթ շեշտերով: Ես պահ մը գլուխս կախեցի աչքերս փակած, եւ քանի մը ակնթարթի մէջէն տեսայ կեանքիս ամբողջ համայնապատկերը, անոր եղբրական, ուրախ կամ դաժան դրուագներով: Ուրեմն հասե՞ր էի անոր վախճանական հանգրուանին: Է՛, լա՛ւ, եթէ այդպէս պիտի ըլլայ, ի՞նչ ընենք...:

- Լա՛ւ, թող ըլլայ, մըմնջեցի տրտում համակերպումով:

- Խելացի որոշում տուիք, ըսաւ բժիշկը, դէմքին վրայ լայն ժպիտ մը բացուած: Ուրեմն ձեզ մէկ երկու օր կը պատրաստենք եւ յետոյ կը տանինք վար: Ես վաղը դարձեալ կուգամ: Ձեզի պիտի այցելէ այն մասնագէտը, որ վիրահատումը պիտի կատարէ: Հոս պիտի հանդիպին նաեւ ուրիշ բժիշկներ, որոնք գործողութեան մէջ բաժին պիտի առնեն, ձեր մարմինին տարբեր մասերուն վրայ քննումներ ընելու համար:

Եւ ան հեռացաւ, դուռէն ներս մտնող հիւանդապահ կնոջ կարգ մը հրահանգներ տալով: Երբ առանձին մնացի, յուլօրէն երկնցայ անկողինիս վրայ եւ սկսայ ձեղունը դիտել նայուածքս պարուրող պղտոր մուժի մը մէջէն: Ձիրար հալածող խոհեր կը խուժէին միտքիս վրայ եւ ես ի գուր կը փորձէի անոնց մթին խառնուրդին տակէն լուսաւոր բացատ մը ելլել: Գիտէի թէ սիրտի կաթուածներ դարմանելու տարբեր գործողութիւններ կը կատարուէին, բայց ինչպէ՞ս եւ ուրկէ՞ պիտի ծածկէին իմ կուրծքս... եւ ամէն անստուգութեան նման, ինծի գալիքին անորոշ բնոյթը յաւելեալ հոգ ու երկիւղ կը բերէր

իրեն հետ: Մինչ ես ամսասանքով կը մտածէի գրական անաւարտ երկերու կամ հանրային ծառայութեան տակաւին չհատուցուած պարտքերու մասին: Եւ անհամբեր անձկութեամբ կը սպասէի այն պահուն, երբ պիտի ճշդուէր լանջքս մխրճուող նշարակներուն հասցէն ու պիտի փարատէր մթութեան մէջ յամեցող մղձաւանջը:

Յաջորդ առաւօտ բժիշկը սենեակ մտնելով ջերմօրէն ողջունեց զիս, մահճակալիս կողքի անիւաւոր սեղանը մօտեցուց եւ անոր վրայ բացաւ գեղատիպ պատկեր մը: Ինք ոտքի՝ ցուցամատը պտտցուց բազմաթոյն նկարին վրայ, բացատրելով.

- Ասիկա երէկուան մեր քննութեան քարտէզուած արդիւնքն է, ըսաւ: Կեդրոնի այս զանգուածը ձեր սիրտն է, իսկ անոր շուրջի լարերը երակներ են, որոնք արիւն կը կրեն հոն եւ անկէ արիւն կը տանին ձեր մարմինին բոլոր մասերուն: Հիմա նայեցէք, սիրտին վրայի երկու կարմիր ու հաստ լարերուն, անոնք մայր երակներն են, որոնք մեզ կ'ապրեցնեն: Ձեր պարճալին, այդ գլխաւոր երկու երակներն ալ հարիւր տոկոսով խցուած են ծանր վէրքերէ, որոնք կ'արգիլեն արիւնին անցնիլը անոնց մէջէն: Դուք այս տակի երեք օժանդակ երակներով ապրեք էք մինչեւ հիմա, բայց անոնք եւս 75 առ հարիւր փակուած են: Զարմանալին այն չէ, որ դուք տառապեք էք շատ սուր ցաւերէ, այլ որ... դուք կրցեք էք ապրիլ ձեր այս վիճակով:

- Լաւ, տոքտոր, հիմա որ յաջողեցաք զիս բաւական շփոթեցնել ու վախցնել, յետո՞յ ի՞նչ... ըսի վարանումով:

- Պարզապէս, ձեր մայր երակներուն խցուած մասերուն վրայ նոր կտորներ պիտի փակցնենք, որոնք անոնց դերը կատարեն, արիւնը անարգել փոխադրելով: Միւս երեքին պիտի շղպինք, վտանգը չենք ուզեր ծանրացնել:

- Բայց ի՞նչպէս պիտի ընէք այդ անկարելի գործերը, հարցուցի զարմանքով:

- Տեսէք, այս քարտէզին շնորհիւ մենք ստուգօրէն գիտենք թէ ո՞ւր են անոնց խափանուած հատուածները: Ուրեմն անոնց երկու ծայրերուն ծակեր պիտի բանանք, որոնց պիտի կարենք թարմ երակներ, շրջանցելով հին, փճացած մասերը:

- Իսկ ի՞նչ տեսակ թելերով պիտի կարկանէք խեղճ սիրտս, - մետաքսէ՞, բուրդէ՞, բամպակէ՞, թէ խոզի աղիքէ, փորձեցի կատակել:

- Օ՞, չէ՞, յարեց ան, ոչինչ ձեր մարմինին օտար... ձեր սեփական երակներէն պիտի գործածենք:

- Ի՞նչ, գոչեցի ապշահար:

Ան սեղանը հրեց վար, նստաւ քովի աթոռին վրայ եւ լուռ պահ մը խոշոր աչքերուն վճիտ նայուածքը յառեց ինծի: Յետոյ հանդարտ ձայնով ըսաւ.

- Վաղը առաւօտ ձեզ պիտի տանին վիրաբուժութեան բաժանմունքը: Հոն հազիւ քանի մը վայրկեան շուրջերնիդ նայելու տեսն պիտի ունենաք: Յետոյ դուք այլեւս ոչինչ պիտի զգաք եւ ոչինչ պիտի տեսնէք: Ձեր լանջքին ոսկորը, կոկորդէն մինչեւ ստորոտ, կեդրոնէն պիտի սղոցեն, կուրծքերնիդ պիտի բանան, սիրտերնիդ պիտի հանեն դուրս եւ...:

Ես սկսայ խնդալ, խորհեցայ թէ բժիշկը կը կատակէր զիս քիչ մը զուարթացնելու համար:

- Կը յուսամ ձեր մտազործին սղոցը բաւական սուր կ'ըլլայ, յարեցի ծիծաղով:

Բայց անոր դէմքին գիծերը շշնջեցին անգամ եւ աւելի կարծրացան իրենց մոռյլ լրջութեան մէջ: Ամչցայ որ երկիւղս մատնած էի եւ ակոսներս սեղմած՝ ակնարկս կախեցի վար:

- Հոգ մի՛ ընէք, շարունակեց ան, մեր մասնագէտները շատ աւելի հատու սղոցներ ունին... յետոյ, մինչեւ վիրաբուժութեան աւարտիլը՝ առժամեայ պատուաստով ձեզի կը կապեն արուեստական սիրտ մը եւ թոք մը, որոնք ձեր իրական սիրտին ու թոքերուն դերերը պիտի կատարեն, քանի որ անոնք երկար ժամեր պիտի դադրեցուին աշխատելէ... այն տեսն կը սկսին երակները...:

- Իսկ մարմինիս ո՞ր կողմէն պիտի հանեն այդ երակները, հարցուցի անհամբեր:

- Ձեր ձախ ազդրին արմատի լայնքին եւ յետոյ զարվար մինչեւ ծունկին մօտ՝ ակօս մը պիտի ճեղքեն եւ անկէ պիտի անջատեն առողջ երակներ, որոնք զարձեալ կը քննուին, ստուգելու համար թէ անոնց ներքին անցքերը լիապէս մաքուր ու բա՞ց են:

Պահ մը կրկին շուարեցայ եւ անհանգիստ նայուածքս յառեցի իրեն:

- Բայց ձախ սրունքիս վիճա՞կը ի՞նչ պիտի ըլլայ, երբ ազդրէս գլխաւոր երակներ հանէք:

- Ոչինչ, այդ մասին անհոգ եղէք, հոն բաւարար օժանդակ երակներ կան, եւ ձեր սրունքը բնաւ պիտի չազդուի այդ պակասէն:

- Ուրեմն այդպէս, վիզէս մինչեւ ծունկս միս ու ոսկոր պիտի կտրտէք, պիտի ծակծկէք... մարմինիս վրայ ալ ողջ տեղ պիտի ձգէ՞ք, որ յետոյ երկիւղս քարերն ալ հանելու գործողութիւնը կարենան կատարել... ձայնիս մէջ վհատութեան շեշտ կար...:

- Բայց դուք ապահով եղէք, յարեց ան ժպտելով: Մեր մասնագէտ վիրահատները ճարտար... գերձակներու նման այնպէս պիտի կարկտեն ձեր բոլոր կտրուած միսերն ու մորթերը, որ անոնք աւելի զօրաւոր ըլլան քան առաջ:

- Այո՞, գիտեմ որ միս ու մորթ կարելու նորագիւտ կերպեր կան

հիմա: Հապա այս կուրծքիս սղոցուած, իրարմէ բաժնուած երկու կէ-
սէ՞րը ի՞նչպէս իրարու պիտի փակցնէք նորէն, խէժո՞վ, դերձանո՞վ...:

- Օ՛, ո՛չ, խնդաց բժիշկը... երբ ձեր սիրտին մայր երակնե-
րուն վրայի վիրաբուժումը աւարտի՝ այն ատեն ձեր լանջուկրին
երկու անջատուած կէսերը կը բերեն իրարու, կը գոցեն երկփեղկ
դուռի մը նման եւ զանոնք կը կղպեն անժանգ պողպատի օղակնե-
րով, որոնք կը դիմանան յաւիտեա՛ն: Յետոյ անոնց վրայ կը միացնեն
եւ աներեւոյթ կարերով կ'ամրացնեն միսերն ու մորթերը...:

Յուրտ, անողոք պարզութեամբ ան կը նկարագրէր վաղուան վի-
րահատման եղանակը, անտարբեր շեշտ մը իր բառերուն ու ձայնին
մէջ, թերեւս անոնցմէ բխած անձկութիւնն ու վախը մեղմացնելու
համար: Այդ պահուն, ուրկէ՞ եւ ինչպէ՞ս յանկարծ յիշեցի Յակոբ
Պարոնեանի մէկ իմաստուն խօսքը, որ իր քրքջող երգիծանքը կը բա-
ցատրէր,- Կեանքի ողբերգական երեւոյթներուն վրայ չարտասուելու
համար՝ մարդ պէտք է խնդայ: Ես ալ կը փորձէի բժիշկին պարզած
քիչ մը ահաբեկիչ պատկերին հանդէպ երկիւղս փարատել, երբեմն
կատակելով: Եւ ըսի,

- Գիտէ՞ք, տոքտոր, ես յաճախ կը ճամբորդեմ սաւառնակով: Եւ
ամէն օդակայանի մէջ, բոլոր ուղեւորներն ու իրենց պայուսակները
կը քննուին ելեկտրական աչքերով եւ ռումբեր կը փնտռուին: Ի՞նչ
պիտի ըլլայ իմ վիճակս, երբ այդ դուռէն անցած ատենս, խուզարկող
աչքը վրաս երկաթ գտնուելուն նշանը տայ, բայց իրենք ոչինչ տես-
նեն: Այն ատեն ի՞նչ պիտի ընեն, կուրծքս պիտի ճեղքեն եւ ձեր դրած
մետաղէ կապերը դո՞ւրս պիտի քաշեն...:

Բժիշկը զուարթ ծիծաղով յարեց.

- Ո՛չ, հոգ մի՛ ընէք, ձեր ներսի երկաթը ծածկուած է միտով ու
մորթով եւ անոր ներկայութիւնը գաղտնի պիտի մնայ նոյնիսկ այդ
զննող ճառագայթներուն:

Եւ ելաւ ոտքի, մեկնելու համար: Բայց կ'երեւի ուրիշ հրահանգ-
ներ յիշեց եւ ըսաւ.

- Օ՛, այո: Այս երեկոյ ձեզի ընթրիք պիտի չտան, ոչ ալ նախաճաշ
վաղը առաւօտ: Գնանալէ առաջ, ձեր մարմինին ներքին մասերը
պիտի լուան եւ ամբողջապէս պիտի մաքրեն: Յետոյ, ձեր վիզէն մին-
չեւ ոտքերը պիտի ածիւն ձեզ: Ուրիշ խնդիր մըն ալ: Այսօր ձեր ըն-
տանիքին անդամներ պիտի այցելեն ձեզի: Անոնց բացատրեցէք թէ
վաղը, երբ վիրաբուժական գործողութենէն վերջ զան ձեզ տեսնելու...
թող խուճապի չմատնուին ձեր երեւոյթէն: Շուրջներնիդ ելեկտրական
բարդ կազմածներ պիտի ըլլան: Ձեր գլուխէն մինչեւ վար անոնց
կապուած թելեր, վերէն կախուած պարկեր, որոնցմէ իջնող խողո-
վակներ ձեր մարմինին արիւն, սնունդ ու ջուր պիտի ներարկեն:

Եւ ուրիշ խողովակներ, որոնք ձեր պորտին շուրջ բացուած ծակերէ
ներքին վիրահատումէն դեռ սուզուող արիւնը եւ ուրիշ նիւթեր պիտի
հոսեցնեն մահճակալի կողքին դրուած տարբեր դոյլերու մէջ: Առա-
ջին տեսքով, ատիկա սոսկալի պատկեր մը պիտի ըլլայ, որուն հանդէպ
ոմանք կրնան նուաղիլ: Բայց դուք զանոնք համոզեցէք, թէ վախ-
նալու պատճառ չունին եւ ձեր հոն գտնուիլը արդէն ապացոյց է,
որ... ողջ էք եւ վտանգը անցած է:

Ան քանի մը քայլ առաւ դէպի դուռը, կանգ առաւ եւ ետ դառ-
նալով՝ աւելցուց.

- Ուրիշ որեւէ հարցում ունի՞ք:

- Հարցո՞ւմ, ո՛չ, պատասխանեցի ժպտելով, բայց խնդրանք մը՝
այո՞:

- Հրամմեցէք, ըսաւ լրջացած:

- Կը խնդրեմ, տոքտոր, որ վիրահատումէն ետք՝ չմոռնաք զիս
արթնցնել...:

- Օ՛, ո՛չ, ո՛չ, ապահով եղէք, յարեց... ձեզ պիտի արթնցնեն
հիւանդապահ աղջիկներու փափուկ ափեր: Եւ խնդալով հեռացաւ:

Յոգնած էի եւ աչքերս փակ՝ երկնցայ անկողինիս վրայ, անդորր
նինջի մը մէջ հանգիստ գտնելու յոյսով: Բայց մտայ խորհուրդներ
ու տխուր յոյզեր կը չարչարէին միտքս եւ ես ի զուր կը ջանայի անոնց
բախումներուն խռովքէն քիչ մը խաղաղութիւն կորզել: Արդէն կէ-
սօրուան ճաշէն ետք այցելուներս եկան եւ պէտք էր գերագոյն ճիգեր
թափէի, անոնց դէմքերուն վրայ մթազնած մղձաւանջը սրբելու համար:
Սիրտի գործողութեան զաղափարն անգամ սարսափով կը համակէր
մարդիկ եւ ես ի՞նչ համոզիչ սփոփանքով կրնայի թեթեւցնել անոնց
հազիւ զսպուած տառապանքը: Եւ բացատրեցի զուարթ շեշտերով.

- Առտուն բժիշկին հետ երկար զրոյց մը ունեցայ: Հինգ հատ
վարպետ, մասնագէտ վիրաբոյժներ են եւ միասին շատ արագ ու դիւ-
րին պիտի վերջացնեն այս գործը: Մէկը սղոցով կուրծքիս ոսկորը
պիտի բանայ, միւսը զանակով նոր երակ պիտի հանէ ոտքիս ճկոյ-
թէն, երրորդը մկրատով սիրտիս աւրուած երակները պիտի ծակէ,
չորրորդը ատոնց տեղը լաւ կարկտաններ պիտի կարէ, իսկ հինգե-
րորդը սիրային վրան բաց պատմութիւն մը պիտի երգէ...: Կը տես-
նէք որ ամբողջ եղածը խրոյմա չաղելու չափ ապահով ու հաճելի բան
մը պիտի ըլլայ:

Անոնք խնդացին եւ ես իբրեւ թէ չնկատեցի որ արցունքի կա-
թիլներ կը ցոլային անոնց աչքերուն մէջ:

- Այս գործողութիւնս ուրիշ լաւ կողմ մըն ալ ունի, շարունա-
կեցի նոյն եռանդով: Կրնայ պատահիլ որ հակառակ բժիշկներու սքան-
չելի ճարտարութեան՝ սաստան խուժէ սենեակէն ներս եւ մարմինս

խելով տանի դժոխք, իբրև իրեն քարտուղար... Այն ատեն հիւանդանոցը եւ բժիշկները իրենց ահագին նիւթական պահանջներուն վրայ թերեւս մինչեւ 2 առ հարիւրի գեղջ մը կ'ընեն եւ մենք բաւական խոշոր գումար մը կը շահինք: Ատիկա չկորսնցնելու համար՝ անոնք ինծի հազար պարաններով պիտի կապեն ահագին մեքենաներու, որ սատանան չկրնայ զիս փախցնել: Անանկ որ երբ վաղը գործողութենէն յետոյ գաք եւ մարմինս խենթի պէս կապանքուած տեսնէք՝ բնաւ չվախնաք, որովհետեւ ողջ-անողջ եւ ապահով պիտի լլլամ հոն: Այո՞, ո՛չ լալ, ո՛չ իրարանցում, ոչ ալ վէճ ու կոխ, գոնէ մինչեւ տուն դառնալս:

Բոլորս խնդացինք եւ սենեակին ցաւով թանձրացած մթնոլորտը յոյսով պայծառացաւ:

- Հայրիկ, ես Պոստոնէն մինչեւ հոս եկայ որ քեզի լաւ հոգ տանիմ... մրմնջեց կրտսեր աղջկաս ձայնը կարկաջող մեղեդիի մը նման, եւ անոր արցունքով թաց շրթներուն տաք համբոյրը զգացի այտերուս վրայ:

Եւ մեղմօրէն շշնջացի.
- Դէ՛հ, ի՞նչպէս կարելի է մահուան մասին մտածել, մօտաւոր ու հեռաւոր թանկագին հոգիներու այսքան քաղցր սէրերու կախարդանքին տակ:

Մեր գրոյցը ընդմիջեցին երկու դեռատի կիներ, որոնք անկողինիս մօտեցան, ձեռքերնին բռնած տարրեր գոյներով թուղթեր: Երէջը գեղանի չիկահեր մըն էր՝ փարթամ կուրծքով, որուն վրայ մենաւոր հիւանդ մը գաղտնի բաղձանքը պիտի ունենար գլուխը դնելու եւ հանգչելով երազելու: Ան սկսաւ խօսիլ, եւ իր բառերն ու ձայնը պարուրուած էին թաւի լի փափկութեամբ, մինչ կը բացատրէր թէ այդ թուղթերը բերած էին, որ ստորագրէի, որոնք պարզապէս պիտի հաստատէին թէ համաձայն էի վաղուան կատարուելիք գործողութեան: Զեւական եւ ընդհանուր կանոն մը բոլորին համար:

- Իսկ այս մէկը տարրէր է, աւելցուց ան չքմեղանքի ժպիտով մը: Հիմա հիւանդանոցներ ու բժիշկներ կ'ուզեն պաշտպանուիլ որեւէ ժխտական դիպուածի դէմ, որ կրնայ պատահիլ վիրարութեական բարդ գործողութեան մը ընթացքին: Նման պարագայի մը, ձեր կողմէ ստորագրուած այս թուղթով, անոնք բացարձակօրէն ազատ կը մնան նիւթական եւ բարոյական ամէն պարտաւորութենէ ձեր ժառանգորդներուն հանդէպ:

Անոր այդ սովորական խօսքերուն հետ, կապարի նման ծանր ու ցուրտ լուսթիւն մը իջաւ ու տիրեց սենեակին մէջ: Զայն փարատելու համար քրքջացի եւ լայն շարժումով մը թուղթը առի կնոջ ձեռքէն ու սկսայ անունս գրել խաչանիշին դէմ:

- Ա՛, հասկցայ, ըսի զուարթ շեշտով մը, դուք կը վախնաք որ նշորակներու գրոհին տակ մարմինս կրնայ դիակի փոխուիլ եւ այն ատեն, ընտանիքիս անդամները բոլորիդ դէմ 2, 999, 999 տուարի հատուցման դատ կը բանան, անանկ չէ՞: Դէ՛հ, լա՛ւ, հոգ մի՛ ընէք, մենք ամէն մանրուք դէպքէ արծաթ քամող ճարպիկներէն չենք: Հրամայեցէ՛ք:

- Եւ ստորագրուած թերթը իրեն տալով՝ աւելցուցի.
- Բայց ներեցէք, խնդրանք մը կրնամ ընել ձեզի:
- Ի՞նչ է, հարցուց միւս, թխադէմ կիներ ժպտելով:
- Դուք այս հսկայ շէնքերուն տաք ջուր հայթայթելու համար՝ նկուղներուն մէջ դժոխքի օճախներուն չափ խոշոր վառարաններ ունիք, գիտեմ: Լաւ: Եթէ ձեր յիշած «ժխտական դիպուած»ը պատահի ինծի, կը հաճի՞ք անոնց մէջ մարմինս վառել եւ մոխիրը յանձնել այս ներկայ ժառանգորդներուս, որ գոնէ ինձմէ մնացորդ մը տարած լլլան հետերնին. քանի որ ասկէ զատ ուրիշ ոչի՛նչ ունիմ իրենց կտակելիք... կ'ըլլա՞յ:
- Ատոր մասին մի՛ մտահոգուիք, ըսաւ կրտսերը եւ անոնք խընդալով հեռացան:

Մայրամուտին դեղնած շողերը արդէն կ'երկարէին պատուհանէն ներս: Ուրեմն օրը իր աւարտին կը մօտենար: Լուռ հանգիստի անսովոր պահ մըն էր եւ մահիծիս գլխակողմը կիսովին վերցուցած ու կռնակս յենած բարձերուն՝ կուրծքիս վրայ բացի եւ սկսայ կարդալ Հենրի Միլլըրի համբաւաւոր "Tropic of Cancer"ը: Գիրքը անոր ապրած մտայլ գրուածներուն ու սեռային անասնո՞ւ արկածներուն, կատարած գրական յանդուգն դատումներուն եւ վկայած ընկերային կենցաղի տղմոտ երեւոյթներուն պատկերացումը կը բովանդակէ, երբեմն բրտօրէն իրապաշտ, յաճախ քնարական գեղահիւս ոճերու ընդելուզումով: Ամէն էջի տակ հասնելուս՝ հատորը կը դնէի վար, գլուխս կը ձգէի բարձին վրայ եւ աչքերս փակ, կը սուզուէի միտքէս ներս խուժող խառն խորհուրդներու յորձանուտին մէջ, ուր Միլլըրի նկարագրած մարդոց ու կիներու վիշտերուն ու ծիծաղին, եւ արցունքին ու կիրքերուն կը շաղախուէր վաղը, իմ միտքէս ու ջիղերէս հոսելիք արիւնը: Քանի մը վայրկեան յետոյ դարձեալ կը հանդարտէր այդ մտածումներուն խռովքը, աչքերս կրկին կը բանայի ու կը շարունակէի ընթերցումս:

Նման պահու մը, երբ գիրքը վերցուցի կարդալ վերսկսելու համար՝ զարմանքով տեսայ անձանօթ մը, որ նստած էր աջ կողմի աթոռին վրայ: Ո՛չ նկատած էի անոր գալը, ոչ ալ լսած էի ոտնաձայնը: Եւ իրարու նայեցանք անխօս: Անոր դէմքը Մեքսիկոյի բնիկ հնդկներուն ժառանգական գիծերը կը պարզէր, խոր սկօսներով:

Նշաձե աչքերը սրճագոյն էին, համակուած միին թախիժով, նոյնիսկ երբ մեղմօրէն ժպտելով ըսաւ.

- Ներեցէք որ ձեզ արթնցուցի: Ես բժիշկ Սուարէզն եմ: Վաղը առտու ձեր սիրտին վրայի գործողութիւնը ես պիտի կատարեմ: Ուզեցի այցելել եւ ճանչնալ ձեզի:

Ենորհակալութիւն յայտնեցի իր գալուն համար, եւ աւելցուցի.

- Ա՛հ, ուրեմն իմ կեանքս ձեր մատնեբուն ու միտքին ճարտարութեանէն կախում պիտի ունենայ վաղը... բայց ես բացարձակապէս վստահ եմ, որ զիս պիտի արթնցնէք այդ մահուան քունէն, որ գոնէ կարենամ... այս գիրքի ընթերցումս աւարտել:

Ան գլուխը տարտամօրէն շարժեց եւ աչքերը պարուրող տրտմութեան վրայէն ժպտի մը ստուերը անցաւ, երբ ըսաւ.

- Նկատեցի որ Հենրի Միլըր կը կարգաք... կը սիրէ՞ք անոր առեղծուածային տաղանդը: Քանի մը տասնամեակ առաջ՝ ան շատ վիճելի եւ արգիլուած հեղինակ մըն էր իր ծննդավայր Ամերիկայի մէջ:

- Այո՛, ի՛նչ ծիծաղելի հակասութիւն... մարդկային տխմարութիւնը յաճախ որքան անբան կը դարձնէ բանաւոր կոչուած մարդ արարածը... եւ իբրեւ թէ Աստուծոյ պատկերով ստեղծուած ենք մենք:

- Հետաքրքրական է, ըսաւ բժիշկը քմծիծաղով, այն ատենուան գրաքննիչները ի՞նչ փոթորիկ պիտի հանէին, եթէ ներկայի ամենէն գովուած ու վաճառուած գիրքերը եւ շարժանկարի Ֆիլմերը տեսնէին... կ'երեւի խորոյկնե՞ր պիտի վառէին:

- Ո՛վ գիտէ, թերեւս անոնք յարատեւ յաճախորդներ կ'ըլլային «արուեստ»ի այդ անառակ ու գոհհիկ գործերուն: Իսկ խեղճ Հենրի Միլըրը, որ ծնած էր Նիւ Եորքի մէջ, եւ ստիպուած եղաւ տասը տարի ապրիլ Բարիզ ու հոն ազատօրէն արտադրել իր լուսագոյն վէպերը, որոնց հրատարակուիլը, նոյնիսկ ներածուիլը արգիլուած էր Միացեալ Նահանգներուն մէջ: Եւ զարմանալի չէ՞, որ նոյն ատեն յայտնի գրադատներ զինք այս երկրին մեծագոյն գրողը կը հռչակէին: Մարդ կ'ամչնայ, գիտէ՞ք, միայն յիշելով որ երբ Միլըր փորձեց Բարիզէն այցելել Անգլիա՝ զինք բռնեցին մաքսատան մէջ, եւ Լոնտոնէն ետ զրկեցին Պրանսա՝ իբրեւ վտանգաւոր յանցապարտ... այս հատորը գրած ըլլալուն մեղքին համար: Իսկ հիմա անոր բոլոր գիրքերը անարգել կը տպագրուին ու կը ծախուին հոս: Բայց այսքան երկար ժամանակ պէտք էր, ապուշ կեղծիքի մը քօղը պատուելու համար: Ի՛նչ ամօթալի զաւեշտ մըն է այս ամբողջը, այնպէս չէ՞...:

Ան ակնարկը յառած էր ինձի, չեմ գիտեր թէ խօսքերո՞ւս մտիկ կ'ընէր, կամ սոսկ դէմքիս լարուած արտայայտութիւնը կը դիտէր: Եւ ըսաւ.

- Պատճառը թերեւս այն է, որ մարդիկ միշտ վախցեր են իրենց կարծրացած համոզումներուն կամ վարժուած կենցաղին մէջ որեւէ փոփոխութիւն ընդունելէ: Անոնք խորհեր են, թէ իրենց ընթացիկ ըմբռնումներէն ու բարքերէն որեւէ շեղում կա՛մ նուիրական աւանդութիւն մը պիտի քանդէր եւ կամ ծանր աղէտներ պիտի բերէր իրենց գլուխներուն վրայ: Այդ պատճառով՝ մարդիկ յաճախ մերժեր ու չարչարեր են, նոյնիսկ խաչեր ու գլխատեր են նոր հաւատքի մը կամ տարբեր իտէալի մը քարոզիչներ, նաեւ հետեւորդներ: Մեր ասպարէզին մէջ անգամ, որ ընկերութեան բոլոր խաւերուն միայն բարիք կ'ընծայէ եւ ոչ ոքի չարիք կը հասցնէ, եղբր են բազմաթիւ մեծ բժիշկներ, որոնք իրենց կատարած նոր գիտեբուն համար հալածուեր ու անարգուեր են, մինչեւ որ անոնց հնարած դեղերուն ու կերպերուն արդիւնքներով անթիւ կեանք ր փրկուեր են եւ հետըզհետէ սրբուեր են ամէն ընդդիմութիւն ու թշնամանք: Այնպէս որ, հակառակ բոլոր հարուածներուն՝ կը տեսնէք որ արդարութիւնն ու ճշմարտութիւնը կը քալեն առաջ, թէեւ յաճախ տաժանքով ու շատ դանդաղ... նոյնիսկ մեր բարեկամ Հենրի Միլըրին համար:

Երկուքս ալ լռեցինք պահ մը: Յետոյ ան հարցուց.

- Կը յուսամ ամէն անհրաժեշտ տեղեկութիւն տուին ձեզի վաղուան գործողութեան մասին... շատ վախցուցի՞ն ձեզ, աւելցուց ժպտելով: Նախ վարանեցայ: Ի՞նչ պատասխան տայի անոր, երբ իմ մէջ տակաւին պղտոր ու տարտամ էին մտորումներս: Բայց ըսի իրեն.

- Հարկաւ կը հասկնամ, որ վտանգաւոր վիրահատում մը պիտի ըլլայ: Եւ բնական է, որ ամէն մարդ, երբ կը կանգնի կեանքի ու մահուան սեմին վրայ՝ կ'ունենայ ափսոսանքի ու երկիւղի զգացումներ: Իսկ ես... ի՞նչպէս բացատրեմ: Անցեալին ինձի զարկած ամէն տազնապ փորձեր եմ թեթեւցնել, խորհելով թէ ան կրնար աւելի ծանր ըլլալ...: Հիմա, այս կացութեան հանդէպ ալ ես ջանացի ինքզինքս համոզել, - Նայէ՛, ըսի ես ինձի, դուն արդէն 65 տարեկան ես եւ այդ ժամանակին 60 տարիները ապրեր ես իբրեւ յաւելեալ շա՛հ, եկուր այդքանով գոհացիր, եւ...:

- Ի՞նչպէս թէ իբրեւ յաւելեալ շա՛հ, ընդմիջեց բժիշկը զարմացած: Կեանքի ձեր իրաւունքն է, որ ապրած էք մինչեւ այսօր, եւ դեռ գալիք տարիներ ունիք:

- Ո՛չ բոլորովին, պատասխանեցի դառն շեշտով: Ինձի համար ատիկա ճիշդ չեղաւ: Թերեւս տեղեկ էք: 1915-ի նախորդ եւ յաջորդ տարիներուն, Թուրքեր շուրջ երկու միլիոն հայ մարդիկ, կիներ ու մանուկներ ջարդեցին, մեր մայր երկրին, Հայաստանի մէջ: Ատիկա ցեղասպանութեան առաջին ոճիրն էր: Այդ թուականին ես հինգ տարեկան էի եւ զոհերու խումբին հետ: Եւ դիպուածի քմահաճ խաղ մըն

էր պարզապէս որ զիս փրկեց անոնց սուրէն ու փամփուշտէն: Յետոյ, շարք մը արիւննոտ կոփուներու եւ աղէտներու մէջէն վերապրեցայ եւ ահա՛ հոս հասած եմ: Բայց միշտ նոյն մտածումը կը տանջէ զիս, - թէ 1915-ին ես ալ սպաննուած պիտի ըլլայի... ուրեմն անկէ ի վեր անցած 60 տարիները ձրի՛ ապրած եմ, չէ՞ք կարծեր, աւելցուցի դառն ծրիծաղով:

- Իսկ դուք չէ՞ք հաւատար որ Նախախնամական՝ ձեռք մը հաւա- նորէն պաշտպանած է ձեզ եւ...:

- Ո՛չ, ատիկա ընդունելի չէ՛... որովհետեւ եթէ Նախախնամա- կան ձեռք մը յօժարէր միջամտել մեր սոսկալի ողբերգութեան... ինձմէն առաջ՝ բիրաւոր ուրիշ աւելի անմեղ, շնորհալի եւ իմա- տուն հոգիներ պէտք էր ազատէր թուրքերուն զժոխային կոտորածէն:

- Ա՛հ, այդպէ՞ս, բայց չեմ կարծեր որ դուք ճակատագրապաշտ էք, ըսաւ ան հանդարտ ձայնով:

- Օ՛, ո՛չ, պատասխանեցի: Տեսէ՛ք, ոչի՛նչ գրուած է ճակտիս, ո՛չ լաւ, ո՛չ վատ, եւ այժմ ձեռքովս շփեցի ճակատս... Ի՛նչ ճակատագիր որ պիտի բաշխուի ինձի վարի նկուզներուն մէջ՝ տոբոթոր, ձեր մատ- ներուն ու նշրբակներուն կողմէ պիտի գրուի:

- Եւ ան բարի պիտի ըլլայ, յարեց բժիշկը զուսպ ժպիտով ու ելաւ ոտքի: Ուրեմն վաղը առաւօտ կը հանդիպինք դարձեալ, աւել- ցուց ու յամբ քայլերով հեռացաւ:

Քիչ յետոյ երեք այրեր եւ երկու կիներ ներս մտան ու կարգով շարուեցան անկողինիս կողքին: Միջին տարիքի անձեր էին, չորսը ձերմակ եւ միւսը սեւամորթ, բոլորն ալ ինձի անձանթ: Մինչ զար- մացած կը նայէի անոնց՝ անոնք բացին իրենց կուրծքերուն մինչեւ կէսը եւ ցոյց տուին վերէն վար երկարող կարերու վարդազոյն սպիները:

- Տեսէ՛ք, ըսաւ պեհներ տարեցը զուարթ ձայնով, մենք ալ հոս ունեցանք open-heart surgery եւ բոլորս ալ ողջ-առողջ ենք... դուք ալ վախնալու պիտո՞ճառ չունիք:

Անոնք դրկուած էին հիւանդանոցի վարչութեան կողմէ, զիս սրտապնդելու համար: Կարճ զրոյց մը ունեցանք եւ շնորհակալու- թիւն յայտնեցի իրենց, որ եկած էին զիս ոգեւորելու: Բայց յանկարծ շար փափաք մը խայթեց միտքս.

- Իսկ աւելի արդար պիտի չըլլա՞ր, որ սիրտի նոյն գործողու- թենէն հինգ վերապրողներուդ հետ՝ գոնէ նմոյշի համար մէկ հատ ալ... մեռած բեքէիք: Բայց փորձութիւնը վանցի հեռու եւ մենք բաժնուեցանք որպէս բախտակից բարեկամներ:

Յետոյ յաջորդաբար եկան հիւանդապահ աղջիկներ ու տղաք, զիս պատրաստելու համար վաղուան հանդիսաւոր արարողութեան:

Կը յուսայի որ բոլորը գիտէին թէ ի՛նչ կ'ընէին եւ ինչո՛ւ: Որովհետեւ ես ոչի՛նչ կը հասկնայի անոնց արարքներէն: Ամէն մէկը զինուած կուզար իր մասնաւոր գործիքներով, - ներարկումի ասեղներ, գու- նագեղ դեղահատներ, օճառուած տաք ջուրի պարկեր...: Բայց կ'ե- րեւի բոլորն ալ նոյն նպատակը կը հետապնդէին, - թոյլ չտալ որ շար- շարուած խեղճ մարմինս քիչ մը հանգիստ գտնէր եւ ես կարենայի խառնակ միտքերս կարգաւորել: Արդէն գիշերուան մութը կը թանձ- րանար պատուհանէն դուրս եւ քանի որ ընթրիք պիտի չտային ինձի, կը կարծէի թէ այլեւս զիս խանգարող պիտի չըլլար, եւ խորունկ շունչ մը առնելով աչքերս փակեցի:

Հագիւ կոպերս սկսեր էին ծանրանալ, երբ երիտասարդ մը աղ- մուկով մտաւ սենեակ, ետեւէն քաշելով անիւաւոր սեղան մը, վրան ամաններ, գործիքներ ու կտորներ: Ան կանգնեցաւ սնարիս մօտ, նայեցաւ ինձի եւ շեշտակի ըսաւ.

- Բարի իրիկուն, իմ անունս Պապ է, ես հիմա ձեր մարմինը պիտի ածիլեմ: Կը ջանամ շուտ վերջացնել որ յետոյ քնանաք:

Եւ արագ շարժումներով վերմակս մէկ կողմ նետեց եւ սկսաւ զիս մերկացնել:

- Իսկ ինչո՞ւ վրայէս ամէն բան կը հանէք... պաղ է եւ կը մսիմ, գանգատեցայ:

- Որովհետեւ ձեր մարմինին բոլոր մասերը, վիզէն մինչեւ ոտ- քերը, պէտք է մաքուր ածիլեմ, յարեց անտարբեր:

- Բոլոր մասե՞րը ըսիք, ատիկա ամօթ չէ՞, հարցուցի ապշած:

- Ամօ՞թ, բայց անշուշտ չէ՛, մարդ Աստուծոյ, ասիկա իմ ար- հեստս է, եւ ինձի համար ամբողջ մարմինը նոյն մորթով ծածկուած է:

Յետոյ սպունգը թաթխեց ամանին մէջ եւ դեղնորակ տաք օճա- ռով պատեց զիս: Եւ սկսաւ փոքր գործիքով մը ածիլել կուրծքս, մէջքս, ազդրերս եւ մինչեւ ոտքերս: Յաճախ կը նետէր գործիքը եւ նոր մը կ'առնէր: Շեղրերը այնքան սուր էին, որ հագիւ կը զգայի անոնց սահիլը մարմնիս վրայէն: Ան չափազանց բժախնդիր էր: Ածիլուած մորթս կը սրբէր եւ վրան դիպուածով մնացած մէկ հա- տիկ մագն ալ խնամքով կը կտրէր:

- Իսկ ինչո՞ւ այսքան զգոյշ պէտք է ըլլաք որ...:

- Բժիշկներու պահանջն է, յարեց ան աշխատանքը շարունակե- լով: Անոնք չեն ուզեր որ նոյնիսկ մէկ մաղ մնայ ձեր մարմինին վրայ եւ դիպուածով իյնայ բացուելիք սիրտին եւ երակներուն մէջ եւ կարուի անոնց հետ... ատիկա կրնայ ծանր հետեւանք ունենալ:

- Իրա՞ւ, ըսի խնդալով... հապա ժամանակին բժիշկներ կային, որոնք ներքին գործարաններու վիրահատում կատարելու ստենին՝ դանակ ու մկրատ կը մոռնային ներսերը եւ այդպէս կը կարէի՛ն...

- Ա՛, ատոնք հազուադէպ պատահարներ կ'ըլլային եւ ժողովուրդը կը չափազանցէր իր երեւակայութեամբ:

Արդէն ուշ էր, երբ մեկնեցաւ ան, չոր ու մաքուր սաւաններ փռելով անկողինիս վրայ: Իսկ ես անոնց մէջ երկնցայ ալլեւս հանգիստ, դէմքս դարձուցած պատին, աշխարհքէն խզուած՝ աւելի կատարեալ առանձնութիւն մը գտնելու համար: Եւ խառն վերլիչումներ ու գաղափարներ, տխուր կամ գուարթ, սկսան զիրար հալածել միտքիս մէջ: Անոնք անհամբեր անապարանքով կը խուժէին իրարու վրայ եւ կը փորձէին տիրել խոհերուս ու զգացումներուս, կ'երեւի վախնալով թէ շատ կարճ ժամանակ մնացեր էր իրենց եւ ինծի: Եւ կը մտածէի ես ալ, - ուրեմն վաղը առաւօտ կուրծքս պիտի բանային եւ սիրտիս մայր երակներուն փճացած մասերուն վրայ նոր կտորներ պիտի կարկանդէին: Դէ՛հ, անշուշտ ատիկա ատամնարոյժի մօտ երթալու եւ վնասուած ակոյալ մը լեցնել տալու պէս պարզ արարք մը պիտի չըլլա՛ր:

Բնական էր, որ ամէն այր կամ կին, փոյթ չէ թէ ի՛նչ տարիքի մէջ կամ ընկերային ի՛նչ դիրքի վրայ դիմադրաւէր գերազմանի մըղձաւանջը՝ ափսոսար որ շատ կանուխ էր դեռ, եւ անկատար իղձեր ու գործեր ունէր տակաւին, որոնք կ'ուզէր վերջացնել եւ անոնց համար յաւիտեանի կը կարօտէր: Եւ ես յանցաւոր էի, երբ կը յիշէի կէս մնացած գիրքեր ու ծրագիրներ, որոնք կը բաղձայի աւարտել, բայց որոնք տասնեակ մը տարիներու յարատեւ աշխատանք եւս կը պահանջէին ինձմէ: Սակայն մահուան շուքին տակէն քալող ո՞ր մարդը կամ կինը երբեւիցէ ընդուներ էր, թէ ինք այլեւս փակեր էր իր կեանքին հաշուետետրը բոլոր մուտքերով եւ ելքերով: Ուրեմն, կը խորհէի, գերազոյն իմաստութիւնը կը մնար համակերպիլ անոր վկայած շահի ու կորուստի գումարներուն: Եւ անտրտունջ ենթարկուիլ անոնց դատաստանին:

Եւ կարծես բնագործէն, վաղուան վտանգալի գալիքին հանդէպ անձկութիւնս կը շրջուէր անցեալի ստոյգ իրականութեան: Ամէն կենդանի հոգի, կ'ըլլէի ես ինծի, որոշ հանգրուանի մը հասած՝ պիտի բաժնուի իր մարմինէն եւ պիտի լուծուի տիեզերական դատարկութեան մէջ: Լա՛ւ, հաւանական է, որ վաղը առաւօտ, բփչկներու նշարակներուն թէկուզ ճարտար վիրահատման տակ, դիպուածին քրժայքով ես ալ անցնիմ վախճանական պատուարը եւ մտնեմ շիրիմներու անէութեան մէջ: Ուրեմն հոն ամէն ապագայ պիտի փակուի ինծի համար, - այլեւս ո՛չ արեւ պիտի տեսնեմ, ո՛չ ծով, ո՛չ անտառ ու ծաղիկ, ո՛չ լեռներ ու ձորեր, պարուրուած իրենց կախարդանքով: Եւ այլեւս պիտի չզգամ մարդկային հրճուանքներ ու վիշտեր, եւ պիտի չփայփայեմ անձնական իղձեր ու ընկերային երազներ:

Լա՛ւ, լա՛ւ...: Ուրեմն ինծի կը մնային մինչեւ այդ ոչնչացման պահը ապրած տարիներս, իրենց չարով ու բարիով, իրենց վաստակով ու վատնումով: Եւ միտքիս մէջ հրաշկէ տառերով կը գրուէր նոյն անողորմ հարցումը, - արժա՞ծ էր այդ կեանքը ապրած ըլլալս: Եւ մահուան դէմ պիտի կանգնէի տխրօրէն ամօթահա՞ր, անոր ապարդիւն ամուլթեան համար: Թէ՛ քիչ մը ուրախ գոհունակութեամբ, որ մինչեւ ներկան, 65 տարիներս, կրցան ոչնչութեան ստորոտէն մէկ-երկու թիզ բարձրանալ վեր, դէպի համեստ արժէքներ:

Յանցաւոր յաւակնութեամբ, ինքզինքիս թոյլ տուի ենթադրելու, թէ զղջալու եւ ամչնալու պատճառներ չէի ունեցած անցեալիս համար: Մեր սերունդէն բիւրաւորներու նման՝ ես ալ 1915-էն ետք, զրկանք, անօթութիւն, շարչարանք, արիւն ու աղէտ ճաշակեր էի տարբեր երկիրներու մէջ: Բայց ատոնց զուգընթաց՝ խորունկ համոզումներ եւ լուսաւոր իտէալներ ընդգրկելու եւ անոնց ծառայելու քաղցրութիւնն ու հրճուանքը քաղեր էի: Գաղափարի ընկերներու եւ մտերիմ բարեկամներու անձնուէր գործակցութիւնը, անոնց սիրտի ու միտքի հաղորդումին ընծայած ջերմութիւնը՝ ճշմարիտ հաճոյքի վերածեր էին հանրային աշխատանքի դառնութիւնն ու տաժանքը:


Յուսալքումի եւ հոգեկան տուայտանքի պահեր ճնշեր էին զիս հարկաւ: Սակայն նոյնիսկ անոնց յաճախանքին տակ, ինքզինքս զգացեր էի հպարտ եւ երանելի հա՛յր, պարզապէս մտածելով Հայաստան հայրենիքի ու պետութեան զմայլելի վերականգնումին եւ հայ ժողովուրդի հրաշալի վերածնունդին մասին: Անոնց պայծառ իրականութեան ճառագումը մշտապէս գրահեր էր կամքս ու ոգիս, եւ լուսաւորեր էր ամենէն մթին օրերս:

Վերլիչեցի դարձեալ, որ անկարելի ցնորքներ չէի հետապնդած, իրբեւ կեանքի նպատակներ: Թերեւս երբեք դպրոց գացած չըլլալուս կարօտին համար՝ մանուկ տարիքէս անհուն սէր ունեցեր էի գրականութեան հանդէպ եւ կրցեր էի գրել ու հրատարակել շարք մը գիրքեր, թէկուզ խոնարհ արժանիքով: Յանկացեր էի հասնիլ սփիւռքահայ համայնքներու դատողութեան ու յոյզերուն, եւ շուրջ յիսուն տարի, որպէս գրող ու խմբագիր, խօսեր էի երիտասարդ ու չափահաս սերունդներու: Եւ թերեւս յաջողե՞ր էի նորակերտ Հայաստանի հանդէպ անխարդախ սիրոյ ու բացարձակ հաւատքի, հայ ժողովուրդի հողային իրաւունքներուն հատուցման համար տեւական պայքարի, ազատութեան գաղափարին բիւրեղացման եւ հայոց լեզուին ու մշակոյթին հաւատարմութեան քանի մը բեղմնաւոր հունտեր ձգել արթուն միտքերու մէջ: Կարգ մը կենսական ձեռնարկներ ծրագրելու եւ իրագործելու մէջ նշանակելի դեր մը կատարեր էի: Եւ առաւել՝ մարմին ու շունչ առեր էր հօրենական օրինակով բազմանդամ ըն-

տանժոք մը կազմելու վաղեմի երազս, վեց բարի, խելացի ու հա-
յազորոշմ գաւակներով, որոնք իմ անձնական երջանկութեանս մեղ-
րահամ աղբիւրները եղած էին իրենց ծնունդէն մինչեւ ներկան:

Ուրեմն այս բոլորէն աւելի այլեւս ի՞նչ կ'ուզէի կեանքէն, յա-
ւերժ ապրի՞լ: Բայց իրաւունք ունէի՞ այդքան ազատ ու պահանջկոտ
ըլլալու, եւ ինչո՞ւ...: Երիտասարդ տարիքիս անգամ, ճոխ կենցաղի,
աշխարհիկ գուարճութեան ու վայելքներու խայծերը չէին գրաւած
զիս, եւ հիմա, կեանքիս մայրամուտին չէր որ անոնք պիտի հրա-
պուրէին երեւակայութիւնս: Ապրած տարիներուս հաշուեկշիռին
հանդէպ՝ գոհութիւն մը կը համակէր զիս: Եւ կը զարմանայի, որ
վաղուան վիրարութեան որեւէ վտանգին դէմ, ո՛չ ափսոսանք
կը զգայի, ո՛չ ցաւ, եւ ոչ ալ երկիւղ: Եթէ պիտի իջնէ վախճանական
շեղբը՝ թող այդպէս ըլլայ, կը մրմնջէի խաղաղօրէն: Նոյնիսկ այդ
պահին հանդէպ պայծառ սփոփանք մը կը զօրացնէր զիս, - որ եթէ
վերջապէս ու վերջնապէս հասած էր մեկնելուս ժամանակը՝ պիտի
կրնայի անխռով հանգստանալ մայր հայրենիքի հողին վրայ, այրուած
մարմինիս անկեններուն խառնուելովը Հայաստանի սրբազան փոշիին:

Եւ ասիկա գերագոյն վարձատրութիւնս եւ երանութիւնս պիտի
ըլլար: Այդպէս, անդորր նինջով մը փակուեցան աչքերս եւ առաւօտ
կանուխ զիս արթնցուցին բիրտ ներկային մէջ:



Արեւը ծագած էր կապոյտ երկինքի մը վրայ: Իսկ անկողինիս
շուրջ՝ ղեզազատներ, ներարկում եւ աշխոյժ շարժումներ: Երկու
երիտասարդներ զիս փոխադրեցին մահիճիս կողքին բերուած անի-
ւաւոր սեղանին վրայ, ծածկեցին սաւանով ու վարեցին դուրս, վե-
րելակէն իջեցուցին գետնայարկ եւ տարին գործողութեան սենեակը:
Ապշահար դիտեցի բոլորտիքս, զմայլելով փայլուն մետաղէ եւ ապա-
կիէ սարքերուն, գործիքներուն ու կազմածներուն վրայ, որոնք
հէքիաթներու աշխարհէն բերուած հրաշագործ կախարդներ ու դեւեր
կը յիշեցնէին: Սպիտակ հագուած աղջիկներ ու բփռիկներ, դէմ-
քերնուն ճերմակ դիմակներ, անդադար կը դառնային, կարծես
աննպատակ:

Չգիտցայ թէ ո՛ր ասեղն էր, որ հաշմեր էր ջիղերս, զգայարանք-
ներս ու միտքս: Բայց ինծի թուեցաւ թէ ժամանակը ծփուն եթերի մը
կը վերածուէր: Քանի՞ վայրկեան կամ ակնթարթ տեւեր էր, եւ ահա
ես անջատուեր էի սեղանին վրայէն ու կը լողայի չրջապատի առար-
կաներուն մէջէն թափանցելով, բայց առանց անոնց դիպչելու:
Ինծի մօտեցող մարդոց ու կիներու լարուած դէմքերը կը սուզուէին

պղտոր մշուշի մը մէջ եւ անոնց մրմունջները կը լուծուէին ոչինչին
հետ: Եւ ես անմարմին, շոգիացած կը թեւածէի անջրպետին մէջէն,
ճերմակ-վարդագոյն ամպերու վրայ: Այլեւս խզուած էի աշխարհէն
ու կեանքէն, բայց իբրեւ հեռաւոր պատրանք, կը զգայի թէ տակաւին
կենդանի էի: Կարծես գոյութեան դարպասէն ելած էի եւ փրփուրէ
թեւերով կը սաւառնէի դէպի անգոյութեան միգամածը: Ուրեմն հա-
սեր էի ապրելուն եւ չապրելուն սահմանագլուխին վրա՞յ: Եւ յան-
կարծ երկինք, տիեզերք ու ես՝ չբացանք անթափանց խաւարի մը մէջ:

Իրիկուան մութը արդէն կը թանձրանար պատուհանէն դուրս,
երբ թարթիչներս բացի: Եւ նօսրացող մառախուղի մը մէջէն տեսայ
հիւանդապահ աղջկան գլուխը կախուած վրաս, լայնաբաց աչքերը
սեւեռած ինծի: Ան իր երկու ձեռքերով մեղմ ապտակներ կը զարնէր
այտերուս ու բարձր ձայնով կը կանչէր.

- Արթնցէ՛ք, հայտէ՛, արթնցէ՛ք... կը բաւէ որքան քնացաք,
հայտէ՛, ալ աչքերնիդ բացէ՛ք, արթնցէ՛ք...

Ես անոր շուրջ կը նշմարէի հարագատ դէմքեր, իբրեւ ստուե-
բային ուրուականներ եւ կը լսէի մտերիմ ձայներ, որոնք անձկու-
թեամբ կը խօսէին հետս փղձկող բառերով, հեռաւոր շշուռի մը նման:
Բայց կը զարմանայի, որ չէի ճանչնար զանոնք, եւ չէի հասկնար
անոնց խօսքերը: Մինչ աղջիկը, համբերատար ու կարեկից, կը կրկնէր.

- Դէ՛, ալ արթնցէ՛ք, հերի՛ք է քնանաք, հայտէ՛, արթնցէ՛ք...

Իսկ ես, տակաւին թմրած գիտակցութեամբ, կը տրտնջայի են-
թագիտակցութեանս մէջ, - ա՛հ, ո՛րքան խաղաղ եւ երանաւէտ է այս
քունս, աշխարհի տաժանքներուն ու վիշտերուն անհազորոգ: Հիմա
ինչո՞ւ կ'ուզեն ինձմէ խլել այդ երջանիկ անդորրութիւնը, հիմա ին-
չո՞ւ կ'ուզեն զիս արթնցնել հոգերու՝ եւ ցաւերու բիրտ իրականու-
թեան...:

Մինչեւ յաջորդ առաւօտ քնացեր էի անգիտակից թմրութեան մէջ:
Երբ աչքերս բացի այլեւս լման սթափած՝ հիւանդապահ աղջիկը
կանգնած էր կողքիս: Ան մէկ ձեռքով ինծի երկարեց մատնոցի չափ
գաւաթ մը, որուն մէջ շորս փոքր ղեզազատներ կային, - կարմիր,
դեղին, կանանչ ու կապոյտ, - եւ միւսով՝ բաժակ մը ջուր տուաւ.

- Ասոնք բոլորը միասին առէք, ըսաւ պարզապէս:

Յետոյ զգուշօրէն, աջ ու ձախ կողմերուս վրայ դարձայ անկո-
ղինիս մէջ եւ հաճելի զարմանքով գտայ թէ որեւէ ցաւ չէի զգար:
Եւ մարմինիս բոլոր մասերը կրնայի շարժել, ուրեմն ամբողջ էի...:

Յամբօրէն դիտեցի շուրջս: Միջակ սրահ մըն էր, ուրիշ վեց մա-
հիճներով, որոնց մէջ պառկած հիւանդներն ալ ենթարկուած էին
վիրարութեան ծանր գործողութեանց: Եւ կը կարօտէին յարասեւ
ու ամբողջական խնամքի: Քանի մը շարաթ ետք հիւանդանոցէն ինծի

զրկուած ահարկու հաշուեցոյցէն յայտնուեցաւ, որ այդ բաժանմունքին մէջ պառկելուս ամէն մէկ օրուան իբրեւ ծախք՝ 350 տոլար կը գանձէին...

Իմ անկողինիս զխուն վերեւէն, մետաղէ շարժական կեռերէ կախուած էին չորս թափանցիկ տոպրակներ, որոնցմէ վար իջնող ծակուած լարերուն ծայրերու ասեղները մխրճուէր էին վիզիս ու թեւերուս երակներէն ներս, որոնց մէջ արիւն, սնունդ ու ջուր կը ներարկէին: Իսկ մահճակալիս աջ կողքին, գետնին վրայ տեսայ երեք դոյլեր, որոնց մէջ մարմինէս կը կախուէին երեք խողովակներ, պարանի նման: Անոնցմէ երկուքէն՝ անորոշ գոյնով հեղուկներ կը կաթէին դոյլերուն մէջ, իսկ երրորդէն՝ արիւնի փրփուր կը պղպջակուէր դուրս: Մարմինիս բոլոր կողմերէն այդքան ելեկտրական թելերով ու քառուչուկէ դատարկ լարերով կապանքուած՝ կը նմանէի բանտարկեալի մը, որ շղթայուած էր իր շարժարանքի սեղանին:

Պահ մը ետք թեւերս քաշեցի կուրծքիս վրայէն եւ զգոյշ շարժումով վերմակս վերցուցի ու նայեցայ ներս: Ապշութեան եւ երկիւզի գող մը պատեց գիս: Այլանդակ, ահաբեկիչ երեւոյթ մըն էր տեսածս: Պաշտօնէս մինչեւ պորտ, լանջուակրիս կեղորոնէն, չորս մատնաչափ լայն վիրակապ մը փակցուած էր: Իսկ անոր ստորոտին բացուած էին երկու ծակեր, որոնց մէջէն մատիտի չափ հաստ խողովակ մը անցուած էր, որուն ձախ ծայրը ձգուած էր դուրս, իսկ աջ կողմէն ան կը հասնէր մինչեւ դոյլը, ուր ներսս կտրտուած ու կարուած, բայց դեռ չսպիտացած միւսերէն եւ երակներէն սուզուող արիւնը կը քամուէր: Այլ չկրցայ գիտել իրանիս վարի հատուածը եւ ծածկոցս քաշեցի մինչեւ վիզս:

Փորձեցի նայուածքիս մէջէն ջնջել գիս շրջապատող տուայտանքի կազմածներուն պատկերները: Բայց ի զուր: Անոնք հոն էին, այդ պարկերը, լարերն ու դոյլերը, ելեկտրական թելերն ու զանոնք սնուցանող մեքենաները, որոնք ահաբեկիչ տեսարան մը կը պարզէին: Աջ կողմի սախուլ ու համր գործիքը, բռնած բարակ զրիչով՝ իմ սիրտիս զարկերուն քարտէզը կը գծէր թուղթի լայն ու անվերջ երկզի մը վրայ: Իսկ ո՞վ այդ կոյր լրտեսին տուած էր նման իրաւունք մը:

Կային ուրիշ սարքեր ալ, բայց ինչ որ գիս կը զայրացնէր՝ դիմացս գրուած սեւ զանգուածն էր: Կ'ուզէի աչքերս շրջել անկէ, մինչ ակնարկս յաճախ կը յառէր անոր, կարծես բնագոյաին մագնիսէ մը կարթուած: Եւ կը դիտէի անոր տափակ ու քառանկիւն երեսը, որ հեռատեսիլի ճակատին վրայէն նմանէր: Անոր մէջտեղէն, աջէն դէպի ձախ, մութ ապակիին վրայէն կապոյտ լոյսի գիծ մը կը սահէր եւ հաւասար միջոցներ անցնելով կը ծռէր վար քանի մը մատնաչափ, մլաւիւնի մեղմ ճիւղով մը: Յետոյ կ'ելլէր վեր եւ նոյն թելով կը շարու-

նակէր իր անտարբեր, անողորմ սողոսկումը: Եթէ յանկարծ խղուէր այդ կապոյտ գիծին համաչափ զնացքը եւ քմահաճ կատակով մը ան մարէր իր լոյսը... վերջակէ՛տ նաեւ իմ կեանքիս: Ի՞նչպէս կարելի էր համակերպիլ եւ ընդունիլ նման գաւեշտական մահափճիւտ մը: Եւ մէկէն բուռն փափաք մը ունեցայ նետուելու առաջ եւ խորտակելու այդ բախտագուշակ վհուկը: Դառն քմծիծաղով թօթուեցի գլուխս ու փորձեցի խնդալ: Սակայն ինչպէ՞ս: Երբ կը խորհէի թէ այդ անզգայ, անողորմ, անկենդան պողպատէ կազմածները պիտի որոչէին իմ ապրիլս կամ մեռնիլս: Ուրեմն ի՛նչ, ես կեանքի քարափէն կախուէր էի մահուան անդունդէն վա՛ր, սա դիմացի ելեկտրական հրէշին կապոյտ լոյսին թելէ՞ն...

Գիտէի, թէ վիրահատութեան ժամերուն՝ իմ թոքերս «փլցուցեր» էին, որ անոնք շնչելէ դադրէին եւ արիւն չպահանջէին սիրտէս, որ նոյնպէս անգործութեան մատնուէր էր իր մայր երակներուն վիրահատման հետեւանքով: Եւ նոյնպէս արուեստական առժամեայ սիրտ մը կը կատարէր անոր դերը: Ուրեմն այդ երկար շրջանին ես ապրեի էի արուեստական թոքերով, որոնք թթուածին հայթայթելով մաքրեի էին արիւնս, եւ արուեստական սիրտով մը, որ անոնց գտած արիւնը մղեր էր մարմինիս բոլոր մասերուն: Հիմա, ինծի տուած էին ճերմակ քառուչուկէ փափուկ ձեռնոց մը, որուն մէջ որոշ ժամերու պէտք էր փչէի ամբողջ ուժովս եւ ուռեցնէի զայն, որ թոքերէս ներս սպրդած փշրանքներ դուրս գային եւ անոնց շնչատուութեան մկանները վերագտնէին իրենց նախկին վարժութիւնը:

Թերեւս քաղցած ըլլալուս համար էր, որ կէսօրուան ճաշը շատ համեղ թուեցաւ ինծի, անհաւատալի երեւոյթ մը որեւէ հիւանդանոցի մէջ: Հազիւ պնակները տարած էին, երբ ճերմակ գոգնոցով գեղանի աղջիկ մը եկաւ եւ ձեռքի տուփը սեղանին վրայ դնելով ըսաւ.

- Քիչ վերջ ձեր այցելուները պիտի գան: Կ'ուզենք որ ձեզ տեսնեն մաքուր եւ... գրաւիչ: Այո՞: Ուրեմն ես հիմա պիտի ածիլեմ ձեր դէմքը: Կը յուսամ ձեր այրական հպարտութիւնը չ'ըմբոստանար, եթէ կնոջ մը ձեռքը ածիլէ ձեզ...

Ան գուարթօրէն քրքջաց եւ ես խնդալով յարեցի.

- Բայց անշուշտ ո՛չ: Ընդհակառակը: Ինծի համար մեծ հաճոյք պիտի ըլլայ ածիլուիլ ձեզի պէս գեղեցիկ կնոջ մը քնքոյշ մատներով: Միայն երբ կոկորդիս հասնիք՝ գիս ձեր նապաստակը չկարծէք եւ ածելիս դէպի ներս չխրէք:

- Ո՛չ իսկ կաթիլ մը արիւն պիտի տեսնէք, ըսաւ ժպտելով: Ասուած գիտէ որ արդէն բաւական արիւն քամեր են ձեր մարմինէն, աւելցուց կարեկից շեշտով մը:

Յետոյ սկսան գալ այցելուներ, - հարազատներ, ընկերներ, բա-

բեկամներ, ծաղկեփունջներ ու քաղցրեղէն բերելով: Մեր զրոյցները ուրախ էին, բոլորին դէմքերուն վրայ ծիծաղ կար:— Հա՛րկաւ, պատճառը պարզ է, դիտել տուի իրենց, որովհետեւ եթէ զիս ողջ-առողջ հոս բերելու տեղ վարի մեռելատունը տանէին՝ այն ատեն ամէն մէկերնիդ 10-20 տողարի կորուստ պիտի ունենայիք, փոխան ծաղկեպսակի նուէր տալով...:

Քանի մը օրէն զիս փոխադրեցին վերի յարկերէն սենեակ մը: Բժիշկէն խնդրած էի, որ ինծի շնորհէն առանձին տեղ մը, եւ հոն տեսայ թէ միւս անկողինը պարապ էր, ուրեմն մինակ էի եւ պիտի կրնայի խաղաղօրէն գրել ու կարդալ, առանց խանգարուելու անձանօթ ընկերակիցի մը աղմուկէն, տաղակալի զրոյցներէն, եւ հեռատեսիլի իր նախընտրած յայտագիրներուն ժտորէն:

Յաջորդ առաւօտ, վիրահատման մասնակից բժիշկներէն մէկը այցելեց եւ երբ զիս ողջունեց՝ ձայնին մէջ ինքնագոհ հպարտութեան մը շեշտը կար, որ կարծես կ'ըսէր.

— Տեսա՞ր, մենք քեզ ազատեցինք...:

Ան բարձր հասակով, թուխ ու գեղադէմ հնդիկ մըն էր, որ Ամբրիկա ուսանելու եկած էր հեռաւոր Հնդկաստանէն եւ սիրտի մասնագէտ դառնալէն ետք, զինք պահէր էին հոս:

Մինչ սովորական հարցումներ կ'ընէր ինծի, ան ժամացոյցը հանեց եւ աջ ձեռքին մասներով սեղմեց բազկերակս ու սկսաւ համբել լարուած ուշադրութեամբ: Յետոյ վերմակիս տակ գտաւ ու սեղմեց աջ ոտքիս բխամատը, դարձեալ ուշադիր հաշուելով: Երբ այդ գրահաշիւը աւարտեց, վրայէն ծածկոցը վերցուց ու երկար պահ մը նայեցաւ իրանիս, որ յօշոտուած ու կապանքուած զանգուածի մը կը նմանէր:

Հարեւանցի քննեց զայն եւ ըսաւ գոհունակ ժպտելով.

— Հոյակա՛ւ, այո՛, ձեր վիճակը գերազանց է: Եւ դեռ ոչ մէկ բարդութիւն: Իսկ ապաքինումը կուզայ բնականէն աւելի արագ:

Բայց իմ միտքս գրաւուած էր անոր մէկ տարրեր արարքով:

— Տարտո՛ր, հարցուցի, քիչ առաջ բազկերակէն ետք, ոտքիս բխամատին այ զարկերը համբեցիք... ինչո՞ւ, չե՛մ հասկնար... ուրիշ ոչ մէկ հիւանդանոցի մէջ ատիկա ըրին...:

— Օ՛, որովհետեւ անոնք ատոր կարիքը չունէին: Իսկ մենք՝ անցեալ շաբթուն ձեր աջ ազդրին արմատէն երկու ձողիկներ խրեցինք եւ նարնջագոյն հեղուկը ներարկեցինք, երակներուն վիճակը քտուեցելու համար, այնպէս չէ՞...: Լա՛ւ, երբեմն կը պատահի որ միւսի փշրանք մը կը մտնէ սրունքին գլխաւոր երակին մէջ եւ կը փակէ անոր անցքը, արիւնին հոսանքը խափանելով: Եթէ անմիջապէս չբացուի խցկումը եւ չզարմանուի, մահացու կրնայ դառնալ: Այդ

պատճառով ամէն օր նաեւ պիտի սեղմեմ ձեր ոտքին բխամատը, անոր զարկերն այ հաշուելու համար: Եթէ բնական են, ուրեմն որեւէ վտանգ չկայ: Իսկ եթէ արիւնը արգելքի հանդիպի եւ չի հասնիր հոն՝ պէտք է ձեր սրունքին վրայ անմիջապէս նոր վիրահատում մը կատարենք եւ երակին ներսը մաքրենք: Առ այժմ անոր վիճակը լաւ է...: Ուրիշ որեւէ հարց ունի՞ք:

Նախ վարանեցայ: Յետոյ,

— Կարծեմ թէ, ըսի տատամսելով:

— Լա՛ւ, ի՞նչ է, տեսնե՛մ:

— Արդեօք հնարաւո՞ր է կատարել զիւս մը, որ մարդոց մեռնելէն ետք ողջ պահէ անոնց գիտակցութիւնը:

— Սակայն ինչո՞ւ, զարմացած հարցուց ան:

— Վստահ չեմ, մրմնջեցի... բայց աշխարհի վրայ այնքան չարագործներ ու բռնաւորներ կան, որոնք այս երանելի, գեղեցիկ կեանքը ոճիրներով ու տառապանքով կ'ապականեն: Եթէ անոնք գիտնան թէ գերեզմանը իրենց վատ արարքները պիտի շթաղէ... եթէ յիշեն թէ մարմինով մեռնելէ ետք իրենց գիտակցութիւնը կենդանի պիտի մնայ, եւ պիտի տեսնեն գործած աղէտներուն արդիւնքները, պիտի լսեն անոնց գոհորուն ողբերը եւ նզովքները... թերեւս, ո՞վ գիտէ, խցճահար խուսափին այդ մեղքերէն, չէ՞ք կարծեր...:

Ան գուարթօրէն խնդաց եւ յարեց.

— Ա՛հ, ուրեմն դուք կ'ուզէք որ նոր տեսակ դժոխք մը ստեղծենք, այս անգամ երկինքին մէջ, եւ անոր պատիժներէն վախնալով՝ մարդիկ երկրի վրայ աւելի բարի ապրին, այնպէս չէ՞:

— Ո՛ր, դժոխքի վախէն չէ՞, այլ իրենց խիղճերո՞ւն... Բայց հարկաւ գիտեմ որ ատիկա անկարելի ցնորք մըն է, ըսի դատն շեշտով:

— Այո՛, մենք առայժմ կարելիին նայինք, եւ ատիկա ձեր կատարեալ հանգիստն է: Հիմա քիչ մը քնացէք, մինչեւ այցելուներուն պահը:

Հիւանդապահ աղջիկը մահիճիս շուրջի սպիտակ վարագոյրը քաշեց սնարիս մինչեւ միւս ծայրը, զիս բոլորովին բաժնելով չըջապատէն, եւ մեկնեցան միասին:

Ամէն առաւօտ կը բերէին յաջորդ օրուան ճաշերուն ցուցակը, որ կը պարունակէր անունները բոլոր արտօսուած ուտելիքներուն՝ նախաճաշի, կէսօրուան ճաշի եւ իրիկուան բնթրիքի համար: Եւ հիւանդներ կը նշանակէին իրենց ընտրածներուն դիմաց: Անոր վրայ կային, ինծի թոյլատրելի, միս, հաւ, ձուկ, ապուր, հաւկիթ, լուրիս, գետնախնձոր, ստեպոյն, բանջարեղէն եւ անուշեղէն, նաեւ հաց, մեղր, կարագ, կաթ, մածուն, պաղպաղակ, զովացուցիչ բովելիներ, սուրճ, թէյ, պղպեղ... գրեթէ ամէն տեսակ ուտելիք առանց խզի,

բայց երբե՛ք աղ: Իսկ ինձի համար իսկական տաժանք էր միտով, հաւով, ձուկով ու կանանչեղէնով կերակուր ուտել առանց աղի: Տարբեր առիթներով խանդրեցի, որ գոնէ պողպանց մը շնորհին ինձի: Բայց ամէն աղերս մնաց սպարդիւն: Եւ յուսահատ, առտու մը ճաշացուցակին կեղրոնի պարսպ միջոցին վրայ կարմիր գրիչով ու մեծատառ տպագրեցի, - I WANT SALT ! Եւ երեք անգամ զայն ստորագծեցի: Սակայն այդ աղաղակիս ալ խուլ մնացին: Այն ատեն ճարահատ՝ տունէն աղաման մը մաքսանենդեցի ներս եւ սկսայ փորձակով ճաշել: Կարճատե եղաւ հաճոյքս: Առտու մըն ալ երբ հակիթին քիչ մը համ կ'ուզէի ապա՝ աղամանս չգտայ... Ինձմէլ գաղտնի զայն առեւանգեի էին բժիշկին հրահանգով: Բայց աւելի պարսակելի՛ն, երբ հիւանդանոցէն արձակեցին գիտ, գոյքերուս հետ իմ թանկագին աղամանս ինձի չդարձուցին: Եւ նոյնիսկ անոր զինը, 75 սե'նթ, չգեղչեցին իրենց ինձի զրկած շուրջ 20,000 տուարի ահարկու պահանջագրէն...:

Այդ առաւօտ հնդիկ բժիշկը արագ քայլերով մտեցաւ անկողինիս եւ կանչեց զուարթ ձայնով.

- Հիմա ձեզ պիտի ազատենք ձեր բոլոր կապանքներէն:

Եւ ան սկսաւ, հիւանդապահ աղջկան օգնութեամբ, հեռահեռ արձակել մարմնիս մէջ հեղուկներ ներածող եւ ներքին սպիացող վէրքերէն քամուող արիւն կամ ուրիշ մերժուող նիւթեր արտածող ամէն լար ու պարան: Յետոյ ծածկոցը վերցուց վրայէս եւ բռնեց կուրծքիս փրակապին վերի ծայրէն ու յամբօրէն քաշեց զկայի վար: Զարմացայ, որ զայն հանեց առանց նուազագոյն ցաւ պատճառելու: Յետոյ նոյնքան զիւրին բաժնեց ազդրիս արմատէն մինչեւ ծունկս փրակապը: Նախեցաւ սպիներու կարմիր գիծերուն, փափկօրէն չոյեց պանոնք:

- Գերազանց արդիւնք, բաւ գոհունակ ժպտելով: Այսքան արագ սպաքինում հազուադէպ կը տեսնենք: Ձեր մարմինը ինքզինք նորոգելու բացառիկ յատկութիւններ ունի: Ասոր նման փրարութեական գործողութեան մը ենթարկուած հիւանդը մենք 12-14 օր կը պահենք հոս: Բայց պիտի կրնանք ձեզ տուն զրկել ութ օրէն: Ուրախ կ'ըլլաք, չէ՞:

- Հարկաւ, բսի գարմանքով: Գոնէ հոն կրնամ ազատօրէն շարժիլ, գործի երթալ, գրե՛լ...

- Բայց կը տեսնեմ որ արդէն հոս ալ պարսպ չէք մնացած եւ բաւական թերթեր լեցուցեր էք ձեր վէպին համար... միայն թէ պէտք է գարձեալ խստօրէն պատուիրեմ ձեզի, որ սառացի կերպով գործադրէք ձեզի արուած կանոնները: Ձեզի համար արգիլուած ուտելիքներու ցուցակը ունիք արդէն: Յետոյ տեւական հանգիստ պիտի բնէք, պիտի շոգանիք, օրական քանի մը մզոն պիտի քալէք, հանրային

հաւաքոյթներէ եւ ժողովներէ պիտի խուսափիք, որ յուզուելու առիթներ չունենաք... այս պայմաններով պիտի կրնաք ձեր կեանքը բաւական երկարել:

- Մէկ խօսքով, սոքտոր, դուք ինձի կը պատուիրէք որ սպրել զազրիմ... որպէսզի չմեռնի՞մ, այնպէ՞ս է...:

- Անշո՛ւշտ, չէ՞ որ ամէն մարդ ալ ստիպուած է զին մը վճարել գոյապահելու համար: Միայն՝ ձեզի վիճակուած է առաւելագոյն զրկանքներ կրել:

Հիւանդապահ աղջկը բոլոր կազմածները հաւաքած՝ մեկնած էր: Իսկ բժիշկը նստաւ կողքի աթոռին վրայ:

- Ի՞նչ է ձեր վէպին նիւթը, հարցուց:

- Հայ ժողովուրդի կեանքէն, որ վերջին 70 տարուան շրջանը կ'ընդգրկէ, պատասխանեցի:

- Միայն Հայոց մասի՞ն կը գրէք:

- Ո՛չ, յաճախ նաեւ գրած եմ ամերիկեան միջավայրէ զէպերու եւ զրուակներու շուրջ: Ան այնքան հարուստ է տարբեր նկարագիրներով, - հարուստն ու թշուառը, վայրագն ու հարածուածը, ազնիւն ու շարագործը, սիրոյ ու ստեղծութեան գոհերը... եւ բոլորը կը պայքարին, կը վայելին ու կը տառապին՝ բնկերային սպականութեան նոյն յորձանքներուն մէջ: Վերջին վէպս, որ նոր հրատարակուեցաւ՝ առնուած է Ամերիկայի պետութեան ու ժողովուրդին մէկ ոլորտական շրջանէն, որ Մզ Գարթիական սարսափին տակ խոշտանգուած մարդկային կենցաղը, անոր յուզումները, սէրերը, քայքայումները եւ մտայնութիւնը կը փորձէ պատկերացնել:

- Շատ պիտի փափաքէի զայն կարդալ, կրնա՞ք ինձի օրինակ մը տրամադրել, յետոյ կը վերադարձնեմ, ըսաւ հեզ ձայնով մը:

- Օ՛, անշո՛ւշտ, ինձի համար պատիւ պիտի ըլլար ձեզի նուիրե՛լ Հատ մը... միայն թէ՛ նախ պէտք է հայերէն լեզուն սորվիք:

Երկուքս ալ խնդացինք:

- Լսեր եմ, որ Հայերը շատ տանջուեր եւ կոտորուեր են Թուրքերուն կողմէ: Հիմա՞ ինչպէս է ձեր վիճակը:

- Բաւական լաւ ենք, յարեցի: Թուրքերը մօտ երկու միլիոն անպաշտպան Հայեր ջարդեցին: Անոնք նախ երիտասարդ այրերը Թուրքիոյ բանակին մէջ զինուոր առին 1914-ի մեծ պատերազմին: Զանոնք գաղտնի կերպով հետզհետէ սպաննեցին: Իսկ 1915-ի Ապրիլէն սկսելով՝ մնացած հայութիւնը, ծեր, կին ու մանուկ, տեղահան ընելով աքսորեցին մինչեւ Արարական անապատները, ճամբան անոնցմէ միլիոնաւոր զոհեր ոչնչացուցին սուրով, կրակով կամ քաղցամահ: Վերապրող մարդիկ, կարգ մը վայրերու մէջ դիմադրական կռիւներ մղեցին Թուրք զօրքին դէմ, մանրուք զէնքերով, ճշմարիտ

հերոսամարտներ, որոնցմէ մէկը, «Մուսա Տաղի Քառասուն Օրերը» անունով հոյակապ վէպի մը վերածած է Աւստրիացի վիպասան Յրանց Ուէրֆէլը: Բայց 1920-ին, Թուրքիոյ գործադրած ցեղասպան ոճիւրդէն վերապրած հայերը հիմնեցին ներկայ Սովետ Հայաստանի պետութիւնը, Ռուսիոյ օգնութեամբ: Անկէ ի վեր մեր երկրին բնակչութիւնը երեք միլիոնի հասած է, ուրիշ երեք միլիոն հայեր ալ կը բնակին օտարութեան մէջ...: Հոն, ժողովուրդը սքանչելի յառաջդիմութիւն կատարած է, գիտութեան, ճարտարարուեստի, տնտեսութեան ու գրականութեան մարզերուն մէջ...: Միայն մէկ պակաս ունինք, որ կարենանք Թուրքիոյ լուծին տակ մնացած մեր հայրենիքին գլխաւոր հատուածն ալ ազատագրել:

- Իսկ ի՞նչ է ատիկա, հարցուց:
- Բնակի՛չ, բազմութի՛ւն, մարդիկ ու կիներ՛ր, որ ջարդուածներուն տեղը լեցուի: Եւ դուք կրնաք քիչ մը օգնել մեզի...:
- Ի՞նչպէս, յարեց զարմացած:
- Շատ պարզ կերպով, պատասխանեցի եւ փորձեցի լուրջ մնալ: Դուք չափէն աւելի բնակիչներ ունիք, այնպէս չէ՞...: Եւ հնդիկներն ու հայերը կը պատկանին նոյն արիական ցեղին...: Լա՛ւ, մենք ալ բնակիչի կարօտ ենք: Զէ՞ք կրնար մեզի մէկ-երկու միլիոն հոգիներ նուէ՛ր տալ...:

Երկուքս ալ խնդացինք, բայց մեր ծիծաղին մէջ տիրութեան շեշտ մը կար:

Յետոյ խօսեցանք Թակորի գրականութեան, Կանտիի իրագործած ազատարար ու խաղաղ յեղաշրջումին եւ Նեհրուի քաղաքական իմաստութեան ու բարոյական կորովին մասին, - որոնք քաղաքակիրթ ու քրիստոնեայ Արեւմուտքին՝ ճշմարիտ ազատութեան, արդարութեան ու խաղաղութեան աւելի ազնիւ ու պայծառ ուղիներ կը մատնանշէին:

- Գիտէ՞ք, տղա՛ս, ըսի վարանումով, այս վիրահատումիս նախորդ օրերուն երբեմն կը մտածէի ձեր կրօնական Նիրվանային մասին, անոր երանելի անէացումին մէջ սուզուելու, աշխարհքէն ու մարդոցմէն վեր անոր տիեզերական ոգիին լուծուելու մասին, որ մահուան դէմ հաւատքի ապաստան մըն էր: Մենք տարաբախտ բանաստեղծ մը ունեցանք, որ Նիրվանայի կարօտով տուայտեցաւ, եւ անյոյս օր մը անձնասպան եղաւ... չեմ գիտեր, աւելի չո՞ւտ Նիրվանայի երջանիկ խաղաղութեան երկինքը մտնելու համար...:

- Բայց չէ՞ որ դուք ալ ձեր Արքայութիւնը ունիք, որ աւելի ստոյգ ու անվիշտ յաւիտենական կեանք մը կը խոստանայ արդարներուն, յարեց ան տարակոյսի շեշտով մը:

- Այո՛, միայն թէ քրիստոնեաներու մէջ հազիւ թէ մնացեր են մեր դրախտին ու դժոխքին հաւատացողներ:

Երկուքս ալ լռեցինք: Ան ելաւ ոտքի եւ ձեռքը երկարեց ինծի: - Վաղը առաւօտ կը հանդիպիմ, ըսաւ թախծալի ժպիտով, ու մեկնեցաւ:

Տրամադիր չէի գրելու: Մտայլ խորհուրդներ կը խնուէին գանկիս մէջ, եւ կը հալածէին, կը կոխկոտէին գիրար, ու կը կոտորակէին դրուագներու, լեզուի ու պատկերներու նիւթերս: Պիտի կըրնայի՞ աւարտել երկարօրէն ծրագրուած այս ընդարձակ վէպը, կը հարցնէի ես ինծի, գիտնալով կասկածելի պատասխանը եւ զգալով անոր սուր խայթոցը: Զեռքս բնագոյօրէն տարածեցի կուրծքիս վրայ, քնքշօրէն շոյեցի գայն, յետոյ յանկարծ ուզեցի ափսս մէջ առնել ու ճմլել, խեղդել սիրտս: Ա՛հ, ա՛ն է, այդ անողորմ սիրտս, որ զիս մատներ է մահուան մղձաւանջին մշտական կալանաւորի վիճակին: Ահա՛, երակներու, միսի ու ջիղերու արիւնազանգ կոյտ մը, որ կեանքի ու մահուան ահեղ իշխանութիւն մը կորզած է, բնութենէ՞ն, եւ կրնայ քմահաճ կատակով մը հարուածել իր որեւէ մէկ տէրը, եւ ակնթարթ մը ետք՝ անոր կենսալի մարմինը վերածել անշունչ դիակի: Իսկ դիպուածը ինչո՞ւ նման անդառնալի վճիռի մը իրաւունքը շնորհած է թաղանթի եւ արիւնի այդ պարկին, ինչո՞ւ...:

Չարմանալի չէ՞: Մարդը դեռ կենդանի կը մնայ, եթէ անոր սրունքները իր ազդրերէն սղոցեն, կամ երկու թեւերն ալ խզեն ուսերէն, կամ եթէ աչքերը հանեն, կամ նոյնիսկ եթէ իր ներքին գործարաններէն խոշոր հատուածներ կտրեն ու նետեն գոհիհներու քաղցած շուններուն: Եւ տակաւին՝ անթիւ միլիոնաւոր հոգիներ կան, որոնք կարծուածէն աւելի ուրախ կ'ապրին, առանց հիւզի մը չափ ուղեղի՞...:

Իսկ սի՛րտը, ան կը նմանի անողորմ եհովայի մը... Զգո՛յշ, կը սպառնայ ան ամէն վայրկեան, իմ ցանցիս մէջ երակ մը պայթի, կամ յանկարծ գայրանամ եւ դռնակս կղպեմ յաջորդ քանի մը բարախումին դէմ եւ... վերջակէ՛տ... ու զոհը, որ ըրպէ մը առաջ գուարթօրէն կ'աշխատէր, կը ծիծաղէր եւ երջանկօրէն կը սիրաբանէր՝ կայծակէ զարնուածի պէս կը տապալի գետին, եւ անոր մէջ ամէն շունչ կը սառի, ամէն սէր կը մեռնի, ամէն երազ կը մոխրանայ...:

Կը մենախօսէի ես ինծի վիրաւոր դառնութեամբ եւ զայրոյթով: Եւ կծու լուսանք մը խուժեց շրթներուս վրայ, սիրտիս դէմ: Բայց խղճահար՝ գայն խածի ակուններուս տակ եւ խոհերուս յորձանքը գապեցի: Պահ մը աչքերս փակեցի ու մատներով փայփայեցի լանջքիս սպիները, յետոյ հեզօրէն մրմնջեցի, - Անօրէ՛ն դասալիք, այսքան տարիներ, բոլոր վճիռ սէրերով քեզ սնուցի... թոյլ չառւի որ քնի մաղձը, նախանձի ժահրը, եւ ատելութեան շարաւը տղմոտեն քեզ... կամ չձգեցի որ նիւթի ու փառքի տենչերուն ժանիքները քեզ կրծուտեն... Իսկ դո՛ւն, հիմա ասա՞նկ կը վարձատրես զիս, հա՞...:

Մանր ու ցուրտ լուսիքներն մը կը տիրէր սենեակին մէջ: Եւ լսել կարծեցի ներքին շշուէճ մը, որ սիրտէս կուգար.

- Նայէ՛, աէ՛ր իմ, ինչո՞ւ ապերախ կ'ըլլաս, ինչո՞ւ գիտ կը մեղադրես... Ահա՛ 65 տարի է, որ ես հաւատարիմ սարուկի պէս կրեր եմ ամէն բեռ, որ զիգեբ ես վրաս... անտրտունճ ծառայեր եմ քու բոլոր փափաքներուդ եւ քմայքներուդ, այնպէս շէ՞... հազար գրք-կանքի մատնեցիր ինձի, ամէն հարշարանք նեանցիր դուռէս ներս, եւ պատառ մը հանգիստ շուռիր... եւ անզազար, անհուն սէրերու կոտանքով ու կարօտներով ճմլեցիր զիս... սէ՛ր ժողովուրդի ու հայրենիքի, սէ՛ր հարազատներու, բնկերոճ ու բարեկամի, սէ՛ր մարդէակին եւ գիրի ու գաղափարի, եւ սէ՛ր՝ Սիրո՛՛յ... է՛, ա՛յ մաշեցա՛յ, մեղաւո՞ր եմ ես, հա՞:

Չէ՛, հարկաւ յանցաւոր չէր խեղճ սիրտս: Եւ եթէ այսքան զիմացեր էր, ես պէտք էր խոնարհարար երախտապարտ մնայի անոր: Ամչցայ, որ սկարութեանս մէկ պահուն՝ ես ինձի թոյլ տուեր էի, որ անոր ինքնուրաց ծառայութիւնը ուրանայու, եւ զայն անիրաւ պարսաւի ենթարկելու հարուժեան իջնեմ...:



Երկու առաւօտ ետք զիս արձակեցին մեկնելու եւ ինձի օգնեցին որ հագուեմ ու հաւաքեմ գոյքերս: Բայց ինչո՞ւ երկու հակադիր զգացումներ կը համակէին զիս, եւ մեր տան մէջ ազատօրէն շարժելու եւ աշխատելու հեռանկարին հրճուանքիս կը խոտուէր հիւանդանոցի այլեւս մտերիմ միջավայրէն հեռանալու տիրութիւն մը: Այս անգամ եւս ինձի բերուած էին բարեմաղթանքի ծաղկեփունջեր եւ տուփերով շաքարեղէն: Չանոնք բաժնեցի հիւանդապահ աղջիկներուն, - ճերմակ, սեւ, դեղին ու թուփ - շնորհակալութեանս ջերմ խօսքերուն հետ, իրենց բնծայած անարտունճ, հոգածու ինամքին համար: Յետոյ իջանք բնդունարան, ուր քանի մը թուղթեր այ ստորագրեցի եւ ելանք ապակեպատ լայն դարպասէն դուրս: Մեր ինքնաշարժը սկսաւ սուրալ ծանօթ փողոցներէ եւ ես կը նայէի անոնց մայթերը եզերող փոքր կամ ահագին շէնքերուն: Բայց կը թուէր թէ անոնց շրջապատէն արտօրուեր էի երկար ժամանակ առաջ եւ հիմա գանոնք կը դիակի գաղտնի կարօտով:

Երբ տուն հասայ, հանգիստ էի եւ ուրախ, որ մարմնական տանջանքս դադրեր էր վերջապէս: Սակայն շուտով յոյսերս քանդուեցան յուսալքումի: Հիւանդանոցէն արուած դեղերուն թմրութիւնը հետզհետէ շքացաւ եւ հազիւ սկսեք էի քայլ սենեակիս մէջ, երբ երկկամիս քարերուն պատճառած ցաւերը դարձեալ բռնկեցան այրող

սաստկութեամբ: Կարծես հազած կապար կը սողար ներսս, որ կը ճարակէր երակներուս ու միսերուս մէջ վառելով, յօշոտելով: Կրկին սկսայ առնել տարբեր դեղահամներ, այդ կոտանքին թափը մեղմելու համար: Բայց ի դուր: Բժիշկներ անզօր էին անոր զէմ: Միակ դարմանը՝ վիրարութեան լման գործողութեամբ մը քարերը հանելն էր ներսէս, միայն թէ անհրաժեշտ էր սպասե՛լ, կը կրկնէին: Ժինչեւ որ կարկոնուած սիրտս բաւական զօրանար, նոր վիրահատումէն վերադրելու համար: Եւ վերսկսայ այցեր տալ անոնց, եւ քննութիւններ կրել, ու X Rayի կազմածներուն զիմաց քարացած կանգնիլ:

Չարշարանքի հինգ-վեց ամիսներ անցան: Եւ բարեբախտ օր մը մասնագէտ բժիշկներս - ասոնք տարբեր էին սիրտի մասնագէտներէն, որոնց դերը աւարտած էր այլեւս - համաձայնեցան, թէ վիճակս կ'արտօնէր նոր գործողութիւնը: Եւ զիս սալին ուրիշ հիւանդանոց մը: Հոն ենթարկուեցայ նոյն տալանդի ներածականին: Հարցարան, արիւնի քննութիւն, ասեղով ներարկում, լուսապատկերներ իրանիս ձեւատէն ու թիկունքէն:

- Բայց օրիորդ, ըսի քարտուգար աղջկան, ինչո՞ւ այս թուղթերը նորէն կը լեցնենք... երկու նախորդ ասիթներով նոյն հարցարանը ամբողջացուցեր ենք եւ գանոնք ունիք ձեր քովի պարակներուն մէջ: Ես նոյն մարդն եմ, անունս նոյնն է, ծննդեանս թուականը չէ փոխուած, հայրս եւ մայրս նոյն անձերը կը մնան եւ նոյն տեղեկութիւնները պիտի տամ ձեզի... ուրեմն ինչո՞ւ դուք ձեզ եւ զիս այ կը յոյնեցնէք ի դուր անդր:

- Կանոն է, որ ամէն անգամ նոր հարցարան լեցնենք, պատասխանեց ան անտարբեր, առանց զյուսր վերցնելու գրամեքենային անցուած թուղթին վրայէն:

Գրեթէ ուժասպառ էի, երբ զիս հանեցին 4-րդ յարկը եւ կրցայ պատկիլ հանգիստ անկողնի մը մէջ, բայց առանց հանգչելու եւ նոր տաժանքի մը մասնուած:

Սենեակիս մէջ կային երկու դրացի հիւանդներ եւս, որոնք կը դիտէին հեռատեսիլին վրայ ցուցադրուող գնդախաղի Ժիւրալի մրցումը եւ իրենք այ անզազար կը խօսէին պտալով, զիրար լսել կարենայու համար: Երբեմն ես ինձի հարցուցեր էի, թէ մարդիկ ինչո՞ւ չեն յաջողիր իրենց գայրոյթը գուզել եւ կը հայհոյէին իրանու, որով իրենց անձերը կը նուսասացնեն: Կամ ինչո՞ւ անոնց պատուութիւնն ու խիզճը թոյլ կուտան, որ ուրիշ մարդկային կակ մը սպաննեն: Եւ սակաւ սկսայ հասկնայ միտքի ու հոգիի այն բորբոքումը, որմէ կը բխին նման արարքները: Եւ ես որ մահապատիժի համոզուած հակասակորդ մը կը մնամ միշտ՝ յանկարծ, բնա՞զգօրէն, մրմնջեցի.- Ո՞ւր է սա հանգուցեալ Սամսոնը, զէթ ժամ մը Փղշապցիները եւ ճա-

իրան հանգիստ ձգէր ու գար այս երկու անգամներուն գոնէ չա-
ղակրատ երախները պատուէր...:

Նչգրականներու վաղուան կտրատումին զիս պատրաստել սկսան՝
իրիկուան բնթրիքէն զրկելով: Յետոյ՝ ղեղաճատներ ու ներարկում:
Իսկ աւելի ուշ, օժտուած սաք ջուրով ներքին մասերու լուսացումէն
ետք, եկաւ սափրիչը եւ ամիլեց իրանիս տոաճամասը, վիզէն մինչեւ
անոր ստորոտը: Գիշերուան քունս եղաւ խաղաղ ու խորունկ եւ առ-
տուն առիւնցայ լիապէս կազդուրուած: Ձիս գարձեայ իջեցուցին վի-
րահատման բաժանմունքը: Չգիտցայ թէ ե՛րբ եւ ս՛ր տուեր էին ինծի
թմրեցուցիչը, բայց գիտակցութիւնս ամբողջապէս լքեր էր զիս:
Քանի՞ ժամեր անցեր էին, չեմ յիշեր: Միայն կէտքէն ետք, չեւտար
չչունջնելու մէջէն զգացի այսերուս արուած փափուկ սպասակներ ու
յսել ճնշեց ձայն մը, որ կը կրկնէր.

- Արթնցէ՛ք, այ ժամանակն է, կը բու՛կ որքան քնացաք, հա՛յտէ,
այ արթնցէ՛ք...:

Յաջորդ առաւօտ աչքերս բացի այլեւս սթափած: Հիւանդապահ
աղջիկներ եկան ու քանի մը ղեղաճատներ տուին, բազկերակիս զար-
կերուն եւ արիւնիս գերճնշումին՝ չափերը առին եւ յետոյ նախաճաշ
բերին: Գլուխս վերեւի շարժական երկաթէ կեռերէն երկու տոպ-
րակներ կախուած էին, որոնց երկու թափանցիկ լարերուն մէջէն հե-
ղուկներ կը կաթէին երակներէս ներս, անոնց ծայրերու ասեղներէն:
Իսկ երիկամիս շուրջ բացուած երկու ծակերէ տարբեր խողովակներ
կ'իջնէին գետինը հանգչող պարկերու մէջ: Այս անգամ ելեկտրական
ահաբեկիչ կազմածներ ու թելեր չկային եւ նուազ էին մարմինս կա-
պանքող պարանները:

Ժամը 10-ին երկու բժիշկները եկան այցի: Գլխաւոր վիրաբոյժը
վերմակս վերցուց եւ վարը կտրուած ու ծակուած մասերը քննեց եւ
ընթացիկ հարցումները տուաւ: Յետոյ ժպտելով ըսաւ.

- Գիտէ՞ք, ձեր երիկամէն եւ աւելի ցածէն երկու խոշոր քարեր
հանեցինք, նաեւ յարակից վիրահատումներ բրինք, որոնք անհրա-
ժեշտ էին: Ուրախ ենք որ ձեր վիճակը շատ լաւ է հիմա: Ասկէ ետք
որեւէ ցաւ պիտի չունենաք այդ կողմերէն:

- Երախտապարտ եմ ձեզի, տոբտոր, ըսի... կրնա՞մ հարցում
մը ընել:

- Անշո՛ւշտ, պատասխանեց, հրամմեցէք:

- Ես ինծի կը խորհէի, ինչո՞ւ այս անգամ «քնանայս» տարբեր
եղաւ: Նախորդ վիրաբուժական գործողութիւններու ատեն, երբ
թմրեցուցիչ ղեղին ներարկուածով սկսեի կի անպայանայ... պահ մը,
թերեւս քանի մը վայրկեան, կարծես միջոցին մէջ կը ծիպայի, շուրջս
ոչինչ կը տեսնէի, քայց գիտակցութիւնս վրաս էր, եւ պանդաղ կեր-

պով դէպի անգիտակցութիւն կ'երթար, կ'անէանար: Ըսել կ'ուզեմ՝
տեսակ մը առկախուած կը լողայի կեանքի ու մահուան միջեւ տա-
րածուող եթերին մէջ: Իսկ այս անգամ բոլորովին տարբեր եղաւ,
ինչո՞ւ արդեօք:

- Ի՞նչպէս տարբեր, հարցուց ան:

- Այս անգամ՝ ձեզի եւ ձեր օգնականներուն կը նայէի, թէ եւ
ազօտ մշուշի մը մէջէն... բայց գիտակցութիւնս հետս էր մինչեւ
որոշ գիծ մը... եւ յանկարծ ան ամբողջապէս խզուեցաւ, չբացաւ,
առանց որեւէ միջանկեալի: Ակնթարթ մը առաջ ողջ էի եւ կարծես
կառափնատի շեղբը մէկէն իջաւ ու սպաննեց զայն, դեռ ակնթարթը
չաւարտած... Կրցա՞յ ինքզինքս բացատրել արդեօք...:

- Օ՛, այո՛, այո՛, շատ յստակ կերպով: Ատոր պատճառը այն է,
որ երկու պարագաներուն իրարմէ տարբեր թմրեցուցիչ գործածուե-
ցան:

- Մորֆինի՞ տեսակներ են, փորձեցի ստուգել:

- Չէ՛, հիմա այլեւս մորֆին չենք ներարկեր «քնացներու» համար:
Կ'ուզէ՞ք ձեր ներսէն հանուած քարերը տեսնել, աւելցուց ան:

Առանց իմ պատասխանիս սպասելու, բարեկամ բժիշկս մօտե-
ցաւ անկողինիս, աջ ձեռքը բացաւ եւ ինծի երկարեց երկու ողորկ
քարեր, հակիթի մեծութեամբ: Անոնք բաց վարդագոյն էին, ձերմակ
արատներով:

- Ասոնք էին, որ ձեզ կը շարշարէին, ըսաւ: Կը տեսնէ՞ք, որքան
խոշոր են եւ ժայռի պէս կարծր:

Չանոնք առի ափիս մէջ եւ ապշահար դարձուցի, շօշափեցի
Ուրեմն ատոնք իմ ընդերքէս ներս խորշեր բացեր եւ հոն աներ էին,
ա՞յսքան...:

- Իսկ ինչո՞ւ քարերը կարմրագոյն են եւ ձերմակ կարկտաններ
ունին վրանին, հարցուցի:

- Կարմիրը հարկաւ արիւնի գոյնն է: Կը յիշէ՞ք որ առաջին գոր-
ծողութեան ատեն փորձեցինք երկար աքցանով զանոնք փշրել եւ
դուրս քաշել վարէն: Բայց չկրցանք, որովհետեւ աքցանները իրենք
ձեռքան, փոխանակ քարերը կտորելու: Ուրեմն այդ ձերմակ տեղերը
աքցաններուն ձգած սկրթութիւնն են:

- Ուրեմն այս անօրէն ժայռերը ինծի շարշարելէն զատ ձեզի ալ
բաւական նեղութիւն տուած են, այնպէ՞ս է, ըսի խնդալով:

- Այո, յարեց վիրաբոյժը: Եւ հիմա դիմում մը ունինք ձեզի:
Կը տեսնէ՞ք, այս երկու քարերը բացառիկ երեւոյթներ են իրենց
մեծութեամբ ու կարծրութեամբ: Եւ բժշկական խորհուրդը կը խնդրէ
ձեզմէ, որ անոնցմէ գոնէ մէկը նուիրէք իրեն: Կ'ուզեն զայն քննել
իրենց տարրալուծարանին մէջ, ստուգելու համար թէ ի՞նչպէս այդքան

խոչորցեր են և ինչու՞ աշխարհն արտակարգորէն կարծր են: Կր յուսանք չէք մերժեր:

- Ո՛չ, անչու՞ աշ. եթէ կրնամ որեւէ չափով օգտակար ըլլալ ինչու՞ պիտի հակասակիմ, շատ սիրով: Ո՞ր մէկը կր նախընտրէք, հարցուցի:

- Աւելի մեծը, յարեց ան վարանելով:

Քարը երկարեցի իրեն, բայց յամեցայ յանձնել եւ ժպտելով աւելցուցի.

- Բայց պայման մը ունիմ:

- Այո, կ'ընդունինք, ի՞նչ է:

- Որ քարին վրայ արձանագրուի «Հայկական երիկամային մարմար»:

- Շատ սիրով, ըսաւ, եւ երեքս ալ զուարթօրէն խնդացինք:

Ապաքինող հիւանդներ, ցերեկուան հանդիստի ժամերուն, միջանցքի երկայնքին կը քայլին, թէ՛ իրրեւ մարզանք եւ թէ՛ անկողինի տաղաւկը փարատելու համար: Օրմար երբ հիւանդագահ աղջիկը իմ կարերուս վրայ դեղ կը քէր, տեսայ տարեց մարդ մը, որ կ'երթար միջանցքէն վար: Ան երկու ձեռքերով բռնած էր իր մարմինին ներքին արտածումները դուրս կրող յարերը, որոնցմէ կախուած էին զանոնք ընդունող երկու տոպրակներ: Ես չկրցայ ծիծաղս զսպել: Աղջիկը զարմացած նայեցաւ դէմքիս:

- Ինչու՞ կը խնդաք, հարցուց:

- Նայեցէք այդ մարդուն, ըսի պարզապէս:

Ան դարձաւ, տեսաւ հիւանդը, որ յամբօրէն կը քայլէր, ծանօթի մը հետ խօսակցելով:

- Է՛ր լաւ, ի՞նչ կայ որ, ան իր մարզանքը կ'ընէ:

- Այո՛, բայց լաւ դիտեցէք, կրկնեցի... ան չի՞ նմանիր կնոջ մը, որ կարծես երկուորեակ երեխաներ ծներ է եւ անոնց դեռ չկտրուած պորտերէն վար կախած՝ զանոնք զրօսապտոյտի կը տանի:

Աղջկան հնչեղ ծիծաղով լեցուեցաւ սենեակը, ուր ես այլեւս առանձին կը մնայի, աղմկալի դրացիներուս մեկնելով:

Երբ գործը աւարտած պիտի հեռանար, յանկարծ լրջացաւ ու ըսաւ.

- Հարկաւ ուրախ ենք, որ քանի մը օրէն դուք սուն պիտի երթաք, առողջացած: Բայց գիտէ՞ք, նաեւ տխուր ենք, որ ձեզ կը կորսնցընենք: Դուք անսովոր հիւանդ մը եղաք: Ուրիշներ կը տքան, կը զանգատին, կը պահանջեն... մինչդեռ դուք, ձեր ցաւերուն մէջ անգամ մեզի զուարթութիւն կուտաք... ատոր համար շնորհակալ ենք ձեզի:

Ու զնաց, արագ քայլերով:

Առաւօտ մըն ալ բժիշկը սենեակս մտաւ ժպտելով: Անոր կը հետեւէր հիւանդագահ աղջիկ մը, որ ձեռքին բռնած ափսէին վրայ մանր գործիքներ կը կրէր:

- Կը յուսամ ձեր գիրքը աւարտեցիք, ըսաւ ան զուարթ շեշտով, որովհետեւ հիմա կարերնիդ պիտի քակենք եւ վաղը ձեզ պիտի զըրկենք սուն:

Յետոյ վրայէս ծածկոցը վերցուց: Մարմինիս մէջ խրուած քառուշուկէ նուրբ խոզովակները քաշեց դուրս եւ բացուած ծակերուն փակցուց երկու մատնաչափ կտորներ:

- Ատոնք պիտի չկարէ՞ք որ գոցուին, հարցուցի զարմացած:

- Հարկ չկայ, ըսաւ, միս ու մորթ շուտով կը փակին իրարու եւ կը սպիանան:

Մատներով շոյեց պորտէս մինչեւ վար երկարող կտրուածքին լայն կարերը սեւ մետաքաէ թելով: Յետոյ սուր մկրատ մը առաւ ափսէին վրայէն եւ զգուշօրէն, վարէն դէպի վեր կտրեց կարերը: Երբ աւարտեց՝ աղջիկը թելերը քաշեց ու դրաւ ափսէին վրայի ամանին մէջ: Եւ բամպակի շերտ մը թաթխեց ալքով ու շփեց կտրուած միսերուս կարմիր սպիներուն գիծը:

- Ուրեմն ա՛հա՛, ամբողջացաւ ձեր զարմանումին մեր բաժինը: Վաղը առտու կուգամ վերջին քննութեամբ մը ձեզ սուն ճամբելու համար:

- Շնորհակալ եմ, տոքտոր... միայն թէ՛, երբ որեւէ նոր փորձարկութեան կարիք ունենաք, հաճեցէք ուրիշ մարմիններ ճարել... գիտէք որ իմ կուրծքս, իրանս, ազդրերս այնքան կտրտուած, ծակծրկուած ու կարկտնուած են, որ ալ ողջ տեղ չէ մնացած նոր նշորակումներու համար...:

- Չէ՛, յարեց խնդալով, կը յուսամ այլեւս բնաւ հարկ պիտի չըլլայ ձեր վրայ զանակ ու ասեղ գործածելու:

Եւ հրաժեշտ առնելով անոնք մեկնեցան:

Յաջորդ կէսօրին արդէն երկնցած էի մեր հիւրանոցի բազմոցին վրայ, այլեւս ձերբազատ բոլոր ցաւերէս:

Միւս օրը գացի գրասենեակ աշխատանքի: Հոն թաղուեցայ սեղանիս վրայ կուտակուած բաց ձեռագիրներու եւ փակ պահարաններու դէպին մէջ ու սկսայ յապաղած յօդուածներ սրբագրել ու նամակներու պատասխանել: Եւ կրկին կլանուեցայ ծանօթ գրողներու եւ մտերիմ այցելուներու հետ հաղորդակցութեան հաճելի զբաղումին մէջ: Անցեալ երկու տարիներուն կրած չարչարանքիս ու վաղուան արեւը տեսնելու անստուգութեան մղձաւանջները փարատած էին: Մարմինէս վտարուած էին ֆիզիքական բոլոր ցաւերը եւ հասեր էի երանելի առօրեայի մը, թէկուզ սիրտի եւ ընդերքի գործարաններու կարկտնուած վիճակով:

Ի՛նչ փոյթ, թէ հեռաւոր հոգ մը կը մթնէր մշուշուած գալիքի հորիզոնին վրայ: Կարգ մը մասնագէտ բժիշկներ կը յայտնէին, թէ

սիրտին մայր երակներուն փճացած հատուածներուն պատուաստուած «նոր» երակները շուրջ երեք տարուան կեանք կ'ունենան: Եւ յետոյ... վերջակէ՛տ: Ուրիշ բժիշկներ աւելի առատաձեռն՝ մինչեւ հինգ կամ աւելի տարիներու ժամանակ կը շնորհէին: Իմ սիրտիս վրայի վիրահատումէն ի վեր անցեր են երկու տարի եւ չորս ամիսներ... ուրեմն ի՛նչ: Անցեալին քանի անգամ յուսախար ձգեր եմ տարագիր հայու գլուխիս տազնապ ու ճգնաժամ դաւադրած դիպուածը: Այս անգամ ալ թերեւս կը յաջողիմ ետ մղել զայն եւ կը ձգտիմ բժշկութեան սահմանած առաւելագոյն ժամերո՛ւն... զանոնք լիապէս արդիւնաւոր դարձնելու յոյսով:

Տուն վերադառնալէս քանի մը շաբաթ ետք սկսան ժամանել հիւանդանոցներուն եւ տասնեակ մը մասնագէտ բժիշկներուն հաշուեցոյցները, մանրամասնուած՝ մինչեւ ամենէն մանրուք դեղահատն ու անպէտ ներարկումը: Անոնք, բնական իրաւունքով, ինծի մատուցած իրենց ծառայութեան հատուցումները կը պահանջէին: Ես ելեկտրական հաշուիչ մեքենայ չունէի: Սակայն «ձեռք կայ մէկ»ի աւանդական թուարանութեամբ յաջողեցայ գումարել բոլոր պահանջագիրներուն իմ կողմէս վճարելի թիւերը, - որոնց համախառն արդիւնքը հասաւ աւելի քան 25,000 տոլարի աւարկու գանձին, որ համեստ պետութեան մը տարեկան պիւտճէն կրնար կազմել: Ատոր 20,000 տոլարը անոնց տուաւ Պետական Ընկերային Ապահովագրութիւնը, որուն համար, շուրջ քառասուն տարիներ, ընթացիկ աշխատավարձէս իմ բաժին տուրքս տուեր էի իշխանութեան: Իսկ միւս 5,000 տոլարը մնաց իմ անձնական պարտքս, որ հարկադրուած վճարեցի հետզհետէ, հարազատներու օգնութեամբ:

Բայց նոյնիսկ այդ ծանր բեռին տակ ինքզինքս իրապէս բախտաւոր զգացի: Որովհետեւ, եթէ յանկարծ չար դիպուածով մը, սիրտիս կաթուածին ու միւս հիւանդութեանց աղէտը զիս հարուածէր այդ թուականէն մէկ-երկու շաբաթ կամուսիս, այսինքն՝ 65 տարեկան «երէց քաղաքացի» ըլլալէս առա՛ջ, այն ատե՛ն...: Այն ատեն՝ Ընկերային Ապահովագրութիւնը ոչի՛մչ պիտի վնարէր իմ բժշկական ծախքերուս համար եւ ես ստիպուած պիտի ըլլայի հատուցանել այդ 25,000 տոլարի գումարը... եւ պէտք էր ծախէի անձնական գոյքերս, գիրք, թուղթ ու գրիչ, մինչեւ մաշած գուլպաներս ու կօշիկներս, շապիկս ու գիշերանոցս...: Եւ տակաւին՝ Միացեալ Նահանգներուն նման, պիտի արժանանայի յաւիտեան պարտքի տակ մնալու արտասովոր պատիւին...:

1979, Լոս Անճելոս

ՎԵՀԱՓԱՌԻՆ 20 ՏԱՐԻՆԵՐԸ

Սփիւռքի հայութեան բոլոր համայնքներէն հազարաւոր ուխտաւորներ արդէն կը դիմեն Հայաստան եւ Ս. Էջմիածին, հոն մասնակից դառնալու համար Ամենայն Հայոց Կաթողիկոս, Վեհափառ Վազգէն Ա. Հայրապետի գահակալութեան 20-րդ տարեդարձի տօնին: Բացառիկ երեւոյթ մը, որովհետեւ ան կը վկայէ այն խորունկ ակնածանքին եւ երախտագէտ գնահատանքին ու ճշմարիտ սէրին մասին, որ հայ ժողովուրդին բոլոր խաւերը կը տածեն Մայր Աթոռի շնորհազարդ գահակալին հանդէպ:

Բաղդատաբար անձանօթ հոգեւորական մըն էր Վազգէն Եպիսկ. Պալճեան, երբ 1955-ին Էջմիածնի մէջ գումարուած Ազգային Եկեղեցական համաժողովը անոր գլուխին դրաւ Հայ Եկեղեցիի գերագոյն պետի փառաւոր բայց փշալի պսակը: Եւ ան, առաջին օրէն իսկ, հարկադրուեցաւ դիմագրաւել տազնապի ու տաժանքի բոլոր տեսակները, յաճախ մղձաւանջային չարչարանքով: Իր գլխաւորած Եկեղեցին պառակտումի վէրքը կը կրէր 1933-էն ի վեր Միացեալ Նահանգներու մէջ, իբրեւ հետեւանք Առաջնորդ Գեր. Ղեւոնդ Արք. Դուրեանի սպանութեան պատարագի միջոցին, խորանին առջեւ:

Իսկ 1956-ին ստեղծուեցաւ Անթիլիասի Աթոռին հերձուածու մը, որ բաժանման ու պայքարի խրամատը խորացուց ու տարածեց շարք մը խաղաղ գաղութներու մէջ, զանոնք ցաւագին խռովութեանց մատնելով: Երկար տարիներ, Վեհափառ Վազգէն Կաթողիկոսը, անսպառ համբերութեամբ, սրտառուչ ներողամտութեամբ եւ անսասան հաւատքով բանակցեցաւ, յորդորեց, նոյնիսկ աղերսեց ու ճշմարիտ Հովուապետի գիջողութեամբ յօժարեցաւ ողջագուրուել Անթիլիասի Աթոռակալին հետ, - որ վերականգնի Հայ Եկեղեցիին նուիրապետական միութիւնը: Բայց իր բոլոր ճիգերը մնացին ապարդիւն եւ ան տեւապէս ապրեցաւ սիրտի մորմոքն ու հոգեկան տուայտանքը այդ հերձուածին գոյութեան, մինչեւ այսօր:

Վեհափառ Վազգէն Հայրապետ կրեց նաեւ տառապանքը Երուսաղէմի վանքին ու պատրիարքարանին կեանքը փոթորկող հակամարտ պայքարներուն եւ անոնց պատճառած քէնին ու դառնութեան, մանաւանդ բարոյական ու կազմակերպական կորուստներուն: Եւ դեռ այդ

խոցերը չսպիացած՝ թանկագին ձեռագիրներու գողութեան եւ անոր ամօթալի գայթակղութեան հարուածները նոր անդուհանքով համակեցին բարի հովուապետը: Եւ տակաւին՝ եղան թեմական ներքին դժուարութիւններ, Առաջնորդական վիճելի խնդիրներ, որոնց խաղաղ լուծման համար Վեհափառը ստիպուած կը զգար նաեւ զբաղելու, ուրեմն ժամանակ եւ եռանդ վատնելու վարչական ընթացիկ գործառնութեանց վրայ:

Երբ առարկայօրէն գրուի անցեալ քսան տարիներու անոր գահակալութիւնը վրդովող այս տխուր դէպքերուն պատմութիւնը՝ դառն իրողութիւն մը պիտի յայտնուի:— Թէ հեռաւոր դարերէն մինչեւ ներկան, հազուադէպ եղած է, որ հայ կաթողիկոս մը, իր իշխանութեան այսքան կարճ շրջանի մը մէջ, այնքան արտաքին տազնապներ ու ներքին խռովութիւններ դիմագրաւած ըլլայ, այնքան դաւադիր հարուածներ ու լեղի հիասթափութիւններ կրած ըլլայ եւ հաշտութեան տեսիլքով այնքան աշխատանք, նուիրում ու սէր ընծայած ըլլայ՝ որքան Վեհափառ Վազգէն Հայրապետը: Եւ դարձեալ, հազուադէպ է, որ բոլոր այդ հոգեւոր լուծին տակ, ու բոլոր խափանարար խոչընդոտներուն դիմաց՝ կաթողիկոս մը նոյն միջոցին այնքան հոյակապ իրագործումներ կատարած ըլլայ, այնքան տարբեր ապարհզներու վրայ, եւ այնքան զմայլելի արդիւնքներով՝ որքան Մայր Աթոռի ներկայ Վեհափառ գահակալը:

Ամէն կանխակալ կարծիքի եւ ամէն մութ նախապաշարումի ստուերը պիտի փարատի իրականութեան լուսարձակին տակ: Եւ անոնց հեռահաս տարողութեան հանդէպ, որեւէ անկողմնակալ դատող պիտի հարցնէ զարմանքով, — բայց ինչպէ՞ս հնարաւոր դարձան այդքան բազմակողմանի ձեռնարկներ եւ ինչպէ՞ս անոնք պսակուեցան այդքան արտակարգ յաջողութեամբ:

Իր անձին ներշնչած վստահութեամբ ու իրապաշտ իմաստութեամբ՝ Վեհափառ Վազգէն Կաթողիկոս, իբրեւ Հայ Եկեղեցիի գերագոյն պետ՝ կրցաւ սերտ յարաբերութիւն հաստատել Սովետ Միութեան կեդրոնական կառավարութեան հետ, իր անկեղծութեամբ ու նուիրումով՝ անոր վարիչներուն համակրանքը եւ յաճախ՝ օժանդակութիւնը շահելով: Ստեղծուած այդ բարեացակամ տրամադրութեան շնորհիւ էր, որ ան յաջողեցաւ լայն իրաւունքներ եւ ազատութիւն ապահովել պետական իշխանութենէն՝ Հայ Եկեղեցիին հոգեւոր ու Ֆիզիքական վերականգնումը իրագործելու Հայաստանի եւ շրջակայ երկիրներուն մէջ: Նոյն ատեն պարբերական շրջապտոյտներ կատարելով Սփիւռքի գաղութներուն մէջ, իր խօսքին ջերմութեամբ ու անձին համալքով՝ խանդավառութիւն, զոհաբերելու ոգի եւ ազգային ապագայի հաւատք ներշնչելով տարագիր հայութեան:

Եւ հակառակ ներքին տազնապներուն ու հերձուածային պառակտումներուն, որոնք Վեհափառին տարիները դառնութեամբ ու վիշտով լեցուցին, յաճախ մղձաւանջային սաստկութեան հասնելով, — Հայ Եկեղեցին զօրացաւ ու պայծառացաւ թէ՛ հայրենի երկրին եւ թէ՛ արտասահմանի մէջ: Էջմիածնի ճեմարանը բերքաւորուեցաւ, հին ու դադրած թեմեր կենսաւորուեցան նոր առաջնորդներով: Իսկ Սփիւռքի բոլոր շրջաններուն մէջ, այսօր Մայր Աթոռին հաւատարիմ հոգեւորականները աւելի աճած ու զարգացած են, տաճարները աւելի բազմաթիւ ու գեղակերտ են, եւ համայնքները, քանի մը սերունդով, աւելի նուիրումով փարած են Հայ Եկեղեցիի անցեալ աւանդութեանց ու ներկայ կենսական դերին՝ քան նախորդ տասնամեակներուն:

Դարձեալ, մինչեւ Վեհափառ Վազգէն Հայրապետին գահակալութիւնը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը եւ անոր հովանիին ենթակայ Հայ Եկեղեցին, միջազգային մակարդակի վրայ կամ անտեսուած էին իբրեւ հնագոյն քրիստոնէական հաստատութիւնները, եւ կամ մեղադրուած կը մնային որպէս համայնավար դրութեան հըու գործակատար. ուրեմն կասկածելի, եւ յաճախ հալածուած: Բայց այդ մտայլ պատկերը լուսաւորուեցաւ, երբ իր արտասահման կատարած այցերուն առիթներով՝ Վեհափառ Վազգէն Կաթողիկոս անձնական հանդիպումներ ունեցաւ Հոռմէական Կաթողիկ, Յոյն Օրթոտոքս, Անկլիկան-Եպիսկոպոսական եւ ուրիշ եկեղեցիներու գերագոյն պետերուն հետ, զանոնք խորապէս տպաւորելով իր ջերմեռանդ հաւատացեալի, լայնախոհ ու խաղաղասէր հովուապետի համոզումներով, ոգիով ու արարքներով:

Միացեալ Նահանգներու մէջ մանաւանդ, ուր քաղաքական պաղ պատերազմին սփռած կասկածներն ու ատելութիւնը պղտորեր, թուրաւորեր էին նոյնիսկ բարեացակամ մարդոց միտքերը՝ Վեհափառ Վազգէն Կաթողիկոս յայտնուեցաւ իբրեւ ապշեցուցիչ, անհաւատալի անակնկալ մը: Օտար եկեղեցիներու եւ յարանուանութեանց պետեր, հրապարակով իրենց զարմանքն ու հիացումը արտայայտեցին Հայոց Հայրապետին հանդէպ: Որովհետեւ կը դժուարանային հաւատալ, թէ ի՞նչպէս, համայնավար միջավայրէն եկած հոգեւորական պետ մը, կը խօսէր, կը վարուէր ու կը քարոզէր ազգերու եղբայրութեան, տառապող ժողովուրդներու համար տեսական, արդար խաղաղութեան եւ համամարդկային փոխադարձ սիրոյ առաքեալի մը շունչով, ներշնչուած Քրիստոսի ճշմարիտ հաւատքէն: Եւ Հայ եկեղեցին, ու Էջմիածնի Մայր Աթոռը բարձրացան միջազգային նախանձելի վարկի, եւ արժանացան օտար կրօնապետներու, նաեւ քաղաքական առաջնորդներու ակնածանքին ու համակրանքին:

«Եւս առաւել», — Վեհափառ Վազգէն Կաթողիկոս, իր վարած

Հոգեւորական ծաւալուն գործունէութեան եւ կրած տաժանքներուն մէջէն, եղաւ Հայ Եկեղեցիի պատմութեան գերազանցօրէն շինարար Հայրապետներէն մէկը, եւ ամենէն վաստակաւոր վերակառուցողը, — այդ բառին ամենէն համապարփակ ու վսեմ իմաստով: Մայր Տաճարին վերանորոգումն ու նկարագարողումը, եւ նոր վեհարանին հոյակերտ շէնքը, նաեւ վանքին ընդհանուր զարգացումը՝ շինարարութեան փառաւոր պսակ մը կը կազմեն: Եւ տակաւին, հազարամեայ քանդուած ու դարերով լքուած հայկական վանքերու վերականգնումը, որքան Հոգեւոր, նոյնքան եւ ազգային—պատմական անփոխարինելի արժէքներու փրկութեան սքանչելի ձեռնարկ մը եղաւ, իրբեւ զաղափար եւ իրազործում: Եւ տակաւին՝ իր ժողովուրդին հանդէպ գործով ու սիրով սոգորուած հովուապետն էր ան, որ փակուած կարգ մը եկեղեցիներ յաջողեցաւ նորոգել տալ ու բանալ պաշտամունքի, աւանդապահ ու բարեպաշտ հասարակութեան համար:

Միայն քան տարի Լուսաւորչի նուիրական Աթոռին վրայ: Եւ Վեհափառ Վազգէն Ա. Կաթողիկոս, իր քաղաքական իմաստութեամբ, իր քրիստոնէական անսահման ներողամտութեամբ եւ իր իմացական ու ոգեկան փարթամ յատկանիչներով՝ դարձաւ Հայոց ամենէն շնորհալի եւ անձնուրաց, ամենէն շինարար ու վերանորոգող Հայրապետներէն մէկը, ներկայ փառքի հանգրուանէն դէպի առաւել լուսաւոր գալիքի մը ճամբուն վրայ:

1976

ԱՄԵՆ. ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐԷ

Մովսէս Խորենացիի եղբրաշունչ ողբէն մինչեւ մեր օրերու յուսահատ յանկերգումները՝ յաճախ մեղադրանքի ու պարսաւի դատաստաններ արձակուեր են հայ Հոգեւորականներու դէմ: Ամէն դարաշրջանի պատմագիրներ, որովհետեւ անարատն ու կատարեալը որոներ են հայ եկեղեցիի պաշտօնեաներուն մէջ՝ իրենց այդ անկարելի ակընկալութեան ձախողանքէն հիասթափ, հաւաստեր են, թէ հայ եկեղեցին իր ամենէն անփառունակ վիճակին ինկած է, նիւթապաշտ կամ փառասէր կղերականներու ստեղծած բարոյական քայքայումին հետեւանքով:

Բայց նաեւ, այդ տխրօրէն անշուք շրջաններուն մէջէն բարձրացեր ու բիւրեղացեր են Հոգեւորականներ, որոնք իրենց պայծառ իմացականութեամբ, հաւատքի խորութեամբ ու նկարագրի վեհութեամբ՝ դարձեր են հզօր խորիսխները հայ եկեղեցւոյ նուիրապետական կառուցուածքին եւ մշտավառ փարոսները անոր մտաւոր ու ոգեղէն հոյակերտ ժառանգութեան:

Գարեգին Արք. Խաչատուրեան, բազմապատակ պատրիարքը Թուրքիոյ հայոց, կը հանդիսանայ այդ լուսապսակ դէմքերէն մէկը՝ իր երկարատեւ կեանքին ու բեղուն գործունէութեան հարուստ հունձքովն ու պատկառելի ծաւալովը: Հայ եկեղեցին անցեալ տասնամեակներու ընթացքին եւս յաճախ հռչակուեր է անկեալ, մատնուած իր ամենէն անիշխանական ու չքաւոր վիճակին: Մոռնալով հեռաւոր դարերու առաւել աղէտալի շրջաններ: Մոռնալով մանաւանդ՝ որ 1915-ի ահռելի եղեռնը երբ անճիտեց արեւմտահայ մտաւորականութեան խոշորագոյն մասը եւ ամբողջ սերունդ մը ժողովուրդէն՝ գըլխատած եղաւ նաեւ հայ Հոգեւորականներու դասէն եւս սերունդ մը, — ահաւոր դատարկութեան մը անջրպետը ձգելով երէց ու նորահաս եկեղեցականներուն միջեւ:

Հիմա արդէն իր 80-ամեակի սեմին հասած՝ Պոլսոյ Ամեն. Պատրիարքը կը կանգնի հանրանուէր ծառայութեան ու գրական վաստակի փարթամ պսակին տակ: Իր հիմնական դաստիարակութեան ու ազգային, կրօնական ու մշակութային մարզերով՝ ան ստացաւ Արմաշի վանքին մէջ, ուր կը տիրապետէին Օրմանեան Եպիսկ.ի միտքը,

պատմաքննական ու վարչագիտական տարրերով, եւ Եղիշէ Դուրեան Եպիսկ.ի սաւառնող իմացականութիւնը՝ իր հոգեշունչ ու գեղապաշտ խորութեամբ: Գարեգին Վրդ. Տրապիզոնի կրեց հօր ազդեցութիւնը բանաստեղծ ուսուցիչին եւ իր երկիւղած երախտիքը արտայայտեց անոր հանդէպ՝ Եղիշէ Դուրեան Սրբազանի ձօնելով՝ Նարեկի իր առաջին պերճ ու բարդ թարգմանութիւնը:

Արմաշի այդ կենսունակ, նուիրական միջնորդողը շողախեց ու քանդակեց ոչ միայն նկարագիրն ու կոչումը Գարեգին Եպիսկ. Սաչատուրեանի, այլ նաեւ վճռեց ուղին անոր բովանդակ կեանքին, - հոգեւոր պաշտօններու թէ գրական իրագործումներու ասպարէզներուն վրայ: Իրրեւ առաջնորդ կամ կաթողիկոսական պատուիրակ, ան ծառայեց արեւմտահայ թեմերու, ինչպէս նաեւ Գալիֆորնիոյ ու Հարաւային Ամերիկայի մէջ: Եւ ամէն տեղ, վարչական պարտաւորութիւններ կրելուն զուգընթաց՝ ան եղաւ նաեւ անձնուէր ուսուցիչը իր բանաւոր հօտին եւ անոր նորահաս սերունդին, հաւատքի լոյսին հետ՝ հայ ժողովուրդի լեզուին, պատմութեան ու մշակոյթին փառքը աւանդելով անոնց: Եւ ամէն տեղ՝ գրիչի, գիրքի ու թերթի հմայքը տարածելով, - իրրեւ բանասէր, գրագէտ ու խմբագիր:

Գարեգին Պատրիարք Սաչատուրեանի անձին, գործունէութեան ու վաստակին մէջ կ'անձնաւորուին երկու տարրեր, զուգահեռ կոչումներ ու նշանակէտներ: Առաջինը, բնական է, հայ հոգեւորականի անոր հանգամանքն է, որ առօրեայ գրադումի մը սահմանումէն վեր՝ անոր մէջ թանձրացած յայտնուել է վեհ առաքելութեամբ մը: Քրիստոնէական կրօնի սկզբունքներուն եւ հայ եկեղեցիի աւանդութեանց ու նուիրագործուած օրէնքներուն իր հաւատարիմ փարումը եւ այդ ուխտապահ նուիրումին մեծութիւնը չի նսեմանար որեւէ չափով, վարչական ընթացիկ գործունէութեան մէջ բնական, անխուսափելի վրիպումներէ:

Որովհետեւ էականը՝ առօրեայ ամէն արարքի կամ դատումի բացարձակ ճշմարտութիւնը չէ, - ինչ որ անհնար է ռեւէ մարդկային էակի համար: Էականը՝ անոր մտքին ճշմարտախոյզ յատկանիչն է, անոր շարժառիթներուն անաղարտ նկարագիրն է, անոր անկաշառ հաւատարմութիւնն է իր ուխտին, իր ժողովուրդին գոյատեւման հիմերուն եւ իր հաւատքի բարոյական չափանիշներուն:

Բայց Գարեգին Արք. Սաչատուրեանի դերն ու մեծութիւնը չեն պայմանաւորուիր անոր գրաւած աթոռներով ու վարած պաշտօններով, - թէկուզ ան առաջնորդ եղած ըլլայ Տրապիզոնէն մինչեւ Մարսիլիա եւ Գալիֆորնիայէն մինչեւ Հարաւ. Ամերիկա: Որովհետեւ, ան գերազանցօրէն մտքի ջերմեռանդ աշխատաւորն էր եւ հաւատքի մշակը: Զարմանալի չէ, որ ուր ալ կոչուեցաւ ծառայութեան՝ անոր

առաջին իրագործումն եղաւ կրօնական ամսաթերթի մը հրատարակումը, որուն բովանդակութիւնը սակայն աւելի գրական էր ու պատմական, ազգային էր ու բանասիրական: Ան նաեւ կոչումով ուսուցիչն էր, - խմբագրական աթոռին կամ առեմախօսի բեմին վրայ, դասարանի մը ամպիոնէն կամ եկեղեցւոյ մը խորանէն, որ գիտութեան, ճշմարտութեան ու ոգեղէն գեղեցկութեան իր համոզումներուն լոյսը կը սփռէր եւ ուղեցոյցը կը մատնանչէր:

Սակայն տակաւին՝ անոր մեծագոյն յատկութիւնը՝ իր մտաւորական-գրագէտի տաղանդը, - թարգմանելու, ուսումնասիրելու, արտադրելու անոր սրբազան կիրքն էր: Եւ տասնեակ մը հատորներ անոր գրական բեղուն գործունէութեան թանկարժէք վաստակը կը կազմեն: Իր ինքնաստեղծ գրականութիւնը («Աշխարհի Լոյսն ի Հայս» երկու մեծ հատորներով, «Տարօնաշունչ», «Շողակաթումներ») ներդաշնակ ընդելուզում մըն է հայրենական ոգեկոչումի, անցեալ դէպքերու սրտայոյզ վերլուծումի, կրօնաշունչ յորդորանքի եւ իմաստասիրական որոնումներու, որոնց մէջ իրարու կը հիւսուին բանաստեղծութիւնը, պատմութիւնը, հաւատքին թռիչքը եւ յուշագրութիւնը, հարուստ ու պաճուճուած ոճով մը:

Պաշտամունքի հաւասարող անոր խորունկ սէրը հայկական հին, սրբազան մատենագրութեան ու լեզուին հանդէպ՝ մղեց զինք աշխարհաբարի թարգմանելու Աւետարանը, Եզնիկի «Եղծ Աղանդոց»ը եւ «Նարեկ»ը, երկու անգամ, արձակ ու տարիներ յետոյ՝ չափածոյ վիթխարի հատորի մը մէջ:

Եւ Ամեն. Գարեգին Պատրիարք Սաչատուրեան իր մէջ կը մարմնաւորէ հայ հոգեւորականի այդ թանկագին յատկանիշները: Ան ոչ միայն ոգեշունչ վարդապետող մըն է քրիստոնէութեան դաւանանքներուն եւ աստուածաբանական գիտութեան, ան ոչ միայն հմուտ ու ներշնչեալ ուսումնասիրող մըն է հայ եկեղեցական պատմութեան, այլ ան նաեւ անկաշառելի եւ անսասան ախոյեանն է հայ եկեղեցիի անբաժան միասնականութեան, Ամենայն Հայոց Հայրապետութեան, էջմիածնի Մայր Աթոռի գերագոյն հովանիին տակ: Եւ ինչ պարսաւ ու լուտանք, որ անոպայ ուրախացողներու եւ մունետիկներու կողմէ կը շարտուի անոր՝ աւելի կը բարձրացնէ Նորին Ամենապատուութեան պատուանդանը, աւելի կը շեշտէ անոր բարոյական չափանիշներուն, նկարագրին եւ հանրային ծառայութեան ու գրական վաստակին մեծութիւնը:

Բեղմնաւոր եղաւ նաեւ Գարեգին Պատրիարք Սաչատուրեանի գրիչը: Ոճով մը, որ յաճախ քնարական ու պերճ է, ան արտադրեր է յուշագրական, խորհրդածութեանց, բանասիրական, պատմական ու քարոզներու հատորներ, - որոնց հասարակաց տարրերն են՝ ջերմեռանդ

սէրը Հայ ժողովուրդի իմացական ու ոգեկան արժէքներուն հանդէպ, ձգտումը Աւետարանի լոյսին ու որոնումը ճշմարտութեան, — անհամի եւ ազգի դէպի կատարելութիւն ընթանալուն համար: Եւ 80 տարիներու ալեհեր հասակին՝ ան տակաւին կը մագլցի, անյողող ու պատկառելի, իր ուխտին ու կոչումին հաւատարիմ՝ ծառայութեան բարձունքներէն վեր:

1960

ՐԱՖՖԻՆ, — ՀԱՅ ՄԵԾԱԳՈՅՆ ՎԻՊԱԳԻՐԸ

Արդէն 70 տարիներ են անցեր 1888-ի Մայիս 7-էն ի վեր՝ երբ իր խոնջած աչքերը վաղաժամօրէն փակեց կեանքի լոյսին հայ վիպագրութեան մարգարէաշունչ վարպետը, Յակոբ Մելիք-Յակոբեանը: Անոր գրական անունը, — Րաֆֆի — ազատութեան իտէալի եւ հերոսական պայքարներու խորհրդանիշ եւ հրաւէր դարձաւ յաջորդական սերունդներու համար: Ան ապրեցաւ միայն 53 տարիներ, բայց կերտեց գաղափարական խորքով ու գեղարուեստական հմայքով հիւսուած հոյակապ գրականութիւն մը, որուն կենդանի պատուանդանին վրայէն՝ ան կրնայ իր յաւերժական փառքին մէջ ժպտիլ գալիք դարերուն:

Իր լայնածիր տաղանդին վիթխարի վաստակը եւ անոր կախարդիչ հրապոյրը Րաֆֆին դարձուցին ամենէն ժողովրդական, ամենէն շատ հրատարակուած ու կարդացուած հայ վիպասանը: Բայց իր կենդանութեան՝ ան ճաշակեց նիւթական զրկանքներու դառնութիւնը եւ ապրեցաւ գրական ասպարէզի մը տնտեսական անստղութեան մղձաւանջը:

Միջնակարգ վարժարանի մը 6-րդ դասարանէն՝ Րաֆֆի կը հարկադրուի լքել իր դպրոցական կրթութիւնը եւ Թիֆլիզէն վերադառնալ իր ծննդավայրը, Պարսկաստան, իր հօրը առեւտուրին մէջ աշխատելու համար:

տելու համար: Սակայն հազիւ երիտասարդ տարիքի սեմին հասած՝ Րաֆֆի կը նուիրուի գրականութեան, նախ՝ բանաստեղծութիւններ, պատմութեան եւ ուսումնասիրութիւններ զրկելով Պրիմեան Հայրիկի «Արծուի Վասպուրական»ին, Ստ. Նազարեանի «Հիւսիսափայլ»ին եւ Գրիգոր Արծրունիի «Մշակ»ին եւ հետզհետէ, 1877-8ի ուսթրքական պատերազմէն յետոյ, ան կ'արտադրէ իր մեծ վէպերը:

Բեղուն ու թեւաւոր իր գրիչը, որ քնքոյշ, սիրազեղ յուզումներով կը խոռվէր հազարներու հոգիները, եւ միտքերը կը մտրակէր բռնութեան եւ անարդարութեան դէմ ընդվզումի տենդով ու մարտնչչումի խոյանքով՝ չէր կրնար օրական հաց մը շահիլ բազմաթիւ հարազատներու համար եւ կը ստիպուէր ուսուցիչի ծանր, սպառիչ լուծն ալ կրել իր ուսերուն:

Ուրկէ՞ կը բխին Րաֆֆիի ծաւալուն տաղանդին ներշնչումները: Ինչպէ՞ս կը բացատրուի միջին դաստիարակութեամբ այդ գրողին մէջ իրագործումը գրական վաստակի մը, որ բացառիկ, ապշեցուցիչ է իր քանակին ճոխութեամբ ու որակին բարձրութեամբ, նիւթերու արտակարգ այլազանութեան մը հետ: Արուեստագէտի հատուկ, թափանցող միտք մը, որ կեանքի խաբուսիկ բարուրանքները, կեղծ շպարը ճեղքելով՝ կրնար անոր ամենէն մոռալ ու ողբերգական խորութիւնները սուզուիլ եւ հոն հեծեծող թշուառութիւնը, վէրքերն ու տառապանքը բանալ ճշմարտութեան լոյսին:

Րաֆֆիի փոքր մարմինին բայց լայն լանջքին տակ անհուն էութիւն մը կը տուայտէր երկու հզօր սէրերէ, որոնք սրբազան կիրքերու վերածուեցր ու կը վառէին իր մէջ: Անոնցմէ մէկը, իր գուլթը, իր կարեկցութիւնն էր որեւէ բռնութեան ներքեւ ստրկացուած, որեւէ կեղեքումէ կողոպտուող ու քաղցած մարդկային էակներու հանդէպ, որոնց արդարութեան իրաւունքին պերճախօս փոխան մը կը հանդիսանար ինք: Միւս զգացումը, տարերային ու համապարփակ՝ Րաֆֆիի սէրն էր Հայ ժողովուրդին համար, որ անոր անցեալ փառքերէն մեկնելով՝ կուգար եւ կ'ընդգրկէր ողբերգական ներկան, — որ հալածանքի, հարստահարումի եւ գերութեան ահռելի գոյաՎիճակ մըն էր թրքական բռնակալութեան տակ: Դանդաղ ոչնչացումի օսմանեան լուծէն հայ ժողովուրդին ազատութեան տեսիլքն ու պայքարը՝ ներշնչումի եւ ստեղծագործութեան միւս յորդ աղբիւրներն եղան Րաֆֆիի գրականութեան: Իր վճիտ ու գեղակերտ ոճը ջերմ ու բարախուն երակ մըն էր, որուն մէջէն իր վէպերուն կենդանի նկարագիրները եւ անոնց պայծառ կամ մոռալ գաղափարները, անոնց ասպրած եղբրական յուսալքումները, ազնիւ հրճուանքները, ցաւագին տառապանքներն ու անարգ արարքները կը փոխանցուէին մարդոց հոգիներուն:

Չարմանալի կերպով ճոխ ու բազմակողմանի եղաւ Բաֆֆիի գրական ստեղծագործութիւնը: Ան ծնած էր Պարսկաստան, բնակած Կովկաս, չրջած արեւմտեան Հայաստանի գաւառները մինչեւ Վան եւ Մուշ: Եւ ան, հաւասար ուժգնութեամբ ու վարակիչ յուզումով վերարտադրեց պարսիկ թէ՛ հայ ընտանիքին եւ ընկերութեան դժբախտ, հալածական ու կողոպտուած զոհերուն կեանքի ողբերգութիւնը: «Ոսկի Աֆաղղը», «Հարեմը» «Ամմեղ Վաճառքը», «Անրախտ Հոփսիսիմէն», «Խաս Փուշը, եւ «Խաչագողի Յիշատակարան»ը ու «Սալբի» պատմուածքներն ու վէպերը վաւերագրութիւններ են պարսիկ խաներու եւ հայ վաշխառուներու բռնակալ ու կեղեքիչ մագիւններուն տակ տուայտող թշուառ ժողովուրդին եւ զայն գերութեան շղթաներէն ազատագրել ձգտող գաղափարապաշտ մարդոց ձգտումներուն ու մաքառումներուն: Տարբեր խաւերու շարաշուք ու բարի գործերուն, եղբերական ու վսեմ գաղափարներուն, շահախնդիր կամ անձնուրաց արարքներուն պատկերացումը կուտայ Բաֆֆի միշտ սրտայոյզ ու կենդանի վերարտադրումով:

Բայց գերազանցօրէն՝ ազատութեան գաղափարին առաքեալն եղաւ ան, իր «Սամուէլը» եւ «Դաւիթ Բէկ» պատմական հոյակերտ վէպերով՝ հայ ժողովուրդի հերոսական անցեալէն ապստամբութեան ու կռիւի մարտական ոգին վերակոչելով: Եւ զայն պատուաստելով ժամանակակից սերունդին մէջ, իր «Խնթը», «Ջալալէդդին» եւ «Կայծեր» վէպերով, որոնք հայ ազատագրական պայքարին վիպապաշտ ուղեցոյցները դարձան:

Հայ գեղարուեստական գրականութեան անգերազանց վիպասանը եղաւ Բաֆֆին: Բայց նաեւ հայ ժողովուրդի ազատութեան մարգարէական տեսանողը, որ «Խնթը»ի հերոսին «երազ»ին մէջ նախատեսեց ու պատկերացուց ազատագրուելիք Հայրենիքին գոյավիճակն ու զարգացման ընթացքը, այնքան հարազատ ու համանման մեր վերածնած, «երազային» թափով յառաջդիմող Խորհրդային Հայաստանին, ուր կը փառաւորուի նաեւ Բաֆֆին, իր հոյակապ արուեստին ու լուսեղէն տեսիլքին անչէջ հմայքով:

ԲԱՆԱՍՏԵՂԾ ԵՒ ՈՂԲԵՐԳԱԿ

Աւելի քան դար մը յետոյ իր յօրինած թախծալի քերթուածներուն եւ ողբերգական թատերգութեանց ծնունդէն՝ Մկրտիչ Պէշիկ-թաշլեան այսօր տակաւին կը մնայ կենդանի համբաւ մը եւ սրտում դէմք մը հայ գրականութեան մէջ: Եթէ ժամանակի հարթող գլանին դէմ՝ զգացումի, խորհուրդի ու գեղեցկութեան տարրերով վերապրիլը գերազոյն վկայութիւնն է գրական վաստակի մը ճշմարիտ արժէքին՝ ուրեմն Մ. Պէշիկթաշլեանի բանաստեղծական տաղանդը սուեր է այդ ապացոյցը:

Որովհետեւ իր ծնունդէն (1828) 130 տարիներ ետք եւ իր մահուան (1868, Դեկտեմբեր 11) 90-րդ տարեկիցի այս օրերուն, Մկրտիչ Պէշիկթաշլեանի քերթուածներուն վարակիչ յուզումը, անոնց մտածումներուն ազնիւ ու յանդուգն թափը եւ անոնց քնարական գեղումը, մանաւանդ անոր բանաստեղծական կամ արձակ տողերէն յորդող ջերմեռանդ հայրենասիրութիւնը դեռ կը պահեն իրենց զօրութիւնը: Անոր եղանակուած քերթուածները, որոնք ազգային գերութեան, հալածանքի ու թշուառութեան շրջանի մը տխրութիւնն ու տուայտանքը եւ անոնց ընդելուզուած ընդվզումը կ'արտայայտեն՝ հիմա չեն երգուիր վերածնունդի ուրախ ու ցնծալի տրամադրութեան մէջ: Բայց անոնք, հայ ժողովուրդի ազգային վերագարթնումին եւ խրմորուող ազատագրական պայքարին ամենէն քնարական ու հօր մարտակոչները եւ զանոնք սնուցանող ձգտումներուն ամենէն յորդաղբիւրներէն եղան:

Հազիւ քառասուն տարի ապրեցաւ Մկրտիչ Պէշիկթաշլեան եւ ինկաւ՝ զգետնուած գրկանքի ու տառապանքի մահացու ախտէն, որ իրմէ ետք, տակաւին պիտի խամրեցնէր կենսախայտ տաղանդները Պետրոս Դուրեանի, Միսաք Մեծարեանի, Վահան Տէրեանի, Մատթէոս Զարիֆեանի եւ ուրիշ գրողներու եւ արուեստագէտներու: Սակայն կեանքի այդ կարճատեւ շրջանը դարձաւ բեղուն ու բազմակողմանի: Ան եղաւ միաժամանակ ուսուցիչ, բանաստեղծ, թատերագիր, ատենաբան ու հանրային գործիչ:

Դարաշրջանի մը մէջ, ուր միջազգային գրականութեան վրայ կը թանձրանար վիպապաշտ մթնոլորտը եւ ինքնանպատակ գուտ արուեստը

կը հռչակուէր իբրեւ սրբազան դաւանանք՝ Մկրտիչ Պէշիկթաշլեան, դաստիարակուած ու սնած ըլլալով հանդերձ անոնց ներշնչումներով, վէպերով ու քննթուածներով՝ դարձաւ, ներկայ սահմանումով ձրգտումնաւոր բանաստեղծութեան առաջապահ մը:

Իր տաղանդը, սրտառուչ հարազատութեամբ կը ցոյացնէ նաեւ իր խառնուածքին, իր ամբողջ էութեան նկարագիրը, - խաղաղ, քնարաշունչ ու գեղապաշտ: Սիրազեղ իր սիրտին ու սաւառնոց ոգիին եւ ժամանակի պահանջներուն մղումներով՝ Մ. Պէշիկթաշլեան զգացումով թաթաւուն քերթուածներ գրեց կոյսի ու ժպիտի, լճակի ու ծաղիկի, աղջիկի ու մանիշակի, բոյրի ու գեփիւտի մասին:

Տակաւին ոչ միայն բիւրեղացած՝ այլ նոյնիսկ կազմաւորուած չէր աշխարհարար հայերէնը: Եւ Պէշիկթաշլեան յաջողեցաւ, ժամանակի գրաբարսառն արուեստակեալ լեզուով կերտել բանաստեղծական ոճ մը, որ պարզ, հաղորդական ու պատկերաւոր էր: Նոյնիսկ սիրային ու հովուերգական իր երգերուն մէջ՝ մինչ սողերուն երաժշտական թաւալը կը փայփայէ զանոնք արտասանող զգայուն շրթները՝ անոնց ներքին թախիժը, իր վարակիչ տրամութեամբ կը թափանցէ հոգիներէն ներս:

Բայց բոլոր այդ սէրերէն գերիվեր տարփանք մը համակեր էր Մ. Պէշիկթաշլեանի բովանդակ էութիւնը: Ատիկա իր հոգիին մէջ ճարձատող հրեղէն սէրն էր դէպի հալածական ու եղբարբարստ հայ ժողովուրդը եւ գերութեան շղթաներուն մէջ հեծեծող ու ամայացող հայրենիքը: Մշտապա կիրքի մը նման՝ այդ սէրը կը տիրապետէր անոր բոլոր տենչերուն ու կարօտներուն, անոր բոլոր հոգերուն ու ցաւերուն: Եւ երբ կ'երգէր հովին ու առուակին հմայքը, երբ կ'երգէր կուսական գեղեցկութեան կախարդանքը՝ անոնք վրայ, սեւ մղձաւանջի մը նման կը սաւառնէր արտասուող Մայր Հայաստանի թշուառ ուրուպատկերը եւ անոր կեղեքուող ու կոտորուող զաւակներուն ողբերգութեան յաճախանքը:

Եւ բնականօրէն ան կը մերժէր զով ու անուշ հովիկը, որ առաւօտուն կը խաղար կոյսի փափուկ մազերուն հետ, կամ անտառին մէջ սէր գեղգեղող թռչնիկը, կամ քաղցր մրմունջով հոսող ջինջ վտակը, որովհետեւ հայոց հայրենիքէն չէին գար անոնք: Մինչդեռ ան կը ցանկար գտնել ու ողջունել Հայաստանի աւերակներուն վրայ շրջող թռչունն ու գեփիւտը եւ շոճիներուն մէջէն սողացող առուակը, որովհետեւ՝

«Նոքա հառաչք եմ հայրենեաց
Նոքա չերթա՛ն սրտէս ի բաց»:

Պէշիկթաշլեանի սէրը հայ ժողովուրդին եւ հայրենիքին հանդէպ չէր սահմանափակուեր բանաստեղծական սրտառուչ սողերուն մէջ: Հայոց ազգային ազատութեան իղձն ու տեսիլքը ան կը զարգացնէր ու կը պատգամէր իր քերթուածներով, ողբերգական թատերախաղերով (Արշակ, Վահէ, Վահան, Կոռնակ) եւ իր ճառերով, որոնք ոչ միայն հայոց հին փառքերը կ'ոգեկոչէին, այլ նաեւ նոր ազատագրումի ուղին կը մատնանշէին:

Մօտ դար մը առաջ, երբ ոչ մէկ յեղափոխական հոսանք կար հայկական գաւառներուն ու գաղութներուն մէջ՝ Պէշիկթաշլեան վարակիչ յուզականութեամբ երգեց Զէյթունի ապստամբութեան դիւցազնամարտը եւ ինկած ռազմիկին շրթներուն դրաւ անձնուրաց նահատակի յորդորը, ուղղուած իր մօր.

«- Թրփաց մայրքի բող լան՝ ու դուն
Ուրախ լուրքի տար ի Զէյթուն»:

Դաւանական վէճերու հանդէպ՝ միութեան եւ եղբայրութեան հզօր կարգախօսը երգեց: Որովհետեւ հայոց ազգային փրկութեան ու ազատութեան տենչը կլաներ էր Պէշիկթաշլեանի միտքը, սիրտը, ամբողջ էութիւնը, որոնցմէ քնարական բայց այրող գեղումով կը հոսէր իր քերթուածներուն ու թատերագութեանց, իր ճառերուն ու դասախօսութեանց մէջ: Զարմանալի չէ, որ իր մեղմ, քնքուշ, խաղաղասէր նկարագրին հակառակ՝ ազգուրացը ամենէն անողոք դատաստանին ենթարկելու եւ ժողովուրդի ծոցէն վտարելու խստագոյն դատավճիռը կուտար: Եւ Մկրտիչ Պէշիկթաշլեան յաջողեցաւ ըլլալ քնարաշունչ բանաստեղծ եւ ազգային ազատագրական պայքարի առաջապահ, եւ անոր գործն ու յիշատակը թանկագին աւանդ են նաեւ ներկայ սերունդներուն համար:

1958

ՇԻՐՎԱՆՉԱԴԷԻ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ

Հայ գրական վերածնունդի ամենէն ականաւոր կերտողներէն մէկը եղաւ Ալեքսանդր Մովսիսեանը, - Շիրվանզաղէն, իր բազմակողմանի ու խորունկ տաղանդով եւ ստեղծագործական հսկայ վաստակով: Պատմուածքի, վէպի ու թատերագրական երեք գլխաւոր սեռերուն իր հաւասարապէս յաջող մշակումով՝ Շիրվանզաղէն բարձրացաւ Հայ գրականութեան ամենէն փայլուն ու տիրական դէմքերու պատուանդանին եւ հանդիսացաւ դեռ չգերազանցուած վարպետը անոր իրապաշտ «դպրոցին»:

Մնած 1858-ի Ապրիլ 19-ին, տնտեսապէս համեստ ընտանիքի մը գաւակ՝ ան ենթարկուեցաւ իր ժամանակի դժխեմ պայմաններու նիւթական զրկանքներուն եւ հոգեկան տուալտանքին: Եւ այն շըրջանի բոլոր Հայ մանուկներուն նման ճաշակեց նաեւ Տէր Թողիկեան դպրոցի ֆիզիքական խռչտանգումի «չնորհները»: Տասնամեակներ ետք, դառն հեզնանքով ան կը վերյիշէր այդ փորձառուութիւնը. -

«... Այս երջանկայիշատակ հոգեւորականի մօտ», կը յուշագրէր Շիրվանզաղէ, ականարկելով իր յաճախած վարժարանը վարող Տէր Յովհաննէսին, - «ես, գորս դու պատուիրեցեր, ծանօթացել եմ հոչակաւոր ֆալախկայի կրթական գորութեան հետ եւ գարշապարմերիս վրայ զգացել եմ գիտութեան եւ ուսման բարեբար ազդեցութիւնը»:

Չարչարանքի այդ գուրէն հանեցին զինք, «բանի դեռ կենդանի եմ» եւ դրին գաւառական դպրոց: Հօրը գործին սնանկութեան հետեւանքով՝ Շիրվանզաղէ, 15 տարեկան պատանի, հարկադրուեցաւ նետուիլ կեանքի պայքարին ասպարէզը եւ մեկնեցաւ Պագու, ուր որեւէ զբաղումով ջանաց իր ապրուստը շահիլ:

Անոր գրական հետագայ զարգացման տեսակէտէն՝ այս պանդրխտացումը հաւանաբար վճռական հանգրուան մը հանդիսացաւ: Որովհետեւ, քանի մը կարճատեւ տարիներու ընթացքին՝ ան ճանչցաւ ընկերութեան տարբեր, հակամարտ խաւերուն առօրեայի տաժանքը, հացի անստգութեան մղձաւանջը եւ ոսկիի կուտակումին ապաստանող ու գիշատիչ մրցակցութիւնը: Եւ ճանչցաւ այդ վախերն ու տենչերը արտայայտող կամ պիտակող գաղափարները, կարգախօսներն ու բարոյական սկզբունքները:

Եւ իր քսաներորդ տարին հազիւ թեւակոխած՝ Շիրվանզաղէ, ինքնաշխատ ճիգերով հաղորդուած գրականութեան հմայքին ու մղումին՝ արդէն սկսաւ յօղուածներ հրատարակել հայերէն ու ռուսերէն թերթերու մէջ: Իսկ 1880-ին բացաւ իր գրական ճամբան «Մշակ»ի էջերէն, հետզհետէ նկարագրելով քարիւղի բանուորներուն կենցաղը, զրկանքները, աշխատանքի տաժանելի պայմանները, պատկերալից կտորներով եւ յետոյ՝ արդէն պատմուածքներով, - «Հրդեհի նախագործարանում», «Գործակատարի Յիշատակարանից»:

Շիրվանզաղէն յորդ ու արագ թափով կազմաւորուեցաւ իրբեւ վիպագիր եւ Արովեանի, Բաֆֆիի ու Մերենցի պատմական ու վիպապաշտ ազդեցութեան հակադրեց իրական, առօրեայ կեանքը, իր անգութ ու հակասական, իր գոհճիկ ու ողբերգական տարրերով եւ զանոնք պատկերացուց, վերստեղծեց հարազատ ու ցաւագին ուժգնութեամբ մը, որ անոր նկարագրներէն կը փոխանցուի ընթերցողին:

Իր վէպերուն մէջ, ան ցոլացուց քաղքենի դասին եւ գործարանատէրներու, բանուորներու եւ մտաւորականներու, գաղափարապաշտ երիտասարդներու եւ ընկերային ու ընտանեկան ողբերգութեանց զոհերու պայքարները, անկումները, տառապանքներն ու եղբրական վախճանները: Իր ոճին անպաճոյճ կառուցուածքին դէմ՝ ան կը կուտակէր մտածումներու, դէպքերու եւ հոգեբանական վերլուծումներու այնպիսի ճոխութիւն մը, որ ճնշելու, խորապէս յուզելու չափ կը տպաւորէր ընթերցողը:

Բազմաթիւ ու բովանդակութեամբ այլազան են Շիրվանզաղէի վէպերը: Ահաւոր տոսամ մըն է, յետոյ թատերախաղի վերածուած «Նամուս»ը, ուր հայր ու մոռսին, պատուոյ զգացումի քրէական եղծանումով եւ միջնադարեան նախապաշարուածի վայրագ ճնշումով՝ մին իր խստութեամբ, միւսը՝ դաշոյնով, կը սպաննեն տարաբախտ, անմեղ Սուսանը: Խոնարհ թատերասէրներու կեանքին սրտայոյզ պատկերացում մըն է «Արտիստը», որուն հերոսը Լեւոն, անյուսօրէն կը սիրահարի Լուիզիային եւ... իր դիակը կը հանեն Օտեսայի քարափէն, ինքնասպան: «Արտէմ Դիմախեան»ը իր ծնողքին հարստութենէն ու դիրքէն հրաժարած եւ հանրային լուսաւորութեան խտէլին նուիրուած երիտասարդն է, որ իր ազնուական ձգտումներուն եւ մարդկային թերութեանց ու մեղանշումներուն բախումներով եւ ժխտումներով կը տուալտի, բացասական ուժերու դէմ մղած իր պայքարներուն մէջ: «Բառս»ը ամենէն խոր ու ծաւալուն վէպն է Շիրվանզաղէի. բանուորական մաքառումներու եւ գործարանատէր եղբայրներուն հակամարտ ըմբռնումներուն ճակատումին պատկերացումներով, թափանցող իրապաշտութեամբ մը՝ որ անդի-

մադրելի յորձանքի մը թաւալումին զօրութիւնը կուտայ երկին:

Արտասահմանի հայութեան Շիրվանզադէն աւելի ծանօթ է իր թատերախաղերով, — «Պատուի Համար», «Չար Ոգի», «Նամուս», «Կործանուածը», «Եւգիմէ» «Մորգանի Խնամիմ» եւ ուրիշներ: Անոնց մէջ ան կը յայտնուի դէպքերու հարազատ պատկերացնողի, հոգեկան վիճակներու վերլուծողի, անարդար շահագործումի եւ ընկերային կամ ընտանեկան ճնշումները խարազանողի բացառիկ տաղանդով ու վարպետութեամբ: Իր գրականութիւնը բանտ առաջնորդեց Շիրվանզադէն 1895-ին, բայց 1926-էն յետոյ, երբ ներգաղթեց Հայաստան, նոյն վաստակը զինք բարձրացուց յաղթանակի ու փառքի բարձրագոյն պատուանդանին վրայ, ուր կը մնայ ընդմիշտ:

Հայրենիքի մէջ, նիւթական կարիքներու մղձաւանջէն ապահով՝ ան ճոխացուց իր գրական հարուստ բերքը «Կեանքի Բովից» յուշավիպագրական հատորով եւ ուրիշ երկերով: Եւ աչքերը փակեց ալեհեր ծերութեան մէջ 1935-ին, վայելելով անհուն հրճուանք՝ տեսած, մասնակցած ըլլալուն իր ժողովուրդի վերածնունդին, — ուր իր ամբողջական գործերը կը հրատարակուէին բիւրաւոր օրինակներով եւ կը թարգմանուէին օտար լեզուներու, իր տաղանդը տարփողելով նաեւ միջազգային գրականութեան մէջ:

1958

ԳԵՂԱՄ ՍԱՐԵԱՆ

Պորհրդահայ գրականութիւնը սկսաւ կազմաւորուիլ 1920-էն ետք, մշակուած նիւթերու, նորակերտ բառերու եւ փորձարկուող ոճերու համախառն տարրերով: Անոր ծնունդին ու ձեւաւորման վրայ խորապէս ներգործեցին երկու զուգահեռ ազդեցութիւններ: Երէց սերունդի արձակագիր ու բանաստեղծ ականաւոր գրողներ, — Յովհ. Յովհաննիսեան, Յովհաննէս Թումանեան, Շիրվանզադէ, Աւետիք Իսահակեան, Նար Դոս, Դերենիկ Դեմիրճեան, Ստեփան Զօրեան, — որոնց երկերուն մէջ, հայեցի խորքին ու բռնութեան եւ անարդարութեան դէմ բողոքի շունչին հետ՝ տիրական էին մարդկային ողբերգութեան, քնարական ոճի եւ գեղեցիկ արուեստի մտահոգութիւնները:

Իսկ մարտական գաղափարներու եւ յեղափոխական պայքարի վաստակաւոր ասոյեանները կը մնային Յակոբ Յակոբեան ու Շուշանիկ Կուրդինեան, նաեւ Ազատ Վշտունի, որոնց ոտանաւորները ձուլուած էին ազատութեան կարգախօսներով ու կոիւի մարտակոչերով, տիրողներու դաժան լուծէն՝ ճնշուած ու թշուառ զանգուածներու փրկութեան համար:

Այդ երկու գրական հոսանքները կամրջող կենդանի կամարները եղան Վահան Տէրեան, յոյզի ու մշուշի, սիրոյ ու մորմոքի տաղանդաւոր բանաստեղծը, որ շատ կանուխ մեռաւ (1920-ին, 35 տարեկան), բայց արդէն Լենինի բարեկամ ու գործակից. եւ Եղիշէ Չարենց, որ իրապէս հանդիսացաւ խորհրդահայ գրականութեան մանկաբարձը, — անոր գաղափարական փոթորկումներուն ու զարտուղումներուն, անոր խարխափող ելեւէջներուն, անոր քարոզչութեան ու արուեստի մակարդակներուն յղացողը, հոչակողը եւ տիրակալ իրագործողը:

Եւ շատ կանուխէն, Եղիշէ Չարենց իր արտակարգ տաղանդին ու անձնական հմայքին շուրջ բոլորեց խորհրդահայ գրականութեան առաջին սերունդի նորահաս գրողները, — Ակսել Բակունց ու Գուրգէն Մահարի, Նայիրի Չարեան ու Վահան Թոթովենց, Սողամոն Տարօնցի ու Վաղարշակ Նորենց, Մկրտիչ Արմէն եւ Ալազան:

Գեղամ Սարեան այդ առաջապահ փաղանգին ամենէն խոնարհ

ու համակրելի դէմքերէն մէկը եղաւ: Իր գրական եւ ընկերային համոզումները խորունկ ու բիրեղացած էին, բայց խառնուածքով հեղ ու հանդուրժող էր. եւ ո՛չ պայթար կը մղէր ուրիշ կողմերու դէմ, ոչ ալ բանավէճ կը ստեղծէր իր անձին ու վաստակին շուրջ: Դեռ երիտասարդ, լեցուն ու գրաւիչ դէմքէն վեր, մագերուն թանձր խուրճը ճերմկած ալիքներով կը ծածկէր անոր ամբողջ գլուխն ու ճակատին կէսը: Եւ հակառակ որ 74 տարեկան էր, երբ մեռաւ Երեւանի մէջ, վստահարար միշտ կը պահէր իր թարմութիւնը:

Հայաստան ներգաղթեց խումբ մը տղոց հետ 1922-ին, սահմանակից Պարսկաստանէն, ուր Գեղամ Պաղտասարեան (Սարեան) ծնած էր 1902-ի Դեկտեմբեր 25-ին, Թավրիզի մէջ: Եւ հազիւ իր քսան տարիները բոլորած երիտասարդը՝ ան ժամանեց Երեւան, ամբողջ էութիւնը համակուած Իրանի ժողովուրդին ստրկական ու թշուառ կեանքին փորձառութեամբն ու տառապանքովը: Զմրմանալի չէ, որ նոյնիսկ իրբեւ խորհրդահայ գրող՝ Գեղամ Սարեանի առաջին տարիներու բանաստեղծութեան տիրական տարրերը կազմեցին Պարսկաստանէն՝ իր միտքին մէջ խմորուած, շարչարուած, ու տակաւին արիւնոյ նիւթերը: Ան արտագրեց հարուստ շարք մը սիրերգներու, հովուերգութեանց եւ եղերախաղերու, հեզասահ, թախմալի քնարերգութեամբ, որոնք համակուած են յուզումով ու վիշտով:

«Կըզ-Կալալի» եւ «Գիւլնարա», «Մահն ու Մեջնունը» եւ «Իրանի», «Գիւլխանտա» եւ նման պատմումներու մէջ՝ Գեղամ Սարեան կ'երգէ կեանքի դրուազներ եւ հէքեաթի եղերադէպեր, ներշնչուած գուսանի մը պարզ բայց սրտայոյզ ոճով: Ան կը պատկերացնէ պարսիկ խաներու բռնակալ լուծին տակ հեծեծող եւ հարէմներու մահաշուք խաւարին մէջ տուայտող մատաղ աղջիկներուն խորտակուած սէրերուն ողբերգութիւնը: Ուր մինչեւ վայրագութիւն կը մոլեգնին տիրողներու ախորժակները, եւ անոնց շահերէն կամ կիրքերէն կալանուած խոնարհ մարդիկ ու աղջիկներ՝ կա'մ կ'ենթարկուին անոնց քմայքներուն, կամ իրենց սիրած տղոց հետ նահատակ կ'իյնան դաւադրող սուրբերու:

Բռնութեան գաղափարին դէմ ընդվզումը, ազատութեան համար խորունկ տենչը եւ մարդկային տառապանքին հանդէպ ապրած հոգեկան տանջանքը տիրական տարրեր եղան Գեղամ Սարեանի բանաստեղծութեան մէջ: Այդ յոյզերն էին, որ նաեւ ներշնչում տուին անոր շարք մը եղերական ու դիւցազնային վիպերգներուն, նուիրուած Սպանիոյ 1936-ի քաղաքացիական պատերազմին ազատութեան մարտիկներուն:

Պորհրդահայ գրականութեան հիմնադիր փաղանգին իրբեւ փայլուն աստղերէն մէկը՝ Գեղամ Սարեան ամենէն նուազ ճանչցուածն

ու գնահատուածը եղաւ սփիւռքի մէջ: Թերեւս իր գուսպ նկարագրին, կամ թերեւս խստադատ ճաշակի մը իրբեւ արդիւնք՝ ան խուսափեցաւ զգացական նիւթեր շեփորելու, յեղափոխական կամ ազգային մարտաշունչ կարգախօսներ հնչեցնելու եւ հանրային ծափ ու ներքող հետապնդելու փորձութենէն: Եւ մնաց հանդարտ բայց խորունկ յուզումներու, լուռ մորմոքող սիրոյ ու կարօտի, խորհուրդներու լայն սաւառնումի բանաստեղծը, պատկերալի ու հաղորդական ոճով մը:

Վերականգնած Հայաստանի շքեղ իրականութիւնը, վերածնող հայ ժողովուրդին կառուցանելու, աճելու եւ ստեղծելու հրաշքը յորդ ու վճիտ աղբիւրներ դարձան Գեղամ Սարեանի արուեստին համար, եւ անոնց տաժանագին ու զմայլելի խոյանքները, եւ հոյակապ իրագործումները երգեց սրտառուչ խանդաղատանքով: Տակաւին 1930-ին, մայր հայրենիքի փրկութեան, Նոյեմբեր 29-ի 10-րդ տարեդարձին նուիրուած Գեղամ Սարեանի քերթուածը, «Խորհրդային Հայաստան» խորագրով, ո՛չ միայն առաջինն էր այդ սեռին մէջ, այլ դարձաւ անգերազանց զարդը սփիւռքահայ բեմերուն վրայ:

«Հազար շեփոր հնչեն թող – Այս առաւօտ,
Հազար թմբուկ խփեն թող – Այս առաւօտ.
Լոյսի հեղեղ, լոյսի սօսն է, – խնդու թիւն.
Հազար շեփոր հնչեն թող – Այս առաւօտ:

«Ամէն գարուն ու Մայիս – Մեր ցորենի դաշտերից,
Թարմ կամաչից ու վարդից – Հագուստներ ենք հազցրել,
Եւ փայլալի ենք նրան – Ոսկի յոյսերի նման,
Եւ անունը դրել ենք – Խորհրդային Հայաստան»:

Օտար երկինքներու տակ պանդուխտ հայ հոգիներ, այս երկար քերթուածը խոր յուզումով ունկնդրելէ ետք երբ կը մեկնէին սրահներէն՝ համակուած կ'ըլլային մայր հայրենիքի վերածնունդին խանդով, հրճուանքով ու հպարտութեամբ, որոնք դեռ իրենց մէջ կը ծփային «հազար շեփորի, հազար թմբուկի» հնչիւններով:

Ողազութեան տարիներուն, Գեղամ Սարեան խոնարհ հիացումով երգեց հայ մարդուն ու կնոջ առօրեայ հոգերը, անոնց քրտինքին տաժանքն ու տեսիլքին պայծառութիւնը, անոնց խիղճն ու վիշտը:

«Հոգիս փռուէր փողոցներում, շէմքերին,

Թափանցէր նա անդունդները ձեր սրտի,
Անձայրածիր երկինքները ձեր հոգու,
Եւ վեհութիւնը ըզգար նա ձեր կամփի,
Եւ յոյզերը արեւի պէս լուսատու»:

Իսկ պատերազմի շրջանին՝ Գեղամ Սարեան վարակիչ յուզումով արտայայտեց զինուորին կարօտներն ու սէրերը, եւ ներբողեց անոր անձնուրաց քաջութիւնն ու գերագոյն գոհարեութիւնը: Բայց նոյնիսկ ռազմաճակատի հեռաւոր խրամներուն մէջ մահը դիմազրաւող հայ մարտիկը, Գեղամ Սարեանի քնարական զուսպ բայց սրտառուչ ոճով կ'երգէր իր ծննդավայրին հեծեծող կարօտը. -

«Թռչէի՛ մտքով տուն, - Ուր իմ մայրն է արթուն
Տեսնէի այն առուն, - Կարկաչում էր սարում:
Լիմէի հանդերում, - Ուր ծաղկունքն են բուրում,
Ուր մանուկ օրերում - Հովն էր ինձ համբուրում»:

Բազմասեռ է Գեղամ Սարեանի արուեստը: Ան խորապէս կը զգայ մարդ էակին տառապանքը բոլոր հորիզոններուն տակ, կը տուճատի անոր թշուառութեամբ եւ ընդվզումով կը համակուի հալածանքի ու բռնութեան դէմ: Իսկ հայ ժողովուրդին հանդէպ անոր զգացած անհուն սէրը, ու դառն մորմոքը, եւ ուրախ հպարտութիւնը կ'ընդգրկեն մեր բովանդակ պատմութիւնը, անցեալի ամենէն եղբրական շրջաններէն մինչեւ փառաւոր ներկան:

Անոնք կը յայտնուին նոյնիսկ «Իրաստամատը» գրոյցի ողբերգութեան մէջ: Երբ Անյուշ բերդէն ներս անձնասպան կ'ըլլայ Արշակ Բ. հայոց թագաւորը, եւ Դրաստամատ, նոյն դաշոյնը իր կուրծքն ալ խրելէ առաջ՝ հպարտօրէն կը պատուիրէ պարսիկ պահակին որ երթայ Շապուհ արքային մօտ եւ.

«Ասա՛ սաւառնում է հայոց անմահ ոգին
Այնտեղ հայրենական կապոյտ լեռնաշխարհում,
Ասա՛, որ նա հիմա իր վեհ ժողովրդին
Ազատութեան, լոյսի գալիքներն է տանում»:

Ժամանակի անձիր անջրպետ մը կը բաժնէր Անյուշ բերդի եղբրադէպը՝ հայ ժողովուրդի ազգային ամենէն զարհուրելի փուլզումէն, - Ապրիլ 24-ի Եղեռնէն: Գեղամ Սարեանի խառնուածքն ու ոճը ներդաշնակ ընդելուզումով եւ քնարական կոհակուող թաւալով «Դէպի կառափնարան» ինքնատիպ ու սրտայոյզ քերթուածը կերտեցին, «Կոմիտասի յիշատակին» ձօնուած: Նոր յօրինումով դրուազ մը կը պատկերացնէ ան, - չոգենաւ մը, որ Պոլսէն հայ մտաւորականներ կը փոխադրէ դէպի մահուան անյայտ Գողգոթաներ:

«Նրանց տանում էին հեռու կառափնարան,
Գունատ էին նրանք: Երկու հարիւր էին:
Տանիկ սպաների հայեացքը անասնական
Դաշոյնների նման կախուած գլուխներին»:

«Նրանց տանում էին հեռու կառափնարան.
Լուռ էր վարուժանը, Սիամանթօն խոռուն,
Հայեացքը ուղղած դէպի երկինքը անսահման
Կանգնել էր Կոմիտասն ինչպէս տաճարի սինն»:

Գեղամ Սարեանի բանաստեղծութիւնը հարուստ եղաւ նիւթերու եւ դրուազներու, դաղափարներու եւ յոյզերու այլազանութեամբ: Ան կ'ընդգրկէ մարդ էակը՝ անոր սէրերուն ու կարօտներուն, վիշտերուն ու զրկանքներուն մէջ, եւ ազատութեան ու արդարութեան ձգտումներով: Եւ ան կը պարփակէ հայ ժողովուրդն ու Հայաստանը, անոնց անցեալի եղբրական անկումներէն մինչեւ ներկայի շքեղ վերականգնումը: Եւ ան զրեց վճիտ ու պատկերաւոր ոճով մը, որ իր յարածուփ թաւալին մէջէն կը թափանցէ ընթերցողի էութեան եւ կ'ողողէ զայն յուզումի ու խռովքի ալիքներով:

ՅԱԿՈՒ ԱՆՏՈՆԵԱՆ

Այս Ուրբաթ երեկոյ, նիւ Եորքի մէջ կը սարքուի «Յարգանքի երեկոյթ» մը, նուիրուած բանաստեղծ Յակոբ Անտոնեանի գրական փաստակին եւ Հանրային գործունէութեան: Զեռնարկին սահմանումը եւ տարողութիւնը շատ համեստ են, յայտնօրէն, իրրեւ ճանաչում ու գնահատանք արուեստագէտ գրողի մը ստեղծագործ աշխատանքին, որ շուրջ կէս դարու երկար ու փոթորկալի շրջան մը կ'ընդգրկէ: Բայց կ'երեւի դիպուածը կամ պայմանները ուզեցին, որ յորեկեանական Հանդէս մը գրական երեկոյի մը խոնարհ տարագին մէջ պարտկելով՝ զայն դարձնեն նաեւ խորհրդանիշ Յակոբ Անտոնեանի նկարագրին էական գիծերուն, որոնք ինքնաջնջումի հաւասարող իր համեստութիւնը կազմած են:

Եւ թերեւս մարդուն այդ խառնուածքը կը բացատրէ նաեւ բանաստեղծին ներշնչումի աղբիւրներուն հանդարտ խորութիւնը եւ անոնցմէ բխող քերթուածներու հեզասահ, վճիտ գեղեցկութիւնը: Վիպապաշտ տենչերու գեղումէն խուսափեցաւ ան միշտ եւ փառքի ձգտումը երբեք չյաջողեցաւ. կալանաւորել զայն, որ ծափի ու ներքողի փորձիչ հրապոյրները շփոթէր մուսաներու քմայքոտ կանչերուն հետ եւ յանձնուէր անոնց:

Յակոբ Անտոնեանի մէջ, ինչպէս ամէն ճշմարիտ բանաստեղծի ու արձակագիրի՝ գրական արուեստի խստապահանջ ճաշակը կը տիրէ անողոք դատախազի մը նման: Եւ ան կ'ընտրէ իր նիւթերը, ոչ թէ առօրեայ պայթուցիկ, բայց նաեւ վաղանցիկ դէպքերու եւ ժխորներու պղտոր ազդեցութեան տակ. այլ իր էութենէն փրթող եղբրական յուզում մը կամ մտածման թափանցող ցոլք մը սեւեռելու համար: Իր հրատարակուած Հատորին անունը ինքնին, «Բիւրեղներ», պերճօրէն կը բնորոշէ անոր բանաստեղծութեան խորքին ու կառուցուածքին նկարագիրը:

Գրական դպրոցի մը հետեւող չեղաւ Անտոնեան: Իր քերթողական վաստակին բովանդակութիւնն ու տարագր գինք ամենէն աւելի կը մօտեցնեն մեծ Թէքէեանին, սակայն ինքնատիպ արուեստով մը, որ միայն վաւերական տաղանդէ մը կրնայ բխիլ: Մեր երէց սերունդի գրականօրէն վիպապաշտ ու հոետորական մթնոլորտին ու

աւանդութեան մէջ սնած՝ Յակոբ Անտոնեան կրցաւ ձերբազատուիլ անոնց բացասական ազդեցութենէն եւ իր նիւթերը ընտրել մեր ժողովուրդին կեանքէն, նաեւ անհատական յոյզերէ, խոհերէ, սէրերէ, հիասթափութիւններէ, տխուր յուսալքումներէ եւ ճշմարտութեան յաղթանակի հզօր հաւատքէ: Բայց առանց սուզուելու մոայլ յոռետեսութեան մը մէջ կամ առանց սնամէջ, անզօր բացականչութիւնները իրրեւ յենակ նետելու այլապէս խարխուլ քերթուածներու տակ:

Բանաստեղծ Յակոբ Անտոնեանի ներշնչումը որքան այլազան նիւթերէ ալ գայ, — ան կը գրէ հայ լեզուին թէ ոգիին, հայրենի հողին թէ բնութեան կամ կեանքի աշունին, գրքի թէ վարդի կամ խորհուրդի թէ զգացումի լուսեղէն ցայտքի մը մասին, — ան նոյն բծախընդիր, ծայրայեղօրէն խղճամիտ յօրինողն է բառերու իմաստին ու երաժշտութեան: Անոր արուեստին տիրական տարրը մտածումն է, — Անտոնեան գերազանցօրէն խորհող արուեստագէտն է, օժտուած մշակ մը խորհրդապաշտ շարժումի ծաղկաստանին: Բայց մտածումին ցուրտ ու ցամաք մարմինը միշտ պարուրելով զգացումի կամ թախիծի տըրտում ջերմութեամբ:

Քերթողական կամ վիպական գրականութեան մէջ սակայն, ընտրուած նիւթին հարազատ կառուցման ձեւին կամ ոճին ներդաշնակումն է, որ կը ստեղծէ արուեստը: Եւ Յակոբ Անտոնեան այն բախտաւոր կոշուածներէն է, որ յաջողեր է գեղեցիկ համագրումով ընդելուզել իր քերթուածներուն բովանդակութիւնն ու տարագր: Արձանագրել թէ պարզ ու վճիտ է անոր լեզուն՝ անորոշ ու նաեւ անիմաստ հաստատումի մը նման կը հնչէ: Էականը այն է, որ Անտոնեան կը յաջողի այդ պարզութեան մէջ կերտել տողերու բարախուն, ճշգրիտ, երաժշտական շարայարում մը, որ իր «բիւրեղ»ացած ու պատկերաւոր արտայայտութեամբ՝ կարծես երգել կուտայ մտածումին կամ խորհիլ կուտայ զգացումին:

Դասական սահմանումը գրականութեան կամ արուեստներու մէջ՝ խորքի մաքրութեան եւ ձեւի կատարելութեան, կամ անոր նախանձայոյզ ձգտումին միացումը կ'ընդգրկէ: Այդ իմաստով է անկասկած, որ Յակոբ Անտոնեանի ոչ միայն բանաստեղծութիւնը, այլ նաեւ իր անձն ու խառնուածքը կը կապուին դասական ըմբռնումին: Եւ իսկական արժանիքի ճանաչման ու գնահատանքի շուայլում չէ՛, յարգանքի երեկոյթով մը պատուելու տաղանդաւոր բանաստեղծ մը եւ իրական մարդ մը, որ ամբողջ կէս դար ծառայեր է հայ գրականութեան ու ժողովուրդին:

Իր խառնուածքին ու բանաստեղծութեան մէջ մտածումին տիրապետութիւնն է թերեւս որ էպպէս ազնիւ ու խոնարհ անոր նկարագրին հպարտ վերապահութեան մը պատրանքը կուտայ: Մշակուած,

քաղաքակիրթ մարդու իր փափկանկատութիւնը դիւրաւ կրնայ շփոթուիլ որեւէ շրջանակի չխառնուելու, չնոյնանալու հակումի մը հետ: Բայց այդպիսի ենթադրութեան մը ժխտումը կուգայ իր գրականութենէն, ուր մարդ էակին հանդէպ համայնական ակնածանքն ու սէրը կը տրոփեն:

Յետոյ, մանաւանդ, այդ ոգին կը յայտնուի իր հասարակական երկարամեայ, բայց անաղմուկ գործունէութեան մէջ, ազգային, բարեսիրական, մշակութային ու կրթական ասպարէզներու վրայ: Անոնց ծաւալին ու արդիւնքին չափ մեծարելի է մատուցման եղանակը, — առանց ծափերու պահանջին ու փառքի հետապնդումին, առանց տիրելու տենչին եւ վիրաւորելու մեղքին:

Սոնարհօրէն ապրուած իր կեանքին ու գործին պսակումը հանդիսացող այս յորելեանական երեկոյթին առթիւ, մեր խոր գնահատանքին ու ջերմ համակրանքին հետ՝ տաղանդաւոր բանաստեղծ Յակոբ Անտոնեանին կ'ընծայենք մեր սրտագին մաղթանքը, որ աւելի առատաձեռն ըլլայ իր քարախուց տողերու արտագրելուն ու բաշխելուն մէջ, «հոգիս կարդալ ուզողիմ»:

1958

ՀԱՅ ՄՏԱԻՈՐԱԿԱՆԻՆ ԴԵՐԸ

Դժուար չէ սահմանել զբաղումը, ասպարէզը կամ կոչումը արհեստաւորին ու առեւտրականին, բժիշկին ու ճարտարագէտին, ուսուցիչին ու հոգեւորականին: Հանրային կարծիքին մէջ եւ իրենց մասնագիտական ծանօթութեանց ծիրերուն յստակութեամբ՝ բիւրեղացած գաղափար մը կը տիրէ անոնցմէ իւրաքանչիւրէն ակնկալուած աշխատանքին կամ ծառայութեան բնոյթին մասին: Տարբեր է պարագան մտաւորականին: Որովհետեւ ան մասնաւոր դասակարգումի մը չընթացածն է ներս չի պարփակուիր: Ան չի կրնար գատորոշուիլ արհեստագէտի գործիքներով, համալսարանի մը բարձրագոյն վկայականներով կամ գրաւիչ համազգեստներով:

Մտաւորականին ընթացիկ սահմանումը որքան պարզ՝ այնքան հարեւանցի ու մոլորիչ է: Երբ կը հաւաստուի, թէ ան պարզապէս մտքի աշխատաւոր մըն է, որ կը գործէ իր իմացական ուժերով՝ կը բնորոշուի անոր առօրեայ զբաղումը, բայց կը ժխտուի անոր դերին բարոյական ու ոգեկան տարողութիւնը, որ զայն կը բարձրացնէ ազնուագոյն կոչումի մը պատուանդանին: Իրապէս՝ մտաւորական չէ ամէն անձ, որ իր մտքով կ'աշխատի: Մտաւորական չէ՛ ամէն վկայեալ ուսուցիչ եւ հաշուակալ, բժիշկ ու մասնագէտ, իրաւաբան կամ խումբագիր, որովհետեւ անոնց զբաղումներուն մէջ՝ իմացական տարրերը կը կազմեն գլխաւոր գործիքները:

Այդ էական պահանջին հետ՝ ճշմարիտ մտաւորականը անհրաժեշտ է, որ լրացնէ նաեւ հիմնական պայման մը: — Ան ո'չ միայն պարտաւոր է իր մասնագիտական կամ արուեստի մարզէն դուրս, միջինէն վեր ընդհանուր զարգացում մը նուաճել, կարենալ հաղորդուելու համար մարդկային ընկերութեան քաղաքակրթական եւ մշակութային յառաջդիմութեան ձգտումներուն, պայքարներուն եւ իրագործումներուն: Ան նաեւ, ու մանաւանդ, պէտք է մտքի ու ոգիի ներգործող ազդակ մը դառնայ իր հասարակութեան, իր ժողովուրդին յարատեւ ճիգերուն ու մաքառումներուն մէջ, դէպի ճշմարտութիւն, դէպի ազատ ու արդար կեանքի մը բարձունքին անոր մագլցումի ճամբուն վրայ:

Հազարամեակներ առաջ՝ երբ գերբնականին սոսկումն ու հրաշքը

կը տիրապետէին տակաւին միամիտ բազմութեանց ըմբռնումներուն ու երեւակայութեան՝ կրօնական մարգարէներ աստուածային շունչով եւ շանթերու լեզուով կը պատգամէին իրենց ժողովուրդին՝ անոր հաւատք եւ օրէնք, բարոյական չափանիշ, մարտնչելու քաջութիւն եւ յաղթանակի նշանակէտ պարգեւելով: Անոնք կը ներշնչէին ու կ'առաջնորդէին ոչ միայն ամբօրը եւ ընտրուածներու դասը՝ այլ նաեւ իշխաններն ու արքաները:

Գիտութեան քօղազերծող մագիլները հիմա պատեր են մթին դարերու պատրանքներն ու նախապաշարումները: Եւ այլեւս օծուած գլուխներ անգամ չեն կրնար գերբնականին հմայքով ու սարսափով գրաւել խաւարի ու թշուառութեան անապատին մէջ մոլորած բազմութեանց հոգիները եւ զանոնք առաջնորդել ղէպի ապահով ու խաղաղ կեանքի մը «աւետեաց» ափուները: Որովհետեւ հիմերէն խորտակուած է մարդոց հաւատքը երկնային ուժերու ամենակարող ու փրկարար միջամտութեան մասին: Եւ վաղեմի դարերու մարգարէներուն հրաշագործ զօրութիւնն ու ոգեղէն լոյսը ապարդիւն կը մնան աստուածաշունչ գրքերու էջերուն մէջ ու պաշտամունքի խորաններուն վրայ: Եւ չեն կրնար վերափոխել մարդկութեան աօրեայ կենցաղը, - անոր զրկանքները, ցաւերն ու տառապանքը մեղմացնելու, աւելի ուրախ ու բարեկեցիկ ապագայ մը ստեղծելու համար:

Կար ժամանակ՝ երբ տգիտութեան ու նախապաշարումներու կապանքներուն մէջ՝ մարդիկ կայանուած էին բնազդական վախերով եւ բնութեան ահարկու գաղտնիքներուն խորհուրդներով: Եւ միայն գերբնականի, ոգեկանի ճամբաներով կարելի էր թափանցել անոնց տակաւին մանուկ ու նախնական գիտակցութենէն ներս: Եւ կրօնապետներ, անոնք որ ճշմարտախոյզ, առաքինի հովիւներ էին, - եւ ո՛չ թէ հոգիին թռիչքն ու մտքին լոյսը ատելութեան խարոյկներու վրայ հրկիզող հաւատաքննիչներ, - անոնք հաւատարիմ իրենց ուխտերուն, աւելի ազնիւ, լուսաւոր կեանքի մը տեսլապատկերը տուին ժողովուրդին եւ հաւատքի ուժով ներշնչեցին, մղեցին իրենց հօտերը ղէպի այդ իտէլիին մարմնացումը:

Սակայն հիմնովին յեղաշրջուեր են մեր դարաշրջանի մարդկութեան բարոյական ըմբռնումները, դատումի չափանիշներն ու արժէքներու գնահատումը: Հիմա՝ մարդոց տրամաբանութեան դիմելով է, որ կարելի է զանոնք համոզել նոր գաղափարի մը, կամ գրաւել տարբեր ապրելակերպի մը, կամ անոնց որդեգրել տալ ուրիշ դաւանանքներ ու նպատակներ եւ զանոնք կապել նոր ճշմարտութեան մը փարոսին կամ հին կատարելութեան մը տեսիլքին:

Եւ զանգուածներու, ինչպէս նաեւ ընկերութեան զարգացած խաւերու մտքերուն խօսելու, զանոնք վերափոխելու գործն է մտա-

ւորականին կոչումը: Յուսահատ, անզօր չբեղանք է մարդկութիւնը պատուհասող բոլոր աղէտներուն համար դատապարտել ժողովուրդները, յանկերգելով թէ մարդիկ ի ծննդէ մեղանշական, կուուսէր, ընչաքաղց ու քինախնդիր են, թէ ւ անփոփոխելի են անոնց նկարագիրները, - ուրեմն երբեք պիտի չզազրին՝ չարագործութիւնները, ոճիրներն ու պատերազմները: Որովհետեւ բոլոր այդ մեղքերուն ու նախճիրներուն տեւականացման մէջ՝ յանցանքի մեծագոյն բաժինը կը ծանրանայ անոնց վրայ՝ որոնք պաշտօնով ու տիտղոսով առաջնորդներն են եղած ժողովուրդներու հոգիին ու մտքին:

Բարձրագոյն այս սահմանումով կ'ըմբռնենք մենք նաեւ հայ մտաւորականին կոչումն ու դերը արտասահմանի մէջ: Եւ անոր առաքելութիւնը որքան դժուարին՝ այնքան կենսական է, մեր տարագիրի դժխեմ պայմաններուն եւ անողոք պահանջներուն հանդէպ:

Ամէն ուրիշ ազգային հաւաքականութեան նման՝ հայ ժողովուրդն ալ ունի խառնուածքի ինքնուրոյն տարրեր եւ նկարագիրի ժառանգական գիծեր, դրական կամ ժխտական: Ան նոյնքան ընդունակ է սխալելու եւ սայթաքելու, որքան մարդկային էակներու տեւ խմբակցութիւն: Եւ բնականօրէն՝ ինչպէս անցեալ հազարամեակներուն, նոյնպէս այսօր, ան կը դիմադրուէ դժուարութիւններ ու տագնապներ, որոնք առաւել կը շեշտուին Հայաստանի աշխարհագրական դիրքին ու հայութեան տարբեր հատուածները շրջապատող քաղաքական պայմաններուն անսովոր բնոյթով:

Գաղութահայ եղբրական գոյավիճակին եւ զայն առաւել ցաւագին դարձնող ներքին պայքարներուն հանդէպ՝ ժխտումի անյուսութեամբ վարակուած մտաւորականներ կը յանձնուին երկու ծայրայեղ, հակոտնեայ մոլորանքներու: Որեւէ յանցանքէ խուսափելու փութկոտութեամբ՝ ոմանք արտաքին գործօններ կը հռչակեն պատասխանատու ամէն վէճի ու բախումի համար, որ կը հարուածէ մեր ամենէն մեկուսի գաղութն անգամ: Ուրիշներ, իրենց անսխալութեան ինքնաբաւ պատրանքով եւ ցասումով կ'ամբաստանեն բովանդակ հայոց ազգը, - ամէն անհատ ու մարմին իրենցմէ դուրս, որպէս մեղապարտ եւ անուղղայ ցնորատես եւ արկածախնդիր - իրբեւ պատասխանատու այն բոլոր աղէտներուն ու պարտութեանց համար, որոնց ենթարկուեր է հայ ժողովուրդը, միջազգային սակարկութեանց, դաւերու եւ պատերազմներու անողոք մակընթացութեան տակ:

Եւ անզօր վհատութեան կամ քմահաճ վարկածներու մատնուած մտաւորականներ կ'ապաւինին երկու իրերամերժ բայց հաւասարապէս բացասական ուղիներու հայթայթած փախուստներուն: Ոմանք, խոնարհ խաւերու հոգերուն ու մաքառումներուն հանդէպ վեհափառ արհամարհանքով մը եւ հանրային վէճերու եւ համայնքային կուր-

ներու կամ համազգային նպատակներու բախումներուն ղէմ՝ ինքնահամար մեկուսացումով կ'ապաստանին իրենց յաւակնութեանց փրոսկըրէ աշտարակին մէջ:

Պղտոր դատումով մը, անոնք հասարակական կեանքի ցաւերն ու կարիքները կը նկատեն գոհճիկ, ճղճիմ: Եւ անոնց ժխորէն ու տիղմէն բարձր, նաեւ անարատ մնալու համար կը ծուարին ֆիզիքական եւ իմացական կղզիացումի մը ծոցը: Բայց չեն անդրադառնար թէ հասարակութեան առօրեայ կենցաղին անկումներուն ու վէրքերուն, կոխներուն ու տենչերուն, անարգ վատութեանց ու վսեմ խոյանքներուն մէկ կաթիլ արիւնը, քրտինքի մէկ կայլակը, եւ տառապանքի ամենէն մեղմ ճծծիւնը աւելի թանկագին ու մաքուր են, քան իրենց մեկուսացումին ցուրտ դամբանը:

Մինչ միւս ուղիին ջատագովը կը կառչի խտասիրտ դատապարտութեան եւ զգացական պառթկումներու գործելակերպին: Ամէն ղէպք ու անգնապ, ամէն վէճ ու պառակտում ահարկու համեմատութեամբ չափազանցուած կ'երեւի անոր դատաստանին: Եւ երբեք չի յոգնիր, չի ձանձրանար հայ ժողովուրդին քայքայումը եւ գաղութահայութեան ոչնչացումը ողբերգելու: Ան կը խուսափի որեւէ ժխտական երեւոյթի կամ դժբախտ ընկրկումի պատճառներուն վերլուծումէն, որ ոչ միայն յոգնեցուցիչ է՝ այլ նաեւ հետապնդուած նշանակէտին հակառակ հանգրուանի մը յանգելու վտանգը կը պարունակէ: Մանաւանդ՝ առարկայական, ինքնագուսպ դատողութիւն կ'ենթադրէ:

Զգացական զեղումներու ապաւինած ողբասացը կը մեղադրէ միշտ, կ'ամբաստանէ ամէնքը իրմէ դուրս, անհատ թէ կազմակերպութիւն, բոլոր այն իրական շարիքներուն կամ մտացածին աղէտներուն համար, որոնք կը հարուածեն գաղութահայ համայնքները պարբերաբար: Ան, իրբեւ անկողմնակալ իրաւարար՝ համերաշխութիւն ու սէր կը քարոզէ հիմնական տարակարծութեամբ հակառակորդ կողմերու միջեւ, բայց աւելի քինախնդիր շունչով եւ նոր պառակտումի պատգամներով:

Անհեթեթ հակասութեամբ մը, այդ մտաւորականը էջմիածնական է, սակայն ան թշնամական ոգիով կը հարուածէ այն կազմակերպութիւններն ու համայնքները, որոնք նոյն այդ էջմիածնի հեղինակութիւնն ու իրաւունքները կը պաշտպանեն: Ան հայաստանասէր է, բայց կը հարուածէ ու կը պարսաւէ ուրիշ մարդիկ ու մարմիններ, որոնք անխարդախ հաւատարմութեամբ մը կը սիրեն նոյն Հայաստանը, բայց շատ աւելի անչեղ ու ամբողջական նուիրումով: Այդ մտաւորականը դեռ կրնայ ըլլալ Անթիլիասական հերձուածին մէկ մոլունետիկը, որ նոյն շունչին մէջ կը զրպարտէ հայրենի պետութիւն

եւ ազգային, եկեղեցական ու բարեսիրական ամէն հաստատութիւն՝ գաղութահայ ներկայ տազնապալի կացութեան որպէս պատասխանատու, իրեն նպատակ կը հռչակէ միացեալ Հայաստանի մէջ մէկ ու միացեալ հայ ազգութիւն, - բայց նոյն ատեն ինքզինք ֆիզիքապէս եւ ոգիով ու մտքով խզեր է թէ՛ Հայաստանէն, թէ՛ հոն ապրող մայր զանգուածէն եւ թէ՛ արտասահմանի արեւմտահայ ժողովուրդէն:

Իր դերին վեհութեան, իր կոչումին գիտակցութեան անհաղորդ մտաւորականի տիպարն է ան: Սխալը ուղղելու, քանդուածը կառուցանելու եւ սայթաքածը բարձրացնելու ճիգին փոխարէն՝ զանոնք եղբերգելու եւ նշաւակելու արարքներով մեծնալու հրճուանքը փնտռելով ուրիշներու գէթ երեւակայական հարթումին մէջ:

Իրբեւ մեկնակէտ գաղութահայ մտաւորականին վիճակուած դերի սահմանումին՝ անհրաժեշտ է ընդունիլ հիմնական իրողութիւն մը: - Որ մեր ազգային ձգտումներուն, մեր քաղաքական կամ հողային իրաւունքներուն իրագործման ամենէն յանդուգն ծրագիրներն ու յարատեւ ձեռնարկներն անգամ՝ պայմանաւորուած են արտաքին գործօններու նպաստով: Այդ ժառանգական պահանջներու հատուցման համար բաւական չեն միայն հայ ժողովուրդին տենչանքն ու կամքը, - որքան ալ հրեղէն ժայթքումով կամ միաձոյլ թափով արտայայտուին անոնք: Անոնց իրականացման համար վճռական ազդակներ են մեր հաւաքական հասողութենէն վեր՝ միջազգային պայմաններ ու սակարկութիւններ: Այդ մարզին մէջ հայոց ժամանակաւոր ձախողանքին մեղքն ու ամօթը, ուրեմն, պէտք է տարածել իրենց սեփական շահերը հետապնդող օտար պետութեանց դիւանագիտական խաղերուն ու դաւերուն վրայ:

Սակայն բոլորովին տարբեր է արտասահմանի հայութեան գոյավիճակը խոտովոյ, զայն յաջորդական տազնապնդումով հարուածող ողբերգութիւնը: Ահաւոր նախճիրէն վերապրող արեւմտահայ զանգուածները կրնային, եւ մեր միլիոնաւոր նահատակներու ոսկորներուն աղբսանքով պէտք էր յաջողէին ստեղծել ոգեկան, իմացական ու ֆիզիքական անխորտակելի միասնականութիւն մը բոլոր գաղութներուն մէջ: Եւ իրենց մտաւոր, մարդկային ու նիւթական բովանդակ զօրութեամբ ու յարաճուն զօրաշարժովը տրամադրելի բոլոր ուժերուն՝ նուիրուէին հայ ժողովուրդի վերածնունդի հրաշալի երկունքին, վերականգնած Հայաստանի տնտեսական ու պետական զօրացումին ու բարգաւաճման եւ այդ խարխիւներուն վրայ ամբողջական հայրենիքի ազատագրման իտէալին ու պայքարին:

Ոչ մէկ չբեմեղանք, ոչ մէկ արդարացում կայ պառակտումի եւ ատելութեան այն սերմնացաններուն համար, որոնք փառքի եւ արծաթի կիրքերու գերի, խափանեցին այդ միասնական ճիգերուն,

Հասարակաց նպատակներուն մարմնացումը: Որովհետեւ ատիկա մեր Հասողութեան մէջ էր: Որովհետեւ Հայկական սփիւռքը ի վիճակի էր եւ ազատ էր յղանալու այդպիսի Համապարփակ գործունէութեան մը ծրագիրը եւ իր իմացական, ֆիզիքական ու նիւթական ուժերուն Հնարաւորութեան մէջ էր իրականացնել զայն: Որեւէ արտաքին ճնշում, որեւէ օտար պետութիւն ինքն իրմէ պիտի չարգելէր, որ տարագիր արեւմտահայութիւնը, Հաւատարիմ քաղաքացիներ մնալով Հանդերձ հիւրընկալ երկիրներուն՝ հետապնդէր իր ազգային ուխտերը, ճոխացնէր իր մշակոյթը, ընդարձակէր իր վարժարանները, պայծառացնէր իր պաշտամունքի տաճարները, զրահէր իր ոգեկան միասնութիւնը:

Եղբրականօրէն ճիշդ է հարկաւ, որ անցեալ տասնամեակներուն, ինչ չարիք որ Հարուածեց Հայ գաղութ մը, կամ ճգնաժամ՝ որ խռովեց ամբողջ Հայկական սփիւռքը՝ օտար իշխանութեան մը ճնշումին կամ զինուորներու սուրբին չարաշուք սպառնալիքը ունէր իրեն մեղսակից: Բայց այդ օտար իշխանաւորը կամ ոստիկանը ինքն իրմով չմխրճուեցաւ Հայ Հասարակական, ընկերային, կրթական, ազգային ու եկեղեցական մարզերէն ներս, որոնց անձանօթ էր եւ որոնք զինք չէին շահադրժուէր Հապէս: Այլ անոր միջամտութիւնն ու չարիքը բերուեցաւ, քաշկրտուեցաւ Հայերու ձեռքերով, - Հայերու ստայօղ վերագրումներով ու զրպարտութիւններով իրենց իսկ ազգակից եղբայրներուն, իրենց Հարազատ ժողովուրդի զանգուածներուն դէմ:

Փաղութահայ այս ողբերգական կացութեան Հանդէպ՝ ծանր պատասխանատուութեան հետ անխուսափելի պարտքեր ունի իր կողումին զիտակից մտաւորականը: Բայց անհրաժեշտ պայման է, որ ան Համոզուի նախ երկու անժխտելի իրողութեանց: - Որ արտասահմանի Հայոց գոյավիճակը կարելի է հիմնապէս բարեփոխել, - ամուլ պայքարներու եւ թշնամանքի խրամատը կամրջելով նպատակի նոյնութեան եւ գործելակերպի միութեան կամարներով, - ուր բախումներու սպառումն ու տաժանքը կը վերածուին բազմապատկուած արդիւնքի հրճուանքին:

Յետոյ, եւ մանաւանդ՝ ի՛նք, մտաւորականը, կրնայ եւ պարտաւոր է արտյեանը դառնալ այդ գաղափարին եւ դարբինը այդ վերափոխումին: Պէտք է Հաւատայ, թէ ինք՝ իր դիրքով ու կոչումով՝ կերտողն ու առաջնորդը պարտի ըլլալ Հանրային կարծիքին: Դիւրին է, անշուշտ, բայց ի զուր եւ անարդար, պարսաւել Հասարակութիւնը իրրեւ անաարբեր, կորովազուրկ եւ տակաւին մեղապարտ ուրիշ իրական կամ մտացածին յանցանքներով: Բայց ժողովուրդը ընդհանրապէս կը հետեւի իր ղեկավար ճանչցած մտաւորականներուն, - Համոզումով, բնազդով կամ պարզապէս վստահելով: Եւ եթէ Հան-

րութիւնը յաճախ յուսախար կը ձգէ իր առաջնորդները՝ պատասխանատուն իրմէն աւելի՝ այդ մտաւորական դասն իսկ է: Որովհետեւ անոր տարբեր անդամներն են, որ իրենց ժխտական կամ խեղաթիւրոզ գաղափարներով եւ արարքներով, կը շփոթեցնեն ու կը մոլորեցնեն զանգուածները:

Յաւագին հեզնանք է, օրինակ, որ գաղութահայ տխուր կացութեան Հանդէպ դառն յուսալքումով մեկուսացած կամ ինքնակոչ դատախազի խստութեամբ մտաւորականներ սրտառուչ կոչեր ու յորդորներ արձակեն ժողովուրդի այլազան խաւերուն, որ Համերաշխին ու միաբանին, «ի սէր Հայ ազգութեան»: Բայց իրենք կը մնան ամենէն անհամերաշխ ու պառակտուած անդամները մեր Հասարակութեան: Անոնք կը դատապարտեն Հոսանքներ եւ եղբայր մտաւորականներ, որոնք Հայ ժողովուրդի ազգային գոյատեւման եւ քաղաքական ճակատագրի բախտորոշ խնդիրներուն շուրջ հիմնական տարակարծութիւններով բաժնուած են՝ որ չեն ողջագուրուիր եւ գործակցիր: Բայց իրենք չեն կրնար միաբանիլ նոյնիսկ գրական անմեղ ձեռնարկի մը կամ յանձնախումբային ընթացիկ աշխատանքի մը մէջ, այնքան գերիշխան են իրենց մեծ փառասիրութեանց ու պզտիկ եսերուն ինքնարաւ յաւակնութիւններն ու պղտոր բնազդները:

Դժբախտաբար, այդ ժխտական ու վնասարար վերաբերումի մոլորանքին մէջ կ'իյնան յաճախ նոյնիսկ յայտնի, պարկեշտ մտաւորականներ, որոնք իրենց կոչումին գիտակցութիւնը ունին եւ որոնք նուիրուած են ազնուագոյն Համոզումներու եւ զանոնք իրագործելու պայքարին: Որովհետեւ անոնց դատողութեան ու գործելակերպի մէկ Հանգրուանին՝ արժէքներու Համեմատական չափի կամ բարոյական պատասխանատուութեան նժարի խախտում մը զանոնք երբեմն վրիպեցուցեր է նպատակներու եւ հետապնդումի այն ուղիէն, որուն փարած արտյեանները պիտի մնային անոնք, իրրեւ տաղանդաւոր գրողներ եւ անձնուէր հանրային գործիչներ:

Բազմաթիւ են պատահարները, ուր իրենց կենսական դերին ու առաքելութեան լրիւ ըմբռնումը առժամապէս լքած մտաւորականներ, քմահաճ սայթաքումով մը՝ խռովեր ու տրտմեցուցեր են նոյն ազգային ու մարդկային Հասարակաց կոչումի իրենց եղբայրակիցները: Զարմանալի ու տխուր երեւոյթ մըն էր, օրինակ, երբ Բարիքի մէջ, վաւերական տաղանդով օժտուած ծանօթ գրագէտներու խումբ մը գրական ատեանի նստաւ եւ մեծաշոխ դատաւճիռ մը հրատարակեց բանասիրական ճշմարիտ վէճի մը շուրջ, որ իրենց չէր վերաբերեր երբեք եւ իրենցմէ նոյնիսկ մէկին ստորագրութեան արժանի նշանակութիւն չէր պարունակեր:

Եղելութիւնը սովորական էր, - ընթացիկ տարակարծութիւն մը,

արտայայտուած մամուլի մէջ, երկու հայ բանասէրներու միջեւ եւ միջնադարեան ուրիշ հայ հեղինակի մը անուան ստուգումին շուրջ:— Նիւթ մը, որ մատենագիտական մարզին կը վերաբերի եւ որուն մասին վէճ, անուանարկում, դատաստան ու վճիռ այնքան անմիտ ու անշահ են՝ որքան զաւելչտական, գաղութահայ դժխեմ գոյավիճակին մէջ մանաւանդ: Եւ Ֆրանսահայ տասնեակ մը յայտնի մտաւորականներ ժամանակ ու եռանդ տուին, — աւելի՛ն, սնամէջ չքմեղանքը գտան խեցեւծիւ մը արձակելու բանավիճոյ կողմերէն մէկուն ի նպաստ: Կարծես թէ հայ ժողովուրդի ներկայ տագնապալի կեանքին ու գալիքի ճակատագրին սպառնացող աղէտ մը լուծեցին:

Տակաւին ամսոսպալի պիտի չըլլար այդպիսի աննպատակ միջամտութիւն մը, եթէ ան չըլլար առանձին դէպք մը, առանց նախընթացի ու յաջորդի: Եւ դժուար է երեւակայելն անգամ, որ անցեալ քառորդ դարուն, կամ քառասուն տարիներուն՝ հայ ժողովուրդը, Հայաստանի մէջ թէ արտասահմանի մինչեւ հեռավոր ու մթին անկիւնները տարտղնուած՝ դիմագրաւեց ահաւոր ճգնաժամեր, կերտեց վերաշինութիւն ու հայրենադարձ, ապրեցաւ ուրացում ու դաւ եւ պառակտիչ կռիւ ու եղբայրասպան ոճիր:

Սակայն ոչ մէկ առիթով, Բարիգի նոյն տաղանդաւոր, յարգելի գրագէտները արժանի տեսան իրենց միացեալ հեղինակութեան բողոքը կամ ներբողը, թախանձանքը կամ դատավճիռը արտայայտել այդ իրապէս կենսական ու նշանակելի դէպքերուն մասին: Թերեւս կրնան արդարացում մը մըմնջել, — թէ կարելի չէ՛ր համաձայնիլ, անգամ նոյն սեղանին բոլորտիքը նստիլ ու խորհրդակցիլ, հայրենիքի ու սփիւռքի ներկայ վերապրումը եւ ապագայ գոյատեւումը պայմանաւորող հիմնական խնդիրներու շուրջ: Բայց այն ատեն ի՛նչ հարկ նսեմանալ, մտաւորականի վսեմ, ստեղծարար դերին հանդէպ՝ բանասիրական աննշան բանավէճի մը մէջ մխրճուելով:

Ուրիշ օրինակ մըն է վերաբերումը վաստակաւոր, հայրենասէր մտաւորականի մը, որ վերջերս Հայաստան այցելութեան առիթով՝ Երեւանի մէջ կիսապաշտօն հաւաքոյթի մը ընթացքին յայտարարեց, — եւ յետոյ կրկնեց զայն իր խմբագրած օրաթերթին սիւնակներէն, — թէ Հայաստանի կառավարութիւնը պէտք է շուտով ներգաղթ կազմակերպէ դարձեալ: Եւ քանի որ հայրենիքի սահմաններուն մէջ բաւական պատրաստ տեղ ու բնակարաններ չկան՝ թող ներգաղթողներ հաստատուին սահմանակից Վրաստանի եւ Ատրպէյճանի մէջ:

Տարակոյս չկայ այլեհեր հրապարակագրին շարժառիթներուն ազնուութեան եւ հայրենասիրական խանդին մասին: Բայց հայրենադարձ տարագիրներու կարաւաններուն հոսանքը տեսնելու եւ անոր երանութիւնը վայելելու իր աճապարանքին մէջ՝ ան մոռցեր է, թէ

ճշմարիտ, հեռատես մտաւորականին դերն է նաեւ խուսափիլ զգացական գեղումներու փորձութենէն եւ երբեք չլքել առարկայական դատողութեան եւ բանաւոր, նպատակուած եզրակացութեան նշանակէտը:

Այդ չափանիշին հաւատարիմ մտաւորականը պիտի տրամաբանէր:— Ուեւէ անհատ, հանրային ծառայութեան եւ վարկի որքան բարձր մակարդակի վրայ ալ գտնուի, ինքն իրեն պէտք չէ տայ իրաւունքը, ջատագովելու ծրագիր մը, որ պիտի վճռէ ճակատագիրը հարիւր հազարաւոր ենթադրական ներգաղթողներու, առանց անոնց կամքը եւ հաւաքական պատգամը ապահոված ըլլալու: Առնուազն շատ կասկածելի է, որ հայրենադարձներ հաւանին երթալ ու բնակիլ թէկուզ սահմանամերձ սովետական հանրապետութեանց մէջ, որոնք անոնց համար օտար երկիրներ պիտի ըլլան հապէս:

Եւ աւելին. գաղութահայ մտաւորականը ինք պիտի առարկէր, եթէ նոյնիսկ պատահական ներգաղթողներ այդպիսի առժամեայ բաղձանք մը ունենային: Որովհետեւ հայրենադարձները դիմագրաւող բնակարանային եւ յարակից նախնական դժուարութիւններ ու զրկանքներ կը կրուին՝ հարազատ հայրենիքի մէջ ու ժողովուրդին հետ ըլլալու գիտակցութեամբ, որ գոնէ հոգեկան ու մտաւոր գոհունակութիւն կը պարգեւէ: Եւ յետոյ՝ հայրենադարձին նպատակը Վրաստանի եւ Ատրպէյճանի արդէն հսկայ հայ գաղութները բազմացնել չէ, — այլ անցնել ու զօրացնել Հայաստանի՝ հայութիւնը, մինչեւ որ ան յորդեւելու չափ լեցնէ ամբողջ մայր հայրենիքը: Որովհետեւ ոչ մէկ երաշխիք կայ, որ սահմանամերձ այդ երկիրներուն մէջ հաստատուած եւ տուն, դիրք ու ապահովութիւն չահած ներգաղթողներու խոշոր մէկ տոկոսը հետագային պիտի տեղափոխուի Հայաստան:

Զգացական պոռթկումի նոյնքան տխուր ու ձախորդ երեւոյթ մըն է դառն, մոլեգին բանավէճը մտաւորականներու միջեւ, որոնք յաճախ նոյն ազգային նպատակները կը հետապնդեն եւ նոյն ընկերային սկզբունքները կը դաւանին, — անոնց իրագործումին հասնելու ճամբաներուն երանգներով միայն տարբերելով իրարմէ: Այդպիսի անմիտ գրչամարտի մը քէները սփռեցին երկու հայրենասէր հանրային գործիչներ, որոնք այցելած էին Հայաստան եւ վերադարձնուն՝ բռնուեցան նախատական բանավէճի մը, հայկական հողերու ազատագրման մշտապէս թարմ ու կոտտացող հարցին շուրջ:

Բայց ինչ որ վնասակար ու անթոյլատրելի կը դարձնէր անոնց վարած բանակութիւնը՝ մղուած պայքարին ակադեմական բնոյթն էր, որ միայն կրնար շփոթեցնել, զայրացնել ու թշնամացնել անոնց հետեւորդ մտայնութիւնները: Երկու գրողներն ալ կը պատկանէին քաղաքական ու տնտեսական ձախ ըմբռնումներու: Երկուքն ալ նախանձայոյզ ախոյեաններ էին վերածնած Հայաստանի իրականութեան,

ջատագով անոր զօրացումին եւ ընդարձակման: Երկուքն ալ իրարու համաձայն էին հայ ժողովուրդի պատմական հողամասերու ձերբազատման ու վերածնող մայր հայրենիքին միացման նպատակին ու ձեռնարկներուն մէջ:

Եւ զանոնք բաժնող գաղափարական գիծը, հազիւ նշմարելի, գործելակերպի տարբեր երանգաւորում մըն է սոսկ, աննշան ու տրժագոյն, որուն շուրջ անհրաժեշտ է խորհրդակցիլ զուսպ ու իրաւախոհական ոգիով: Բայց երբեք ներելի չէ այդ ճղճիմ տարակարծութիւնները նոր խաչակրութեանց կարգախօսներու վերածել եւ տեսակէտներու մանրուք ճեղքերը պատռել ու խորացնել անկամրջելի խրամատներու, անոնց հանդիպակաց ամբարտակներուն կանգնելով անհաշտ ու իրակալ ոսոխներու նման:

Իր ճշմարիտ կոչումին եւ վսեմ առաքելութեան արժէքին ու ծաւալին գիտակից մտաւորականը պիտի տրամաբանէր այլապէս: - Թէ սփիւռքի ներկայ գոյակիճակին մէջ, հայու Ֆիզիքական վերապրումին ու զօրացման պահանջներուն հանդէպ՝ ոչ միայն անիմաստ պերճանք, այլ նաեւ քրէական մոլորանք է արտասահմանի հայ մտաւորականներու համար՝ մխրճուիլ տեսարանական վէճերու եւ վարկածային գարտուղումներու ճախճախտտին մէջ, որ հատուածներու բախումներով կը վիրաւորէ, կը տկարացնէ բովանդակը:

Որովհետեւ պէտք է համոզուած ըլլայ իրապաշտ գրողն ու խղճամիտ հանրային գործիչը, թէ որպէս ամբողջական ազգութիւն՝ անոր ժառանգորդ ապրող սերունդը միակ հիմնական, բացարձակ ու անեղծանելի նպատակի մը մարմնացումին կրնայ փարիլ իր բոլոր ուժերով, էութեամբ ու տեսիլքով: - Զարգացնել ու զօրացնել վերականգնած Հայաստանը եւ անոր մարդկային, քաղաքական ու տնտեսական խարխիսին վրայ կառուցանել գալիք շէնքը ամբողջապէս ազատագրուած Հայաստանին, միաձոյլ ժողովուրդով մը:

Ամէն շեղում այս հասարակաց նշանակէտէն, թէկուզ մասնակի եւ վաղանցիկ՝ կորուստ ու վատնում է թանկագին ուժերու: Եւ ամէն կողմնակի գրոհ կամ անարգական վերագրում, որ նոյնիսկ փոքրագոյն խիճը կը նետէ համադրուելիք ճիգերու եւ հետապնդուելիք նպատակի այլապէս դժուարին ճամբուն վրայ՝ վնասարար հարուած մըն է ընդդէմ այն գերագոյն իտէպին՝ որուն շունչով կ'ապրին ու գաղափարով կ'երդնուն անոնք:

Զէ՞ որ քինախնդիր ոգիով, զայրոյթով բանակոտող մտաւորականները գիտե՞ն, թէ մօտալուտ օր մը, թերեւս վաղն անգամ, պարտաւոր պիտի ըլլան հաւաքուիլ նոյն սեղանին շուրջ եւ ծրագրել, որոշել ու գործակցիլ նոյն այդ հայկական հողամասերու ազատագրման եւ գաղութահայ ազգային ինքնապահպանման կենսական

խնդիրներուն շուրջ: Եւ ո՞րն է աւելի տրամաբանական, աւելի հնարաւոր կերպը, - համախմբուիլ իբրեւ հակառակորդ ու ոսոխ՝ իրարու շարտուած վէրքերու դառնութեամբ ու ցաւով, թէ որպէս ազգային հիմնական նպատակներու շուրջ համերաշխ, թէկուզ մա՛նրօրէն տարակարծիք, գործակիցներ:

Գաղութահայ մտաւորականը, մեր ժողովուրդին մանաւանդ արեւմտեան հատուածը պատուհասած զարհուրելի ողբերգութենէն յետոյ՝ պարտաւոր էր աւելի ինքնազուսպ եւ առարկայական դառնալ: Պարտաւոր էր թօթափել զգացական վիպայնութեան հին կապանքներն ու նոր պատրանքները եւ տեսնել, ճանչնա՛լ միջազգային դիւանագիտութեան բիրտ ու ապարարոյ նկարագիրը իր տղմոտ մերկութեան մէջ: Եւ խորանալ դէպի մեր ազգային անցեալն ու մտածել, - յամառօրէն ու տառապանքով խորհրդածել անոր եղբրական փորձառութեանց եւ ներկայ կենսական պահանջներուն վրայ:

Վստահարար՝ այն ատեն գիտակից մտաւորական մը իր հիմնադրած շաբաթաթերթին իբրեւ նպատակ պիտի չհռչակէր, թէ «արտասահմանի մէջ յեղափոխական սերունդ պիտի պատրաստենք»... տըրտում վկայութիւն մը, որ ծալլվարեան զաւեշտի դառն քրքիջը պիտի քաղէր, եթէ անհաւատալի, վիրաւոր մանկամտութեան մը ապացոյցը չտար: Որովհետեւ՝ որքան չարաշուք նմանութեամբ ան կը յիշեցնէ աղէտալի ուրի՛շ հոգեվիճակ մը, որ վեց դարերու դժոխային հալածանքներու եւ արիւնազանգ ջարդերու սարսափներէն փրկուելու մեր ժողովուրդին անհաւասար, յուսահատ մաքառումին մէջ՝ խելագար ցուցամոլութեամբ մը «հերոս մոնչեց, սուլթան դողողաց, Վիլհէլմի աչքից արտասուք ցոլա՛ց» կ'երգէր տանիքներէն: Այո՛, բաւական չէր որ իր վախէն դողացնէինք օսմանեան կայսրութեան հզօր սուլթանը, պէտք էր որ նաեւ սոսկումէ լացնել տայինք Գերմանիոյ Վիլհէլմ կայսրը: Եւ հիմա՝ հեծելանիւով պատերազմ կը վարեն անոնք Սովետ Միութեան դէմ: Մինչ չէզոք, հայրենասէր մտաւորականը կ'առաջադրէ «յեղափոխական սերունդ պատրաստել», - կարծես բաւական չէ, եթէ յաջողինք հայրենասէր հայեր եւ գիտակից մարդիկ կերտել մեր նոր սերունդէն:

Հանրային ծառայութեան բոլոր մարզերուն վրայ եւ ժողովուրդի մը բաղկացուցիչ այլազան խաւերուն մէջ՝ ամենէն աւելի մտաւորականն է, որ պէտք է խստօրէն պատասխանատու մնայ իր ջատագոված գաղափարներուն ու ներշնչած արարքներուն համար: Որովհետեւ մինչ ուրիշ աւելի հրապուրիչ ասպարէզներու մէջ աւելի ազդեցիկ դիրքերու վրայ, պաշտօնով ու կոչումով առաջնորդներ նուիրուած են հասարակութեան նիւթական, Ֆիզիքական ու քաղաքական կարիքներու բաւարարման՝ մտաւորականին դերն է զարգացումը անհատին կամ հաւաքականութեան մտքին եւ ազնուացումը անոնց խառնուածքին ու ձգտումներուն:

Եւ մինչ դիւանագէտին, զօրապետին, բժիշկին կամ ճարտարագէտին սայթաքումէն ու ձախողանքէն առաջացած աւերը, չարիքը կամ մահը ներկան ու նիւթեղէնը կ'ընդգրկեն՝ մտաւորականին վրիպանքը եւ մեղքը կը թանձրանան մարդոց մտքերուն ու հոգիներուն մէջ, կը դառնան նախապաշարում ու քէն, կը վերածուին իմացական մթութեան եւ այլամերժ ժխտումի, որոնք իրենց ապասերող ներգործումով կ'առաջնորդեն ամբողջ սերունդներ:

Ահարկու պատասխանատուութիւն մը, մանաւանդ սեփական հայրենիքի եւ հարազատ պետութեան հովանիէն զուրկ զաղութահայ մտաւորականին համար: Որովհետեւ յաճախ, մենաւոր արտոյեանի իր ինքնաբաւ մտայնութեան մէջ՝ ան կը կառչի իր փայփայած մտասեւեռումի ծաւալման, զայն ապացուցանելու կամայական ճիգերով: Ան պարտաւոր էր ճշմարտախոյզ զատումով սերտել, տարրալուծել մեր ազգային գոյավիճակին մռայլ կամ լուսաւոր եղելութիւններն ու յարափոփոխ պայմանները եւ իր համոզումները հաստատէր անոնցմէ բխած եզրակացութեանց վրայ: Բայց անհեթեթ քմայքով մը՝ ան նախ կը հռչակէ իր կանխակալ դատաստանները եւ յետոյ դէպքերու չըջուած մեկնարանումով՝ կը փորձէ անոնց վկայութեամբ հաստատել իր կարծրացած համոզումները:

Ժխտական այդ վերաբերումին զրականօրէն չքաւորուած օրինակը հայթայթեց սփիւռքահայ շարաթաթերթի մը բանաստեղծ խմբագիրը: Ան իր հանդէսին մէկ ամբողջ համարը նուիրած էր բարիզահայ ուրիշ տաղանդաւոր գրագէտի մը, էջ ու կէս գրաւող «ուսումնասիրութեամբ» մը անոր մասին, խորագրուած՝ «Մեմակեացը»...: Եւ ո՛վ տխուր հեզնանք, - այդ երկար ներբողականին հազիւ քառորդը յատկացուած էր գնահատուող բանաստեղծ-արձակագրին շուրջ 15 հատորներու հասնող գրական վաստակին:

Իսկ վերլուծականին խոշորագոյն հատուածը կը փորձէր, բռնազրօսիկ ու տրտմօրէն լարուած յանկերզով մը ապացուցանել կանխակալ դատաստան մը: Եւ կը խոստովանուէր, որ ենթակային մեծագոյն առաքինութիւնը, անոր գերադրական արժանիքը այն էր, որ «Մեմակեաց» մըն էր ան, որ անկուսակցական էր եւ վեհափառ մեկուսացումով մը վե՛ր մնացեր էր մանաւանդ «վերջին քանի մը տարիներուն հայ կեանքը փոքորկող վեմերէն»: Եւ կարծես իբրեւ շքեղ փառապսակ անոր արուեստագէտի ճակատին՝ կ'ընծայուէր խորտակիչ վկայութիւնը, - «Ահա թէ ինչու՛ խմբագիր չէ, գործիչ չէ, ուսուցիչ չէ, թերթերու աշխատակից եւ յօդուածագիր չէ» ան:

Ուրեմն ենթադրաբար՝ այդ պղտորող, ապականող ասպարէզներէն եւ զբաղումներէն վեր մնալուն մէջ թանձրացեր է «Մեմակեաց»ին գրական արժանիքը: Բայց բարեբախտաբար այդպէս չէ իրականու-

թիւնը: Մենք անոր մէջ ճանչցեր ենք աւելի հիմնական տաղանդ մը, աւելի օժտուած գրագէտի մը արժէքը՝ քան անոր վերագրուած պիղատոսեան կասկածելի յատկութիւնը:

Սակայն ցաւագին վրիպանքը՝ խմբագրող մտաւորականին ծանծաղ ու մոլորեցնող դատավճիռն է: Կարելի է անտեսել վիրաւորանքը, որ կը չպրտուի մտաւոր աշխատանքի միւս մարզերուն մէջ ծառայող խոնարհ ու անձնուէր հոգիներուն: Բայց հարեւանցի ակնարկ մը հայ գրականութեան վրայ եւ նախապաշարումի ժահրէն սրբուած դատում մը անոր ամենէն շքեղ ու լուսաւոր տաղանդներուն՝ ընդմիջտ պիտի քանդէր այդ չքաւոր վարկածը, թէ գրագէտին արժանիքը կը պայմանաւորուի հանրային վէճերէն եւ ընկերային յեղաշրջումներէն «մենակեաց»ի մեկուսացումով:

Գրագէտի կոչումը, արուեստագէտի տաղանդը պիտի մերժէր այդպիսի արուեստական շղթայում: Եւ անժխտելի իրողութիւն մը կը մնայ, որ հայ գրականութեան մեծագոյն դէմքերը չեն արհամարհած, չեն լքած խմբագիրի, գործիչի, ուսուցիչի եւ հրապարակագիրի պարտաւորած ասպարէզները: Աւելի՛ն. Եղիշէէն եւ Խորենացիէն մինչեւ Արովեան ու Նալբանդեան, եւ Պարոնեան, Արփիարեան ու Զօհրապ, եւ Զօպանեան, Բաշալեան ու Թէքէեան, եւ Վարուժան, Սիամանթօ ու Զարդարեան, եւ Տէրեան, Զարենց ու Բակունց, եւ Թումանեան, Իսահակեան եւ Շանթ ու Օշական եւ դեռ այնքան ուրիշ գրագէտներ՝ եղան նաեւ ուսուցիչ, խմբագիր, հանրային գործիչ ու յօդուածագիր, - առանց դադրելու մեծ, տաղանդաւոր բանաստեղծներ ու գրագէտներ ըլլալէ:

Տարակոյս չկայ, որ տաժանելի եւ ապերախտ է իրական մտաւորականին վիճակուած ճամբան: Բայց նաեւ մարդկային մտքի եւ ոգիի դարբնումին ու բիւրեղացումին ազնուագոյն կոչումն է ան: Եւ զաղութահայ մտաւորականը պարտի ձգտիլ անոր բարձրագոյն սահմանումին, որուն կրնայ հասնիլ՝ երբեք չըրժելով անոր ամենէն վեմ սկզբունքներուն եւ անոնց իմաստ ու արժէք տուող պայմաններուն, - որոնել ճշմարտութիւնը ամէն վարկածի ու վերագրումի ետեւ. փարատել նախապաշարումի եւ ատելութեան խաւարը ապացուցուած իրողութեանց լուսարձակով, ձերբազատ մտքով փնտռել պատճառները եւ շարժառիթները ամէն դէպքի, խոռվութեան ու տաղնապի եւ փարիլ անոնց բարձումի ճիգերուն, փոխանակ երկչոտ դասալքումով ապաստանելու մեկուսացումի երջանի՛կ պատեաններու մէջ: Եւ իր մտքին լոյսն ու հոգիին ջերմութիւնը, իր մկաններուն ուժն ու հուրթեան բովանդակ թափը մատուցանել՝ հայ ժողովուրդին խաղաղ ու ստեղծագործող ներկայ մը եւ փառաւոր ու պայծառագոյն ապագայ մը կերտելու շքեղ առաքելութեան:

ԽՕՍՔ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՐՈՂՆԵՐՈՒ

Անցեալ տասը տարիներուն՝ նորահաս գրողներու երիտասարդ սերունդ մը յայտնուեցաւ Մերձաւոր Արեւելքի հայկական հոծ գաղութներուն մէջ: Գրականութեան եւ արուեստներու մարզերուն վրայ եւ մշակութային խանդավառ, կենսայի շարժումներու մէջ՝ եռանդի, շնորհքի ու տաղանդի թագուն կամ յայտնի տարրերով օժտուած արձակագիրներ, բանաստեղծներ եւ արուեստագէտներ հանդէս եկան, հետագայ իրագործումներու խոստումներով: Եւ իրողութիւնը, որ նախկին գրական կեդրոններու արտադրած արժէքներուն ու կառուցած վարկերուն տկարացման զուգընթաց, Պէյրութի, Հալէպի, Նաեւ Գահիրէի մէջ կը կազմաւորուի հայ նորահաս գրագէտներու սերունդ մը՝ մեծապէս կը սրտապնդէ եւ կը հրճուեցնէ հայ հասարակութիւնը ամէն գաղութի մէջ:

Դիպուածի արդիւնք չէ հարկաւ, ոչ ալ բացառիկ ձիրքերու արտասովոր կեդրոնացման հետեւանք, գաղութահայ գրական ու գեղարուեստական ճիգերու եւ վաստակի այդ տեղաշրջումը: Երեք գլխաւոր ազդակներ, - Ֆիզիքական, ընկերային ու հոգեբանական, - ստեղծեցին ու տակաւ պիտի հիմնաւորեն ու ծաւալեն անոր ծնունդ տուող պայմանները: Անոնց ամենէն կենսականը, բնականաբար, այն բարեբախտ իրողութիւնն է, որ Լիբանանի, Սուրիոյ եւ Եգիպտոսի այդ մեծագոյն ոստաններուն մէջ հիմնուած են հայկական նախնական ու բարձրագոյն վարժարաններ, որոնցմէ շրջանաւարտ պատանի սերունդը կենանքի ասպարէզ կ'իջնէ՝ դաստիարակուած իբրեւ ճշմարիտ ու գիտակից հայ: Եւ ո՛չ միայն կրթութեամբ հայ, - այսինքն զարգացած՝ հայերէն լեզուին, պատմութեան ու մշակոյթին մէջ. այլ նաեւ ու մանաւանդ՝ հայ, իր ոգիով, ձգտումներով ու խառնուածքով:

Երկրորդ պատճառ մը՝ անոր մերձաւորութիւնն է Հայաստանին, - որ հրեղէն ամպասիւնի մը նման կը կանգնի հորիզոնին վրայ եւ իր մագնիսական առանցքին շուրջ կը գրաւէ հաւատքով ու կամքով, երազով ու յոյզերով տողորուած ղեռասի հոգիները: Ամէն երիտասարդ սերունդ խանդի ու տեսիլքի ակերէն կը ներշնչուի: Եւ գրողներ մանաւանդ՝ նոյնիսկ իրենց ամենէն խոնարհ պատուանդանին վրայ, համակուած կ'ըլլան նուիրական կոչումի մը միամիտ հաւատքով, -

չբացնելու ամէն մութ ստուեր ու չարիք իրենց ժողովուրդի կենցաղէն, բիւրեղացնելով անոր նկարագիրը. եւ նոյնիսկ վերակերտելու մարդկային կեանքը:

Մերձաւոր Արեւելքի մէջ աճող ու հասունցող պատանի կամ երիտասարդ հայ գրողը, ուրեմն, իր ազնուագոյն տենչերուն ու մտածումներուն գրական արտայայտութիւն տալու հզօր ու յարատեւ մղում մը կրնայ ստանալ վերականգնած հայրենիքին մէջ՝ հայ ազգային, քաղաքական ու մշակութային վերածնունդին իրողութեանէն: Հայաստանի յարաբերական մօտիկութիւնը, փոխադարձ յաճախակի այցելութիւնները եւ Երեւանի ձայնասփիւռին ամենօրեայ յայտագիրները, որոնք հայրենի երգով, նուագով ու խօսքով կ'ողողեն անոնց տուններն ու հոգիները՝ մշտապէս կը սնուցանեն, կը հրահրեն անոնց սէրն ու ձգտումը դէպի ամէն հայկական արժէք ու նուաճում, դէպի հայ գրականութիւնը մանաւանդ, եռանդ ու ներշնչում հայթայթելով վարանող կամ վհատող գրիչներուն:

Ուրիշ գրական գործօն մըն է արաբ ժողովուրդներու ազգային զարթօնքին եւ յեղափոխական մարտնչումներուն ազդեցութիւնը: Ամէն ազատութեան պայքար եւ ընկերային յեղաշրջում՝ մտածումի կրաւորական կապանքները խզելու եւ զգացումի մոայլը տեսիլքի ճառագայթներով փարատելու վարակիչ գորութիւն մը կը շղթայագերծէ: Եւ Մերձ. Արեւելքի երիտասարդ հայ գրողները, ապրելով արաբական երկիրներու մէջ, անխուսափելի է, որ կրեն անոնց յեղափոխութեան ոգիին, գաղափարներուն ու մաքառումներուն ազդեցութիւնը:

Զարմանալի չէ ուրեմն, որ այդ շրջանի երիտասարդ հայ գրողներու պատմուածքներուն, վէպերուն կամ քերթուածներուն մէջ, իբրեւ տիրական տարրեր երեւին ազգային յոյզ ու հպարտութիւն թելադրող, ջերմ ու խանդավառ հայրենասիրութիւն բարախող եւ արաբ ժողովուրդի ազատագրական մաքառումը արձագանգող նիւթեր:

Թերեւս բնական է նոյնպէս, որ ամէն գրող, իր խառնուածքին, հակումներուն ու միջավայրին համաձայն՝ տարրեր ներգործում կրէ եւ առաւել կամ նուազ չափով ազդուի ներշնչումի այդ երեք աղբիւրներէն մէկէն կամ միւսէն: Մտածելու, զգալու եւ արտայայտուելու այդ երանգաւորումն է, որ այլազանութիւն ու ճոխութիւն կրնայ ստեղծել գաղութահայ գրականութեան մէջ:

Գրող մը, արձակագիր կամ բանաստեղծ, կրնայ աւելի խորապէս տողորուիլ իր ժողովուրդին ձգտումներով ու հոգեբով, անոր ներկայ մաքառումներով ու ասպագայի տեսիլներով, - ուրեմն աւելի տիրական դարձնել ազգային խորքը, ոգին ու տարագը իր գործերուն մէջ: Ուրիշ մը աւելի ուժգնօրէն կրնայ ենթարկուիլ վերականգնած Հայաստանի

լուսաւոր իրականութեան հմայքին, եւ հայրենասիրական խանդը, ցանկացուած երազի մը մարմնացումը ողջունելու հրճուանքին հետ, սնուցանող կենսական աւիշը կը հանդիսանայ իր գեղարուեստական յղացումներուն:

Տակաւին այդ խանդավառ հայրենասիրութիւնն անգամ իր ներքին երանգներն ունի: Գրագէտ մը՝ անոր մէջ գերազանցօրէն հայոց պատմական հայրենիքին ազատութեան, պետական վերականգնումին եւ ազգային ու մշակութային վերածնունդին փաստը կը տեսնէ եւ անոր փառքով կ'ուրախանայ: Ուրիշ մը՝ ատոնց հետ, երբեմն աւելի վեր, ընկերային ու գաղափարական ձգտումներէն կը գերադասէ ներշնչուիլ:

Իսկ դեռ երրորդ գրող մը, առաւել անմիջականութեամբ, կը կրէ ազդեցութիւնը իր շրջապատին, ուրեմն արար ժողովուրդի ազատագրական պայքարին եւ յեղափոխական մաքառումներուն: Ու բնականօրէն, անոր պատմութեան ընդմիջումն է համամարդկային ոգիի թաթաւումով: Եւ Մերձ-Արեւելքի հայ նորահաս եւ երիտասարդ գրողները կարելի է բաժնել այս երեք գլխաւոր դասակարգերուն տակ, որոնք նաեւ անոնց գրական երկերուն բովանդակութիւնն ու ոճը կը յատկանշեն:

Մերձաւոր Արեւելքի հայկական կեդրոններուն, մասնաւորապէս Պէյրութի եւ Հալէպի մէջ զարգացող մեր նորահաս եւ երիտասարդ գրողները, ուրեմն իրենց խառնուածքին, ձգտումներուն եւ արուեստի ըմբռնումներուն համաձայն՝ տարբեր աղբիւրներէ կը քաղեն իրենց ներշնչումը եւ հետեւաբար այլազան երանգներով պիտի յատկանշուի արտադրուած գրականութիւնը: Դարձեալ բնական է, որ ազգային, ընկերային ու գրական նոյն սկզբունքները դաւանող տղաք եւ աղջիկներ աւելի հարազատ զգան նոյն մտերմական մթնոլորտին մէջ եւ համախմբուելով՝ կազմեն առանձին «գրական շրջանակ»ներ եւ հրատարակեն ամսագիրներ, իրբեւ իրենց ճիգերուն արտայայտութեան ասպարէզ:

Եւ անցեալ քանի մը տարիներու ընթացքին, Պէյրութի եւ Հալէպի մէջ գոյութեան եկած են երեք տարբեր «գրական շրջանակներ», երեք քաղաքական հայրենասէր հոսանքներու շրջագծէն ներս, իրենց պարբերաթերթերով: Նորահաս եւ երիտասարդ գրողներու այդ շարքերուն վրայ կան վաւերական շնորհներ, ապացուցուած ճիւղեր, խոստմնալի սկսանակներ: Անոնց կենսուենակ ոգիին, յարատեւ ճիգերուն ու գեղարուեստական ճաշակին համադրումով ստեղծուած բեղմնաւոր միջավայրը, եթէ պահպանուի ու մշակուի՝ հետզհետէ կրնայ վերածուիլ գրական ճշմարիտ փորձադաշտերու, ուր յղուին, բերեղանան ու խորանան նորայայտ տաղանդներ:

Գաղափարի, խորքի ու ոճի տարբեր երանգաւորումները, նոյնիսկ շերտաւորումները սահմանուած չեն ժխտական արդիւնքներու, անպայման: Ընդհակառակը, անոնք երբ կը շարունակուին արուեստի լաւագոյն երկեր արտադրելու մտահոգութեամբ՝ կը բանան ուղին աւելի բովանդակալից, այլազան ու գեղեցիկ գրականութեան մը:

Բայց իրարմէ անջատ ու առանձին «գրական շրջանակ»ները նաեւ վտանգաւոր փորձութիւն մը կը դիմագրաւեն: Մոլորած նախանձայոյզ ոգիէ մը, որուն մէջ իրենց անձնական ինքնասիրութեան փայփայանքը կը զգան, անոնց անդամները կը փորձուին աւելի խոշոր արժէքներ ու փայլուն տաղանդներ հաստատել իրենց խումբին՝ քան դրացի շրջանակին մէջ: Ուրեմն գերզնահատել իրենց իրական արժանիքն ու նշանակութիւնը եւ ստորագնահատել միւսինը: Եւ կը կազմուի մրցակցական մտայնութիւն մը, որ գրականութեան եւ արուեստի հոգէն աւելի՝ սեփական խումբի գերազանցութեան նպատակը կը հետապնդէ: Հոգեբանական այդ վիճակէն կը բխին գրախօսականներ ու դատումներ հրատարակուած գրքերու եւ արուեստի գործերու մասին, որոնց մէջ քննուող երկերուն բովանդակութեան ու մշակման ձեւին արժէքներու գնահատումէն աւելի՝ հեղինակին խառնուածքն ու գաղափարները կը քննադատուին կամ կը ներբողուին:

Պէյրութի եւ Հալէպի «գրական շրջանակ»ներու նորահաս եւ երիտասարդ գրողները անհրաժեշտ է, որ խուսափին այդ փորձութեան թակարդէն, փարելով գրագէտի իրենց ազնիւ կոչումին: Որովհետեւ ոչ մէկ տարակարծութեան, ոչ մէկ երանգային շերտաւորումի պատճառ կայ գաղութահայ գրողի կենսական դերին մասին, իրբեւ հայ մտաւորական եւ գիրի մշակ:

Կրկնակ առաքելութիւն մը ուրեմն, - գոր նորահասները, իրենց լեզուին ու աւանդութեանց, իրենց իտէալներուն ու սէրերուն հետ՝ ժառանգեցին երէց սերունդի լուսաւոր դէմքերէն: Ըսուած է, - հայրերը ազոխ կերան եւ զաւակներուն ակոսները առին: Ի՞նչ կ'ըլլայ չքմեղանքը ուրեմն երիտասարդ գրողներու, որոնք հին սերունդին ամուլ վէճերն ու դառն պայքարները դատապարտելէ ետք, - որոնք բնական, նոյնիսկ անխուսափելի էին այն ժամանակ - երբ իրենք մխրճուին գրական աւելի անշահ բանակուիներու մէջ, առանց երէցներու արդարացումն ունենալու:

Արտասահմանի հայ նորահաս գրողը երկու էական սկզբունքներէ պիտի ներշնչուի, երկու հիմնական նպատակներու պիտի ձգտի: Իրբեւ մտաւորական, որ վաղուան հանրային առաջնորդը պիտի դառնայ՝ ան միակ չափանիշի մը կրնայ ապաւինիլ իրեն եւ ազգային ծառայութեան նոյն ասպարէզին կոչուած ուրիշ մտքի աշխատաւորներու համար: - Հաւատարմութիւն հայ ժողովուրդի գերագոյն շահերուն եւ

ճանաչում վերածնած Հայաստանի փրկարար իրականութեան: Մնաց-
եալը մանրամասնութիւն է, աննշան ու վաղանցիկ:

Որեւէ կանխակալ կարծիքէ եւ դատավճիռէ առաջ՝ գրող-մտաւո-
րականը պարտաւոր է հարցնել, - միւս հայ նորահաս կամ երիտասարդ
գրագէտը կը սիրէ՞ ծաղկող հայրենիքը, կը հաւատա՞յ անոր իբրեւ
խարխսիւր հայ ժողովուրդի իրաւունքներուն հատուցման եւ ազգային
ամբողջականութեան, կը մասնակցի՞ զաղութահայ ինքնապահպանումի
դաժան պայքարին, - նուիրուելով անոնց բոլորին պաշտպանութեան,
արտաքին կամ ներքին թշնամիներու դաւերուն ու յարձակումներուն
դէմ: Պատասխաններուն վրայ պիտի հաստատէ իր դատաստանը եւ վե-
րաբերմունքը, - ոչ թէ իր նախասիրութեան եւ խմբակային նախա-
պաշարումին:

Զգացումի, գաղափարի, արարքի քանակ ու որակ կշռելու յաւակ-
նութիւնը, հայրենասիրական հաւատքն ու խանդը չափելն ու դասա-
կարգելը՝ հաւատաքննական հակումը կը սնուցանէ եւ այլամերժ
ինքնարաւութեան խորշակը կ'արձակէ:

Աւելի պարզ ու անվրէպ է անոր կոչումին չափանիշը որպէս գրա-
գէտ: Էականը՝ երկի մը համար ընտրուած նիւթը չէ, ոչ ալ, անպայ-
ման, վէպի մը հերոսներուն դրական կամ ժխտական նկարագիրը:
Կարեւորը այն չէ, թէ զաղութահայ նորահաս գրողը պատմուածք ու
քերթուած կ'արտադրէ հայ ազգային դէպքի մը, Արարատին, Մայրենի
լեզուին, Սեւանի կամ սիրոյ, ծաղիկի, լուսինի ու լճակի կամ օտար
ոտաններու մէջ թաւալող կեանքի որեւէ մէկ երեւոյթին շուրջ: Ամուլ
փորձ է, գրողի մը արժանիքը, տաղանդը կամ յանդգնութիւնը սահ-
մանել անոր գործին բովանդակութեան բնոյթով:

Քրիստոս կատարելութեան հոմանիշ կը նկատուի, բայց անոր մա-
սին գրուած վէպ մը կրնայ ամբողջական ձախողանք ըլլալ: Ինչ որ
էական է, ինչ որ անհրաժեշտ պայման է ճշմարիտ, գեղեցիկ գրական-
նութիւն ստեղծելուն՝ կեանքի մէկ շերտին հարազատ պատկերացումն է,
նկարագիրները մտածող, զգացող ու ապրող էակներ դարձնելն է. եւ
զանոնք արտայայտիչ ոճով մը վերարտադրելն է: Ի՞նչ փոյթ, թէ ո՞ր
«գրական շրջանակ» աւելի կամ նուազ արժէքաւոր համբաւներ ունի:
Բայց մեծ հոգը եւ մշտական մտասեւեռումը պէտք է մնայ բոլորին,
ստեղծել աւելի հարուստ ու այլազան, աւելի խորունկ ու կենդանի գրա-
կանութիւն մը, իրենց թանկագին ժողովուրդին, վերականգնած հայ-
րենիքին ու վերածաղկող հայ գրականութեան փառքին համար: Եւ մա-
նաւանդ անոնց բոլորին մէջ ընդելուզել տիեզերական մարդկային յոյ-
գերը, ոգին, կարօտներն ու ձգտումները:

Ո՛Վ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻԱՄՏՈՒԹԻՒՆ

Ամէն ժողովուրդ իր նախնիքներէն կը ժառանգէ խառնուածքի
տարրեր տարրեր եւ նուիրագործուած աւանդութիւններ: Անոր հաւա-
քական նկարագիրը եւ կենցաղային ձգտումները կ'ազդուին նաեւ սե-
փական հայրենիքի բնութեան տարրերէն, - անոր արեւէն ու կայծակ-
ներէն, եւ կանանչ դաշտերէն ու վիթխարի լեռներէն, եւ թաւուտ
անտառներէն ու աւազուտ անապատներէն, եւ գետերու բարերար
թաւալէն, ու ձիւնամրրիկի մահաշուք խստութենէն: Եւ ամէն ազգ ու
ցեղ՝ իր կիրքերն ու սէրերը, իր առօրեայ տենչերն ու հեռաւոր երազ-
ները կը թանձրացնէ, կ'անձնաւորէ այն առասպելներուն եւ դիւցազ-
նական հերոսներուն մէջ, որոնք կը յօրինուին, կը կենսաւորուին
սերունդներու երեւակայութեան երկունքով:

Հայ ժողովուրդն ալ՝ բնականօրէն, անցեր է ծնունդի ու կազմու-
թեան նոյն ճամբայէն: Եւ անոր ոգեկան իղձերը, անոր մտաւոր որո-
նումները, ուրեմն նաեւ ապրելակերպը ձեւաւորուել են այդ այլազան
ազդեցութեանց ընդելուզումէն: Անոնք կերտել են հայոց ազգային
էութիւնն ու դիմագիծը, բիրեղացուցել են որոշ առաքինութիւններ
ու կարծրացուցել են տկար կամ թերի գիծեր, որոնք յաճախ ներ-
բողուել են իբրեւ յատկանիշ:

Թերեւս հայ ժողովուրդի դրական յատկութեանց մէջ ամենէն
տիրականը եղեր է անոր անընկճելի սէրը ազատութեան համար, որ
սրբազան կիրքի մը պէս տոգորել է զայն: Գեղեցիկին պաշտամունքը,
արդարութեան ու ճշմարտութեան հետապնդումը նոյնպէս անոր
խառնուածքին անբաժան մասերը դարձել են: Բայց ազատութեան
տենչը անչէջ խարոյկի մը պէս վառել է միշտ եւ իր սփռած լոյսով
ու ջերմութեամբ շողացել է հայոց պատմութեան հերոսական եւ
ողբերգական շրջաններուն մէջ:

Նոյնիսկ նախապատմական դարերուն, երբ տակաւին սահմանուած
չէին ազատութիւն բառը եւ անոր իմաստը՝ մեր երանելի նախահայ-
րերը յօրինեցին Հայկ Նահապետի առասպելով հիւսուած դրուագը
եւ հայ ժողովուրդին ծնունդը կապեցին բռնաւոր Բելի դէմ անոր
մղած յաղթական ազատամարտին հետ: Հզօր տիրակալ մըն էր Բել,
որ իշխանութեան ու փառքի խոստումներով փորձեց հրապուրել Հայկը,

միայն ան յօժարէր ենթակայ մնալ իրեն: Բայց ազատասէր ցեղապետ էր Հայկ եւ մերժեց հպատակիլ օտար լուծին եւ իր հետեւորդներով զաղթեց դէպի հիւսիս, ու հասաւ այն լեռնային երկիրը, որ յետոյ պիտի կոչուէր Հայաստան:

Բել հալածեց Հայկը, զայն բռնութեամբ նուաճելու համար, բայց բուռն կռիւին մէջ սպանուեցաւ Հայկի արձակած նետէն եւ այդ յաղթանակին վայրը պսակուեցաւ Հայոց Զոր նուիրական անուանով: Ուրեմն, Բաբելոնի Աշտարակին շուրջ լեզուներու խառնակութեան մթին դարաշրջանին՝ հայ ժողովուրդը կը ծնէր իր նախահօր մղած ազատութեան գոյամարտին արիւնոտ երկունքէն: Եւ անոր երախտագէտ շառաւիղները այսօր, վերածնած Հայաստանի մայրաքաղաք Երեւանի մէջ կանգնեցին եւ հզօր ու հոյակապ արձանը Հայկ նահապետին:

Տիգրան Բ. էն մինչեւ եղբրաբայտ Արշակը, եւ Բագրատունի Աշոտն ու Սմբատը, եւ Ռուբինեան Լեւոնն ու Հեթումը՝ կուռեցան գերագօր ուժերու դէմ, հայոց ազգին ու հայրենիքին ազատութիւնը շահելու կամ պահպանելու համար: Նոյնիսկ օտար, վայրագ տիրակալներու մականին տակ մեր հպատակութեան կամ գերութեան դարերուն, ազատութեան սէրը յաճախ բռնկեց էր քրտապա խարոյկի մը պէս եւ չքեղ խոյանքներու վարեր է հայ մարտիկներու լեգէոններ:

Եւ բազմաթիւ յաղթական ու հերոսատիպ հայ սպարապետներէն ահա՛ հաւատքի ու զաղափարի ազատութեան ախոյեանն ու նահատակը, Վարդան Մամիկոնեան, որ ինկաւ Աւարայրի դաշտին վրայ, ահեղագօր Պարսկաստանի բանակին դէմ իր վարած գոյամարտին մէջ: Սակայն դառնալով վկան յաւերժական ճշմարտութեան մը, — թէ համոզումի ուժը եւ ազատութեան տենչը, նոյնիսկ իրենց պաշտպան ռազմիկներու խորտակուած մարմիններուն մէջէն կը վերականգնին յաղթական, Վահան Մամիկոնեանի նուաճումներով: Որովհետեւ մինչ ռազմադաշտեր նուաճող բանակներ կը քայքայուին ու կ'անհետին՝ լուսաւոր իտէպլի մը տեսիլքը եւ ազատութեան զաղափարը կը մնան անառիկ ու անպարտելի, եւ առաւել պայծառացած՝ կը փոխանցուին յաջորդական սերունդներուն: Պատճառը այդ է, որ Վարդան Մամիկոնեանի մարմարէ արձանը այսօր կը բարձրանայ մայրաքաղաք Երեւանի մէջ:

Մեր ազգային դիւցազնավէպին հերոսներն անգամ, — Մհերներն ու Սասունցի Դաւիթը, մարմնացումներ են հայ ժողովուրդի ազատութեան եւ արդարութեան սէրին: Անվեհեր, բարեսիրտ, անխոցելի դիւցազն է մշտապէս երիտասարդ Դաւիթը, որ անկարելի հրաշքներով կը պատուհասէ թշնամիները եւ ազատութիւն կը բերէ ճնշուած ժողովուրդին: Ու դարձեալ, Երեւանի մէջ հրապարակին վրայ,

չքեղօրէն հոյակերտ, կը կանգնի Սասունցի Դաւիթի պղինձէ զմայլելի արձանը իր սրաթուիչ նժոյգին վրայ ու կայծակէ թուրը պարզած:

Իսկ ներկայ դարաշրջանին, հայոց ազգային ազատութեան զաղափարին ու գոյամարտին կենդանի, փառապսակ ռազմիկն ու խորհրդանիշը եղաւ Զօր. Անդրանիկ, որուն արձանը քանդակուեցաւ Հայաստանի մէջ, չորս հազար տարուան պատմութիւն մը կամարելով:

Հայ ժողովուրդի հաւաքական խառնուածքին ամենէն խորարմատ ու տիրական տարրերը եղած են ազատ ապրելու եւ անկաշկանդ ստեղծագործելու տենչը, եւ իր այդ ձգտումները պաշտպանելու անվեհեր քաջութիւնը: Բայց նոյնիսկ այդքան թանկագին յատկանիշներ լիապէս չեն արդիւնաւորուած հայոց ազգային կեանքին ու պետական կազմաւորման մէջ՝ որովհետեւ անոնց իբրեւ անհրաժեշտ յենակ՝ պակսեր է քաղաքական միտքը: Նախարարներ մշտապէս պայքարեր ու դաւադրեր են Արշակունի, Բագրատունի եւ Ռուբինեան հայ արքաներուն դէմ, զանոնք տկարացնելու կամ տապալելու համար: Առանց կարենալ ըմբռնելու, թէ երբ անգօր ու քայքայուած կը դառնայ Հայաստանի կեդրոնական իշխանութիւնը, թէ՛ երկիրը եւ թէ՛ իրե՛նք դիւրին զոհերը կ'ըլլան օտար թշնամիներու աւերող ու յափշտակող ախորժակներուն: Իսկ հայ թագաւորներ ա՛յնքան միամտօրէն խաբուեր եւ ինկեր են Տիգրանի եւ Բիւզանդիոնի զահակալներուն խարդաւանքի թակարդներուն մէջ:

Տխուր դրուագ մը արձանագրեր է Հայոց Պատմութիւնը: Պարսկաստանի մեծագօր արքան, Շապուհը, տարիներ փորձեց զէնքով ու պատերազմով նուաճել Հայաստանը: Բայց Արշակ Բ. արքան եւ իր ռազմագէտ սպարապետը, Վասակ Մամիկոնեան հերոսական դիմադրութեամբ ձախողանքի մասնեցին շահին ծրագիրը: Այն ատեն Շապուհ զիմեց նենգութեան եւ մասնաւոր պատուիրակներ զրկելով՝ Արշակ թագաւորը եւ Մամիկոնեան սպարապետը հրաւիրեց հաշտութեան ու խրախճանքի: Եւ անոնք յօժարեցան երթալ, յուսալով խաղաղութիւն շահիլ իրենց երկրին ու ժողովուրդին համար:

Աւանդութիւնը կը բացուի այս հանդիպումէն: Շապուհ իր կայսերական վրանին յատակը ծածկող զորքին մէջ մասին տակ՝ Հայաստանէն զաղտնօրէն բերուած հող փոած կ'ըլլայ, Արշակի անկեղծութիւնը փորձելու դիտումով: Հոն, գինադադարի ու բարեկամութեան մասին հանդարտ զրոյցով՝ երկու արքաները կ'երթեւեկեն փարթամ գորգին վրայ: Եւ առասպելը կը հաւաստէ, թէ երբ իրենց երթուղարձին մէջ Արշակ Բ. ի ոտքերը կը կոխեն պարսկական հողին վրայ՝ ան կը դառնայ խոնարհ, ողորջ ու գլխահակ մշտատեւ հաւատարմութիւն կը խոստանայ Շապուհին:

Իսկ երբ կը քալէ հայկական հողին վրայ՝ յանկարծ իր ճակատը

կը բարձրացնէ Արշակ թագաւորը, կը սկսի վիճիլ Տիգրանի հզօր տիրակալին հետ, կը յոխորտայ, նոյնիսկ կը սպառնայ, իր գահին ու Հայաստանի իրաւունքներուն անուկով: Եւ ողբերգական հետեւանքը այն կ'ըլլայ, որ Շապուհ ձերբակալել ու բանտարկել կուտայ Արշակ Բ-ը ահռելի Անյուշ Բերդին մէջ: Եւ սպարապետ Վասակ Մամիկոնեանը մորթագերծ ընելով՝ յարդով կը լեցնեն ու կը կախեն զնոսանին մէջ, որ հայոց արքան մինչեւ իր մահը դիտէ զայն եւ ողբայ իրենց կեանքերուն ու փառքերուն եղբրական փլուզումը:

Սրտառուչ ու խորհրդալի դրուագ մը, որուն ստուգութեան դժուար է հաւատալ: Արշակ Բ. խելացի ու քաղաքական իրապաշտ դատուումով թագաւոր մըն էր, Արշակաւան ոստանին կառուցումը ծրագրելու եւ զայն գործադրութեան ղեկու չափ, - իբրեւ անառիկ բերդ մը, նախարարներու կամայական արարքներն ու փառատենչ դաւերը սանձելու եւ Հայաստանի կեդրոնական իշխանութիւնը գորացնելու՝ արտաքին ոսոխներու արշաւանքներուն դէմ: Եւ շատ անհաւանական է, որ Պարսկաստանի ներխուժումներուն տարիներով ճակատող նոյն Արշակ Բ-ը, բռնուած Շապուհի խաբէութեան թակարդին մէջ եւ անոր մահացու ժանիքներուն սպառնալիքին տակ, այդպիսի տխմար, յանցապարտ վարմունքով մը՝ իր անձին, գահին ու Հայաստանի կործանումը ապահովէր...

Բայց տակաւին՝ այդ առասպելը յօրինուած է հայերու կողմէ եւ դարերով ներբողուած է հայ պատմագիրներու ներշնչուած տաղանդով: Անոնք ուզեր են հայկական հողին հրաշալի զօրութիւնը հռչակել, - որ նոյնիսկ Շապուհի գորգին գաղտնիքին տակէն՝ գլխահակ, ողբող Արշակ թագաւորը յանկարծ կը վերափոխէ խիզախ, յախուռն, ռազմաշունչ ախոյեանի մը, նոյնիսկ վայրագ թշնամիին գիշատիչ մագիլներուն մէջ: Եւ ասիկա յայտարարեր են իբրեւ զմայլելի յատկանիշը հայկական հողին, որպէս գերագոյն առաքինութիւնը հայ ոգիին ու խառնուածքին, որ վճիտ աղբիւրն է հայրենասիրութեան:

Մինչդեռ իրապէս, քաղաքական դատումի դէմ ահաւոր մեղանշում մը կ'ապացուցանէ ան, որ հայ ժողովուրդին մէջ տիրական յայտնուել է եւ յաճախ աղէտի ու աւերի մատներ է հայոց ազգն ու հայրենիքը: Որովհետեւ, եթէ հայկական հողը իրապէս լեզու ունենար՝ Շապուհի վրանին գորգին տակէն պիտի մրմնջէր, պիտի պաղատէր, պիտի աղաղակէր Արշակ Բ. արքային, - դէ՛հ, Հայաստանի՛ թագաւոր, հաւաքէ՛ ամբողջ իմաստութիւնդ, զօրաշարժի հանէ Արշակունեանց գահակալի դարաւոր փորձառութիւնդ եւ շեշտակի նայէ՛ Շապուհի լարած մահաշուք որոգայթին, անոր բացած վագրային արիւնծարաւ կլափին, եւ փանա խելքով ու խորամանկութեամբ փրկուիլ

այդ ծուղակէն, դարձիր հայրենի լեռներուդ վրայ եւ բանակիդ գլուխը, եւ այն ատեն Շապուհին պատասխանէ համարձակ ու քաջութեամբ:

Մինչեւ Բագրատունեանց հարստութեան վերջին գահակալը, եղբորաբախտ Գագիկ Բ-ը, եւ մինչեւ... մեր օրերը: Այսպէս, 1914-ին պայթած առաջին ընդհանուր պատերազմին մէջ մահացու թշնամիներ էին Օսմանեան Թուրքիան եւ Զարական Ռուսիան, իսկ հայ ժողովուրդը բաժնուած ու հպատակ երկու հակամարտ պետութեանց: Հայ Յեղ. Դաշնակցութիւնը պաշտօնապէս զինակից է Երիտասարդ Թուրքերու իշխանութեան եւ երեսփոխաններ ունի օսմանեան խորհրդարանին մէջ, ուրեմն մաս կը կազմէ Թալէադի, Էնվէրի, Ճեմալի եւ անոնց գործակիցներու պետութեան: Եւ բնականօրէն, Կարինի մէջ գումարուած իր Ընդհ. Պատգամ. ժողովը կ'որոշէ ամբողջապէս հաւատարիմ մնալ ու զօրավիգ կանգնիլ Թուրքիոյ, անոր յաղթանակը ապահովելու համար դաշնակից երկիրներու, - Ռուսիոյ, Անգլիոյ, Ֆրանսայի եւ անոնց զինակիցներուն դէմ: Անխուսափելի եւ հակնալի դիրքաւորում մը, հոգ չէ թէ ինչ ըլլար ամէն հայու ներքին փափաքը, թագուն ձգտումը:

Բայց ահա կը պատահի անհեթեթ, խելագար արարքը քաղաքական անմտութեան: - Կարօ Փաստրմաճեան (Արմէն Կարօ), որ պատգամաւոր էր Դաշնակցութեան այդ համագումարին մէջ էրգրում, նաեւ երեսփոխան էր Թուրքիոյ խորհրդարանին, կ'երթայ Կովկաս, թշնամի երկիրը: Հոն կը լուսանկարուի հայ կամաւորներու խումբի մը հետ, որ Ռուսիոյ բանակին մէջ՝ կուռելու պիտի գար Օսմանեան Կայսրութեան դէմ: Եւ առաւել ահռելի յանցանքը՝ այդ խմբանկարը կը հրատարակեն իրենց մամուլին մէջ: Մարդկային բանաւոր միտքը կրնա՞ր երեւակայել այսպիսի ահաւոր սխալ, կրնա՞ր ըմբռնել այսպիսի վտանգալի վարմունք: Դժուար չէ պատկերացնել ապշութիւնն ու վախը Զօհրապի եւ Վարդգէսի, երբ Թալէադ գանոնք կը կանչէ իր մօտ եւ անոնց երեսին կը նետէ, մոլեգնած զայրոյթով, այդ շարքաստիկ լուսանկարը պարունակող թերթը, բացատրութիւն պահանջելով...:

Ո՛վ քաղաքական աղէտալի միամտութիւն, որ կը կարծէ թէ գաղտնիք պահուելու սահմանուած արարք մը թշնամիէն ծածուկ կը մնայ հրապարակի վրայ աղաղակուելէ եւ թերթերու առաջին էջերուն վրայ լուսանկարներով սփռուելէ ետքն անգամ:

Եւ սքանչելի Զօհրապը, տաղանդաւոր գրագէտ, պերճախօս իրաւաբան, անձնուէր հանրային գործիչ, որ լա՛ւ պէտք էր ճանչցած ըլլար Թուրքը, տարիներու սերտ գործակցութեամբ իթթիհատի պետերուն հետ: Երբ 1915-ի Ապրիլ 24-ին կը ձերբակալուին հայ մտաւորականները Պոլսոյ մէջ՝ բնականօրէն կ'ընդվզի Զօհրապ եւ բողոքի կը վազէ Թուրք վարիչներուն մօտ: Ան կը դիմէ նաեւ ներքին գործոց նախարար Թալէադին եւ զայն համոզել փորձելէն յուսահատ՝ գրեթէ կը սպառնայ.

«Օր մը, ապահով եղէ՛ք որ հաշիւ պիտի պահանջուի ձեզմէ, եւ դուք պիտի չկարենա՛ք արդարացնել ձեր արարքները»:

«Այն ատեն, Թալէադ հեգնական կը հարցնէ.

«- Ո՞վ պիտի պահանջէ այդ հաշիւը:

«- Ե՛ս, կը պատասխանէ Զօհրապ, խորհրդարանի մէջ իբր հայ մէպուս, ձեռնէ հաշիւ պիտի պահանջեմ»:

Եւ Արշակ Աւագյանէն կ'եզրակացնէ Զօհրապի նուիրուած իր հատորին մէջ այս գրոյցը արձանագրելէ ետք. - «Այդ վայրկեանիմ իսկ վնասուած էր իր մահը»:

Սրբազան ցասու՛մի, անվեհեր քաջութեան պոռթկում մը, անկասկած, Զօհրապի այդ յուսահատ արարքը, բայց նաեւ ընդունա՛յն եւ ինքնասպա՛ն: Եւ քաղաքական ի՛նչ սրտառուչ, անհաւատալի միամտութիւն: Ցեղասպան եղեռնագործին, Թալէադին սպառնալ, թէ հաշիւ պիտի պահանջէ անոր հայաջինջ ոճիրին համար, եւ որմէ՞ն, օսմանեան խորհրդարանէ՛ն, որուն պետերը եւ անդամները իրենք յղացեր ու ծրագրեր էին հայ ժողովուրդը ոչնչացնելու եւ Արեւմտեան Հայաստանը բռնազրաւելու հրէշային նախճիրը: Եւ եթէ Զօհրապ յաջողէր վերապրել Մեծ Եղեռնէն, ի՛նչ հզօր ու պերճախօս վկայութիւն մը կրնար գտնալ, իր տիրական անձով ու խօսքով, թուրք պետական մարդասպաններուն դէմ:

Անհատի մը համար, խոյանալ ազատութեան, ճշմարտութեան եւ արդարութեան ոտիսներուն դէմ եւ զոհուիլ այդ անհաւատար գուպարին մէջ՝ վսեմ անձնուրացութիւն մը կրնայ նկատուիլ: Բայց այդ պերճանքին իրաւունքը չունին անոնք, որոնք կոչուած են, կամ կը յաւակնին իրենց ժողովուրդին ու հայրենիքին գոյութեան ու զարգացման պայքարին լուծը կրել: Այդ երկընտրանքին հանդէպ՝ անձը պարտաւոր է մտնալ իր նախապաշարումներն ու քէները, իր բողձանքներն ու փառքը, եւ առաջնորդուիլ բացարձակօրէն միա՛կ նպատակէ մը, - փնտել, գտնել ու փարիլ ա՛յն ճամբուն, ա՛յն միջոցներուն՝ որոնք իր ազգին ու մայր երկրին գոյութիւնը կ'ապահովեն եւ անոնց ապագայի ձգտումներուն իրականացման ուղին կը հարթեն:

Ուրիշ մեղապարտ շարժառիթներու հետ՝ քաղաքական միամտութեան աղէտալի արդիւնքն էր, 1921, Փետրուար 18-ի եղբայրասպան ապստամբութիւնը Հայաստանի խորհրդահայ իշխանութեան դէմ: Որովհետեւ ամենէն տարրական դատողութիւնն անգամ դիւրաւ պիտի ըմբռնէր անժխտելի ճշմարտութիւն մը, - որ եթէ Ս. Վրացեանի հեռագրով օգնութեան հրաւիրուած Քեմալական Թուրքիոյ բանակը Հայաստան գար՝ Հայ Դաշնակցական հատուածը իշխանութեան բարձրացնելու համար պիտի չըլլար հայ համայնավար կառավարութեան տեղը, - այլ միայն երկու կողմերն ալ ջարդելու նպատակով, պար-

զապէս՝ որովհետեւ թուրքերուն համար բոլոր հայերն ալ թշնամի են եւ պէտք է ոչնչացուին, ինչպէս տուաւ ապացոյցը 1915 Ապրիլեան դժոխային եղեռնով:

Քաղաքական միտքի նախնական հասունութեամբ անգամ՝ Փետրուար 18-ի աղէտին վարիչները պէտք էր կարենային հասկնալ բացարձակ ճշմարտութիւն մը: - Թէ ժողովուրդի ու հայրենիքի նուիրական սէրով տոգորուած ամէն հայ իր գերագոյն նպատակը պիտի դաւանէր՝ որեւէ եղանակով ու շափով օգնել, որ գոյատեւէր ու զօրանար նորաստեղծ Խորհրդային Հայկական պետութիւնը, բոլորովին անկախ անոր վարչաձեւին բնոյթէն: Որովհետեւ ան պիտի համոզուէր քանի մը անժխտելի իրողութեանց:

- Որ եթէ Անգարա ընդառաջէր Ս. Վրացեանի հրաւերին եւ թրքական բանակը զրկէր Հայաստան՝ ան պիտի գար ո՛չ թէ իրենց կողմին նպատակու, այլ միայն դահիճը դառնալու մնացեալ հայութեան, հայկական պետութեան եւ անոնց հայրենիքին:

- Որ արեւմտեան դաշնակից երկիրները, որոնք հայ ժողովուրդի ազատութեան հազա՛ր խոստումներ տուեր էին եւ զանոնք անտարբեր էքումով զրթելէ ետք՝ մատերնին մոխիրը պիտի չթաթելէին, Սեւրի ստորագրուած բայց երբե՛ք չվաւերացուած դաշինքին հայկական հատուածները յաղթական Թուրքիոյ պարտադրելու համար:

- Որ Սովետ Միութիւնը, աւելի քան երեք տարիներ քաղաքացիական եւ արտաքին պատերազմներ մղելէ եւ բոլոր թշնամիները նուաճելէ ետք՝ հարկաւ թոյլ պիտի չտար, որ նորածին Հայաստանի Խորհրդային հանրապետութիւնը կործանէր ու չքանար որեւէ ներքին դաւի կամ արտաքին յարձակման իբրեւ հետեւանք:

Բայց քաղաքական միամտութիւնը մշուշով ու ցնորքով մթազնեց դեկավար դէմքերու դատողութիւնը եւ մարդկային ու հողային կորուստի ահարկու գին մը վճարեցինք անոնց եղբրական սխալներուն համար: Եւ դժբախտութիւնը այն եղաւ, որ ազգային ահաւոր փրկուցումներէ ետք անգամ, աւերի ու մոխիրի կոյտերուն ու սպանդի միլիոնաւոր զոհերու դիակներուն հանդէպ անգամ, շատեր չկրցան ըմբռնել միջազգային դիւանագիտութեան բնոյթը, զայն վարող պետական առաջնորդներու շարժառիթները, նպատակներն ու գործելակերպը:

Երեւակայե՛լ քաղաքական արկածախնդիր մանկամտութեան մեղապարտ աստիճանը, - երբ վերջին ահուելի պատերազմէն եւ սերունդ մը ետք՝ սփիւռքահայ հանրային ծանօթ գործիչ մը յարգելի շարաթաթերթի մը մէջ խստօրէն կը դատապարտէր Հայաստանի մտաւորական դասն ու ժողովուրդը: Ի՞նչ յանցանքի համար: Ա՛հ, որովհետեւ անոնք, 1937-ին Ստալինեան արիւնալի խստութեանց ատեն «Փետրուար 18-ի նոր ապստամբութիւն մը չէին պայթեցուցած Սովետ

Միութեան դէմ» հայ ժողովուրդին ազատութեան տենչը ապացուցանելու համար:

Ինչ որ աւելի ողբերգական էր այս տխուր մտայնութեան մէջ՝ այն ապշեցուցիչ հակասութիւնն էր, որ ան նոյն ատեն Ստալինը կը հռչակէր աւելի վայրագ բռնակալ մը՝ քան Ապտիւլ Համիտ Բ.ը եւ Թալէաղը: Եւ չէր անդրադառնար անգամ, որ եթէ ճիշդ էր իր այդ դատումը, ուրեմն 1937-ին սարքուած Փետրուար 18-ի նման ապստամբութիւն մը Սովետ Միութեան դէմ՝ Խորհրդային Հայաստանի եւ անոր ժողովուրդին աքսորն ու բնաջնջումը պատի պատճառէր, - ճիշդ ինչպէս որ Սուլթան Համիտ եւ Թալէաղ ըրին արեւմտեան Հայաստանի մէջ:

Այն գաղափարը, թէ ամէն հայ պէտք է յօժարի մեռնիլ հայրենիքին համար՝ համագոր է ազգային ինքնասպանութեան, ուրեմն քաղաքական խելագարութեան: Աւելի բանաւոր, փրկարար կարգախօս մը պիտի ըլլայ այն՝ որ ամէն հայ պէտք է ապրի ժողովուրդին ու հայրենիքին համար: Որովհետեւ եթէ բոլոր հայերը հաւանին քրէական արկածախնդրութեամբ մեռնիլ հայրենիքին անուսով՝ այն ատեն անկասկած, ո՛չ հայ ազգութիւն կը մնայ եւ ոչ ալ Հայաստան, - որոնք կը սրբուին աշխարհի երեսէն եւ թաղուած ենթադրական տապանաքարի մը տակ, որուն առջեւ թերեւս կարեկից անցորդ մը պիտի մըմընջէ, - Աստ հանգչի հինաւուրց ստեղծարար, տաղանդաւոր ժողովուրդ մը, որ ինքզինք ոչնչացուց, զո՛հ քաղաքական անմտութեան:

Հայութիւնը յաւերժօրէն, անհունօրէն երախտապարտ պիտի մնայ Խորհրդ. Հայաստանի պետական վարիչներուն ու մտաւորական դասին, որ ամէն զրկանքի տուկացին եւ ամէն տաժանք կրեցին ու ապրեցա՛ն հայրենի հողին կառչած: Անոնց այդ գմայլելի նուիրումն էր, եւ անընկճելի կամքը, եւ մանաւանդ քաղաքական հասունութիւնը հայոց ազգային վերածնունդին հաւատալու եւ անոր իրազորման տեսիլքին ձգտելու, - այդ մեծ առաքինութիւններն էին, որ հնարաւոր դարձուցին ներկայ Հայաստանի, անոր պետութեան եւ հայ ժողովուրդին հրաշալի վերականգնումը եւ հոյակապ զարգացումը ամէն ասպարէզի վրայ եւ ամէն մարդի մէջ:

Վաղեմի, եւ յաճախ աղէտալի քաղաքական այդ միամտութիւնը տակաւին կը տեւէ սփիւռքահայ որոշ խաւերու, մասնաւորաբար երիտասարդ տարրերու մօտ, որոնք միջազգային վէճերն ու հակամարտութիւնները կը դիտեն վիպային, ուրեմն խաբուսիկ մշուշի մը պղղտորութեան մէջէն: Եւ բնականօրէն ամէն իրողութիւն կը տեսնեն այլափոխուած, ամէն երեւոյթ կը դատեն իրենց ցանկատես երեւակայութեամբ կամ մոլորիչ նախապաշարումով: Եւ կ'իյնան հակասութեանց որոգայթներուն մէջ, միա՛յն աղմկած ըլլալու ինքնաբաւ բայց ունայն գոհունակութիւն մը կորզելու համար:

Քաղաքական ծայրայեղ միամտութիւն մը կը յայտնուի այն արարքին մէջ, որ նաեւ բացայայտ հակասութիւն մը կը պարզէ: Մշտապէս յանկերգուող կարգախօս մըն է դարձեր այն պատգամը, թէ արեւմտահայ հողերը պիտի ազատագրուին միա՛յն հայ ժողովուրդի սեփական ուժերուն միջոցով, առանց որեւէ յոյս դնելու արտաքին նպաստի կամ գործօնի վրայ: Այս գաղափարը, իր մանկամիտ յաւակնութեամբ, կրնայ մեր ազգային ինքնասիրութիւնը փայփայել, բայց իրապէս անհեթեթ ու սնամէջ վարկած մըն է ան: Որովհետեւ անժխտելի իրողութիւն պէտք է ըլլայ, որ Հայաստանի եւ սփիւռքի հայութիւնը, իր քաղաքական, տնտեսական ու գինուորական բոլոր կարողութիւններուն զօրաշարժով իսկ՝ պիտի չկրնայ թիզ մը հող անգամ կորզել ՆԱԹՕ-ի գինակից Թուրքիայէն:

Նման վարկած մը տարփողել՝ ապարդիւն ինքնախաբուցութիւն է պարզապէս, որ միայն ցաւազին յուսախաբուցութեան կրնայ յանգիլ: Եւ ասոր ապացոյցը կուտան նոյն ինքն այդ տեսակէտին ջատագովները, երբ իրենց բերաններով ու գրիչներով ճիշդ հակադիր մարտակոչ մըն ալ կը հնչեցնեն, - թէ բողոքի տողանցքներ ու բռնութեան արարքներ պիտի շարունակենք, մինչեւ որ հօր իշխանութեանց խիղճերը ցնցենք եւ զանոնք վախցնենք ու ստիպենք որ անոնք հողային արդար հատուցում կատարեն հայ ժողովուրդին: Սակայն այս հակոտնեայ վարքազիծին մէջ եւս կը տիրապետէ նոյն քաղաքական միամտութիւնը:

Որովհետեւ տարրական ծանօթութիւն մը միջազգային պայքարներու ներքին դիտումներուն, նպատակներուն ու շահախնդիր սակարկութեանց, պիտի հաստատէ բացարձակ ճշմարտութիւն մը, - որ պետական վճիռներու եւ ձեռնարկներու մէջ բոլորովին կը բացակայի խիղճը, ուրեմն ո՛չ կ'արթնայ, ոչ ալ կը ցնցուի ան: Եւ եթէ սփիւռքի ամբողջ հայութիւնը տարին 365 օր լծուի բռնութեան ղէպքերու, հակաթուրք ցոյցերու ընթացքին հիւրընկալ երկիրներու ոստիկաններուն հետ բախումներ ունենալով կամ ապակիներ կոտորելով, կրնայ մոլորած «հերոսներ» տալ օտար բանտերուն: Բայց երբե՛ք, եւ երբե՛ք պիտի չյաջողի հարկադրել Ուաշինկթընը, Լոնտոնն ու Բարիզը՝ որ բարեհաճին ափ մը հայկական հողամաս առնել Թուրքիայէն ու բաշխել հայ ժողովուրդին:

Այս իրողութեան ճանաչումը պիտի օգնէ մեզի, որ աւելի յստակօրէն ծրագրենք մեր հակաթուրք պայքարը: Պէտք է համոզուիլ վերջապէս, որ Ապրիլեան Եղեռնի եւ ուրիշ առիթներով սարքուած պահանջի ժողովներուն ու բողոքի տողանցքներուն միակ՝ նպատակը, միակ՝ արդարացումը՝ Ամերիկայի հանրային առաջնորդներուն եւ ժողովրդային խաւերուն մէջ համակրանք եւ աջակցելու յօժարութիւն

ստեղծելն է Հայկական Դատին հանդէպ: Բայց երբ խաղաղ ու տպա-
ւորիչ ցոյցերը կը վերածուին աղմկալի ցուցադրութեան եւ անիշխա-
նական խաժամուժի՝ անոնք հակակրանք ու թշնամութիւն կ'առաջա-
ցընեն Հայոց եւ անոնց հետապնդած իրաւունքներուն հանդէպ, ու-
րեմն կը նպաստեն Թուրքիոյ:

Քիչ մը քաղաքական իրատեսութիւն ու մտաւորական պարկեշտու-
թիւն բաւական պէտք է ըլլան, հասկնալու համար, թէ Հայկական Հո-
ղային պահանջները իրենց հատուցումը պիտի չստանան Ամերիկայի
կամ որեւէ օտար երկրի փողոցներուն մէջէն: Այս գիտակցութիւնը
աւելի զուսպ ու խոնարհ, բայց նաեւ աւելի հեռահաս ու յարատեւ
մաքառումի մը պիտի մղէ մեզ: Հայոց Դատին արդար լուծումը պիտի
գայ Երեւանի ազգային-պետական լծակով, եւ Մոսկուայի հայթաթած
հզօր յենակով: Եւ սփիւռքի նշանակելի դերը այն է, որ երբ միջազ-
գային հաշուեյարդարի նոր պատեհութիւնը գայ՝ Միացեալ Նահանգ-
ներ եւ իր զինակից երկիրները արգելի չհանդիսանան, պատուար
չկանգնեն այդ հատուցման դէմ, ինչպէս ըրած են Պերլինի դաշինքէն
(1878) մինչեւ Թրումընեան Վարդապետութիւնը (1947), ա՛յդքան:

Թէ քաղաքական միամտութիւնը ի՛նչ տխուր, նաեւ վնասակար
համեմատութեան կրնայ հասնիլ՝ կը վկայուի Հայաստանէն արտա-
դաղթող Հայերէն կարգ մը մարդոց արարքներով: Անոնք, իբրեւ թէ
ջերմեռանդ հայրենասիրութեամբ մը վարակուած, կամ թերեւս թա-
զուն խղճահարութիւն մը լոնցնելու համար, ցոյցերու ատեն ամերիկե-
եան ոստիկաններ կը հրմշտկեն բրտօրէն, կամ քաղաքական սրահի մը
թրքական դրօշակը կը պատուեն: Առանց անդրադառնալու, թէ այդ
անմիտ վարմունքով Թուրքիոյ չէ որ կը վնասեն, - այլ Ամերիկայի եւ
այն հայ անձերուն, որոնք պատուած դրօշակին փոխարժէքը վճարել
կը ստիպուին:

Բայց ա՛հա՛ դարձեալ ցաւազին հակասութիւնը: - Միա՛կ եղանակը,
որով անոնք կրնային օժանդակել Հայկական Դատի լուծումին՝ իրենց
մնա՛լն էր Հայաստանի մէջ եւ զաւակներով ու թոռներով աճեցնելն էր
անոր բնակչութիւնը եւ զօրացնելն էր հայրենի պետութիւնը, որ իր
ուժին վճռական լծակով տիրանայ բռնազրաւուած արեւմտահայ Հո-
ղերուն: Եւ այդ միա՛կ նպաստը, որ կրնային ընծայել՝ զլացան հայ-
րենիքին, անոր ժողովուրդին եւ իշխանութեան, ու գաղթեցին դէպի
օտարութեան կորուստը: Եւ հոս, տեղացի ոստիկաններ հրելով,
ապակիներ կոտորելով կամ թրքական դրօշակ մը պատուելով՝ կը կար-
ծեն թէ Հայկական Դատին հատուցման համար կը պայքարին: Ո՛վ քա-
ղաքական մանկամտութիւն...:

ՄԱՐԴ, ԲԱՅՑ ՆԱԵՒ ՀԱՅ

Համալսարանական ուսանողներու խառն հաւաքոյթ մըն էր եւ
զրոյցն ու հարցումները կ'ընդգրկէին հայ ազգային նպատակներ,
սփիւռքային հոգեր ու մշակութային արժէքներ: Հոն կը պարզուէին
անոնց բնոյթը, տարողութիւնն ու դերը, մեր ազգային ինքնութեան
պահպանման, եւ ապագայ գոյատեւման ու զօրացումին ճիգերուն մէջ:
Եւ կը շեշտուէր այն իրողութիւնը, թէ երիտասարդ սերունդին վի-
ճակուած էր կենսական բաժին մը կատարել, այդ ընդհանուր առա-
ջադրանքին իրագործման համար: Բայց պայման էր, որ նորահաս
հայ տղաքն ու աղջիկները, մանաւանդ անոնք որ օժտուած էին բարձ-
րագոյն կրթութեամբ՝ իրենց իմացական, ոգեկան ու ֆիզիքական
ուժերը համախառն զօրաշարժի մը հանէին եւ յարատեւ ուղղէին
դէպի այդ նշանակէտը:

Այն ատեն յարուցուեցաւ անսովոր հարցը: - Հայ ժողովուրդը կը
պարծի թէ քրիստոնէական կրօնը որդեգրող առաջին ազգը եղած է:
Իսկ այդ հաւատքը կը դաւանէր ու կը հռչակէր համամարդկային եղ-
բայրութեան գաղափարին, որ ամենէն յառաջադէմ ու արմատական
սկզբունքն էր ու կը մնայ մինչեւ ներկան: Ուրեմն ինչո՞ւ այս սերունդը
իր նախնիքներուն չափ յանդուզն ու տեսլապաշտ չըլլայ: Ինչո՞ւ չընդ-
գրկէ համաշխարհային մէկ ընտանիքի իտէալը եւ դառնայ անոր ա-
խոյեանը: Եւ ի՞նչ կարիք կը մնայ պահպանել հայ լեզուն, պահել Հա-
յաստանը իբրեւ հայրենիք, եւ պայքարիլ հայոց ազգին գոյատեւման
համար: Ուրեմն ինչո՞ւ չարչարուիլ ու զոհաբերել, որ սփիւռքի հա-
յութեան ազգային դիմագիծը, ոգին ու ձգտումները պաշտպանուին,
երբ ապագային բոլոր ազգերն ու երկիրները պիտի միաձուլուին
համաշխարհային եղբայրութեան մէջ:

Գիտութեան տարբեր ասպարէզներուն վրայ լայնօրէն զարգացած
երիտասարդ միտքեր էին, որ այս տեսակէտը կը ջատագովէին: Եւ ինք-
նաբաւ զոհութեամբ համոզուած էին, թէ իրենց ժամանակէն վեր ու
առաջ՝ գալիքը կանխատեսելու եւ զայն ընդունելու յանդուզն իմաս-
տութիւնը կը յայտնաբերէին, ձերբազատ ամէն զգացական կապէ ու
նախապաշարումէ: Անկասկած որ այդ երազային մտապատկերը հրա-
պուրիչ է որպէս ցանկալի տեսիլք կամ անկարելի ցնորք, անոնց համար,

որոնք այն պատրանքը ունէին, որ եթէ ամբողջ մարդկութիւնը ձուլուի նոյն կաղապարին մէջ եւ խօսի նոյն լեզուն՝ այն ատեն հաշտութիւն, փոխադարձ սէր ու տեւական խաղաղութիւն պիտի տիրեն աշխարհի վրայ:

Բայց այդ վարկածին վրիպանքը բացայայտ է: Եւ ապացոյցը անվիճելի: Ահա ազգեր, որոնք նոյն լեզուն կը խօսին, նոյն Աստուածը կը պաշտեն, նոյն անցեալ պատմութեամբ կը պարծին եւ նոյն նուիրագործուած ականդութիւնները կը մեծարեն: Սակայն այդ նոյնութեան յատկանիշները ո՛չ միասնական դգի, ո՛չ հաշտարար գործակցութիւն, ոչ ալ խաղաղ համակեցութիւն կ'ապահովեն անոնց տարբեր խաւերուն ու հատուածներուն միջեւ: Այդ երանելի վիճակները չեն տիրեր նոյնիսկ մէկ ընտանիքի մը միա՛յն քանի մը հարազատ անդամներուն մէջ: Որովհետեւ լեզուի, ցեղի, պաշտամունքի եւ հայրենիքի նոյնութիւնը, անոնց հայթայթած միօրինակ կաղապարը երբեք երաշխիք չեն ըլլար, մարդկային էակներու եւ դասակարգերու միջեւ համաձայնութիւն, սէր ու խաղաղութիւն ստեղծելուն:

Ոչ ալ անխուսափելի է, որ տարբեր ազգեր ու ժողովուրդներ դատապարտուած են անպայման պայքար, հակամարտութիւն ու պատերազմ մղել իրարու դէմ: Եւ յաճախ կը պատահի որ նոյն ազգին մէջ տարբեր հասուածներ աւելի բուռն ու քինախնդիր վէճեր եւ կռիւններ կը վարեն իրարու դէմ՝ քան տարբեր ցեղեր ու ժողովուրդներ: Կը նշանակէ, թէ պարզապէս ցանկատեսութիւն է ենթադրել, որ բոլոր պատւարներուն քանդումով եւ ամբողջ մարդկութիւնը միապաղաղ չօտի մը վերածելով՝ եղբայրական գործով եւ անխուով խաղաղութիւնը պիտի թագաւորեն երկրագունդին վրայ: Ուրեմն անհեթեթ խարկանք է որեւէ հասարակաց շահ կամ բարիք ակնկալել ինքնութեանց ջնջումէն:

Մինչդեռ, նոյնիսկ խոնարհ դատողութեան մը համար բացայայտ պէտք է ըլլան նման վիճակէ մը բխելիք վնասներն ու կորուստները: Նախ, իբրեւ մեկնակէտ, շափազանց կանխահաս է, եւ աննպատակ ինքնասպանութիւն, մարդկային ցեղին միաձուլումը ջատագովել եւ այդ ձեռնարկին իբրեւ նախաքայլ՝ հայ ժողովուրդին, անոր լեզուին ու հայրենիքին ինքնութեան սրբութիւնը առաջարկել: Որովհետեւ հայութիւնը, իր շուրջ 6,000,000 քանակով, աշխարհի աւելի քան 4 միլիարտ բնակչութեան համընթին մէջ փոքրագոյն մասնիկ մը կը կազմէ: Եւ իր ազգային ինքնագոհարարման արարքը պղպջակ մը անգամ պիտի չդառնայ միջազգային քաղաքական հակամարտութեանց ու պայքարներու ովկիանոսին մէջ:

Եթէ երբեք պիտի գա՛յ, առանց ազգերու, լեզուներու եւ հայրենիքներու խրամատներուն, համամարդկային եղբայրութեան դարաշրջանը, քանի՞ չազարամեակ յետոյ, ատիկա պէտք է սկսի հզօրագոյն երկիրներէն, որոնք բազմահարիւր միլիոնաւոր բնակիչներ ունին:

Ատիկա պէտք է սկսի Միացեալ Ազգերու նման կազմակերպութեան մը դարպասներէն: Մինչդեռ հոն, եւ ամէն ցամաքամասի վրայ՝ բուռն վէճեր, եւ մոլեգին բախումներ, եւ արիւնալի պատերազմներ կը մղուին, նո՛ր ազգեր ստեղծելու, նո՛ր լեզուներ յօրինելու, նո՛ր հայրենիքներ կերտելու համար, եւ ո՛չ թէ հիները լուծելու նպատակով: Որովհետեւ անոնց պահպանուիլն ու զարգանալը ամենէն պայծառ նպաստն է նաեւ մարդկութեան յառաջդիմելուն:

Ամենէն առաջաւոր մտածողն անգամ, որ մարդկային ընկերութեան համար դրախտային գոյավիճակ մը կ'երազէ հեռաւոր ապագային մէջ՝ պիտի խոստովանի բացայայտ ճշմարտութիւն մը: - Թէ տեսակներու ալլազանութիւնը հիմնական պայմանն է կեանքի զարգանալուն ու գեղեցկութեան ստեղծուելուն: Բնութեան պատկերները ամենէն աւելի հրաշալի են այնտեղ՝ ուր անոր տարբեր տարրերը, անոր լեռներն ու հովիտները, եւ գետերն ու լիճները, եւ ծառերն ու ծաղիկները, իրենց ձեւերով, գոյներով ու ձայներով աննման համադրում մը կը կազմեն:

Գիտնականներ իրենց սքանչացումը կը յայտնեն բնութեան ստեղծարար զօրութեան համար, որովհետեւ ան մերժեր է յօրինումի որեւէ կաղապար: Եւ փոխարէն՝ ծնունդ տուեր է եւ աճեցուցեր է բիւրաւոր տարբեր տեսակներ, - թռչուններու եւ ձուկերու, գազաններու եւ միջատներու, որդերու եւ թիթեռներու: Օրինակ, թռչնազգիներ, հաւէն մինչեւ սոխակն ու արծիւր՝ իրարմէ տարբեր կենցաղ (ցեղային յատկանիշ), բնավայր (հայրենիք) եւ երգ ու կոհնչ (լեզու) ունին: Նոյնիսկ հարիւրաւոր տեսակ խնձորներ, խաղողներ ու ցորեններ կան, իրենց յատուկ յատկանիշներով ու համով իրարմէ տարբեր: Ո՛չ ոք կը յանդգնի առաջարկել, որ անոնց տեսակները նուազեցուին կամ ջնջուին:

Ճիշդ հակառակ կողմին յարելով՝ անասնաբոյծներ ու գիւղատընտեսներ, գիտական նոր միջոցներով ու պատուաստներով՝ աւելի կը բազմացնեն, աւելի կ'աճեցնեն կենդանիներու, ծաղիկներու, ծառերու եւ տունկերու տեսակները, անոնցմէ իրարմէ տարբեր յատկանիշներ, բոյրեր, երանգներ ու ձեւեր ստանալու համար: Եւ ահա կը յայտնուի ապշեցուցիչ, անհեթեթ հակասութիւնը, գիտական դատողութեամբ օժտուած միտքերու մէջ:

Մէկ կողմէն՝ վաստակաւոր գիտնական մը կ'առաջադրէ, եւ նոր փորձարկութիւններով կը յաջողի առաւել բազմաթիւ տեսակներ ստեղծել ու ճոխացնել անասուններու, բոյսերու եւ միբերու ցեղերը: Եւ նոյն ատեն՝ ան կը ջատագովէ նուազեցնել, ջնջել մարդկային ցեղերը զատորոշող ինքնուրոյն յատկութիւնները: Ան կ'ուզէ որ անոնց տարբերութեան բոլոր սահմանները չքանան, - իւրաքանչիւրին սեփական լեզուն, հայրենիքը, ականդութիւնները, մշակոյթը, խառնուածքի ժառանգական տարրերը սրբուին: Եւ բոլոր ազգերն ու ցեղերը միաձուլուին

մարդկային միապաղաղ ուժերն ուսի մը մէջ, խօսին համաշխարհային մէկ բարբառով, հպատակին մէկ իշխանութեան եւ սպրին կենցաղային նոյն մակարդակին վրայ, գաղափարներու եւ ձգտումներու նոյն կազմապարներուն մէջ: Այսպէս, մինչ այլազանութիւնը, տեսակներու տարբերութիւնը կը գնահատուի եւ կը բուժանուի բնութեան աւելի խոնարհ արարածներուն, - կենդանիներուն, եւ նոյնիսկ անկենդան ծառերուն ու ծաղիկներուն համար՝ այդ նոյն իրաւունքը կը զլացուի արարչագործութեան պսակը հանդիսացող, ոգեկան ու բանաւոր մարդ հակին:

Իսկ երբ հայ մտաւորական երիտասարդներ կը յարին այդ վիճելի վարկածին, համամարդկային եղբայրութեան մը տեսիլքին հրապոյրով՝ կրկնակ մեղանշում մը կը գործեն ճշմարտութեան եւ նոյնինքն քաղաքակրթական զարդացման դէմ: Որովհետեւ հայ ժողովուրդը, իր աւելի քան 3000 տարուան պատմական անցեալով՝ թանկագին, անփոխարինելի արժէք մըն է նոյնիսկ սոսկ իր հնութեան արժանիքով: Հնախոյզներ, յաճախ իրենց պետութեան հովանիով, ահագին նիւթական հարստութիւն եւ եռանդ կը յատկացնեն, պեղելու համար կործանած քաղաքակրթութեանց փլատակները: Պարզապէս՝ անոնց տակ պղինձի, քարի, փայտի մաշած, կոտորած մասնիկներ գտնելու եւ անոնցմով իրենց թանգարանները ճոխացնելու համար:

Հայ ժողովուրդը հնութեան անշունչ ու ժանգոտած բեկոր մը չէ հարկաւ, - այլ ապրող, ստեղծարար գորութիւն մը, որ ոչ միայն հազարամեակներ առաջ իր կերտած մշակութային գանձերուն հոյակապ ժառանգութիւն մը բերած է մինչեւ ներկան: Այլ նաեւ, ամէն տարի եւ օր, մինչ կը գոյատեւէ՝ կը յօրինէ իմացական, ոգեկան ու գեղարուեստական նոր արժէքներ, նոր նպաստներ, որոնք թէկուզ խոնարհ տարողութեամբ՝ բայց կը ճոխացնեն ազգերու ընդհանուր քաղաքակրթութիւնը:

Ներկայ դարաշրջանին, ամենէն տիրական իրողութիւնը այն է, որ դեռ անյայտ ցեղեր եւ անցեալի մշուշէն նոր լոյսին յայտնուող ժողովուրդներ մոլեգին պայքար կը մղեն, իրենց ինքնութիւնը ձեւաւորելու, եւ ազգային դիմագիծ ու նկարագիր ստեղծելու համար: Իսկ հայ ժողովուրդը, իր 3-4000 տարուան գոյութեան ընթացքին արդէն կերտեր, ազնուացուցեր ու գեղեցկացուցեր է իր ազգային յատկանիշներն ու արժէքները, իր աւանդութիւններն ու տաղանդները: Եւ իր ինքնուրոյն ճոխ լեզուն ու երգերը, իր ազատութեան տենչն ու խաղաղութեան սէրը, իր վերապրելու պողպատէ կամքը եւ կառուցանելու, ստեղծելու կարօտը զմայլելի գանձեր ու առաքինութիւններ են, որոնք երբեք խոչընդոտ չեն համամարդկային եղբայրութեան ճամբուն վրայ, այլ լուսաւոր փարոսներ կրնան դառնալ անոր երկայնքին:

ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻ ՈԳԻՆ

Հնագոյն դարերէն մինչեւ մեր ժամանակը՝ ազատութեան տենչը եւ մահացու աղէտներու հանդէպ վերապրելու անընկճելի կամքը ամենէն տիրական տարրերը կազմեր են հայ ժողովուրդի նկարագրին: Եւ իբրեւ վկայութիւն, անոր պատմութեան մէջ արձանագրուած կը մնան դրուագները վճռական մարտերու, որոնց ուղղադաստեղծ կը վրայ յաղթանակի փառքով պսակուեր են հայ ուղիներ, թշնամի դերակշիռ ուժերու դէմ: Մամիկոնեան սպարապետներէն (Մուշեղ, Վարդան, Վահան) մինչեւ Բագրատունի Աշոտը (Երկաթ) եւ Վահրամ Պահլավունին, եւ Գէորգ Մարզպետունին ու Թէոդորոս Ռշտունին, եւ Ռուբինեան Թորոսէն ու Լեւոնէն մինչեւ Դաւիթ Բէկ եւ Անդրանիկ, վայրագ ոսոխներու դէմ անհաւասար գուպարներու մէջ յաղթանակի խորհրդանիշներ դարձան:

Մարտաբապատ դաշտին վրայ մղուած հերոսամարտը Թուրքիոյ յարձակող բանակին դէմ՝ այդ շքեղ երեւոյթներէն մէկը եղաւ: Ծակատամարտը տեւեց Մայիս 22-էն մինչեւ 27 (1918), երբ հայկական դուռները յաղթական հանդիսացեր էին եւ թշնամի զօրքը մատնուեր էր նահանջի: Բայց այդ քանի մը օրերու մոլեգին բախումներուն մէջ յայտնուեցան հայոց ազգային խառնուածքին բոլոր բիւրեղացած յատկանիշները: Հայրենի հողի օտարանուն շերտ մըն էր ան, ուր խմբուած հայ սպաներն ու ուղիները, կանգնեցան թուրքերու ջարդարար եաթաղանին ու թնդանօթին դէմ եւ կռուեցան դիւցազնական քաջութեամբ, նախընտրելով դիմագրաւել մահը, քան ենթարկուիլ Օսմանեան լուծին գերութեան ու սարսափներուն:

Թաւազդի, էնփէրի, ձեմալի եւ անոնց մեղսակիցներուն իշխանութիւնը, իբրեւ զինակից Գերմանիոյ, իր արեւելեան բանակին բուռն յարձակողականով փորձեր էր խորտակել ճարական Ռուսիոյ զօրագունդերուն առաջնադասքը: Եւ հասնիլ Պազու, անոր քարիւղային փրկարար նպաստով օգնելու Գերմանիոյ, որ իր սաւառնակներն ու հրասայլերը կարենան շարունակել իրենց գրոհները Եւրոպայի մէջ, Դաշնակիցներուն դէմ: Բայց ճախողներ էր անոնց ծրագիրը: Ռուսեր ոչ միայն կասեցուցեր էին Թուրքիոյ յարձակողականը, այլ նաեւ իրենք առաջացեր էին մինչեւ Վան ու Կարին, գրաւելով զանոնք:

Սակայն ձարական Ռուսիան ներքնապէս քայքայուած՝ անոր չսկայ բանակը անհրաժեշտ սնունդէ եւ ռազմամթերքէ զրկուած, աղէտալի պարտութեան մատնուեցաւ Եւրոպայի ճակատին վրայ եւ միլիոնաւոր զինուորներ գերի ինկան Մարաշախտ Հինտենպուրկի զօրագունդերուն պաշարման տակ: Դէպքերը գահափոխեցան Բեդրոկրատի եւ Մոսկուայի մէջ, Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը պայթեցաւ եւ Սովետ իշխանութիւնը հաստատուեցաւ, որ Գերմանիոյ չետ կնքուած առանձին դաշինքով պատերազմէն դուրս ելաւ, բոլոր ճակատներէն իր զինուորները քաշելով երկիր, ներքին քաղաքացիական կռիւներ դիմագրաւելու:

Արձակուեցան եւ հայրենիք կանչուեցան նաեւ կովկասի ռուսական զունդերը: Այն ատեն Թուրքիա անապարեց օգտուիլ այդ պատեհութենէն, իր հետապնդած երկու հիմնական նպատակները իրագործելու համար: Նախ՝ հասնիլ այլեւս անպաշտպան մնացած Պագու եւ տիրանալ անոր քարիզին: Եւ յետոյ՝ միանալ Թուրք-թաթարական երկիրներուն, համաթուրանական երազուած կայսրութիւն մը ստեղծելու համար: Ռուսական անխորտակելի պատուարը չքացեր էր եւ իրենց ճամբուն վրայ կը մնար անտէր ու անզէն արեւելեան Հայաստանը, իր թշուառ, գաղթական եւ կազմալուծուած ժողովուրդով: Թուրքեր պահով կը զգային, որ առանց դժուարութեան պիտի կրնային նուաճել այդ խոչընդոտները եւ ձեռնարկեցին իրենց յարձակողականին, երեք տարի խափանուած ռազմական ծրագիրնին գործադրելու համար:

Բայց անոնց առաջնադաջքին դէմ, առասպելական հրեղէն ամբարտակի մը նման կանգնեցաւ Սարտարապատի ճակատամարտը, ուր անարգել առաջացեր էր Օսմանեան զօրքը, Կարսն ու Ալեքսանդրաբոլը գրաւելէ ետք եւ իր թնդանօթներուն երախները բացած Երեւանի դէմ: Այդ դաշտին վրայ՝ բացառիկ, հրաշալի երեւոյթ մը կը դիմագրաւէր մեր արիւնարբու թշնամին: Հոն հայ ժողովուրդը կը ծառանար իր բոլոր խաւերով ու դասերով, բացարձակ միասնականութեամբ մը, որ մահուան վտանգը կը ստեղծէր: Թիկունքին ետեւ ու խրամներուն մէջ՝ ան միակամ էր, ամբացած սարսափի ու կամքի համախառն զօրութեամբ:

Դժոխային Եղեռնի վաղորդայնին, արեւմտեան Հայաստանը պատուհասած հրէշային նախճիրին անհուն վիշտը, եւ սոսկումը, եւ ցասումը համակեր էին ամէն վերապրող հայու սիրտն ու միտքը: Եւ արդար վրէժի բոցը, եւ ջարդարար եաթաղանը սանձելու անխուսափելի հարկը մարտիկներուն մէջ բիւրեղացուցեր, պողպատեր էր հասարակաց հոգեկան վիճակ մը, ընդհանրական վճռակամութիւն մը, որ կը խտանար նուիրական կարգախօսի մը մէջ, - Վերապրո՛ւմ եւ ազատութի՛ւն, կամ մահ:

Թուրք բանակի սպառազէն, գերակշիռ զօրութեան դէմ՝ Սարտարապատի յաղթանակը կերտուեցաւ հայ ժողովուրդի ազնուագոյն յատկանիշներուն համախառն յայտնութեամբ: Ապրիլեան ցեղասպան եղեռնին սուգէն զարնուած՝ վերապրող հայութիւնը կը վճռէր կուրիլ իր ազգային գոյատեւման համար, մերժելով ենթարկուիլ Օսմանեան արիւնտ մականին եւ գերութեան շղթաներուն: Եւ իրենց խրամներուն մէջ ու դիրքերուն վրայ՝ հայ ռազմիկները մարտնչեցան մահը արհամարհող դիցազնական բաջութեամբ մը, որ շուրջ երեք հազար տարուան անցեալի ոգեղէն բովին մէջ պողպատուեր էր:

Եւ այդ հերոսական դիմադրութեան մասնակցեցան քաղաքացին ու գիւղացին, արեւելահայն ու արեւմտահայ կամաւորները, բոլոր քաղաքական հոսանքներուն մարտիկները եւ հոգեւորականներ, ռազմաճակատին վրայ թէ թիկունքին մէջ: Հայոց պատմութեան այդ 5-6 օրերու շրջանին՝ ազգային արտակարգ, հրաշագործ միասնականութիւն մը թրծուեցաւ Թուրքիոյ բերած ու սփռած հուրին ու սուրին կրակին տակ: Ստեղծուած ընդհանուր գործակցութիւնը համահայկական էր իր բնոյթով եւ սքանչելի էր իր ապահոված արդիւնքով:

Բայց երբ կը շեշտուի Սարտարապատի ճակատամարտին համաժողովրդային նկարագիրը՝ անհրաժեշտ է արձանագրել պատմական իրողութիւններ, յաղթանակը շահող տարրերուն ճշմարիտ գնահատանքը կարենալ ընծայելու համար: Այսպէս, ձարական Ռուսիոյ երկիր վերադարձող բանակին մէջ հազարաւոր հայ զինուորներ կային, որոնք բնականօրէն մնացին Հայաստան իրենց զէնքերով ու համազգեստներով: Ռուսեր նաեւ ահագին քանակութեամբ ռազմամթերք, - հրացան, փամփուշտ, թնդանօթ, ռումբ - ձգեցին հայոց ձեռքը: Եւ առաւել՝ հարիւրաւոր մարզուած հայ սպաներ, - տեղակալ, հարիւրապետ, գնդապետ ու զօրավար, որոնք մնացին այդ զինուորներուն գլուխը եւ ղեկավարեցին կռիւները Թուրքիոյ առաջացող զօրքին դէմ:

Սարտարապատի վճռական դիմադրութեան շրջանին, հայկական ուժերուն ընդհանուր հրամանատարն էր Զօր. Թ. Նազարբեկով (Նազարբեկեան), իսկ ռազմական ճակատի գործողութեանց ղեկավարն էր Զօր. Դանիէլ-Բեկ Փիրումեան, իրեն գործակից ունենալով Զօր. Մովսէս Սիլիկեանը (Սիլիկով): Փորձառու, ռազմագէտ զօրապետներ էին անոնք եւ իրենց սպաները, որոնք ձարական Ռուսիոյ բանակին մէջ՝ թրքական զօրագունդերուն դէմ կռուելու եւ յաղթելու վարկերը շահեր էին:

Մայիս 27-ին (1918), Սարտարապատի ճակատամարտը վերջացեր էր հայոց մարտիկներուն փառաւոր յաղթանակով եւ պարտուած Թուրք զօրքին նահանջով: Յնձութիւնն ու խանդավառութիւնը հա-

մակեր էին հայ գինուորններն ու ժողովուրդը եւ յաղթութիւնը առաւել զօրացուցեր էր անոնց ինքնապատահութիւնն ու կամքը: Զօր. Փիւրումեան կը պատրաստուէր յարձակիլ Կարսի վրայ, իսկ Զօր. Սիլիկեան արդէն կ'առաջանար՝ Ալեքսանդրաբոլը վերագրաւելու համար Թուրքերէն եւ կը հասնէր անոր մերձակաները:

Ծանր դժբախտութիւն եղաւ հայոց եւ Հայաստանի համար, որ այդ ճակատագրական օրերուն՝ հայ քաղաքական առաջնորդները չկրցան ըլլալ այնքան իրապաշտ, հայրենասէր ու կորովի՝ որքան եղան հայ զօրապետներն ու գինուորները: Սարտարապատի շքեղ յաղթանակէն երկու օր ետք, Պաթումի մէջ անոնք պարտուած Թուրքերուն հետ կը կնքէին պարտութեան զինադադար մը, կռուի դաշտերէն ետ քաշելով հայ զօրքը: Ալեքսանդրաբոլի մօտեցած Զօր. Սիլիկեանի գունդը Պաթումի պայմանագիրով շղթայուած՝ կը դառնայ ետ: Հայ մարտիկներուն գրաւած հողերը, նոյնիսկ Սարտարապատը իր շրջանով՝ կը վերադարձուի թուրքերուն:

Հայ զօրավարներն ու սպաները կը զայրանան իրենց դիւցազնական մարտնչումին պանծալի յաղթանակը պարտութեան վերածող քաղաքական պետերուն դէմ: Սարտարապատի հերոսը, Զօր. Դանիէլ-Բեկ Փիրումեան ցատուով կ'ընդվզի եւ կը մերժէ իր պահակագունդին յայտնել Պաթումի դաշնագրին անարգ պայմանները: Բոլոր հայ զօրականները եւ Զօր. Անդրանիկ, կը դատապարտեն այդ անձնատուութեան նախատինքն ու աղէտալի կորուստները:

Մայիս 19-ին (1918), Համօ Օհանջանեան եւ իր գործակիցները Ազգային Սորհուրդին մէջ՝ կ'որոշեն առանց կռուի Երեւանը յանձնել յարձակող Թուրքիոյ բանակին, թեթեւ կորուստով ազատելու համար...: Սարտարապատի վճռական յաղթանակին յաջորդ օրն իսկ, Մայիս 28-ին, Սիմոն Վրացեան եւ իր գործակիցները, տեղի տալով պարտուած Թուրքիոյ վերջնագրին, Հայաստանը կը յայտարարեն «անկախ», - մինչ Վրացեան սուգի թուական կը հռչակէր զայն: Ինչո՞ւ, ուրեմն, այդ սուգը բերուեցաւ հայ ժողովուրդին ու Հայաստանի գլուխին: Որովհետեւ Մայիս 28-ի «անկախութիւնը» յայտարարող հանրային վարիչներուն մէջ՝ թշնամանքը եւ ատելութիւնը Ռուսիոյ հանդէպ աւելի խորունկ էր, քան թէ Թուրքիոյ դէմ:

Անգարայի իշխանութեան պետերը գիտէին հարկաւ, թէ Անդրկովկասը, ուրեմն նաեւ ամբողջ արեւելեան Հայաստանը մինչեւ Կարս՝ մաս կը կազմէին Ռուսաստանին, ձարական կամ սովետական: Եւ կը պահանջէին Դաշնակցութեան վարիչ մարմինէն, որ Հայաստանը «անկախ» հռչակէր Մոսկուայէն, ամբողջապէս խզուելով Ռուսիայէն, եւ զրկուէր անոր հովանիին ընծայած վահանէն, որպէսզի Թուրքիոյ բանակը անարգել արշաւէր ու նուաճէր վերապրող հայութիւնն ու

անոր հայրենիքը: Եւ ճամբան բանար դէպի Պագու իր յարձակողականին: Սարտարապատի ճակատամարտը առժամապէս կասեցուց անոր արիւնարբու եաթաղանը: Բայց 1918, Մայիս 28-ին յայտարարուած «անկախութեամբ», Դաշնակցութեան ղեկավար Սորհուրդը անձնատուր եղաւ Անգարայի բոլոր պահանջներուն, ո՛չ միայն հողային զիջումներ ընելով անոր, այլ նաեւ զինաթափելով հայկական բանակը, որ մինչեւ օր մը առաջ, Մայիս 27-ին, խորտակիչ յաղթանակներ տարած էր Թուրքիոյ զօրագունդերուն դէմ, Սարտարապատի, Ղարաքիլիսի ու Բաշ Արարանի ճակատներուն վրայ: Ուրիշ ողբերգական հետեւանք մըն ալ ունեցաւ Հայաստանի այդ շղթայակապ «անկախութիւնը»: Անգարայի դաւերով կապանքուած՝ Երեւանի «անկախ» դաշնակցական նախարարները դիւրացուցին թրքական բանակին արշաւանքը դէպի Պագու, ուր ամիսներ է Վեր, Ստեփան Շահումեանի ղեկավարութեամբ հերոսաբար դիմադրող հայ գինուորներուն իրենց հետեւորդ գունդերը զինաթափ ըրին Մայիս 28-ի Թուրքիայէն պարտադրուած «անկախութեան» պայմաններով: Եւ Թուրքեր յաջողեցան գրաւել քարիւղի մեծ ոստանը, ու Պագուի մէջ աւելի քան 30,000 հայեր ջարդեցին վայրագօրէն, կոխկոտելով դաշինքային իրենց բոլոր խոստումները:

Յետոյ դէպքերը զահավիժեցան Արեւմտեան ճակատին վրայ. եւ Գերմանիա, ուրեմն նաեւ Թուրքիա պարտուեցան Դաշնակից երկիրներէն ու զինադադար կնքուեցաւ 1918-ի Նոյեմբեր 11-ին:

Սակայն քաջբայման փլատակներուն տակէն Մուստաֆա Բեմալ վերականգնեց Թուրքիան, բացայայտ կամ թաղուն օգնութեամբը յաղթական Դաշնակիցներուն: Եւ 1919-ին ու 1920-ին, Անգարա վերսկսաւ իր յարձակումներուն եւ արագ թափով, առանց նկատելի դիմադրութեան հանդիպելու՝ գրաւեց Կարսը, Արտահանը, Սուրմալուն, Ալեքսանդրաբոլը եւ միջանկեալ հայկական հողերը: Եւ 1920-ի Նոյեմբերին հասաւ Երեւանի առջեւ: Ներկայ Հայաստանը իր հայ բնակչութեամբ ամբողջական կործանում կը դիմադրուէր Գարա Պէրիի գունդերուն հուրին ու սուրին տակ: Բայց հայութիւնը, - ազգ ու հայրենիք, այդ վերջնական ոչնչացումէն փրկուեցաւ, դարձեալ շնորհիւ Ռուսիոյ հովանիին, երբ Հայաստան հռչակուեցաւ Սորհրդրդահայ հանրապետութիւն, Նոյեմբեր 29-ին:

Սարտարապատի ճակատամարտը հայոց մարտական ոգիին եւ ազատութեան կարօտին, եւ հայ ռազմիկներու դիւցազնական քաջութեան կենդանի ու յաւերժական յուշարձանը հանդիսացաւ: Անոր յաղթանակին բերքը շատ աւելի փարթամ ու փառաւոր կ'ըլլար հարկաւ, եթէ անոր գինուորական նուաճումներուն մեծութեան հաւասարէր քաղաքական վարիչներու գիտակցութիւնն ու հայրենասիրական

ոգին: Այն ատեն՝ մենք չէինք ունենար Ալեքսանդրաբոլի ամօթալի դաշինքին եւ Փետրուար 18-ի աղէտալի ապստամբութեան անոնի կորուստները: Այն ատեն՝ 1918-ի Մայիս 28-ին, Դաշնակցութեան պետերը փոխանակ Ռուսիայէն «անկախութիւն» յայտարարելու թանկագին պարզելը շնորհելու Թուրքիոյ՝ կ'որդեգրէին Զօրավար Անդրանիկի ծրագիրը եւ Հայաստանը կը հռչակէին խորհրդահայ հանրապետութիւն, եւ Ստեփան Շահումեանը կը հրաւիրէին Երեւան, ապահովելով Մոսկուայի պաշտպանութիւնը: Այսինքն՝ ինչ որ պատահեցաւ 1920-ի Նոյեմբեր 29-ին, եւ կասեցուց թուրքերուն յարձակումը՝ տեղի ունենար 1918-ի Մայիս 28-ին, երբ մանաւանդ հայկական գունդերը իրենց զմայլելի յաղթանակով խուճապային նահանջի մատներ էին Թուրքիոյ բանակը: Եւ այն ատեն՝ ներկայ Հայաստանը 2-3 անգամ աւելի ընդարձակ պիտի ըլլար դէպի արեւմուտք, դէպի Վան:

1977

ԺԱՄԱՆԱԿԸ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ Է

Ամէն ընկերարան ու քաղաքագէտ, ամէն գիտնական ու իմաստասէր, շարժառիթներու, վարկածներու եւ փաստերու որքան տարբեր մեկնակէտներ ալ դաւանի եւ ինչպիսի մեկուսի, նոյնիսկ տարամերժ նպատակներու ալ ձգտի՝ հասարակաց համոզումի մը մէջ կը միանայ իմացական մարդերու միւս տիտղոսաւորներուն, - թէ ժամանակ՝ կը նշանակէ նաեւ փոփոխութիւն, ինչպէս Ֆրիդրիխ անգլիացի անգլիացիները՝ նոյնպէս մարդկային ընկերութեան կառուցուածքին եւ ըմբռնումներուն մէջ:

Բարեշրջումի Տարվինեան տեսութիւնը միայն սկզբունք չէ կամ քմահաճ նախասիրութիւն, բնական երեւոյթներու կամ կենդանական տեսակներու դանդաղ բայց մշտական վերափոխումները բացատրելու համար: Գիտութիւնը ապացուցած է եւ կրօնները կը հաւատան, թէ երկրային գոյացութեան եւ բնագանցական տեսիլքներու հիմնական իրողութիւններէն մէկն է յարատեւ փոփոխութիւնը:

Եւ բնաշրջումի ընթացքը կ'ընդգրկէ երկրագունդի անշունչ կամ կենդանի նիւթերու եւ արարածներու բոլոր մարդերը: Այդպէս՝ կը փոխուին գետերու ուղիները եւ ովկիանոսներու եզերքները, լեռներու բարձունքներն ու կիրճերու խորութիւնները, մթնոլորտային հոսանքներն ու կլիմային ջերմաչափը: Աւելի արագ ու նոյնիսկ յեղակարծ են փոփոխութիւնները մարդ էակի անհատական թէ հաւաքական կեանքին ու գործելակերպին մէջ:

Կազմակերպուած ընկերութեան գոյատումէն կամ արձանագրուած պատմութեան ծագումէն ի վեր՝ անդադար փոխուած են երկիրներու սահմանները, ժողովուրդներու կենցաղը, մարդոց հաւատալիքներն ու բարոյական սկզբունքները, պետական զրուցութիւններն ու խօսուող լեզուները, կիրարկուող շահանքներն ու հագումը հանդերձները: Իւրաքանչիւր ապրող սերունդ, յարաշարժ այդ փոփոխութեան յորձանքին մէջէն ընթանալով հանդերձ, զարմանալի հակասութեամբ մը, կը կլանուի այն պատրանքէն, թէ իր շուրջ ամէն իր ու շարժում, ամէն ազգ, անհատ եւ ըմբռնում անփոփոխ է ու կայունացած:

Յարափոփոխ է ամբողջ տիեզերքը: Եւ եթէ իր ժամանակէն ու անոր նախապաշարումներէն ու քէներէն կտրուած ականակով մը

նայուի անցեալ հազարամեակին, կամ դարուն, կամ նոյնիսկ նախորդ սերունդի կեանքին՝ վիթխարի փոփոխութեանց անփոստի ապացոյցներ պիտի ապշեցնեն դիտողը: Սակայն ցաւազին հեզնանքով մը՝ մարդիկ կը դժուարանան տեսնել եւ ըմբռնել բնաշրջումի տարերային հոսանքին ահարկու տարողութիւնը: Որովհետեւ անոնք չեն յաջողիր ձերբազատուիլ իրենց կանխակալ կարծիքներէն ու խաբուսիկ կարգախօսներէն, որովհետեւ անոնք չեն փորձեր լքել իրենց ինքնաբաւ յաւակնութիւնները եւ այլամերժ կասկածներն ու ոխերը՝ կ'ապաւինին մաշած, ժամանակավրէպ նոյն դարավճիռին, - թէ չեն փոխուիր ուրիշ մարդիկ եւ անոնց նկարագիրները, չեն բարեխառնուիր անոնց նպատակները եւ զանոնք հետապնդելու եղանակները, ուրեմն պէտք է փոխուին նաեւ իրենք, իրենց ժխտական վերաբերումով ու թշնամանքով:

Ժամանակը, անկասկած, իր անդիմադրելի թաւալումին սիտած փոփոխութիւնը պիտի տարածէ հետզհետէ բոլորին վրայ: Եւ մէկ կամ երկու տասնամեակ յետոյ՝ հիմա տիրական, քարացած թուացող կարգ մը համոզումներ, վախեր ու սրբագործուած մարտակոչեր փչրուած ու թաղուած պիտի ըլլան տարիներու փրփուրին տակ: Ինչպէս քանդուեցան նախապաշարումի ու շարիքի կարգ մը շղթաներ, ըմբռնումներ ու ճահճուտներ, որոնք բռնակալութիւն, աղէտ ու մահ կը շղթայազերծէին մարդկութեան վրայ, դեռ քանի մը տասնամեակ առաջ:

Սակայն ճշմարիտ բարիք մը, անփոխարինելի պարզեւ մը պիտի ըլլայ ամէն անհատի եւ ժողովուրդի համար, եթէ անոր քաղաքական ու մտաւորական առաջնորդները կարենան աշխարհի ու կեանքի անճողոպրելի փոփոխութեան գաղափարը որդեգրել, - ո՛չ թէ ժամանակին պարտադրանքով, այլ անկէ առաջ, առնուազն անոր հետ: Այն ատեն՝ վստահարար կարելի պիտի դառնար բազմաթիւ ողբերգութիւններ խնայել ու պատերազմներ կանխել, անսահման թշուառութիւն ու տառապանք բառնալ եւ աւելի ազնիւ ու նուազ շարչարագին կեանք մը ստեղծել մարդկութեան համար:

Որովհետեւ տարակոյտ չկայ, թէ ներկայ միջազգային դժբախտ, աղէտսլի հակամարտութեանց գլխաւոր մէկ պատճառը՝ մրցակից կողմերու վարիչներուն չկարենալ համոզուիլն է, - թէ իրենք որքան յամառօրէն ալ կառչին իրենց նախապաշարումին ու վարկածներուն, թէ անբարեշրջելի է հակառակորդը՝ ժամանակը, իր անխուսափելի փոփոխութիւնը կը հարկադրէ նաեւ անոր ինչպէս ամէնքին:

Ռամկավարութիւնը, նոյնիսկ դրամատիրութիւնը այն չեն այսօր, ինչ որ էին Քարլ Մարքսի ժամանակաշրջանին, անգամ Լենինի գլխաւորած ռուսական յեղափոխութեան տարիներուն : Եւ բնականօրէն

այն նախատեսութիւնները, մահացու պայքարի այն մարտական կարգախօսները, որոնք հռչակուեր էին անոնց կողմէ այդ դրոթեան դէմ՝ այլեւս լիապէս չեն վերաբերիր անոր, որովհետեւ հարազատօրէն չեն սահմաններ անոր բնաշրջուած էութիւնը:

Նոյնպէս, այսօրուան համայնավարութիւնը, որ կը կիրարկուի Սովետ Միութեան ու Զինաստանի մէջ, իբրեւ պետական կառուցւածք, կենցաղի ուղեցոյց, ըմբռնում եւ նոյնիսկ վարդապետութիւն՝ այն չէ ամբողջապէս, ինչ որ յղացուած ու յայտարարուած էր Մարքս-էնկելսի համայնավար հրովարտակին մէջ աւելի քան 110 տարի առաջ, կամ սահմանուած էր Լենինի կողմէ, կամ նոյնիսկ դաւանուած ու գործադրուած էր մինչեւ Ստալինի մահը:

Փոխուեր են հիմնապէս, Ասիոյ եւ Աֆրիկէի ժողովուրդներուն ձգտումներն ու հոգեբանութիւնը: Եւ ի զուր է անոնց ազգային գիտակցութեան զարթօնքը կամ ազատութեան մարտնչումները դիտազրաւել հնամեայ, նոյնի՛սկ տասնամեակ մը առաջուան գաղութային մտայնութեամբ, ցեղային գերակայութեան նախապաշարումով, նուաճողական արտօնակով: Ժամանակին վարարուն յորձանքը սրբեր տարեր է անդարձ անցեալին այդ տիտուր բեկորները: Բարբարոյ իմաստութիւնը՝ տեսնելն է հիմա եւ հասկնալը, այդ բախտորոշ փոփոխութեանց հսկայ նշանակութիւնը եւ լուսաւոր խոստումը:



Մարդկութիւնը մշտական տագնապի եւ պարբերաբար՝ հիւլէական պատերազմի մղձաւանջին մատնող մեծագոյն պատճառը, վստահարար, երկու հակամարտ ճակատներու վարիչներուն ենթադրութիւնն է, յաճախ՝ նոյնիսկ համոզումի վերածուած վարկածն է, թէ դիմացի կողմը կը մնայ անփոփոխ, - ուրեմն վտանգաւոր ու թշնամի, որպէս հակառակորդ: Ռամկապետական եւ համայնավար երկիրներու վէճերուն, բախումներուն, ուրեմն կռիւներուն հիմնական զրգապատճառը տնտեսական մրցակցութիւնը, կամ նոր շուկաներու գրաւման ձգտումը չէ միայն, ինչպէս էր դարերով, աւատապետական ու դրամատիրական երկիրներու արիւնալի մաքառումներուն մէջ:

Որովհետեւ եթէ ծանօթ այդ կարգախօսներուն թելադրանքով բացատրուի ներկայ միջազգային բուռն հակամարտութիւնը՝ անհեթեթ, անօրինակ հակասութիւն մը պիտի յայտնաբերէ ան: Պիտի ապացուցուի, թէ Արեւմուտքի եւ Արեւելքի դառն պայքարի տարիներուն՝ Միացեալ Նահանգներ եւ Մեծն Բրիտանիա աւելի անողք մրցակիցներ եղեր են իրարմէ շուկաներ կորզելու եւ հում նիւթերու աղբիւրներ կլանելու արշաւին մէջ՝ քան անոնք ունեցեր են Սովետ

Միութեան եւ ուրիշ համայնավար պետութեանց հետ:

Տարակոյս չկայ, թէ հնազոյն դարերէն՝ տնտեսական շահի ան-
յազ արտրժակը գլխաւոր շարժառիթ հանդիսացեր է հզօր կայսրու-
թեանց աւերիչ բախումներուն եւ ազգամիջեան եղբրական սպանդնե-
րուն մէջ: Բայց այդ ցանկութիւնը առաջին տեղը չի գրաւեր հակա-
ռակորդ բանակներու բաժնուած երկիրներու մաքառումի օրակարգին
վրայ: Սովետ Միութիւնը նիւթեղէն հարստութեանց անհատնում աղ-
բիւրներ եւ արտադրուած ճարտարարուեստական ապրանքներու
սպառման անսահման շուկաներ ունի իր անծայրածիր երկրին եւ
համայնավար ժողովուրդներու անհամար բազմութեանց մէջ:

Նոյնպէս Ամերիկա՝ Եւրոպայի, Ասիոյ եւ Ափրիկէի իր քանի մը
տասնեակ դաշնակիցներուն հետ կնքուած համաձայնագրերով՝ կրնայ
ապահովել որեւէ քանակութեամբ հում նիւթեր եւ կրնայ իր վիթխարի
արտադրականութեան պտուղները տարածել դէպի ամէն հորիզոն,
ծաւալուն շուկաներ գտնելով ամէն տեղ: Միակ դժուարութիւնը,
կամ խափանիչ ազդակը ունենալով՝ անոնց հատուցումի միջոցներուն
նուազութիւնը, - քանի որ չորդեգրուիր ապրանքային փոխանակու-
թեան աւելի մատչելի եղանակը:

Յարափոփոխ աշխարհի մը եւ մշտապէս բնաշրջուող Ֆիզիքական
կեանքի ու իմացական նորոգման յորձանքին հանդէպ՝ քարացած
համոզումներու, ժամանակավրէյ կարգախօսներու կառչած մնալու
հակումն է, որ կը սնուցանէ, կը հրահրէ «ցուրտ պատերազմը»:
Տակաւին այսօր, ինչպէս քառասուն տարի առաջ՝ ուսմկապետական-
դրամատիրական դրութեան արոյթները կը հաւատան եւ կը վախ-
նան, թէ Սովետ Միութիւնը կ'առաջադրէ համաշխարհային յեղափո-
խութեամբ կամ ռազմական յարձակումով համայնավար վարչակարգը
տարածել ամբողջ աշխարհի վրայ:

Իսկ համայնավար առաջնորդներ, այսօր, ինչպէս քառասուն տա-
րի առաջ՝ կլանուած են տեսարանական նոյն եզրակացութեամբ ու
երկիւղով, - թէ դրամատիրական իշխանութիւններ ամէն առիթ պիտի
օգտագործեն եւ ամէն միջոց պիտի կիրարկեն, կործանելու եւ ոչնչա-
ցընելու համար Սովետ Միութիւնը, իբրեւ խարխիւն ու միջնաբերդը
ընկերվարական դրութեան եւ ընդմիջտ շղթայուած պահելու համար
բանուոր դասակարգը:

Այս առաջադրանքները եւ անոնցմէ ներշնչուած անհատ թշնա-
մութիւնն ու անզիջող կռիւները անկասկած որ իրողութիւններ էին
իրենց ժամանակին: Բայց տարիները, անխուսափելի բնաշրջման թա-
ւալումով՝ էական յեղաշրջումներ ներմուծեր են թէ՛ ուսմկապետական
եւ թէ՛ համայնավար գաղափարական մարզերուն եւ պետական նշա-
նակէտներուն ու գործելակերպերուն մէջ:

Հիմա, երբ Սովետ Միութեան ղեկավարներ, հանդիսաւոր առիթ-
ներով, կ'ակնարկեն զայլոք դարաշրջման մը, երբ ամբողջ մարդկու-
թիւնը պիտի փարի համայնավար յեղափոխութեան՝ հին դաւանանքի
մը, մտերիմ երազի մը հաւատարմութիւնն է միայն, որ կ'արտայայ-
տեն: Անոնք կրնան տակաւին հաւատալ այդ տեսիլքին: Բայց անգամ
Ստալինի խստաշունչ տիրակալութեան շրջանին, անոնք լքեր էին
յեղափոխութիւն արտածելու մտածումը եւ լծուեր էին մէկ երկրի
մէջ ընկերվարութիւն կառուցանելու հսկայ ձեռնարկին:

Եւ ինչ ներքին իրերամարտ պայքար որ մղեր են, ինչ արտաքին
պատերազմ, որ հարկադրուած զգացին վարել՝ եղան ոչ թէ գաղա-
փարական ծաւալումի շարժառիթով, այլ ազգային ու պետական ապա-
հովութեան, նոյնիսկ գոյատեւման մտահոգութեամբ: Բայց իրենց
երկիրը վերաշինելու եւ ժողովուրդը վերակերտելու աշխատանքին
զուգընթաց՝ համայնավար պետեր կը շարունակեն ցանկալ ու ջանալ,
որ ուրիշ ազգեր ալ որդեգրեն իրենց քաղաքական դրութիւնը: Սա-
կայն այլեւս միայն տնտեսական օգնութեան, գաղափարի քարոզ-
չութեան եւ ժամանակի նպաստին ապահովելով՝ եւ ոչ թէ յարձակո-
ղական նուաճումի բռնութեան, որ աւելի ընդդիմադիրներ կը ստեղծէ
քան համախոհներ կը շահի:

Դրական նշանակելի փոփոխութիւններ կրեր է նաեւ ուսմկալա-
րութիւնը, սկզբունքներու կիրարկման եւ վարչակարգի ժողովրդա-
կանացման մարզերուն մէջ: Ոչ միայն եւրոպական առաջաւոր ազգե-
րուն, այլ նաեւ Ասիոյ եւ Ափրիկէի շարք մը նորագաս երկիրներուն
մէջ՝ ուսմկավարութիւնը յաջողեր է խօսքի, գրչի եւ գաղափարի
ազատութեան հիմնական դաւանանքներուն միացնել եւ տնտեսական
ապահովութեան եւ ընկերային հաւասարութեան սկզբունքները,
աւելի կատարեալ ու գերազանց դրութիւն մը ստեղծելով: Նոյնիսկ
Ամերիկայի մէջ, ուր հզօր դրամատիրութիւն մը կ'իշխէ տակաւին՝
անհաւատալի բարեփոխում իրագործեր է բանուորական միութեանց
եւ ճարտարարուեստի տէրերու յարաբերութեանց մէջ, ուր քէնը,
ատելութիւնը եւ կռիւր կը տիրէին տակաւին քսան տարի առաջ:



Քաղաքական ու տնտեսական հակամարտ դրութեանց վարիչ-
ներուն դաւանած վարկածները, թէ անփոփոխ կը մնան հակառակորդ
ճակատի պետերուն ձգտումները, նպատակն ու գործելակերպը՝
համաման են կրօններու եւ յարանուանութեանց առաջնորդներու
փոխադարձ վերաբերմունքին: Միջին դարերուն, կրօնական տարբեր
հատուածներ տողորուած էին հոգեկան փրկութեան եւ անդրշիրմեան

կեանքի ջերմեռանդ հաւատքով, որ սակայն կ'արտայայտուէր այլա- մերժ հայածանքով, նոյնիսկ ատելափառ թշնամութեամբ:

Քրիստոնէական եւ իսլամական կրօնները մանաւանդ՝ կը հռչա- կէին թէ միայն իրենցն է ճշմարիտ Աստուածը եւ միայն իրենց բա- րեպաշտներուն խոստացուած է երկնքի արքայութիւնը: Եւ իրենց նախանձայոյց եռանդին մէջ՝ փրկելու համար մարդոց հոգիները, անոնք ռազմադաշտերու վրայ նետով ու նիզակով եւ նուաճուած քաղաքներու մէջ ջարդով ու հրկիզումով կը սպաննէին անոնց մար- միրները: Յետոյ՝ այդ անգիջող, արինախանձ ոգին նոյն նախճի- րային իրամատը պատուեց նաեւ կաթոլիկ եւ բողոքական եկեղեցի- ներուն միջեւ:

Այսօր, տակաւին կը հաւատան ու կը հռչակեն կրօնապետներ, թէ փրկագործութեան ու յաւիտենական երանութեան միակ ճշմարիտ ճամբան իրենց ընծայածն է: Եւ առաքելութիւններ կը սփռեն հե- թանոս, նոյնիսկ կրօնակից ժողովուրդներու մէջ, իրենց յարանուա- նութեան գրաւելու, դարձի բերելու մտրած ուրիշ հաւատացեալներ: Բայց անոնք այլեւս չեն ձեռնարկեր, չեն իսկ երեւակայեր ռազմա- կան արշաւանքներ արձակել ոչ-դաւանակից ազգերու վրայ, անոնց հոգիւոր նուաճումը արիւնով ու կործանումով կնքելու համար: Բնաշրջումը օժտեր է զանոնք իմաստութեան, ուրիմն հանդուրժո- զութեան շնորհներով:

Ռամկավար եւ համայնավար գաղափարներն ալ, իրենց աշխար- հիկ, - քաղաքական ու տնտեսական նկարագրով, կրօնական հաւա- տալիքներու տարերային ուժգնութեամբ յայտնուեցան: Անոնց արտոյ- եաններն ալ, հաւասար համոզումով, կը յայտարարեն, թէ իրենց որդեգրած դրութիւնը միակ ուղին է, որ մարդ էակին եւ ժողո- վուրդներուն նիւթական ապահովութիւն ու երջանկութիւն կ'երաշ- խաւորէ: Բնական եւ անվտանգ է այդ հաւաստումը: Բայց անոնք տակաւին ենթակայ կը մնան այդ մղձաւանջին, թէ հակառակորդ ճակատը մահացու սպառնալիք մըն է իրենց Ֆրիդրիքական գոյութեան դէմ, որովհետեւ կ'առաջադրէ ու կը հետապնդէ իրենց կործանումն ու ոչնչացումը, դաւադիր անակնկալ յարձակումով մը, կամ ընդյա- տակեայ ապստամբութիւններ գրգռելով: Եւ այս շարունակուող կաս- կածն ու վախն են, որ կը խափանեն իրաւախոհական համաձայնու- թեան մը իրականացումը:

Դժուար չէ, նախապաշարումէ ձերբազատ ակնարկով մը հաս- տատել այն նշանակելի, բարերար փոփոխութիւնը, որ առաջացեր է ռամկավար ու համայնավար սկզբունքներու եւ անոնց ընկերային ու պետական գործադրումին մէջ, իբրեւ հետեւանք ժամանակին բե- րած բարեշրջութեան: Որովհետեւ անոնց գոյութիւնը շողկապուած է

իրարու եւ անոնց գործելակերպը պայմանաւորուած է իրարմով՝ մէկուն կրած բնաշրջումը անխուսափելիօրէն կը ներգործէ նաեւ միւսին վրայ:

Պատմական իրողութիւն է, որ Ռամկավարութիւնը, իբրեւ գա- ղափար ու շարժում՝ յեղափոխական շքեղ պոռթկում մըն էր աւատա- պետական եւ արքայական բռնակալութեան դէմ՝ անոր գերութեան շղթաներէն ու թշուառութեան կապանքներէն փրկելու համար հասա- րակութիւնը եւ քաղաքական ազատութիւն ու տնտեսական՝ ապահո- վութիւն երաշխաւորելու համար անոր: Մարդկութեան ըմբռնում- ները լուսաւորող ու կենցաղը բարելաւող ամենէն հզօր ու ազատարար յեղաշրջումն եղաւ ան, որմէ սկզբունք ու ներշնչում քաղեցին նաեւ համայնավարութեան դարբինները:

Իսկ համայնավար տեսարաններ ու մարտիկներ իրենց յեղա- փոխութիւնը քարոզեցին ու կազմակերպեցին դրամատիրութեան ճնշող կեղեքումներէն գործաւոր դասակարգը ազատագրելու կարգա- խօսով: Բայց իրական յեղափոխութիւն յաջողեցան կատարել ձա- րական Ռուսաստանի եւ յետամնաց Չինաստանի մէջ, ուր ո'չ միայն չէր եղած երբեք ռամկավարութիւն՝ այլ չկար նոյնիսկ դրամատէր կազմակերպուած, յարձակողական դասակարգը, ինչպէս եւրոպական երկիրներու մէջ, որոնց պայմաններուն վրայ հիմնած էր Մարքս իր վարդապետութիւնը:

Յատկանշական է իրողութիւնը, որ տակաւին ոչ մէկ ռամկավա- րական երկրի մէջ, ուր բանուորական զօրաւոր շարժումներ կային, համայնավարութիւնը կրցաւ պետական ղեկին բարձրանալ: Պատ- ճառը հաւանաբար ընկերվարական տեսարաններու խոշոր սխալն էր, նոյնացնելու ռամկավարութիւնն ու դրամատիրութիւնը, զանոնք շփոթելու իրարու հետ եւ իրենց պարսաւանքին ու յարձակումներուն թիրախ դարձնելու երկուքն ալ:

Սակայն բնաշրջումն ու փորձառութիւնը հերքեցին այդ դատո- ղութեան վրիպանքը: Հոն, ուր իրապէս բիրտ, անողորմ ու հարստա- հարող էր դրամատիրութիւնը՝ ռամկավարութիւնը ընդվզեցաւ ու պայքարեցաւ անոր դէմ, ընկերային արդարութեան ու տնտեսական ապահովութեան իր սկզբունքները դաւանող գործաւորական միու- թիւններով: Եւ զարմանալի չէ, որ այսօր աւելի բազմաթիւ են ըն- կերվարական ռամկավարութիւնները՝ քան դրամատիրականը, որ կեղերոնացած է Ամերիկայի մէջ, - բայց մեծապէս զգաստացած ու իրատես, Ֆրէնքլին Ռուզվելթի ձեռնարկած բարենորոգումներուն արդիւնքով:

Եւ հիմնական փոփոխութիւնը նաեւ համայնավար քարոզչական եղանակին ու գործելակերպին մէջ, անցեալին բաղդատմամբ:

Երբեմն՝ անոնց կարգախօսն էր «Պրոլետարներ բոլոր երկիրներու, միացէ՛ք»ը, որ աշխարհի բանուոր գանգուածները յեղափոխուելու կը կոչէր առաջաւոր երկիրներու իշխանութեան դէմ: Բայց երբ միջազգային դրամատիրութեան ամենէն անյազ ու յափշտակիչ հատուածը, - նացի-Ֆաշիստ առանցքով պատերազմ շղթայագերծեց ռամկավար եւ համայնավար պետութեանց դէմ՝ անոնք զինակցեցան մտածումով, ոգիով ու պայքարով հասարակաց թշնամիին դէմ: Իսկ հիմա՝ արդէն խաղաղ համակեցութեան գաղափարը կը ջատագովեն եւ անոր իրագործման համար կը բանակցին: Բնաշրջումի՝ յամր ու տաժանաղին ընթացքին բարերար ազդեցութիւնը աւելի իմաստուն ու հանդուրժող դարձուցեր է երկու հակամարտ ճակատներուն ղեկավարները, - ինչպէս ըրած էր երբեմն տարբեր կրօններու պետերը:

1959

ԱՄՕԹԱԼԻ ԶՔՄԵՂԱՆՔԸ

Հայաստանէն հեռացող եւ Միացեալ Նահանգները գաղթող հայերու նկատելի բազմութիւն մը կեդրոնացած կ'ապրի Լոս Անճելէսի շրջանակին մէջ: Այդ պատճառով յաճախ կը խօսուի եւ կը գրուի անոնց կարգ մը անդամներուն անվայել վարմունքին կամ ժխտական արարքներուն մասին, անճիշդ ու անարդար ընդհանրացումով մը, որ վիրաւորական կը դառնայ թէ՛ նորեկներուն եւ թէ՛ հայոց անունին ու վարկին համար:

Նոյնիսկ վերջերս «Անչա»-ի մէկ պատասխանատու վարիչը ժպրհեցաւ յայտարարել հրապարակով, թէ Հայաստանէն եկողներ կոպտութեան, խարէութեան եւ գողութեան յանցանքներ կը գործեն, որովհետեւ այդ մեղանշումները սորվեր ու որդեգրեր են մայր հայրենիքին մէջ տիրող վարչաձեւէն: Այդ անարգ վերագրումով՝ ան կը նախատէր նորեկներու պարկեշտ մեծամասնութիւնը փոքրաթիւ յանցագործներու վրիպանքներուն ամօթով: Յետոյ, եւ աւելի պարսա-

ւելին, ան կը զրպարտէր Հայաստանի իշխանութիւնն ու ժողովուրդը, կատարուող մեղսալի արարքներու տիղմը նետելով անոնց վրայ:

Մինչդեռ, բացայայտ ճշմարտութիւն մըն էր, որ մեղադրելի անձերը իրենց խառնուածքին ու նկարագրին այդ բացասական տարրերը ոչ թէ Հայաստանի մէջ ժառանգեցին՝ այլ սփիւռքէն հետերնին տարին հայրենիք, երբ ներգաղթեցին, եւ հիմա իրենց հետ բերեր են Ամերիկա, նոր մեղանշումներու պատեհութեանց արգաւանդ երկիրը: Բայց հիմնապէս սխալ է կարգ մը յանցագործներու մեղքերը ընդհանրացնել ու տարածել բոլորին վրայ, անոնց արժանապատուութիւնը վիրաւորելով եւ դառնութիւն ստեղծելով տարբեր համայնքներու միջեւ:

Տարակոյս չկայ, թէ Հայաստանէն ամէն հայի հեռացումը իրական վնաս մըն է ազգային ու հայրենական գերագոյն շահերու տեսակէտէն: Որովհետեւ ամէն մեկնող՝ իր ընտանիքին ու գալիք շառաւիղներուն քանակային ու որակային կորուստին կ'ենթարկէ Հայաստանն ու հայ ազգութիւնը, փոյթ չէ թէ ո՛ւր կ'երթայ վերջնական ոչնչացումի մատնուելու: Բայց մենք անձնական խիղճի ու գիտակցութեան արարք մը նկատած ենք հայրենիքը լքելու անոնց որոշումը, որ շատերուն միայն նիւթական թշուառութիւն ու հոգեկան տուայտանք կը պատճառէ օտար երկիրներու տակ, անհարագատ միջավայրերու մէջ: Եւ մենք կ'ափսոսանք անոնց կորուստին համար:

Սակայն մեր դատումով առաւել պարսաւի արժանի են տարբեր դասի մը պատկանողներ: Անոնք կէս կամ քառորդ մտաւորականներ են, բայց ինքնարաւ ու յաւակնոտ: Յայտնօրէն կը գիտակցին, թէ մայր հայրենիքէն իրենց մեկնիլը առնուազն անձնասիրական քայլ մըն էր, արդիւնք՝ հայրենասիրական զգացումի ու կամքի տկարութեան: Եւ թերեւս խղճահար, թերեւս ամօթահար իրենց մենութեան մէջ, ծայրայեղօրէն դիւրագգած կ'ըլլան որեւէ քննադատական ակնարկի հանդէպ: Եւ երբ կը կարգան կամ կը լսեն մեղադրանք մը Հայաստանէն իրենց հեռանալուն մասին՝ անոնք ամբարտաւան ու վիրաւոր շեշտով մը կը պատասխանեն:

- Մեցմ քսմ տարի գոհեցիմք այդ հայրենիքիմ համար եւ մեր պարտքը կատարեցիմք, պէտք եղածէմ աւելիմ տալով անոր: Եթէ դուք Հայաստանը այդքան շատ կը սիրէք, հիմա դուք գացէք հոն եւ անոր համը առէք...:

Այս բանաձեւը անոնք կը յանկերգեն բերանացի կամ գրաւոր, առանց անդրադառնալու անոր ամօթալի, ապերասան ընդթին: Որովհետեւ բաղդատութեան ո՛չ մէկ եզր կայ իրենց եւ այստեղի գաղթական հայերու վիճակներուն միջեւ: Ամերիկահայեր այս երկիրը ապաստանած են Արեւմտեան Հայաստանի տարբեր զաւառներէն, փախչելով

1895-6ին թուրքիոյ զործադրած զանգուածային ջարդերէն, կամ վերապրելով Ապրիլեան ահաբեկի եղեռնէն: Հայրենիքի սէրը անոնց մէջ սրբազան կիրք մըն էր, վիպային տենչանք մը, որ սնունդ կ'անէր ազգային ազատութեան ու հայ պետական վերականգնումի տեսիլքէն ու պայքարէն:

Եւ Ամերիկահայեր ազգի ու հայրենիքի իրենց խորունկ ու անձնուէր սէրին ապացոյցները տուեր էին յաճախ, - երկու անգամ կամ մաւորական խումբերով մինչեւ Կովկաս ու Կիլիկիա ռազմադաշտ մեկնելով թրքական զունդերուն դէմ: - Մինչեւ ներկայ Հայաստանի մէջ տասնեակ մը նոր աւաններ կառուցանելու հոյակապ ձեռնարկները: Այդ Ամերիկահայերը, նոյն ատեն, զաւակներու եւ թոռներու ծաւալուն կապերով շղթայուած էին իրենց գոյավիճակին: Եւ որքան ծիծաղելի՜ այնքան անմարդկային է անոնց նետել, - Հիմա դո՛ւք Հայաստան գացէ՛ք», մարտահրաւէրը, խզելով զաւակներու, թոռներու, ազգականներու բազմաճիւղ կապանքները:

Իսկ ամբողջապէս տարբեր է «նորեկ»ին վիճակը:

Բոլորովին տարբեր երեւոյթ է, երբ Հայաստանէն արտագաղթած կէս կամ քառորդ մտաւորական մը, իրեն ուղղուած ամէն անմեղ հարցումի կամ միամիտ մեղադրանքի դէմ կը նետէ նոյն պատասխանը, ահարկու մարտակոչի մը նման, - «Նս բաւական գոհեցի եւ պարտէս աւելից տուի այդ Հայաստանին համար: Եթէ դուք այդքան կը սիրէք հայրենիքը՝ հիմա ալ դուք գացէ՛ք հոն եւ գոհեցէ՛ք»: Որովհետեւ այս յայտարարութիւնը հոգեբանական արտաւոր վիճակ մը եւ թանձրացած կեղծիք մը կը մատնէ:

Այդ մտայնութեամբ, ուրեմն, ներկայ Հայաստանը աշխարհի ամենէն թշուառ ու վատ վայրն է, ուր իրենք, իբրեւ թիապարտներ կարծես, քսան տարի տաժանելի զրկանքներով աշխատեր, տառապեր ու տանջուեր են եւ հիմա փոխադրուեր են դրախտային իրականութեան մը մէջ: Որեւէ առարկայական դատումի, որեւէ արթուն խղճմտանքի համար՝ այս պատկերը ճշմարտութեան խեղաթիւրուած, նենգափոխուած զեղծանումն է: Եւ անձնասէր ու շահամոլ միտք մը միայն կրնայ հաւատալ նման խարէութեան մը ու հռչակել զայն որպէս իրողութիւն, սոսկ իբրեւ չքմեղանք իր ապերախ լքումի արարքին:

Հայաստան հարկաւ երկրագունդի ամենէն փարթամ ու առաջաւոր սակաւաթիւ երկիրներէն չէ: Բայց ան աւելի բարեկեցիկ ու զարգացած է քան հարիւրաւոր հզօր, միջին ու փոքր պետութիւններ: Հայոց մայր հայրենիքին մէջ շուրջ 3,000,000 մարդիկ, կիներ ու մանուկներ կ'ապրին, ուր ո՛չ անթի կայ, ո՛չ մերկ, ուր կեանքը ապահով է ու խաղաղ, ուր արտաքին մահացու արշաւանքներու, ներքին

արիւնալի կռիւներու, ոճրային համաճարակներու մղձաւանջէն ազատ է մեր ժողովուրդը:

Սակայն մանաւանդ՝ Հայաստան-հայրենիք, հարագատ պետութիւն-իշխանութիւն եւ ժողովուրդ-ազգ շուկայի ու խանութի, պաշտօնի ու փառքի ծառայող ապրանքներ չեն, որ մարդիկ իրենց ճաշակին ու քմայքին թելադրանքով ներբողեն կամ ուրանան, շահագործեն կամ կոխկոտեն, աճուրդեն կամ վատաբանեն զանոնք: Որովհետեւ այդ գերագոյն արժէքները մեր ազգային հաւաքական գոյատեւման անփոխարինելի խարիսխները, յաւերժական երաշխիքներն են: Եւ մարդիկ ոչ միայն անոնց զրպարտութիւն ու տիղմ չարտեսելու՝ այլ սոսկ անոնց նուիրական անունները արտասանելու համար՝ պէտք է իրենց սիրտերն ու բերանները լուացած, մաքրած ըլլան ապերախութեան, քէնի ու վատութեան դիրտերէն:

Մենք ո՛չ կը փորձենք դատել, ոչ ալ պարսաւել Հայաստանէն հեռացող հայերը, անոնց այդ մեկնումը իրենց խիղճին ու գիտակցութեան ենթակայ անձնական արարք մը նկատելով: Բայց անոնցմէ ոմա՛նք, կէս կամ քառորդ մտաւորականներ, կը յամառին հերոսի ու նահատակի դիմակ հագնիլ Ամերիկահայ գաղութին դէմ եւ կը յանկերգեն թէ իրենք շա՛տ տուեր ու գոհեր են մայր հայրենիքին համար, եւ հիմա կարգը հոս ապրող հայերուն եկած է: Այն ատեն է որ մեզ կը ստիպեն շեշտել ճշմարտութիւնը, թէ իրենց այդ հաւաստումը հիւսուած է կեղծիքով ու խարդաւանքով:

Վաւերական պատմութիւն է արդէն, որ 1946-47 տարիներուն, երբ զանգուածային ներգաղթ կը կատարուէր՝ Հայաստան դեռ նոր փրկուած էր ահաբեկի պատերազմին աւերներէն ու սարսափներէն: Եւ երկիրն ու ժողովուրդը կը տուայտէին զրկանքներու եւ կարիքներու մէջ: Այդ պատճառով, հայրենի կառավարութիւնը ծրագրած էր միայն մօտ 30,000 տարագիր հայեր փոխադրել Հայաստան, որոնց նախնական պահանջները պիտի կրնար հոգալ:

Իսկ նոյն շրջանին՝ Յունաստանի եւ Մերձաւոր Արեւելքի շարք մը մարզերուն մէջ քաղաքացիական արիւնալի կռիւներու, տնտեսական թշուառութեան ու բռնակալ լուծերու սոսկումները կը տիրէին: Եւ պատուիրակներ փութացին Երեւան ու Էջմիածին, եւ բիւրաւոր պանդուխտ հայեր խնդրանքով ու պաղատանքով, եւ սպառնալիքով ու կաշառքով կ'ողողէին ներգաղթի Յանձնախումբերու անդամները, նոյն յուսահատ աղաղակով, - «Տարէ՛ք մեզի Հայաստան, թո՛ղ չոր քարի վրայ պառկիմք հոն, թո՛ղ ցամաք հաց ու սոխ ուտեմք հոն, միայն փրկեցէ՛ք մեզի այս դժոխային վիճակներէն»:

Եւ Հայաստանի իշխանութիւնը, հայրենասիրական ու ժողովրդաճանաչող ազնիւ խանդով մը, լսեց ու հաւատաց այդ սրտազեղ

կանչերուն ու աւելի քան 105,000 տարագիր հայեր փոխադրեց հայ-
րենի հողերուն վրայ, բնիկ բնակչութեան հացէն, տուներէն ու
կենսապիտոյքներէն կտրելով ու բաշխելով ներգաղթողներուն: Ար-
դարօրէն յուսալով, որ նորեկներն ալ, որ հազար զրկանք ու տաղնապ,
եւ յուսալքում ու հալածանք կրած էին օտար երկիրներու մէջ, քանի
մը տարի ալ պիտի յօժարէին բաժնել հայրենիքի հարազատ ժողո-
վուրդին դժուարութիւնները:

Հիմա, հարկաւ, մոռցուեր են այն օրերուն սփիւռքի մէջ տիրող
դժոխային պայմանները: Բայց դժուար չէ հաստատել հերոսի ու
նահատակի յաւակնութեամբ մարտահրաւէր շեփորող «ազատատենչ»
մունետիկներու կեղծիքը: Որովհետեւ իրապէս, անոնք ոչի՛նչ տուին
ու զոհեցին Հայաստանին համար, քսան տարուան ընթացքին: Հոն
աշխատեցան ու ապրեցան, ինչպէս նախապէս գործեր էին, շատ աւելի
տաժանքով, որեւէ հեռաւոր երկիրնքի տակ, անստոյգ ապրուստ մը
վաստկելու համար:

Մինչ ատոր դէմ՝ անոնք անհաշիւ արժէքներ ու գանձեր առի՛ն,
ստացա՛ն ու կուտակեցի՛ն Հայաստանի մէջ եւ հետերնին բերին ար-
տասահման: Հոն ունեցան ձրի՛ բժիշկ, ձրի՛ հիւանդանոց, ձրի՛ դպրոց
մինչեւ համալսարան, եւ զարգացան ու ծաղկեցուցին իրենց շնորհ-
ները: Հայաստանին բարիք չտուի՛ն, - բայց անկէ առի՛ն ու հետերնին
օտարութեան բերին անոր շնորհները, հոն ծնած, անոր հողով ու
ոգիով, անոր խնամքով ու դրամով մեծցած զաւակնե՛րը, նաեւ նիւ-
թական բաւարար գումարներ, հոս մեծարժէք չէնքեր ու կալուածներ
գնելու չափ: Չէ՛, կ'ակնկալուի, որ անոնք ապերախտ ուրացումի
մեղքէն վեր՝ տիղմ ու լուտանք չնետեն Հայաստանի վրայ, եւ գոնէ
լռելու պարկեշտութիւնը ունենան:

ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄՆԵՐՈՒ ԶԱՐԻՔԸ

Մտածումի ու խառնուածքի խոր տարբերութիւններ յաճախ
իրարմէ կը զանազանեն անհատներ, որոնք նոյն ընդհանուր գա-
ղափարականը կը դաւանին, կամ նոյն հասարակաց նպատակին կը
ձգտին: Այդ տարակարծութիւնները բնական են ու բարեբար, որով-
հետեւ անոնց հրապարակային բախումներէն ու բաղդատութենէն
միայն կրնան զտուիլ ու բիւրեղանալ ընկերային, ազգային կամ
համամարդկային նշանակէտները եւ անոնց իրազորութիւնն տանող
ճշմարիտ ուղիները: Ուրեմն այլազան համոզումներու, նոյնիսկ
հակամարտ տեսակէտներու ջատագովումը անհրաժեշտ պայման է
հանրային առողջ կարծիքի մը եւ կորովի գիտակցութեան մը զարգա-
ցումին համար: Բայց կենսական է, որ այդ գաղափարները հաւա-
սարակչուած ըլլան առարկայական դատումի խարխախին վրայ եւ
ազատագրուին միակողմանի, զգացական եւ վարկածային ընդհան-
րացումներու եղծանող կապանքներէն:

Դպրոցական մանուկի մը կրթութեան, - անոր մտքի մշակումին
ու նկարագրի ազնուացումին համար էական է դաստիարակութեան
բազմակողմանի ծրագիր մը: Ո՛չ մէկ վարժարան միայն մէկ նիւթ
կը դասուանող է իր աշակերտներուն: Որովհետեւ միայն թուարա-
նութիւն, կամ պատմութիւն, կամ բնագիտութիւն սերտած ուսանողը
կրնայ բացառիկ կատարելագործումի հասնիլ այդ մասնաւոր մարզին
մէջ, բայց իբրեւ մարդկային էակ՝ պիտի մնայ խոնարհ, սահմանա-
փակ մակարդակի մը վրայ: Որպէս բանաւոր արարած ան կ'ամբող-
ջանայ, իր լիութեան կը բարձրանայ այն ատեն՝ երբ անոր էութիւնը
կազմող բոլոր ընդունակութիւններն ու ձգտումները յայտնաբերուե-
լու եւ մշակուելու պատեհութիւնը կը գտնեն կրթական համապար-
փակ դրութեան մը շնորհիւ: Եւ այդ կոչումին արժանի չէ այն ուսու-
ցիչը, որ նորահաս սերունդին, - վաղուան մարդկութեան - միտքն ու
հոգին լոյսին ու ճշմարտութեան բանալու առաքելութեան մէկ ուխ-
տաւորն է, բայց իր աւանդած դասին բացարձակ գերազանցութիւնը
կը յեղյեղէ միշտ, արհամարհելով բոլոր միւս նիւթերը: Եւ եթէ
ուսանողը ենթարկուի այդ այլամերժ ազդեցութեան՝ անոր տրա-
մաբանութիւնը պիտի հաշմուի նախապաշարումներու կապանքներով

ու մոլեռանդութեան մանրէն պիտի վարակէ, պիտի աղճատէ անոր զգացումները:

Այս սահմանումը, թերեւս աւելի շեշտուած կերպով՝ կը վերաբերի նաեւ չափահասներու հասարակութեան եւ զայն լուսարանելու, զայն առաջնորդելու կենսական դերը ստանձնած մտաւորականութեան: Եւ գաղութահայ հանրային գործիչներու ու հրապարակագիրներու խոշորագոյն հատուածը ցաւագինօրէն կը թերանայ իր այդ պարտաւորութեան մէջ: Ազնիւ, անձնուէր, հայրենասէր մտաւորականներու բազմութիւն մը ունինք, որ խորունկ շփոթութեան մը ցանցին մէջ բռնուած՝ կը մոլորի ողբի ու անյուսուցութեան նոյն մտայնութեան մէջ: Հայ ժողովուրդին հանդէպ անոնց խանդակաթ սէրը այնքան ուժգնօրէն կը կլանէ, կը ցնցէ իրենց զգացական լարերը, որ մասնակի հարուածի մը կսկիծը կը լռեցնէ ցուրտ, առարկայական տրամաբանութեան ձայնը: Մեր ազգային մարմինին սեւէ մէկ անդամին հասած վէրքը այնպիսի սաստիկ կոտտանքով կը ճմլէ անոնց սիրտը՝ որ անոնք ամբողջին մահուան սարսափով կ'հաւատեն, որովհետեւ մտքերին կը մոռնա՛յ կամ կ'անտեսէ՛ր րոպանդակ կազմին հիմնական առողջութիւնը: Անոնք երբեմն կը նմանին իր հիւանդ զաւակը կորսնցուցած մօր մը, որ անոր գերեզմանին առջեւ յուսահատօրէն կ'եղբերեղէ իր տան, իր օճախին ու գերդաստանին շիջումն ու ոչնչացումը՝ քաջառողջ, կենսախայտ գաւակներու ու թոռներու խումբով մը շրջապատուած:

Գաղութահայ մամուլի յարատեւ ընթերցող մը չի կրնար խուսափիլ յուսալքիչ, անդամալուծող տպաւորութենէ մը: Երէց մտաւորականներու մեծագոյն մասը տանջող յոռետեսութիւնն ու անյուսութեան մտայնութիւնը վարակած են նաեւ շարք մը նորահաս գրողներ: Մոայլ ու եղբրաշունչ յանկերգի մը պէս, անոնք մշտապէս կ'ողբան աղէտ մը, փլուզում մը հայ ժողովուրդի ֆիզիքական, ոգեկան կամ իմացական կառուցուածքին մէջ: Անոնք ծանր սխալը կը գործեն՝ մեր ազգային գոյավիճակը նոյնացնելու իրենց մտապատկերին հետ, որ աւեր ու քայքայում կ'ընդգրկէ, կամ զայն գնահատելու տեղական որեւէ ճախողանքի, կամ մասնակի որեւէ պարտութեան չափանիշով: Մեր այդ գրողներն ու գործիչները զոհերն են ընդհանրացած, անհեթեթ վարկածներու: Եւ իրենք ոչ միայն չեն փորձեր քանդել այդ անհիմն ու վնասարար վարկածներուն կաշկանդումները, այլ դարձեր են անոնց ջատագովները, իրենց միակողմանի դատումներուն ու յուսահատ դատաստաններուն վհատութիւնը սփռելով արտասահմանի հայութեան վրայ:

Վարկածային այդ տեսակէտները կը պարփակեն ամէն նիւթ, ազգային, ընկերային, մշակութային, որոնք որեւէ առնչութիւն

ունին հայ ժողովուրդի ներկայ գոյութեան ու ապագայի ձգտումներուն հետ: Անոնցմէ ամենէն յաճախ յեղեղուածները կ'արտայայտեն մտահոգութիւններ, որոնց մատնանշման եղանակը սակայն աւելի վնասակար ու մտահոգիչ է, քան նոյնինքն արտանշուած չարիքը: Օրինակ՝ կարելի չէ թերթատել գաղութահայ մամուլը՝ առանց ամէն պահ դիմագրաւելու ահագանգային տխուր յանկերգը, որ հայ նոր սերունդին ուժացումը կը գուժէ եւ հայ ժողովուրդին վաղահաս տապալումն ու փճացումը կ'ողբերգէ: Այս հաւաստումը ճշմարտանման կը թուի պարզ ընթերցողին, որովհետեւ ան իր շուրջը կը տեսնէ ուժացող բազմաթիւ երիտասարդներ, եւ բնականօրէն կ'ենթարկուի անոր եզրակացութեան դաժան յուսալքումին: Եւ եթէ ընթերցողը համոզուի այդ «դամբանական»ներէն, որ հայ ժողովուրդը ղէպի վերջնական կորուստ ու ոչնչացում կը գահավիժի՝ շա՛տ աւելի հաւանական է, որ ան լքէ ամէն յոյս, ճիգ ու պայքար նման աղէտ մը խափանելու եւ համակերպելով «անխուսափելի»ին՝ ինք մեկուսանայ, այսինքն ուրանայ ու կորսուի հայ ժողովուրդին համար: Ուրեմն առաջադրուած դարձանք՝ որ իբր թէ սպառնացող ախտը պիտի բուժէր՝ իր սխալ կիրարկումովը պիտի արտաւորէ առողջ անձը:

Բայց տակաւին՝ յոռետես մտաւորականին փո՛քը մեղանշումն է դրական հանգրուանի մը հասնելու այս ժխտական կերպին որդեգրումը: Անոր ծանրագոյն յանցանքը՝ իր վրիպումն է մեկնակէտի ընտրութեան մէջ եւ զլորիլը ղէպի խեղաթիւրուած եզրակացութիւն մը: Անհեթեթ համեմատութեամբ կծկելով իր մտաւորական հորիզոնը՝ ան կը գործէ աններելի սխալը, իր ներկայացուցած գաղութը չփոթելու, նոյնացնելու հայ ազգութեան հետ: Եւ երբ, համայնքի մը մէջ յուսադրիչ երեւոյթներ արձանագրելէ ու յուսալքող ղէպեր յուշելէ վերջ, կ'որոշէ դատավճիռ մը տալ անոր մասին՝ կ'ոտնահարէ ամէն չափ ու սահմանադրում: Ան չի գոհանար ըսելով, թէ իր պատկերացուցած գաղութը կը ճուշուի կամ կը կորսուի: Ան չի՛ բաւականանար նոյնիսկ պատգամելով՝ թէ ամբողջ սփիւռքի հայութիւնը կ'ընկղմի ու կը քայքայուի արագօրէն. այլ անսանձ թռիչ մը տալով իր երեւակայութեան՝ ան կ'ողբայ այլասերումը հայ ժողովուրդին, ան կը գուժէ կործանումը հայ ազգութեան:

Տրամաբանելու անմիտ, հիւանդագին կերպ մը միայն կրնայ յանգիլ նման արտառոց եզրակացութեան մը: Որովհետեւ ան չի տեսներ ու չի գնահատեր հայկական գոյութիւնը պայմանաւորող ամենէն կենսական ու բախտորոշ իրականութիւնը, որ հայ ժողովուրդը սփիւռքէ ու տարագիր բեկորներէ չի բաղկանար. որ հայ ազգութեան մայր գանգուածը կ'ուսուանայ, կը բարգաւաճի ու կը յառաջդիմէ իր հայրենիքին, ազատագրուած Հայաստանի մէջ: Հայ ժողովուրդի ֆիզիքական,

ոգեկան ու մշակութային գոյութեան մայր ծառն է ան, խորանիստ ու կենսալի արմատներով, հասարակուն եւ յարածուն ու պտղալի ճիւղերով: Մեր գաղութները այդ բունն են խզուած, պանդխտացած ճիւղեր են, որոնց կեանքը անհրաժեշտ է երկարաձգել՝ որովհետեւ ատիկա նշանակելի նպաստ մը պիտի բնծայէ մայր ծառի զօրացումին: Բայց այդ մայր ծառին գոյատեւումը պայմանաւորուած չէ անկէ կտրուած ճիւղերու վիճակով, որոնք կրնան հիւանդանալ կամ չորնալ, առանց սպաննելու զիրենք ծնողին արմատներն ու բունը: որոնք էպպէս առողջ ու արգաւանդ ըլլալուն՝ նոր ու հզօր ճիւղեր ընծիւղելու կենսունակութիւնն ունին: Ուրեմն՝ հիմնական սխալ, վնասակար ու յանցապարտ արարք է, գաղութի մը մէկ ցաւը, բացասական երեւոյթը քննելու եւ դատապարտելու ատիժով՝ ամբողջ հայ ժողովուրդին կեանքին ու մահուան դատաւճիռն ալ արձակել եւ շա՛տ կանխահասօրէն՝ յանկերգային դամբանականը կարգալ հայ ազգութեան: Սառնարիւն տրամաբանութիւնը եւ արժէքներու համեմատական կշիռի ըմբռնումը պիտի արգիւէր, որ զրոյզը զօ՛ւ ի՛յնար այգալիսի չափազանցութեանց ու սայթաքումներու, եւ յուսալքումի ու պարտուողականութեան միօրինակ ողբերով ողողէ՛ր գաղութահայ հրապարակագրութիւնը:

Նոյն զգացականութիւնը կը տիրապետէ անոնց գրիչին, երբ լեզուական խնդրին կը մօտենան: Հասկնալի է, որ քիչ թէ շատ հայերէն գիտեն անոնք: Բայց նեղմիտ նախանձալուզութենէ մը մտրակուած՝ անոնք հայերէն լեզուին «աղճատումը», «վատասերումը» կամ «սպանդը» կ'եղերերգեն՝ ամէն անգամ, որ արտասահմանի կամ Հայաստանի լրագրութեան մէջ իրենց անհաճոյ բառ մը կամ ոճ մը կը նկատեն: Անոնք չեն բաւականանար, առարկայական խորհրդածութեամբ, վերլուծելով լեզուական հարցը, որ ակադեմական է աւելի եւ ուղղելով, թելադրելով կամ յորդորելով: Այլ ահազանգային նոյն հոգեբանութենէն մղուած, անոնք կ'աւաղեն, կ'ողբան ու մահուան խեցեղծիո կ'արձակեն հայերէն լեզուին դէմ եւ անոր գերեզմանին մէջ կը փութան թաղել նաեւ հայ ժողովուրդը, եթէ... եթէ՛, օրինակ, ձայնասփիւռին փոխարէն՝ ըստիօ բառը գործածուի, կամ երբեքի երկրորդ ե-ը է-ի փոխուի, կամ հայրենասիրութիւնը քյուլն-ով վերջանայ: Կը մոռնան անոնք, թէ մարդկային լեզուն անփոփոխ, քարացած գործիք մը չէ, այլ յարափոփոխ, բարեշրջուող ու կենդանի մարմին մըն է եւ ենթակայ կեանքի պայմաններու յեղաշրջման: Կը մոռնան, թէ աշխարհի վրայ «հարազատ» կամ կատարեալ լեզու գոյութիւն չունի եւ եթէ, ինչպէս այսօր կարելի չէ հասկնալ Շէյքսպիրի զմայլելի անգլերէնը առանց բառարանի մը օժանդակութեան՝ այնպէս ալ, հանճարեղ բանաստեղծը ի՛նք, այսօր պիտի չկրնար հասկնալ մանաւանդ Ամերիկայի մէջ գործածուած անգլերէնը, առանց թարգմանի...: Ծիշդ է անշուշտ, որ

լեզուներու վրայ կիրարկուած փոփոխութիւնները միշտ օգտակար կամ գեղեցիկ չեն ըլլար. ո՛չ ակադեմիաներ, ո՛չ կառավարութիւններ, ոչ իսկ գրագէտներ կրնան լեզու ստեղծել կամ պարտադրել: Անոնք կրնան բառեր յղանալ ու ոճեր յղկել, բայց ժողովուրդն է, որ կ'ընտրէ, կը բիւրեղացնէ ու կը տեւականացնէ լեզուի մը ազնուագոյն տարրերը, իր անտեսումով յօտելով խորթ ու տգեղ բառերն ու ասացուածքները: Ասիկա չի նշանակեր անշուշտ, որ գրողներ պէտք է լքեն մեր գրական կամ իսոսակցական լեզուն կոկեւու, զարգացնելու իրենց ջանքերը: Բայց անհրաժեշտ է, որ այդ ճիւղերը ձերբազատուին ողբագին կանչեր եւ յուսահատ դատաւճիռներ յանկերգելու սովորութենէն:

Յոռեստեսութեան այդ ախտն է, որ իրմով վարակուածներուն մէջ անհամեմատօրէն կը խոչորցնէ ամէն սխալ ու յանցանք, որ հայ իրականութենէն կը բխի: Օրինակ, ճիշդ է, որ հայերս «անմիաբան» ենք եւ մտաւորականին կոչումներէն մէկն է վերլուծել անոր պատճառները եւ «համերաշխութիւն» առաջացնելու միջոցներ յղանալ ու ջատագովել: Բայց դարձեալ, փոխանակ գոհանալու այդ գրական աշխատանքով՝ ան անձնատուր կ'ըլլայ ծայրայեղութեան նոյն յորձանքին եւ «անմիաբանութիւնը» կը հռչակէ հայկական մասնայատուկ ախտ մը, մեր մենաշընորհը: Եւ իր իսկ դատաստանէն ահաբեկած՝ անոր ժանիքներով կը բզբտէ հայ ժողովուրդը եւ «անմիաբանութիւնը» կը կանգնէ իրբեւ անոր տապանաքարը: Հոս ալ, մտաւորականին իմացական հորիզոնը ցաւագինօրէն կծկուած է նախապաշարումի կամ տգիտութեան մշուշէն: Եւ ան չի փորձեր, կամ չի յաջողիր տեսնել բացայայտ ճշմարտութիւնը, թէ «անմիաբանութիւնը» նոյնքան ուժգնօրէն հարուածեր է ամէ՛ն ուրիշ ժողովուրդ ու պատժեր է բովանդակ մարդկութիւնը: Նայելով այսօրուան հզօրագոյն հինգ պետութեանց, - Ամերիկայի, Ռուսիոյ, Անգլիոյ, Ֆրանսայի ու Չինաստանի, հայ ողբերգու գրողը պիտի նկատէր, թէ անոնք այնպիսի խոր, անկամրջելի պառակտումներու մատնուեր են երբեմն, որ հարկադրաբար դիմեր են քաղաքացիական պատերազմներու, - 4-էն մինչեւ 20 տարի, եղբայրասպան կոիւններով զիրար կոտորելով եւ իրենց հասարակաց հայրենիքը աւերելով: Եւ քաղաքացիական պատերազմը՝ ամենէն եղերական ու սոսկալի արտայայտութիւնն է «անմիաբանութեան» ոգիին: Ուրեմն անմիտ ու անիրաւ փորձ է համամարդկային մեղքի մը ամբողջ ծանրութիւնը բառնալ հայ ժողովուրդի համբերատար քամակին եւ իր անցեալի դժբախտութիւնները վերագրել միայն անոր յանցանքներուն, անտեսելով արտաքին պատճառները:

Եւ տակաւին՝ այդ տխուր մտայնութիւնը կ'իշխէ անոնց դատողութեան, երբ կ'ողբան մեր «կուսակցական պայքարները»: Ստորադասութեան մոլորած հոգեվիճակ մը, որ ամէ՛ն ուրիշ ժողովուրդի ու ցեղի մէջ կ'ընդունի գաղափարական շերտաւորումներու եւ բախումներու

իրականութիւնը իրրեւ անխուսափելի, նոյնիսկ օգտակար: Կը կարգայ օտար կուսակցութիւններու, անոնց կոիւններուն մասին. բնական կը գտնէ, որ անոնք ամենարուսն լեզուով վարկաբեկեն զիրար. որ ծերակուտական ՄգԳարթի մը զրպարտէ ու անուանարկէ լաւագոյն ամերիկացիները եւ երեսփոխաններ աթոռ վերցնեն իրարու վրայ կամ բըռունցքով զգետնեն զիրար: Կը հասկնայ, որ մահափորձ կատարուի նախագահ Ռուզվելթի վրայ եւ սպաննուին Մահաթմա Կանտի, Ապտուլ-լահ թագաւոր կամ Բաքիստանի վարչապետը: Բայց ան կը մերժէ ըմբռնել իրաւունքը հայերու՝ որ ազատ համոզումներ դաւանին, զանոնք արտայայտեն մամուլով ու բեմով եւ պատեհութիւնը շնորհեն անկուսակցական մեծ զանգուածին, որ անոնց բախումէն ու բաղդատութենէն՝ ինք կարենայ ճանչնալ ու ընտրել ճշմարիտ ու դրական ուղին: Մինչդեռ, «կուսակցական պայքար»ը կոյր նախապաշարումով դատապարտող մեր դատախազները, եթէ իրենց ենթադրական «համերաշխասիրութեան» չափ ալ ճշմարտասիրութիւն ու կորով ունենային՝ պիտի կրնային զտնել հայ ժողովուրդին ու անոր հայրենիքին գերագոյն շահերուն պաշտպան քաղաքական վարքագիծն ու զայն հետապնդող կազմակերպութիւնը եւ «միաբանութեան» օրինակը իրենք պիտի տային, միաբանելով այդ գաղափարին ու ճիգին:

Անհրաժեշտ չէ աւելի ընդլայնել օրինակները: Անհիմն այս վարկածներու բաւիղներուն մէջ շուարած բազմաթիւ գրողներ ունինք, որոնք կրնան ազատիլ իրենց մտայլ, վհատեցուցիչ ընդհանրացումներու կապանքներէն եւ գաղութահայ ընթերցողներն ալ կ'ազատին անոնց յուսալքիչ ողբերէն՝ եթէ յիշեն, թէ մենք, հայերս ալ՝ կը պատկանինք մարդկային ընկերութեան, անիկա սերած ըլլայ դրախտի զոյգէն թէ մացառուտներու կապիկներէն: Եւ մեր ունեցած առաքինութիւններուն նման՝ մեր թերութիւններն ալ համամարդկային են եւ ոչ թէ հայկական: Անտարակոյս, մեր մտաւորականութեան բարձրագոյն կոչումն է զարգացնել ու ազնուացնել այդ առաքինութիւնները մեր ազգային նկարագրին մէջ եւ զայն մաքրել, զայն լուսլ իր թերութիւններէն: Եւ հայոց մշակոյթն ու աւանդութիւնները պերճախօս վկաններն են այդ դարւոր, մաքրագործող ճիգին: Եւ սակայն, ազգային նախանձախնդրութիւն չէ, ոչ ալ առողջ բանաւորութիւն, սանձարձակ կերպով պարսաւել ու դատապարտել հայ ժողովուրդը իր մասնիկներուն մէջ եւ դամբանական եղբրերգել անոր կենդանի, քաջառողջ ու արգասաւոր մարմինին վրայ՝ որովհետեւ անիկա անթերի չէ, ահարկու վրիպումներով գալարուող ազգերու շարքին. կամ կատարեալ չէ, ցաւագինօրէն անկատար մարդկութեան մը մէջ:

1952, Ֆրեզնօ

ՌԱՄԿԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԴՐԱՄԱՏԻՐՈՒԹԻՒՆ

Աշխարհի բոլոր ցամաքամասերուն վրայ, ներկայ տասնամեակին, ազգեր ու ցեղեր բուռն պայքարներ կը մղեն իրենց մէջ կամ իրարու դէմ, երբեմն խաղաղ մրցակցութեամբ, յաճախ արիւնալի յեղափոխութեամբ կամ աւերիչ պատերազմով: Այս բախումները չեն կատարուիր օտար երկիրներ գրաւելու եւ անոնց հարստութիւնը կողոպտելու, կամ նոր կայսրութիւններ հիմնելու նպատակով, ինչպէս կ'ըլլար անցեալ դարերուն: Ներկայ կոիւնները վարող հակամարտ հոսանքներ, իրենց զինուորական ուժերով՝ իրարու դէմ կը ճակատին քաղաքական գաղափարներու, ընկերային դաւանանքներու եւ տնտեսական ծրագիրներու տարբեր, երբեմն հակոտնեայ դրութեանց յաղթանակին համար:

Սորհրդարանի եւ մամուլի մէջ կամ ռազմադաշտի վրայ՝ մարդիկ կը վիճին ու կը սպաննեն զիրար, իրենց որդեգրած կարգախօսներուն եւ դրօշակներուն տակ, պաշտպանելով կենցաղային այլազան կերպեր, որոնք կը կոչուին ռամկապետական, դրամատիրական, համայնավար, ընկերվարական, ֆաշական, թագաւորական կամ պարզապէս բռնատիրական, զօրապետներու կրօնկին ու քմայքին տակ: Բոլոր այդ գրոհները, Հարաւ. Ամերիկայէն մինչեւ Եւրոպա, եւ Աֆրիկէն մինչեւ Հեռաւոր Ասիա՝ ուղղուած են դրամատիրական ռամկավարութեան դէմ, այդ երկու բառերը եւ անոնց հոչակած սկզբունքները նոյնացնելով իրարու մէջ, եւ մէկուն դրական ու լուսաւոր նկարագիրը շփոթելով միւսին ժխտական գործելակերպին հետ: Իրապէս, անոնք ո՛չ միայն նոյն դրութիւնը չեն բովանդակեր, այլ ներհակ մեկնակէտներ ունին եւ հակոտնեայ նպատակներ կը հետապնդեն:

Ռամկավարութիւնը, իրրեւ պետական կառուցուածք՝ ծնաւ ու զարգացաւ Միացեալ Նահանգներուն ու Ֆրանսայի մէջ, անոնց ազատարար յեղափոխութեանց իրրեւ արդիւնք, 1775-1790ի շրջանին, երբ տակաւին գոյութիւն չունէր դրամատիրութիւնը: Ամերիկեան Յեղափոխութիւնը, յաղթանակով պսակուած եօթը տարիներու դաժան պատերազմով մը Բրիտանական հզօր կայսրութեան դէմ՝ յայտարարեց, թէ բոլոր մարդիկ հաւասար էին իրարու, անկախ իրենց

ընկերային դիրքէն ու տնտեսական վիճակէն, եւ անոնք օժտուած էին ազատ խօսելու, գրելու, պաշտելու եւ նախաձեռնելու անկապտելի իրաւունքներով: Անոնք պիտի ընտրէին ծերակուտական եւ երեսփոխան, որոնք պիտի կազմէին կառավարութիւնը եւ պիտի վարէին երկիրը, քաղաքական ու ելեւմտական մարզերուն մէջ, բայց իրաւասութիւն պիտի չունենային կրճատելու քաղաքացիներու հիմնական ազատութիւնները:

Ֆրանսական Յեղափոխութիւնը աւելի արմատական եւ արիւնալի եղաւ: Ան հիմերէն քանդեց աւատապետական հազարամեայ տիրակալութիւնը, անոր փլատակին վրայ կերտելով ժողովրդավար հանրապետութիւն մը, — ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն հոյակապ կարգախօսներով: Եւ այդ յանդուգն, հեռահաս նպատակը իրագործելու համար՝ ան կառափնատի վրայ գլխատեց Լուի 16-րդ արքան ու Մառի Անթուանէթ թագուհին, եւ հազարաւոր ազնուականներ: Նոյն ատեն երկար տարիներու աւերիչ պատերազմներ ստիպուեցաւ մղել չրջակայ օտար եւ հզօր երկիրներու դէմ, որոնց արքայական տէրերը, իրենց բանակներով կ'ուզէին Բարիզի մէջ վերականգնել Ֆրանսայի թագաւորական լուծը եւ աւատապետական դրութիւնը:

Իբրեւ հետեւանք այդ ներքին եւ արտաքին կռիւներուն՝ Ֆրանսայի մէջ Ռամկավարութիւնը տարածուեցաւ նաեւ ընկերային ու տնտեսական մարզերուն վրայ: Ազնուապետական դարաւոր կառուցուածքը խորտակուեցաւ, որ թէեւ յետոյ վերականգնեցաւ քանի մը տասնամեակ, բայց վերջնապէս ջնջուեցաւ 1870-ին, Նաբոլէոն Գ-ի անկումին հետ: Յեղափոխութիւնը գրաւեց կաթոլիկ եկեղեցիին եւ աւատապետներուն լայնարձակ կալուածները եւ փոխանցեց ժողովուրդին: Եւ այդպէս՝ Ֆրանսան դարձաւ փոքր հողագործներու եւ մանր խանութպաններու դասական երկիրը:

Ռամկավարութեան գաղափարին ու կիրարկումին յաղթանակով՝ միջին ու խոնարհ խաւերուն ապահովուեցան քաղաքային լայն ազատութիւններ, ընկերային հաւասարութիւն եւ նիւթական բարելաման պատեհութիւն: Մարդկային կեանքին արժէքը բարձրացաւ գերազանց աստիճանի մը: Այլեւս տիտղոսաւոր իշխողներ չէին կրնար զանոնք ճնշել, հալածել կամ հարստահարել, իբրեւ անոնց քրտինքին ու ճակատագիրին բացարձակ տէրերը:

Օրէնքը անկողմնակալ էր բոլորին հանդէպ, եւ կը պատժէր որեւէ յանցանքի կամ ոճիրի մեղապարտ, ան ըլլար հարուստ թէ աղքատ, ղեկավար թէ հետեւորդ: Խորապէս յեղափոխական դաւանանք մը եւ մանաւանդ՝ մարմնացած, գործօն դրութիւն մը ստեղծեց Ռամկավարութիւնը, որուն հռչակած եւ գործադրած սկզբունքները, — ազա-

տութեան, արդարութեան եւ հաւասարութեան իտէալները, իբրեւ մարդկային անկապտելի իրաւունքներ, դարերով երազուած լաւագոյն կեանքի մը դարպասները բացին թշուառ, ստրկացուած ժողովուրդներու համար:

Եւ Ռամկավարութիւնը լուսաւոր ուղեցոյց մը դարձաւ մարդկութեան առջեւ, դէպի ազատ, ապահով եւ ուրախ կեանքի մը տեսիլքը:

Բայց ռամկապետական դրութեան ընծայած ազատ նախաձեռնութեան առիթը չարաշահուեցաւ հետզհետէ: Մարդիկ, որոնք ամէն արժէքէ եւ սկզբունքէ աւելի՝ դրամ ու փողք կը հետապնդէին, յաջողեցան, յայտնի կամ դաւադիր միջոցներով հսկայ կալուածներ գրաւել ու վիթխարի հարստութիւն կուտակել: Եւ այդ ոսկիով ու ազդեցութեամբ, սկսան նախ քաղաքային, յետոյ նահանգային եւ վերջապէս դաշնակցային կառավարութեանց մէջ գերակշիռ հեղինակութիւն կորզել:

Երկիրը օրէնքներ ու կանոններ որդեգրեք էր, որոնք կ'արգիլէին անհատներու կամ ընկերութեանց կողմէ գործուած չարաշահութեան, խարէութեան, կաշառքի եւ ընդհարուման արարքներ: Եւ պետութեան տարրեր բաժանմունքները կոչում ունէին պաշտպանելու ժողովրդային խաւերուն քաղաքական, ընկերային, տնտեսական իրաւունքներն ու շահերը, որեւէ կրճատման կամ սոսձգութեան ձեռնարկի դէմ: Բայց ազատ նախաձեռնութեան օգտակար դրութիւնը վնասարար գործելակերպի վերածող կեղրոնացած ուժեր հետզհետէ ջնջել տուին կամ կապանքի ենթարկեցին այդ ժողովրդական օրէնքները եւ անոնց տեղ՝ իրենց շահախնդիր ու սանձարձակ գործունէութեանց արտօնազիրներ հաստատեցին:

Հետեւանք այն եղաւ, որ անցեալ դարու ընթացքին, արդէն գոյութեան եկան դրամազուտի, երկաթուղիի, հանքերու, պողպատի, ածուխի ու քարիւղի հզօր ընկերութիւններ, որոնք յաճախ բուռն պայքարի կը մտնէին նահանգային եւ դաշնակցային իշխանութեանց դէմ, անոնցմէ նոր զիջումներ, նոր մենաշնորհներ գրաւելու համար: Եւ կը կիրարկէին ճնշումի, կաշառքի եւ սպառնալիքի ամէն միջոց: Իսկ այդ բախումներուն իբրեւ արդիւնք՝ տուժողը, կորսնցնողը կ'ըլլար միշտ ժողովուրդը, — անոր գործաւոր, հողագործ ու խանութպան դասերը, որոնք 90 առ հարիւրի մեծամասնութիւն մը կը կազմէին:

Միացեալ Նահանգներու մէջ, ռամկապետութեան ու դրամատիրութեան միջեւ տեւական պայքար մը սկսաւ մղուիլ հակամարտ, անհաշտ դիրքերէ: Այն նախագահները, որոնք ժողովուրդին քաղաքային ազատութեան ու տնտեսական բարելաման ռամկավարական դաւանանքին հաւատարիմ ու հաւատաւոր քննիչներն էին, փորձեցին պատուար կանգնել գերհզօր ընկերութեանց արտակարգ ծաւալումէն

պաշտպանելու համար գիւղի ու քաղաքի խոնարհ խաւերը: Ճեֆեր- սընէն ու Ճէքսընէն մինչեւ Ուիլսըն եւ Ֆրէնքլին Ռուզվելթ՝ այդ ժողովրդավար գաղափարներուն կորովի գործադրողները դարձան, պետական ղեկավարութեան տակ:

Սակայն հակառակ վաւերացուած հակա-մենաշնորհ օրէնքներուն, որոնք կը ձգտէին սահմանափակել հսկայ ընկերակցութեանց առաւել տարածուիլը, անոնք աւելի զօրացան ու հարստացան, այդ օրէնքները գործադրողներու կրակորական կամ կաշառուած գործելակերպին հե- տեւանքով: Ազատ նախաձեռնութեամբ առեւտուրին մեծագոյն բա- րիքը կը նկատուէր զայն վարողներուն միջեւ տեւական, անկաշկանդ մրցակցութիւն, - որ արտադրեն լաւագոյն ապրանքներ եւ զանոնք վաճառեն նուազագոյն գիներով:

Իսկ մեծ ընկերութիւններ խեղդեցին ամէն մրցակցութիւն, գնե- լով կամ սնանկացնելով նոր հիմնուած որեւէ գործարան կամ ճար- տարարուեստ, եւ իրենց միջեւ գաղտնի համաձայնութեամբ հաստա- տելով ապրանքներու կամ սպասարկութեանց գիները, նոյն մակար- դակին վրայ: Ամերիկայի մէջ դրամատիրութիւնը, ուրեմն, չարա- շահօրէն օգտագործելով ռամկավարութեան ապահոված ազատօրէն յառաջդիմելու սկզբունքները՝ յաջողեցաւ հետզհետէ գորութեան եւ ազգեցութեան այնպիսի կատարներու հասնիլ, որ սկսաւ կաշկանդել, եւ երբեմն խեղդել ժողովուրդին քաղաքային, տնտեսական եւ ընկե- րային իրաւունքներն ու ազատութիւնները: Որովհետեւ, ծերակոյտին, ներկայացուցչական ժողովին եւ Սպիտակ Տան մէջ ունեցաւ բաւական թիւով ջատագովներ ու պաշտպաններ իր շահերուն ու ձեռնարկներուն:

Գժբախտութիւնը այն եղաւ ռամկավարութեան համար, որ Ամե- րիկայի դրամատիրութիւնը, վերջին պատերազմէն ետք, արագօրէն թափանցեց ամէն ցամաքամասի վրայ եւ իր կլանիչ, շահախնդիր ծաւալումով կասկածի ու թշնամանքի մտայնութիւն առաջացուց մա- նաւանդ նորագատ երկիրներու ժողովուրդներուն ու վարիչներուն մէջ: Եւ անոնք, փոխանակ ճանչնալու, գնահատելու ճշմարիտ ռամ- կավարութեան ազատարար դաւանանքը եւ ժողովրդանուէր սկզբունք- ները՝ զանոնք կը շփոթեն, կը նոյնացնեն դրամատիրութեան ապազ- գային ու նիւթապաշտ գործելակերպին հետ, որ հիմա միջազգային բռնատիրութիւն մը դարձած է: Եւ ռամկավարութիւնն է, որ գաղա- փարներու բախումին մէջ, կը ստանայ դրամատիրութեան դէմ նետուած վէրքերը:

ՈՃԻՐԸ ԴԱՏ ԶԻ ԼՈՒԾԵՐ

Երեւոյթը տխուր է եւ ամօթալի: Մարդիկ կան, որ վաճառքի ապրանքի վերածեր են Ապրիլեան Եղեռնի ահաւոր ողբերգութիւնը եւ Հայկական Դատին վիրաւոր մարմինը, եւ սրտաուռ ու ռազմա- շունչ կարգախօսներ կը յանկերգեն կամ մարտակոչեր կ'աղաղակեն: Կարծես թէ աղմուկը, ժխորը, պոռչուտքը պիտի «դողդողացնեն» Թուրքիան, ու պիտի ցնցեն մարդկութիւնը, եւ անոնք ահաբեկած՝ հատուցում պիտի շուայլեն հայոց իրաւունքներուն, անոնց ցասումին պատիժէն փրկուելու համար:

Հիմա, իբրեւ թէ մեծ պետութիւններէն տեսնուելու եւ լսուելու համար՝ անոնք կը ջատագովեն նոր միջոց մը, - «յեղափոխակաճացը- նել» հայ ժողովուրդին հողային պահանջներուն հետապնդումը: Այսինքն՝ դիմել ահաբեկչական սպանութեան եւ ռումբերու աւերու- մին, Թուրքիոյ դեսպանական շէնքերուն ու պաշտօնեաներուն դէմ: Յայտնօրէն, այս մանկամիտ մտայնութիւնը ոչինչ սորված է հայոց ազգային փրկուման պատճառներէն եւ օտար իշխանութեանց շարժա- ութիքներէն:

Այդ մարտաշունչ դաւանանքին մունետիկն է Պէյրութի «Սփիւոֆ» շարաթաթերթի նո'ր «խմբագրապետ»ը, որ իր թերթին Յունուար 19 թիւին մէջ, աւելի քան էջի մը ծաւալով՝ զուգակշիռ մը կ'ընէ Պաղես- տինի Ազատագրական Կազմակերպութեան հրազէնի ու ռումբի ար- շաւններուն, եւ հայոց խաղաղ պայքարին միջեւ: Եւ կը յանգի ապշե- ցուցիչ եզրակացութեան մը, ուր անհեթեթ պատրանքներու յորձան- քին տակ կը խեղդուին իրողութիւն, փաստ ու ճշմարտութիւն: Քիչ մը ստրկական խոնարհութեամբ ան կը ներբողէ Պաղեստինի Արար սասպատակներուն արարքները, որոնք իբրեւ թէ հոյակապ արդիւնք- ներ շահեցան, եւ յաջողեցան իրենց պետը, Եասիր Արաֆատը խօ- սեցնել տալ Միացեալ Ազգերու ժողովին մէջ եւ իբրեւ թէ ատիկա հիւլէ մը արժէք ունեցաւ Պաղեստինի ազատագրութեան ճամբուն վրայ:

Զանոնք իբրեւ հաւատքի մարտիկներ ու կռիւի հերոսներ փա- ռարանելէ ետք, հայ ռազմաշունչ «խմբագրապետ»ը իր զայրոյթը կը պայթեցնէ հայոց վրայ, զանոնք պարսաւելով, դատապարտելով ու անարգելով, որ Պաղեստինի Արարներուն օրինակին չենք հետեւիր:

Անշուշտ, ինքնիրեն դատախազի իրաւունք տուող մարդու մը համար զիւրին է որեւէ դատավճիռ արձակել, եթէ ան յանձնուի ամէն եղելութիւն խեղաթիւրելու, ամէն հակառակ վկայութիւն ուրանալու փորձութեան: Եւ ան կ'ողբերգէ, -

«Բանակներ չունինք: Ներկայիս երկիր չենք ու երկիր մը չունինք, եւ ոչ ալ պետութիւն կամ պետականութիւն: Բայց ոյժ ունինք: ... Հայ ժողովուրդի միտքն է, հանճարը: Մեր գիտութիւնը, գիտնականներն ու մասնագետները, որոնք կը գործեն աշխարհի բոլոր երկիրներուն մէջ»: Այսպէս, ապերասան ուրացումով մը կը փոշիացուին Հայաստան ու երկիր, հայկական պետութիւն ու ժողովուրդ, - զանոնք «չունինք», անոնք չկան, վերջացա՛ւ: Բայց վեհանձն զիջումով մը կը հաստատուի թէ կան հայ գիտնականներ ու հայկական հանճար:


Սակայն զղջումը կը հասնի անմիջապէս: Եւ ան կը պատգամէ, - «... Կը պակսի մեզի գործելու գիտակցութիւնը: Տակաւին չենք անդրադառնար, թէ արդիւնքներու մատչելու համար պէտք է աշխատիլ, ճգնիլ: ... Եւ այդ իմաստով աշխարհի ամենայնտիւն ժողովուրդն ենք այսօր մենք»: Այսքան անպատկառ ու տխմար դատավճիռ չէ նետուեր հայութեան կամ սփիւռքին վրայ՝ ոչ միայն որեւէ օտար ազգի կամ իշխանութեան կողմէ, այլ նոյնիսկ մեր մահացու թշնամի թուրքերէն:

Իսկ ինչո՞ւ «աշխարհի ամենայնտիւն» ենք: Որովհետեւ չենք որդեգրեր Պաղեստինի Արար ահաբեկիչներու զէնքի ու ռումբի գործելակերպը: Ինչի՞ կը սպասենք: Ուրիշ կերպ կա՞յ: ... Ճակատամարտ, պլո՛ւ, ուրիշ ոչինչ»:

Կարելի էր փոստսանքով կամ արգահատանքի քմծիծաղով անցնիլ այս գրգռիչ, ուրեմն վտանգաւոր տողերուն վրայէն, որոնց տակէն ընկեր Փանջուների ծաղրանկարը կ'երեւի: Կարելի էր նոյնիսկ զանոնք նկատել հաշմուած դատողութեան մը թոթովանքները եւ մոռնալ պարզապէս: Բայց Ապրիլեան Եղեռնի 60-ամեակի այս շրջանին, հայրենասէր ու յանդուգն երիտասարդներ կրնան մոլորիլ անոնց ռազմաշունչ պոռչուածքէն: Եւ խորհին թէ հերոսական արարք մը պիտի ըլլայ, եթէ քանի մը ռումբեր նետեն թրքական պաշտօնատուններու պատերուն վրայ:

Կ'ուզենք անոնց յիշեցնել, թէ Անգարա ցնծութեան քրքիւղով պիտի ընդունի նման դէպքեր, որոնք համակրանք պիտի ստեղծեն զոհերուն, ուրեմն թուրքիոյ հանդէպ, եւ հիւրընկալ կառավարութիւններ պիտի հարկադրուին պաշտպանել Անգարան, մեզի՛ դէմ, մե՛ր արարքներով: Նոյն ատեն, այն հարիւրաւոր պետական ու հանրային առաջնորդները, որ տարիներու յամառ աշխատանքով ու յարատեւ զոհողութեամբ շահեր ենք Հայկական Դատին համար՝ պիտի

վանենք մեզմէ: Անոնց համակրանքն ու աջակցութիւնը պիտի կորսընցնենք, - որովհետեւ ո՛չ մէկ նախագահ ու վարչապետ, ո՛չ մէկ ծերակուտական, զանկրէսմէն ու դեսպան պիտի ուզէ յարած մնալ շարժումի մը, որուն նպատակները զէնքի ու ռումբի ահաբեկչութեամբ կը հետապնդուին:



Ուրեմն այդպէս: Ողբասաց «խմբագրապետ»ը գետնամած հիացումով կը ներբողէ Պաղեստինի Ազատագրական Կազմակերպութեան ահաբեկչական արարքները, որոնց շնորհիւ անոնք որպէս թէ հսկայ արդիւնքներ նուաճեր են: Այսինքն՝ 25 տարուան, կամ տասնամեակի մը ընթացքին յաջողեր են իրենց պետը, Եսսիր Արաֆաթը խօսեցնել տալ Միացեալ Ազգերու ժողովին բեմէն: Եւ կարծես յանկարծ, կախարդական զաւազանի մը հրաշագործ հպումով՝ Պաղեստինը ազատագրուեցաւ Իսրայէլի գրաւումէն, սեփական պետութիւն հիմնուեցաւ, եւ միլիոնաւոր գաղթականներ Լիբանանի, Յորդանանի, Եգիպտոսի մէջ փրկուեցան իրենց քաղցին, ցնցոտիներուն եւ եղկելի հիւղերուն թշուառութենէն եւ վերադարձան Հայրենիք: ...:

Բնական է խոր համակրանք ու կարեկցութիւն զգալ Պաղեստինէն տարազիր Արաբներուն հանդէպ եւ ցանկալ որ անոնք տիրանան իրենց մարդկային իրաւունքներուն ու ազգային պահանջներուն: Սակայն ատոր համար պայման չէ անոնց գործելակերպը սրբագործել, զէնքերու եւ ռումբերու սարսափէն դիւցազներգութիւն մը հիւսել փորձելով, - պարզապէս հայութիւնը անարգելու, ոտնահարելու իբրեւ անոպայ չքմեղամք: Որովհետեւ ներբողելէ ետք Պաղեստինցի Արաբներուն կատարած մարտական «հրաշքը», անոր կը հակադրուի հայոց ոչնչութիւնը, որպէս այդ մարզին մէջ «ամենայնտիւն ժողովուրդ»: Եւ կը տեղան եղերաշունչ հարցումները: - Իսկ՝

«Վաթում տարի ետք ո՞ւր ենք մենք: Եւ ի՞նչ ըրած ենք: Ինչպէ՞ս չնախանձիլ (Պաղեստինցի Արաբներուն): Ինչո՞ւ չենք սկսած, կամ՝ չենք սկսիլ: Ինչի՞ կը սպասենք»: Ըսել կ'ուզէ ալ ու ձախ ռումբեր նետելու «յեղափոխութիւնը»: Միայն կոյր, հաշմուած դատողութիւնը կրնայ այսպիսի քմահաճ եւ անմիտ եզրակացութեան մը յանգիլ, այդպիսի յերիւրուած զուգակշիռէ մը: Ան կ'ողբերգէ, - Պաղեստինի Արաբները տա՛սը տարիէն աշխարհ յեղաշրջեցին իրենց ռումբերով եւ Արաֆաթը խօսեցաւ Միացեալ Ազգերու ամպիոնէն, որմէ իբրեւ թէ սարսափի մատնուեցաւ Իսրայէլ, եւ ան... մերժեց Եգիպտոսի եւ Միացեալ Նահանգներու միացեալ առաջարկը, Գահիրէի վերադարձնելու Սինայի կարեւոր մէկ հատուածը:

Մինչդեռ մենք, Հայերս, ահա «վաթսուց տարի ետք n°-ը եմք», ի՞նչ ըրած ենք, ի՞նչ կ'ընենք, ոչի՛նչ, ոչի՛նչ: Ուրեմն 1915-էն ի վեր, Հայ ժողովուրդը ո՛չ ազգային գիտակցութիւն ցոյց տուեր է, ոչ ալ գործել ու պայքարիլ կրցած է: Ուրեմն գոյութիւն չէ ունեցած, նոյնիսկ Ապրիլեան ահռելի եղեռնի եւ յաջորդ տարիներուն՝ ո՛չ Վանի ու Մուսա Տաղի հերոսամարտները, ո՛չ Արարա եւ Հաճըն ու Անիէպ, ո՛չ Սարտարապատի ճակատամարտ եւ չկա՛ն, վերածնած Հայ ժողովուրդ ու վերականգնած Հայկական պետութիւն, որոնք աւերներէն ու մոխիրէն, սպանդէն ու գերեզմանէն իրապէս հրաշալի յարութեամբ մը բարձրացան ներկայի լուսաւոր իրականութեան ու ճշմարիտ փառքին:

Այս բոլորը պէ՛տք էր ուրանալ, հիւանդագին ինքնահաճութեամբ մը կարենալ պատգամելու Համար թէ Հայութիւնը ապիկար է, վախկոտ է, ծոյլ է, ոչի՛նչ է: Եւ այս ահարկու մեղքերը թօթափելու Համար՝ Հայ ժողովուրդը ամէն տեղ պէտք է հետեւի Պաղեստինի Ազատագրական Շարժումի ասպատակներուն գործելակերպին եւ՝ «նախտամարտ, այո՛, ուրիշ ոչի՛նչ»: Բայց հիմնապէս տարբեր են իրողութիւնները ենթադրուած կամայական վարկածներէն:

- Սփիւռքի Հայութիւնը կ'ապրի օտար երկիրներու մէջ, իրրեւ քաղաքացի, կամ գաղթական: Եւ պարզապէս ծիծաղելի ու քրէական արկածախնդրութիւն է խորհի՛լը անգամ, թէ հնարաւոր է «ճակատամարտ» մղել անոնց սահմաններէն ներս, իշխանութեան բարեհաճ Հաւանութեամբ: Ռուսի եւ արիւնի արարքներ պիտի ստիպեն հիւրընկալ պետութիւններ, որ ճշու՛մի ենթարկեն Հայ Համայնքները, կաշկանդեն մեր ազատութիւնն ու իրաւունքները, նոյնիսկ լուծեն մեր ազգային կազմակերպութիւնները, անփոխարինելի նպաստ մը ընծայելով Թուրքիոյ:

- Ահաբեկչական ոճիրները որեւէ դատ չեն կրնար լուծել: Քանի՛ տարիէ ի վեր՝ Հիւսիսային Իրլանտայի մէջ, Բողոքական ու Կաթոլիկ Հատուածներու ասպատակները գէնքով ու ռուսքով զիրար կը սպաննեն եւ Հազարաւոր անմեղ մարդիկ, կիներ ու մանուկներ զոհ ինկեր են այդ «յեղափոխական» արարքներուն: Բայց սփռուած աւերն ու արիւնը մատնաչափ մը անգամ չեն փոխած Հակամարտ կողմերուն դիրքերը, Համաձայնութեան չեն հարկադրած: զանոնք, մինչ Միացեալ Ազգերու կազմակերպութիւնը կարծես լսած իսկ չէ անոնց ողբերգութեան արձագանգը:

- Պաղեստինի Ազատագրական Շարժումին մարտիկները բազմաթիւ ահաբեկչական ձեռնարկներ կատարեցին, որոնց Իսրայէլ փոխադարձեց աւելի անողոք Հարուածներով: Շէնքեր ու սաւառնակներ պայթեցան եւ հարիւրաւոր անմեղ զոհեր ինկան երկու կողմէն: Բայց միամիտ կամ անմիտ պատրանք է, խորհի՛ր թէ այդ ռուսքերն են, որ պիտի հատու-

ցանեն անոնց պահանջը, կամ անոնց վախն էր, որ Եսաիք Արաֆաթին ճպո մը խօսելու առիթը չահեցաւ Միացեալ Ազգերու ժողովին մէջ:

- Զէնքերու որոտն ու սպանող մարդիկ հիմա դիւրին կ'անտեսեն ու կ'արհամարհեն: Բայց Պաղեստինի դատին վճռական զօրավիգ կը կանգնին երկու հզօրագոյն ազդակներ: - Առաջինը՝ 125,000,000-էն աւելի բնակչութեամբ Արաբական աշխարհը, որ կը տարածուի Պարսկական Մոցէն մինչեւ Միջին Արեւելք, եւ հիւսիս, Աֆրիկէէն մինչեւ Ատլանտեան ովկիանոս, երեք կողմէն պաշարելով Իսրայէլը: Արագօրէն աճող ու զօրացող այս մարդկային ծովն է, որ պիտի վճռէ Պաղեստինի ազատութիւնը եւ ո՛չ թէ պարբերաբար արձակուած ռուսքերը: Եւ միւս, աւելի բախտորոշ գործօնը՝ Արաբական երկիրներու անսպառ քարիւղն է, որուն կենսականօրէն կարիքն ունին Եւրոպայի պետութիւններն ու Միացեալ Նահանգները, եւ յօժար են անոր փոխարէն վճարել բարձրագոյն գին մը, - մինչեւ ազատ Պաղեստինի մը ստեղծումը: Պարզապէս մարդկային թիւ ու քարիւղ, իրենց սեփական հողերուն վրայ, եւ ո՛չ թէ բեկորուած ու գաղթական սփիւռք:

- Զէնքի ու ռուսքի ախոյեանները, մանկամիտ ու յանցապարտ պատրանքով մը կը պոռան, - այո՛, մենք ալ պէտք է չէնք ու մարդ պայթեցնենք, որ աշխարհը տեսնէ՛ եւ լսէ՛, եւ արդարութիւն ընէ Հայոց: Բայց այդ նոյն աշխարհը տեսաւ ու լսեց միլիոնաւոր զոհերու կոտորածը եւ երկիրներու աւերումը, - Վիեդ Նամէն, Գամպոտիայէն, Ինտոնեզիայէն մինչեւ Պանկլատէշ եւ Պիաֆրա ու Կիպրոս, եւ կառչած մնաց իր սեփական շահերուն, ու հոգերուն, ու քէֆին: Այդ նոյն աշխարհը տեսաւ ու լսեց շուրջ 2,000,000 անմեղ Հայերու ջարդը ցեղասպան թուրքերուն կողմէ եւ արեւմտեան Հայաստանի ամայացումն ու բռնազրաւումը, եւ պարզապէ՛ս Սելրի դաշնագրին խոստումը բզքտեց Լոզանի ուրացման տապանաքարին տակ: Իսկ մենք, տակաւին որքա՞ն նոր նահատակներ պէտք է տանք, Պոլսէն մինչեւ արտասահման, իրրեւ թէ ցնցելո՞ւ Համար աշխարհ մը, որ իր աչքերը անգամ պիտի չթարթէ, եթէ առտու մը օրաթերթի մը խոնարհ անկիւնին մէջ կարդայ թէ վերջին, բայց վերջին Հայը սրբուեր անհետացեր է երկրագունդի երեսէն:

Եւ դեռ, մինչեւ ե՞րբ այդ տխմարօրէն խելագար մտայնութիւնը, թէ պոռչտալով, սպառնալով, ռազմաշունչ մարտակոչեր թոթովելով մեր թերթերուն վտիտ սիւնակներուն մէջ՝ կրնանք մարդկութիւնը սարսկ: Մինչեւ ե՞րբ ճղճիմ հոգիներ հիւանդ մեծամոլութեան ժահրը պիտի թափեն խմբագրական սեղաններու վրայ՝ որոնց վա՛ղը անգամ անստոյգ է: Փոխանակ իրենց ամբողջ իմաստութիւնն ու խիղճը միաձուլելու եւ յորդորելու եւ համոզելու եւ թախանձելու Հայ ժողովուրդին.

- Մա՛յր մեր, միացիր ու զօրացիր, աշխատէ եւ ստեղծէ, մանաւանդ աճէ՛ ու բազմացիր: Մնացիր Համբերատար ու տեսլապաշտ: Եւ

անխորտակ հաւատքով ու ինքնավստահ՝ եւ խաղաղ ու աննահանջ պայ-
քարով քալէ դէպի ամբողջական Հայաստանի իտէլիդ մարմնացումը:

× × ×

Պոլսահայ թերթեր թարգմանելով կը հրատարակեն Անգարայէն
հաղորդուած հետեւեալ լուրը,-

«Հայերը ոռւմբ դրեր են Պէյրուքի թուրք Զքօսաշրջային Գրա-
սեմնակին Առջեւ», խորագիրն է միայն: Եւ անոր տակ, «Պէյրուքի
հայ փոքրամասնութիւնը ոռւմբ դրած է տեղւոյն թուրք գքօսաշրջային
գրասեմնակին առջեւ: Ձեռնահասանքը կ'ըսեն թէ «Երեք ոռւմբ գե-
տեղուած է Պէյրուքի թրքական գքօսաշրջային գրասեմնակին առջեւ,
միայն թէ ատենին յուր տրուած է եւ ոռւմբերը անվնաս վիճակի մը
վերածուած: Ոստիկանի մը մատը փրթած է, ոռւմբերու բնաջնջման
պահուն»: Այս դէպքը արձանագրուած է աւելի քան երկու ամիսներ
առաջ:

Իսկ իր Փետրուար 23-ի թիւին մէջ, Պէյրուքի մեր պաշտօնակից
«Ջարթօնք»ը խմբագրականով կ'անդրադառնայ նման եղելութեան մը
ու խստօրէն կը դատապարտէ զայն:-

«Լիքանամեան մամուլը արձագանգ հանդիսացաւ այն ոմբափոր-
ձին, որ գործուեցաւ «Թիւրք Հավա Եոլլարը» թրքական օդանաւային
ընկերութեան գրասեմնակներուն դէմ, ոմբափորձ՝ որուն հեղինակու-
թիւնը ստանձնած է իբր թէ «Հայկական գաղտնի բանակը»...:

«Անշուշտ, լիքանամահայութեան բոլոր հատուածները եղան առա-
ջին գամացողները, եւ դատապարտողները այս նախաձեռնութեան»,
կը հաւաստէ «Ջարթօնք»: Եւ կատարուած ոմբափորձը այնքան նպաս-
տաւոր կը նկատեն թուրքիոյ համար, եւ այնքան վնասակար հայու-
թեան՝ եւ Հայկական Դատի հետապնդման ճիգերուն, որ կը կասկածին
թէ ան սարքուած է հաւանաբար թուրքերու կողմէ, հայութիւնը վար-
կաբեկելու եւ հիւրընկալ կառավարութիւններ ու ժողովուրդներ հայ
գաղութներու դէմ գրգռելու շարժառիթով:

«Բացայայտ էր գրգռութիւնը, որուն առաջին անմիջական նպա-
տակն ըլլալ կը թուի հայուն անունը արատաւորել լիքանամէն սկսեալ
մինչեւ ուրիշ երկիրներու հայկական գաղութներէն ներս, ապա աւելի
հեռաւոր նպատակ՝ մղել տեղական իշխանութիւնները սանձախու կամ
արգելակելու Մեծ Եղեռնի 60-ամեակին ոգեկոչման ձեռնարկները»:
(«Ջարթօնք», Փետր. 23):

Դժբախտաբար, այս բացայայտ վտանգին հանդէպ՝ «Հայկական
գաղտնի բանակ» յաւակնոտ անունով մարդիկ կը յայտարարեն, թէ
իրենք են նետեր այդ ոռւմբերը, իբրեւ թէ միջազգային ուշադրութիւն

գրաւելու Հայկական Դատին վրայ, եւ անոր արդար հատուցումը կոր-
ցելու մեծ պետութիւններէն: Այս արարքին հեղինակները թերեւս
ինքնահաճ գոհունակութիւնը կ'ունենան, թէ քաջ ու հայրենասիրական
գործ մը կատարեցին: Իրապէս՝ նման արկածախնդիր ձեռնարկներ կը
գօրացնեն թուրքիոյ միջազգային քաղաքական ու բարոյական դիրքը,
եւ կ'անդամալուծեն հայոց շարժումն ու պայքարը՝ որովհետեւ մեզի
դէմ կը գրգռեն, մեզի դէմ կը դիրքաւորեն նոյնիսկ բարեկամ երկիր-
ներու ժողովուրդներն ու կառավարութիւնները:

Չէ՞ որ նախագահ Ուիլսոնի սահմանագծած պատմական Հայաս-
տանի ճանաչման օրերէն մինչեւ ներկան, աւելի քան 55 տարի, հայ-
կական ամէն բողոքի ցոյց, պահանջի յուշագիր, յուշարձանի կա-
ռուցում, տողանցքներ ու յուշահանդէս միակ նշանակէտի մը ուղղուած
էին:- Համոզել օտար պետական ղեկավարներ ու շահիլ հիւրընկալ
երկիրներու հանրային կարծիքը, որ դատապարտեն թուրքիոյ գոր-
ծադրած հայաջինջ եղեռնը եւ օժանդակեն բռնազրուած հայկական
նահանգներուն Անգարայի լուծէն ազատագրման:

Իսկ այդ նոյն օտար երկիրներուն մէջ պայթած ոռւմբեր ու փամ-
փուշտներ միայն մէկ հետեւանք կ'ապահովեն,- անոնց առաջնորդներն
ու հասարակութիւնը թշնամացնել հայ գաղութներուն, ուրեմն մեր
հետապնդած նպատակներուն, ուրեմն փճացնելով տարիներու ճիգե-
րով, գոհողութեամբ ու մաքառումով շահուած դիրքերը: Իրապէս հե-
րոսական ոչինչ կայ, երբ մէկը սրընթաց ինքնաշարժի մը մէջէն ոռւմբ
մը կը նետէ թրքական գրասեմնակէ մը ներս ու կը փախչի դէպի
ապահովութիւն:

Ընդհակառակը՝ ան կը նկատուի վատ ու պարսաւելիք արարք մը,
որովհետեւ վտանգի կը մատնէ ոչ միայն թուրքիոյ մէջ ապրող հայու-
թիւնը, այլ նաեւ կը վարկաբեկէ դէպքին երկրէն ներս բնակող հայ գա-
ղութը եւ կրնայ ստիպել նոյնիսկ բարեացակամ օտար իշխանութիւն մը՝
որ խիստ, արգելիչ միջոցներով ճնշումի ենթարկէ հայոց ազգային,
կրթական, մշակութային ու քաղաքական շարժումներն ու ձեռնարկները:

Նման ոմբափորձեր բացայայտ օժանդակութիւն մը կ'ընծայեն
թուրքիոյ, անոր հակահայ խաչակրութեան մէջ,- առանց նուազագոյն
բարիքին հայոց համար: Որովհետեւ ոռւմբն ու ահաբեկչութիւնը եր-
բեք չեն յաջողած որեւէ ազգային դատ լուծել: Հիւսիսային Իրլանտայի
մէջ քանի տարիներէ ի վեր՝ եղբայրներ ի գո'ւր կը սպաննեն զիրար:
Եւ Պաղեստինի արաբներու իրաւունքները ահաբեկչական արարքները
չեն որ պիտի ապահովեն,- այլ անոնց շուրջ 125,000,000 հոգիներու
համարանքը եւ քարիւղի հորերուն ահարկու գօրութիւնը:

ՍՓԻՒՔԱՀԱՅ ՄԷԿ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Կասկած չկայ, որ նման գաղափար մը որքան յանդուզն՝ այնքան անկարելի կը թուի անոր մարմնացումը: Հայկական սփիւռքի ներկայ գոյավիճակին մէջ՝ ան վստահօրէն քմծիծաղ պիտի առաջացնէ մտաւորական կարծրացած ուղիներու հետեւորդ դէմքերու վրայ: Բայց վստահօրէն պիտի գայ ժամանակը, եւ անխուսափելի է, որ հասուննայ Համոզումը, եւ արտասահմանի վերապրող արեւմտահայութեան բոլոր քաղաքական հոսանքները, իրենց տարբեր դաւանանքներով միաձուլուին եւ կազմեն միացեալ ու մէկ Ազգային կուսակցութիւն մը:

Որովհետեւ առանց այդպիսի կազմակերպական միութեան մը՝ կրնայ որոշ նպատակներ հետապնդելու եւ ձեռնարկներ կատարելու համար մասնակի գործակցութիւն ստեղծուիլ անոնց միջեւ: Սակայն կարելի պիտի չըլլայ իրականացնել համահայկական այն ամբողջական, համերաշխ միասնութիւնը՝ որուն կը ցանկան բոլոր հատուածները եւ կը ներթողեն անոր հիմնական դերն ու հեռահաս նպաստները սփիւռքահայ գոյատեւման պայքարին մէջ:

Բայց որպէսզի այդ գաղափարը ծաւալի եւ խորանայ Հայ կուսակցութեանց ղեկավար տարրերուն եւ հետեւորդներուն մէջ, եւ խարխիս հայթայթէ անոր մարմին առնելուն՝ անհրաժեշտ պայման է, որ իրապաշտ, առարկայական դատումով ընդունուին քանի մը անժխտելի իրողութիւններ: Ծիշդ է, թէ դժուար է քարացած պատրանքներ թօթափել, որքան ալ սնամէջ, նոյնիսկ վնասարար ըլլան անոնք: Եւ դիւրին չէ հրաժարիլ աւանդական մեհեաններու, նուիրազործուած խորհրդանիշներու եւ փառաբանուած դէմքերու կամ դէպքերու կուսապատկանէն, - թէկուզ անոնք իրրեւ ոգեկան ու իմացական պատնէշներ կը կանգնին մեր ազգային գոյութիւնը ամբապնդելու, եւ աւելի լուսաւոր ապագայ մը կերտելու ճամբուն վրայ: Բայց տակաւին՝ ճշմարտապէս հայրենասէր հոգիներու համար, որոնք ձերբազատուած են նախապաշարումի ու քէներու, եւ հատուածական վարկի ու շահի մանրուք կապանքներէն՝ պէ՛տք է կարելի ըլլայ անցեալի աճիւնները թաղել եւ նուիրուիլ հայ ժողովուրդի ապահովութեան ու զարգացումին, եւ Հայաստանի զօրանալուն յարատեւ մաքառումին:

Այսպէս, աշխարհի ամենէն հզօր ու ազատ երկիրներէն մէկը, Միացեալ Նահանգներ, մօտ 230,000,000 բնակչութեամբ, կը կառավարուի միայն երկու քաղաքական հոսանքներով, - Տեմոկրատ եւ Հանրապետական, - որոնք երկուքն ալ՝ նոյն ուսման վարական սկզբունքներն ու ծրագիրները կը դաւանին, եւ մէկ կուսակցութիւն կը նկատուին, ընկերային ու տնտեսական հարցերու շուրջ մանր տարբերութիւններով: Կան նաեւ ընկերավարական ու համայնավար խմբակներ, որոնք սակայն սոսկ անուանական կը մնան եւ որեւէ կերպով չեն յաջողած մասնակցիլ իշխանութեան գործադիր, օրէնսդիր եւ դատական բաժանմունքներուն մէջ:

Մեծն Բրիտանիա եւս կը կառավարուի երկու գլխաւոր հոսանքներով, - Աշխատաւորական եւ Պահպանողական, առաջինը՝ խառն ընկերավարական, երկրորդը՝ դրամատիրական ծրագիրներով: Ազատականներ միայն օժանդակ տարր մը կը հանդիսանան: Ուրիշ բազմաթիւ երկիրներ եւս ունին երկու գլխաւոր կուսակցութիւններ, - մէկը՝ ընկերավարական-համայնավար ծրագիրով, եւ միւրը՝ ուսման պետական: Երբեմն միջանկեալ զարտուղի հատուածներով:

Պարզ դատողութիւն մը պիտի թելադրէ ուրեմն, - Եթէ մեծ ժողովուրդներ ու հզօր պետութիւններ բաւարար կը գտնեն երկու կուսակցութիւններ, իրենց քաղաքական, ընկերային ու տնտեսական ծրագիրները հետապնդելու եւ ձեռնարկները վարելու համար, ինչո՞ւ փոքրաթիւ հայութիւնը պիտի չգոհանայ միայն երկու կուսակցութիւններ ունենալով եւ զանոնք տեւականապէս կենսունակ ու գործօն գորութեան մէջ պահելով: Այս բնական մեկնակէտը որդեգրելէ ետք՝ բացայայտ կերպով կը պարզուին ու կը պայծառանան Հայ իրակապետութեան կապուած երկրնտրանքները, հայրենիքի եւ արտասահմանի հայութեան տարբեր երեւոյթներուն մէջ:

Հայաստան արդէն կը կառավարուի մէկ կուսակցութեամբ, ընկերավարական-համայնավար սկզբունքներով ու դաւանանքով, որ պետական կառուցուածքին կը տիրէ, ուրեմն օժտուած է տեսապէս զօրանալու բարոյական վարկի, նիւթական առատ աղբիւրներու եւ աճող երիտասարդ սերունդներու յարսնուն նպաստներով: Երկրին վարչաձեւը սահմանուած է անոր ընդգրկած ծրագիրներով ու վարդապետութեամբ, ենթակայ՝ դէպի քաղաքական, ընկերային ու տնտեսական ազատականութիւն անխուսափելի բարեշրջումին, հետեւողաբար ամբողջ Սովետ Միութեան:

Սփիւռքի հայութեան վիճակուած է ուրեմն կազմել ու զօրացնել միւս, երկրորդ կուսակցութիւնը, որ էպպէս տարբեր ըլլայ հայրենական տիրապետող հոսանքէն: Արտասահմանի մէջ, յայտնօրէն աւելորդ եւ աննպատակ է ունենալ կամ պահպանել ընկերավարական-

համայնավար գաղափարներով կազմակերպուած խմբակցութիւն, որովհետեւ Հայաստանի մէջ արդէն նոյն ծրագիրներով վարչակարգ մը կը տիրէ: Եւ ո՛չ բանաւոր է, ոչ ալ հնարաւոր, օտար երկիրներու մէջ հաստատուած որեւէ հայ խմբակի համար՝ նոյնիսկ նուազագոյն մասնակցութիւն մը կամ դեր մը ունենալ Հայաստանի պետական կառուցուածքին եւ անոր իշխանութեան բնոյթը որոշելու մէջ: Նման պատրանքներ սնուցանել վիպային մտայնութիւն է առնուազն, - ան ո՛չ մէկ դրական հետեւանք կրնայ ունենալ, բայց որուն ժխտական արդիւնքը՝ սփիւռքահայ քաղաքական հոսանքներու տարրերուն կոտորակումն ու տկարացումը կ'ըլլայ բնականօրէն:

Հայ ժողովուրդը, ուրեմն, արդէն ունի ընկերվարական-համայնավար դաւանանքով զօրաւոր կուսակցութիւն մը Հայաստանի մէջ, որ հայրենի պետութիւնը կը վարէ: Անիկա լիապէս բաւարար է իբրեւ հայրենական մէկ կուսակցութիւն եւ գաղափարական որեւէ նպաստի ո՛չ ակնկալութիւնը եւ ո՛չ ալ կարիքը ունի հայկական սփիւռքէն:

Սակայն կենսականօրէն անհրաժեշտ է, որ արտասահմանի Հայութիւնը ունենայ իր սեփական մէկ կուսակցութիւնը, որ ազգային նկարագրով եւ ռամկավարական սկզբունքներով տարբերի միւսէն, եւ որուն մէջ միաձուլուին բոլոր ներկայ հոսանքները:

Սփիւռքահայ մէկ ու միացեալ ազգային-քաղաքական կուսակցութիւն գոյացնելու կարիքը շարք մը հիմնական պահանջներէ կը թելադրուի: Անոնք կ'ընդգրկեն մարդկային ու նիւթական թանկագին ուժերու տնտեսում, գաղափարներու եւ նպատակներու համախառն բիւրեղացում, եւ ձեռնարկներու համադրուած հետապնդում:

Քաղաքական միտքը անհրաժեշտ է որ տրամաբանէ սին պատրանքներէ եւ խարուսիկ ցնորքներէ ձերբազատ, եթէ պիտի խուսափի որոգայթներէ եւ աղէտներէ, եւ պիտի յուսայ որեւէ առաջադրուած հանգրուանի հասնիլ: Իրապաշտ դատում մը հարկադրաբար պիտի ճանչնայ դառն իրողութիւնը, որ գաղութահայ կեանքը դժխեմ, եղբրական գոյավիճակ մըն է: Կարելի է ժխտել ոմանց անյոյս յոռետեսութիւնը եւ ուրիշներու շպարուած ցանկատեսութիւնը պանդուխտ համայնքներու ապագային համար: Եւ դժուար է'ըլլար տեսնել ցաւագին ճշմարտութիւնը, -

Որ սփիւռքահայ գոյութիւնը մահացու վտանգներ կը դիմագրաւէ: Եւ անոր կազմակերպուած զօրութիւնը դատապարտուած է ուժացումով տկարանալու, ընկրկելու: Միջազգային բախումներու եւ ճգնաժամերու հետեւանքով նոր տեղաշարժեր կը կատարուին հայ բազմութեանց եւ որոշ վայրերու մէջ ազգային ոգին ու շարժումները կը կենսաւորուին, նոր թափով կ'աշխուժանան, բայց այդ ժամանակաւոր բարիքները կը շահուին ուրի՛շ գաղութներու տեւական կո-

րուստով: Եւ սփիւռքահայ ընդհանուր գոյավիճակին մոայլ պատկերն է, որ առաւելագոյն ծաւալով կ'ազդէ մանաւանդ ազգային ճրգտումներով տոգորուած եւ քաղաքական առաջադրանքներ որդեգրած հոսանքներու վրայ: Որովհետեւ ամէն երիտասարդ սերունդի մէջէն տոկոսային նուազում մը պիտի յայտնուի գիտակից տղոց եւ աղջիկներու, որոնք պիտի յօժարին նուիրուիլ անոնց որդեգրած գործունէութեան:

Այսօր սփիւռքի մէջ կան խանդավառ հօգիներ, որոնք Հայկական Դատը «քաղաքականացնելու» կամ «յեղափոխականացնելու» մարտաշունչ եւ սնամէջ կարգախօսներ կը շեփորեն: Եւ կը սփոփուին պղպղակէ պատրանքներով, թէ իրենք անկոխ ճամբաներ կը բանան դէպի պայծառ հանգրուաններ: Բայց անոնցմէ շատեր, 10-20 տարիներ ետք պիտի տեսնեն թէ իրենց սնուցած ցնորքներով թիզ մը հայկական հող չէ ազատագրուած թրքական զարշապարին տակէն, եւ դառնացած ու վհատած՝ պիտի մեկուսանան մեր ազգային իրաւունքները հետապնդելու պայքարի ասպարէզէն:

Նաեւ, 3-4 տարբեր, երբեմն հակամարտ հոսանքներու անջատ աշխատանքները նոր շփոթութիւններ պիտի ստեղծեն նորահաս երիտասարդներու մէջ եւ զանոնք պիտի մղեն ծրագրուած շարժումներէն ու կատարուած ձեռնարկներէն դուրս, մարդկային թանկագին, անփոխարինելի ուժերու վատնում առաջացնելով: Բայց սփիւռքահայ մէկ կուսակցութեան համազգային դրօշակին տակ եւ անոր համախառն նպատակներուն շուրջ դիւրաւ կարելի պիտի դառնայ միացնել, կեդրոնացնել բոլոր հայրենասէր, գիտակից տարրերը եւ անոնցմով դարձնել աւելի՛ ծաւալուն, աւելի՛ զօրաւոր ու տեւական քաղաքական կազմակերպութիւն մը, որ արեւմտահայ ժողովուրդին ձգտումներուն ու պահանջներուն վաւերական ախոյեանը մնայ, - գաղութներուն խնայելով արկածախնդիր մարդոց վնասարար արարքները:

Գաղափարի ու գործելակերպի նման ամբողջական միասնականութիւն մը նոր յոյսերով ու ռզեւորութեամբ պիտի համակէ նոյնիսկ անտարբեր հայ տղաք ու աղջիկներ եւ զանոնք պիտի ներշնչէ, որ միանան իտէպլի ու պայքարի այդ ընդհանրական հոսանքին: Եւ իբրեւ բնական հետեւանք՝ սփիւռքահայ ներկայ քաղաքական կազմակերպութիւնները փոխանակ հետզհետէ տկարանալով՝ մարդկային քանակի ու որակի յաւելումով առաւել պիտի զօրանան ու կենսաւորուին, աւելի ընդունակ դառնալով հեռահաս ծրագիրներ մշակելու եւ արդիւնաւոր գործունէութիւն վարելու ձեռնարկներուն:

Գաղութահայ մէկ կուսակցութեան կազմուիլը նաեւ նիւթական աղբիւրներու, խանդի ու ժամանակի ահագին խնայողութիւն պիտի ապահովէ: Նոյն քաղաքին մէջ հրատարակուող երկու-երեք տարբեր

հայերէն թերթեր պիտի կրնան միանալ մէկ անունի ու յարկի տակ, մէկ խմբագրական մարմինով: Հիմա՝ անոնցմէ ամէն մէկը դրամական փոքր կամ մեծ կորուստներ կ'ունենայ, - անխուսափելի հետեւանքը ծախքերու անումին եւ եկամուտներու յարաբերական նուազումին: Բայց միանալով՝ անոնք բաժանորդներու նկատելի յաւելում կ'արձանագրեն, զուգահեռ ծախքեր կը կրճատուին եւ տեւական բացերու մղձաւանջը կ'անհետանայ: Նոյն ատեն՝ գրողներու եւ աշխատակիցներու միաւորումով, թերթը աւելի ծաւալուն ու բովանդակութիւնը աւելի բարձրորակ եւ այլազան կը դառնայ:

Իսկ խնայուած գումարով կարելի կ'ըլլայ հրատարակել գրական, ազգային ու հասարակական խորքով ամսաթերթ մը, որ նպաստէ ըսփիւռքահայ գրականութեան ու մշակոյթին զօրացման: Եւ անոր գուզընթաց՝ որակային ու նիւթական առաւել արդիւնքներ կ'ապահովուին երաժշտական, թատերական, գրական եւ յարակից հանդէսներու համար, նոյն ատեն, դպրոցներու ցանցը ծաւալելով եւ անոնց կրթական մակարդակը բարձրացնելով:

Միակ սփիւռքահայ կուսակցութիւնը պիտի կարենայ արտասահմանի հայութեան մէջ ստեղծել ազգային հեռահաս նպատակներու բիւրեղացած նոյնութիւն, եւ քաղաքական շարժումներու ծրագրուած համագործւմ, եւ գործելակերպի միաձուլում: Եւ այդ վիճակին բարիքները բազմակողմանի են, բաղադրուած շահերու կուտակումով: Երբ որդեգրուի անմիջական նպատակներու եւ գալիք առաջադրանքներու ընդհանրական ծրագիրը, գաղութահայ պառակտումներու խրամատները կը լեցուին, վէճերը կը դադրին եւ ամէն ասպարէզի վրայ, ամէն մարզի մէջ միասնական, համերաշխ գործակցութիւն մը կ'ամրանայ, սփիւռքահայ գոյամարտին նոր իտէալ, խանդ ու յաղթանակի կամք ներշնչելով:

Այն ատեն, հնարաւոր պիտի դառնայ նաեւ, որ մէկ վաւերական կեդրոնի մը ղեկավարութեամբ հետապնդուի Հայկական Դատը: Եւ նոյն աղբիւրէն բխին օտար պետութեանց վարիչներուն ղրկուած յուշագիրները, նաեւ հանրային առաջնորդներու մօտ կատարուած դիմումները, Թուրքիոյ գործադրած հայասպան ոճիրին դատապարտութեան եւ բռնազրաւուած հայկական հողերու վերադարձին կապակցութեամբ: Ատիկա միակ նպատակն է, որով կարելի պիտի ըլլայ խուսափիլ շփոթեցնող ու հակասական վերագրումներէ ու պահանջներէ:

Միաձուլուած կուսակցական կեդրոնին ծրագիրով՝ Ապրիլեան Եղեռնի յուշահանդէսները եւ ցոյցերն ու տոգանցքները պիտի ունենան համադրուած տարագ ու բովանդակութիւն, աւելի տպաւորիչ ու արդիւնաւոր դառնալով: Եւ նոյն կեդրոնին խմբագրութեամբ ու տարբեր լեզուներով հրատարակուած պրակներն ու հատորները աւելի

լիապէս պիտի ներկայացնեն Հայ ժողովուրդին արդար իրաւունքները բազմաթիւ հիւրընկալ երկիրներու պետական, մտաւորական ու հանրային շրջանակներու մէջ:

Ուեէ իրապաշտ մտածողի դատողութեամբ՝ երկու քաղաքական կազմակերպութիւններ լիապէս բաւարար են Հայ ժողովուրդին համար: Անոնցմէ մէկը ընկերվարական-համայնավար սկզբունքներով ու դաւանանքով արդէն կը զօրանայ Հայաստանի մէջ եւ կը վարէ հայրենի պետական իշխանութիւնը: Իսկ միւսը պէտք է հանդիսանայ սփիւռքի հայութեան ձգտումները, գաղափարներն ու նպատակները արտայայտող միաձուլ, ընդհանրական հոսանքը, որ կրնայ կոչուիլ «Հայ Ազգային Ռամկավարական (Democratic) Կուսակցութիւն», այդ անունով իսկ բացայայտելու համար իր ծրագիրի ու գործելակերպի տարբերութիւնը ընկերվարական-համայնավար վարդապետութենէն:

Այս կուսակցութիւնը պիտի որդեգրէ տեմոկրատ-ժողովրդավար հաւատամք ու նշանակէտներ՝ քաղաքական, ընկերային ու տնտեսական մարզերուն մէջ: Ան պիտի ջատագովէ եւ ապահովէ մարդոց մտածելու եւ յղանալու, խօսելու եւ գրելու, քննադատելու եւ բարեջրլեւելու անկաշկանդ ազատութիւնը: Ան պիտի պաշտպանէ կրօնական պաշտամունքի իրաւունքը ամէն խղճամտանքի համար: Ան պիտի թոյլատրէ տնտեսական ասպարէզի վրայ անհատական նախաձեռնութիւնը պետական հակաշիւթի տակ, որ պիտի երաշխաւորէ գործաւոր դասին նիւթական ու ընկերային բարեկեցութիւնը, արդար ու հաւասար պատեհութիւններով, օրէնքին առջեւ:

Տարակույս չկայ, որ մարդկային այս հիմնական իրաւունքները հետզհետէ պիտի գնահատուին ու գործադրուին ամէն զարգացող երկրի մէջ, ամէն նորագաւթ ժողովուրդի համար: Որովհետեւ անվիճելի է, որ անոնց կիրարկումը կենսական պայման է ոչ միայն ընկերութեան յառաջդիմելուն դէպի ազատ ու բարեկեցիկ կեանք մը, այլ նաեւ ու մանաւանդ՝ անոնց իրագործումով է, որ անհատը պիտի կրնայ հասնիլ իր իմացական ուժերուն լրիւ պտղաւորման եւ իր ոգեկան երջանկութեան: Եւ Հայ ժողովուրդը, իրբեւ հնամեայ քաղաքակիրթ ազգ, փարթեամ, լուսաւոր մշակոյթի մը ժառանգութեամբ՝ պէտք է ունենայ մարդկային ազատութեան եւ իրաւունքներու այդ սկզբունքները դաւանող, այդ նպատակները հետապնդող համազարդութային կազմակերպութիւն մը, միացեալ ու մէկ ծրագիրով ու ղեկավարութեամբ:

«Հայ Ազգային Ռամկավարական Կուսակցութեան» կառուցուածքը եւ նկարագիրը պիտի ըլլան սփիւռքահայ, - մինչեւ որ բարեբախտ գալիքի մը, Հայաստանի եւ Սովետ Միութեան քաղաքական մթնո-

լորտէն բխած նոր սահմանադրութեամբ, անոր արտօնուի փոխադրուիլ նաև հայրենիքէն ներս: Բարեշրջութեան անխուսափելի օրէնքով, — Տարուինեան կամ Լենինեան — այդպիսի հեռանկար մը անկարելի պիտի չթուի նոյնիսկ ամենէն մոլորած անհաւատներուն: Այդ միացեալ հոսանքը նաև արեւմտահայ պիտի ըլլայ իր բնոյթով: Ուրեմն ան պիտի հանդիսանայ օրինական եւ իրաւական փոխանք արեւմտահայ ժողովուրդին բռնագրաւուած իրաւունքներուն: Ան կը դառնայ պահանջատէրը Թուրքիոյ լուծին տակ ամայացած հայկական նահանգներուն ազատագրուելուն եւ ներկայ ազատ ու բարգաւաճ Հայաստանին կցուելուն:

Սփիւռքահայ մէկ կուսակցութեան գոյաւման դրական նպաստները անվիճելի են: Տարբեր հատուածներու հիմա բաժնուած ու յաճախ վատնուող մարդկային ու նիւթական, իմացական ու ոգեկան ուժերու միաձուլումով՝ շատ աւելի ծաւալուն ու զօրաւոր, ուրեմն ազդեցիկ կազմակերպութիւն մը կը ստեղծուի: Անոր ռամկավարական անունն ու դաւանանքը կը դիւրացնեն, որ Արեւմուտքի ռամկապետական երկիրներու շրջանակներուն մէջ ան կարենայ աւելի համակրանք ու վստահութիւն չահիլ հայոց ազգային ձգտումներուն ու հողային պահանջներուն համար, հաստատելով թէ Սովետ Միութեան քաղաքական շահերուն չէ որ կը ծառայէ, այլ հայ ժողովուրդին դարաւոր կողոպտուած, կալանուած իրաւունքներուն հաստատումն է, որ կը հետապնդէ պարզապէս:

Համադադուութիւնն այդ կուսակցութիւնը, բնականօրէն, պիտի ճանչնայ եւ ողջունէ Խորհրդային Հայաստանը՝ իբրեւ հզօր խարխիս ու պայծառ մարմնացում հայոց ազգային հրաշալի վերածնունդին ու պետական վերականգնումին: Եւ նուիրուած պիտի ըլլայ անոր աճելուն ու զօրանալուն, ոգիով ու նիւթական նպաստներով: Այս վարկով ու հեղինակութեամբ, եւ իբրեւ հարազատ արտայայտիչը սփիւռքի բովանդակ հայութեան մարդկային իրաւունքներուն ու հողային պահանջներուն, այդ կազմակերպութիւնը կրնայ պարբերական դիմումագիրներ ղրկել Սովետ Միութեան վարիչներուն, կամ մասնաւոր պատուիրակներով ներկայանալ անոնց, Մոսկուայի մէջ, արեւմտահայ հողերու վերագործին հարցը արծարծելու եւ անոր բարեացակամ միջամտութիւնը խնդրելու Թուրքիոյ հետ իր բանակցութեանց ընթացքին: Բայց անհրաժեշտ նախապայման է հարկաւ, որ ներկայ Հայաստանը Սովետ Միութենէն անջատելու արկածախնդիր ու աղէտալի ցնորքը թաղուի ընդմիջտ, իբրեւ օտար, հեռաւոր երկիրներու պողոտաներէն ու գոհհաներէն յանկերգուած պղպղակէ մարտակոչ:

Նման սփիւռքահայ կուսակցութիւն մը, համադադուութիւնն ծրա-

գիրով ու գործունէութեամբ, հաւանաբար առիթ ունենայ նոյնիսկ ուղղակի հանդիպելու Թուրքիոյ դեսպաններուն հետ, խօսելու եւ բանակցելու համար: Թերեւս այդ միջոցով կարելի կ'ըլլայ աւելի դրական արդիւնքներ ապահովել՝ քան ռեւէ թուրք դեսպան կամ հիւպատոս սպաննելով: Նման գրոյցներով թերեւս աւելի դիւրին դառնայ Ապրիլեան ցեղասպան եղեռնին ահագնութիւնը պարզել անոնց փաստաթուղթերով եւ հայկական հողերու վերագործին մեր իրաւունքները հաստատելով: Նոյն ատեն կարելի է բողոքել Թուրքիոյ հայոց վրայ գործադրուած ճշուումներուն, բռնութեանց ու կալուածային գրաւումներուն համար եւ պահանջել որ յարգուին անոնց մարդկային իրաւունքները կրթական, մշակութային եւ եկեղեցական մարզերուն մէջ: Այսպիսի համադրուած, յարատեւ աշխատանք մը ո՛չ մէկ ժխտական անդրադարձ կ'ունենայ, եւ հաւանական է, որ դրական արդիւնքներ չահի:

Սփիւռքահայ բոլոր քաղաքական հոսանքներուն միացումով միայն «Հայ Ազգային Ռամկավարական կուսակցութիւն» մը կազմելու գաղափարին վստահաբար համաձայն պիտի ըլլան ժողովրդային լայն զանգուածներ եւ խանդավառօրէն պիտի ողջունեն անոր գոյաւմամբ: Անիկա կենդանի առանցքը պիտի դառնայ, որուն շուրջ միաւորուած՝ պիտի ստեղծուի գաղութահայ ներդաշնակ միասնականութիւնը եւ սերտ գործակցութիւնը, եւ պառակտումներու խրամատները պիտի լեցուին նաև եկեղեցական հերձուածումին եւ ուրիշ բաժանումներու միջեւ: Ո՛չ մէկ խղճամիտ մարդ, ո՛չ մէկ գիտակից հայ կրնայ ժխտել այսպիսի մէկ կազմակերպութեան բարբարոս արժէքն ու նշանակութիւնը եւ անոր հեռահաս դերը մեր ազգային գոյապայքարին, անոր իտէլայներուն հետապնդման մէջ: Բայց տակաւին, եղբրական հակասութեամբ մը, անոր մարմնացումը անկարելի պիտի թուի շատերուն համար:

Որովհետեւ սփիւռքի մէջ «Հայ Ազգային Ռամկավարական կուսակցութեան» մը ստեղծումը պայմանաւորուած է ներկայ քաղաքական հոսանքներուն, — անոնց ղեկավարներուն իրապաշտ դատողութեան չափէն: Թէ անոնք որքան լիապէս պիտի ուզեն ըմբռնել գաղութահայ գոյավիճակին դժխեմ իրականութիւնը: Եւ որքան խորապէս պիտի գնահատեն հեռահաս արժէքն ու կենսական դերը այդպիսի միացեալ ու մէկ կազմակերպութեան մը: Եւ յետոյ՝ ի՞նչ աստիճան կորով ու տեսլապաշտ իմաստութիւն պիտի յայտնաբերեն, նման ծրագիր մը իրագործելու համար:

Որովհետեւ նոր, համախառն հոսանքի մը ծնունդը հնարաւոր կ'ըլլայ միայն՝ երբ անոր մէջ կը լուծուին հին անուններ ու գործելակերպեր, որոնք իբրեւ աւանդական անցեալի մը մնացորդներ՝

նուիրական ժառանգութեան մը պատրանքը կու տան: Բայց որպէսզի մարմին անէ սփիւռքահայ մէկ կուսակցութեան գաղափարը՝ անհրաժեշտ է, որ ներկայ հոսանքները իրենց անուններն ու խորհրդանիշները, և իրենց կերտած հերոսական գրուածքներն ու գանձեր փարոզ գիւցազնային մարտիկները հատուածական յուշագրութիւններէն փոխանցեն հայոց ընդարանրական պատմութեան:

Այն ատեն՝ Մկրտիչ Աւետիսեան և Միհրան Տաճատեան, Արմենակ Եկարեան և Եսայի Եաղուպեան, Փիրայր և Մուրատ Պոյաճեան ու Փալուստ Արխանեան, և Գէորգ Չաւուշ ու Սերբ Ազրբիւր, և Մուրատ ու Հրայր և բազմաթիւ ուրիշ անձնուրաց ու նահատակ սպամիկներ, գաղափարի և ոյրի իրենց առաջնորդներուն հետ, աարբեր հոսանքներու մեհաններէն կը բարձրանան ու կը միանան հայ ազատագրական պայքարի բնականորակ խորանին վրայ, և կը գտնան ամբողջ Հայ ժողովուրդին ազատամարտին վկաներն ու կերտողները: Եւ միացեալ մէկ կուսակցութիւնը կրնայ յիշատակել ու ներբողել բոլոր հերոսամարտներն ու անոնց ղեկավար առաջնորդները՝ իրրեւ իրենց նուիրագործուած ժառանգութիւնը:

Նոյնիսկ այս համոզիչ հեռուպատկերին հանդէպ, խարուսիկ պատրանքներու և անցեկապաշտ կարծրացած մտայնութեան հետեւորդներ զփուար պիտի կարենան բնականի աշխարհի պերճախօս ճրջմարտութիւն մը: Դժուար պիտի յօժարին տեսնել, թէ անցեալ մը որքան ալ վիպային ու հրապուրիչ թուի անգամ իր ստուերի ու ազգի պղտորութեան մէջէն՝ տակաւին՝ պէտք է զիջի այսօրուան ու գալիքի վճռական պահանջներուն առջև: Տակաւին՝ հայոց ազգային վերապրումը, ու հայրենիքին ծաղկիլը ու պետութեան գործնայր, և հայ ժողովուրդին իրաւունքներուն ծրագրուած հետապնդումը ներկայէն զէպի ապագան՝ գերագանց ու տիրական պէտք է գտանուին բոլոր միւս մասնակի նախասիրութեանց, հատուածական փառքերուն և փայփայլուած ցնորքներուն վրայ:

Թամրս Փէյն, թէեւ Անգլիացի, բայց այս երկրին մէջ գործու Ամերիկեան Յեղափոխութեան պերճարան ու մարտաշունչ գաղափարախօսը: Ան որպէս Միացեալ Նահանգներու ազատութեան ու ծնունդին ջերմեռանդ ախոյեան, յաճախ կը վիճէր այդ ծրագրին քննադատներուն հետ: Եւ առիթով մը գրեց, -

“I am contending for the rights of the living... Mr. Burke is contending for the authority of the dead”. (Սու կը պայքարիմ ապրողներու իրաւունքներուն համար... Պրն. Պըրք կը պայքարի մեռածներու հեղինակութեան համար):

Սփիւռքի հայութեան գոյամարտին, - անոր ազգային ձգտումները պահպանելու, և հաւաքական նպատակները կազմակերպուած

գործունէրով հետապնդելու հիմնական պահանջին հանդէպ՝ նման երկրորդութեան մը կը զիմագրուենք նաեւ մենք: Պիտի շարունակենք մեռածներու թէկուզ նուիրական բայց այլեւս ժամանակավրէպ և յաճախ վնասարար աւանդներով կապանքուած քաղել ու աշխատիլ, և անոնց անգրչիրիմեան հեղինակութեան որպէս մեծարանք, զայն իրրեւ ուղեցոյց պիտի պահենք մեր առաջագործ ճիգերուն ու պայքարներուն ճամբուն վրայ: Թէ ոչ՝ աղէտալի ճախողանքներէ և սպգային գարհուրելի փլուզումներէ յաջողած ենք քաղել ու բիւրեցացնել քաղաքական իրապաշտ իմաստութիւն և նոր գործելակերպեր որդկորկու յանդգնութիւն: Եւ անոնց թելադրանքով՝ պիտի փորձենք ներկայի յեղաշրջուած ու յարափոփոխ պայմաններուն տակ՝ ծրագրել, աշխատիլ ու մաքառիլ, այսօրուան ու վաղուան ապրող սերունդներուն իրաւունքները հետապնդելու, անոնց կարօտներուն ու տենչերուն մարմին տալու համար:

Կը հաւատանք թէ սփիւռքահայ քաղաքական հոսանքներ, - անոնց երիտասարդ ղեկավարները, իրենց դատողութեամբ և հայ ժողովուրդին զերագոյն բարիքին ծառայելու իրենց ուխտերով պիտի յօժարին ճանչնայ այս ճշմարտութիւնը: Եւ պիտի կրնան ընդառաջել անոր պահանջներուն, եթէ միայն փորձեն ձերբազատուիլ անցեալի խաչներուն ու պատրանքներուն, և փառքերուն ու խաբկանքներուն կաշկանդումներէն: Որովհետեւ սփիւռքահայ միացեալ ու մէկ քաղաքական կազմակերպութեան ստեղծումը կախում պիտի ունենայ ոչ մէկ արտաքին ազդեցութենէ, ոչ մէկ օտար գործունէ, - այլ միայն գաղութահայ երեք գլխաւոր հոսանքներու վարիչներուն և անդամներուն գիտակից կամքէն և զիջումներու ընդունակ ոգիէն:

Ռամկավար Ազատական Կուսակցութեան համար՝ հաւանարար շատ զժուար պիտի չըլլայ համաձուլուիլ այդպիսի ազգային ու քաղաքական հզօր շարժումի մը մէջ: Անոր ամբողջ անցեալ պատմութիւնը, 1885-էն մինչեւ ներկայ, կենդանի վկայութիւնը հանդիսացած է միութեան գաղափարին հանդէպ անոր խորունկ հաւատքին և վերափոխուելու անոր ընդունակութեան: Չայն բաղկացնող տարրերուն մէջ գերազանցօրէն տիրապետած է ազգային ազատութեան խռկար և անոնք մղած են շարք մը փրկարար հերոսամարտներ, Տէօրթ Եոյէն ու Վանէն մինչեւ Մուսա Լեռ, Արարա և Կիլիկիա: Բայց անոնք նաեւ յաջողեցան հատուածական ամէն շահի ու փառքի կապանքներէն ձերբազատ մտքով գտնել ու հասկնալ հայ ժողովուրդին գոյատեւման, Հայաստանի փրկութեան և յետոյ՝ հայրենի պետութեան գորացման պահանջները և յեղաշրջուող միջազգային պայմանները՝ և յօժարեցան իրենք ալ վերակողուիլ ու վերափոխուիլ, գանձեր առաւել արդիւնաւոր կերպով հետապնդելու համար:

Այդպէս. անոնք քանի մը անգամ չվարանեցան անունին փոխելու, եւ յաջորդաբար կոչուեցան Արմենական - Վերակազմեալ Հընչակեան - Սահմանադիր Ռամկավար - Ազատական եւ 1921-ի Հոկտեմբերէն սկսելով՝ Ռամկավար Ազատական: Եւ որդեգրեցին նաեւ նոր ծրագիրներ ու նպատակներ, որոնք ընդգրկեցին ամէն շրջանի հայ ազգային կարիքներուն, իրաւունքներուն եւ պահանջներուն համադրուած հետապնդումը: Նոր անուն ու ծրագիր երբեք չնուազեցուցին հայ ազատագրական պայքարի անոնց հերոսներուն ու գրական վերածնունդի անոնց լուսաւոր դէմքերուն կերտած շքեղ ժառանգութիւնը: Մկրտիչ Աւետիսեան եւ Մխո Շահէն, Միհրան Տամատեան եւ Արմենակ Եկարեան, Ապահ, Եսայի Եաղուպեան եւ Տիգրան Տամաքեան, Ճիմ Զանգալեան եւ անոնց հազարաւոր զինակիցները, Ռամկավար Ազատական հոսանքներուն ծոցէն ելած՝ բայց անոնցմէ վեր, կը պատկանին ամբողջ հայութեան: Նոյնպէս՝ Արփիար Արփիարեան եւ Լեւոն Բաշալեան, Արշակ Չօպանեան եւ Սուրէն Պարթեւեան, Վահան Թէքէեան եւ Զապէլ Եսայեան, Երուանդ Օտեան եւ Յովհ. Ասպետ եւ անոնց գաղափարակից գրողները, Ռամկավար Ազատական շարժումներուն մէջէն՝ հայ ժողովուրդի ազգային զարթոնքը կերտողներ, մարտական ոգին արծարծողներ եւ զեղարուեստական գրականութեան վերածնունդը յորինողներ եղան, եւ նոր միութեան մը մէջ անոնց համբաւն ու ազդեցութիւնը պիտի չպակսին, այլ առաւել փառքով պիտի փայլին:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան համար պէտք է աւելի դիւրին ըլլայ համախառնուելը սփիւռքահայ մէկ կազմակերպութեան մէջ: Ան շատ կանուխ արդէն որդեգրած էր ընկերվարական դաւանանքը, որ 56 տարիներէ ի վեր կը տիրապետէ Հայաստանի մէջ, ուրեմն Հնչակեաններ կրնան լուծուած նկատել հայրենի երկրին վարչակարգի հարցը: Իսկ սփիւռքի հայութեան մէջ, ուր ամէն գաղութ կ'ապրի տարբեր պետութեան մը հովանիին տակ որպէս քաղաքացի կամ հանդուրժուած գաղթական՝ ընկերային ու տնտեսական վարչաձեւի որեւէ հետապնդում ո'չ իրաւունք, ոչ ալ հնարաւորութիւն ունի գոյութեան:

Հնչակեան Կուսակցութիւնը նշանակելի բաժին մը ունեցաւ հայ ազատագրական պայքարին մէջ, Սասունի, Զէյթունի, Հաճընի եւ ուրիշ վայրերու հերոսամարտներուն իր առաջնորդող մասնակցութեամբ: Եւ անոր անձնուրաց մարտիկները, Ժիրայրէն, Սուրատէն մինչեւ Փարամազ եւ քսան կախաղաններու միւս անվահներ նահատակները՝ հատուածական փառքի իրենց պատուանդաններէն կը բարձրանան եւ հարազատ ու անբաժան մասերը կը դառնան հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան կոիւններուն եւ զանոնք վարող

ազմիկներուն ստեղծած ազգային ժառանգութեան:

Ներկայ Հայկական պետութեան ծնունդի օրէն՝ Հնչակեան Կուսակցութիւնը յարատեւ ջատագով ու մասնակից եղաւ այն բոլոր ձեռնարկներուն, որոնք կը կատարուէին Հայաստանի զօրանալուն ու բարգաւաճելուն նպատակով համար: Իսկ Հայկական Դատին անոր սահմանումը իրապաշտ ու դրական էր, - Թուրքիոյ բռնազրաւած արեւմտահայ հողերը ազատագրել ու միացնել Սովետ Հայաստանին: Հայրենաշինութեան, ներգաղթի, սփիւռքահայ գոյատեւման եւ հայոց հողային իրաւունքներուն հետապնդման համար, նպատակներու եւ գործելակերպի նոյնութիւն կար Հնչակեան եւ Ռամկավար Ազատական կուսակցութեանց ծրագիրներուն միջեւ, որուն շնորհիւ անոնք յաճախ կրցան սերտօրէն համագործակցիլ արտասահմանի տարբեր գաղութներուն մէջ: Հնչակեաններու համար եւս, կը կարծենք թէ դժուար պիտի չըլլայ միանալ մէկ եւ միաձոյլ սփիւռքահայ ազգային քաղաքական կազմակերպութեան մը:

Յայտնօրէն, շատ աւելի բարդ է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պարագան: Անցեալ 50 տարիներուն ան որդեգրած էր ժխտական, յաճախ թշնամական ուղեգիծ մը վերածնած Հայաստանի, էջմիածնի Մայր Աթոռին, եւ Հայկական Դատին ճշմարիտ սահմանումին դէմ: Իրբեւ հետեւանք այդ վարքագծին՝ ան կը հետապնդէր հայրենի իշխանութեան տապալումը եւ Հայաստանի «ազատագրումը Սովետ Միութեան լուծէն», - խօսքով, գիրով եւ հասարակական արարքներով: Եւ որպէս արդիւնք՝ ամբողջ 50 տարի սփիւռքի հայութիւնը մատնուեցաւ բուռն վէճերու, ատելափառ պառակտումներու եւ եղբայրասպան ոճիրներու տագնապներուն ու մղձաւանջին: Անշուշտ հակամարտութեան այդ գոյափոխակիւն մէջ ո'չ միասնականութիւն, ո'չ իսկ գործակցութիւն հնարաւոր էր երկու հակոտնեայ նպատակներու ձգտող եւ իրերամերժ գործելակերպեր որդեգրած հոսանքներու միջեւ:

Սակայն բարեբախտ իրողութիւն մը եղաւ, որ վերջին երկուերեք տարիներու շրջանին որոշ փոփոխութիւն կրեց Դաշնակցութեան դիրքաւորումը Հայաստանի, էջմիածնի եւ սփիւռքահայ միւս կուսակցութեանց հանդէպ: Գաղափարի եւ առաջադրանքի այդ յեղաշրջումը արտայայտուեցաւ տարբեր առիթներով, տարբեր երկիրներու մէջ: Անոր ամենէն յստակ ու բացայայտ բանաձեւումը կատարեց Դաշնակցութեան ներկայացուցիչը Պէյրութի մէջ, Անթրիախի աթոռակից-կաթողիկոսի ընտրութեան եւ օծումին հանդիսութեան առիթով իր խօսած յատկանշական ուղերձով: Ան շեշտելէ ետք կարեւորութիւնը ամէն հայ գաղութի, կ'եզրակացնէր,-

«...Բայց, (այդ բոլորին) հիմունքներուն հիմքը Հայաստան աշխարհն է:

«Ձի'ֆ փրկութիւն Հայաստանէն դուրս:

«Ձի'ֆ փրկութիւն հայ ժողովուրդի միութեանէն դուրս:

«Ձի'ֆ փրկութիւն հայ եկեղեցիի միութեանէն դուրս:

«Եւ այս հիմնականներուն մէջ մնացեալ ամէն նկատում ժամանակաւոր է եւ անցողական: Անանցը, անմահականն ու յաւերժականը մեր հայրենիքն է, իր ներկայով ու լուսաւոր ապագայով»:

Մենք ջերմօրէն կ'ողջունենք այս հաստատումները եւ կ'ուզենք հաւատալ, թէ անոնք պարագայական, «անցողական» տուրք մը չէին օրուան միջավայրին ու միջնորոտին, այլ վերափոխուած համոզումներ կը յայտարարէին: Որովհետեւ այդ նոր ուղեգիծով՝ Դաշնակցութեան համար ալ հնարաւոր կը դառնայ միախառնուել սփիւռքահայ միաձոյլ կուսակցութեան մը, քանի որ նպատակի ու միջոցներու նոյնութիւն մը կը ստեղծէ Ռամկավար Ազատական եւ Հնչակեան հոսանքներու հետ, որոնք աւելի քան 50 տարիներէ ի վեր աշխատած, զոհարեալ ու պայքարած են այդ դաւանանքով եւ նոյն հիմնական առաջադրանքները հետապնդելով:

Դաշնակցութեան երիտասարդ ղեկավարներուն համար դժուար պէտք չէ ըլլայ որդեգրել միութեան գաղափարը եւ նոյնանալ բովանդակին հետ: Անցեալի անոր կարեւոր մասնակցութիւնը հայ ազատագրական պայքարի մեծ ու փոքր հերոսամարտներուն, - Սասունէն ու Վանէն, Բաշ Արարանէն ու Շապին Գարահիսարէն մինչեւ Կիլիկիա՝ ոչինչ պիտի կորսնցնեն իրենց արժէքներէն, այլ առաւել պիտի փառաւորուին, հատուածական պրակներու նեղ էջերէն բարձրանալով հայ ժողովուրդի ազատամարտին ընդհանրական պատմութեան մակարդակին: Եւ Գէորգ Չաւուշ ու Սերոբ Աղբիւր, եւ Քեռի, Նիկոլ Դուման ու Սմբատ ու Մուրատ, Դաշնակցութեան դրօշին տակ կոռուած անվեհեր մարտիկներ մնալով հանդերձ, կը մտնեն հայ ազատագրական պայքարին համաժողովրդական ռազմիկներու փառքին մէջ: Եւ Ա. Ահարոնեան, Վարուժան ու Սիամանթօ, Երուխան ու Ռուբէն Չարդարեան, Ռուբէն Սեւակ ու Լեւոն Շանթ հայ գրականութեան զմայելի երկեր ընծայելուն հետ, չեն դադրիր Դաշնակցութեան անցեալին մաս կազմած ըլլալէ:

Հայաստանի ու հայութեան «ներկան ու լուսաւոր ապագան» սակայն, իրենց կենսական պահանջները, իրենց անխուսափելի վճիռներն ունին: Եւ կը յուսանք որ Դաշնակցութեան երիտասարդ վարիչները իրապաշտ դատողութեամբ ու առարկայական վերլուծումով հետզհետէ պիտի հարթեն միասնութեան ուղին խափանող խոչընդոտները: Անոնք ալ գալիք տարիներուն պիտի տեսնեն ու համոզուին, թէ սփիւռքի մէջ անհրաժեշտ է ստեղծել Հայ Ազգային Ռամկավարական Կուսակցութիւն, ներկայ երեք գլխաւոր հոսանքներուն միաձու-

լումով: Ատոր համար անոնք պէտք է հեռահաս իտէլաներու տեսիլք եւ վերափոխուած գործելակերպի յանդգնութիւն ցուցարբերեն, որոնց, կը հաւատանք թէ լիապէս ընդունակ են իրենք:

Որովհետեւ, եթէ նոր սերունդի Դաշնակցական վարիչները փորձեն աննախապաշար, իրապաշտ դատումով գնահատել սփիւռքահայ մտայլ գոյավիճակը եւ անոր ներկայ ստիպողական կարիքներն ու ապագայ դերը՝ աւելի դիրքին պիտի ընդունին հետզհետէ, թէ՛

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն անունը, նոյնիսկ ազատագրական պայքարի շրջանին համար, սխալ կոչում մըն էր: Յեղափոխութիւնը՝ հայրենի բռնակալ իշխանութիւն մը տապալելու գինուած կոխն է: Մինչ հայ ժողովուրդը իր ազգային ու ֆիզիքական գոյատեւման շարժումը կը վարէր, որ պարզապէս ինքնապաշտպանութեան մաքառում մըն էր: Իսկ հիմա, Հայաստանի երկրին ու հարազատ պետութեան, եւ գաղութահայ տարագիր կացութեան մէջ՝ ամբողջապէս ժամանակավրէպ է Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն անունը, եւ դատարկուած է որեւէ իմաստէ եւ արժէքէ: Թէ՛

Եռագոյնը կարճատեւ շրջանի մը հայ պետական դրօշակ եղաւ, որ չկրցաւ ո'չ մէկ վաստակ ու փառք խորհրդանշել: Ան միայն Կարսի անփառունակ պարտութեան եւ Ալեքսանդրաբոլի ստրկական, անարգ դաշնագրին դէպքերուն կապուած մնաց: Իսկ 1920-ի Նոյեմբեր 29-էն ի վեր՝ ան դարձած է մեռած իշխանութեան մը անկենդան բեկորը, որ սոսկ թշնամանք ու մարտակոչ կը նշանակէ Հայաստանի զօրացող ու բարգաւաճող պետութեան, հոն վերածնած հայութեան եւ անոնց ապրող դրօշակին դէմ: Թէ՛

Մայիս 28-ը, անկախ անոր ծնունդին եղբրական պայմաններէն եւ աղէտալի հետեւանքներէն, պատմութեան անցած թուական մըն է, - ինչպէս անցեալի հայկական շատ աւելի փառապանծ ու յաղթական արքայական հարստութեանց ստեղծումին տարեթիւերը: Որովհետեւ կենսալի, լուսաւոր իրականութեան մը հանդէպ կառչած մնալ անվերադարձ յիշատակներու՝ ո'չ միայն կը նշանակէ նախընտրել մահուան ու խաւարի երէկը, այլ այդ մտայնութեան պատուարը կանգնել հայոց ազգային վերականգնումին ճշմարտութիւնը տեսնելու եւ անոր վրայ ապագայ նուաճումներու շէնքը կառուցանելու հնարաւորութեան դէմ: Թէ՛

Փետրուար 18-ը ողբերգական, ահաւոր վրիպանք մըն էր, հայրենի տարբեր վարչակարգի մը իշխանութիւնը խորտակելու, եւ դաշնակից Թուրքիոյ ջարդարար եաթաղաններուն օգնութեամբ, նախկին նախարարներ իրենց աթոռներուն ու տիտղոսներուն վերադարձնելու համար: Այդ թուականին յիշատակումը, միջազգային եւ պատմական որեւէ սահմանումով՝ միա'կ թելադրանք մը ունի, - որ գայն սո-

նախմբողները դեռ կը սնուցանեն անոր մէջ պարփակուած կործանարար ցնորքը, - ցանկա՛լ, եւ ակնկալել, որ կրկնուի նոր Փետրուար 18-ի եղբայրասպան աղէտ մը, որ ա՛յն ատեն, ո՛չ միայն քանի մը տասնեակ հազար ծաղիկ կեանքերու փճացումը բերաւ՝ այլ մանաւանդ ընդարձակ հողամասերու կորուստին ենթարկեց Հայաստանը:

Կը հասկնանք, որ հիմա անկարելի թուին այնքան հիմնական վերագնահատումներ, երբ տակաւին հատուածական անհոգութիւն դարձած թուականներ, եղելութիւններ ու դէմքեր կոապաշտութեան խորհրդանիշներու վերածած մտայնութիւններ կը տիրեն: Բայց ժամանակն ու պատմութիւնը անողոք, հարթող գլաններ են: Եւ ատենը պիտի գայ, որ անոնք պարտադրեն իրենց դատաստանը: Եւ ամենէն մոլեռանդու կամակոր ընդդիմադիրն անգամ պիտի ստիպուի համակերպիլ ճշմարտութեան եւ ճանչնալ քանի մը բացայայտ իրողութիւններ:

- Որ ճիշդ է, Հայաստան, եւ ամբողջ Սովետ Միութիւնը խաղաղ բնաշրջումով հետզհետէ աւելի լայն քաղաքային ազատութիւններ պիտի ծաւալեն իրենց ժողովուրդներուն մէջ: Բաւական է բաղդատել ներկայ հանդուրժողութեան վիճակը 20 կամ 40 տարիներ առաջ գործադրուող բռնութեանց, տեսնելու համար կատարուած բարեփոխութեանց աստիճանն ու բնոյթը: Կրնայ պատահիլ նաեւ, թէ՛ եւ շա՛տ անհաւանական, որ աւելի հեռահաս յեղաշրջում տեղի ունենայ Սովետ Միութեան, նաեւ Հայաստանի մէջ, վարչաձեւի վերակերտումով: Բայց ի՞նչ արմատական փոփոխութեան այ ենթարկուի Երեւանի հայկական պետութեան կառուցուածքը՝ մէկ իրողութիւն բացարձակօրէ՛ ստոյգ է, - գայն պիտի գլխաւորեն, անոր ընթացքը պիտի ղեկավարեն Հայաստանի ներկայ քաղաքական առաջնորդները եւ մտաւորական դասը: Անոնք իրենք պիտի վճռեն նոր իշխանութեան անունը, եւ պիտի տօնեն անոր ծնունդին նոր թուականը, եւ պիտի կերտեն անոր նոր դրօշակը:

- Որ սփիւռքի մէջ Դաշնակցութեան տօնախմբած թուականները, դէպքերն ու խորհրդանիշները, այլեւս իմաստէ պարպուած կարգախօսներով՝ վերջնականօրէն, անդարձօրէն խզուած են Հայ ազգային ներկայէն եւ ջնջուած են անոր ապագայէն: Հայաստանի վարչակարգին ձեւն ու տարողութիւնը, եւ անոր դաշնակցային կապերուն որակն ու քանակը Սովետ Միութեան հետ՝ մշտապէս կը մնան հայրենի ժողովուրդին, եւ պետական ու մտաւորական առաջնորդներուն անկապտելի, բացարձակ իրաւասութեան մէջ:

- Որ սփիւռքահայ միաձոյլ ու մէկ ազգային քաղաքական կուսակցութեան ստեղծումը կենսական պահանջ մըն է, որ պէտք է գայ անխուսափելի կերպով, թերեւս 15 կամ 20 տարիէն: Զայն կերտելու

ժամանակը պայմանաւորուած պիտի ըլլայ ո՛չ մէկ արտաքին ուժի բաղձանքէն կամ շահերէն: Ան պիտի գայ, երբ դադուլթահայ երիտասարդ սերունդը բիւրեղացած հայրենասիրութեան, քաղաքական հասունութեան եւ գալիքի տեսիլքին պայծառութեան այնպիսի զարգացման մը հասնի, որ կարենայ իր ոգին ու միտքը ձերբազատել նախապաշարումի, աղանդամոլութեան ու ցնցոտած կարգախօսներու կապանքներէն, եւ աշխատանքի, գոհողութեան ու պայքարի իր ծառայութիւնը ընծայէ Հայ ժողովուրդի գերագոյն նպատակներուն հետապնդման գոյամարտին:

Ժամանակը, Հայաստանի մէջ, հրաշագործ դաշնակից մըն է հայութեան համար: Բայց ան մեզի մահացու ոտիս մըն է սփիւռքի մէջ: Եւ ծանր մեղամշում մըն է գայն վատնելը: Տարրական դատողութիւնն անգամ պիտի համոզուի, թէ քանի մը գետակներ, իրարմէ անջատ հոսելով՝ հետզհետէ կը նուազին ծծուելով հողէն եւ շոգիանալով արեւին ջերմէն: Բայց երբ անոնք կը միախառնուին՝ կը դառնան յորդ գետ մը, որ կը թաւալի յաւելեալ թափով ու գորութեամբ, շրջապատի դաշտերը, արտերն ու այգիները ոռոգելով ու պտղաւորելով:

Այդպէս ալ, սփիւռքահայ մէկ ազգային կազմակերպութիւն մը, որդեգրած հայոց քաղաքային իրաւունքներուն ու հողային պահանջներուն դատերը, ամբողջ վերապրող արեւմտահայ ժողովուրդին անունով կրնայ դառնալ անոնց միջազգային պահանջատէրը: Եւ աւելի լայն հեղինակութեամբ կատարել իրեն վիճակուած դերը՝ Արեւմուտքի ռամկապետութեանց, Սովետ Միութեան եւ թուրք դեսպաններու մօտ: Հեռանկարը անկարելի պիտի թուի շատերուն, բայց տակաւին՝ անոր իրագործումը կ'իյնայ մեր հասողութեան ծիրին մէջ: Պայմանով որ անոր մարմին, շունչ եւ ուղեգիծ տալու համար բաւարար հեռահաս տեսիլք, եւ պայծառ իմաստութիւն, եւ անվհատ պայքարի յանդգնութիւն յայտնաբերէ երիտասարդ սերունդը, բայց վա՛ղը, եւ ո՛չ թէ 50 տարիներու անփոխարինելի կորուստէն ետք:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՒԱԳԵԱՆԻ ՅՈՒՅԼԵԱՆԸ

Ապրիլ 14-ին, Նիւ Եորքի մէջ կը սարքուի յորելեանական Հանդէս մը, նշելու համար յայտնի գրագէտ ու քննադատ Յովհաննէս Աւագեանի գրական ու հասարակական գործունէութեան յիսնամեակը: Գնահատանքի այդ հրապարակային ցոյցը կը նախաձեռնուի խումբ մը գրողներու եւ իր ծննդավայր Ակնայ Հայրենակցական Միութեան կողմէ եւ կ'ընծայուի սահմանափակ շրջանակի մը մէջ: Բայց ձեռնարկին խոնարհ բնոյթը չի նուազեցներ նշանակութիւնը երախտագէտ յարգանքի արտայայտութեան, ոչ ալ կրնայ անոր ծաւալը կղպել Հաւաքոյթի սրահին պատերէն ներս: Որովհետեւ մտքի աշխատանքէն բխած լոյսը եւ գրիչի երկունքէն ծնած գեղեցկութիւնը, անոնք ստեղծուին նոյնիսկ ամենէն նեղ ու մոայլ խուցին մէջ եւ Հոսիս ծայրայեղ համեստութեան մը թագուն ակերէն՝ տակաւին իրենց ճառագայթներն ու հմայքը կը սփռեն մինչեւ Հեռաւոր աներեւոյթ հորիզոններու վրայ, մինչեւ Հեռաւոր անձանօթ Հոգիներու մէջ:

Յովհաննէս Աւագեանի կեանքն ու գործը, իրարու հիւսուած ներդաշնակ միութեամբ մը, կը բնորոշուին այդ յատկանիշներով: Յաւակնութիւնը այնքան կը բացակայի իր գրական երկերէն՝ որքան խոնարհութիւնը կը շեշտուի անոր նկարագրին մէջ: Բայց խառնուածքի ու ստեղծագործական ճիգերու այդ խաղաղ մարզին վրայ՝ հայ գրականութեան հանդէպ իր խորունկ պաշտամունքը, անոր անդաստանին մէջէն նոր ու գեղեցիկ արժէքներ յայտնարեւելու իր Հեղուիրումը եւ անոնց որոնումին ու ներբողումին ընծայուած իր սրտին ու գրիչին խանդավառութիւնը կը բացուին գունազեղ ու բուրաւէտ ծագիկներու պէս:

Հանրային ծառայութեան ասպարէզին մէջ Յովհ. Աւագեան մտած է իբրեւ ուսուցիչ, ամենէն ազնուական ու դժուարին կոչումը ժամանակի մը մէջ՝ երբ դպրոցական գրասեղաններուն վրայ կը դարբնուէր հայ ժողովուրդին ազգային վերածնունդն ու քաղաքական ճակատագիրը: Յետոյ, շուրջ քառասուն տարի ան վարեր է «Հայաստանի Կոչնակ»ի գրական խմբագրի պաշտօնը, կարճ շրջան մը «Ազգ»ի խմբագրական կազմին մէջ աշխատելէ ետք: Գրականութեան համար իր անմար սէրը, զգայուն ճաշակի մը նպաստով, Հնարաւոր դար-

ձուց, որ «Հայաստանի Կոչնակ»ը, իր կրօնական-բարոյական տարազին վրայ հագնի նաեւ գրական-գեղարուեստական ծիրանին: Եւ հայ գրականութեան ու արուեստներու ամենէն յայտնի ու տաղանդաւոր մշակներ, արձակ կտորներով ու քերթուածներով եւ քըննադատական վերլուծումներով ու բանասիրական յօդուածներով՝ թերթը բարձրացուցին ծաւալուն հմայքի եւ ազդեցութեան պատեանդանին:

Սակայն տարակոյս չկայ, թէ Յովհ. Աւագեանի զլխաւոր արժանիքները կը յայտնուին իր գրագէտի ու գրադատի ասպարէզներուն մէջ, որոնցմէ հրապուրուած էր զեռ պատանեկան տարիներէն եւ որոնց փարած մնաց առաջին, ջերմեանդ սէրերու սրտառուչ հաւատարմութեամբ: Իր արձակներն ու պատմուածքները, իրենց տարագով ու բովանդակութեամբ, կը վկայեն խղճամիտ, բծախնդիր գրողը Աւագեանի մէջ: «Այսպէս Ապրիլեան» հատորը բաղկացնող կտորներու լեզուն ան յղկեր է խստապահանջ խնամքով եւ կազմեր է պարզ ու գեղեցիկ ոճ մը, որ երբեմն կը բարձրանայ քնարական թըռիչքներու: Անոնց պատմած պատահարներուն ամենէն տիրական տարրը՝ յորդ ու անկեղծ յուզումն է, որ կ'արտայայտուի անձնական ու ընտանեկան ողբերգութիւններէ վարնուած կամ թշնամիէն հալածուած ու նահատակուող հայ մարդոց ու կիներու առօրեայ ապրումներուն մէջ:

Իր գրական գործունէութեան մեծագոյն բաժինը՝ Յովհ. Աւագեան արձանագրած է գրադատական մարզին մէջ: Սրտազեղ համակրանքով եւ անկողմնակալ դատումով՝ ան գրական վերլուծումներ կամ գրախօսականներ տուած է նախորդ ու ներկայ սերունդներու գրեթէ բոլոր յայտնի գրագէտներուն, անոնց կեանքերուն ու գործերուն մասին: Բարութիւնն ու սէրը իր նկարագրին տիրական տարրերն ըլլալով՝ ան խուսափեր է հարթելու կամ կործանելու բացասական հակումներէն: Մատնանշելով հանդերձ իր գրադատած հեղինակներուն վաւերական կամ սկսնակ, վրիպումներն ու թերութիւնները՝ ան առաւելապէս ձգտեր է փնտոել, գտնել ու բացայայտել անոնց ինքնայատուկ արժանիքներն ու տաղանդի բնորոշ գիծերը, անոնց վարպետութիւնն օգնելու ցանկութեամբ:

Աւագեանի գրադատական այդ ուսումնասիրութեանց մէկ մասը հրատարակուել է «Գրական Դէմքեր» հատորին մէջ, որ արժէքաւոր նպաստ մը կը մնայ արեւմտահայ գրական քննադատութեան: Բացմաթիւ ուրիշ գրախօսական յօդուածներ ցրուած են «Հայաստանի Կոչնակ»ի եւ այլ պարբերաթերթերու էջերուն վրայ: Աւագեան ունի նաեւ ընդարձակ վերլուծական մը, «Աւետիս Ահարոնեան», նուիրուած անոր կեանքին ու գրական գործունէութեան, որ տը-

պագրուեցաւ իբրեւ գիրք, անոր յորելեանին առիթով:

Գեղապաշտի իր խանուածքին զրդումով՝ Աւագեան նոյն եռանդով ու խանդավառութեամբ իր սիրտն ու գրիչը բաշխեց է արուեստի միւս սեռերու ծանօթացումին: Ան գրեց է թատրոնի ու պարի եւ նկարչութեան ու երաժշտութեան մասին, որոնց մէկ շարքը հրատարակուեց է «Նշանաւոր Օրերաներ» հատորին մէջ:

Յովհաննէս Աւագեան հին սերունդի մարդ է, տարիքով եւ ըմբռնումներով: Ան տակաւին իբրեւ ազնիւ անաքինութիւններ կը դաւանի բարին, ճշմարիտն ու գեղեցիկը: Ամբողջ յիսուն տարի ան ջերմեռանդ հաւատքով նուիրուեցաւ գեղեցիկի որոնումին ու փառաբանութեան: Եւ յամառօրէն սիրեց ճշմարտութիւնը. բայց եթէ զայն չաղաղակեց բարձրաձայն՝ թերեւս այն երկիւղով էր, թէ այդ արարքը պիտի ցաւցնէր սուտի ասպետները, ուրեմն պիտի բախէր Բարիին: Այդպէս է Աւագեան մարդը, - հեզ ու շէնշող, խոնարհ ու փափկանրկատ, որ երբ իր կարծիքները կը յայտնէ ազատ յորդումով մը, գրական կամ ազգային խնդիրներու շուրջ՝ կը վարանի եւ ներողութիւն խնդրելու արտայայտութիւն մը կ'առնէ, երբ կը նկատէ թէ կը բողոքէ կամ կը նեղուի դիմացինը, - բայց առանց իր համոզումէն ընկրկելու:

Հարկաւ կարելի է քննադատել Աւագեանի գրական գործունէութեան մէկ կամ միւս գիծը: Բայց կարելի չէ չգնահատել անոր յիսուն տարիներու տքնաջան, նուիրեալ ճիգերուն բազմակողմանի վաստակը: Կարելի է անշուշտ տարակարծիք ըլլալ Աւագեանի, անոր այս կամ այն գաղափարին շուրջ: Բայց կարելի չէ խորապէս չյարգել զայն, իր խանդավառ հայրենասիրութեան, իր մտաւորական պարկեշտութեան, իր ազնուական խոնարհութեան մէջ: Եւ նիւ Երբքի յորելեանական հանդէսը՝ անոր գործին ու նկարագրին արժանիքներուն ու յատկանիշներուն մէկ համեստ ճանաչումն է միայն, - երախտագիտութեան ու գնահատանքի տուրք մը կէս դարու գրական ծառայութեան համար:

“THE TERRIFIC TURK”

Այս փաղաքշանք, նոյնիսկ հիացում արտայայտող խորագիրը կը պատկանի «Քրիսչըն Սայընս Մոնիթըր»-ի մէկ խմբագրականին (Դեկտ. 8 թիւի), նուիրուած Թուրքիոյ, անոր մայրաքաղաք Անգարայի մէջ նախագահ Այզընհաուրըի ընծայուած ջերմ ընդունելութեան առիթով: Եւ կը խոստովանինք թէ ընթերցումը մեզ համակեց դառն հիասթափումով, խորունկ վշտով եւ տրտում ընդվզումով: Որովհետեւ մենք ճանչցեր ենք «Քրիսչըն Սայընս Մոնիթըր»-ը իբրեւ հանրային կարծիքի ճշմարտախոյզ առաջնորդ մը, որուն դաւանած վսեմ գաղափարներն ու բարոյական սկզբունքները ո՛չ կը կաշառուին վաղանցիկ նկատումներու խայծերէն, ոչ ալ կ'ապականին փութկոտ ու մակերեսային դատաստաններու մոլորանքէն:

Բայց այդ անբացատրելի խմբագրականը, ձօնուած Թուրքիոյ եւ Թուրք ժողովուրդի սրտագեղ ներբողումին՝ խորապէս ցնցեց մեզ եւ մեզի հետ՝ պիտի գայթակղեցնէ ամէն հայ եւ յոյն, ամէն սերպ ու պուլկար, ամէն արար եւ քիւրտ, որոնք դարերով ապրեր ու տուայտեր են, հալածուեր ու ջարդուեր են օսմանեան բռնակալութեան արիւնոտ գարշապարին եւ եաթաղանին տակ, անցեալ հինգ հարիւր տարիներու շրջանին:

Ժիշդ է, որ նախագահ Այզընհաուրը նոյնքան գեղուն դրուատիրքով խօսեցաւ Թուրքերու մասին: Իբրեւ թէ անոնք իրենց քաջութեամբ եւ կորովով նոր պետութիւն մը հիմներ են Մուստաֆա Քեմալի ղեկավարութեամբ եւ զայն պաշտպաներ են արտաքին յարձակումներու դէմ եւ մեծ հռչակի հասեր են, որուն արժանի են, որովհետեւ, ո՛վ հեզանք, հոգեկան չքնաղ մեծութեամբ օժտուած են անոնք եւ ուսմկավարական գաղափարներու ախոյեան են դարձեր: Եւ, «ոչ մէկ գորութիւն աշխարհի վրայ, ոչ մէկ շարիֆ, ոչ մէկ սպառնալիք կրնայ օախողանքի մատնել ձեր ոգիով ժողովուրդ մը», յայտարարեց նախագահ Այզընհաուրը: Եւ մոռցա՛ւ յիշել, թէ ամբողջ արեւմտեան Հայաստանը, իր 3000 տարուան անցեալով հայկական՝ տակաւին կը մնար նոյն Թուրքիոյ կրունկին տակ:

Սակայն ան Անգարայի մէջ իրեն ի պատիւ սարքուած ճաշկերոյթի մը կ'արտայայտուէր հիւրընկալներու մասին: Ան դիւանագիտա-

կան չըջապտոյտի մը ելեր էր դաշնակից պետութեանց այցելելու եւ քաղաքական ու տնտեսական կնճիռներ հարթելու: Եւ ճշմարտութեան, ազատութեան ու արդարութեան սկզբունքները տարրերը չէին կազմեր իր առաքելութեան ու դերին, - որովհետեւ անոնք, Մաքիավէլիի բանաձեւումով՝ վտարուեր են միջազգային յարաբերութեանց ասպարէզէն:

Տարբեր է եւ անհունօրէն վեհ ու ազնուացուցիչ է մամուլին կոչումը, հանրային գիտակցութիւնը լուսաւորելու եւ զայն բարոյական ըմբռնումով բարձրացնելու պաշտօնին մէջ: Մանաւանդ՝ «Քրիսչըն Սայընս Մոնիթըր»ի համբաւով թերթի մը պարագային, որուն անունն իսկ կազմուած է քրիստոնեայ եւ գիտութիւն բառերով, որոնք ճշմարտութեան եւ կատարելութեան բիւրեղացած իտէպլին հետ՝ գիտութեան լոյսին ստուգութիւնը կը միախառնեն:

Եւ ի՞նչ է ստոյգն ու ճշմարիտը Թուրքիոյ մասին: Երբ խմբագրականը, անհաւատալի սայթաքումով մը, խառնուածքի եւ նկարագրի նմանութիւն կը վկայէ ամերիկեան եւ թուրք ժողովուրդներուն միջեւ՝ չ'անդրադառնար, թէ ամենէն ահաւոր նախատինքը կը շարժէ ազատութեան այս օրրանին եւ զայն կերտող փառապանծ ազգին դէմ: Որովհետեւ ամերիկացին ձեռներէց եւ վեհանձն է, լայնախոհ ու խաղաղասէր է, ստեղծող եւ բաշխող է: Մինչդեռ՝ թուրքը ծոյլ ու մոլեռանդ է, յափշտակիչ ու քանդող է, ջարդարար ու մակարոյծ է, - ապացոյց՝ իր տակաւին նպաստընկալի թշուառ վիճակը, հակառակ ամերիկեան միլիտառար տոլարի օգնութեան:

Իրա՞ն թուրքը ձեռքազատ է մոլեռանդութենէն, որ կը բխի մահմետական կրօնէն, ինչպէս կը սահմանէ խմբագրականը: Բայց միջին եւ Մերձաւոր Արեւելքի բոլոր ժողովուրդները, որոնք դարերով հեծեր են օսմանեան դաժան բռնակալութեան տակ՝ գիտեն իրբեւ բացարձակ ստուգութիւն, թէ թուրքը ամենէն անհանդուրժող, մոլեռանդ ուրեմն, իր հպատակները կողոպտող ու կոտորող ազգը եղեր է բոլոր մահմետական երկիրներուն՝ մէջ: Արաբներ, որոնք իսլամական կրօնը ստեղծեցին ու տարածեցին՝ համաշխարհային մշակոյթին մատուցին նշանակելի նպաստներ գրականութեան, գիտութեանց եւ ճարտարապետութեան մարզերուն մէջ:

Մինչդեռ Թուրքիա՞ն, - 1453-ին Կոստանդնուպոլսոյ գրաւումով՝ բիւզանդական փարթամ կայսրութեան տիրացաւ, որ կեդրոնն էր այն դարաշրջանի քաղաքակրթութեան ու մշակոյթին: Բայց միայն խաւարը, աւերումն ու արիւնհեղութիւնը ծաւալեցան մահիկի յառաջխաղացքին հետ, օսմանեան հորդաներու եաթաղաններուն փայլով: Կովկասէն մինչեւ հիւսիսային Ափրիկէ եւ մինչեւ Պալքանները՝ թշուառութիւն, կործանում ու մահ սփռեցին անոնք: Ի գուր չէր, որ

Վիգտոր Հիւլօ եղբերական փոստանքով ըսաւ. - Թուրքիա՞նն են անցեր ասկէ...: Եւ Լորտ Պայրըն, մեծ բանաստեղծը դարձաւ մարտիկ մը եւ նահատակ մը Յունաստանի անկախութեան պատերազմին մէջ՝ նոյն արիւնազանգ թուրք բռնատիրութեան դէմ: Եւ պուլկարներն ու սերպերը, ալպանացիներն ու արաբները, հայերն ու քիւրտերը միլիոնաւոր զոհեր տուին թրքական մողոքին, զանգուածային գերութեան, թալանի, բռնարառումի եւ սպանդի սարսափներուն դէմ ընդվզելուն համար:

Կլատստոնի եւ Գլեմանսոյի, Ճէյմս Պրայսի եւ Մորկընթոյի, Անաթոլ Ֆրանսի եւ դեսպան Ճերըրտի, ամերիկացի բազմաթիւ միսիոնարներու եւ նախագահ Ուիլսընի (որ Թուրքիոյ կողմէ յափըլտակուած Հայաստանի ազատագրման սահմանները գծեց) վաւերական վկայութիւններով թուրքը «կարմիր մարգասպան» էր, «հիւանդ մարդ» էր, բռնակալ, հրձիգ եւ փոքր ազգերու դահիճ էր: Թո՛ւրքը, որ ամբողջ 500 տարի Եւրոպայի կողքին ապրելով ու անկէ սնանելով հանդերձ՝ գեղարուեստական, գիտական, ճարտարարուեստական, նոյնիսկ մարդկայնութեան մարգերուն մէջ մանանելի հատիկի մը չափ չէ կրցեր մասնակցիլ համամարդկային քաղաքակրթութեան:

Հի՞ն պատմութիւն, - բայց Աթաթուրք Քեմալն էր, որ իզմիրի մէջ վայրագ գազանութեամբ կոտորեց հարիւր հազարաւոր յոյն ու հայ անմեղ կիներ ու մանուկներ: Որ արշաւեց Հայաստանի վրայ եւ 50,000 հայեր եւս ջարդեց Կարսի եւ Արտահանի մէջ, - կարծես բաւական չէր 1915-ի գարհուրելի եղեռնով իրենց նահատակած մէկ ու կէս միլիոն հայերու ոչնչացումը, - որպէսզի ընդմիշտ եւ ամբողջապէս յափշտակէր հայկական հողամասերը: - Ցեղասպանական առաջին ոճիրը, որուն յետոյ հետեւեցաւ նացի բարբարոսեան պարագլուխը Հիթլէր, երբ յայտարարեց, թէ դաշնակիցներ շուտով մոռցեր էին հայկական կոտորածները, եւ երկար պիտի չյիշէին հրեաներու սպանդը...:

Պրնանք հասկնալ քաղաքական հարկադրանքներու կարիքը: Պետական բաժանմունքը կրնայ անտեսել այն պերճախօս իրողութիւնը, որ Թուրքիան առաջին մեծ պատերազմին կամաւոր զինակիցն էր կայսերական Գերմանիոյ, դաւաճանելով դաշնակիցներուն: Եւ վերջին ահաւոր պատերազմին՝ ներկայ «հանրապետական», «ազատասէր» Թուրքիան հոգիով ու մտքով զինակից էր Հոռմ-Պերլին Առանցքին եւ իր բանակները կեդրոնացուցեր էր Կովկասի ճակատին վրայ, անձկութեամբ սպասելով Ստալինի կրատի անկումին, արշաւանքի ձեռնարկելու համար ռամկապետական երկիրներուն դէմ, - վկա՛յ նախագահ Ռոզվելթի եւ Չրրչիլի դառն մեղադրանքները:

Իսկ աւելի թարմ են 1955-ի Սեպտ. 6-ի գիշերուան գազանային յարձակումները Պոլսոյ եւ Իզմիրի յոյն, հայ եւ հրեայ համայնքներուն վրայ, Կիպրոսի վրէժին առիթով (ՆԱԹՕ-ի իր դաշնակից Յունաստանի դէմ) երբ անոնց միլիտաւոր ոսկիի ապրանքները փճացուցին, խանութները հրդեհեցին եւ յոյն հոգեւորականներ փողոցներու մէջ մորթագերծ ընելով մորթեցին... , ատիլայական վանատուրիեամբ... :

Ահաւասիկ ճշմարիտ, հարազատ Թուրքիան եւ թուրքերը Պոլսոյ անկումէն մինչեւ այսօր, - եւ ոչ թէ մտացածին պատկերը, որ հերոսի պսակով կը զարդարէ անարգ դահիճի ճակատը :

1959

Մանօք. Խմբ. - Այս խմբագրականին անգլերէն թարգմանութիւնը, մասնաւոր նամակով մը, անցեալ շաբթուն զրկուեցաւ «Քրիսչըն Սայրնս Մոնիթըր»ի, խնդրելով որ հրատարակէ զայն պատմական ճշմարտութեան, ինչպէս նաեւ անիրաւուած ազգերու արդարութեան համար : Մամուլի ազատութեան դաւանանքը լոյս չընծայեց զայն : Բայց թերթին գլխաւոր խմբագիրը բացատրական ընդարձակ նամակ մը զրկեց «Պայլար»ի խմբագրին, ցաւ յայտնելով, որ «Մոնիթըր»ի խմբագրականը Թուրքիոյ մասին գրուած էր պատմական դէպքերու անտեղեակ խմբագրի մը կողմէ, որ մեր գիտողութիւնները ճիշդ ու բանաւոր էին : Բայց տակաւին իրենք չէին կրնար հրատարակել մեր պատասխան-խմբագրականը, որովհետեւ ատիկա համերաշխ չէր Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքականութեան... : Եւ տակաւին գիմում կ'ընէր մեր «վեհանձնութեան», որ մենք ալ չհրատարակենք իրենց մեզի ուղղած նոյնիսկ բացատրական նամակը եւ մենք անոնց փափաքը յարգեցինք «վեհանձնօրէն»... :

Ա. Ա.

ՄՇԱԿՈՅԹ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄ

Անտարակոյս, որ իր էութեամբ ու հետեւանքներով՝ պատերազմը ամբողջական, եղեռնական ժխտումն է մշակոյթին : Անոնք յաւիտենական անհաշտ թշնամիներ են, որոնք կ'աճին ու կը զարգանան հակամարտ պայմաններէ սնանելով ու կը ծնանին բոլորովին հակոտնեայ արդիւնքներ : Եւ զանոնք բաժնող անյատակ անջրպետը տակաւին ոչ մէկ մարդկային երեւակայութիւն յաջողեր է կամրջել : Բռնուած մահացու գօտեմարտի մը մէջ՝ անոնք լծուեր են յաւերժական պայքարի մը ուր մէկին վերջնական յաղթանակը պայմանաւորուած է միւսին բնաջնջումով, - մէկին յաղթութեան պատուանդանը միւսին խորտակուած բեկորներովը միայն կրնայ կառուցուիլ :

Ռազմադաշտերու վրայ շողացող աղեղն ու կապարճը եւ նիզակն ու զրահը, եւ որոտացող հրացանը, զնդացիրն ու թնդանօթը եւ հրասայլն ու սաւառնակը միայն հնարքներն են յեղաշրջուող ժամանակներու, որոնց պաշտօնը «թշնամիին» արագ ու լրիւ փճացումն է եղած միշտ : Եւ պատերազմը, փոփոխուող դարաշրջանները խորհրդանշող սպանութեան ի'նչպիսի գործիքներ ալ որդեգրէ՝ նոյն կործանող ու ոչնչացնող զօրութիւնն է, որ անողորմ եւ անյագ վիշապի մը պէս կը բզկտէ, կը շքացնէ նիւթական ու ֆիզիքական ամէն գոյութիւն, - հիւղ ու քաղաք, մարդ ու ծառաստան, կենդանի եւ մարդ, որոնք կ'իյնան անոր բարբարոս գարշապարին ներքեւ : Ան նաեւ հրաշունչ խորշակ մըն է, որ խանձելով կը խամբեցնէ մտաւորական ազնիւ երկունքներու եւ հոգեկան վսեմ ներշնչումներու ջերմութեան մէջ ծլարձակուած ամէն բուրումնաւէտ ծաղիկ : Պատերազմը անողոքելի ոստիւն է իմացական լոյսին, որ կը ծնի անոր մթազնած կամ ճնշուած մէկ պահուն ու յետոյ կը ձգտի մարել զայն, թշուառութիւն եւ մահ սփռող իր տիրապետութիւնը ամրացնելու համար :

Մինչ մշակոյթը բաղադրուած ընդհանուր գումարն է ժողովուրդի մը մտքին ու խղճին դարաւոր նուաճումներուն : Աննիւթական բայց հրաշագոր ոգին է ան, որ կախարդական ու մշտափառ փարոսի մը պէս կը կանգնի ազգի մը հաւաքական նայուածքին եւ երեւակայութեան առջեւ, անոր տեսիլքին մթապատ, քարքարուտ ճամբան լուսաւորելով : Ան ստեղծագործ ուժն է, տիեզերական ու յարաճուն,

որ իբր արմատները կը մխրճէ ժողովուրդի մը լեզուին, աւանդութիւններուն, գրականութեան, արուեստներուն, գիտական եւ ընկերային յառաջդիմութեան ածուներուն մէջ, - իր սնունդը քաղելով անոնցմէ եւ արգասաւորելով զանոնք, - եւ անոր քաղաքական ճակատագիրն ու պատմութիւնը ձեւելով: Մշակոյթը յօրինող, ծնող, ապրեցնող զօրութիւնն է մարդկութեան համար, - ան կենսաբաշխ արիւնն է, բուրոզ ծաղիկը եւ դալարագեղ հովիտին ծոցէն կարկաչող առուակն է, խաղաղութեան երանութեամբը ճարճատող ընտանեկան օճախն է, մտքին լոյսը եւ բարբախող կեանքն է ան, որ կը հակադրուի պատերազմի ահաւոր փլուզումներուն, անթափանց խաւարին ու համատարած տառապանքին եւ մահուան:

* * *

Ո՞րքան ճշգրիտ եղան պատերազմի եւ մշակոյթի այս սահմանումները: Թերեւս նիւթապաշտ ներկայ աշխարհին մէջ՝ ուր գործը եւ իրողութիւնները անվիճելի գերակշռութեամբ մը կը տիրեն գաղափարի ուժին վրայ, անոնք անհաւասար երեւին իրենց յարաբերական ազդեցութիւններով: Բայց առանց այդ մերձեցումին՝ գուցէ անբացատրելի պիտի մնային պատմութեան ամենէն բախտորոշ ճակատամարտները: Որովհետեւ անհեթեթ պիտի ըլլար հաւաստելը, թէ աստուածներ իրենց աներեւոյթ եւ անխոցելի վահաններով կը հովանաւորէին Միլիթատէսի Յոյները՝ Մարաթոնի, Վարդանի Հայերը՝ Աւարայրի, Շարլ Մարթէլի Ֆրանկները՝ Փուաթիէի, Ալեքսանտր Նիվըսկիի Ռուսերը՝ Իմէն Լճին, Ուաշինկթընի Ամերիկացիները՝ Թրէնթոնի, Տիւմուրիէի Ֆրանսացիները՝ Վալմիի, Ուէլինկթընի Անգլիացիները՝ Վաթերլոյի, Վորոյիլովի եւ Ժուկովի խորհրդային լեգէոնները Լենինկրատի, Մոսկուայի եւ Ստալինկրատի ռազմադաշտերուն վրայ:

Նիւթական արժէքներու եւ հարստութեանց սէրը, որքան ալ բուռն դառնայ, անգոր է անհատը բարձրացնելու մինչեւ յօժարակամ ինքնուրացում եւ ժողովուրդները վերացնելու մինչեւ դիւցազնական խոյանքներ եւ յաղթանակ, ահաւոր եւ անհաւասար մարտնչումներու մէջ: Եւ այն խորհրդաւոր ուժը, որ հոգի, կրօնքի եւ նոյնիսկ անկախութեան կարգախօսներու հմայքով արեցուց լաւագոյն ապագայի մը մարտիկները, զրահեց զանոնք հերոսական անձնուրաց ոգիով եւ ներշնչեց սքանչելի արարքներու՝ աւելի խոր ու սրբազան ազդիւրներէ կը բխէր:

Ապրելու նոր ու տարբեր կերպի մը ընտրութեան ազատութիւնն էր որ կը պաշտպանէին անոնք, անբռնարարելի եւ համապարփակ

իրաւունք մը, որ կ'ընդգրկէ մարդոց ֆիզիքական ու մտաւորական գոյութեան բոլոր պայմանները, - ընկերային, կրօնական, ազգային, տնտեսական, քաղաքական, համամարդկային - որոնք առանձին տարրերը կը կազմեն ինքնուրոյն մշակոյթի մը, որուն հարազատ յատկանիշներն են, որ կը բնորոշեն կեանքի կերպերու տարբերութիւնները:

Ճշմարիտ է, թէ յաճախ կռուող երկու կողմերն ալ գերազանց մշակոյթներու դրօշակակիրները կը հռչակեն իրենց բանակաները: «Նոր կարգեր»ու միահեծան տիրապետութիւնը հուրով ու սուրով տարածելու փառասիրութիւնը Հիթլէրի եղեռնագործ գանկին մէջ չծնաւ առաջին անգամ, - Աւստրիացի ձախողած ներկարարը միայն արդիացուց գայն, անոր հին գործիքները՝ զրահն ու նիզակը փոխարինելով հրասայլով ու սաւառնակով: Յազկերտ Բ. ալ կախարդուած էր Հայաստանը կրակապաշտութեան «նոր կարգեր»ու բոցերէն «լուսաւորելու» մեծամոլ ցնորքէ մը, մինչեւ որ Աւարայրը պայթեցուց գայն: Այդպէս. ընդհարող երկու կողմերն ալ կը դաւանին մշակոյթ: Բայց նախադրձակ պետութիւնը, աւերումի եւ սպանութեան հեղեղատ-պատերազմը շղթայազերծելու իր արարքովն իսկ, իր սահմաններուն մէջ շիջուցած կ'ըլլայ իրական մշակոյթին լոյսն ու զօրութիւնը:

Մեր ժողովուրդի ճակատագրին վճռականօրէն ազդող երկու մեծ պատերազմներ, - Գերմանիոյ յարձակումը Խորհրդային Միութեան, ուրեմն եւ Հայաստանի վրայ եւ Յազկերտի մեծագոր Պարսիկ բանակին արշաւանքը հպատակ Հայաստանի դէմ - պերճախօս ապացոյցներ կ'ընծայեն մշակոյթի յաղթանակին համար:

* * *

Նացիներ, իրենց արբանեակներով, անհամեմատօրէն գերակշիռ զօրութեամբ խուժեցին Կարմիր Բանակին դէմ եւ հակառակ Կէօպէլզի ջղազար կանչերուն, թէ «քայքայած ու բնաջնջած» են գայն՝ ի վերջոյ պիտի ջախջախուին խորհրդային զօրքերուն, գործաւորներուն, հաւաքատնտեսականներուն եւ շինականներուն դիմադրութեան ամբարտակին առջեւ:

Ո՞ւր է սակայն մշակոյթին դերը այդ իրողութեան մէջ: Հո'ն, որ ապահովարար Գերմանիա պիտի չկրնար կազմել իր վայրագ հորդաները, եթէ նախապէս խեղդամահ սպաննած չըլլար մշակոյթը: Հիթլէր ճարճատող վիթխարի խարոյկներ վառեց Հայնէի, Շիլլէրի, Կէօթէի եւ ուրիշ Գերմանացի կամ ամենազգի հանճարեղ զրագէտներու երկերէն, որոնք ճշմարտութեան եւ ազատութեան վսեմ ու փրկարար

ուժը կը փառաբանէին սրտառուչ գեղեցկութեամբ մը, հմայելով մարդոց հոգիները եւ զանոնք որպէս ձերբազատ մտքի ախոյեաններ ըմբոստացնելով բռնակալութեան մահաճոտ մականին դէմ: Ֆաշիստ երկիրներէն աքսորուեցան գրողները, գիտնականները, արուեստագէտներն ու դաստիարակները, որոնք կը մերժէին մարդկային հոգին շղթայել նացիզմի արիւնթաթախ գարշապարին եւ ստրկութեան քայքայումին վաճառել իրենց էութիւնները: Եւ մշակոյթին լոյսը խեղդուեցաւ բռնութեան, տգիտութեան եւ ատելութեան խաւարէն, որ սերունդ մը այլասերեց եւ անարգ մարդասպաններու վոհմակ մը արձակեց զրացի ժողովուրդներու վրայ՝ թալանելու, աւերելու, ջարդելու համար:

Մինչ Խորհրդային Միութեան մէջ՝ ծաղկող մշակոյթը իր համապարփակ ազդեցութիւնը տարածեր է ժողովուրդներուն վրայ: Ֆաշիստ երկիրներու մէջ այրուած գրքերը միլիոններով կը սպազբուին ու կը սպառին հոն, աքսորական գրագէտներ եղբայրաբար կը հիւրընկալուին ու կը ստեղծագործեն հոն եւ մեծերու արձանները հպարտօրէն կը կանգնին մատենադարաններու, թատրոններու, թանգարաններու մէջ եւ այլուր: Միութեան Գերագոյն Խորհուրդը (Խորհրդարանը) գիտնական, վիպասան, բանաստեղծ, դերասան, երաժշտագէտ, նկարիչ, բժիշկ, դաստիարակ բազմաթիւ անդամներ ունի, որոնք ընտրուած եւ հոն զրկուած են զիրենք խանդակաթօրէն սիրող եւ երկիւղածօրէն յարգող զանգուածներէն:

Խորհրդային յեղափոխութեան մեծագոյն նուաճումները գործարաններու, ելեկտրակայաններու, ջրանցքներու եւ քաղաքներու կառուցումները չեն հաւանաբար: Իրական յաղթանակը՝ ստեղծումն ու ներգործութիւնն եղաւ մշակոյթի մը, որ հնարաւոր դարձուց այդ բոլոր իրագործումները եւ բազմացեղ ու բազմալեզու ժողովուրդներ վարակեց լուսաւոր ապագայի մը տեսիլքին հաւատքով: Մշակոյթ մը, որ իր ներկայի պարգեւներով եւ գալիքի խոստումներով յաջողեցաւ սրտայոյզ հաւատարմութեամբ, խիզախ քաջութեամբ եւ անձնուրաց նուիրումով ներշնչել 190,000,000 մարդիկ ու կիներ, ծերեր ու մանուկներ, որոնք անվեհեր խոյանքով նետուեցան իրենց նոր ապրելակերպին, - մշակոյթին պաշտպանութեան մարտին մէջ: Միայն մշակոյթին ընծայած իմացական ու բարոյական զօրութիւնը կրնար մարդիկ զինել մահուան հանդէպ այն արհամարհանքով՝ որով լեցուած՝ խորհրդային զինուորը, կիներ, գործաւորը, ծերունին, ուսանողը միասնաբար ծառայան նացի բարբարոսութեան վոհմակներուն դէմ:

Մշակոյթի յաղթանակը պատերազմին վրայ:

Ահա նաեւ Հայկական Աւարայրը, ուր մեր նախահայրերը ոչ իսկ անկախութիւն կամ հայրենիքի ազատութիւնը ունէին պաշտ-

պանելու,- Պարսիկները արդէն խլեր էին երկուքն ալ ու կը տիրապետէին միահեծան:

Ի՞նչ զօրութիւն էր ուրեմն, որ մինչեւ ինքնուրացում, մինչեւ նահատակութիւն մղեց Հայոց փոքրաթիւ գունդերը, սպարապետ Կարմիր Վարդանով եւ եկեղեցական հայրերով, դիմագրաւելու Պարսից ահարկու բանակը, այսինքն ստոյգ մահը: Ֆիզիքական կամ նիւթական ինքնապաշտպանութեան կա՞մքը: Բայց անոնք սիրայօժար կը հրաժարէին աշխարհային ամէն հարստութենէ, իսկ Աւարայրի վրայ՝ զիտակցաբար ողջակիզելու կ'երթային իրենց կեանքերը:

Ուրեմն ի՞նչ էր որ կ'ուզէին պահել: Ի՞նչ ուժ էր, որ մահուան դառնութիւնը կը քաղցրացնէր անոր համար: - Քրիստոսի կրօնը, աւանդեր են մեզի դարերու խորերէն: Անշո՛ւշտ: Սակայն լրիւ պատասխանը չի թուիր այդ: Չէ՞ որ կրօնը, ինչպէս լեզուն, գրականութիւնը, աւանդութիւնն ու պատմութիւնը տարրերն են ազգային մշակոյթի հիմերուն, յարկերը կամ որմերն են անոր շէնքին: Որովհետեւ կրօնական պատերազմի սրբազան կարգախօսին տակ՝ Վարդանանք մարտնչեցան իմացական, հոգեկան ու բարոյական նոր եւ ինքնուրոյն ապրելակերպի մը պաշտպանութեան համար: Խղճի եւ մտքի ազատութեան առաջին ճակատամարտը հանդիսացաւ ան, ռամկավարութեան առաջին մեծ յաղթանակը ատրուշանով, մահիկով կամ կեռխաչով խորհրդանշուող որեւէ բռնակալութեան դէմ: Աւարայրը կրնա՞ր գոյութիւն ունենալ Հայ տառերու գիւտէն, Մեսրոպէն ու Սահակէն եւ անոնց առաքելատիպ աշակերտներէն առաջ, նախ քան ծաղկումը Ոսկեդարու Հայ փառաշուք մշակոյթին, թող երեւակայէ, ով որ կը փափաքի: Բայց իրողութիւնը կը մնայ, թէ ան, Աւարայրի հերոսամարտը՝ հարազատ, դիւցազնական զաւակն եղաւ այդ մշակոյթին:

Պատերազմը խաւար է եւ մահ: Մշակոյթը լոյս ու կեանք է: Մին կրնայ բնաջնջել միւսը: Շա՞տ խոր իմաստութիւն է պէտք, անսխալ ընտրութիւն մը կարենալ կատարելու համար:

ԱՐՄԵՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

(ԱՆՈՐ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ 85-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

Հայ ժողովուրդի ազատագրական պայքարը արժէքի ու գնահատութեան նոր պատուանդանի մը կը բարձրանայ հետզհետէ: Զայն ծնող գաղափարը, եւ անոր ներշնչումով մղուած դիմադրական կռիւները երկար ատեն արձագանգ կը գտնէին եւ կը ջատագովուէին միայն կուսակցական մամուլի կամ յուշագրութեան սահմանափակ մարզէն ներս: Եւ «անկախ» մտաւորականներ, կամ «չէզոք» մտայնութեան հետեւորդներ կը նախընտրէին քննադատել ու պարսաւել անցեալ Հարիւր տարուան ազատութեան ամէն նպատակ եւ ինքնապաշտպանութեան ամէն ձեւերով, — առանց անջատել, նոյնիսկ զանազանի վորձեւու կենսականն ու փրկարարը՝ արկածախնդրական ու վնասարար ցոյցերէն:

Բայց տակաւ՝ աւելի առարկայական, աւելի իրապաշտ ըմբռնում մը զարգացաւ երիտասարդ մտաւորականներու մէջ, որոնք սկսեցին ծանօթանալ օտար ազգերու յեղափոխական կամ ազատագրական շարժումներուն, անոնց ողբերգական կամ աղէտալի երեւոյթներուն, եւ կրնային զանոնք բաղդատել Հայոց գոյամարտին հետ: Մանաւանդ՝ Հայաստանի մէջ, պատմագէտներ ու գրողներ հիմնական վերագնահատման ենթարկեցին նախկին վերագրումներն ու դատապարտութիւնը Հայ ազատագրական պայքարի բնոյթին ու նպատակներուն հանդէպ, եւ զրականութեամբ ու յուշարձաններով սկսան փառաւորել զանոնք:

Այս նոր գիտակցութեան մէջ՝ անհրաժեշտ է որ աւելի լայն ճանաչումով, եւ աւելի խոր գնահատանքով հաստատուին Արմենական Կուսակցութեան գաղափարական արժէքն ու մարտական դերը Հայ ժողովուրդի ազատութեան մաքառումներուն մէջ: Որովհետեւ ան քանի մը յատկանիշներով կը զատորոշուի միւս հոսանքներէն՝ որոնք յետոյ կեանքի եկան՝ իտէպլի ու մարտնչումի անոր բացած ճամբայէն:

Պատմական իրողութիւն է, որ Արմենական Կուսակցութիւնը եղաւ առաջի՛ն մարտական կազմակերպութիւնը, նուիրուած Հայ ժողովուրդի ազատութեան պայքարին: Անիկա բնական, անխուսափելի արդիւնքն էր Արեւմտեան Հայաստանի մէջ տիրող թրջական Հալա-

ծանքներուն, թալանին ու բռնութեանց: Օսմանեան պետութեան արիւնոտ լուծը, հետզհետէ աւելի ծրագրուած վայրագութեամբ՝ կը թշուառացնէր, կը քայքայէր, կը կոտորակէր Հայութիւնը: Անոր տնտեսութիւնը կը քանդուէր տեւական կողոպուտով, ծանր տուրքերով ու ահաբեկչական սարսափի տարածումով: Եւ Հայոց ազգային գոյութիւնը կը հիւծէր, ու կը վտանգուէր՝ նոր հասնող պատանի կամ երիտասարդ սերունդներուն փախուստով ու պանդխտութեամբ: Այդպէս՝ կը լքուէին, կ'ամայանային Հայկական գաւառներու Հայրենի օճախներն ու դաշտերը, եւ առագաստներն ու ապագայի յոյսերը:

Դանդաղ բայց ստոյգ ոչնչացում մը կը սպառնար արեւմտահայ ժողովուրդին: Ազգային կործանման այդ դժոխային պայմաններէն ծնաւ այն շարժումը, որ քաղաքական զարթօնք ու գրական վերածընունդ կոչուեցաւ, եւ զարգացաւ Պոլսոյ ու գաւառական կեդրոններու մէջ: Վանը, այդ շրջանին, հասեր էր ահաւոր կացութեան գիտակցելու եւ անոր դարմանը փնտռելու բարձրագոյն մակարդակին, — շնորհիւ երկու հզօր ազդեցութիւններու:

Մէկը՝ այն հրեղէն Հայրենասիրութիւնը եւ կախարդական Հմայքն էր, որ սփռուեց էր Խրիմեան Հայրիկի լուսաւոր հոգիէն ու միտքէն, եւ անոր անխարդախ անձէն ու հոյակապ վաստակէն, — խմբագիրի, գրագէտի եւ հովուապետի ասպարէզներուն վրայ: Միւսը՝ կրթական մշակ եւ ազատութեան գաղափարախօս Մկրտիչ Փորթուզալեանն էր, որ իրբեւ տնօրէն Վանի Վարժապետանոցին՝ աշակերտներու սերունդ մը ոգեշնչեց գիտութեան լոյսով ու Հայրենասիրութեան հուրով: Եւ երկուքն ալ արքորուեցան թուրք իշխանութեան կողմէ:

Մկրտիչ Փորթուզալեան կըցաւ հասնիլ Մարսիլիա եւ հոն հաստատեց «Արմենիա» թերթը 1885-ի Օգոստոսին, որ Հայ ազգային զարթօնքի եւ յեղափոխական մարտնչումի պերճախօս ջատագովը դարձաւ: Եւ անկէ քիչ յետոյ, Վանի մէջ իր աշակերտները, գլխաւորութեամբ Մկրտիչ Աւետիսեանի (Թերլեմէզեան), հիմնեցին Արմենական Կուսակցութիւնը 85 տարիներ առաջ, որ եղաւ առաջին Հայ մարտական կազմակերպութիւնը, եւ ծրագրեց ու մաքառեցաւ՝ Հայութեան ու Հայաստանի համար ազատ, ինքնավար գոյավիճակ մը հետապնդելու նպատակներով:

Երեք Մկրտիչներու, — Խրիմեան Հայրիկի, Փորթուզալեանի եւ Աւետիսեանի Հայրենասիրական խանդին, ազատութեան տենչին ու անձնագործ նուիրումին իտէպլներով ու կամքով ծնաւ Արմենական Կուսակցութիւնը, ռահվիրան Հայ ազատագրական պայքարին:

Արմենական Կուսակցութիւնը, նաեւ, բոլոր միւս Հայ յեղափոխական կամ քաղաքական կազմակերպութեանց մէջ եղաւ միակը, որ ծագում առաւ ու ամրացաւ Հայաստանի մայր հողին վրայ:

Հնչակեան եւ Դաշնակցական, Վերակազմեալ Հնչակեան ու Սահմանադիր Ռամկավար Հոսանքները կազմուեցան Լոնտոնի, Քիֆլիզի, ժընեւի եւ Գահրէի մէջ, ղեկավարուելով այդ հեռաւոր կեդրոններէն: Մինչ Արմենական շարժումը բխեցաւ հայրենի ժողովուրդին ծոցէն, անոր տառապանքէն, ազատութեան կարօտէն եւ ապագայի երազներէն:

Ծնած եւ տարածուած Վասպուրականի մէջ՝ Արմենական Կուսակցութիւնը կեդրոններ հաստատեք էր նաեւ Պարսկաստան, հոն հիմնելով վարժարան ու գինարան, իր որդեգրած յեղափոխական պայքարին համար մարտիկներ ու զէնքեր պատրաստելու: Անոր առաջնորդները խորապէս կը ճանչնային հայկական դաւաճանքը ու դաժան պայմանները, առօրեայ շփումով գիտէին թուրք իշխանութեան ու խուժանին կողոպտելու եւ սպաննելու վայրագ ախորժակը, եւ կրցեր էին ինքնապաշտպանութեան լաւագոյն եղանակն ու միջոցները ծրագրել:

Նոյնիսկ ներկայի քաղաքական հասուն դատողութեան մէջ՝ Արմենական Հոսանքին որդեգրած նպատակներն ու գործելակերպը կը յայտնուին իրենց յանդուգն, իմաստուն ու հեռահաս նշանակութեամբ: Անոր հիմնական նշանակէտն էր՝ «յեղափոխութեամբ հայ ժողովուրդին համար իրաւունք մտնել թերի ինքզինքն ազատութիւն», իր դարաւոր հայրենիքին մէջ: Մեր ազատագրական պայքարի շրջանին՝ ասիկա կը հանդիսանայ առաջին կազմակերպուած ծրագիրը, ազատ եւ ինքնավար Հայաստան ստեղծելու, մարտական պատրաստութեամբ:

Եւ որովհետեւ Արմենական ղեկավարներ սերտօրէն ծանօթ էին հայկական դաւաճաններու միջավայրին, մանաւանդ թուրք պետական վարիչներու նենգութեան ու հայաջինջ դաւերուն՝ ընդգրկեցին ընդ-յատակեայ, անաղմուկ, գաղտնի գործելակերպ մը: Եւ ինչ որ գերազանց յաջողութիւն մըն էր՝ անոնք խոր համոզումով փարած մնացին այդ ուղեգիծին: Առաջին տասնամեակը եղաւ ծածուկ ու ծաւալուն նախապատրաստութեան շրջան մը: Յարատեւ ու լարուած ճիգերով, անոնք կրցան գալիք աղէտները դիմագրաւելու կամք, հաւատք ու զօրութիւն ստեղծել Վասպուրականի հայութեան մէջ, նշանակէտ ունենալով՝

«Ներքին ուժ գոյացնել, միացնելով իրարու հետ միեւնոյն գաղափարի ծառայող հայ հայրենասէրներ... ժողովուրդը արթնցնել, կազմակերպութեան մղել... առանց բռնի միջոցների, յեղափոխական գրականութեամբ... զինակրթութեան ու կարգապահութեան վարժեցնել, ինքնապաշտպանութեան գագուտ արծարծել, գէնք ու դրամ հայթայթել, զինուորական շարժում խումբեր պատրաստել...»:

Ինչ որ բացառիկ յատկանիշ մը կազմեց Արմենական Կուսակցու-

թեան՝ այդ ամբողջ, համապարփակ գործունէութեան կատարումն էր, առանց ժխորի, բացարձակօրէն գաղտնի թուրքերէն: Երբ նոյն շրջանին՝ Դաշնակցական եւ Հնչակեան Հոսանքները, հայրենասէր երիտասարդներ գրաւելու արշաւով, կ'ապաւինէին աղէտալի ցոյցերու, որոնք չքմեղանք կուտային Երլտըզի Մարդասպանին, Կատիւ Համիտի, բիւրաւոր անմեղ հայեր կոտորելու: Դիւրին էր հարկաւ Լոնտոնի եւ ժընեւի ապահով դիրքերէն, եւ մամուլի պատկերազարդ էջերէն՝ մարտահրաւէր ու սպառնալիք չպրտել Օսմանեան Կայսրութեան, որ իբրեւ փոխ-վրէժ՝ իր արիւնարբու ցասումը կը պայթեցնէր գաւառի անպաշտպան հայութեան վրայ:

Մինչ Արմենականներ, ժողովուրդին հանդէպ իրենց անշահախնդիր սէրով եւ անձնուրաց նուիրումով՝ հեռատես ու ինքնագուսպ՝ ընտրել էին ծածուկ կազմակերպուելու եւ գինուելու ճամբան: Անոնք ազգային ազատութեան գաղափարով կը տագորէին երիտասարդները, կը խանդավառէին ապագայի հաւատքով, կը վարժեցնէին զանոնք զէնքի գործածութեան եւ կը պատրաստէին, համոզումով ու մարտական խոյանքով՝ ինքնապաշտպանութեան կռիւին:

Եւ եկաւ այդ աղէտը 1895-ճի տարիներուն, երբ Օսմանեան եղեւնագործ եաթաղանը 300,000 անգէն, անմեղ հայ մարդիկ, կիներ ու մանուկներ ջարդեց, առհաւական հրէշային վայրագութեամբ: Այն ատեն, Վանի մէջ, Արմենական Կուսակցութիւնը, ղեկավարութեամբ Մկրտիչ Աւետիսեանի, հերոսական դիմադրութեամբ, զէնքերով, ուժամբերով եւ անվեհեր քաջութեամբ՝ կասեցուց թուրքին մարդասպան բազուկը: Վանի 1896-ի հերոսամարտը, հայ ազատագրութեան պայքարի ամենէն պանծալի ու փրկարար դրուագներէն մէկը եղաւ: Անոր մասնակից եղան Դաշնակցական Պետօն եւ Հնչակեան Մարտիկը, իրենց փոքրաթիւ խումբերով: Բայց կազմակերպուած զօրութեամբ, զէնքերու եւ մարտիկներու թիւով ու դերով՝ Արմենականներ տիրական տարրը հանդիսացան այդ գոյամարտին:

Մկրտիչ Աւետիսեան անվիճելի ղեկավարն էր Վանի 1896-ի ինքնապաշտպանութեան, որ շրջանի հայութիւնը փրկեց կոտորածի աղէտէն: Կռիւներուն դադար տալու համար՝ օտար հիւպատոսներ միջամտեցին եւ կայացաւ համաձայնութիւն մը: Օսմանեան պետութիւնը կը խոստանար հրաժարիլ ջարդի ոճիրէն: Եւ ատոր փոխարէն՝ Վանի մէջ կուռող հայերը պիտի հեռանային ու գաղթէին Պարսկաստան: Իրենց դիրքերն ու տունները լքելով մեկնեցան, շրջակեան Մարտիկ ու Դաշնակցական Պետօն, շուրջ 35-ական հոգիով, եւ Արմենական Աւետիսեան՝ 800 հետեւորդներով, թիւեր, որոնք պերճախօս վկայութիւնը կուտան անոնց բաղդատական ուժին եւ ժողովրդականութեան:

Թուրքեր, իրենց նենգամիտ վատութեամբ դրժեցին պետական խոստումը, եւ քիւրտերու վոհմակներով պաշարեցին երեք հազուկային խումբերը տարբեր վայրերու մէջ: Հայ մարտիկներ դիմադրեցին ու կռուեցան մինչեւ իրենց վերջին փամփուշտը եւ ինկան նահատակ: Արմենականներու կորուստը ահագին էր իբրեւ մարդկային քանակ ու զեկավարի որակ: Հոն գոհուեցաւ նաեւ հայոց ազատութեան գաղափարին արտայայտման եւ յեղափոխական ոգեշնչող մարտիկ՝ Մկրտիչ Աւետիսեանը, որ իբրեւ ջերմեռանդ հայրենասէր եւ անձնագոհ առաջնորդ՝ ներշնչումի աղբիւր դարձաւ Արմենական կուսակցութեան երիտասարդ սերունդին:

Եւ տակաւին Վասպուրականի գաւառական միջավայրին, - անոր յետամնաց ու ճնշող պայմաններուն տակ՝ Արմենականներ կը դաւանէին քաղաքական ու ընկերային սկզբունքներ՝ որոնք յանդուգն ըլլալու չափ ազատական էին, մանաւանդ իրենց ժամանակին համար: 1905-ին, ուրեմն 65 տարիներ առաջ, Ռուս Սոցիալ Ծեմոկրատներու արիւնով խեղդուած յեղափոխութենէն ետք, Արմենական Շրջաբերական մը այսպէս կը բնորոշէր մեր կուսակցութեան տեսակէտը անոր մասին. -

«Ընկերային, սոցիալիստական յեղափոխութիւնը մեր իրականութեան հետ կապ ունեցող հեռաւոր գաղափարն է, որիմ պէտք է ձգտիմք ապագային, երրորդ քաղաքական կարգերի եւ տնտեսական պայմանների շնորհիւ առաջ կու գայ մեր մէջ նոր հասարակութիւն՝ նման եւրոպական հասարակութեան, այսինքն երբ սկսի աշխատանքի եւ գարիթալի պայքարը մեր մէջ»:

Ուրիշ որեւէ հայ կուսակցութենէ առաջ՝ Արմենականներ ընդգրկած էին մարդկային հիմնական իրաւունքներու եւ ընկերային արդարութեան գաղափարները, նոյնիսկ դասակարգային խտրականութիւնը, այսինքն կապանքները ջնջելու հեռահաս տարողութեամբ: Բայց նաեւ կենսական տարբերութեամբ մը, - որ նախ անհրաժեշտ է ընտանիք ու բնակարան կազմել եւ յետոյ կահաւորել զայն: - Նախ պայման է ազատ ժողովուրդը եւ ինքնավար Հայաստան ստեղծել, ազգային բոլոր խաւերուն, տարրերուն, դասերուն ամբողջական, համերաշխ գործակցութեամբ: Եւ յետոյ միայն հաստատել բաղձացուած լուսագոյն վարչակարգը՝ թէկուզ պայքարի միջոցով:

Արմենականներ կը կազմակերպուէին, կը գինուէին ու կը մարզուէին բացարձակ գաղտնապահութեամբ, առանց գրգռելու, կամ նոյնիսկ կասկածի մատնելու թուրք իշխանութիւնը: Անոնք նաեւ կը մերժէին դիրքի եւ դասակարգի խրամատներով բաժնել հայ ժողովուրդը, որովհետեւ գիտէին թէ ամէն ներքին պառակտում ու պայքար, հայութեան ուժերը տկարացնելու չափով կը զօրացնէր թուրքին

մեզ հարուածող վայրագութիւնն ու եաթաղանը: Այդ իմաստուն ու բարերար գործելակերպին շնորհիւ էր, որ Արմենական կուսակցութիւնը յաջողեցաւ ծրագրել ու զլխաւորել Վանի 1896-ի ինքնապաշտպանութեան կոնիւնները եւ 1915-ի փառաւոր հերոսամարտը, - որոնք հայ ազատական կոնիւնները եւ 1915-ի փառաւոր հերոսամարտը, - որոնք հայ ազատական պայքարին ամենէն սխրալի ու փրկարար դրուագներէն եղան:

1908-ին, երբ կազմուեցաւ Հայ Սահմանադիր Ռամկավար կուսակցութիւնը Գահիրէի մէջ, Արմենական հոսանքը միացաւ անոր: 1921-ի Հոկտեմբերին, անոնք միաձուլուելով Վերակազմալ-Յետոյ, 1921-ի Հոկտեմբերին, անոնք միաձուլուելով Վերակազմալ-Ազատական կազմակերպութեան՝ ծնունդ տուին ներկայ Ռամկավար Ազատական կուսակցութեան: Բայց մինչեւ այդ թուականը՝ Արմենականներ, հայ ժողովուրդի ազատութեան մարտնչումին մէջ իրենց մղած հերոսական կոնիւններով, ընկերային առաջնորդումին մէջ իրենց բոլորով եւ ազգային միասնութեան իտէալներով՝ շքեղ ժառանգութիւն մը կերտեցին:

Անոնց այդ ծրագրուած, մարտական գործունէութեան պսակումը հանդիսացաւ Վանի 1915-ի Ապրիլեան դիւցազնամարտը, երբ իբրեւ զինակիցներ հաւասար քաջութեամբ կռուեցան Արմենական եւ Դաշնակցական ռազմիկներ: Բայց դիմադրութեան մէջ վճռական ուժը եւ նակցական ռազմիկներ: Բայց դիմադրութեան մէջ վճռական ուժը եւ մարտական զեկավարութիւնը տրուեցաւ Արմենական-Ռամկավար կուսակցութեան կողմէ, Արմենակ Եկարեանի զլխաւորութեամբ: Արմենական շարժումին հետ՝ նաեւ անոր դաւանած ազգային ազատութեան, ինքնավար Հայաստանի եւ յեղափոխական պայքարի գաղափարներուն 85-ամեակն է, որ կը յիշատակենք որքան հպարտ նոյնքան երախտագէտ զգացումներով:

ՀԵՂԻՆԱԿԻՆ ՆԱԽՈՐԴ ՀԱՏՈՐՆԵՐԸ

- 1.- ՍՊԵՏԱԿ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ (Պատմուածքներ), 1938, Ֆրեզնո
- 2.- ԿԱՐՄԻՐ ԱՍՊԱՏԱԿԻ ՕՐԱԳՐԷՆ (Պատմուածքներ), 1947, Պոստոն
- 3.- ՎԵՐՋԻՆ ԿԱՅԱՆԸ (Պատմուածքներ), 1956, Պէյրուք
- 4.- ՍՊԵՏԱԿ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ (Վերի գիրքերէն ընտրուած հաւաքածոյ, հրատարակուած Երեւանի մէջ, 1960)
- 5.- ԽՈՂԵՐ (Գրական եւ Հասարակական), 1961, Պէյրուք
- 7.- ՏԱՐԱԳԻՐ ԵՐԿԻՆՔԻ ՏԱԿ (Պատմուածքներ), 1967, Պոստոն
- 8.- ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՏԻՆ ՆՈՐ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ, 1967, Պէյրուք
- 9.- ԵՐԿԱՐ ԳԻՇԵՐԻՆ ՄԷՋԷՆ (Վէպ), 1974, Պէյրուք
- 10.- ԽՈՂԵՐ Բ. հատոր (Գրական, Ազգային եւ Ընկերային), 1976, Լոս Անճելըս
- 11.- ԽՈՂԵՐ Գ. հատոր (Գրական, Ազգային եւ Հասարակական), 1980, Լոս Անճելըս

ՆԵՐԿԱՅ ՀԱՏՈՐԻՆ ԳԻՆՆ Է 10 ՏՈՒԱՐ

Հեղինակի հասցէն.-

ANTRANIG ANTREASSIAN

459 No. Formosa Ave.

Los Angeles, Cal. 90036, U.S.A.